ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ՀԱԶԱՐԱՇԵՆ»

# ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ



ՀՏԴ 323 (479.25)
ԳՄԴ 66.3 (2Հ)
Ա 940

Ա 940 ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ/Խմբ.՝ Հ.ԽԱՌԱՏՅԱՆ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2003թ., 256 էջ:

*«Արտագաղթը Հայաստանից» գրքում քննարկվում է 1990թ. հետո Հայաստանում սկսված և շարունակվող ժամանակավոր ու մշտական արտագաղթի պատճառներն ու սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային հետևանքները: Այն հասցեագրվում է հասարակագետներին, քաղաքական գործիչներին, կառավարման համակարգի աշխատողներին: Գրքում զետեղված են նաև արտագաղթի պատճառա-հետևանքային գործոնները լուսաբանող բանավոր պատմություններ, որոնք կարող են աղբյուր հանդիսանալ նաև այլ բնույթի հետազոտությունների համար:*

ԳՄԴ 66.3 (2Հ)

ISBN 99930-4-091-6

© ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, 2003թ.

32(47.925)
Ա-94

ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ «ՀԱԶԱՐԱՇԵՆ»

3402

# ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

ԵՐԵՎԱՆ 2003

կան և գիտա-մշակութային պոտենցիալը, այլև այն երիտասարդ մարդկանց, որոնք նախկին խորհրդային դպրոցական կրթությանը գումարում են Եվրոպայի և ԱՄՆ-ի մասնագիտական կրթությունը հենց այդ երկրներում, և ամենից ավելի հաճախ մնում են մասնագիտական կրթության երկրներում: «Ուղեղային արտահոսքի» համեմատաբար մեղմ տարբերակներից է այն իրավիճակը, երբ գիտական կադրերը ֆիզիկապես մնում են իրենց երկրներում, բայց զանազան գրանտային ծրագրերով աշխատում են ինտելեկտուալ արտադրանք գնող ֆոնդերի համար: Այս «ուղեղային» արտահոսքին գումարվում է նաև քաղաքական և սոցիալ-տնտեսական կոնֆլիկտներով ու ճգնաժամերով պայմանավորված տեղաշարժերը, դրանք էթնիկ կամ քաղաքական փախստականներ են, կամ աշխատանքային միգրանտներ են, որոնք երբեմն փորձում են իրենց «մատուցել» որպես քաղաքական փախստականներ, իսկ «միգրացիոն շուկան» իր տրամաբանությամբ սրբագրում է դրանք: «Միգրացիոն» շուկան ընտրում է իրեն անհրաժեշտ ապրանքը՝ ինտելեկտ, որակյալ աշխատուժ, պարզ ֆիզիկական աշխատուժ, երիտասարդներ... էթնիկ միգրանտները և սոցիալական խնամքի կարոտները, որպես կանոն, մնում են հարկադրյալ «ընդունողների» խնամքին, այլ կերպ ասած՝ նրանք ցանկալի չեն: Եվ որպես այդպիսին՝ կոնֆլիկտ են առաջացնում նրանց ընդունած միջավայրերում: Նույնիսկ եթե այդ միջավայրը մշակութապես կամ էթնիկապես հարազատ, յուրային է:

Վերջին տաս տարիների ընթացքում միգրացիոն շուկայում Հայաստանը ինչպես ընդունող, այնպես էլ արտահանող երկիր է: Հայաստանի ընդունածը գլխավորապես հարկադիր փախստականներ էին, արտահանածը՝ աղետյալներ, էթնիկ ադրբեջանցիներ, ինտելեկտ, երիտասարդություն, մտային և ֆիզիկական աշխատուժ: Եթե մուտքի խումբը հիմնականում կանայք, երեխաներ, տարեցներ ու ստրեսակիր մարդիկ են, ապա ելքի խումբն ընդգրկում է ողջ խճանկարը. ստրեսակիր աղետյալներից մինչև ակտիվ տնտեսական ձեռներեցներ, որի արանքում՝ գիտնականներ, մտավորականներ, արհեստավորներ, ուսում և աշխատանք փնտրող երիտասարդներ, առևտրականներ, գյուղացիներ ու քաղաքացիներ, ընտանիքներ ու անհատներ... Դեռևս լուրջ հետազոտության կարիք ունի միգրացիոն շերտերի հարաբերակցության և երկրի սոցիալ-տնտեսական, մշակութային նկարագրի վրա դրանց առանձին ազդեցության խնդիրը: Հատկապես մասնավոր ուսումնասիրության խնդիր է մնում Հայաստանի հիմնական ռեսուրսի՝ մտավոր ռեսուրսի միգրացիոն տրամաբանությունը և դրա հետևանքները: Բոլոր դեպքերում այսօրվա նյութերը ակնհայտորեն վկայում են, որ միգրացիոն հարաբերակցությունը երկրի ներսում սոցիալական խնամառուների ավելացման և ճկուն հարմարվողականության մարդկային որակի նվազման հաշվին է: Բավական է ասել, որ Հայաստանի բնակչության 18 տոկոսը, եթե հիմք ընդունենք ՀՀ բնակչությունը մոտ 3,5 մլն մարդ գնահատելու պաշտոնական թիվը, կենսաթոշակառու է: Իսկ եթե հաշվի առնենք, որ երկրից այդ 3,5 միլիոնից մշտական կամ ժամանակավոր բացակայում է մոտ մեկ միլիոն մարդ, և այդ բացակայողներն, այնուամենայնիվ, գլխավորապես աշխատանքային տարիքի մարդիկ են, ապա ակնհայտորեն այդ 18 տոկոսը իրականում զգալիորեն կավելանա: Այստեղ





թվերի մասին ամենաքիչն է խոսվելու, սակայն երևույթին քիչ թե շատ մոտիկից ծանոթանալու հպանցիկ փորձն անգամ հաստատում է, որ ժամանակավոր կամ մշտական արտագաղթը այս կամ այն չափով առնչվում է Հայաստանի գործնականում բոլոր ընտանիքներին: «1996թ. տնային տնտեսությունների բյուջեի հետազոտությունը հայտնաբերեց, որ մոտ 110 հազար մարդիկ ժամանակավորապես ապրում են Հայաստանից դուրս: Նրանք բացահայտվեցին Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 10 տոկոսից: Ժամանակավոր արտագաղթողների հիմնական մեծամասնությունը աշխատանքային ծաղկուն հասակում էր, իսկ նրանց երեք քառորդը տղամարդիկ էին: Մեծամասնությունը մեկնել էր ԱՊՀ երկրներ, հիմնականում Ռուսաստանի Դաշնություն: Շատերը հմուտ աշխատողներ և մասնագետներ էին[1]»: Այս վավերացումը վերաբերվում է 1996թ. հետազոտություններին, մինչդեռ դրան հաջորդել է արտագաղթի ևս մի հզոր ալիք՝ 1999-2000թթ., որում նկատելիորեն մեծ էր ընտանիքներով հեռացողների թիվը: Այս առայժմ վերջին ալիքն ամենից ավելի տարածվեց գյուղաբնակների և երկրաշարժի գոտու բնակչության վրա: Ընդհանուր առմամբ միգրացիոն հոսքերը Հայաստանից 1997թ. հետո ներկայացնում են մոտավորապես հետևյալ պատկերը.

Միջպետական միգրացիայի վերաբերյալ Հայաստանից մեկնողների և եկողների վերաբերյալ նյութերի ամփոփումը տալիս է հետևյալ պատկերը[2].

| | *1997* | *1998* | *1999* | *2000* | *2001* |
|---|---|---|---|---|---|
| *Մեկնողներ* | 9.5 | 8.8 | 8.6 | 12.0 | 11.9 |
| *Եկողներ* | 2.1 | 1.6 | 1.7 | 1.6 | 1.6 |
| *Միգրացիոն աճ* | -7.4 | -7.2 | -6.9 | -10.4 | -10.3 |

Ակնհայտ է, որ 1997թ.-ից հետո 2000-2001թթ. միգրացիոն ամենամեծ ալիքի շրջանն է: Միաժամանակ վերլուծությունը ցույց է տալիս, որ արտագաղթի ամենաակտիվ տարիքը 20-49 տարեկաններն են: Ընդ որում 1999թ. 20-49 տարեկան մեկնողների մեջ տղամարդիկ կազմել են 38,3 տոկոսը, կանայք՝ 60,8 տոկոսը, 2000թ. 20-49 տարեկանների մեջ մեկնողների 33,2 տոկոսը տղամարդիկ են, 59.9 տոկոսը կանայք, իսկ 2001թ. նույն տարիքային խմբում մեկնողների մեջ տղամարդիկ կազմել են 33 տոկոսը, կանայք՝ 58.1 տոկոսը: Նույնքան ուշագրավ պատկեր է տալիս 0-19 տարեկանների տոկոսը մեկնողների մեջ. բոլոր երեք տարիներին այն կազմել է մոտավորապես նույն պատկերը՝ համապատասխանաբար 39,4/24,5 տոկոս, 37.9/ 23.2 և 36.0/20.1 տոկոս[3]:

---

*1. Growth, inequality and poverty in Armenia, Yerevan, 2002.*

*2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, էջ 43:*

*3. Տե՛ս նույն տեղում, էջ 44:*

ավելի ուշ՝ 1996-97 թթ., 1999-2000թթ. արդեն հոսանք ունեցող Հայաստանից ամենամեծ արտագաղթի ալիքի շրջաններն են, և դա չէր կարող խորհելու առիթ չդառնալ: Անցումային շրջանի Հայաստանի սոցիալ-մշակութային փոփոխություններին նվիրված մեր նախորդ հետազոտությունների ժամանակ մենք շարունակ համոզվում էինք, որ Հայաստանում ձևավորված այն ընդհանուր մտայնությունը, թե արտագաղթը Հայաստանի սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետևանք է և մարդիկ Հայաստանից գնում են գլխավորապես աշխատանք գտնելու հեռանկարով կամ մտադրությամբ, միշտ չէ, որ ամենաճիշտ բացատրությունն է: Հետազոտության նպատակն էր պարզել Հայաստանից մշտական կամ ժամանակավոր արտագաղթի մոտիվները, արտագաղթող խմբի որակը, արտագաղթի տնտեսական, սոցիալական, մշակութային հետևանքները:

Հետազոտության առանձնահատկությունը կայանում է ինչպես մեթոդի, այնպես էլ շարադրանքի մեջ: Որպես մեթոդ ընտրված է հարցազրույցը: Չնայած հիմնական ուղղորդիչ հարցարանի գոյությանը, հարցազրույցի ընթացքը վարվել է բավական ազատ, հնարավորություն տալով մարդկանց մտքեր արտահայտել և մտքեր զարգացնել: Հարցազրույցների մեջ ընդգրկվել են արտագաղթածների ընտանիքներ, արտագաղթելու մտադրություն ունեցողներ, վերադարձածներ, մտավորականներ, բրոկերներ, տրանսպորտային, տուրիստական, ռեկլամային գործակալություններ, կառավարման համակարգի աշխատողներ, կանայք ու տղամարդիկ, տարեցներ ու երիտասարդներ, քաղաքաբնակներ և գյուղաբնակներ... Հարցազրույցները վարվել են անհատների, ընտանիքների և հատուկ խմբերի հետ: Ընդհանուր առմամբ գրանցվել է 100-ից ավելի զրույց:

Պետք է ասել, որ այս հետազոտությունն իրականացվել է գլխավորապես ժամանակավոր կամ մշտական արտագաղթի մեջ ընդգրկված մարդկանց այն խմբերում, որոնք կարող էին դասվել ներկայիս հասարակական սանդղակի միջին կամ ստորին շերտերի մեջ: Այս շարադրանքում բերվող օրինակները, արտահայտված կարծիքները արտահայտում է բնակչության այդ շերտի դիրքորոշումը: Լինելով, սակայն, բնակչության քանակական բացարձակ մեծամասնությունը, այս շերտի կարծիքը կամ մեկնաբանությունները ընդհանուր առմամբ համապատասխանում են Հայաստանի բնակչության քանակական մեծամասնության դիրքորոշմանը: Եթե դրանք նույնիսկ միշտ չէ, որ օբյեկտիվ են, համենայն դեպս դրանք զգալի ազդեցություն են թողնում երկրի բնակչության նկատելի մասի տրամադրության, վարքի վրա և անհրաժեշտ է հաշվի առնել այդ հանգամանքը:

Շարադրանքն ազատ է, այն հագեցած է այսպես կոչված «պատմություններով» և այս կամ այն մտքի, եզրակացության համար հիմք հանդիսացող, հարցազրույցներից քաղված պատառիկներով: Շարադրանքի մաս են կազմում նաև երկու առանձին վերլուծական հոդվածներ և հետազոտության տարածքից քաղված զրույցներ, որոնք հարուստ նյութ են պարունակում ինչպես հետազոտված խնդիրների, այնպես էլ Հայաստանի ներկայիս իրողությունների վերաբերյալ:

Հետազոտության տարածքն ընտրվել է մի քանի սկզբունքով. Գեղարքու-



նիքի մարզը, որպես բարձր լեռնային և աշխատանքային ժամանակավոր արտագաղթի հին ավանդույթներ ունեցող տարածք, Շիրակն ու Լոռին, որպես աղետի գոտի և հանրապետության երկրորդ ու երրորդ խոշոր քաղաքներն ունեցող մարզեր (Գյումրին ու Վանաձորը), Սյունիքի մարզը, որպես սահմանային և մայրաքաղաքից հեռու գտնվող տարածք և Երևան քաղաքը:

Նախնական քննարկումները և նյութի նույնիսկ մակերեսային վերլուծությունը թույլ են տալիս անել մի քանի պարզ հետևություն, որոնցից

***Պատճառների մեջ՝***

- Ժամանակավոր և մշտական արտագաղթը Հայաստանից ունի աշխատանքի բացակայությունից զատ շատ ավելի խորքային պատճառներ, որոնց մեջ առանձնանում են անվստահությունը, շուկայական նոր սոցիալ-տնտեսական պայմանների չիմացությունը,
- Անարդարությունը, սոցիալական տարբեր բևեռներում գտնվող մարդկանց ոչ միայն նյութական, այլև սոցիալական ու իրավական հնարավորությունների բացահայտ տարբերությունը,
- Անհուսության և «փակուղու» զգացումը,
- Անպաշտպանվածության զգացումը,
- Հեռանկարի հանդեպ տագնապը,
- Վիրավորվածությունը:

***Արտագաղթի բուն փաստի և իրականացման ձևի հետևանքով***

- Սկսում է ձևավորվել այն հոգեբանությունը, որ իշխանություններին ձեռնտու է արտագաղթը այն որակով, ինչպիսին Հայաստանում է,
- Մշտական արտագաղթողների մեծ մասը համեմատաբար երիտասարդ ընտանիքներն են, ժամանակավորները՝ հիմնականում տղամարդիկ,
- Արտագաղթին ցավով են վերաբերվում հասարակ մարդիկ, բավական փիլիսոփայաբար՝ իշխանության միջին օղակները, բացահայտ անտարբեր և նույնիսկ խրախուսաբար՝ իշխանության վերին օղակները:

***Հետևանքները***

- Հասարակությունը ժողովրդագրորեն «ծերանում» է,
- Հասարակական բևեռացումը խորանում է,
- Թուլանում են հասարակության ադապտատիվ մեխանիզմները,
- Հասարակության մեջ նվազում են կանային հատկանիշները,
- Խորանում են ապատիան և դեպրեսիան,
- Էթնիկ-մշակութային և հասարակական բարոյական արժեքները որակազրկվում են,
- Նվազում է տնտեսական և հասարակական ակտիվությունը:

*Հասարակության մեջ բացահայտորեն գերիշխում է այն կարծիքը, որ արտագաղթը ձեռնտու է իշխանություններին և խրախուսվում է նրանց կողմից: Այդ համոզմունքի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ իշխանությունը շահում է արտագաղթից.*

- Նվազում է ակտիվ ընդդիմությունը,
- Լուծվում է գործազրկության հարցը՝ նրանց նվազման պատճառով,
- Երկրում մնացածներն ապրում են գնացողների հաշվին և նվազում է սոցիալական լարումը,
- Իշխանությունը վերահաստատվում է մնացողների մեծ մասի պասիվ դժգոհության և փոքրաթիվ հարստացածների մշակույթով:

Ինչպե՞ս են, մարդկանց կարծիքով, իշխանությունները «նպաստում» արտագաղթին (պասիվ և ակտիվ)

*ա) պասիվ*

- Շուկայի մենաշնորհայնացման դեմ չպայքարելով,
- Ինքնազբաղվածության դրսևորումների հանդեպ իշխանության կառույցների անտարբերությամբ կամ կոռուպցիայի համարյա բացահայտ պաշտպանությամբ,
- Աշխատաշուկայի ձևավորման հանդեպ պասիվ, կրավորական կեցվածքով,
- Սպասումների արքնացումով և դրանց չկատարումով,
- Կոմունալ ծառայությունների ավելի ու ավելի վատացմամբ: Հատկապես խիստ մեծ առիթ է ընկալվում ձմեռները ջեռուցման բացակայությունը շենքերում,
- Սաքսային ծառայությունների քրեականացման դեմ չպայքարելով,
- Սեփականաշնորհման ընթացքի բացահայտ «կողոպտչականությամբ»,
- Տարածքային կառավարման «կողմնակալությամբ»:

*բ) ակտիվ*

- «Անձնագրերի վաճառքով»,
- «Աշխատանքային արտագաղթով» զբաղվող գրասենյակների փաստական գործունեությունը «չնկատելով»,
- Արտագաղթողներին զանազան ձևերով խրախուսելով:

*Դիտարկենք այս երևույթները կոնկրետ նյութերով:*



# ԱՐՏԱԳԱՂԹԻ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չնայած աշխատանքային ժամանակավոր արտագաղթը Հայաստանից համեմատաբար հարուստ ավանդույթներ ունի դեռևս խորհրդային տարիներից, սակայն այն տարիների արտագաղթը ծառայում էր մի հիմնական խնդրի. նախ՝ աշխատանքային ժամանակավոր արտագաղթի մեջ ընդգրկվում էին հիմնականում սակավահող և աշխատուժի ավելցուկ ունեցող գյուղերը, երկրորդ՝ արտագնա աշխատանքի միջոցով լուծվում էին մեծ ծախսեր պահանջող հիմնական կարիքները (բնակարանի կառուցում, մեքենայի գնում, հարսանիք և այլն): Հայաստանի մասնագիտացումները նպաստում էին այդ կարգի արտագնա աշխատանքին, քանի որ արհեստավորական մեծ քանակի աշխատուժը սպառում չէր գտնում երկրում, իսկ լայնածավալ շինարարություն ունեցող Ռուսաստանը շինարարական աշխատուժի մեծ շուկա ուներ: Այդ տարիների ժամանակավոր արտագաղթը հստակ տրամաբանություն ուներ,-այն սեզոնային էր, հիմնական, մեծ ծախսեր պահանջող կարիքների լուծումից հետո արտագնա աշխատանքով զբաղվողները զերադասում էին մնալ երկրում, նրանց ընտանիքները ճգնաժամի մեջ չէին, նրանք պաշտպանված էին ընդհանուր երկրի գործող օրենքներով, հարկադրված չէին լուրջ դիմադրություն հաղթահարել աշխատանքի երկրներում, նրանց հեռանկարային ծրագրերը կապված էին Հայաստանի հետ: Ընդհանուր առմամբ այս երևույթը արտագաղթ չէր որակվում, և չնայած երկրից գործնականում մշտապես բացակա էր տղամարդկանց որոշ թիվ, նրանց բացակայությունը գործնական սոցիալ-մշակութային և հոգեբանական նկատելի փոփոխությունների չէր բերում: «Խոպանչի» որակվող այս մարդիկ ճոճանակային արտագաղթի հետևանքով, անշուշտ, որոշ մշակութային փոփոխություններ առաջացնում էին, սակայն երկրի զարգացման ընդհանուր տրամաբանության վրա այն էական ազդեցություն չուներ:

Վիճակը կտրուկ փոխվեց 80-ական թթ. վերջերին: Վերակառուցման շրջանում երկրում սկսված հսկայական փոփոխությունները սկսվեցին ազգային համաձայնության վերելքով. Ղարաբաղյան հակամարտության ծավալումը 1988-1990թթ. ստեղծեց մի իրավիճակ, երբ բոլոր մնացած պրոբլեմների համեմատ գերակա դարձավ Հայրենիքի խնդիրը և նույնիսկ ավանդական ժամանակավոր արտագնա աշխատանքի սովորական ընթացքում բազմաբնույթ փոփոխություններ մտան: Նախ, երկրաշարժից հետո սկսված շինարարությունը շատերին պահեց երկրում: Արհեստավորների մեծ մասը, որ տարիներ շարունակ գնում էին Ռուսաստան շինարարական աշխատանքների, մնացին երկրում: Շարժիչ ուժը ոչ այնքան վաստակի հնարավորությունն էր, որքան՝ երկրին ու հայրենիքին պիտանելիության զգացումը. «Մի տեսակ ամոթ էր, որ ուրիշներն էկել մեր տունն են շինում, իսկ մենք գնայինք»: Միաժամանակ սկսվեց արտագաղթի առաջին լուրջ ալիքը՝ ի դեմս աղետի գոտու կենդանի մնացած բնակչության մի նկատելի մասի, որոնց ընդունեցին Ռուսաստանում՝ ժամանակավոր կացարաններում: Այդ տարիներին ոչ մեկի մտ-

րով չէր անցնում, որ այս զանգվածային ժամանակավոր էվակուացիան դառնալու է ինչպես էվակուացվածների մի մասի, այնպես էլ Հայաստանի բնակչության մի մասի հիմնական ճակատագիրը՝ դեգերել: Սպա Ադրբեջանից սկսվեց փախստականության ներհոսքը, Հայաստանից հեռացան ադրբեջանցիները, շուտով սկսվեց նաև Ադրբեջանից հրահրված պատերազմը, իրականացավ իշխանափոխությունը: Բարձր հուզա-զգայական դաշտում, բեկումնային շրջանում հայրենիքի ճակատագրի կայացմանը մասնակցելու և իրավիճակի անապահովության թելադրանքով շատերը մնացին երկրում, իրենց ընտանիքների կողքին, օգնելով տեղավորվել փախստականներին, կենդանի մնացածները՝ երկրաշարժի աղետյալներին: Ոմանք կամավորաբար գնացին պատերազմ՝ օգնելու Ղարաբաղին: Այդ տարիներին Հայաստանից արտագաղթողները ադրբեջանցիներն ու երկրաշարժի աղետյալներն էին, սակայն կար նաև մեծ քանակությամբ ներգաղթ ի դեմս Ադրբեջանից, իսկ ավելի ուշ նաև Տաջիկստանից, Աբխազիայից, Չեչնիայից փախստական հայերի: Ընդհանուր առմամբ այս շրջանը միգրացիոն որակի իմաստով հավասարակշռված էր, թե գնացողները, թե եկողները ստրեսակիր էին, երկու խումբն էլ ընդգրկում էր հուզական, սեռա-տարիքային և ինտելեկտուալ համեմատելի չափանիշներ:

Երկրում կատարվող քաղաքական, տնտեսական, գաղափարական փոփոխությունները, ուղեկցվելով օբյեկտիվ և սուբյեկտիվ բարդացնող գործոններով, սկսվել էր, այնուամենայնիվ, ազգային և գործնականում նաև սոցիալական համաձայնության պաթետիկ բարձր ալիքի վրա և առաջին տարիներին հագեցած էր բարոյական լուրջ բովանդակությամբ: Այդ տարիների հատկանշական վարքի նորմերից էին նյութական արժեքների հանդեպ պահանջների չափավորությունը, բարոյական նկարագրի հանդեպ խստապահանջությունը, միմյանց սատարելը, էթնիկ նկարագրի վերաբերյալ բարձր կարծիքի ձևավորմանը նպաստելը: Այլ երկրներում ապրող հայերը ջանում էին իրենց վարքով նպաստել հայերի հանդեպ հարգանքի բարձրացմանը կամ պահպանմանը: Հումանիտար օգնությունը Հայաստանին և հայերին ուներ ոչ միայն նյութական արտահայտվածություն, այլև, հայերի կողմից, նաև հայերի հեղինակության բարձրացմանն ուղղված վարքային-պահվածքային բովանդակություն:

Շատ շուտով, սակայն, իրերի ընթացքը փոխվեց: Պատերազմի տրամաբանությունը, շրջափակումը, նոր իշխանությունն իրականացնողների արագ և ակնհայտ կլանայնացումը, շուկայական տնտեսության մրցակցայնության պատրանքը և իրական մենաշնորհայնացումը, պատրիոտների արտամղումը տնտեսական լծակներից ու հնարավորություններից, պատերազմից վերադարձողների ձեռնունայնությունը և օտարումը սեփականաշնորհման գործընթացից, երկրում ամենազոր ընտանիքների ձևավորման փաստը, նրանց կողմից ֆինանսական կապիտալին տիրանալը, դրամի արժեզրկումը, բնակչության զանգվածային աղքատացումը, նյութական արժեքների շուրջ առաջացող սոցիալական բևեռացումը և այլն արագորեն ձևավորեցին խաբվածի այն դաժան հոգեբանությունը, երբ հասարակական բարոյականության և օգնության պաշարը սկսում է սպառվել՝ տեղի տալով ձևավորվող խիստ սու-



բյեկտիվ մրցակցային գործընթացին մասնակից դառնալու ցանկությանը: Մասնավորապես սեփականաշնորհման ընթացքն այնքան անբարոյականացավ, «շուկայական» կոչվող տնտեսաձևն այնքան ակնհայտորեն սկսեց մատուցվել որպես գիշատչական հնարավորությունների տնտեսություն, որ հասարակական բարոյականության ու համազգային համերաշխության արժեքները սկսեցին ընկալվել որպես ժամանակավրեպ ու գավառական: Սրան զուգահեռ սկսվեց էներգետիկ ճգնաժամը, որի արտաքին ամենահիվանդագին դրսևորումը քաղաքների «ցուրտ ու մութ» բնակարաններն էին, աշխատատեղերի փակումը և սառը բնակարաններում տրանսպորտային հնարավորություններից ու աշխատանքային շփումներից զրկված մարդկանց ընտանիքներով կամ մեկուսի դեգրադացիան: Աղետի գոտում գործնականում կանգ առավ շինարարությունը, Ռուսաստանում մնացած էվակուացվածներից շատերը սկսեցին հասկանալ, որ իրենց վերադառնալու շանսերը նվազում են:

1992-1993թթ. սահմանային գոտու ռմբակոծությունների և «մութ ու սառը տարիներին» սկսվեց արտագաղթի երկրորդ, այս անգամ՝ կամավոր արտագաղթի ալիքը: Քաղաքներից գնացողները մեծ մասամբ մտավորականներ էին, մանր ու միջին ձեռներեցներ, մարդիկ, ովքեր եվրոպական արտասահմանում, ԱՄՆ-ում և Ռուսաստանում կապեր, ծանոթներ ու ազգականներ ունեին: Քաղաքներից ընդհանուր առմամբ գնում էին այն մարդիկ, ովքեր չկարողացան դիմանալ արտաքին ծանր պայմաններին: Գնում էին հիմնականում ընտանիքներով, մեծ մասամբ թողնելով իրենց բնակարանները: Գյուղը, որ այլընտրանքային վառելիք ուներ, տանը պաշարած մթերք, անասուն և անասնակեր, այդ առաջին ալիքին առանձնապես մեծ տեղաշարժերի չենթարկվեց: Այդ տարիների գյուղական բնակչության արտագաղթը տեղի էր ունենում գլխավորապես սահմանային պատերազմական գոտուց, որն անընդհատ ենթարկվում էր ռմբակոծությունների Ադրբեջանի կողմից: Գյուղաբնակներից արտահոսքը ընգրկեց մասնավորապես Տավուշի և Սյունիքի մարզերի ռմբակոծվող բնակավայրերը, որտեղից հեռանում էին կամ քանդված բնակարանների, կամ՝ վախի պատճառով: Այդ գոտիների բնակչությունը մասամբ հաստատվում էր Հայաստանի քաղաքներում, մասնավորապես Երևան քաղաքում, մասամբ մեկնում էին Ռուսաստան: Ուշագրավ է, որ վախի պատճառով հեռացածների մեծ մասը հետագայում, զինադադարի շրջանում վերադարձավ:

Արտագաղթի այս առաջին լուրջ ալիքը որակական չափումով «տարավ» ինտելեկտուալ ակտիվ և սոցիալապես միջին բնակչությանը:

Գյուղի բնակչության մնալու պատճառներից մեկն էլ հողի, անասնագլխաքանակի և գյուղ.տեխնիկայի սեփականաշնորհման փաստն էր: Ի տարբերություն քաղաքի, գյուղում սեփականաշնորհումն իրականացավ սոցիալական արդարության համեմատաբար պահպանությամբ, մարդիկ հող ստացան, շատերը անասուններ և դեռ պետք է ընկալեին ու հարմարվեին այդ նոր իրողությանը: Դրանից զատ, այդ տարիներին խիստ ընդգծվեց գյուղ-քաղաք համերաշխությունը. գյուղաբնակները գործնականում մթերքով պահեցին քաղաքների իրենց ազգականներին, կամ շատ էժան մթերքով՝ ուղղակի քա-

ղաքաբնակներին: Դա կատարվում էր երկու կերպ. կամ քաղաքաբնակները ձմռանը տեղափոխվում էին գյուղ, կամ գյուղաբնակները մթերք ու վառելիք էին բերում քաղաքաբնակներին: Մեր դաշտային աշխատանքների ընթացքում հարյուրավոր դեպքեր ենք գրանցել, երբ Գեղարքունիքի, Վայքի, Զանգեզուրի, Տավուշի, Լոռվա, Շիրակի, Կոտայքի, և նույնիսկ Վրաստանի հայաբնակ Ջավախքի գյուղերի մեկ ընտանիքը 1-2 տարի ուղղակի իմաստով մթերքով ու վառելիքով պահել է Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Վայքի, Գորիսի իրենց ազգականների մի քանի ընտանիքներ (իրենց զավակների, քույրերի, եղբայրների... ): Այս իմաստով շատ ավելի բարդ էր Չարենցավան, Աբովյան քաղաքների, Նոր Հաճընի, Երևանի արվարձանային թաղամասերի բնակիչների վիճակը: Վերջիններս վերջին 30-40 տարվա ընթացքում Ադրբեջանից Հայաստան տեղափոխված լինելով ոչ միայն Հայաստանի գյուղական բնակչության հետ ակտիվ ազգակցական կապեր չունեին, այլև նրանց վրա ավելացել էր իրենց փախստական ազգականներին օգնելու հոգսը: Ուշագրավ է, սակայն, որ այդ մի քանի տարիներին գյուղերում հաստատված փախստականները նույնպես կարողացան որոշ չափով օգնության ձեռք մեկնել իրենց քաղաքաբնակ ազգականներին:

1992-93թթ. ազգային համաձայնության հոգեբանությունը սկսեց տեղի տալ առաջացող սոցիալական խմբերի որակների կայացմանը և միջխմբային հարաբերությունների ձևավորմանը: Սկսեցին ուրվագծվել ընտանեկան-ազգակցական կլանները, հարուստներ-աղքատներ, տեղաբնիկներ-փախստականներ սոցիալական խմբերը, որոնց մեջ հարաբերությունների ավելի փոխադարձ մերժման ու օտարման երևույթ էր ձևավորվում, քան պետական կամ էթնիկ ընդհանրության: Այդ նույն շրջանում բնակչության քանակական մեծամասնության մեջ սկսեց ձևավորվել թշնամանքը իշխանության հանդեպ, և 1995-96թթ. ընտրությունները անցան հակոտնյա խմբերի ակտիվ ընդհարման մթնոլորտում: Գործող իշխանությունը հաղթանակ տարավ ժողովրդական ընդդիմությունը կոպտորեն ճնշելով, և դա խթանեց արտագաղթի երկրորդ, այս անգամ բավական հուժկու ալիքի սկիզբը:

Արտագաղթի այս երկրորդ ալիքն ընդգրկեց բնակչության ամենատարբեր խավերին՝ գյուղացիներ ու քաղաքացիներ, մեծ մասամբ աշխատանքային ակտիվ տարիքի տղամարդկանց: Արտագաղթի այս երկրորդ ալիքով մեկնածները հետագայում հաստատվելով կամ տարան իրենց ընտանիքները, կամ «մոռացան» այդ ընտանիքների գոյությունը: Հայաստանում լքված ընտանիքների մեծ մասը բաժին է ընկնում հենց այս շրջանի գնացածներին, ինչ լրացուցիչ վկայում է այս շրջանում գնացողների զգալի մասի անկումային, դեպրեսիվ հոգեվիճակի մասին: Այս շրջանում սկսվեց նաև բանակից խուսափելու երևույթը, որի հետևանքով ավելացավ երիտասարդներին հնարավոր բոլոր միջոցներով երկրից «փախցնելու» գործընթացը: Այսպիսով, արտագաղթի երկրորդ խոշոր ալիքը սկսվեց 1995-96թթ., երբ անկախ Հայաստանի երկրորդ Ազգային ժողովի և նախագահական ընտրություններն ի դերև հանեցին այն տարիներին միջին համարվող մարդկանց հնարավորությունների հավասարության և արդարության հույսերը: Պարզ դարձավ, որ նոր Հայաստանում իշխանության լծակներից հեռու ընկած մարդկանց հա-



մար երկար ժամանակ որևէ տնտեսական ելք չկա:

Տնտեսական անկման ընթացքի կասեցումը ընդունված է համարել 1996թ., սակայն տնտեսական կայունացման ընթացքն ուղեկցվում է արտագաղթի ամենամեծ ալիքներով: Այդ ալիքն ուղղվեց հիմնականում դեպի Ռուսաստան: Այս ալիքը տանում էր նախկինում «խոպանի» միջոցով Ռուսաստանի իրականությանը ծանոթ և աշխատելու կարողություն ունեցող մարդկանց, արհեստավորներին, միջին ու բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող մարդկանց, հուսախաբ եղած փախստականների աշխատունակ մասը: Այս շրջանի արտագաղթը որոշ իմաստով կարելի է բնութագրել որպես «քաղաքական ընդդիմության» ձև, քանի որ գնացողների մեծ մասի հեռանալը պայմանավորված էր երկրում ձևավորվող հարաբերությունների մերժմամբ, դրա դեմ ըմբոստացմամբ: Պատահական չէ, որ սկսեց շրջանառվել այն արտահայտությունը, թե գնացողները «ոտքերով են բողոքում»: Այդ տարիների արտագաղթողների մեջ, ինչպես կտեսնենք ստորև, իշխում էր երկիրը և իշխանությունն իրականացնողներին «մերժելու» հոգեբանությունը, «դրանցից» փախչելու ցանկությունը: Իշխանությունը մերժելու հոգեբանությունը սկսեց ստանալ պետությունը և հայրենիքը մերժելու կերպարանք, իշխանությունը շատերի զգացողության մեջ սկսեց նույնանալ Հայրենիքի հետ: Արտագաղթի այս երկրորդ ալիքը «տանում» էր արդեն աղքատացող մարդկանց: Բնակչության մեջ նկատելիորեն պակասեց օգնության բարոյական ու նյութական պատրաստակամության պաշարը:

Այդ տարիների արտագաղթի ծավալները կարող էին շատ ավելի մեծ լինել, եթե չլիներ Ռուսաստանում ավելի ու ավելի զգալի դարձող կենցաղային և նույնիսկ հրահրվող հակահայկականությունը: Օգնության հոգեբանության պաշարը նվազել էր նաև այն երկրների հայկական համայնքներում, որտեղ հայտնվում էին արտագաղթողները. Նրանք ավելի ու ավելի դժկամությամբ էին օգնում իրենց արդեն նկատելիորեն աղքատացած հայրենակիցներին, խուսափում էին նրանցից:

Միա այս շրջանում սկսեց դրսևորվել արտագաղթող աղքատ հայերի վարքի որոշ քրեականացում: Վարքի զսպման բարոյական մեխանիզմներն այլևս դեր չէին խաղում: Նախ, Հայաստանից հեռացածները պարտավորություն չէին զգում իրենց հուսախաբ արած երկրի (երկիրը նույնանում էր իշխանության հետ) հանդեպ, երկրորդ՝ հիմնական «ընդունող» երկրի՝ Ռուսաստանի բնակչությունն ապրում էր իր հիասթափությունները, ամբողջ թափով ընթանում էր չեչենական պատերազմը: Ռուսաստանում լրջորեն փոխվել էր արտագնա աշխատանքի սովոր հայերի ծանոթ միջավայրը, սկսվել էր նորահարուստների մասնավոր շինարարությունը: Ռուսաստանում հայտնվող հայերը ոչ միայն նոր աշխատանքային պայմաններում էին հայտնվում, այլև փոխվում էր նրանց աշխատանքային աշխարհագրությունը, ուրեմն նաև մարդկային զսպող միջավայրը: Նախկին աշխատատեղերը կապված էին այլ մարդկանց հետ, նոր աշխատատեղերը՝ նոր մարդկանց, նոր պահանջների, նոր վայրերի: Հաճախակի էին դառնում այն դեպքերը, երբ Ռուսաստանում մասնավոր գործատուն վերջում կամ չէր վճարում, կամ խիստ ցածր գներով էր վճարում, հակառակ պայմանավորվածության: Մարդիկ սկսում են թա-

փանցել ռեւտրական շուկա, որ ավանդաբար ավելի աղքատ... 

փանցել առևտրական շուկա, որ ավանդաբար ավելի աղքատ երկրներից աշխատանքային միգրանտների աշխատատեղն էր Ռուսաստանում: Սկսում է ձևավորվել «կոպիտ հայերի» առասպելը, որն իր հերթին ավելի է նպաստում վարքի որոշ իրական քրեականացմանը կամ հուսահատ զայրույթն այդպես ծառուցելու հնարավորությանը: Սրան ավելանում է նաև 1995-97թթ. Ռուսաստանում ծաղկող ռեկետային միջավայրը, որին հակազդելու ջանքերը երբեմն «պատճենում» էին ռեկետ իրականացնողների վարքը:

Արտագաղթի երրորդ ալիքը հաջորդեց 1998թ. նախագահական և դրան հաջորդած Ազգային ժողովի ընտրություններին և իր պիկին հասավ հոկտեմբերի 27-ի պառլամենտականների դեմ կիրառված տեռորից հետո: Ուշագրավ է, որ տնտեսության իմաստով այս փուլը համարվում է տնտեսական աճի շրջան: Ուշագրավ է նաև, որ արտագաղթի այս երրորդ ալիքն ընդգրկեց գործնականում խիստ աղքատացած մարդկանց, ինչպես նաև երկրորդ ալիքի արտագաղթած տղամարդկանց ընտանիքներին: Այսպիսով, արտագաղթի երկրորդ և երրորդ ալիքները զուգադիպում են տնտեսության անկման կասեցման և տնտեսության աճի սկզբի շրջաններին: Ահա մի հատված մարդկանց Ռուսաստան տեղափոխող ավտոբուսի վարորդի հետ հարցազրույցից.

- *Ո՞ր թվին է եղել գնացողների քանակի պիկը:*

- *Վերջինը 2000-ին: Էդ ժամանակ չափազանց շատ գնացին: 2001-ին պակասեց, մոտավորապես կեսով: 2002-ը նոր է սկսվել ու հիմնականում էն արտագնա աշխատանքի գնացողներն են, որոնք միշտ էլ գնացել են: Այսինքն գնացող ընտանիքներ, ինչպես 2000 թ-ին էր՝ չկա: Էդ ժամանակ էր, որ վերջով[1], կահ-կարասիով, ընտանիքներով գնացին, ու չափազանց շատ գնացին: 1999-ին էլ գնացին, բա անմամբ սկսեցի աշխատել 1999-ը թվականից, էդ ժամանակ էդքան շատ չէր: Բայց 2000 թ-ին չափազանց շատ էին, պիկը էդ ժամանակ էր: Ավտոբուսներում տեղ չկար, ավտոբուսների գլխներին բարձած վերջերը, երեխեքով, կանանցով... են: Իսկ հիմա՝ չէ, էն է, որ գնացել է աշխատելու, կամ աղբերն է, էկել են Նոր տարվան մոտիկ, Նոր տարին էրել են, նորից հետ են գնում: Հիմնականում էդ մարդիկ են: Ընտանիքների գնալ, կարծես թե էլ չկա:*

2000-2001թթ. իշխանությունների հանդեպ թշնամանքը սկսեց վեր ածվել ատելության: Այս տարիներին հատկապես գյուղացիությունը խիստ մեծ հիասթափություններ ապրեց: Ընդհանուր առմամբ 7-8 տարի շարունակ քաղաքային բնակչությանը փաստորեն սատարած գյուղացիությունը խորը հիասթափություն ապրեց հատկապես 1999-2000թթ. ընթացքում տեղի ունեցած երաշտից հետո, երբ բացարձակ ամեն ինչ կորցրած մարդիկ իրենց լիովին շրջանցված և լքված զգացին: Քաղաքաներում սկսված տնտեսական փոքրիկ աշխուժացումը գյուղին, ըստ էության, ոչինչ չտվեց, իսկ 2001-2002թթ. տնտեսական աճը գործնականում ոչինչ չտվեց հասարակության ստորին խավերին: Իսկ նրանք կազմում են Հայաստանի բնակչության քանակական բացարձակ մեծամասնությունը:

1. Իրերով:



# ԱՐՏԱԳԱՂԹԸ ԳՅՈՒՂԵՐԻՑ

Արժելի է հաստատագրված համարել, որ տնտեսական աճը չի ուղեկցվում սոցիալական իրավիճակի կարգավորմամբ, որի ամենացայտուն դրսևորումը աղքատ բնակչության թվի համարյա անշեղ պահպանումն է (իսկ որոշ ռեգիոններում՝ նույնիսկ աճը): Եթե տնտեսական նոր հարաբերություններին անցնելու առաջին տարիների ամենաքնորոշ սոցիալական երևույթը բնակչության կտրուկ և խիստ մեծ խզումով բևեռացումն էր, ապա ավելի ուշ սկսեց երևան գալ նաև գյուղ-քաղաք և Երևան-ոչ Երևան խզումը: Ներկայիս ընթացքը հաստատում է խմբերին իրենց բևեռներում (ավելի ու ավելի է դժվարանում ստորին շերտից վերինին անցնելու հնարավորությունը), միաժամանակ ուրվագծվում են հասարակական բևեռների տարածքային կենտրոնները:

***Աղքատության գնահատումը Հայաստանում. 1996, 1998/99, 2001 (տոկոսային հարաբերություններ)***

| | 1996 | | 1998/99 | | 2001 | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ծայրահեղ աղքատություն | Աղքատություն | Ծայրահեղ աղքատություն | Աղքատություն | Ծայրահեղ աղքատություն | Աղքատություն |
| Ընդամենը | 27.3 | 54.7 | 25,4 | 53,7 | 15,9 | 50,9 |
| Քաղաք | 29.6 | 58.8 | 31,2 | 60,4 | 18,2 | 51,3 |
| Գյուղ | 24.4 | 48.0 | 17,7 | 44,8 | 11,2 | 50,1 |

Այս թվերը վկայում են այն մասին, որ 2001թ. գնահատումով աղքատությունը Հայաստանում շարունակում է բարձր մակարդակի մնալ, սակայն որոշ տեղաշարժեր են կատարվել քաղաք-գյուղ հարաբերակցությունում: Եթե 1996թ. քաղաքներում աղքատության տարածվածությունը կազմում էր 58,8 տոկոս, գյուղում՝ 48,0 տոկոս, ապա 2001թ. այստեղ մենք ունենք համարյա հավասարություն՝ 51,3 տոկոս և 50,1 տոկոս: Պետք է ասել, սակայն, որ չնայած այս միջինացված թվերով աղքատության աճը գյուղում շատ մեծ չի (ընդամենը մոտ 3 տոկոս), սակայն 2001թ. հետազոտության տվյալներով աղքատության սրընթաց աճ է դիտվում լեռնային գյուղերում և երկրաշարժի գոտում (մոտ 15 տոկոսով)[1]:

Պետք է նշել նաև, որ չնայած Հայաստանում բնակչության խիստ բևեռացվածությանը, գյուղական բնակչությունը իր հիմնական զանգվածով ընկնում է ստորին 20 տոկոսի մեջ, և գյուղն իր ներսում ակնհայտ բևեռացվածություն չունի: Սա է վկայում նաև այն փաստը, որ գյուղատնտեսությունում մեկ զբաղվածին բաժին է ընկնում 769 ԱՄՆ դոլար (ճյուղի ավելացված արժեքի ծավալով հաշվարկված) այն դեպքում, երբ ՀՆԱ-ն զբաղվածների թվին հարաբերելու դեպքում, մեկ արտադրողին բաժին է ընկնում 1495 ԱՄՆ դոլար: Մեկ գյուղացու հաշվով գյուղատնտեսական ավելացված արժեքը կազմում է մոտավորապես 340 ԱՄՆ դոլար, որը մոտ 33 տոկոսով ցածր է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակից: Չնայած նկատելի տարբերություններ կան երկրի գյուղատնտեսության արդյունավետության առումով առավել բարեբեր Արարատյան դաշտավայրի և նախալեռնային ու լեռնային գոտիների բնակչու-

1. *Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր:*

թյան եկամուտների միջև, այնուամենայնիվ նույնիսկ Արարատյան դաշտավայրի գյուղական բնակչության աղքատությունը չի զիջում քաղաքայինին:

| Գյուղ. տնտե-սությունների խմբերն ըստ հողատա-րածքների | Տնտե-սու-թյուն-ների թիվը | Մեկ հեկտարի հաշվով | | | Մեկ զբաղվածի հաշվով | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Զբաղ-ված է աշխա-տող | Արտա-դրական ծախ-սեր | Իրացված արտա-դրանքը | Բաժին է ընկ-նում հող/հա | Արտա-դրական ծախ-սեր | Իրաց-ված արտա-դրանք |
| | | | հազար դրամ | հազար դրամ | | հազար դրամ | հազար դրամ |
| Մինչև 0,5 հա | 625 | 6,65 | 218,7 | 543,8 | 0.15 | 32,9 | 82,0 |
| 0,5-1 հա | 952 | 3,46 | 121,7 | 250,6 | 0,29 | 35,1 | 72,2 |
| 1-2 հա | 917 | 1,92 | 85,5 | 140,2 | 0,52 | 44,6 | 73,2 |
| 2-3 հա | 405 | 1,10 | 53,3 | 71,4 | 0,90 | 48,1 | 64,5 |
| 3-5 հա | 321 | 0,76 | 37,8 | 48,4 | 1.27 | 49,1 | 62,8 |
| 5-7 հա | 148 | 0,54 | 37,9 | 39,5 | 1,84 | 68,6 | 71,6 |
| 7 և ավելի հա | 29 | 0,45 | 35,4 | 26,3 | 2.23 | 76,4 | 56,8 |
| Ընդամենը | 3397 | 1,61 | 69,0 | 114,9 | 0,65 | 43,0 | 71,6 |

Աղյուսակից ակնհայտ երևում է Արարատյան դաշտավայրի մինչև 0,5 հեկտար և 0,5-1 հեկտար հողերից եկամուտների անհամեմատ բարձր արդյունավետությունը ավելի խոշոր հողերի համեմատ: Այստեղ աճեցվում են բարձրարժեք բանջարա-բոստանային կուլտուրաներ, ի տարբերություն նախալեռնային և լեռնային համեմատաբար խոշոր հողերի, որոնք այժմ ավելի շատ մշակվում են հացահատիկի և կարտոֆիլի աճեցման նպատակով: Եթե մինչև 0,5 հա հողատարածքում մեկ հեկտարի հաշվով զբաղված է 6-7 աշխատող և կատարվում են 218 հազ.դրամ նյութական ծախսեր, ապա 7 հեկտարից ավել հողատարածքների վրա այդ ցուցանիշները համապատասխանաբար գերազանցում են 15 և 6,2 անգամ: Իրացված արտադրանքի ծավալը առաջին խմբի տնտեսություններում գերազանցում է 7-րդ խմբի ցուցանիշներին 20 անգամ[2]: Եվ այնուամենայնիվ Արարատյան դաշտավայրի գյուղական բնակչությունը նույնպես կենսամակարդակի առումով շատ նկատելի տարբերություն չունի Հայաստանի մնացած գյուղական բնակչության նկատմամբ, բացառությամբ, թերևս, Արմավիրի մարզի[3]:

Եթե այս երևույթը զանազան պատճառներով բավականաչափ օրինաչափ է ամբողջ աշխարհում, Հայաստանում այն խիստ պարադոքսալ է: Բանն այն է, որ չնայած անցումային շրջանի Հայաստանի ընդհանուր և խորը տնտեսական անկումին, անցումային տաս տարիների ընթացքում գյուղատնտեսությունը հիմնականում պահպանել է իր արտադրանքի ծավալը, սակայն գյուղը աղքատության հավասար դրսևորումներ և աղքատացման ավելի մեծ միտումներ ունի:

*2. Գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը և գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 1999թ., էջ 28:*

*3. Համաշխարհային Բանկ, Armenian Poverty Update , հուլիս, 2002:*



*ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքը 1990-2000թթ (տոկոսներով)* [4]

| | Գյուղատնտեսություն և ան-տառային տնտեսություն | Արդյունա-բերություն | Շինարա-րություն | Ծառայու-թյուններ |
|---|---|---|---|---|
| 1990 | 12.6 | 44.5 | 18.0 | 24.9 |
| 1991 | 20.2 | 48.6 | 10.4 | 20.8 |
| 1992 | 28.7 | 43.5 | 5.6 | 22.2 |
| 1993 | 46.3 | 30.7 | 4.1 | 18.8 |
| 1994 | 41.7 | 34.8 | 6.0 | 17.4 |
| 1995 | 38.5 | 27.8 | 6.5 | 27.2 |
| 1996 | 33.5 | 27.7 | 7.7 | 31.1 |
| 1997 | 29.4 | 22.5 | 16.3 | 31.8 |
| 1998 | 30.8 | 19.9 | 17.5 | 31.8 |
| 1999 | 27.2 | 21.2 | 16.7 | 34.9 |

Աղյուսակի տվյալները վկայում են, որ գյուղատնտեսությունը, որը 1990թ. կազմում էր տնտեսության փոքր մասը՝ ՀՆԱ-ի ընդամենը 12.6 տոկոսը, երեք տարվա մեջ, մինչև 1993թ. աճել է մինչև 46.3 տոկոսը: Այլ կերպ ասած գյուղատնտեսությունը դարձել էր երկրի տնտեսության ամենակարևոր ճյուղը: Սա, անշուշտ, ոչ թե գյուղատնտեսության զարգացման, այլ տնտեսության մյուս ճյուղերի խորը անկման հետևանք է, բայց այս երևույթը պետք է հնարավորություն տար գյուղացիությանը ավելի բարձր սոցիալական ցուցանիշներ ունենալ, ինչը, ինչպես տեսնում ենք, իրականում չկար: Հաջորդ տարիներին տնտեսության մյուս ճյուղերը սկսեցին դանդաղորեն աճել, սակայն գյուղատնտեսությունը շարունակում էր երկար ժամանակ մնալ գերակշիռ ոլորտ: 2000թ. այն մոտ երկու անգամ շարունակում էր գերազանցել 1990 թ ցուցանիշը: Ավելին, 2000 թ. գյուղատնտեսության տեսակարար կշիռը շարունակում էր ավելի մեծ մնալ, քան արդյունաբերությանը, չնայած տարբերությունը շատ փոքր էր: Միաժամանակ կայուն տեմպերով նվազեց նաև ճյուղի թողարկած արտադրանքի կշիռը ՀՆԱ-ի մեջ և 2000 թվականին կազմեց 22.5 տոկոս 1994 թվականին գրանցված 43.5 տոկոսի դիմաց:

***Այստեղ կարևոր է վավերացնել չորս հիմնական իրողություն.***

*1. Գյուղատնտեսությունը տնտեսական անկման շրջանում համեմատաբար պահպանել է տնտեսական արդյունավետությունը,*

*2. Գյուղացիությունը, այնուամենայնիվ, աղքատացել է քաղաքին հավասար, իսկ այժմ դրսևորում է աղքատացման խորացման միտումներ,*

*3. Գյուղական բնակչության ներսում առայժմ ակնհայտ սոցիալական բևեռացում չկա,*

*4. Գյուղական բնակչությունը զանգվածաբար ընկնում է Հայաստանի ընդհանուր բնակչության ստորին բևեռի մեջ:*

Դիտարկենք դրանք առանձին-առանձին.

## 1. Գյուղատնտեսությունը տնտեսական անկման շրջանում պահպանել է տնտեսական արդյունավետությունը

1991թ. հողի, անասունների և գյուղ.տեխնիկայի սեփականաշնորհումով մասնավոր սեկտորը գյուղատնտեսությունում միանգամից դարձավ բացարձակ և գերակշիռ ինչպես գյուղում, այնպես էլ Հայաստանում առհասարակ:

*4. ՄԱԶԾ, Անցումային շրջանը և անկախության տաս տարիները Հայաստանում, Ազգային մարդկային զարգացման հաշվետվություն 2001, Հայաստան 2001, Վիճակագրական աղյուսակ 22, էջ 135:*

Մինչ 1990 թ-ը մասնավոր սեկտորը արտադրում էր գյուղատնտեսական արտադրանքի 35 տոկոսը: Հողի սեփականաշնորհումից հետո այն արդեն կազմում էր 98 տոկոսը: Միայն մի քանի պետական ֆերմաներ էին մնացել, որոնք մասնագիտացված էին հիմնականում անասնապահության մեջ:

Սեփականաշնորհումը կատարվեց սոցիալական արդարության սկզբունքով, արդյունքում բոլորը, արդարության այս կամ այն չափով, ստացան տարբեր չափերի լավ ու վատ հողակտորներ, անասուններ, մեքենավարանները՝ գյուղ.տեխնիկա:

Գյուղատնտեսական արտադրության խթանման և գյուղացու պաշտպանության համար Կառավարությունը մշակել էր որոշակի մեխանիզմներ: Ավելացված արժեքի մասին ՀՀ օրենքով արտադրողի կողմից Հայաստանում արտադրված գյուղարտադրանքի իրացումը ազատվում է ԱԱՀ-ից, որը հնարավորություն է տալիս գյուղմթերքները դարձնել սպառողների համար մատչելի և մրցունակ: Արտահանման դեպքում, գյուղտնտեսական ապրանքները նույնպես ազատված են ԱԱՀ-ից, որը հնարավորություն է տալիս արտաքին շուկաներ ներգրավել:

Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները շահութահարկի և եկամտահարկի փոխարեն վճարում են հողի հարկ հողատարածքի կադաստրային զուտ եկամտի 15 տոկոսի չափով: Հողի հարկի մասին ՀՀ օրենքը սահմանում է, որ հողի ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները, հողի ձեռքբերման պահից 2 տարի ժամկետով, ազատվում են հողի հարկից: Հողի հարկից ազատվում են նաև նորատունկ խաղողի այգիները մինչև պտղաբերությունը: Արդյունաբերական բնույթի գյուղատնտեսական ձեռնարկությունները ազատված են շահութահարկից:

1990-1993 թվականների ընթացքում Հայաստանում ՀՆԱ-ի 53,1 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների ՀՆԱ-ի ընդամենը 26,9 տոկոս անկման պայմաններում, գյուղմթերքների արտադրության ծավալները Հայաստանում պահպանվեցին, իսկ ԱՊՀ երկրներում այն նվազեց 15,3 տոկոսով: Նույնիսկ անզեն աչքով կարելի է տեսնել, որ սրա հիմքում ընկած էր հողի և անասնագլխաքանակի սեփականաշնորհման սոցիալական արդարության կիրառված սկզբունքը, չնայած խնդիրն, անշուշտ, առանձին հետազոտման կարիք ունի:

**2. Գյուղացիությունը, այնուամենայնիվ, աղքատացել է քաղաքին հավասար, իսկ այժմ դրսևորում է աղքատացման խորացման միտումներ**

1. Երկրում տնտեսական բոլոր մնացած ճյուղերի համեմատ գյուղատնտեսությունը պահպանեց իր համախառն արդյունքը, քանի որ շրջափակման պայմաններում գյուղ. մթերքը ներքին սպառող ուներ: Այնուամենայնիվ գյուղացիության մեջ լուրջ աղքատացում սկսվեց, որը պայմանավորված էր ինչպես գյուղում սպառողների ավելցուկով, այնպես էլ քաղաքային սպառողների աղքատացմամբ: Գյուղ. մթերքները վաճառվում էին շատ էժան, ինքնարժեքին մոտ գներով, իսկ ավելի հաճախ մի քանի տարի շարունակ գյուղացիները մթերքով ապահովում էին քաղաքների իրենց ազգականներին: Ընդհանուր առմամբ գործում էր գյուղ-քաղաք սոցիալական համերաշխության սկզբունքը, սակայն քաղաքների աղքատացումը աղքատացնում էր գյուղը:



2. Սեփականաշնորհման շրջանում գյուղում սոցիալական արդարությունը պահելու արդյունքում գյուղացիները ստացել են տարբեր չափերի և տարբեր որակի փոքր հողակտորներ՝ բնակավայրից տարբեր հեռավորության վրա: Դրանց միայն մի փոքր մասն էր ոռոգվող, որոնք էլ հիմնականում մշակվում էին: Բնակավայրերից հեռու գտնվող և չոռոգվող հողակտորների զգալի մասը ուղղակի չէին և չեն մշակվում:

3. Էներգետիկ համակարգի խափանումների պատճառով ոռոգման համակարգերի շարքից դուրս գալը նկատելիորեն նվազեցրեց հողերի արդյունավետությունը: Սրան մեծապես նպաստեց նաև թունաքիմիկատների պակասը, պարարտանյութերի պակասը, վառելիքի թանկությունը և այլն, որոնք նվազեցնում են հողի արդյունավետությունը, և գյուղատնտեսական արտադրանքի արդյունքը ձեռք է բերվում գյուղացիների աշխատանքային գերլարումով: Մյուս կողմից այս ամենի հետևանքով հողերի մի մասը գերշահագործվում են, իսկ նախկինում վարելահողեր հանդիսացող որոշ հատվածներ վեր են ածվում նախ՝ խոտհարքների, ապա՝ արոտավայրերի, և վարելահողերի մի մասը աստիճանաբար հյուծվում է կամ դեգրադացվում: Անտառամերձ որոշ տարածքներում գյուղացիները կտրում են անտառի որոշ հատվածներ՝ հողահանդակների վեր ածելով դրանք (Տավուշ, Լոռի): Մի քանի տարի շարունակ անտառը ենթարկվեց գերհատումների նաև վառելիքի նպատակով, ինչպես նաև առկա է արդյունաբերական նպատակով անտառի ավերային հատման երևույթը: Արդյունքում Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում տեղի է ունենում բնական ռեսուրսների ակտիվ դեգրադացիա, ինչպես նաև էկոլոգիական փոփոխություններ: Օրինակ՝ անտառների նոսրացումը իր ետևից տանում է ոչ միայն ողջ ֆլորայի և ֆաունայի փոփոխության, այլև սակավաջրության: Այսպիսով հողերը փչանում են աղքատության հետևանքով, փչացող հողերը սպառնում են խորացնել աղքատությունը:

4. Սեփականաշնորհման շրջանում սկսված տնտեսական ճգնաժամը ուղեկցվեց դրամի հսկայան արժեզրկմամբ, մարդիկ կորցրին իրենց կանխիկ դրամը, բանկերում ունեցած գումարները և սեփական հողերում՝ ներդրումներ անելու հնարավորությունը: Սեփականաշնորհման գործընթացը չուղեկցվեց վարկային ծրագրերով:

5. 1990-ական թթ. սկսված տնտեսական համընդհանուր ճգնաժամի հետևանքով փակվեցին Հայաստանի արտադրական ձեռնարկությունների ճնշող մասը, կանգ առավ շինարարությունը և այլն և արդյունքում սկսվեց աննախադեպ ծավալների գործազրկություն: Աշխատատեղերը կորցրած մարդկանց մի նկատելի զանգված, ովքեր դեռևս կապերը չէին կորցրել գյուղի հետ, վերադարձան գյուղ: Այլ դեպքերում, երբ փակվում էին գյուղերում մասնաճյուղեր ունեցող արտադրական ձեռնարկությունները, դրանց նախկին աշխատողները վերադարձան գյուղատնտեսական աշխատանքների: Արդյունքում արդյունաբերությունը ազատվեց 492400 աշխատողներից, գյուղը ձեռք բերեց լրացուցիչ 282.900 աշխատողներ: Նկատի ունենալով հողերի փոքր ծավալները և գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները, դրանք ավելի շուտ սպառողներ էին:

**6.** Տնտեսական ճգնաժամի առաջին տարիներին գյուղացիությունը իրեն և իր ունեցվածքը համարյա ամբողջովին ներդրեց տնտեսության մեջ և այժմ աչքի է ընկնում ռեսուրսային մեծ մաշվածությամբ. հնարավորինս վաճառվել է ունեցվածքը, մաշվել է գույքը, մաշվել է գյուղ.տեխնիկան: Այժմ, երբ գյուղը համեմատաբար սպառող ունի, նա այլևս չունի ներդրումների հնարավորություն:

**7.** Հայաստանի տնտեսությունն առհասարակ, գյուղատնտեսությունը մասնավորապես աչքի է ընկնում ներդրումների սակավությամբ և սպառման մեծ չափով: Մի կողմից սա բացատրվում է մեծ չափերի հասնող աղքատությամբ, մյուս կողմից՝ փոխված ժողովրդագրական կառուցվածքով (Հայաստանի բնակչության մոտ 18 տոկոսը կենսաթոշակային տարքի է) և տնտեսական ելքերը դրսում փնտրելու ձևավորվող ավանդույթով (աշխատանքային կամ մշտական միգրացիա):

**8.** Արտագաղթողների ուղարկած գումարները հիմնականում սպառվում են: Դրանք մեծ գումարներ չեն և ստացողների մեծ մասը տարիքով են կամ երեխաներին խնամող կանայք: Տնտեսական ներդրումների դրանք հազվագյուտ են ծառայում:

**9.** Գյուղերը բանկերից շատ հեռու են (միայն վերջերս է սկսվել բանկերի մասնաճյուղերի հայտնվելը մարզերում), գյուղացիությունը այդպես էլ չվարժվեց բանկերի հետ գործ ունենալ: Միաժամանակ բանկային համակարգը ընդհուպ մինչև 2000թ. կողմնորոշված չէր գյուղատնտեսական բիզնեսը վարկավորելուն: Վարկերը տրվում էին խիստ երաշխավորված գրավներով, ինչ գյուղացիները գործնականում չունեն:

**10.** Գյուղացիները բանկերի հետ աշխատելուն սովոր չեն և շատ հաճախ վախենում են բանկերից[5]:

**11.** Բացակայում է գյուղական աշխատուժի վերաբերյալ քաղաքականությունը: Զբաղվածության կենտրոնները աշխատանքի հմտությունների վերապատրաստման ծրագրեր իրականացնում են միայն գրանցված գործազուրկների նկատմամբ, իսկ գյուղացիները, հատկապես հողի սեփականատեր հանդիսացողները, իրավականորեն գործազուրկի կարգավիճակ չունեն և չեն կարողանում զբաղվածության գրասենյակների ծառայություններից օգտվել: Այսպիսով նրանք դուրս են մնում ոչ միայն վերամասնագիտացման գործընթացից, այլև աշխատանքային նոր հմտություններ տիրապետելու հնարավորությունից: Մինչդեռ բաց շուկայի նախապայմաններից մեկը շուկան հասկանալը, շուկայի մոնիտորինգը, բիզնես ծրագիր կազմելու հմտություններն են, որ գործնականում իսպառ բացակայում են գյուղում:

**12.** Հայկական գյուղերում փախստական բնակչության զգալի զանգվածը նպաստում է գյուղերի աղքատացման գործընթացին: Գյուղաբնակ փախստականները Հայաստանի նույնիսկ ընդհանուր գյուղական բնակչությունից բոլոր չափանիշներով առավել խոցելին են: Չնայած Հայաստանի գյուղական բնակավայրերում առավել բարեկեցիկ են Արարատյան դաշտավայրի գյուղերը, սակայն Արարատյան դաշտավայրում գտնվող Արարատի մարզը, որի բնակչության մեջ զգալի տեղ են զբաղեցնում փախստականները, Հայաստանի ամենաաղքատ մարզերից է[6]: Փախստականաբնակ գյուղերը «ծերացած» են և շատ հաճախ ապրում են Հայաստանից դուրս հաստատված հարազատների օգնության հաշվին: Սրանք շատ հաճախ սպառողական գյուղեր են:

*5. Հ.Խառատյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /Գյուղի բազմազանեցման ուսումնասիրություն/, Երևան, 2001թ.*



## 3.Գյուղական բնակչության ներսում առայժմ ակնհայտ սոցիալական բևեռացում չկա

**1.** Գյուղացիության մեջ տեղի ունեցավ զանգվածային աղքատացում, սակայն սոցիալական ակնհայտ բևեռացում չձևավորվեց: Գյուղերում «ծայրահեղ հարուստներ» չկան, չնայած կան «ծայրահեղ աղքատներ»: Միջին գյուղացու իղձալը ամսական 100-150 ԱՄՆ դոլարի չափով վաստակն է ընտանիքի ուտելիքը հիմնականում գյուղ.մթերքներով ապահովելուն զուգահեռ: Ընդհանուր առմամբ իղձալի շարքում թվարկվում է երեխաների համար որակյալ կրթություն ստանալու հնարավորությունը, սեզոնային հագուստով ապահովվածությունը, ծնողնե տաքացվող բնակարանը: Այս հնարավորությունները, որակական հետազոտությունների համաձայն, ունի գյուղական բնակչության մոտ 20 տոկոսը[7]:

**2.** Գյուղում մարդկանց բացարձակ մեծամասնությունը շարունակում է զբաղված մնալ գյուղատնտեսական գործունեությամբ: Գյուղերի արտադրական և բյուջետային գործունեության փոփոխությունից հետո ազատված մարդկանց մեծ մասն ընդգրկվել է գյուղատնտեսական զբաղվածության ոլորտ: Համեմատաբար խոշոր և արագ եկամուտներ ապահովող ոչ գյուղատնտեսական գործունեության տեսակները և ոլորտները էապես կրճատվել են, նորերը չեն ձևավորվել:

**3.** Գյուղերում նախկինում առկա արհեստավորական աշխատանքների հանդեպ պահանջարկի նվազումը իր հերթին նվազեցրեց արհեստավորների գործունեության դաշտը: Նախկին արհեստավորների մեծ մասը կամ զբաղվում է գյուղատնտեսությամբ, կամ մեկնում է արտագնա աշխատանքի:

**4.** Գյուղատնտեսությունը դարձավ հիմնական աշխատանքային ոլորտը, սակայն գյուղարտադրանքի վերամշակման և իրացման սպասարկող ենթակառուցվածքները գյուղում չձևավորվեցին: Ավելի ուշ դրանք դարձան քաղաքբնակների գործունեության ոլորտ և գյուղի ներսում առևտրային միջնորդների դաս այդպես էլ չձևավորվեց:

**5.** Ավելի ուշ երկրում՝ քաղաքներում սկսված տնտեսական աճին տեր դարձավ քաղաքների բնակչությունը, այդ թվում՝ գյուղական արտադրանքի վաճառքին և գյուղ.մթերքի վերամշակմանը: Գյուղացիության գյուղատնտեսական աշխատանքային կողմնորոշումը սկսում է դառնալ ինքնջիական:

**6.** Գյուղացիական զանգվածը տնտեսապես և սոցիալապես համասեռ է, գյուղական հարուստները շատ քիչ են, նրանց հարստությունը հիմնականում

*6. Աղքատությունը Հայաստանի բնակչության խոցելի խմբերում, Երևան, 1999թ.:*

*7. Հ.Խառատյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՈՉ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /Գյուղի բազմազանեցման ուսումնասիրություն/, Երևան, 2001թ.*

անասունն է: Այդ կարգի հարուստները Հայաստանի տարբեր գյուղերում և գյուղերի տարբեր գոտիներում նկատելիորեն տարբեր են, որոշ գյուղերում հարուստ են համարվում 10-12 խոշոր եղջերավոր անասուն ունեցողները, այլ գյուղերում՝ 30-50: Ընդհանուր առմամբ այդ ընտանիքների թիվը չի գերազանցում 2-3 տոկոսը:

**4.Գյուղական բնակչությունը զանգվածաբար ընկնում է Հայաստանի ընդհանուր բնակչության ստորին բևեռի մեջ:**

Այսպիսով, Հայաստանի գյուղական բնակչության վերջին տաս տարիների սոցիալ-տնտեսական բնութագիրը ներկայացնում է հետևյալ պատկերը. մարդկային աշխատանքային և ունեցվածքային ռեսուրսների հաշվին գյուղատնտեսությունը պահպանեց իր ծավալները, գյուղատնտեսական արտադրանքի հաշվին գոյատևման շանս ստացավ նաև քաղաքային բնակչությունը: Սեփականաշնորհման ընթացքում սոցիալական արդարությունը պահած լինելու հետևանքով գյուղը պահեց իր արտադրական ունակությունների միջինը, քաղաքը՝ ոչ: Գյուղը կտրուկ սոցիալական շերտավորման չենթարկվեց, քաղաքը ենթարկվեց: Քաղաքում խիստ դաժան մրցակցային պայքարում սոցիալապես անարդար և տնտեսապես անարդյունավետ կայացած սեփականաշնորհման հետևանքով ձևավորված սոցիալական բևեռացումը տնտեսական դաշտի թելադրանքը «հանձնեց» քաղաքի սեփականատերերի փոքր խմբին: Այս մեկնարկային անհավասար պայմանները հանգեցրին նրան, որ գործարար միջավայրի հետագա օրենսդրական և փաստական զարգացումները, քաղաքային գործարարների առնձնահատուկ հնարավորությունների պատճառով, նպատակաուղղվեցին հիմնականում արտադրական և սպասարկման ոլորտին և քաղաքին՝ ստվերի տակ թողնելով գյուղական գործարարության առանձնահատուկ կարիքները: Քաղաքի խիստ բևեռացած հասարակության վերին բևեռը այսօր թելադրում է կանոնները, որոնց արդյունքում քաղաքի սոցիալական անարդարության պատկերը տարածվում է քաղաք-գյուղ հարաբերությունների վրա: Այսօր հայկական գյուղը սպառել է իր ռեսուրսները, այդ թվում՝ սպառելիքային ռեսուրսը: Հայաստանում վերջին տարիներին նկատվող տնտեսական աճի պայմաններում 1996-1999թ-ի ընթացքում սպառողական գնի համաթիվն աճել է շուրջ 10 տոկոսով, արտադրական գներինը՝ 14 տոկոսով, իսկ գյուղատնտեսական ապրանքների գնի համաթիվն ընկել է գրեթե 2 տոկոսով[8]: Այս պայմաններում գյուղացիները ավելի ու ավելի են դրամազրկվում, գյուղացիների մեջ խորանում է ներդրումներ անելու անիմաստության համոզմունքը: Գյուղ-քաղաք սոցիալական համերաշխության սկզբունքը դադարեց: Սոցիալական շերտավորման խորացող գործընթացը «գունավորվեց» ևս մի նրբերանգով՝ գյուղական և քաղաքային բնակչության սոցիալական հակոտնյա խավերի ձևավորմամբ:

Սիա այս գործընթացը նկատելիորեն փոխեց գյուղական ատագաղթի

8. *Գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը և գյուղատնտեսական արտադրանքի գների խնդիրը Հայաստանի հանրապետությունում, Երևան, 1999թ.:*



պատկերը: Սեզոնային ժամանակավոր աշխատանքային արտագաղթին սկսեց փոխարինել ընտանիքներով տեղափոխությունը:

Արարատի մարզի մարզպետարանի պատասխանատուներից մեկի հետ ունեցած զրույցից այս փոքր հատվածը վկայում է արտագաղթի տիպային ընթացքի մասին.

*- Սարզից արտագաղթը ի՞նչ ակտիվությամբ է տեղի ունենում:*

*- Ամեն գյուղից մոտավորապես 400-500 մարդ չկա:*

*- Դա ընդմի՞շտ գնացածներն են, թե՞ ժամանակավոր գնացողներն էլ հետը հաշված:*

*- Էն էլ, մյուսն էլ: Գնում աշխատում են, ծմեռը գալիս, գարունը նորից գնում: Բայց դրանք քիչ են, մեծ մասը կարելի է ասել ընդմիշտ: Օրինակ, Նոր Կյանքից 450 մարդ գնացել են, հետո շատ գյուղերից են գնացել, որոնք չեն էլ վերադառնա:*

*- Ինչու՞ հենց Նոր Կյանքը նշեցիք:*

*- Էնտեղ կապեր շատ ունեն դրսի հետ ու հետ չեն էլ գա: Հակված են դեպի էն կողմերը:*

*- Ո՞ր ուղղությամբ են ավելի շատ գնում:*

*- Ամերիկա, Հոլանդիա, դա էս վերջին շարժերը... Ռուսաստան, դա հասկանալի է, ամենաշատը Ռուսաստան՝ Ստավրոպոլ, Կրասնոդարսկիյ կրայ, Սվերդլովսկ, Ուկրաինայի էդ ներքևները՝ Խարկով... Մի խոսքով, շատ-շատ են գնում: Նոր Կյանքից 456 մարդ չկա, դրանք էլ բոլորը աշխատող ձեռներն են, որ բացակա են:*

*- Քանիսի՞ց՝ 456:*

*- 2000 բնակչից:*

Արտագաղթի մեծ ծավալներ ունեն շատ գյուղեր: Սարտունու շրջանի Լիճքի գյուղապետի պատմածից. *Սա շրջակա գյուղերի մեջ ամենաշատ խոպանչիներ ունեցող գյուղն է: Համարյա ողջ չափահաս արական բնակչությունը՝ մոտ 2000 մարդ մարտին մեկնում է Ռուսաստան սեզոնային աշխատանքի և վերադառնում նոյեմբերին: Իրենցից հետո նման բարձր ցուցանիշով երկրորդ տեղում Երանոս, Վարդաձոր, Վարդենիկ գյուղերն են: 95-97թթ. տենդենց կար, որ դուրս էին գնում ընտանիքներով, ճիշտ է, ոչ մեծ քանակությամբ (տարին 5-6 ընտանիք, ընդամենը մոտ 15 ընտանիք), հիմա դա չկա, փոխարենը անհամեմատ վերջին երկու տարիներին ավելացել է գնացող-եկողների ընդհանուր քանակը: Այս տարի (2001թ.) կարելի է համարել թվաքանակի պիկը:*

Մոտավորապես նույն պատկերն ունեն Շիրակի մարզի Ազատավան, Ոսկեհասկ, Արևիկ գյուղերը:

# ԻՆՉՈՒ՞ ԵՆ ԳՆՈՒՄ

Մինչև հիմա կատարված բոլոր ուսումնասիրությունները պնդում են, որ Հայաստանից ժամանակավոր կամ մշտական արտագաղթի հիմնական պատճառը աշխատանքի բացակայությունն է և ընտանիքների սոցիալ-տնտեսական ծանր պայմանները[1]: Այս ընդհանուր բնութագրերը, սակայն, խիստ տարողունակ են և առաջին հայացքից ամփոփում են օբյեկտիվ երևույթը: Այս օբյեկտիվ երևույթը հիմքում ունի բազում սուբյեկտիվ դրսևորումներ, որոնց համահավաքը ակներևաբար վկայում է այն մասին, որ դրանք ուղղակիորեն առնչվում են կառավարման համակարգի հետ և դրանց նկատելի մասը ցանկության դեպքում կարող են վերացվել և էապես ազդել արտագաղթի ներկայումս անկառավարելի գործընթացի վրա: Մեր բանասացներից շատերը, ովքեր դրսում են աշխատում, կամ պատրաստվում են հեռանալ Հայաստանից, պնդում են, և բերում են կոնկրետ օրինակներ այն մասին, որ իրենց ուղղակի «չեն թողնում աշխատել»: «Չեն թողնում» տարբեր ձևերով՝ խոչընդոտներով, իրավական ամենաթողությամբ, կառավարման մարմինների անտարբերությամբ կամ նույնիսկ նրանց կողմից իրականացվող ճնշումով: Դիտարկենք խնդիրը կոնկրետ օրինակների վրա, որոնք վերաբերվում են գյուղի և քաղաքի տարբեր իրավիճակների, բայց բոլորն էլ արտագաղթի առիթ են հանդիսացել անհատ մարդկանց համար, և հանդիսանում են այն հենքը, որ պարզաբանում է ծավալային արտագաղթի որոշ պատճառներ:

*Դեպք 1.*

*Լ.Մ.-ն խանութում հաշվապահ էր: Խանութը Երևան քաղաքի կենտրոնում գտնվող պտուղ-բանջարեղենի խանութ էր, որի նոր տնօրենը 1995թ. դրեց կոլեկտիվի կողմից սեփականաշնորհման հարցը: Կոլեկտիվի կողմից ժողովը որոշեց 12 անդամների մեջ հավասար փայաբաժիններով սեփականաշնորհման համաձայնություն: Տնօրենը շանտաժով և վախեցնելով 12-ից հինգին դուրս մղեց հավակնորդներից՝ նրանցից հրաժարման փաստաթղթեր ու ստորագրություններ կորզելով: Լ. Մ.-ն չէր համաձայնվում գործարքին, պնդում էր, որ մնացած 7-ի մեջ պետք է հաստատվի հավասար փայատիրություն: Լ.Մ.-ին երկու անգամ ծեծեց խանութի տնօրենի որդին, որին ձևակերպել էին հիմնական սեփականատիրոջ հավակնորդ Սահմանափակ պատասխանատվության տնօրեն: Ծեծել են ամբողջ կոլեկտիվի առաջ, ոչ ոք չէր էլ փորձում միջամտել: Միայն բանվորներից մեկը չդիմացավ, մեծ դժվարությամբ ծեծողից «խլեց» արդեն ուշագնաց կնոջը և դուրս փախցրեց գազազած տնօրենի գազազած երիտասարդ որդու ձեռքերից: Լ.Մ.-ն փորձեց դատա-բժշկական փորձաքննությամբ տեղեկանք վերցնել ծեծի մասին, սակայն տնօրենի միջամտության պատճառով երկու ամիս տևեց, մինչև հնարավոր եղավ ռենտգեն անցնել դատա-բժշկական փորձաքննության որոշմամբ: Արդյունքում*

1. С.Мхитарян, Миграционное движение в Ереване (Социологическое исследование), Ереван, 1998.



*տեղեկանք տրվեց սպիացած վերքերի և կպած ոսկորների մասին, որը դատարանը հիմք չհամարեց ծեծի մասին: Լ.Մ.-ն մի քանի անգամ դիմել է դատարան, մի անգամ միայն գերագույն դատարանը չեղյալ համարեց առաջին ատյանի դատարանի որոշումը, մնացած բոլոր դատարանները հաստատեցին առաջին որոշումը, որը տնօրենի օգտին էր: Այդ ընթացքում Լ.Մ.ին անընդհատ սպառնում էին տնով-տեղով բնաջնջել: 3 երեխաներ առանց ամուսնու (այրի է) մեծացրած կինը որդիներին «փախցրեց» Հայաստանից. մեկն այժմ Հունգարիայում է, մյուսը՝ Ռուսաստանում: Դուստրը, որն աշխատում էր բանկում, ստիպված էր դուրս գալ աշխատանքից, քանի որ անընդհատ հետապնդում էին: Հիմա մայր ու աղջիկ նստած են տանը, առանց աշխատանքի, առանց միջոցների: Վերջին միջոցները ծախսվեցին դատարանների վրա:*

Այս կոնկրետ օրինակը, որ բավական մոդելային է, վկայում է Հայաստանից հեռանալու բոլորովին այլ պատճառների մասին. սեփականաշնորհման գործընթացից կոպիտ արտամղում, վտանգավոր իրավիճակ կյանքի համար, անհուսություն:

*Դեպք 2.*

Այստեղ բերվում է Հայաստանի զանազան, տարածքային և տնտեսական դատարանների ուղարկված մի դիմում, որի երեք հեղինակները մինչև այսօր սպասում են արդարադատությանը և ուղղակի առնչվում է մեր հետազոտած խնդրին.

*Մեծարգո դատավոր*

*Երկարատև անհաջող փորձերից հետո ապավինում ենք Ձեր արդարամտությանը և սկզբունքայնությանը, օրենքին:*

*Խոսքը գնում է ՀՀ արտադրական ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքում տեղի ունեցած մի ծանր խարդախության մասին, որի զոհերից մեկն էլ մենք ենք: Վանաձոր քաղաքի «Մալանչ» ԲԲԸ-ն սեփականաշնորհվել է 1996թ. սեպտեմբերի 4-ին աճուրդի կենտրոնում: ԲԲԸ-ի տնօրեն Միշա Ժորժիկի Դավթյանը, որ Վանաձոր քաղաքի բամբակյա գործվածքային արտադրական միավորման ֆաբրիկայի տնօրենն էր, 1996թ. օգոստոսի 25-ին առաջարկեց մեզ՝ օգնել իրեն 2400 սերտիֆիկատներով, յուրաքանչյուրը 20.000 դրամ անվանական արժեքով, իր ընկերությունը սեփականացնելու համար (կամ համապատասխան անդորրագրեր՝ մուծված սերտիֆիկատների դիմաց), նույնիսկ լիազորված անձ՝ Դերձյան Արշալույս Արտյուշի, որի անունով մուծված է 1061 սերտիֆիկատ՝ 21 միլիոն 220.000 դրամ գումարով (կոլեկտիվի կողմից): Իր խնդրանքը Միշա Դավթյանը պատճառաբանեց նրանով, որ այդ պահին պատրաստի գումար չունի, քանի որ բանվորական ձեռնոցներ է ուղարկել Ռուսաստան վաճառելու, այնտեղից պետք է բերեն մոտ 30000 ԱՄՆ դոլար և ինքը անմիջապես կվճարի: Միշա Դավթյանը վկայակոչեց իր մի շարք ընկերների, այդ թվում՝ այն ժամանակվա ՀՀ Արդյունաբերության փոխնախարար և ԱԺ պատգամավոր Արմեն Կիրակոսյանին, «Ցանց» ՍՊԸ-ի տնօրեն Հովսեփ Սեֆերյանին, Մարալիկի ԲԳԱՄ-ի տնօրեն Գագիկ Հա-*

րությունյանին, ասելով, որ խնդրվող սերտիֆիկատները նշված բոլոր անձանց համար են (ավելի ուշ, 1996թ. նոյեմբերի 12-ին նա իր այդ խոսքերը հաստատեց ստորագրված հայտարարաթերթիկով, որը կցում ենք սույն դիմումին): Չնայած մենք այդ քանակության սերտիֆիկատներ չունեինք, բայց վստահ լինելով հիշյալ անձանց հեղինակությանը և պատվախնդրությանը, մեր բոլոր ջանքերը գործադրեցինք հավաքելու անհրաժեշտ քանակությունը և հանձնեցինք Միշա Դավթյանին: Միշա Դավթյանը այդ գործարքն իրականացնելուց հետո սերտիֆիկատները շուտով վերադարձրեց մեզ, ինչով մեծապես շահեց մեր վստահությունը:

Շուտով, սակայն, հիշյալ պարոնը կրկին խնդրեց սերտիֆիկատները: Այս անգամ խոսքը գնում էր «Մալանչ» ԲԲԸ-ի սեփականաշնորհման մասին: Բացատրությունն այն էր, որ 100 տոկոսով սեփականացնելու համար պակասում էր 3500 հատ սերտիֆիկատ: Չնայած հավատում էինք նրան, այնուամենայնիվ խնդրեցինք, որ այս անգամ նա մեզ ստացականներ տա, ինչ և արեց կնիքով հաստատված, ինչպես նաև նոյեմբերի 12-ով թվագրված մի գրավոր հայտարարություն այն մասին, թե ինչի՞ համար է նա մեզնից վերցնում սերտիֆիկատները: Հայտարարությունում միաժամանակ ասված է, որ նա սերտիֆիկատները մեզնից փոխառինաբար խնդրում է մեկ ամիս ժամկետով: Մենք այդ քանակությունը չունեինք, բայց մեր ընկերներից ու հարազատներից հավաքեցինք և Միշա Դավթյանին հանձնեցինք 2300 սերտիֆիկատներ, որ այդպես էլ չվերադարձվեցին մեզ. մեր բազում հորդորներին ի պատասխան շարունակ դատարկ պատճառաբանություններ ու խոստումներ էինք լսում միայն: Տասնյակ անգամներ մեծ դժվարությամբ ճարում էինք սերտիֆիկատներ, տալիս ուրիշներին, մինչև մեր պարտապանը իր խոստումը կկատարի, որ այդպես էլ չիրականացավ: Այդ ընթացքում սերտիֆիկատների գները շատ փոխվեցին, մենք շարունակ տոկոսներ էինք վճարում: Մեր պարտքերը այդ ընթացքում բազմակի աճեցին, մեր ամբողջ ընկեր-բարեկամական շրջապատը երես թեքեց մեզնից: Շուրջ ինը ընտանիք այս կամ այն չափով խրված է այդ պարտքերի մեջ՝ մեր միջոցով:

Ավելի ուշ իմացանք, որ Միշա Դավթյանը վարկ է վերցրել Հայէկոնոմբանկի Վանաձորի մասնաճյուղից 1995թ. հունիսի 5-ին, 6 ամիս ժամկետով, և այդպես էլ չի վերադարձրել: Վեց ամիս ժամկետով վարկ տված բանկը անհասկանալի խաղաղությամբ սպասել է շուրջ 4 տարի, և միայն 1999թ. դիմել դատարան: Միշա Դավթյանը դատին չի ներկայացել, դատարանում հայտարարվել է, որ նա Հայաստանում չէ, չնայած դրանից երկու օր առաջ մենք անձամբ հանդիպել ենք նրան: Մեզ համար ակնհայտ է, որ բանկի և Մ.Դավթյանի միջև եղած հանցավոր համաձայնության հետևանքն է դա: Այնպես թե այնպես դատարանը սնանկ է հայտարարել «Մալանչ» ԲԲԸ-ն, և որպես պարտատեր ճանաչել այդքան համբերատար լռած բանկին, պարտքը ճանաչելով 89 մլն.դրամ, որից մայր պարտքը՝ 29 մլն, մնացածը՝ տոկոսներ: Բանկն այժմ տնօրինում է «Մալանչ»-ի գույքը: Իսկ մենք ովքե՞ր ենք, ի՞նչ կարգավիճակով, ո՞վ պիտի մարի մեր պարտքը, մեր պարտքերի աճած տոկոսները, ինչպե՞ս կարող ենք մասնակցել պարտքերի մարման հարցին՝ անհասկանալի է:

Պարտքերի, պարտատերերի ճնշումների, բարոյական ընկճվածության



հետևանքով ընտանիքիս խիստ ծանրացած նյութական վիճակը պատճառ դարձավ, որ որդիս՝ Վազգեն Բաղդասարյանը գնա Ռուսաստան աշխատանք գտնելու, ու այնտեղ էլ սպանվեց Սոչի քաղաքում 2000թ. դեկտեմբերի 17-ին: Նրա մահվան հիմնական պատճառը Մ.Դավթյանի հանցագործ փախուստի հետևանքով առաջացած լարված վիճակն էր և մեր ընտանիքի անորոշությունը: Իսկ Միշա Դավթյանը հանգիստ ապրում է, ինչպես ասում են, Ռուսաստանի դաշնությունում և հավանաբար վայելում է Հայէկոնոմբանկի երկարլռության հետևանքով հավաքած գումարներն ու մեզ նման հիմարացած պարտատերերի վերջին քրտինքով աշխատածը: Նրա հայտարարաթերթիկում նշված պատվարժան համարվող անձինք էլ հրաժարվում են որևէ պատասխանատվությունից:

Մեծարգո դատավոր

Մեծագույն հույս ունենք, որ Ձեր միջամտությամբ որևէ հնարավորություն կստեղծվի կամ մեզ ճանաչելու սեփականատեր այն ԲԲԸ-ի, որի դառնությունը ճաշակում ենք այսքան տարի, բայց որի սեփականաշնորհման ընթացքին այդպես անիմաստ օժանդակել ենք, կամ որևէ կերպ պատասխանատվության կանչել Մ.Դավթյանին՝ բեկում և հետախուզում հայտարարելով ու գտնելով նրան և լուծում տալ այս բազմաչարչար հարցին՝ մի քանի ընտանիքներ փրկելով կործանումից: Կարծում ենք, որ իրերի այս ընթացքի պատասխանատվությունը ընկնում է նաև Հայէկոնոմբանկի Վանաձորի մասնաճյուղի վրա և նրա գործարքների իրավական քննությունը առհասարակ, Միշա Դավթյանի հետ ունեցած գործարքը մասնավորապես հատուկ հետազոտության կարիք ունի: Բոլոր դեպքերում խիստ անհրաժեշտ է, որ Միշա Դավթյանը հայտնվի Հայաստանում՝ պատասխանելու համար այս ծանր հարցերին»:

Դիմումի հեղինակների հաստատուն համոզմունքն այն է, որ բանկի հետ հանցավոր համաձայնության եկած իրենց պարտապանը բանկի հետ միասին վայելում է արդարադատության բարեհաճությունը: Այս դիմումը ստորագրել են երեք մարդ, որոնցից երկուսը այժմ բացակայում են Հայաստանից՝ պարտատերերին չհանդիպելու և ընտանիքի համար որոշ միջոցներ հայթայթելու հույսով, երրորդի որդին զոհվել է Ռուսաստանում և ինքն էլ պատրաստվում է ընտանիքով հեռանալ: Դիմումի հեղինակներից այս վերջինը առայժմ Հայաստանում է բացառապես ճանապարհածախսը հոգալու անկարողության պատճառով: 2002թ. Երևանում սկսված շինարարությունը նրան հնարավորություն տվեց աշխատանք գտնել, բայց այդ աշխատանքից վաստակածը ծրագրավորվում է օգտագործել որպես ճանապարհածախս՝ այս «անարդար երկրից հեռանալու համար»:

**Դեպք 3.**

Արարատի մարզի գյուղերից մեկի խանութպանի հետ ունեցած զրույցից: Գյուղացիներից շատերի կարծիքով «ծաղկող խանութ է»: Խանութի տերերը իրենց ինքնագնահատականով «միջակ» ապրողներ են, գյուղացիների գնահատականով «ունևոր» են: Աշխատանքային պայմաններից խիստ դժգոհ խանութպանը պնդում է, որ «ամեն ինչ անում են, որ թողնես էս երկրից հեռա-

նաս»:

- *Պաժարնին [2] գիտե՞ք ոնց ա: Մենք պաժարնին պետականորեն չենք վճարում: Պաժարնին գալիս ասում ա՝ պետք ա խանութում ունենաք պաժարնի սարքե՞ր, պաժար եղավ, որ խմանաս: Արանք լրիվ տեղադրել եմ: 35000 դրամ տվել եմ սիգնալիզացիայի համար, 2000 էլ միլիցիայի համար, որ միացնում եմ՝ զանգ ա տալիս: Հիմա պաժարնին եկել ա, ասում ա՝ գիտես ի՞նչ կա, բազա ֆիրմա կա, նրանց բաները պետք ա բերես տեղադրես: «Պետք է փոխենք էդ սարքավորումը, դրանք հին սարքեր են»: Ասում եմ դա աշխատում ա: Բանի տեղ չդրեց, բռնեց ակտ գրեց: Գնացել եմ պետի մոտ: Ասում եմ՝ այ պետ ջան, մի ցույց տվեք, տեսնենք, էդ ո՞ր խանութն ա օրենքով, ես էլ անօրեն, որ իմ վրա ակտ ես գրում, էդ էլ էն դեպքում, որ ես օրենքին շատ լավ էլ ենթարկվում եմ: Ասել էք՝ 10 օրվա մեջ արել եմ: Ասում ա, գիտես ի՞նչ, թե որ ակտը գրվել ա, մի 2000 պիտի պետականորեն մուծես՝ մենք էլ ունենք վերևը փող տալու: Էդ՝ մեկ: Այ էս ընկերը, որ էկավ (մինչ մենք զրուցում էինք, մի մարդ եկավ ու գնաց, խոսքը նրա մասին է-Հ.Խ.), մի անգամ եկավ, ասում է՝ բա, գիտես, բազա եմ աշխատում, պիտի ինձ ցույց տաս, արի քեզ սիգնալիզացիա [3] անցկացնենք, որ տեսնենն աշխատում եմ: Ես էլ մտածեցի հետները գլուխ չդնեմ, սիգնալիզացիա քաշեցի: Հիմա էլ եկել ասում ա՝ ինձ սիգնալիզացիան չի հետաքրքրում, Նոր տարի ա, բոլորն էլ ուզում են Նոր տարի անցկացնեն, պիտի գաս՝ գիշերը քնես խանութիդ մեջը, որ գողություն չլինի: Ասում եմ՝ չհասկացա, բա սիգնալիզացիան ասել ես՝ ես էլ քաշել եմ: Ասում է՝ իմ գործը չի, հիմի գողությունը շատ է, տոնական օրեր են, ես էլ ուզում եմ իմ տանը, իմ ընտանիքի հետ անց կացնեմ: Քեզ զգուշացնում եմ, եթե խանութից գողություն եղավ, չգաս ասես խանութս կտրել են: Հազ 30.000 դրամ տվի սիգնալիզացիա քաշեցի, համ էլ պիտի խանութում քնեմ, որ գողությունից պաշտպանեմ: Բա էլ ինչի՞ համար եմ հարկեր մուծում, միլիցիա պահում, փող տալիս՝ սիգնալիզացիա քաշում, որ հետո էլ ես պիտի իմ խանութը գողերից պաշտպանեմ: Ես էլ հիվանդ մարդ եմ, շաքար ունեմ: Այսինքն անպաշտպան ենք մենք, ես տենց եմ հասկանում էս հինգ տարի աշխատելուց հետո, մենք անպաշտպան ենք օրենքի ներկայացուցիչների մոտ: Ու դրանից է իմ հիասթափությունը, որ ես սափ ազատվում եմ խանութի գործերից, ինձ պետք չի էս խանութը, որ բոլորից կախված լինեմ:*

- *Կամ մեկ այլ օրինակ: Մեր գյուղում ոմանք հոսանքի վճար չէին արել, եկան ամբողջ գյուղի հոսանքն անջատեցին: Ամառն էր, սառնարանը լիքը պաղպաղակ, հավեր: 52000 դրամի մենակ պաղպաղակ ենք բերել: Պաղպաղակն եղավ կաթ, հավի բուդն էլ տակն էր, լրիվ հոսեց վրան: Մոտ 200000 դրամի ես տուժեցի, ո՞վ տեր կանգնեց՝ ոչ մեկը, տենց են ուզում, տենց են անում: Բա իրանց գործը առաջ տանեն, պլանը պիտի՞ կատարվեր, գյուղացին էդ փողը պիտի հավաքեր տար:*

- *Իսկ եթե դուք փորձեիք դատի տալ էդ մթերքի փչանալու համար:*

- *Կծիծաղեն ու ձեռ կառնեն քեզ էդ բանի համար: Էդ հոսանքի աշխատողը էնպիսի տեր ու տիրական ունի, որ կարող է, եթե ջղայնացնեիք էնպիսի պա-*

2. Հրդեհաշեջները:
3. Ազդանշան:



*հանք դնելով, առհասարակ մի ամիս կտրեր լույսը, ինչի՞ մասին է խոսքը: Կարող է հետո էլ ինքը պատճառ գտնի քեզ դատի, դու իրավունք չունես: Մյուս կողմից էլ աշխատողը գալիս ասում է՝ ինձ ուղարկել են մի 100.000 այսօրվա մեր հոսանքի վճար տանեմ, թե որ հոսանքը չանջատեմ, ոչ մեկը վճար չի տա: Այսինքն ասում ես՝ ավելի լավ է գործ չունենամ: Թողնել գնալը ավելի լավ է:*

## Դեպք 4.

Գեղարքունիքի մարզում, որտեղ Սևանա լիճը հնարավորություն է տալիս ձկնորսությամբ զբաղվել, գործում են ձկան վերամշակման արտադրամասեր: Միա այդ արտադրամասերից մեկի տիրոջ որոշ նկատառումները.

Մեր այն հարցին, թե ինչպիսին են հարաբերությունները իշխանությունների հետ, հարկային դաշտը.

*«Որ նոր էի բացել, սկզբնական շրջանում, ուղղակի զզվեցնում էին, ամեն մարդ գալիս էր ստուգելու, անկախ այն բանի՝ իրավունք ունի՞, թե ոչ. հարկային, միլիցիա, էկոլոգիա, ներքին գործերի վարչություն, ազգային պարկ, եկան նույնիսկ երկաթգծի ոստիկանությունից: Բայց որ ծանոթացան իմ բնավորությանը, կռվելով, վիճելով, բացատրելով, խնդրելով, վերջը հասկացան իմ վիճակը, հիմա փառք աստծո, մարզում էլ պրոբլեմ չունեմ: Կատարում եմ միայն պաշտոնական մուծումները: Ինչու՞ ես փողը պիտի տամ մասնավոր մեկին, երբ կարող եմ բյուջե մուծեմ, որ էլի իմ երկրին, մեր ժողովրդին պիտի գնա: Շատ հարցեր ցավոք մարզից դուրս են և կապված են հանրապետական կազմակերպությունների հետ: Դա ի մասնավորի վերաբերում է Բնապահպանության նախարարության հետ ունեցած հարաբերություններին: Տարբեր պատճառաբանություններով ամսով, մի անգամ էլ նույնիսկ տարով արգելեցին աշխատել: Եթե արգելում են ձկնորսությունը, առաջինը ինձ են փակում: Իրականում կարելի է որսը պլանավորել, լիցենզավորել պաշարների համեմատ, այլ ոչ թե արգելել: Նախանցյալ տարի մի կիսամյակին թույլատրեցին 600 տոննա որս, հաջորդ կիսամյակին լրիվ արգելեցին: Մինչդեռ կարելի էր պլանավորել յուրաքանչյուր կիսամյակը 300 տ: Դրա հետևանքով աշխատանքը կանգնում է, բանվորները թողում գնում են, հետո նորը պիտի գտնել, նորից սովորեցնել և այլն: Ամեն տարի նոյեմբեր-դեկտեմբերին ձկան ձվադրման կապակցությամբ որսի արգելք է լինում: Չեմ հասկանում մեր ղեկավարության և մինիստրության մտածելակերպը: Ձկնորսությունը արգելում են, շատ լավ: Բայց իրականում չեն արգելում, ձուկը շարունակում են որսալ, վաճառքն են արգելում: Ճանապարհը փակում են, այստեղ գները ցցում են, իրացման շուկաներում բարձրացնում և արանքում ճանապարհին կանգնողներն են (հսկողները և ոստիկանները) օգտվում: Դա էլ մի կողմ, ի՞նչ կապ ունի դա իմ արտադրության հետ: Ես նախօրոք կուտակում եմ իմ մի ամսվա պաշարը, ունեմ սառնարաններ, հանուն դրա մեծ ծախսերի եմ գնացել, որպեսզի աշխատեմ: Դա բիզնեսի օրենքն է, ընդհակառակը, չթույլատրված ժամանակ է, որ ես պիտի օգտվեմ իմ արտադրության ընձեռած հնարավորություններից: Ասում են՝ « չէ, եթե դու վաճառեցիր, ուրիշներն էդ առիթի տակ անօրեն ձուկ կսկսեն վաճառել, չենք կարող դրա դեմ պայքարել»: Իրենք չեն*

*կարողանում իրենց պարտավորությունները կատարել, իմ օրինական գործն էլ են արգելում: Էլ առյան չի մնացել բացատրելու, խնդրելու, արդյունքի չեմ հասնում: Հիմա էլ նոյեմբերն է, էլի արգելված է: Ես անցած տարի գնացել եմ մարզային դատախազի մոտ, բացատրել եմ իրավիճակը, ասում է մենք իրավունք չունենք քեզ արգելելու: Բայց ի՞նչ օգուտ, ձուկը դուրս է գալիս այստեղից, թղթերի լրիվ ձևակերպումով, ամեն 100 մետրը մեկ ճանապարհին կանգնեցնում են, թե՝ չի կարելի: Պետի հետևից գնամ, հազար ձևի էքսպերտ, քաշքշուկ, օրեր են տևում, մինչև տեղ է հասնում: Հո չես կարող սաղի հետ կռվես: Չեն թողում: Նախարարը նախանցյալ տարի հրամանի մեջ գրել էր՝ արգելել ապխտած ձկան վաճառքը: Չեմ հասկանում, ի՞նչ ձևի է մտածում էդ մինիստրը, ես գնացի ասի՝ էնա գրեիք ձուկ ուտելն արգելվում է: Ի՞նչ իրավական հիմքով եք էդ հրամանը տվել: Դա սահմանադրության խախտում է, քաղաքացիական օրենսգրքի մի քանի հոդվածի խախտում է, բայց ոչ մի տեղաշարժ:*

*Երկրորդ, արգելքը ջրի վրա բացարձակապես չի գործում, ջրի վրա ոչ մի պայքար չկա, պայքարը ճանապարհի վրա է, երբ ձուկն արդեն իսկ որսված է, շլագբաում են գցում, ճանապարհը փակում: Է, դաշտով կտանենք: Երբ խոսում ես սահմանափակման մասին, պլանավորման մասին, պատճառաբանում են, որ եթե մեկին թողնում ես, մյուսին չես կարող արգելել: Բայց դա իմ պրոբլեմը չի, պետություն ես, կարողացիր, աշխատողներ ունես, թող իրենց ֆունկցիան կատարեն: Ընդհակառակն, բոլոր արգելքները գործում են գրանցված, պետական բյուջե փող մուծողների վրա: Ով անօրեն է, նրա վրա էլ օրենքը չի գործում: Ստացվում է, որ ես գրանցված եմ, կրակն եմ ընկել: Նայում ես՝ սաղ գյուղից ծուխ է ելնում, բոլորն էլ ապխտում են, բայց դա իրենք չեն տեսնում: Ուղղակի թող ու փախիր»:*

*Դեպք 5.*

Գյումրի, Մուշ 2 թաղամաս.

**Երիտասարդ կին** - *Ես վարսավիրանոց էի ուզում բացել, աշխատում էի 58-թաղամասում: Մուշ 2 թաղամասում բնակարան պիտի ստանայինք: Որոշեցի հենց այստեղ էլ տարածք վարձակալեմ, վարսավիրանոց բացեմ: Գնացի քաղաքապետարան, դիմում գրեցի: Ճարտարապետը խոստացավ, ասաց հենց որ շինարարությունը ավարտվի, տարածք կտամ:*

*- Դուք վարձակալությունո՞վ տարածք էիք ուզում:*

*- Հա, օրենքով, ինչ-որ հարկն է ես հարկը կմուծեի: Հետո ասում էր գնա էսօր, էգուց արի: Մի հարյուր անգամ տարավ-բերեց:*

*- Ինչու՞ էր այդպես ասում:*

*- Չգիտեմ:*

*- Բայց տարածք կա՞ր:*

*- Ինչի՞ չկար: Այստեղ մինչև հիմա էլ կա: Շենքերի տակերը լրիվ դատարկ են: Ասում էր դուք աշխատող մարդ եք, երիտասարդ եք, ձեզ տարածք կտամ, այդպես էլ անցավ գնաց: Հետո վերջում գնացի ամուսնուս հետ, ասացի ի՞նչ եք ասում, պետք է տա՞ք, թե ոչ: Ասաց աճուրդային կարգով արի գնիր, քառակուսի մետրը 60 դոլար: Մուշ թաղամասում 60 դոլար: Իսկի մի կարգին ապրող էլ չկա, եդ ո՞վ պիտի գար վարսավիրանոց, որ ես քառ.մետրը 60 դոլարով վարձակալեի: Ամուսինս էլ ասաց, որ 60 դոլար ես քառակուսի մետրին տամ, կտամ մի հատ սենյակ կառնեմ, սեփականաշնորհած, տարածքն էլ իմը կլինի: Ճարտարապետն էլ ասաց «Շատ խելացի տղա ես»: Ձեռ առավ մեզ: Էդպես էլ ոչինչ չստացվեց, ուղղակի չեն ուզում գործ անենք, կամ՝ փող են ուզում:*



*- Բայց դուք պատրաստ էիք վարձակալությունով վերցնել:*

*- Այո, կսարքեյի իմ ուժերով ու կաշխատեի: Դրա համարել էլ ամուսինս թքեց ամեն ինչի վրա, ասաց «Այստեղ ապրելու տեղ չի», գնաց Ամերիկա:*

*- Դուք համառորեն փորձեցիք, բայց չհասաք:*

*- Փորձեցինք, էս 5-6 տարի է ես այդ քաղսովետի դռներն եմ: Կամ երես պետք է ունենաս, կամ փող, եթե այդ երկուսն էլ չունես, գնա տեղդ նստի:*

*- Իսկ եթե երես ունես, ո՞նց ես...*

*- Չգիտեմ, ինչքան պետք է դռները քարշես, ահավոր է այս թաղամասում ապրելը, հենց մենակ այստեղ ապրելու համար մարդկանց պետք է վճարել, իսկ իրենք էդպիսի գներ էին ասում:*

*Դեպք 6.*

Գեղարքունիքի Նորակերտ գյուղը - 2001թ. փետրվարին Հանրապետության հրապարակում, կառավարության շենքի առաջ հավաքվել էին մոտ 200 մարդ, ձեռքերին պլակատներ, որոնց վրա գրված էր. «Նորակերտը արտագաղթում է», «Նորակերտը այլևս չի լինելու», «Մի արտաքսեք Նորակերտը»: Ցուցարարները պահանջում էին վարչապետի հետ հանդիպում:

Նորակերտի վարչական տարածքում մոտ 100 հեկտար բարձրարժեք հողակտոր մնացել է չսեփականաշնորհված: Գյուղացիները ընդհուպ մինչև 1998-99թթ. այս հողերը վարձակալությամբ վերցնում էին գյուղապետարանից 2-3-4-5 հեկտար չափով և ցորեն ցանում: 1999թ. մարզպետարանի որոշմամբ այս հողերը ամբողջովին վարձակալությամբ հատկացվեցին վարդենիսցի մի մարդու և տասնյակ ընտանիքներ միանգամից զրկվեցին ընտանիքը կերակրելու հնարավորությունից: Երկու տարի շարունակ նորակերտցիները պահանջում են իրենց գյուղի վարչական տարածքի այդ հողամասի կամ սեփականաշնորհում, կամ վարձակալության իրավունք: Մարզպետը պնդում է իր որոշման վրա՝ գյուղացիներին առաջարկելով աշխատել հողի նոր վարձակալի մոտ՝ որպես վարձու աշխատող: «Բայց այնտեղ 2-3 աշխատողը հերիք է, մյուսներն ի՞նչ անեն, ո՞նց պահեն երեխաներին»: Սա նորակերտցիները պահանջում էին այդ հողերն իրենց վերադարձնել՝ որպես իրենց ապրուստի միակ միջոց: «Մեր գյուղի հողերն են, մենք իրավունք չունենք: Բա ասում են համայնքային սեփականությու՞ն: Համայնքը մենք ենք, չէ՞»:

*Դեպք 7.*

Սեփականաշնորհման տարիներին մի քանի սերմնաբուծական սովխոզներ և տոհմիկ անասնաբուծարաններ պետական թողեցին: Այդպիսի տոհմիկ

անասունի անասնաբուծարան պետական մնաց Կալինինոյի Կաթնառատ գյուղում: Գյուղը բարձրլեռնային է, դաշտավարական և այգեգործական հողեր չունի, բացառապես խոտհարքեր և արոտավայրեր են: Մի քանի տարի անխնամ մնացող անասուններն սկսեցին տոհմիկությունն ու քաշը կորցնել: 1996-97 թթ-ին կառավարությունը մի ծրագիր ընդունեց՝ ուժեղեցնել այդ անասնաբուծարանը: Այդ ժամանակ մոտ 650 գլուխ տոհմիկ անասուն կար: Գյուղացիներն այդ ընթացքում հույսեր էին փայփայում, որ իրենց մոտ էլ սեփականաշնորհում կլինի և յուրաքանչյուր ընտանիք գոնե մեկ անասուն կստանա: 2000թ. այդ անասնաբուծարանը սեփականաշնորհում են, բայց գյուղացիներին տեղյակ չեն պահում: Չնայած թերթում հայտարարվում է մրցույթ, բայց համայնքի ժողով չի արվում, իսկ թերթ չկարդացող գյուղացիները տեղյակ չեն լինում այդ մասին: Մրցույթին մասնակցում են երկու հոգի, գյուղապետը և նրա ազգականը, որն իբրև թե հաղթում ու անասնաբուծարանը վերցնում է: Սեփականաշնորհման պահին անասնագլխաքանակն արդեն նվազել, հասել էր 250-ի: Որոշ ժամանակից գյուղացիներն իմանում են, սկսվում է նախ խուլ, ապա բացահայտ դժգոհությունը, ընդդիմադիրների մի խումբ էլ մտածում է դատի տալ գյուղապետին: Այդ ընթացքում ֆերմայի նոր տերը անասունների գլխաքանակը հասցնում է 60-ի՝ որպես մսացու մորթելով կամ վաճառելով կենդանիներին: Դառնացած, հիասթափված գյուղացիներն սկսում են հեռանալ գյուղից, համոզվելով, որ այլևս սպասելիք չունեն: Ասում են, որ դատի էլ տանք, եթե նույնիսկ դատը արդար էլ լինի, ի՞նչն ենք հետ բերելու, էլ անասունն էլ չկա:

**Գյումրի - պատմում է ԱՄՆ-ում գտնվող ամուսնու մասին -** *Զբաղվեց ձկնաբուծությամբ, Ռուսաստանից բերեց մեծ վաննաներ ձկների համար, շատ մեծ շինարարություն արեց: Հոսանքներն անընդհատ անջատում էին, ձուկը փչանում էր, խեղդվում էին... Թափեց... Պարտքն էլ վրան մնաց: Արդեն երկու տարի է՝ Ամերիկայում է: Հիմա ես սպասում եմ բնակարան ստանամ: Ստանամ՝ կփակեմ կգնամ:*

**Ցեմենտի վաճառքով զբաղվող մի ձեռներեց Արարատի մարզից -** *10 օրը մեկ հարկայինից գալիս են, ամեն անգամ մարդուն բացատրում ես, որ ես հարկը մուծել եմ, ինչու՞ պիտի փող տամ, փաստաթուղթը կա, մուծումներն արված է, արժի՞, որ 3 օրը մեկ գաս: Որ փաստաթուղթը տեղն ա, ինչի՞ փող տամ: Հենց սովածանում են, գալիս են... գալիս են, որ պատիվ տանք, բայց ինչի՞ համար, չենք իմանում: Մասիսի հարկայինը իրա հերթին ա գալիս, Արտաշատինը՝ իրա: Կամ գալիս ասում են՝ գնում ենք Սևան քեֆի, պիտի փող հավաքենք տանք: Էն, որ մենք 2 ամսում ենք ծախսում, իրանք՝ 2 ժամում: Շաբաթ օրը, որ գաք տեսնեք, աֆիցանտկին[3] ինչքան փող են տալիս, որ ես մի ամսում չեմ առնի աշխատանքով:*

**Գյումրի -** *Շատ հիմնարկությունների վերջ է դրել հարկայինը, հենց իրա հարկային օրենքներով: Ընդհանրապես էդ հարկերը դրել են մեր վրա, է, ի վիճակի չէ էդ տնտեսությունը բյուջե էդքան հարկ ավելացնել: Դրել են, մենակ իրանց մասին կմտածեն: Տեսնին խնձորը կանճի, կսեն՝ մեզի կերակուր տու:*

*3. Մատուցողուհուն:*



*Բայց խնձորի ծառն էլ բողի դեղեն, ջրեն... Իսկ էս մարդիկ դրել են էդ ծառից ինչքան հնարավոր է կպոկեն, ինչքա՞ն, մինչև ե՞րբ: Այսինք տնտեսության մասին էլ բողի մտածես, ինչքան կարելի է մենակ բյուջեի մասին մտածել: Էդ ջիպերը, որ ծառայողական առել են... է, թող չառնեին էդքան, բյուջեն թեթևացնեն ու հիմնարկներին հնարավորություն տան էդ մարդիկ զարգանան, նոր հաստոցներ դնեն, նոր տեխնոլոգիաներ բերեն, որ հնարավոր էղնի աշխատել, կարողանան ինչ-որ գումարներ հետ գցեն:*

*- Հողից եկամուտ չկա: Որ նստենք հաշվարկ կատարենք հողը մշակելուց ժողովուրդը միննույն է, ամեն տարի մինուս է: Օրինակ անցած տարի ստեղ լրիվ երաշտ էղավ, բայց էլի հողերի հարկը պիտի տանք: Ինչի՞ սովետի ժամանակ էդպես չէր: Եթե էն ժամանակ երաշտ էր, կոլխոզը հարկ չէր մուծում պետությանը: Հակառակը, պետությունը օգնում էր կոլխոզին: Էս հողերից գյուղացուն եկամուտ չկա: Էնքան որ գյուղացի է, ստիպված անասուն կպահի: Չնայած անասունից էլ եկամուտ չեն տեսնի: Հմի ոչ միսը գին ունի, ոչ էլ ժողովուրդը՝ փող: Գյուղացու ապրանքը շատ էժան է, էնքան որ մարդիկ կաշխատին էնքան, որ սոված չեն, տունը հաց կա, էսիկ կյանք չէ:*

**Շիրակի գյուղերից մեկում, գյուղապետարանի աշխատող -** *Որովհետև ամեն ինչը մոնոպոլիա է՝ վառելանյութը, հացի, մսի գները: Շատ էժան ներկրում կենեն՝ 400-500 դրամով, 700 դրամով կծախեն: Գյուղացին բարձր որակի ընտիր միս կարտադրե ու չի կրնա ծախե, իրան պետք է 1000 դրամով ծախել, որ գոնե իրա ծախսերը փակե: Էդ 1000 դրամից իրան բողի 100 դրամ եկամուտ մնա, ու ինքը չի կարող էդ գնով ծախել: Պետությունը չունի կազմակերպված գնումներ, որը կնպաստեր գյուղատնտեսության զարգացմանը: Նույնը ցորենն է, 20 դրամով կառնին, կբերեն ստեղ կհասցնեն 30 դրամ, քաղացները կդնեն կարտադրեն ալյուր, մեր շուկայի գներով կվաճառեն: Բայց մեր ալյուրը, որ էկոլոգիապես ավելի մաքուր է, մինչև կբերենք շուկա կհասցնենք, էդ գների պատճառով էլ եկամուտ չունենք: Գյուղացին, որ վերջում կհաշվե, հեչ բան չունի, մենակ մե փոր հաց, որը բողի հասցնե մյուս ամառը, որ նորից մե փոր հացի աշխատի:*

Առավել ակտիվ, ձեռներեց, երիտասարդ մարդկանց գնալու պատճառների մեջ որոշ դեր է խաղում նաև Հայաստանում ծավալվելու դժվարությունը.

**Գյումրի -** *Այսինքն եթե ինքը գյուղում որպես գյուղապետ չի կայացել, գերադասում է գնալ, քանի որ Ռուսաստանի այն վայրերում, որտեղ մերոնք են՝ Յակուտսկ, Սախալին և այլն, նրանք լիդերներ դառնալու ավելի մեծ շանս ունեն: Էստեղ, գյուղում, մի տեսակ տարածքը փոքր է, էստեղ չեն կարող մի քանի մարդ հորիզոնական հարթությամբ նույն բարձր դիրքն զբաղեցնել, իսկ այնտեղ կարող են: Գյուղում այստեղ լավագույն հնարավորությունը գյուղապետ լինելն է, այլ հնարավորություն չկա: Իսկ կյանքը հայտարարված է հիերարխիկ, էդ մարդիկ էլ կարող են հիերարխիկ համակարգում համեմատաբար բարձր դիրքեր ունենալ: Ուղղակի մեր սոցիալական կյանքը հարմարեցված չի: Մենք մեզ մի պարզ հարց տանք. ի՞նչ է նշանակում էստեղ կայանալ, ինչպե՞ս կարելի է էստեղ կայանալ: Եթե գյուղապետը կայանալ է՝ գյուղապետը մեկն է, ավագանին որ մեծ քաղաքներում մի բան չի, առավել ևս գյուղերում ինչ որ բան չի. հա, խամաճիկների խումբ է, դրածոների, մարիոնետ-*

*ների... Դպրոցը... եթե դուք նկատի ունեք դպրոցում կայանալը, ամենաամճարակ և խեղճ ու կրակ մարդիկ հիմա դպրոցի ուսուցիչներն են: Այդ մարդիկ, ով որ դրսում են, շատ մեծ դիմադրություն են հաղթահարել այդ դիրքը դրսում ունենալու համար: Այսինքն այդ մարդկանց մեջ և կազմակերպական, և մնացած բոլոր հատկությունները կան, բայց այստեղ էտ հնարավորությունը չկա. խոսքը էս տարածքի մասին է, որը բանուկ ճանապարհների վրա չէ և ոչ էլ մոտակա հեռանկարում հնարավոր է: Այստեղի սովորական բիզնեսը խանութն է, խանութը պետք ծառայի մենակ էտ գյուղի բնակիչներին, ուրիշ ոչ մեկին: Քաղաքում՝ Գյումրիում ռեստորանային, բնակարանաշինարարական ոլորտները արդեն տնօրինվում են ոմանց կողմից, նույնիսկ երևանցիների: Նոր մարդկանց նրանք թույլ չեն տա մտնել, հատկապես որ իրենք արդեն բավական ուժեղացել են: Գյուղացին շատ մեծ դիմադրություն պետք է հաղթահարի, որպեսզի գյուղի շրջանակներից դուրս գա ու, ենթադրենք, Գյումրիում ծավալվի: Որովհետև էտ ամբողջը վերահսկվում է նորից երևանցիների կողմից, հիմի մեր մոտ նույնիսկ էտ մաքսային, հարկային և այլն և այլն, ինչքան կային, բոլորը գնացին որովհետև երևանցիներ էին, շատ հեշտ է զգալ շարժումներից: Էս է իրականությունը:*

Հանրապետությունում պաշտոնական մակարդակով շատ է խոսվում աշխատատեղերի ավելացման մասին: Իրավի, հատկապես ժամանակավոր աշխատատեղեր երկրում ավելացել են, ինչ պայմանավորված է հիմնականում երկրաշարժի գոտու բնակարանաշինության և հանրապետությունում Լինսի հիմնադրամի շրջանակներում կատարվող ճանապարհային ու մշակութային օջախների վերանորոգմամբ: Այս աշխատատեղերն, անշուշտ, որոշ չափով մեղմել են արտագաղթի տրամադրվածությունը: Դրան զուգահեռ, սակայն, առկա է պատրանքային աշխատատեղերի արատավոր պրակտիկան: Բանն այն է, որ նույնիսկ 10 օրվա աշխատանքը երկրում հաշվարկվում է որպես աշխատատեղ, և ընդգրկվում գործազրկության մեղմման պաշտոնական ցուցանիշներում: Օրինակ, մարդահամարի ընթացքին ընդգրկված 20-օրյա աշխատանք ստացողները հաշվարկվեցին 2001թ. գործազրկության նվազման պաշտոնական ցուցանիշներում: Թերևս սրանով է պայմանավորված նաև որոշ արտադրական ձեռնարկություններում հաճախակի աշխատանքի ընդունելու և ազատելու երևույթը, որի արդյունքում պաշտոնապես ավելանում է աշխատանք ստացած մարդկանց թիվը, մինչդեռ իրականում այս արատավոր պրակտիկան ավելի է խորացնում հիասթափությունը:

**Կապան** - *Տրիկոտաժն աշխատում ա: Իբրև թե աշխատում ա: 15 օրվա համար դիմում են գրում, ընդունվում աշխատանքի, 15 օր հետո կրճատում, տենց ա տրիկոտաժի տեխնոլոգիան: 15 օրում կամ քո աշխատավարձը տալիս են, կամ՝ չեն տալիս: Խաբեբայություն ա, ամբողջ օրը կարող ա աշխատացնեն առանց շաբաթ-կիրակիի, աշխատավարձ չտան, կամ կարող ա տան 5000-1000 դրամ, դրա համար ամբողջ օրը պիտի գնաս կանգնես: Շատ քչերն են գնում: Կարող ա մի 2-3 հոգի դասավորված են իրանց համար, ղեկավարները աշխատավարձ են ստանում: Էդ էլ նրա համար ա, որ եկողին ասեն թե բա 25000 են ստանում, բայց էդ մենակ իրանք են ստանում:*



# ՎԻՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Արտագաղթի պատճառների բացատրություններում խիստ առանձնանում են երկու կարևոր գործոն,-կրթության դժվարությունները և վիրավորվածությունը, ինքնասիրությունը: Վերջինս շատ սուր է հատկապես Ղարաբաղյան պատերազմին մասնակցած, վերադարձած և մոռացված մարդկանց մոտ: «Ես ուզում եմ գնալ, ու հետո, եթե նորից կռիվ լինի, ես հետ կգամ, կգնամ կռվելու, բայց երեխաներիս չեմ բերի»,- ասում է այդ մարդկանցից մեկը:

Ստորև բերվող հատվածը **Արարատի մարզի Մխչյան գյուղում** մի խումբ տղամարդկանց հետ ունեցած զրույցից է: 1, 2, 3... թվերը նշանակում են 1-ին, 2-րդ, 3-րդ... զրուցակից.

- *Գյուղից շա՞տ են գնում:*

**(4)** - *Շատ, ով հնարավորություն ունի, գնում ա:*

**(6)** - *Ում ձեռքը շանս ա լինում, դուրս է գալիս:*

**(5)** - *Ընտանիքով են գնում, ոչ թե խոպան: Ռուսաստան են գնում, Հոլանդիա, Ուկրաինա... Ամենաշատը Ռուսաստան գնացողներն են:*

**(6)** - *Մարդիկ տոկոսով փող են վերցնում՝ խոպան են գնում: Էնտեղ էլ ուրիշից պարտք են անում, ուղարկում են, որ ստեղ տոկոսը չգա: Իսկ թե էնտեղ ինչ տոկոսով են վերցնում ու ոնց են փակում՝ դա էլ Աստված գիտի:*

**(5)** - *Էստեղ շատ են նեղում: Նույնիսկ դպրոցում: Էն ա էրեխուն ժամանակ են դրել մինչև ամսի 15, որ փողը չտանք, գիրքը ձեռից կառնեն:*

**(6)** - *Աղջկաս Մայրանի ձեռքից դասատուն գիրքը 150 դրամի համար վերցրել էր, ասել՝ մինչև փողը չբերես, չեմ տա: Հետո էլ ասել ա, որ դասը սովորած չեկար 2 եմ նշանակելու: Ինքն էլ սովորող էրեխա է:*

- *Ռուսաստան գնացողները իրանց տները գնալիս վաճառու՞մ են:*

**(6)** - *Ով որ վաճառեց ու գնաց, էտի հետ գալացող չի: Վաճառողները շատ են, գնող չկա:*

- *Գյուղում 3-4 սենյականոց սեփական տունն ի՞նչ արժի:*

**(5)** - *2000, 3000, 4000:*

- *Քանի՞ տուն կա մոտավորապես վաճառքի:*

**(4)** - *Որ առնող լինի՝ շատ կան:*

**(5)** - *Որ առնող լինի՝ գյուղի կեսը կծախի:*

- *Դուք Ձեր տունը կծախե՞ք:*

**(5)** - *Հա, հենց իմանամ առնող կա, հենց հիմա էլ կծախեմ, կգնամ:*

- *Հիմա 3000-ով Դուք ձեր տունը կտա՞ք ինձ:*

**(5)** - *Հա, մենակ ստից էթամ:*

- *Հետո ի՞նչ եք անելու:*

**(5)** - *Կգնամ Ռուսաստան, մի բան կանեմ...*

**(3)** - *Բանվորություն կանի...*

**(6)** - *Մի զարմացեք, Գագոն Ռուսաստանից էկավ, 1800 դոլարով հողը առավ, ու հետո տունը գազեց, ջերմոցները կարգի գցեց: Հիմա ասում է 1800 դոլար տվող լինի ամեն ինչ կտամ, էդքան աշխատանքը, որ վրան դրել է՝ ամեն*

ինչ հեչ, մենակ թե, ասում է, ընտանիքով էկանք Ռուսաստան: Տունն էլ կարող ենք ցույց տալ, որ շատ լավ տուն է, բայց մարդու ուղեղում միայն մի բան է՝ թողնի էստեղից էթա:

**(3)** - Շատ, շատերն են գնում:

**(5)** - Ես գյուղացի տղա եմ, որ գնամ Ռուսաստան, չեմ էթա քաղաք, էլի գյուղ կերթամ, հողագործությամբ կզբաղվեմ, բայց գոնե կիմանամ, որ արդյունք կա: Կիմանամ, որ հողը, որ մշակեմ, կարող եմ աշխատել ու ապրել:

**(6)** - Էնտեղ ավելի հեշտ է ապրել: Քույրս ընտանիքով տենց թողին 1994-ին գնացին Ուկրաինա: Շատ լավ ա: Ընենց չէ, որ ասեմ, էնքան է գումարները, որ կարող են գնալ, գալ, բայց թե ոչ մի բանի կարիք էլ չունեն: Ընտանիքը նորմալ պահում են:

- Հոլանդիա, Բելգիա ուղղությա՞մբ էլ գնացող ունեք:

**(2,3,4,5,6)** - Կան, շատ կան...

**(5)** - Քույրս 1994 թվին, երբ ես նոր էի եկել Ղարաբաղից, կանչեց ինձ Հոլանդիայից, որ գնամ, ասի՝ ի՞նչ ես ասում, հոմ չե՞ս գժվել, գնամ կռվեմ, որ հետո էլ գամ էդտեղ: Բայց եթե իմանայի, որ էս օրին ենք հասնելու, էսքան վատանալու է մեր վիճակը՝ կերթայի, հիմա փոշմանել եմ, որ չեմ գնացել: Հիմա էլ որ կանչի, արդեն տարիքս էն չի, էթամ հիի նորից սկսեմ ամեն ինչ:

**(6)** - Բայց մարդիկ էթում են, 46 տարեկանից էլ, 56-ից էլ: Ինձ էլ մի հատ հովանավորող կար, նույնիսկ, տեսեք, անձնագրիս մեջ Շենգեն վիզան էլ է խփել: Բայց ասեց, որ էրեխեքից էրկուսին պտի թողնես ու գաս, չի լինի, որ բոլորին տանես...

- Եթե էրեխեքին տանելու հնարավորություն լիներ, կգնայի՞ք...

**(6)** - Մեծ հաճույքով կթողնեի ու կգնայի:

- Ղարաբաղում կռվելուց հետո՞:

**(5,6)** - Հա, Ղարաբաղում կռվելուց հետո:

**(6)** - Վաղը, որ կռիվ լինեն, ես նորից հետ կգայի, բայց իմ էրեխեքին էլ չէի բերի:

**(5)** - Եթե կռիվ լինի, էլի կգանք, բա թողնենք թուրքը գա անցնի էս կո՞ղմ:

**(6)** - Նորից կռվելու կգնանք: Մարդիկ մտածում են՝ ի՞նչ ա ծեր վիճակը, էն վախտ ոնց էիք, հիմա ինչ վիճակի մեջ էք: Էդ ամենը հանած: Որ ես չգնամ, էն մյուսը չգնա, էդ ո՞նց կլինի:

**(5)** - Մինչև կռիվը շատ լավ էլ ապրել եմ, մեքենա էլ եմ ունեցել: Հետո, որ էկա ամեն ինչն էլ ծախեցինք, կերանք, մեքենան էլ, ունեցածն էլ, հիմա դատարկ նստել ենք: Բայց հիմա էլ գտնում եմ, որ պետք էր էրթալը: Աստված չանի, հիմա էլ կռիվ լինի, էլի կերթանք:

**(6)** - Մարդ իր էրեխուն, կնոջը սիրողը, ծնողին հարգողը, եթե կռիվ ա սկսվում, առանց աջ ու ծախ նայելու պիտի ելնի: Որովհետև եթե ինքն իր հողն է պաշտպանում՝ ինքն իր մորն ու էրեխուն է պաշտպանում:

- Քանի՞ հոգի էին ձեր ջոկատում:

**(5)** - 70 հոգի՝ 1998 թ.՝ ՀԱԲ-ի ժամանակ: Հետո, որ ՀԱԲ-ը լուծարվեց, մեր ջոկատը մտավ պետական բանակի մեջ, դրանից հետո էլ տեղափոխվանք Արծիվ-30 մահապարտների ջոկատը:

- Զգայնանում ես, որ հայ մարդ է ու էդքան չքավոր վիճակում է: Մարդ էլ



կա, որ հայ են, կարող են օգնել ու չեն օգնում: Մենք ծրագիր էինք մշակել, որ չքավոր էրեխեքին տանեինք Գառնի, պալատկեքի տակ մի 15 օր ճամբար անեինք, պահեինք, էդ ծրագրի համար մենք պիտի ծախսեինք 400-500 դոլար:

**(5)** - 450 դոլար մեր հաշվարկով, համ ծրագիրն էր կազմված, գրված, ամեն ինչ արված էր՝ սնունդը հաշվարկված և այլն: Ու մեր Կարմիր խաչի աղջիկները պիտի գնային իրանց հետ մնային... Միայն Մխչյանը չէր, Սաղմոսից էլ պիտի գային, Դիմիտրովից, 6 գյուղից հավաքել էինք էդպիսի ընտանիքներ: Ամեն գյուղին 2-3 էրեխա էինք վերցրել, որ ծրագրում տեղավորվեն, մի 20-25 էրեխա էին դառնում:

**(6)** - Գյուղից մեկը կա, շատ բարիով մարդ էր, խոստացավ, որ կօգնի, կանչեց գումարները նայեց, ասեց՝ կտամ, վերջին օրը, որ գումարը պիտի տար, ասեց՝ չեմ տա: Իսկ դրա մյուս օրը 1500 դոլար տվեց սիգնալ առավ մեքենայի համար:

**(5)** - Մենք էլ ճարահատյալ բռնինք արշավ կազմակերպինք, 1700 ամյակի հետ կապված:

**(6)** - Քայլարշավ կազմակերպինք մինչև Գառնի, Գեղարդ: 10000 Մխչյանի գյուղապետարանը տվեց, 10000 Մրգավետի գյուղապետարանը, 10000 Մասիսի մարզային Կարմիր խաչը, բայց մենք ծախսինք 68 հազար: Մնացած չհերիքող գումարը մեր հաշվին արեցինք, մեր թոշակների: 15000 տվինք տրանսպորտին, որ էրեխեքին տրանսպորտով հետ բերենք: Էնքան պարտք արինք, որ մինչև հիմա հլը հետ չենք գալիս:

**(5)** - Դե որ հիմա էրեխեքի մոտ ամոթով չմնայինք, էլի դրա համար: Եթե հարուստը մի քիչ խիղճ ունենա, մեր ժողովրդի վիճակը էս չի լինի:

### Լոռի.

- Մենք գնում ենք խոպան ուրիշների համար ենք տուն սարքում: Մեր հարուստներն էլ են գնում ուրիշ տեղ տուն սարքում: Գոնե ստեղ սարքեին, մենք էլ աշխատեինք: Գողացել են ինձանից, թող գոնե մեր երկրում տուն սարքեն, որ ես էլ իր տան վրա աշխատեմ: Գոնե մի կալբասի[1] ցեխ դնի՝ Մարգի կռվերը առնի... Դրա փոխարեն տուն են սարքում... Բա էդ իշխանությունները չեն տեսնու՞մ:

### Գյումրի.

- Ինչի՞ բդի միլիցիայի աշխատողը թոշակ ստանա 40 000 դրամ, իսկ մարդը, որ սաղ կյանքը աշխատել է, 4-5 հազար: Ի՞նչ է էրել միլիցիայի աշխատողը, ի՞նչ լավություն է էրել, բացի կաշառք վերցնելուց: Կամ նույն միլիցիայի աշխատողը, եթե սովետի ժամանակ է աշխատել, բդի 4000 ստանա, իսկ եթե Սերժ Սարգսյանի հետ է աշխատել՝ 40 000:

### Երևան, մտավորական.

- Ես երբեք էս երկրից գնացող չէի: Միշտ աշխատել եմ, աշխատանքն ինքս եմ ինձ համար ստեղծել: Ավելի լավ եմ ապրել, քան խորհրդային շրջա-

1. Երշիկի:

նում: Նույնիսկ տուն եմ գնել: Բայց հիմա պատրաստվում եմ գնալ, քանի որ այլևս չեմ հավատում, որ մեր պայքարը անկախ ու ժողովրդավարական երկրի համար էր: 1998թ. կամավոր, ինքս իմ խղճի ու հայացքների թելադրանքով շատ մեծ աշխատանք եմ տարել վերջին նախագահական ընտրությունների ժամանակ Ռ.Քոչարյանի օգտին: Երջանիկ էի, որ վերջապես հնարավորություն է ստեղծվում ՀՀՇ-ից ազատվել, դուրս գալ այս երկրի կլանայնացվածությունից ու քաղաքակիրթ հարաբերություններ ստեղծել: Լիովին համոզված էի, որ Ռ.Քոչարյանն այնպես է մտածում, այնպես է քանում: Վերջապես, նա իշխանությունից էր, ինքը ներսից էր տեսնում իրավիճակը, ինքը հայտարարում էր, որ գիտի, թե ինչպես են ձևավորվել-ձևավորվում կլանները ու թալանչիները, և ի վիճակի է վերջ դնել այդ ծավալվող խայտառակությանը: Ինչ մեղքս թաքցնեմ՝ հավատացի: Հավատացի և բոլոր միջոցներս, միտքս, ժամանակս տրամադրած աշխատեցի նրա օգտին: Մեր շենքում մի քանի հոգի կային, հեգնանքով էին նայում ինձ, թե հավը երազում կուտ է տեսել, այսինքն՝ երազում կտեսնես ազնիվ իշխանություն: Բայց մեր շենքի ապրողներից մեկը, որ հարկայինի աշխատող էր, լավ էլ լափողներից, մի տեսակ խեղճացել էր, վախեցած էր շրջում: Սկսել էր մի տեսակ վախվորած շուրջս պտտվել, կարծես թե հող էր նախապատրաստում առաջիկա սպասվող իրադրությունում կողմնորոշվելու համար: Դա նույնպես ինձ հուշում էր, թե գալիս է օրենքների և ազնվության ժամանակը: Մի խոսքով՝ շատ լավ աշխատեցինք, քանի որ ինքներս էլ հավատում էինք: Ընտրվեց: Սպասում ենք մի տարի, երկու տարի... Մեր շենքի հարկայինի աշխատողի դեմքին մի քանի ամսից կրկին լկտի ինքնավստահություն եկավ, հիմա արդեն ոչ միայն ինքն էր հարկայինում աշխատում, այլ նաև կիսագրագետ աղջիկը: Մինչև երկու տարին այս կիսագրագետ աղջկա համար գնվեց երկրորդ մեքենան: Մի քանի անգամ շենքի մուտքի մոտ հանդիպելիս հովանավոր տոնով ինձ բացատրեց, որ «ազնվությունը լավ բան ա, բայց ժամանակները փոխվել են»: Մի ամիս առաջ էլ իմացա, որ այս ապուշը հարկային տեսչություններից մեկի պետ է նշանակվել: Արդեն վաղուց էի հասկացել իմ անիմաստ հույսերի ու ծրագրերի պատրանքայնությունը, բայց այս փոքրիկ առիթը, չգիտես ինչու, դարձավ վերջին կաթիլը: Գնում եմ, գնալու եմ առաջին պատահած երկիրը, ուր կկարողանամ: Ամաչում եմ նայել այն մարդկանց երեսին, ում համոզում էի քվեարկել Քոչարյանի օգտին: Գոնե այս կեղտին մասնակից չեմ զգա ինձ:

<u>Վանաձոր</u>

- Էստեղ աշխարհի էրեխա կար հավաքված, էն էրեխեքը, որ երկրաշարժի ժամանակ եղել են 10-14 տարեկան, էնի էս մեր շրջապատում մի 20-30 տղա կային, մեծ մասը մի դասարանի էրեխեք, շատ լավ էրեխեք, նրանցից ոչ մեկը վատ մարդ դուրս չէր գա՝ շնորհքով, պատվով, նամուսով, բոլորը պոստերում ծառայած էրեխեք են, բոլորը: Երկու տարի խրամատներում ծառայած էրեխեք, փառքով, պատվով վերադարձած: Թող մի հատ վայենկոմը կանգնի ասի, որ էս շրջանի մի հատ էրեխա պոստից գոնե մի օր փախել ա, հնարավոր չի տենց բան: Շատ լավ էրեխեք էին: Գնացել են բանակ, էկել տեսել են նույն վիճակն է, նույն դոմիկները, նույն աղքատությունը, թողել են, գլուխ առել ու



կորել: Ասել են՝ դուք տանն էք, հլը ձեր տարիքները մեծ ա, բա մենք ինչի՞ համար պիտի մնանք ստեղ, էն կառավարության համա՞ր, որ գնացել կանգնել ենք թուրքի դեմ, գլուխ ենք տվել ու էսօր էլ էկել դոմիկն ենք մտել: Սառը են դառել մարդիկ: Արհամարհված ու էսքա՞ն արհամարհված: Իրան հարգող մարդը կամ կտա կսպանի, կամ կթողնի, կգնա:

<u>Գյումրի</u>

- Մեր ԶԼՄ-ն էսօր հասանելի՞ է հասարակ մարդուն: 100 դրամից պակաս թերթ չկա, Գյումրիում թերթ չի ծախվի: ԶԼՄ-ն էլ կամ փակ քաղաքականություն է վարում, կամ կառավարության թելադրած քաղաքականությունը: Սրանք բոլորը՝ այս արհամարհանքը, անտարբերությունը, մարդկանց բանի տեղ չդնելը դառնում են պատճառ, որ զզված մարդիկ վեր կենան գնան:

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Արտագաղթողներից շատ-շատերը մեկնում են կամ պատրաստվում են մեկնել երեխաների ապագայի կամ կրթության պատճառով: Որքան էլ զարմանալի չլինի, սակայն մեկնողները փորձում են լուծել ոչ միայն բարձրագույն կրթության խնդիրը, այլև դպրոցական: Մարդկանց մի խումբ կա, որ պատրաստ է դիմանալ երկրի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, պատրաստ է նույնիսկ կիսակուշտ, կիսասոված ապրել, բայց ժամանակն անցնում է, երեխաները մեծանում են, և արդեն ակնհայտ է, որ իրենց ճակատագիրը սպասում է նաև իրենց երեխաներին: Այս կարգի մարդկանց մեծ մասը դժգոհ են ոչ միայն կրթության մատչելիությունից, այլ նաև որակից:

*Վանաձոր*

*- Թոշակառու, 60-ն անց մարդիկ կորցնելու բան չունեն, նրանք կարան մնան: Բայց ես, որ 40 տարեկան մարդ եմ, գիտեմ, որ ոչ աշխատանք, ոչ տղաս ապագա չունեն էստեղ, որովհետև փող չունեմ, որ կրթության տամ, սաղ մաֆիա է գնում, ազգին դեբիլացնում են, դպրոցում էլ են փող ուզում: Էդ որտե՞ղ է գրած, որ 500 դրամ հավաքեն, որ դպրոցի պոլը կրասկեն: Էդ մինիստրները դաշքը ինչի՞ հաշվին են շինում: Ես նաղդ գիտեմ, որ որ եթե իմ 70 տարեկան ծնողները չլինեին, աղբերս 8 տարի է դուրս է եկել, Մոսկվայում է բնակվում, լավ ծանոթություններ ունի, ես վաղուց ընտանիքով գնացել էի էնտեղ, որովհետև իմ էրեխուն էստեղ ապագա չկա:*

*Վանաձոր*

*- Դպրոցում մեր ազգին դեբիլացնում են: Դասատուին էրեխեն բոլորովին բանի տեղ չի դնում, դասատուն էլ ոնց որ չոբանի նման լինի: 6-րդ դասարանի գրքի մեջ մի բան չկա, որից երեխան մի բան սովորի: Էս ի՞նչ ծրագիր ընտրեցին, մի խնդիր չկա լուծելու, որից երեխան հասկանա, թե ինչպե՞ս պիտի լուծի: Դասատուն էլ չգիտի: Ասենք թե էստեղ նույնիսկ ուտելու հարցը լուծեցինք, բա մնացած հարցերը: Եթե միայն ուտելիքի, ստամոքսի հարց ենք լուծելու, դա ուրիշ բան է: Բայց ախր պիտի հեռանկարի, վաղվա օրվա համար մտածենք: Այ դա արդեն շատ դժվար խնդիր է, քանի որ մտածում ես, որ երեխան ինձանից լավ պիտի լինի, բայց պայմաններ չկան:*

*- Միթե՞ արտասահմանում այդ հարցերն ավելի լավ են:*

*- Չգիտենք, էնտեղ կրթությանն ավելի են տեղ տալիս, ու պայմաններ էլ ստեղծում են:*

*Կապան*

*- Դասատուները, խղճուկի կարգավիճակ ձեռք բերած, փող ուզելու հարցում բոլորից անցած են, բժիշկներից էլ են անցած, բոլոր բիզնեսմեններից էլ անցած են: Աշակերտին, դածե 1-ին, 2-րդ դասարանի, էնքան գնահատական չեն դնում, որ մայրը ստիպված իրա հացի փողը տանի տա, էրեխուն էլ իրենց մոտ պարապել տա, որ գնահատականը դնի: Ոչ մի մանկավարժ էլ խեղճանում չի:*



*- Բայց մանկավարժներն ամիսներով աշխատավարձ չենք ստանում:*

*- Հա, չեն ստանում, զատո իրենց աշխատավարձը դուրս են բերում, իրենք խեղճանում չեն:*

*- Դե ով ի վիճակի ա՛ էն ա տանում, գիտի երեխեքը հնարավորություն ունեն, փող ունի, տանելու ա մի տեղ սովորելու:*

*- Իմ թոռնիկին իրա դասատուն անընդհատ 2 ա նշանակում: Աղջիկս գնում ա ասում ա խի՞ ես 2 նշանակում, բա ես երեխային ստուգում եմ, ասում են 4-ի ա: 5000 դրամ ասում ա տուր, 5000 դրամը տալիս ա, թառորդը 4 ա դնում: Էն մի ամիսը կարում չի տանի տա, էլի 2 ա նշանակում: Շատ շատ ա աղավաղված, ով այլանդակ ա, ով գող ա, ով կարում ա մարդ խաբի, կարում ա ապրի: Է, մեզ նման մարդիկ լա ստի ա նստոլու են, ոչ մի բան էլ չեն կարալու անեն: Եվ ոչ էլ որևէ բան ես պատկերացնում եմ թե կուղղվի, չի ուղղվելու: Հիմա ես ի՞նչ անեմ, 4 երեխա ունեմ:*

*Գեղարքունիք, Վարդենիկ*

*- Էնղեղ երեխեքը լավ էլ դպրոց են գնում, կրթություն են ստանում: Իսկ էստեղ որ մնում են, ոչ կարգին դպրոց են գնում, ոչ էլ դպրոցի ծախսերն ենք կարում անենք: Ավարտելուց հետո էլ գնան որտե՞ղ սովորեն: Էստեղից Երևան երեխա չես պահի, սովորելն էլ լրիվ վճարովի է: Չեն էլ ասում էս գյուղերի էրեխեքը առանց էն էլ պահող չունեն, վճարը որտեղի՞ց տան: Դրա համար էլ խոպանից եկողը եթե մի քիչ փողով է գալիս, գնում է Երևան:*

*Կոտայքի մարզ, Շամիրամ*

*- Մեր գյուղի 60 տոկոսը գնացել են: Դպրոցում ուսուցիչ չունենք, շատերը հենց կրթության պատճառով են գնացել:*

*Սյունիք, Կապան*

*- Ասում են Կրթության նախարարությունը դպրոցների խոշորացման ծրագիր է մշակել, իբրև թե փոքր գյուղերի դպրոցները պիտի միավորեն, և երեխաներին տանեն, բերեն: Փոքր գյուղերն էլ սահմանամերձ, բարձրլեռնային գյուղերն են: Էդ մարդիկ ինչո՞վ են մտածում, էդ գյուղերում մարդ կմնա՞: Առանց էդ էլ Կապանից գնացողները, առհասարակ Սյունիքից գնացողները շատը գնում են, որ երեխաները կրթություն ստանան: Հիմա էլ մարդ չի մնա:*

*Սյունիք, Կապան*

*Կրթության հետ կապված փորձարարությունը թող նախ Երևանում անեն: Սահմանային գոտում արվող այդ փորձարարության հետևանքով մարդիկ գնում են:*

Այսպիսով, նյութերը վկայում են, որ բուն արտագաղթը և արտագաղթելու ցանկությունը ոչ միայն աշխատանքի բացակայությամբ է պայմանավորված, այլև աշխատանքին անհարիր վաստակով, աշխատանքի ընթացքում առաջացող անիմաստ բարդություններով, շորթողությամբ, անարդարությամբ, հնարավորությունների տարբերություններով, վիրավորվածությամբ, կրթության անհրաժեշտությամբ, անհուսությամբ: Նույնիսկ պարզ վիճակագրու-

թյունը, որ սովորաբար այսպիսի բովանդակային հարցերին չի պատասխանում, արտագաղթելու պատճառաբանության վերաբերյալ ուշագրավ վավերացում է արել[1].

| | ՏԱՐԻՔԸ | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| | 18-19 | 20-49 | 50 և ավել | Տղամարդ | Կին |
| Աշխատատեղերի բացակայությունը | 11.1 | 55.6 | 53.3 | 58.0 | 34.3 |
| Ըստ մասնագիտության աշխատանքի բացակայությունը | - | 5.0 | 5.9 | 5.4 | 3.0 |
| Բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը | 3.3 | 30.1 | 26.3 | 29.6 | 29.1 |
| Սոցիալական, բարոյա-հոգեբանական անառողջ մթնոլորտը | - | 1.0 | 3.3 | 1.1 | 3.0 |
| Աշխարհաքաղաքական անկայուն վիճակը | 1.1 | 0.6 | - | 0.2 | 3.0 |
| Հայաստանում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը | 33.3 | 5.2 | 4.2 | 3.5 | 20.1 |
| Ձեռներեցությամբ զբաղվելու անկարողությունը | - | 1.0 | 3.0 | 1.4 | - |
| Այլ | 51.2 | 1.5 | 4.0 | 0.8 | 7.5 |

Այս աղյուսակը վկայում է, որ եթե արտագաղթողների 20-49 տարեկանների 55 տոկոսից ավելին իրենց արտագաղթելու պատճառը համարում են աշխատատեղերի բացակայությունը, ապա 18-19 տարեկանների 33.3 տոկոսը երկրից հեռանում է, որովհետև չի հավատում Հայաստանի զարգացման հեռանկարին, իսկ նույն տարիքի 51.2 տոկոսը երկրից հեռանալու պատճառները նշված ցանկում չի գտել ու նշել է աղյուսակի «այլ» անորոշ ձևակերպումը: Միաժամանակ խիստ ուշագրավ է, որ աղյուսակում բերված ցանկում «Բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը» լրացրել է 20-49 տարեկանների 30.1 և 50 տարեկանից ավել մարդկանց 26.3 տոկոսը, իսկ «Սոցիալական, բարոյա-հոգեբանական անառողջ մթնոլորտը» արտագաղթողների պատճառաբանություններում զբաղեցնում է համապատասխանաբար ընդամենը 1 և 3 տոկոսը: Պատասխանողներն ակնհայտորեն լրացրել են արտագաղթելու «առիթի» տրամաբանությամբ, ինչ հաստատվում է նաև «Ձեռներեցությամբ զբաղվելու անկարողությունը» հարցին պատասխաններով: 20-49 տարեկանների մեջ այս պրոբլեմը ընդգծել է միայն 1 տոկոսը, 50 տարեկաններից ավել մարդկանց 3 տոկոսը, գործնականում կրկնելով «Սոցիալական, բարոյա-հոգեբանական անառողջ մթնոլորտը» հարցի պատասխանը: Որակական հետազոտությունը ակնհայտորեն այլ պատկեր է ուրվագծում:

***Վանաձոր - դպրոցի տնօրեն.***

*- Արտագաղթի ամենամեծ պատճառը հիասթափությունն է, վաղվա օրվա հանդեպ հավատ չունենալը:*

*- Հավատի կորուստն է արտագաղթի պատճառը,- ասում է Լոռվա մարզ-*

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002թ., էջ 45 /ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն/:



*պետարանի պատասխանատուներից մեկը:*

***Վանաձոր-վարորդ.***

*- Ռուսաստանում երեխեքը լավ էին սովորում, կրթությունն էնտեղ լավ է, բերել ենք էստեղ` գիրք չկա, դասատու չկա, անընդհատ փող են ուզում...*

***Կապան.***

*- Շատերը գնացին դպրոցի պատճառով: Ուսուցիչների մեծ մասը գերադասում է հավ պահել, հող մշակել, քան թե դպրոց գնալ, աշխատավարձ չկա: Հետո էլ` եթե նույնիսկ երեխան դպրոցը ավարտի, ու՞ր գնա սովորելու, ինչպե՞ս գնա, որտե՞ղ ապրի, ինչո՞վ ապրի: Մի Երևան է մնացել, բոլորս չենք կարող Երևանում տեղավորվել:*

## ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Ընտրություններին նախորդող շրջանում արված խոստումները հույսեր են արթնացնում մարդկանց մեջ, ծրագրեր են կազմվում, սակայն դրանց չկատարվելը ավելի մեծ հիասթափություն է առաջացնում:

Շիրակի մարզի մարզպետարանի աշխատողներից մեկը պատմում է, որ Գյումրի քաղաքում արտագաղթի մի նոր ալիք սկսվեց, հենց որ Գյումրիում շաքարի գործարանի վերագործարկման խոստումները դատարկ դուրս եկան:

*- Նախագահը խոստացավ գործարան, բայց չեղավ: Դա ենթադրում էր, որ կբերեր տնտեսական իրավիճակի կտրուկ բարելավում, ես ինքս տնտեսագետ եմ, հասկանում եմ ինչ է նշանակում, ուղղակի պետք էր կառուցել: Չեղավ, մարդիկ հասկացան, որ Շիրակի մարզում ոչ մի լավ բան սպասելու չէ, պետիմիստ են արդեն աշխատատեղերի ստեղծման հարցում: Մարդն էլ կթողնի կգնա, կասի տարիներ շարունակ խոստացան, խոստացան, չեղավ աշխատանք: Ուրեմն հը եկեք բերեք մտածենք, կամ ուժերից վեր է, կամ էլ ինչ-որ ուժեր կան խանգարող Շիրակի մարզում որևէ խնդիր լուծելու համար, ավելի շատ էսենց են մտածում: Շատ-շատերն են մտածում, որ դիտավորություն կա Շիրակի մարզի նկատմամբ, տարիներն են ցույց տալիս:*

*- Դեկտեմբերին էր, որ նախագահն եկավ, հարցադրումներ ժողովրդի կողմից շատ եղան, ասեց պետք է հասնենք, որ պիտի կառուցվի: Ավելի լավ էր շաքարի գործարանի խոսակցությունը ընդհանրապես չբարձրանար հոգեբանական առումով: Այդպիսի երևույթներն ազդում են ժողովրդի հոգեբանության վրա, ավելի լավ է ոչ մի ինֆորմացիա չլինի, բայց գործն իրական լինի, սա նաև զգում է պետական իշխանության հեղինակությունը, առանց այն էլ չկա: Մենք, որպես պետական ատրուկտուրայի աշխատողներ, աշխատում ենք, ինչքան որ կարող ենք, բայց զգում ենք, որ դրա դիմաց էղքան հեղինակություն չունենք, որովհետև ընդհանուր առմամբ իշխանության նկատմամբ վերաբերմունքը վատ է:*

**Գյումրի**

*- Խոսակցություն եղավ, կուզեյին տեքստիլը աշխատի, էն էլ չեղավ: Էնքան են սուտ խոսել, ժողովուրդը չի հավատում: Եթե պետություն չկա, իշխանություն չկա, ու՞մ հավատաս... ժողովուրդը կկարծե, թե ով էլ ղեկավար լինի՝ մեկ ա, ոչինչ չի փոխվի, հույս էլ չկա:*

**Վանաձոր**

*- Եկան, ասեցին քիմիականը պիտի աշխատի: Նույնիսկ վարորդները մարշրուտները փոխեցին, էդ գծին հարմարեցրին: Շատերը պլաններ կազմեցին, նույնիսկ առևտրական կետերը էդ գծին տարան, խանութները: Ամեն ինչ սուտ դուրս եկավ: Ո՞վ պատասխան տվեց: Դե որ պետություն չկա:*



## ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2001թ., դեկտեմբեր, Տավուշի մարզի Բերդ ավան**

*- Մի կերպ ծերը-ծերին հասցնող ընտանիք ենք, իմ ընտանիքում աշխատավարձ ստացող չկա, թոշակ ստանում ա մերս... . Հողով մի կերպ ապրում ենք... Երաշտ, կարկուտ... Դրա հետ միասին 100 հոգի հող են ստացել Բերդից 10 կմ հեռու: Ու մեր կարծիքը չհարցնելով էդ հողատարածությունը 30 հեկտար, տվել են վայեննի հրաձգարանին, հրաձգարան են սարքել: Պայիզոն: Խոստացել էին, որ կամ պիտի դրանով փոխհատուցեն, կամ դրա փոխարեն ուրիշ տեղ հող հատկացնեն: Մինչև էսօր էդ հարցը չի լուծվել: Ես անձամբ վարչապետ եղած ժամանակ գրել եմ Քոչարյանին, պատասխանն էլ ունեմ: Պատասխանել են, որ անպայման այդ հարցը կլուծեն. ոչ մի լուծել: Ոչ էլ լսում են: Շամշադինի ամենաբերրի հողերն են եղել: Համ էլ էնպիսի մի տարածք է, որ խանգարում է երեք գյուղերի ժողովրդի: Դե եթե մասնավոր սեփականության երկիր է, ինչու՞ են իմ մասնավոր սեփականությունը հանդիսացող հողերը առանց ինձ հարցնելու տնօրինում: Ու՞մ բողոքես: Ամեն ինչ իրենցն է, հողն էլ, երկիրն էլ, սեփականությունն էլ, մենք էլ՝ վրադիր:*

*- Ձեր կարծիքով այդ հարցը լուծվո՞ղ հարց չի:*

*(Ծիծաղում է) - Էս վիճակու՞մ: Էս վիճակում, որ ամենքս... Հենա ես հրավեր եմ ստացել քրոջիցս, որ գնամ:*

*- Ու՞ր:*

*- Պոդմոսկովյա: Մեր լուծվող հարցերն էտ ա, ես գնացող եմ:*

*- Շատե՞րն են գնում Բերդից:*

*- Շատ: Դե ըստեղ ամենաուշն ա սկսվել գնալը: Բայց որ մեկը գնում ա, մի 4-5 ընտանիք ա տանում իրա հետևից: Էնա իրա քեռու (ցույց է տալիս որդուն) երկու աղջիկը Ղազախստանում, ինաց են տվել, որ տաս ընտանիք պատրաստվեցեք... Գնանք ազատվենք...*

Մարդկանց արտահոսող ամենամեծ ուժը իշխանությունների հանդեպ ատելությունն է: Տարբեր մակարդակների իշխանություններն ընկալվում են որպես «թշնամի», «օտար»: Ամրընդհատ գործածության մեջ են «սրանց», «սրանցից», «դրանց», «դրանք», «իրանք», «իրանց» և այլ նմանօրինակ դերանունները, որոնք մի բան են նշանակում՝ իշխանություն: «Սրանցից ի՞նչ սպասես», «Սրանցից գլուխդ առ ու փախի», «սաղ իրանց համար ա», «Տերն իրենք են», «Տերն էլ են իրենք, տերտերն էլ», «էս երկիրն իրենցն է, մենք ի՞նչ գործ ունենք էս երկրի հետ»... «Սրանց», «դրանց» հակադրվում է «մենքը», որ բոլոր նրանք են, ովքեր կամ չեն կարողացել հարմարվել, կամ իշխանությունների հետ ուղղակի կապ չունեն:

**Պատառիկներ զրույցներից**

*- Սպանել են սրանք չորս կողմից, մեռցրել, ապուշացրել, դրել են:*

*- Ավելի լավ է մի հատ թույն բաց թողեն ու սպանեն, էլի: Պիտի մարդուն անպայման ֆիզիկապե՞ս ոչնչացնեն, իրանց համար հոգեպես ոչնչացնելն ա-*

վելի լավ ա:

- Մենք ով ենք, որ ասենք «էս ժողովրդի գլխին ի՞նչ եք անում», Վազգենի նման տղուն խփին[1], բա մենք ո՞վ ենք, պրեզիդենտին հավասար մարդուն խփին, բա մենք ո՞վ ենք:

- Գետինը մտնեն դրանք, գետինը, գետինն էլ է ափսոս: Տելեվիզորը միացնում ենք, որ դրանց տեսնում ենք՝ անջատում ենք, ուրիշ ալիք ենք տանում, որ ֆասոնները չտեսնանք: Պատկերացրու, որ հանրապետության ղեկավարի կամ մի պաշտոնյայի, որ պիտի հարգենք, գլուխ խոնարհենք, չես ուզում, որ անգամ լսես, որովհետև սուտ ա ասում:

- Մարդիկ 10 տարի սպասեցին, սպասեցին, ասում էին մի բան կփոխվի, հետո ճարները կտրած ստիպված թողեցին, գնացին: Մարդն էլ ինքնասիրություն ունի, վերջը լցրեցին մի տեղ, հենց ընենց, ի միջի այլոց, էլ չեն նայում, թե տարիներով արել են, ստեղծել են... ոչ մի բանի չեն նայում, էնքան սրանցից գլուխները առնեն կորչեն, էս զզվելիներից:

- Մեկը հացի համար մի էրկու կտոր ալյումին ա թռցրել, դատ են արել ու մի հատ էլ ցույց են տալիս: Իսկ ամբողջ Վահագնին[2] մտան 10 մարդ մի տան միջի մի իրիկվա մեջ սպանեցին ու դուրս եկան, ու՞ր ա դրանց գտածը: Դէլա մեկը հարևանից մի ձու գողանա, տես ո՞նց կդատեն, դատը մի օրում կանեն:

- Կիրովականի էսքան սպանությունները ինչի՞ չեն դատում, դրանց ձեռ չի՞ տալիս:

- Իրեք տղա սպանեցին մեր մոտ, ոչ մեկին էլ չգտան, իրանց ձեռք չի տալիս գտնել և վերջ:

- Ամոթ դրանց, մարդկանց էս աստիճանի տրորել, նվաստացնել...

- Բերենք փոխանակում անենք թեկուզ մի շաբաթով, թող իրանք գան, մենք էլ իրենց տեղը գնանք, տեսնենք, թե մի շաբաթով կարո՞ղ են դոմիկում ապրել: Թե ինքը կարա մի շաբաթով էս դոմիկում ապրել, ծեծեղ, էլ մենք խոսելու տեղ չունենք, ուրեմն կարող ենք էլի դիմակայել...

- Տեսե՞լ եք, որ դրանցից գոնե մեկը դոմիկում ապրի...

- Իրանց տղերքը բանակից մալարիայով չեն գալիս: Իրանց տղերքը խելի բանակում չեն էլ լինում...

- Չէ, ինչի՞, իրանց տղերքի համար բանակում էլ հատուկ տեղեր կան, ասում են Սիուրը, ես ի՞նչ գիտեմ...

- Ամեն ինչ իրենց համար է...

Վանաձոր, Գուգարք

- Տունը տվել են էնպիսի մարդկանց, որ ամեն մեկը երկու տուն ունի, երեք տուն ունի: Ասում են՝ ներկայացրեք ձեր պահանջները: Պահանջները գումարն է, մաղարիչն է, ճաշկերույթը: Ես առանց վախենալու իրանց ներկայությամբ էսքան բանը ասեցի, ես իրանց վիրավորում եմ, իրանք տանում են, ծիծաղելով էլ անցնում են: Երկու-երեք անգամ մարզպետարանից եկել են, որ ստուգեն՝ ով է ապրում, ում տունն է դատարկ, ու գիտեն էլ, որ իրանց մարդիկ ոչ մեկը չեն ապրել ու չեն ապրում, վարձով տված է, բայց ոչ մի բան չեն ձեռ-

1. Նկատի ունի ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանին:
2. Վահագնին գյուղ է Լոռվա մարզում:



նարկում: Դրանք ուրիշ են...

Կապան

- Էն տելեվիզորն[3] ալ, որ մունք յեշում[4] ենք չէ՞, բոլորի մոտ ալ նըստած եմ, վեր են կենում խոսում շրջապատից, չեն իմանում շրջապատում ի՞նչ ա կատարվում: Նայողները հեն են խելագարված խոսում - «ա կլոխդ քաղիմ, ա տու գյուղում ը՞ս հինչ ա կատարվում», ծեծաղ ալ ա կյալիս: Ռոբերտ Քոչարյանը ասեղ ա քյունում, ընդեղ ա քյունում, ատից բաներ: Ա մի տես մարդիկ ի՞նչ ձևի են ապրում: Եկավ էլի, եկավ քաղաք: Մի հատ ժողովրդի հետ հանդիպի, ժողովրդի կարծիքը լսի: Չէ: Մեքենայով էլ բերեցին տարան, մի 70 մեքենայով:

Վանաձոր

- Էս կառավարությունը չի մտածու՞մ, որ վաղը չէ մյուս օրը պիտի մնա առանց ժողովուրդ: Ինչի՞ վրա է ղեկավարելու, ավերակների վրա՞, թող ղեկավարի: Վաղը չէ, մյուս օրը, ում ձեռքին էլ փող լինի էսօրվա դրությամբ, կթողնի ու կգնա, որովհետև զզված են, կառավարությունից հիասթափված:

Այս արտահայտությունները, բնութագրերը ուղեկցվում են կոնկրետ դեպքերի նկարագրություններով, երբ «սրանք» զանազան ձևերով նեղում են «մեզ», այսինքն՝ իշխանություն, հովանավոր չունեցողներին, աղքատներին, ինչպես բանասացներն են ասում՝ «անտեր մարդկանց», «ժողովրդին»: Հասարակական այս կարգավիճակի մարդկանց համար «ժողովուրդը» «մենք» ենք, «դրանք» իշխանությունն են, պետությունն են: Այդ մարդկանց համար պետությունը, իշխանությունը մի խումբ է, ժողովուրդը՝ այլ խումբ, և այդ երկու խմբերը հակոտնյա են:

Ախուրյան, Ազատան գյուղ

- Մենք քյասիբ ենք, միայն տան մոտի հողն ենք կարողանում մշակել: Տանից հեռու մի կտոր հող ունենք, չենք կարողանում մշակել: Տան մոտի հողը 2600 մետր էր: Մեր գյուղապետը պատճառ բռնեց, ասեց, որ հեռու գտնվող հողը չեք մշակում, սա էլ կտրում եմ: 1600 մետրը կտրեց, տվեց ... (անվանում է գյուղի հարուստներից մեկին): Մեզ թողեց 1000 մետրը: Բայց ախր մշակում էինք եղ 2600 մետրը: Միայն մի տարի չէինք մշակել: Էդ պատճառ դարձավ: Մեր հողի վրա անասնակեր են ցանել, իրանք շատ անասուն ունեն: Պապս մոտները աշխատեց, փողը չտվին, դուրս եկավ: Հիմա ուրիշներին են աշխատում:

- Ձեր հողը որ վերցրին, ինչու՞ չբողոքեցիք:

- Ու՞մ բողոքես, ո՞վ է տերը, քյասիբի երեսին ո՞վ է նայում:

Սպիտակ, Ղուրսալի

- Տղես բանակից եկել է մալարիայով, էնքան պարտքի տակ ընկանք՝ դե-

3. Հեռուստացույց:
4. Նայել:

ղորալը, բժիշկ... Ամուսնացավ ու գնաց Մոսկվա, որ պարտքերը տանք: Չահել հարսս էլ՝ ինձ մոտ: Դե որ պետություն չինենք...

**Սպիտակ, Ղուրսալի - փախստական կին**

- Գնացի Սպիտակ աշխատելու, դոմիկս գյուղապետը տվեց մի դատավորի զոքանչի: Դաչա[5]: Հիմա դոմիկ չունեմ: Ասում են՝ դատի տու: Ու՞մ դատի տամ, դատավորի՞ն...

- Ու՞մ բողոքես, ոչ մի իրավունք չունես: Ներս էլ չեն թողնում:

**Գյումրի - Երգչուհի**

-Այս տարի մեծ միջոցառում արեցինք, մարզպետն եկավ: Մեր ղեկավարությունն ասեց՝ սուս կնստեք, ավել-պակաս չխոսաք: Երբ Քոչարյանն էր եկել, սաղ ակտիվ լիրը կանանց պահել էին, թե չէ կխարծակվեին - կխոշտեին էդ ղեկավարներին... Մի հատ քաոտրական բեմադրություն էր:

- Ում՞ բողոքես... (հարյուրավոր անգամներ հնչած անպատասխան հարցը)

**Գյումրի**

-Մենք ապրում ենք անօրեն երկրում: Եթե ինձ էլ նստեցնեն մի պաշտոնի, ես էլ պիտի նույնն անեմ, քանի որ վերևին պիտի տամ, ներքևին պիտի տամ...

**Վարորդ - Վանաձոր**

- Դե փող ունեցող մարդիկ վերևում են, իրանցից վեր մարդ չկա, իրանք են տերերը:

**Գյումրի**

- Չրիակերություն, կաշառակերություն, ժողովուրդը կտեսնի, որ ինչ ղեկավար կփոխվի՝ նույնը կմնա, դրա համար էլ կթողի կերթա: Ով ղեկավար կեղնի՝ սկզբում իրա բարեկամությանը կկշտացնե, դրա համար էլ հավատը կորել ա: Ով ղեկավար կդառնա՝ կհարստանա:

5. Ամառանոց:



# ԱՄԵՆ ԻՆՉ ԵՐԵՎԱՆՑՈՒՆՆ Է

Երևանն իրականում շատ է տարբերվում մնացյալ Հայաստանից: Բավական է ասել, որ վերջին երկու տարիներին Հայաստանում ԲՈՒՀ ընդունվածների 80 տոկոսը երևանցիներ են: Ներդրումների մեծ մասն արվում է Երևանում, Երևանում կառուցվում են առանձնատներ, երևանցիները սկսում են ընկալվել որպես Հայաստանի ճակատագիրը տնօրինողներ: Երկրում այլ կարգի առճակատումների կողքին սկսում է ձևավորվել երևանցի-ոչ երևանցի վտանգավոր խզումը:

**Գյումրեցի** - *երևանը դարձել է հանրապետություն, Հայաստանն էլ բաժանվել է երկու մասի՝ Երևանի ու մնացածի: Էսօր Երևանում ապրում է Հայաստանի բնակչության 70 տոկոսը, էլ ինչի՞ մասին է խոսքը:*

*- Էս քաղաքը (Գյումրին) հեռանկար չունի, նայում էս հեռուստացույց՝ ինչ որ կեղնի՝ սաղ Երևան...*

*- Երևան ես գնում, տեսնում ես ինչ տներ են սարքել, մենք էստեղ դոմիկում՝ ուզում էս փախչել գնալ: Գոնե չտեսնեինք (Վանաձոր):*

*- Լենինականը ի՞նչ են դարձրել, երկրորդ կարգի քաղաք: Այսինքն էնքան վատ կվարվին, որ նույնիսկ մարզպետին էլ են Երևանից բերել, ուրեմն Լենինականի մարդ չկար, հա՞: Ուրեմն Փիլոյանի պես մե խելացիմ չկար, հա՞, միլիցիայի պետ չկա՞ր, գայի պետ չկա՞ր, կամ տամոժնյու պետ չկա՞ր, սոցապ բաժնի պետ չկա՞ր: Այսինքն էս քաղաքը դարձրել են չիտեմ ինչ, որ ղեկավարությունն էլ պիտի Էրևանից գա: Իբր թե դուք ո՞վ էք, որ քաղաք ղեկավարեք, տեր էղնիք, իրանց մարդիկ բռի էղնին: Այսինքն էդ բոլոր ղեկավար պոստերում իրանց դրածո մարդիկ են, ու շաբաթը մեկ օրն էլ գոնե բռի էրթան օտչյոտ[1] տան, գան, թե ինչ են էրել: Հարկայինի պետը քանի՞ օր է Էրևան, կամ մնացած բնագավառները, որ բնագավառը ուզում ես՝ վերցրու: Գնա Կադաստրը հարցրա՝ շաբաթը քանի՞ օրն է Էրևան:*

**Վանաձոր** - *Պրոմեթևսը մի երկու ամիս որ աշխատեց՝ երևանցիներ էին: Վանաձորցին պիտի շնչի արտանետումները, երևանցիներն ու մալականները պիտի աշխատեն...*

*- Եթե մարդիկ դրսում աշխատած փողերից Հայաստանում նույնիսկ ներդրումներ են անում, ապա միայն Երևանում: Այնտեղ պռոսպեկտ կա, ուրիշ տեղ չկա...*

**Կապան** - *Հիմա էստեղ, ով մի քիչ հնարավորություն ունի Երևանում տուն առնելու ,առնումա ու գնում ա:*

**Կապան** - *Երևանում ինչ գործ էլ ծեռնարկում էս՝ դառնում ա, էստեղ ուզում էս՝ գնա միլիոնների առևտուր արա բեր էստեղ, ոչ մի արդյունք: Մեկը մեկին խաբում ա, կամ չի ուզում, որ դու նրանից վերցնես: Երևանում ուրիշ ա, եթե ես իմ սեփական անկյունը ունենամ՝ կգնամ:*

**Գյումրի, մարզպետարանի աշխատող** - *Պետք է ստեղծել հավասար մրցակցության պայմաններ, բայց Գյումրին պաշտպանվածություն չունի, Գյումրին որպես տնտեսապես փլուզված տարածք էսօր Երևանի դեմ չի կարա, և*

1. Հաշվետվություն:

*տնտեսությունը, և քաղաքականությունը մոնոպոլացված է: Սա է մեր հետ մնալու ամենակարևոր պատճառներից մեկը: Երևանում բենզինը 4200 դրամ է, Գալիս է Գյումրի՝ 5200 դրամ: 600-800 դրամ հաստատ տարբերություն է տալիս, որովհետև երևանցին պիտի տա, որ նա վաճառի, որովհետև երևանցին չի թողնում, որ նա տամոժնիով կամ երկաթուղով բենզին ներս բերի: Ծխախոտի, շաքարավազի, օղու, հագուստի, ամեն ինչի մոնոպոլիա է: Ես չգիտեմ ինչ պատճառով Բավրայի տամոժնիան, որով Շիրակը սահմանակից է Վրաստանին, Ջավախքին, էսօր անգործության է մատնվել, ամբողջ հոսքը դարձրել են Բագրատաշեն, ի՞նչն է պատճառը, զուտ տեխնիկական կամ կազմակերպչական, սուտ՝ հասկանանք: Շիրակի մարզը և՝ օբյեկտիվ, և՝ սուբյեկտիվ պատճառներով տնտեսական աշխուժության ոլորտից դուրս է մնացել: Որ շրջեք քաղաքում, նախկինում 44 արդյունաբերական ձեռնարկություն ունեցող հզոր քաղաք էր, մի հատ չկա: 14 տարի է անցել, մի հատ ստեղծեիր էլի, ինչ՞ կլինեն, էդ լավ-լավ հայրենասերները, որ էսօր միլիոնատեր են: Շիրակում էլ, Ջավախքում էլ իրավիճակը կփոխվի, եթե Գյումրիում վիճակը փոխվի, դրա համար երևի հատուկ կամքի ուժ է պետք հանրապետության ղեկավարին, կառավարությանը: Ինչ-որ արտակարգ մոտեցում է պետք, բարենպաստ պայմաններ ստեղծել, մարդիկ ձեռներեցությամբ զբաղվեն: Օրենքը փոխեն մի քիչ, էստեղ ինչ-որ զիջումների գնան, ինչ-որ պայմաններ ստեղծեն: 85 տոկոսով մենք կորցրինք պոտենցիալը և՝ արտադրատեղերի, և՝ բնակֆոնդի, և՝ ուսումնական, և կուլտուրական: Հիմա Լենինականցին էլ, թե կարողանում է գլուխը բարձրացնել, թողնում գնում է Երևան: Բայց Երևան կարան գնան հարուստները, Երևանը բանվորի, աղքատի տեղ չի: Բանվորը, աղքատը Ռուսաստան է գնում: Ռուսաստանն ավելի շատ է աղքատի հայրենիք, քան՝ Հայաստանը:*



# ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենիքի զգացողությունը և ընկալումը ուղիղ համեմատական է իշխանությունների հանդեպ զգացողությանը: Եթե 1988-1990-ական թթ. հայրենիքը և այն ժամանակվա իշխանությունը զանգվածային գիտակցության մեջ միմյանց հակադրված էին (հայրենիքի տերն իրենք՝ ժողովուրդն էին, իսկ իշխանությունը օտարի կողմից էր դրված և հարկադրված էր օտարի գաղափարախոսություն իրականացնել, «չնայած նրանց մեջ էլ կային հայրենասերներ, բա ո՞նց»), ապա ներկայիս «երկիրն էլ, հայրենիքն էլ դրանցն է»: Այսօր հայրենիքն ու իշխանությունը զանգվածային գիտակցության մեջ համադրված են: 1988-90-ական թթ. ոմանք, որ դրսում էին, վերադարձան Հայաստան: Համազգային շարժումը ոգևորել, ի մի էր բերել մարդկանց: Երկրաշարժի ողբերգությունը նույնպես միավորիչ հանգամանք էր: Ոմանք այդ գաղափարներին զոհաբերեցին դրսի բարեկեցությունը կամ բարեկեցության հնարավորությունը.

**Լոռի** - *Ես հետ եմ եկել Գերմանիայից ուրիշ նպատակով: Ծնողներս ապրում են սահմանի վրա, Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղում: Հարազատներս բոլորը էնտեղ են: Էն կռվի ժամանակներում իրանց ո՞նց թողնեի: Ամբողջ ընտանիքով, կանայք էլ հետը, կռվին մասնակցել ենք:*

**Շիրակ** - *Երկրաշարժը էղավ 1988 թվին, չէ՞: Ես էդ տարին կալոազ էլի Ռուսաստան էի, էկա ու ես էլ մնացի երկրաշարժի տակ: Մտածեցի, որ սաղ աշխարհը գալիս մեր Հայաստանին օգնելու, ուղղակի ամոթ էլ էր, որ ես նորից թողի էրթայի Ռուսաստան աշխատեի: Սաղ գալային ստեղ աշխատելու, չէր էղնի, որ ես էրթայի ընտեղ աշխատեի: Ու ես էդ 3 տարին մնացի ստեղ աշխատա: Թե չէ եթե երկրաշարժից հետո ես էրթայի էդ իմ քաղաքս (նկատի ունի Ռուսաստանյան աշխատատեղը), ես կռնայի լավ կվարտիրա ստանալ, առանց պրոբլեմի էնտեղ կվարտիրա կունայի: Էնտեղ շրջապատս լավ է, շատ մեծ շրջապատ ունեմ, հմի ես էնտեղ չեմ իհարկե, Սամարա եմ, 3 տարի է ինչ Սամարա եմ:*

Պատերազմը և երկրաշարժը մարդկանց հավասարեցրել էր, ինչպես հավասարեցրել էր համազգային պրոբլեմը: Զինադադարը ցույց տվեց, որ պատերազմի ժամանակվա հավասարությունը կեղծ հավասարություն էր, իրականում հենց պատերազմի ժամանակ, Հայրենիքի պաշտպանության ժամանակ դրվեց սոցիալական բևեռների ձևավորման հիմքը, որի արդյունքում պատերազմի գաղափարական նվիրյալները հայտնվեցին մերժվածների շարքում: Կամավորների և զինվորների կողքին այս երևույթին շատ ցավոտ են վերաբերվում նաև սահմանային գոտու շարունակ ռմբակոծությունների ենթարկված բնակչությունը: Սյունիքի մարզի մեր նյութերը վկայում են, որ ռմբակոծությունների ժամանակ ռմբակոծությունների ենթարկվող բնակավայրերից շատերը գնացին, բայց իրականում դրանք ժամանակավոր գնացողներ էին: Նրանց զգալի մասը վերադարձան ռմբակոծությունների դադարից հետո: Վերադարձան, որ հիմա էլ ելքեր փնտրեն հեռանալու համար, քանի որ ետպատերազմական իրավիճակն ավելի էր արտամղում, քան՝ պատերազ-

ծականը: «Ճիշտ է, որ պատերազմն արտագաղթ ծնեց, բայց ճիշտ է նաև այն, որ արտագաղթն ահագնացավ զինադադարին հաջորդող տարիներին»,- գրում են արտագաղթը հետազոտող կապանցիները[1], պատճառաբանելով այդ երևույթը, ի թիվս այլոց, նաև պատերազմին մասնակցածների կամ զոհվածների ընտանիքների հանդեպ անհոգի վերաբերմունքով: Իրականում պատերազմի ժամանակ արտագաղթ համարյա չկար, կար ժամանակավոր փախուստ կամ տեղափոխություն համեմատաբար անվտանգ վայրեր: Վկա՝ պատերազմի ժամանակ դուրս եկածների մեծ մասի վերադառնալու երևույթը: Արտագաղթը ծնեց հետպատերազմական իրավիճակը, երբ ցրվեցին հայրենիքի հանդեպ բոլորի պարտավորությունների և նվիրումի հավասարության պատրանքը:

- *Ղու արյունով հող ես պահել, բայց եթե մի գարաժի համար տեղ ուզես 500 դոլար պիտի տաս:*

- *Ի՞նչ զարմ, ես հիմի վարձով եմ ապրում: Ես զամկամանդիր դիվիզիոն եմ եղել, Քելբաջարի, Ֆիզուլու ռայոններն եմ վերցրել: Պատերազմից հետո հասել եմ զրոյի: Հիմա կոպեկ չունեմ, որ դուրս գամ, էսօր էլ ֆինանս ունենամ, հենց էսօր էլ կգնամ: Լեզուն էլ գիտեմ, տեղանքն էլ, ընկերներ էլ ունեմ: Աշխատող մարդու համար պրոբլեմ չկա:*

- *Ես հայրենիքը պաշտպանելու համար գնացի կռիվ, եկա տեսա՝ իրանք ամեն ինչի տեր են կանգնել: Այսինքն ես գնացի կռիվ հայրենիքի համար, բայց պարզվեց, որ հայրենիքն իրանք են: Իրանց էի պաշտպանել, որ հանգիստ կարողանան հարստանալ: Բայց իրանք ոչ միայն ինձ չեն պաշտպանում, այլ իմ ունեցածն էլ ձեռիցս առան: Ինձ սետիֆիկատ տվեցին, իրանք հասարցն ու գործարանը վերցրին, իմ ընկերոջ երեխեն անտեր մնաց, կինը անմարդ, իրանց երեխեքը արտասահմանյան մեքենաներով են ման գալիս: Ես աշխատանք չունեմ, իրանք պալատներ են կառուցում:*

- *Հայրենիքն ինձ չի պաշտպանում, ես ո՞նց պաշտպանեմ հայրենիքին: Բանակում ծեծում են, տանից հանում՝ դուրս են գցում, բողոքելու տեղ չկա... Արգենտինա տվին խանութները քարդեցին, զորք մտա՞վ: Իսկ մեզ մոտ զորք է գալիս, զորքով են վախեցնում: Մարդիկ էլ վախենում են ուրիշ կանգնել: Ավելի լավ է թողնել գնալ:*

- *Կուսակցությունները գալիս խոսում են, հայրենիքից-բանից, բայց իրա տղան Ամերիկա է:*

- *Էդ հայրենիքը մենակ մեզ համա՞ր է: Էդ հարուստների համար հայրենիք չկա՞: Բանակում հայրենիքը մենակ մենք ենք պահելու՞: Լավ, հայրենիքը պահենք, բայց հայրենիքն էլ մեզ պետք է պահի, չէ՞: Տղաս գնաց բանակ՝ վիրավորվավ: 2 ամիս հիվանդանոց պառկավ ու էդ սաղ մեր ֆինանսներով, պարտքերով: Ուռը հեռացրեցին: Ու հիմի մենք էդ պարտքերը չենք կրնա մարել: Լրացել է արդեն մի տարի, ինչ մենք ոչ մեր բոշակը, ոչ օգնությունը չենք ստացել: Տղուս էլ կհասնի, քանի որ ինքը ծառայության ժամանակ է դարձել հաշմանդամ, մինի*[2] *վրա է պայթել, ոտը հեռացրել են: Էրեխու բուժումն էլ բռի*

1. Վ.Եփրեմյան, Ա.Եփրեմյան, Արտագաղթ, «Կապանյան փորձ»..., ProMedia, Երևան, 2001թ., էջ 25:
2. Ականի:





*ծրի էղներ, բայց իրանք մեզնից փող վերցրեցին, զոսպիտալն էլ է փող վերցրել, առանց փող չէր էղնի, ու էրեխուն հարի հիմի հլե բոշակ չեն տվել: Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներն արդեն էղավ, էրեխեն Լենինականի կերբա կիսացնե, կսեն՝ բոշակ չկա, էսօր, էգուց: Մեր աշխատած գումարի մեծ մասն էլ մենք ծախսել ենք էրեխու վրա: Հիմի էլ եկել են, հարկերն են ուզում: Ղուք դեռ մեր հասանելիքը տվեք, նոր մեզնից ուզեք: Ի՞նչ եկամուտ եմ ունեցել, որ ինչ հարկ տամ (Շիրակ):*

**Լոռի, Աինիծոր, չքավոր ընտանիք** - *Կարիքը շատ-շատ մեծ ա... էս քանի օր ա՝ ամուսնուս ասում եմ՝ գնա, գնա խոպան... տղես բանակում հիվանդացել էր, ծախս շատ դուրս եկավ: Շատ գնացինք-եկանք՝ մինչև բանակից դզատեցինք, բերեցինք: Թղթերում ցուր էր հավաքվել... Կովը ծախեցի դեղորայքի տվեցի... Ամբողջատ աշխատանք չիներ՝ աշխատեինք, ապրեինք: Պետություն ունենք՝ էտ էլ չեմ ուզում ունենալ... Մեր ղեկավարությունը մեզնով չի հետաքրքրվում, մենք էլ իրենցով չենք հետաքրքրվում... Ոչ մի բանի չեմ հավատում... Որ երեխեն ծնվեց՝ փող չեմ ստացել, որ ճանկի փող լիներ կգնայի, կդաստիարակեի, էդ նի քանի կոպեկը կստանայի: Ոչ մի օգնություն ես էս պետությունից չեմ ստացել... Ինձ էտ պետությունը պետք չի, ես շնորհակալ եմ էտ պետությունից, իմ համար եղած-չեղած... Ակի թոշակառուի թոշակը չի ժամանակին տալի... Երեք ամիս նպաստ ենք ստացել՝ հետո էդ էլ կտրեցին: Ասում են՝ չի հասնում... Ընտեղ էնպես են ասում, ֆինանս չունենք՝ գնանք տեսնենք՝ հասնու՞մ է, չի հասնում... Էդ էլ հայրենիքի համար ծառայողը... (Լոռի):*

- *Գնացողները չեն էլ ուզի գան. գան ի՞նչ անեն, ով էլ մի քիչ փող ճարի կբողնի կերթա: Էս Հայրենիքը երկրորդական ա (Շիրակ):*

- *Ով որտեղ գտավ մի կտոր հաց, նա տեղավորվում ա: Էն առաջվա «Սուրբ Հայրենիք, սրտիս մեջ ես», հիմա դարձել ա «որտեղ հաց, ընդեղ կաց» (Լոռի,Մարշալպետ):*

- *Եթե գլխիս կռիշ չկա, փորս դատարկ ա, ի՞նչ հայրենիք, «որտեղ հաց, ընդեղ կաց» (Ղուրսալի):*

- *Մենք ուրիշ ձևի էինք մեծացել, մեր մանկության ժամանակ Հայրենիք կսիրեինք, հիմա մեր սիրած Հայրենիքը մեր երեխեքի համար չկա, հիմիկվա երեխեքը տարբերություն չեն դնում՝ ստեղ ապրեն, թե Ամերիկա, որտեղ լավ ապրեն՝ ընդեղ Հայրենիք ա (Գյումրի):*

- *Որ հետ ես նայում՝ ուղղակի լացդ գալիս ա: Ինչքա՞ն կարելի ա մարդուն ստիպեն, որ իր հայրենիքից էսքան զզված լինի: Վաղը չէ, մյուս օրը, ում ձեռքին էլ փող լինի, կթողնի ու կգնա, էնքան զզված են էս կառավարությունից, հիասթափված (Վանաձոր):*

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԳՆՈՒՄ

Դաշտային նյութերը հնարավորություն են տալիս արձանագրել, որ գնում են երիտասարդ, արհեստ ունեցող կամ լավ աշխատուժը, կրթություն ունեցողները, այն մարդիկ, ովքեր կարող էին ոտքի կանգնեցնել երկիրը: Գնացողները տանում են նորերին, բայց դարձյալ նույն որակների: Գյումրիի մտավորականներից մեկի ընդհանրացմամբ՝ գնում են նրանք, ովքեր այստեղ մրցակցության մեջ տանուլ են տվել, բայց կարող են մրցակցել: Նրանց գնալուց հետո հաղթողները մրցակիցներ չունեն: Տանում են նրանց, ովքեր կարող են աշխատել, ստեղծել: Մնում են նրանք, ում պետք է օգնել:

*Պատառիկներ զրույցներից*

- *Հինգ երեխա ունեմ, հինգն էլ դուրսը...*
- *Երկու տղա ունեմ, երկուսն էլ՝ Ռուսաստան...*
- *Ես երկուսն ունեմ, երկուսն էլ ստեղ չեն: Իմ խնամին 7 երեխա ունի, յոթն էլ ստեղ չեն, ամեն մեկն էլ արդեն ամուսնացած, իրենց ընտանիքներով: Հիմա էդ իմ աղջկա կեսուրը յոթ երեխա ունենալով հանդերձ իմ նման մենակ ա: Ես երկուսը ունեմ՝ դժվարանում եմ: Բայց նա յոթ երեխա ունի՝ 5 աղջիկ, երկու տղա ու բոլորը տարբեր տեղեր:*
- *Ոչ այնքան աղքատներն են գնում, որքան՝ կարողները...*
- *Առաջ գնացողները (հարստացողները) կթողնեն կգնան...*
- *Խոպան գնացողները իրենց ազգականներին են տանում, քյարիբներին չեն տանում...*
- *Մեկը լավ էր ապրում՝ էլի գնաց, հիմա շատ զոհ ա: Անցյալ տարի եկել էր, ասում ա «մեռնեմ չեմ մնա ստեղ, էս ինչ երկիր ա, դուք էլ թե կարաք՝ փախեք»:*
- *Իմ բարեկամներից գնացել են Ամերիկա, Հոլանդիա (մորքուրիս աղջիկը իր ընտանիքով), նաև Լեհաստան, հորեղբորս աղջիկը և տղան, առանձին ամեն մեկը իր ընտանիքներով, մեկն էլ գնացել է, դաժե Լեհաստանում է ամուսնացել, լեհացի տղա է առել: Մեր բարեկամներից գնացել են նաև Ֆրանսիա, Անգլիա:*
- *Համարյա ամեն ընտանիքի կպել է, այս կամ այն չափով: Մորքուրիս տղեն, փեսես, խնամիս տարավ, տեգրս... .*
- *Ես ոչ միայն իմ ընտանիքն եմ տարել, այլև եղբորս ընտանիքը, քրոջս ընտանիքը, մորքուրիս տղեն, շատ ընտանիքներ եմ տարել:*

**Պատմում է կինը ամուսնու մասին** - *Տարբեր տարի բրիգադների հետ կերթա: Էդ բրիգադները բարեկամների, ծանոթների միջոցով կկազմվին: Օրինակ, էս վերջի երկու տարին մեր խնամու միջոցով կերթան: Ինքը մշտական էնտեղ է, գործ կբռնե ու ստեղից բրիգադով կերթան, կաշխատին, գուկան: Հմի կերթան Բաքան՝ Վոլգոգրադ:*

- *Կա՞ն, որ էնտեղ երկրորդ ընտանիքն ունեն:*
- *Էնքա՞ն, մեր գյուղում լիքն են, որ էնտեղ երկրորդն ունեն:*
- *Քիչ են, մեր գյուղից չեն էրթա, հայրենասեր են (հեգնանքով ծիծաղում է):*



*կերթան մենակ տղամարդիկ, խոպան, կաշխատին ու հետ գուկան, իսկ ընտանիքներով չեն էրթա: Խոպան գնացողները մոտ մի 70 տոկոսը կեղնին: Էն մնացածն էլ՝ ով տրակտոր ունի, մեխանիզացիայով յոլա կերթա, մի 10 տոկոսը հնարավորություն չունին էրթալու, իսկ մի տաս տոկոսն էլ տեղ չունին, բարեկամություն չունին, չեն կրնա էրթա: Մնացածը գնում են:*

Սակայն «մեխանիզացիայով յոլա գնացողն» այլ կարծիքի է.

- *Ես հիմի գյուղը կմնամ, բայց լուրջ դուրս էրթացող ընձնից լավ կապրի: Ես տրակտորիստ եմ, եթե դրսի մարդը բերեց փողը, ուրեմն, ես էլ կունենամ, եթե ինքը չբերեց, ուրեմն ես էլ չեմ ունենա: Սաղ ցուցակով, պարտքերով իրանց գործը կենեն, մինչև հմի էդ ցուցակները մոտս են:*
- *Ուրեմն այդ ցուցակներով կարո՞ղ էք ասել, թե որ տարին էր գյուղի համար առավել հաջող կամ անհաջող:*
- *Ամենաանհաջողը 2000, 1999 թթ: 1998-ը մէ քիչմ լավ է էղել, ու 2001-ն էր մէ քիչմ լավ: 2001-ին ինչխոր մի 20 տոկոս վերելք ունենար: Մինչև փող փոխվելը լավ է էղել, դրանից հետո վատ է էղել մինչև 1998 թ-ը: Մեր գյուղն ընդհանրապես անընդհատ վատի է գնացել: 1993-ից հետո հա վատացել է, 1998-ին մէ քիչմ լավ էղավ ու հետո էլի վատի է գնացել: 2001-ին շատ քիչ լավ տարբերություն էղավ, շատ քիչ:*
- *Գնացողների քանակն էս վերջին տարիներին նվազու՞մ է:*
- *Էնքանով է փոխվել, որ օրինակ, ես երբեք մտադրություն չեմ ունեցել դուրս էրթալու, էս տարի բդի էրթամ: Որ մեխանիզատոր եմ, սեփական տրակտորն էլ ունիմ, ես իմ վրես կվերցնեմ, որ ես չեմ կրնա ստեղ ապրի, էրկու հատ էրեխա ունեմ ու չեմ կրնա ստեղ ապրի: Անցած տարի կանչեցին, ես չգնացի, բայց էս տարի անպայման բդի էրթամ: Տրակտորը կուտամ ընկերոջը, թող աշխատցնե, ես կերթամ:*
- *Դուք մեխանիզատոր էք, ու՞ր էք գնալու և ու՞մ հետ:*
- *Մինչև Սամարա, շինարարության վրա էլի բդի աշխատիմ: Տանողն էլ պապայիս հորոխբոր թոռն է: Աներս էլ Յակուտիա է, էնիգ չի գա արդեն, էս տարի էլ չի էկել, ուղղակի փող կղրկե տուն, աղջկան նշանեց, էն էլ պարտքի տակ ընկավ, էլավ գնաց խոպան, արդեն համարյա 60 տարեկան մարդ է ու էս տարի էլ չի գա: Ինքը 57 տարեկան մարդ է, 57 տարեկան էն ժամանակ մենակ թախտի վրա նստելու իրավունք ուներ:*
- *Փաստորեն լավ ապրողն էլ է գնում, վատ ապրողն էլ:*
- *Հա, որովհետև անօրեն երկիր ա, ղեկավարություն չկա: Մեկը 600 դոլարով իր երկու սենյակը ծախեց, մենակ որ տոմսի փող անի, փախնի ստեղից:*
- *Գնացողներն էս տարվա մեջ քչացել են: Դա էլ կախված է նրանից, որ փող ունեցողները գնացել են, էլ մարդ չկա, որ կարողանա էրթալ: 1999 և 2000 թթ-ը եթե համեմատենք, գնացողների քանակը 2 անգամ քչացել է 2001-ին: Հմի ինչքան էլ ուզեն էրթալու, էլ միջոց չունին, որ էրթան:*

# ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ

Հայտնի է, որ երկրից փախստականների մեծ արտահոսք կար: Առհասարակ փախստականական համայնքը, երիտասարդների գնալով, լրջորեն «ծերացել» է: Ընդունված է մտածել, որ փախստականների միջավայրը նոսրացել է հատկապես քաղաքներում: Նյութերը, սակայն, վկայում են, որ փախստականական արտագաղթը պակաս չի նաև գյուղերից: Միայն Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղից հեռացել են 60-70 ընտանիք, Գեղամասարից 40-50 ընտանիք, Մեծ Մասրիկից 40-50 ընտանիք (մոտ 230 մարդ), Վանևանի 100 տոկոս փախստականներից գյուղում մնացել է մոտ 10 տոկոսը: Լիովին դատարկվել են Ծորժաները: Փախստականների հեռանալը գյուղերից կատարվում է մի քանի ձևերով: Առաջին տարիներին գյուղերից գնում էին համեմատաբար երիտասարդ աշխատունակ ընտանիքները, թողնելով ծնողներին կամ, ավելի հաճախ, միայնակ ծնողին: Բնակության նոր տարածքում հարմարվելուց հետո նրանք փորձում են օգնել այստեղ մնացած տարեցներին, բայց ավելի հաճախ այդ հնարավորությունը չեն ունենում: Հենց որ հնարավորություն է առաջանում, նրանք տանում են նաև ծնողներին, փորձելով վաճառել իրենց բնակարանները: Դրանք վաճառում են սովորաբար հարևան գյուղերի երիտասարդ ընտանիքներին՝ «հորից բաժանվող որդիներին»,-այսպես կոչված «անկիսուր ընտանիքներին»: Սրանք հիմնականում աղքատ, սակայն աշխատելու կամք և կարողություն ունեցող ընտանիքներ են, որոնք առաջիկայում ակնհայտորեն եղանակ կստեղծեն փախստականաբնակ գյուղերում: Հենց հիմա այդպիսին է Վարդենիսի նախկինում փախստականաբնակ Վանևան գյուղը, որի ներկայիս բնակչության ավելի քան 90 տոկոսը հարևան գյուղերից հավաքված երիտասարդ ընտանիքներ են:

Փախստականաբնակ գյուղերի մեծ մասը, սակայն, ցայտուն արտահայտված սեռա-տարիքային անհամաչափություն ունի: Երիտասարդների հեռանալը, Հայաստան եկած գյուղաբնակ փախստականների մեծ մասի բարձր տարիքը ստեղծում են մի իրավիճակ, երբ գյուղի բնակչության քանակական մեծամասնությունը տարեց մարդիկ են կամ երեխաների հետ թողնված միայնակ կանայք (օրինակ, Տորֆավան գյուղի 100 փախստական ընտանիքներից 50-ում միայնակ մեծահասակներ են): Այս անբնական վիճակը գյուղերում աստիճանաբար ձևավորում է թշնամանքի, հուսահատության և բարոյալքման մթնոլորտ: Փախստականների մոտ ամրապնդված է այն խորը համոզմունքը, որ կյանքի բոլոր հարցերում տեղացիները միմյանց հետ են և իրենց հանդեպ կիրառվող բոլոր անարդարություններում միմյանց թիկունքի կանգնած, իսկ իրենց «խմբում» տղամարդկանց և երիտասարդների բացակայությունը իրենց դարձնում է խիստ խոցելի: Այս պրոբլեմներում փախստականները ոչ միայն որևէ հույս չեն կապում իշխանությունների հետ, այլև համոզված են, որ «նրանք միասին են», «նրանք մի խումբ են»: Փախստականները դառնությամբ ասում են, որ իրենք են մեղավոր իրենց անպաշտպան վիճակի համար. «մենք իրար թիկունքի չենք կանգնում, մենք տարբեր տեղերից



ենք եկել, «մեստնիներն[1] էլ ինչ ուզում՝ անում են, իրենք բոլորը իրար գիտեն, մի հող ու ջրի մարդիկ են»; «Նպաստ կամ օգնություն ստանալու ժամանակ մենք հերթ ենք կանգնում, իրենք գալիս են, ստանում ու գնում. ի՞նչ կարող ենք անել»; «փախստականը երրորդ սորտի մարդ է»:

Այս երևույթի դրսևորումները օբյեկտիվորեն կամ փախստականների սուբյեկտիվ ընկալումներում առկա են կյանքի համարյա բոլոր դրսևորումներում: Այսպես, ընտանեկան նպաստների բաժանման արատավոր պրակտիկան փախստականների գիտակցության մեջ ուղղված է իրենց դեմ: Բանն այն է, որ սոցիալական աշխատանքն իրականացնող տեսուչների մեծագույն մասը նպաստը նշանակում են կաշառքով: «Սակայն եթե իրանց «մեստնուն» նպաստը տալիս են մի շիշ օղիով, փախստականից կամ մի գառ են ուզում, կամ 10.000 դրամ: Բայց չէ՞ որ «մեստնին» ավելի շատ հնարավորություններ ունի»,-դառնացած ասում են փախստականները: Այսինքն՝ դատապարտվում է ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան արատավոր երևույթը, որքան անարդարության դրսևորման ձևը:

Ուսումնասիրվող շրջաններում մնացած փախստականների մեծ մասը վստահ են, որ տեղացիներին ձեռնտու է իրենց գնալը և նրանք ամեն ինչ անում են, որ իրենք հեռանան: Քանի որ իրենք՝ փախստականները երազում են հեռանալ, նրանց թվում է, թե տեղացիները դիտմամբ չեն գնում իրենց բնակարանները, որոնք այսպես թե այնպես «նրանց պիտի մնան»:

Արարատի մարզի գյուղերից մեկում, որտեղ հիմնականում վանեցիներ են, սիրիահայեր, բաքվեցիներ, ղարաբաղցիներ, մի քանի կիրովաբադցի ընտանիք, բաքվեցի փախստականները պատմում էին, որ իրենք միանգամայն անօգնական են, չնայած գործադրած ջանքերին: Ոռոգման ժամկետներն անցնում են, ապա նոր իրենք ջուր են ստանում, քանի որ հնաբնակ սիրիահայերը սկզբում ջուրը տալիս են տեղացիներին: Փախստականները երկար ժամանակ ջանքեր էին գործադրում հարմարվել տեղի պայմաններին: Նրանցից շատերը աստիճանաբար սովորեցին հողի մշակությունը, խաղողի մշակությունը: Աշխատում էին ամբողջ ընտանիքով: Բայց բերքը փչանում էր կամ ոռոգման ուշացումների պատճառով, կամ՝ բերքը ժամանակին գործարան չհասցնելու պատճառով. «սեզոնին մեքենաները չեն հերիքում, մարդիկ նախ իրենց ու իրենց ազգականների բերքն են հասցնում մթերման կետ՝ կոնյակի գործարան»: Հասունացած խաղողը հյութաքամ էր լինում, սմքում, քաշը կորցնում, ապրանքային տեսքը կորցնում:

Փախստականները, տեսնելով, որ ազգակցական համայնքներով ապրող տեղացիները միավորված են և կարողանում են միմյանց հենարան լինելով լուծել ոռոգման ջրի, բերքի տեղափոխման և այլ հարցեր, որոշում են իրենք էլ միավորվել, «թայֆաների դեմ թայֆայությամբ հանդես գալ»: Փախստականները հիմնականում բաքվեցիներ էին: Սակայն, ինչպես պատմում է բաքվեցի մի կին, այդ գործը նախաձեռնած լիդերները քոչեցին Ռուսաստան, և որոշումը այդպես էլ մնաց անկատար: «Հիմա մնացել ենք 3-4 ընտանիք»: Նրա ամուսինը պնդում էր, որ գյուղում բոլոր որոշումները վանեցիներն են կայաց-

***1. Տեղացիները:***

նում, գյուղապետը միշտ վանեցի է: «Ինչքան գյուղապետ փոխվել է, հաջորդը դարձյալ և միշտ վանեցի է եղել»:

Աղետի գոտու փախստականաբնակ գյուղերից մեկում փախստականներին հաջողվեց իրենց ցանկալի գյուղապետին ընտրել, և դրանից հետո, չնայած սոցիալ-տնտեսական կյանքում էական փոփոխություններ չեն եղել, արտագաղթը կտրուկ կանգ առավ: Տվյալ դեպքում մարդկանց տեղում պահում է արդարության զգացումը.

*- Պ.-ն (նախկին գյուղապետը) որ սաղ նստած էր, ո՞նց էր ապրում, պոմոշ[2] ես տեսե՞լ Պետրոսյանի ժամանակ, էնքան փողեր կերավ, հիմա մեր Ռաֆոն (ներկա գյուղապետը) էլ ա գյուղապետ, ո՞նց ա ապրում, բենզին չունի, որ լցնի, սրա-նրա ավտոներով ա գնում մարզպետարան (տվյալ դեպքում գյուղապետի վատ ապրելու հանգամանքը տանելի է դարձնում վատ ապրելու հանգամանքը):*

*- Մենք չենք բողոքում, ու՞մ բողոքենք, մեր գյուղապետը լավ տղա է, ոսկի տղա է, երեխեքի համար տոնածառ դրեց, մի տասը Ռաֆոյի նման ըլի, մեր պետությունը կապրի, ոչ մեր ռայոնից ա, ոչ ճանաչել ենք, եկել ենք ստեղ ենք ճանաչել, գլուխը կամպյուտեր ա, հունվար ամսից մինչև հիմա ես ալյուր չեմ առել, ինքը իրա փողով բենզին ա լցնում, գնում ա մարզպետարան դաբիցա[3] ա լինում, որ մեր ժողովուրդը լավ ապրի, ոչ բարեկամ ա, ոչ էլ՝ քանուց աշխատող տղա:*

*- Սրանից առաջ եղել ա Պ.-ն, մի գել էր, մի ոչխար կուտեր, կոմբայնը ծախեց, փողը կերավ, հիմա մենք կոմբայն չունենք, գնում ենք կողքի գյուղից ենք կանչում, անձրևը գալիս է, ցորենը մնում է գետնին, որովհետև մենք կոմբայն չունենք: 20 կմ հեռվից կոմբայնը բերում ենք, ծախսը մեծանում է, ձեռ չի տալիս: Պ.-ն մեր ժողովրդին դաղարգյուն արեց, ցրեց, էս ա իրա ընտանիքն էլ վեր ա կենում, գնա, դե արի, մենք իրա ծակ մեշոկը պտի կարենք, որ ապրենք: Հիմա Ռաֆոյանք մի ծրագիր են արել, մի միջազգային կազմակերպությունից գոմ են վարձել, ոչխարից հատուկ բուրդ ա, մենք պիտի հանձնենք բուրդը խալու համար, հիմա նրանք բերել են, ֆիրմա են բացել, պանիր սարքող կա, բանվոր կա, քանի մարդ աշխատում ա, հիմա, որ մի 2 հատ էլի տենց ծրագիր բերեն, ժողովուրդը կապրի:*

*- Ապրի Ռաֆոն, Ռուսաստանից եկել ենք տկլոր, ոչ մի բան չունեինք, ամեն ինչով ապահովեց՝ դոմիկ ա տվել, ալյուր, աշխատանք ունենք, ամուսինս ու ես էդ ֆերմայում ենք աշխատում, սերմացու տվեց:*

*- ...Ռաֆոն խղճով մարդ ա, իրա համար բոլորս հավասար ենք:*

Իշխանության առաջ հավասարության այս համատարած ձգտումն է, որ բախվում է իրականությանը և, ի թիվս այլոց, խթանում արտագաղթը:

---

***2. Օգնություն:***

***3. Ձեռք է բերում, կարողանում է համոզել:***



# ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԳՆՈՒՄ

Նայած, թե ու՞ր են գնում: Եվրոպա և ԱՄՆ գնացողները գնում են կամ տուրիստական խմբերի հետ, կամ՝ անհատական հրավերներով, կամ՝ ուսանողական աշխատանքային խմբերով: Եվրոպա գնացողների մեծ մասը փորձում է ձևակերպվել որպես փախստական Ադրբեջանից: Հայաստանում փախստականների առկայությունը «ծրագրավորել» է արտասահմանում, հատկապես Եվրոպայում որպես փախստական ներկայանալու հնարավորությունը: Մի կողմից Հայաստանում է ձևավորվում «փախստականների» փաստաթղթերի արտադրություն, մյուս կողմից՝ Եվրոպական երկրների միգրացիոն ծառայություններին սպասարկող իրավաբաններն են «խթանում» հայ ներգաղթողների «փախստականական կենսագրությունները»:

Փախստական լինելու այս «առավելության» շուրջը ձևավորվել է մի ամբողջ «ինդուստրիա»՝ փախստականի ծննդյան վկայական ճարողների կամ դրանց «արտադրողների» ու օգտվողների ստվար բանակով:

Բնականաբար պատմությունների մի ամբողջ շուկա է ձևավորվել. փախստականները վաճառում են իրենց ծննդյան վկայականները և իրենց անցյալը. մեկնողները «անգիր են անում» այդ անցյալը և հետո, ընդունող երկրում փորձում են միգրացիոն ծառայություններին «վաճառել» դրանք: Կան փախստականներ, որոնք արդեն մի քանի անգամ «վաճառել են» իրենց կենսագրությունը: Փախստական մի տիկնոջ պատմածով, իր կենսագրությունը թափառող սյուժեյով շրջում է Հունգարիայում, Բելգիայում, Գերմանիայում...

Գնացողների մեծագույն մասը, սակայն, Ռուսաստանն է ընտրում, որ թե ավելի մատչելի է գնալ-վերադառնալու իմաստով, թե ավելի հասկանալի լեզվով ու մշակույթով: Ռուսաստան գնում են թե ինքնաթիռով, թե ավտոբուսով: Գնացողները բոլորն էլ բողոքում են, որ ճանապարհներին մեծ պրոբլեմների են հանդիպում, որ յուրաքանչյուր քայլափոխի կարող են իրենց նեղել. սահմանային կետերում, ավտոճանապարհային տեսուչները: Հարցազրույցները վկայում են, որ հիմնական բողոքները կապված են Վրաստան-Օսեթիա-Կաբարդա ճանապարհների հետ: Ընդ որում էական տարբերություն կա գնալու և վերադառնալու միջև: Գնալիս մարդկանցից հավելյալ գումարներ են վերցնում, բայց տանելիի շրջանակներում, ընդ որում այդ գումարների չափը քիչ թե շատ հայտնի է: Սակայն վերադառնալիս երբեմն ուղղակի կողոպտում են:

*- Տղերից մեկը ռիսկ ա արել իրա փողը իրա հետ բերել: Անցնելու ժամանակ Վլադիկավկազում լրիվ էդ գումարը վերցրել էին: Ու էդ խեղճ տղու երեք ամսվա քրտինքով աշխատած փողը տամոժնին լրիվ տարել էր: Խղճները էնքան կտրած ա, որ գոնե կեսը վերցնեն:*

Կոնկրետ դեպքերը, որոնք հրապարակվում են սույն աշխատանքում, այդ կարգի երևույթների առանձին դրսևորումները ցույց են տալիս: Այժմ բերում ենք միայն մի քանի ընդհանրական վավերացումներ.

- Ով որ գնացել ա, իր աշխատածի 50 տոկոսը միայն ճանապարհի վրա է գնում: Ով որ գնում ա ժամանակավոր աշխատանքի, մեծամասամբ բարեկամների ոսկեղենը հավաքել են, տարել դրել բանկում, պարտքով փող վերցրել, դրան ճանապարհել, որը 2-3 ամիս հետո էդ աշխատած փողը ուղարկել ու փակել են: Ստացվեց, որ 2-3 ամսվա փողը գնաց միայն ճանապարհի մի ուղղության վրա: Դրա համար էլ բերած փողը հերիքում ա, որ գան ստեղ մենակ հացի պարտքերի փողը տան, ձմեռվա ամիսները յոլա գնան, ու նորից, հենց արևը կպավ՝ պոկվում են, որ բերեն նորից նույն տարին նման ձևով կրկնվի:

- Ես ստույգ տվյալ ասեմ: Իմ ամուսինը գնացել ա մայիսի 10-ին: Աշխատել ա մայիսի 20-ից 4 ամիս, արանքում 200 դոլլար ուղարկել ա, որի 100-ը իրա գնալու ճանապարհածախսը տվել եմ, 100 դոլլարով էլ մի փոքր յոլա ենք գնացել: Էդ չորս ամիսներից հետո 500 դոլլարով էկել ա, էդ արանքում մենք ապրել ենք ու արդեն պարտքեր ունեինք: Էդ գումարը գնաց պարտքերին, ու մի 100 դոլլար էլ դրանից դրած ա դրել, որ մի ամիս հետո նորից գնա: Էնտեղից իր ճանապարհածախսն էլ չեմ հաշվում, որովհետև փեսեն ա իրեն ճամփա դրել:

- Գնալ-գալը ինքնաթիռով ա՞:

- Ինքնաթիռով հետ ա էկել, գնալը ավտոբուսով ա: Բայց էլի գնալը 100 դոլլար նստում ա: Ինքը Պերմ ա գնում: Ինքնաթիռով նստում ա 200 դոլլար, ավտոբուսով, Սադախլույով՝ 100 ա նստում:

- Մինչև Մոսկվա 35 000 դրամ է, 23 000 դ.՝ Արմավիր,-ասում է Ավտոբուսի տոմսարկղի աշխատողը: Էժանացել է, ի միջի այլոց: 2000 թ. 26000դ.՝ Արմավիրն էր, հիմա 3000-ով էժանացել է: Ու էդ ավելորդ ճանապարհի գումարն էլ 2000-3000 էր, բայց հիմի 10 000 է եղել՝ դա էլ հիմնականում միլիցեներներին ու ԳԱԻ պոստերինն են, ռեկետ, հանցագործություն չկա: Վրաստանից էլ է շատ արտագաղթ: Ու որ Ռուսաստանը դարձրեց իրանը վիզովի երկիր, վրացական կողմից արդեն ավտոբուսներ չգնացին: Էդ մարդկանց գրպանի գումարը պակասեց: Էդ բալանսը, տարբերությունը վերականգնելու համար, սկսեցին հայկական մեքենաներից շատ կորզել: Բողոքը Վրաստանի ճանապարհների հետ է կապված: Բողոքներ կան նաև Հյուսիսային Օսեթիա, Կաբարդա, մինչև Մինվոդ, էնտեղից հետո արդեն էլ բողոք չկա: Արմավիրից Ռոստով էլ կազակներ կան, նրանք էլ են պոստեր դրել ու սկսել են կպնել, 1999 թ-ից դրանք կային: Իսկ հետո արդեն ազատ է ճանապարհը: Իսկ Կաբարդան ու Օսեթիան շատ վատ են, ավելի վատ, քան Վրաստանը:

- Այնտեղ ավելի շա՞տ են գումար վերցնում:

- Էդ չեմ կարող ասել, ամեն անգամ դա տարբեր է լինում, ամեն մարդ մի ձևի է տալիս, մի ռեյսը մի ձևի է ստացվում, մյուսը՝ ուրիշ: Բայց միջինը էդ բոլոր պոստերը իրար հետ վերցրած մի 500 ռուբլի քան է նստում, այսինքն մոտ 10 000 դրամ: Մարդը ստեղ տոմսը առել է 24 հազար դրամով, մի 10000 դրամ էլ կծախսի մինչև կհասնի Արմավիր:



- Իսկ եթե չտա՞ն:

- Կասի՝ հանցագործ ես, կոմպյուտորում հանցագործների մեջ էրևում ես: Դե արի, ապացուցի, որ ես հանցագործ չեմ:

- Ինչով ասես կգնան, ավտոբուսով: Նախանցած տարի ետ գալիս 300-400 դոլլար փող կար մոտս: Սամալյոտի փող էլ որ տայի, պիտի ծախսեի 230 դոլլար, մտածեցի, որ 70-80 դոլլարով ավտոբուսով գամ: Հետ գալուց եկանք Գրոզնին անցանք ու բռնեցին, մինչև գիշերվա 2-ը պահեցին միլիցեքը: Սաղի մոտից փողը հավաքեցին, 20 ռուբլով տուն եմ եկել, նախանցած տարի: Սվերդլովսկից մարշրուտնի տաքսի էր: Նազլի տարան:

- Կազմակերպված բռնում, տանում են ավտոբուսը տուպիկ[1] կոխում, խլում սաղ եղածը: Ում էլ դիմես՝ պետական ավտոկայանին դիմես, պետությանը դիմես, քեզ կպատասխանեն, թե քեզ ո՞վ ա թողել, որ դու գնաս Վրաստանի սահմանը անցնես: Չնայած որ իրավունքը ունես, լրիվ միջպետական դոգովորները կազմած, բայց պաշտպան չկա: ... Մեր ՄՊԸ-ն նման թույլտվություն ունի մեր պետությունից, նման թույլտվություն ես ունեմ և Մոսկվայից: Մոսկվայի տրանսպորտի և ճանապարհների նախարարությունը ունի պայմանագիր մերինի հետ, որ մենք կարող ենք օգտվել իրար ճանապարհներից: Բայց մեր պետությունը չի կարողանում մեզ պաշտպանել: Պետությունը ոչ մի բան չի կարող անել:

- Իսկ պետական ավտոբուսները պաշտպանություն ունե՞ն:

- Նույնն է, տարբերություն չկա: Մենք հլա ավելի քիչ ենք ծախսում, որովհետև անընդհատ էդ ճանապարհին ենք, իսկ պետականը՝ ամիսը մի անգամ է լինում, նրանք ավելի շատ են ծախսում:

- Ի՞նչ առումով են ավելի շատ ծախսում:

- Պոստերում, տարբեր զադերժկեքում: Օրինակ, մի ստից սպեկտոր[2], կարա գա քաշի ավտոբուսը աջ ու մի 5 ժամ պահի, թե՝ մարդը 100 ռուբլի հավաքեք, տվեք ինձ: Մտնում ես պոստ[3], որ բարիշես[4], մի քիչ քիչ տաս, իսկ ինքը կարա պոստից դուրս գա, ավտոբուսը աջ քաշել տա ու ասի՝ ով ինչ վեշ ունի, հանեք, ստուգում եմ, զենք եք տանում, վայո[5], նարկոտիկ, բայց ինքը իրավունք չունի նման բան անելու: Իսկ եթե օրենքով խոսես, գինն են բարձրացնում: Պիտի խնդրես, աղաչես, թող ոչ մեկը գլուխ չգովա, թե գնա ու լավ կլինի: Ես 1992 թ. էդ գործին եմ՝ ավտոբուս եմ տանում, բերում ու գիտեմ: ... Որ մտնես Թիֆլիս... տենց մեքենա չկա, որ անցնի ու պոստին փող չտա, տենց բան չկա: Միայն Թուրքիայի ավտոբուսներն են, որ առանց փողի հանգիստ անցնում են, դե որովհետև դրանց պետությունը պետություն է, վրացիների ականջները նենց կքաշի:

---

1. Փակուղի:
2. Ինսպեկտոր-ավտոճանապարհային տեսուչ:
3. Պահակակետ:
4. Հաշտվես, համաձայնեցնես:
5. Վերք:

- Գիտե՞ք ինչ դժվար ա, դու կնոջդ հետ գնում ես Ռուսաստան, սահմանի վրա միլիցեքը ստուգում են, դու տղամարդ ես, կնոջդ ստուգում են, դու չես կարա մի ձեն հանես, օրենք չկա, ոչ մի հարցում (Վանաձոր, վարորդ):

- Լակոտներ են, էլի, ասում ա «տանցուլ[6]», ասում եմ «չեմ կարա», ասում ա «դա տի չտո, տագդա պեսնյու պեյ[7]»: Ասում եմ «որը երգեմ», ասում ա «Ով սիրուն, սիրուն», հայերեն էլ ասում ա: Որ գնում ես, փող են ուզում, ասում ես փող չունեմ, ասում ա' դե պար արի, երգի, ծիծաղըմ ա, ձեռ ա առնում:

- Դա Վրաստանու՞մ:

- Օսետինները, չէ, ռուսները տենց բան չեն անում, ռուսական պոստում ասի «փող չունենք», ասեց «լադնո, իդի[8]»: Իրանց մոտ մարդկություն կա:

- Եթե համեմատես Վրաստանի, Ռուսաստանի, Օսեթիայի և մյուս պոստերը...

- Կովկասը ահավոր է, Կովկասը իրավունք չունի ապրելու: Մենք հպարտանում ենք, որ Կովկասից ենք, բայց մենք իրավունք չունենք հպարտանալու, որ Կովկասից ենք:

- Դուք Ձեզ կովկասցի՞ եք զգում:

- Ես ուրախ եմ, որ կովկասցի եմ, ամեն տեղ հպարտանում եմ, բայց հիմա արդեն ամաչում եմ, որ կովկասցի եմ:

- Ամեն մի պոստում ինչքա՞ն են դրված ճաղոցները[9]:

- Այքաչափով ա, փիդդ[10] լավն ա' շատ կուզեն, լավը չի' քիչ կուզեն: Ասում եմ' «սլուշայ, նա օբռատնոյ դառօգե[11], որ փող աշխատենք կտանք, էլի»: Ասում է, «խի ես գալուց ես չգիտե՞մ ինչքա՞ն պիտի վերցնեմ»: Հետ գալը միշտ ավելի թանկ է նստում:

- Հային ուրդէ չեն թալնի որ: Մինչև Վլադիկավկազ հասնես, կտեսնես ինչ են անում հայերի գլխին, հենց Հյուսիսային Կովկասում: Որ գլխներին տեր ըլներ, էսքան անպաշտպան չէին ըլնի (Շիրակ, գ. Արևիկ):

6. Պարիր:
7. Ի՞նչ ես ասում: Դե երգի:
8. Լավ, գնա:
9. Հարկերը, տվյալ դեպքում' անօրինական վճարները:
10. Տեսքդ:
11. Լսիր, ետ դարձի ճանապարհին:



# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ մարդկանց, ովքեր դժգոհում էին Ռուսաստանում, Վրաստանում, Ուկրաինայում իրենց նկատմամբ կիրառած կամայականություններից, հարց էինք տալիս, թե արդյոք փորձե՞լ են դիմել հայկական դեսպանատուն: Պատասխանների բացարձակ մեծամասնությունը հաստատում է, որ հայկական դեսպանատունը հայերի մեծ մասի կողմից ավելի հաճախ չի ընկալվում որպես շահերի պաշտպանության հնարավորություն: «Դեսպանատունը, էդիկ մեզ համար չի, էդիկ' երբ որ կառավարություն-բան են գնում, դրանց համար է»: Հատկապես Ռուսաստանում դեսպանատունը շատ հեռու է Ռուսաստանի տարածքով մեկ սփռված շատ հայերի համար, և մարդկանց մտքով անգամ չի անցնում, որ իրենք տարբեր հարցերով կարող են դեսպանատուն դիմել: Մեր հարցազրույցների ընթացքում, չնայած հետևողական հարցումներին, հանդիպել ենք միայն մի մարդու, որ գիտեր Ուկրաինայում հայկական դեսպանատան հեռախոսահամարը: Ոչ Ռուսաստանի, ոչ Վրաստանի հայկական դեսպանատներ, չնայած իրենց հանդեպ կիրառված բազում անարդարություններին, ոչ մեկի մտքով չի էլ անցել դիմել: Դեսպանատների հետ մարդկանց միակ կապը, մեր հետազոտության շրջանակներում, սահմանափակվել է առանձին փաստաթղթերի հետ կապված խնդիրների լուծումով, ընդ որում բոլորը, բացարձակապես բոլորը պնդում են, որ դեսպանատան հետ իրենց պրոբլեմները լուծվում են փող տալով:

Գյումրի.

- Ուրեմն մեզ անձնագրերի թարգմանություն են ցույց տվել, որը կատարել են Մոսկվայի հայկական դեսպանատանը, ու իրենց ասելով 18 դոլար գումար են մուծել դրա համար: Հյուպատոսական բաժինը, փոխանակ ասի' աղբեր ջան, դու Հայաստանի քաղաքացի ես, ով քեզի իրավունք ունի բան ասի, ռուսերեն լեզվով անձնագիր պահանջի. քեզ, տեսնենք, էդիք ո՞վ է... Փոխանակ էդ մարդու իրավունքները պաշտպանեն, ինքն է էդ թարգմանությունը տալիս' գումար աշխատում:

- Ո՞ր թվին էր դա:

- 2000 թ-ին: Տրամաբանորեն ինքը բդի գնար էդ մարդու շահերը պաշտպաներ, ինչպես աներ, որ էդ մարդուց թարգմանություն ոչ ոք չպահանջեր, բարի էղի միլիցիոներ, անգլերեն սովորի, էս մարդու անձնագիրը միջազգային անձնագիր է, բոլոր պետություններում ուժի մեջ է: Ինքն է թարգմանություն տալիս, էդ ի՞նչ տրամաբանություն է: Ինչ, հիմի էլ որ Վրաստան գնամ, մի հատ էլ վրացերեն բդի սարքեմ, այսինքն 130 պետություն կա, 130 հատ թարգմանություն բդի ունենա՞մ: Էս պատմության վերջը դուք դժվար թե գտնեք: Էս զակալդովկանի կրուգ է[1]: Ամեն ինչը մեկը մեկի հետ կապված է[2]:

1. Կախարդական շրջան:
2. Երբ այս խնդիրը քննարկում էինք Հայաստանում Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցչի ներկայությամբ, վերջինս տարակուսած պատմեց, որ Մոսկվայի հայկական դեսպանատանն այս գործընթացը սկսվել է հենց այն օրը, երբ Ռուսաստանում կառավարությունից հատուկ հրահանգ իջեցվեց խստորեն պատժել անձնագրերի թարգմանության պահանջող ոստիկաններին:

Ուկրաինայում գտնվողները նույնպես հնարավորինս խուսափում են քիչ գործ ունենալ հայկական դեսպանատան հետ, գտնելով, որ այն ոչ թե մարդկանց կյանքը հեշտացնում, այլ լրացուցիչ բարդություններ է առաջացնում: Ընդհանուր առմամբ կոնկրետ պատմությունները հաստատում են, որ դեսպանատան օգնությունը կարելի է հուսալ թե օրենքների շրջանակներում, թե օրենքները շրջանցելով, միայն որոշ գումար պետք է զոհաբերել:

*- Ուկրաինայում ապրելու համար անհրաժեշտ է կամ քաղաքացիություն, կամ «вид на жительство»[3] ստանալ, որի համար պետք է զոնե 100 դոլար վճարես: Դա էլ տալիս են միայն այն դեպքում, եթե մնալու համար հարգելի պատճառ ունես, օրինակ, եթե անշարժ գույք ունես, մասնավոր սեփականատեր ես, կամ ընտանիքիդ անդամներն են Ուկրաինայի քաղաքացի: Մենք Կիրովոգրադում էինք ապրում և մեր գործերը հյուպատոսարանի հետ էր: Մենք տեղափոխվել էինք 1994թ., էստեղ վաճառեցինք սեփական տունը Մոնումենտում, հիմա էդ տան տեղը մեծ շենք է, կոշիկի գործ էինք անում, սկզբում տանում, բերում էինք, հետո ցեխը տեղափոխեցինք Ուկրաինա ու էնտեղ էինք անում, լավ էլ առաջ էր գնում գործը: Հետո սկսեցին նեղել, նախ էժան ապրանք սկսեցին բերել ու մեր առաջարկված ապրանքն էլ ոչ էն գինը ուներ, ոչ էլ վաճառվում էր: Իսկ երբ նոր էինք էկել, մեծ պարտիաներով տանում էինք, երկու տուն առանք, մեկը գյուղում, մյուսը քաղաքում, դրա համար մնալու խնդիր չունեինք, մեզ կարելի էր: Բայց հետո, 1998 թ-ին նոր օրենք ընդունեցին, ըստ որի 1992 թ.-ից հետո բոլոր եկածները քաղաքացիությունից ու Ուկրաինայում ապրելու իրավունքից զրկվում են: Ամբողջ աշխարհով մեկ ոչ մի երկրում օրենքը հետադարձ ուժ չունի, բայց իրանց 1998 թ-ի օրենքը ազդում էր նաև 1994 թ. եկածների վրա: Աղբերս, որ Հայաստանից եկել էր դեռ դպրոցական հասակում, անձնագիրը էստեղ էր ստանալու, բայց իրենից պահանջեցին, որ նա փաստաթուղթ բերի, որ ինքը հայաստանի քաղաքացի չէ: Հայկական դեսպանատունը իրանց հետ է գործ անում, որև է տեղեկանք վերցնելու համար գները 50 դոլարից սկսվում են, ծրի թուղթ դու էնտեղից չես ստանա: Իրանք գիտեն, որ Հայաստանի դեսպանատունը երբեք էդ թուղթը չէր տալու: Ու, իրոք, երբ դիմեցինք դեսպանատուն, մեզ պատասխանեցին, որ նախ եղբայրս պետք է գա Հայաստան և ծառայի բանակում, և հետո նոր կքննարկեն նրա քաղաքացիությունից հրաժարվելու հարցը: Միակ ճանապարհն այն էր, որ մենք էնտեղ դիմենք դատարան: Դատարանը փաստաթուղթ տվեց այն մասին, որ եղբայրս Կիրովոգրադում ապրում է դեռ 1990 թ-ից (ինչը սուտ էր, նա ապրում էր 1994-ից) և դիմում է ՕՎԻՐ-ին, որ նա թույլ տա քաղաքացիություն ստանալու, այլևս Հայաստանի դեսպանատան հարցը չէր քննարկվում: Որպեսզի դատարանից նման որոշում ստանայինք, մենք 100 դոլար տվեցինք, էդքան էլ նաև ՕՎԻՐ-ի համաձայնությունը: Ընդհանրապես Ուկրաինան էն երկիրն է, որ ուզածդ թուղթն ու գործը կարող ես առնել, եթե փող ունես, ամեն ինչ գնվում է: Հայկական դեսպանատունն էլ հետ չի մնում, ամեն ինչ փողով է ու ահավոր օգտվում են մարդկանց ծանր վիճակից: Ընկերոջս մի տեղեկանք էր պետք, հլը չէր հասցրել մինչև վերջ ասեր, թե ինչ է պետք, միանգամից ասել էին «300 դոլար կբերես կստանաս», դա ավելի էժան էր նստում, քան եթե ինքը գար Հայաստան էդ տեղեկանքի հետևից ու որոշեց փողը տալ: Բայց փողը տալիս ասեց «դե մի ստացական, մի թուղթ տվեք, որ ես էդ գումարը ձեզ տվել եմ, վաղը ձեր փոխարեն մեկ ուրիշը կգա ու նորից էդ կուզի, ո՞նց ապացուցեմ, ումի՞ց ուզեմ ես էդ գումարը»: Դա էլ էնպիսի գործ էր, որ մի երեք ամիս հետո կարող է նորից պետք լիներ թուղթը, այսինքն լրիվ հնարավոր էր, որ էդ ընթացքում էդ աշխատողներին փոխեն: Էդ տղուն էլ պատասխանել են «կարո՞ղ է գիտես էկել ես կոստյում առնես, հիմա էլ գարանտիա*[4] ես ուզում, չես ուզու՞մ, գնա Հայաստանից բեր էդ տեղեկանքը»: Ստիպված առանց որևէ բանի տվեց էդ փողը, փառք Աստծու, իր գործը ստացվեց, բայց էնքան մարդ գիտեմ, որ հենց դեսպանատունն է քցել, փողը վերցրել ու չի արել, հետո ումի՞ց ուզես, ոչ դատ կա, ոչ դատաստան, ու ապացուցելու էլ ոչ մի միջոց:*

Այլ կերպ ասած, Հայաստանից օգնություն և պաշտպանություն կարող է հուսալ փող ունեցող մարդը, բայց ժամանակավոր կամ մշտական արտագաղթողների մեծ մասը փող չունի, ավելի հաճախ փախչում է անպաշտպանվածությունից, ուրեմն և պաշտպանություն հուսալ չի կարող:

*3. Կեցության իրավունք:*

*4. Երաշխիք:*

# Ի՞ՆՉ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՕԳՆՈՒՄ

Շատ տարածված կարծիք կա, որ ժամանակավոր կամ մշտական արտագաղթողների ուղարկած միջոցների հաշվին երկրում ապրում է նրանց ընտանիքների կամ ազգականների նկատելի մասը: Իրականում սոցիոլոգիական հետազոտությունների տվյալների վկայությամբ հետազոտված ընտանիքների մոտ 35 տոկոսը որևէ օգնություն գնացածներից չի ստացել առհասարակ, իսկ փախստական ընտանիքների դեպքում՝ 46,7 տոկոսը[1]: Համեմատաբար պարբերական օգնություն (3-6 ամիսը մեկ անգամ) ստանում են արտագաղթողների ընտանիքների միայն մոտ 50 տոկոսը[2]: Որակական հետազոտությունը ցույց է տալիս, որ գնացողների նկատելի մասը, եթե աշխատանք են գտնում, ավելի հաճախ գերադասում են տանել իրենց ընտանիքները, քան թե փող ուղարկել. նախ՝ այդպես ավելի էժան է, ապա, Հայաստանից ընտանիքը տանելով, միանգամից մի քանի հարց են լուծում.

- Համեմատաբար տևական աշխատատեղ,
- Ընտանիքի միացում,
- Երեխաների համար ավելի մատչելի կրթություն,
- Գնալ-գալու դժվարություններից ազատում,
- Համեմատաբար հագեցած կյանք:

Այնուամենայնիվ նկատելի թիվ են կազմում մարդիկ, ովքեր շարունակում են ամռանը գնալ, ձմռանը վերադառնալ: Միշտ չէ, որ գնացող-եկողները դրամ են բերում, չնայած արտագնա աշխատանքի հարուստ և հին ավանդույթներ ունեցող գյուղեր և ընտանիքներ կան, որոնք շոշափելի օգնություն են ապահովում ընտանիքին: Սրա կողքին բավական թվով մարդիկ որևէ ձևով չեն օգնում իրենց ընտանիքներին

- աշխատանք չգտնելու պատճառով,
- արտագնա աշխատատեղերում ցածր վաստակի պատճառով,
- Ռուսաստանում խաբված լինելու պատճառով,
- գնացած վայրերում նոր ընտանիք կազմած լինելու պատճառով,
- և այլն, որոնց մեջ մտնում է նաև ետ գալու ճանապարհին վաստակած գումարը զանազան ձևերով կորցնելու պատճառով:

Արտագնա աշխատատեղում գտնվող ընտանքի անդամ ունեցող շատ ընտանքիներ են բողոքում, որ իրենք օգնություն չեն ստանում, որ ամուսինը, կամ որդին գնալուց հետո իրենց մոռացել են, հավանաբար այնտեղ նոր ընտանիք ունեն: Ընդհանուր առմամբ արտագաղթի հաշվին ապրող ընտանիք-

1. *С.Мхитарян, Миграционное движение в Ереване (Социологическое исследование), Ереван, 1998, ст. 17.*
2. *С.Мхитарян, Миграционное движение в Ереване (Социологическое исследование), Ереван, 1998, ст. 10.*



ների վերաբերյալ պատկերացումները զգալիորեն չափազանցված է: Հարցազրույցներից ստորև բերվող քաղվածքը վկայում է, որ ինչպես մնացողները, այնպես էլ գնացողները խոսում են օգնության խիստ էպիզոդիկ երևույթի մասին:

*Ղուրսալի*

*- Ձեզ օգնում ե՞ն երեխեքը:*

*- Իմ երեխեքը վերջին անգամ շատ վաղուց են եկել, ես եմ ճամփա դրել ավտոբուսի փողը ես եմ տվել 20 հազար դրամ, որ գնա Պենզա...*

*- Չէ, նրանք անցաղ իրանք են ապրում, բայց մեզ կանչում են, ասում են եկեք գրանցվեք, պաճուր տղես ա կանչում...*

*- Տղաս բանակից եկել ա ստեղ, ամուսնացել ա, գնացել ա Պյատիգորսկ, 5 տարի ա տղի երես չեմ տեսել, 2 երեխա ունի, կինը, վարձով են ապրում, ինքն էլ քանի ամիսը մեկ գնում ա փող ա տալիս, որ պրապիսկան[3] երկարացնեն, զոքանչն էլ ընդեղ ա, տեգորս տղան էլ, իրանք էլ շուտ են գնացել...*

*- Տղան օգնու՞մ է ձեզ:*

*- 5 տարի ա 10 դոլար չի ղարկել, թոշակով ենք ապրում, տելեգրամմա ա տալիս Նոր Տարին, երեխեքը ռուսերեն են խոսում, մեծը ռուսերեն ա գնում:*

*- Հայերեն գրել-կարդալ գիտե՞ն:*

*- Չէ: Ռուսացել են, էլի, հայությունը կորցրել են: Օգնությունն էլ մոռացել են: Գնացողը մոռանում ա, թե մենք ստեղ ոնց ենք ապրում:*

*Գյումրի*

*- Էն դիմացինը ամբողջ ընտանիքով Սվերդլովսկում են, ուզում են հետ գան, փող չունեն, հիվանդ են, չեն դիմանում, իսկ կողքիս մի ծեր կին ա, տղեն Ռոստովում ա ընտանիքով, չկարողացան տատիկին տանեն, փող չունեին: Խեղճ տատիկը ամբողջ ձմեռ առանց վառելիք յոլա գնաց:*

*- Ամբողջ տարին ես գնացել եմ խոպան, մինչև հունիս սպասել եմ, գործ չեղավ: Հնար չեղավ:*

*- Անցած տարի գնացի, հինգ ամսվա ընթացքում 600 դոլար փող եմ բերել:*

*- Երկու տարի առաջ խոպան գնացի, խաբեցին, չտվեցին: Մյուս տարի էլ գնացի՝ չտվեցին: Մոսկվա էի գնացել: Էստեղից էի ճանաչում դրանց, 1500 դոլար չեն տվել, փող վաբշե[4] չենք ստացել:*

*- Ճամփի փողը տվել է, թե դու գնա՝ կուղարկեմ: Էն ուղարկելն է, ինչ պիտի ուղարկի: Պայմանավորվել են, որ մաքուր ամիսը 700 դոլար պիտի տա: Բոլոր ծախսերը իրա վրա, գրանցում է... ամիսը 100-150 դոլար ծախսն է, առանց դրա է մաքուրը: Ժամը առավոտ 6-ին՝ պադյոմ[5]: Բայց վերջում փողը չտվեց:*

*- Մենք հավաքվանք. 4 հորեղբոր տղա, ես ստեղից, երեքը ընդեղից: Հունիսի 1-ից ընդեղ էի: Մենք բռնեցինք 60 000 ռուբլու գործ, մեզ տվեցին 25 000: Մեզ տվել էին ռեմոնտի գործ, էտ գործի մեջ մտցրեցին պարապով աստալե-*

3. *Գրանցումը:*
4. *Առհասարակ:*
5. *Վերկաց:*

նի[6], ավեչչենու[7] և փաղաքրավորդի[8] գործը: Մի ամսում 200 դոլար: Ամեն քայլափոխին միլիցիան կանգնեցնում է, շատ խիստ ռեժիմ է: Էտ ինչ որ ավելացրեց, դրա գինը սկսեց հանել: Մի ամիս աշխատեցինք: 150 դոլար տան վարձ էինք տալիս: 50 դոլարից պակաս ուտելու փող չկա: Էտ էլ կոպեկ-կոպեկ հաշված: 4 անգամ էլ միլիցեն բռնեց, բն տեղում տվեցիր՝ քաղմաս չի տանի:

- Պադյեզդի[9] գործ բռնեցինք, 14 հարկանի շենք էր: Պադյեզդը 1200 ռուբլի: Մանր մունր գործով ամիսը 100 դոլար: Ես բերել եմ 450 դոլար: Հիմա հոբեղբորս տղեն եկել է, մի 150 էլ բերած կլինի:

- Լավ էլ գործ ենք անում, որ տեսնես, թե հայերը ի՞նչ տանքանքներ կուտեն, չես պատկերացնի: Մոսկվայի մեջ քաշոցին շատ է, սաղ պատրեղնիկ են: Մեկը, օրինակ, գործը կվերցնի 100 հազարի, կտա մյուսին, մյուսը Անթատին, մինչև հասնի մեզ, էլ տալը բան չի մնա: Դոյանոյ գործ Մոսկվայի մեջ չես կարա բռնես:

Այսս պատկերացումը, թե արտագաղթը հնարավորություն է տալիս Հայաստանին հաղթահարել տնտեսական ճգնաժամը, նույնպես երկակի մոտեցման կարիք ունի: Անշուշտ դրսից բերված կամ ուղարկված գումարները որոշ շրջանառություն ունեն երկրի ներսում, անշուշտ գյուղերում հարկերի զգալի մասը վճարվում է դրսում աշխատած գումարների հաշվին և թեկուզ այդ ճանապարհով՝ նպաստում բյուջեի ձևավորմանը: Սակայն անհրաժեշտ է դիտարկել արտագաղթի՝ տնտեսական զարգացմանն ազդելու հակառակ միտումը նույնպես: Նախ, արտագաղթողների կամ դրսում աշխատողների մեջ նկատելի թիվ են կազմում այն մարդիկ, ովքեր իրենց կամային հատկանիշներով կարող էին մրցակցային դառնալ երկրի ներսում և մասամբ թուլացնել տնտեսության մենաշնորհայնացումը: Երկրորդ, դրսում սոցիալապես կամ տնտեսապես կայացող մարդիկ աստիճանաբար կապերը խզում են Հայաստանի հետ և հետագա կյանքը ծրագրավորում են իրենց կայացման վայրերի հետ: Գյումրիի մոտավորականներից մեկի հետ ունեցած զրույցից ստորև բերվող պատառիկը հենց դրա վավերացումն է.

- Հները, որ այնտեղ (նկատի ունի Ռուսաստանում) վաղուց կայացել են, հիմա չեն էլ վերադառնում, տարիներով այնտեղ են մնում: Նորերը, երիտասարդները գալիս են միայն մեկ-երկու ամսով, գալիս են իրենց ցուցադրում, իրենց հարստությունը ցուցադրում, իրենց նոր հայացքները, նոր մշակույթը ցուցադրում ու էտ են գնում: Մի տեսակ ինքնահաստատման նման բան է: Էնտեղի նոր ռուսների նման նոր հայերի կերպար են ստեղծում: Մի տեսակ շիկ է: Դրանց մեծ մասն այլևս այստեղից բանվորներ, շինարարներ չեն տանում: Գերադասում են ազգականների հետ կապ չունենալ: Աշխատանքային դեպքում, եթե բրիգադիրներ են, հիմնականում տեղի մարդկանցից են կազմում... նույնպես ոչ տեղաբնակ, այսինք, եթե հեռավոր արևելք է՝ ուրեմն չինացիների, կորեացիների: Ամենաէժան և լավ աշխատուժն է համարվում:

---

6. Շոգեբեռնուցման:
7. Լուսավորման:
8. Ջրմուղ:
9. Մուտքի:



- Իսկ երիտասարդները, որ ասում եք այնուամենայնիվ բնտանիքով են էնտեղ ապրում, ինչքա՞ն կլինեն:
- Միացին շատ կա:
- Ճա՞ռ:
- Հա, շատ-շատ կա:
- Բրիգադիրների՞ մեջ, թե՞ պարզ, հասարակ աշխատողների մեջ:
- Բրիգադիրների և աշխատողների են տեսակի, որոնք որոշակի հատվածում անփոխարինելի աշխատող են և կարող են պահանջել, պայմաններ թելադրել:
- Եվ նրանք մնում են էնտեղ և հետո բնտանիքները տանում: Դրանք նո՞ր գնացողներ են, թե՞ հին:
- Հնուց ավանդաբար գնացողները, ուրեմն էտ սերունդը էլ չի էլ վերադառնում: Նորերը գնում են հենց սկզբից այդ բանով, որ «Հա, չպիտի էլ վերադառնամ»... Այդ մարդիկ որպես կանոն հաջողակ մարդիկ են, հաջողակ են շնորհիվ, ասենք, ձեռներեցության: Գուցե և մի տեսակ սոցիալական խելք ունենալու շնորհիվ: Այսինքն էտ մարդիկ կարող են նաև էստեղ երկրորդ, երրորդ բնակարան, հեից բացի, Գյումրիի մեջ գնեն, որպես անշարժ գույք, արժեք կահավորած:
- Այնուամենայնիվ էնտեղ են ապրեն:
- Հա, էնտեղ են, շատ բարեկեցիկ:

Երկրորդ, գնացողները իրենց հետևում թողնում են անկարողներին, որոնց եթե նույնիսկ օգնում են, ապա սրանք դառնում են գլխավորապես պարզ սպառողներ և այն թույլ տնտեսվարումը, որը կարող էր որևէ նյութական բարեկեցություն ապահովել, զրկվում է ստեղծողներից:

**Վանաձորի մեր բանասացներից մեկի պատմածից մի հատված.**

- Մեր գյուղն ընդամենը 100 տնտեսություն էր, որից գյուղում մնացածներից 80-ը թոշակառու են, 20-ն էլ՝ շունչ չէ, ասել է Հովհաննես Թումանյանը: 170 տոննա մսի պլան էր տալիս, 600 տոննա կաթի պլան, 200 տոննա կարտոշկի պլան: Բայց էսօր մեր գյուղը ինքն իրան չի կարող պահել: Էնքան շատ են անմշակ տերիտորիաները: Էս տարի չայի խոտ էինք հավաքում, ինքը[10] ստեղ չէր, աղբորս հետ էինք: Ուրեմն ամենաբարձր մասում դուզ տեղերը նայում ես՝ թեֆը գալիս ա, և ընդամենը էրկու հողամաս կա ցանված, էդ ահռելի տարածության վրա էդ մի-էրկու հողամասն ա, որ անեցված ա, լացս գալիս էր, ասում էի՝ էս մեր գյուղի կորիզը էս հողամասն ա, է, բայց ցանքս չկա արած, ո՞վ ցանի:

**Հատված մեկ այլ զրույցից.**

- Գյուղ եմ մտնում, գյուղի հետ կապ ունեցող մարդիկ ենք: Ռայոնի[11] գյուղերից մեկն ա, երանի մտնես էդ գյուղը ու նայես, ինձ թույլ եմ տալիս ասելու, էդ ծերանոցային, ծերանոց խսկական, ոչ մի երիտասարդ մարդ չկա: Ի՞նչ մարդ, սկի քաղաքում չկա, ու՞ր մնաց, որ գյուղերում լինեն: Հազարավոր

---

10. Նկատի ունի ամուսնուն:
11. Շրջանի:

*հեկտար տարածություններ կան, որ անմշակ են, էնքան, որ քթի մուխը հեղնում ա: 1990-91 թվին, երբ որ էնտեղ սովխոզ գոյություն ուներ, էդ հողերին որ նայում էիր, քեֆդ գալիս էր, թե ինչ բերք ու բարիք էին ստանում: Էսօր ուրիշ կարա՞ մարդը հողը մշակի, չի կարա, մեխանիզացիան հնացած, ոչ մեկը պիտանի չի, մարդիկ փող չունեն, որ գարյուչին[12] առնեն, օգտագործեն, փող չկա ու մի ձևով էդ հողերը մշակելու: Էդ ժողովուրդը սովից դրդված, սովից դրդված, դուրս են էկել: Մարդ չկա, մենակ էդ ծերակույտերն են, էտ էլ կարաս հանդիպես թոշակի օրերին, որ փնտով քանով գալիս են պոչտայի[13] դռները, որ էդ գումարը ստանան, որ ինչ-որ մի հատ հաց լուծեն: Ջահել տղեք են, տեսել են, որ մեխանիզացիան փչացած է, իրանք էլ չեն կարող էդքան նագրուզկով[14] աշխատեն, որ ընտանիք պահեն, գլուխները առել ու ընտանիքներն էլ հավաքել ու գնացել են: Գլուխ են առել փնկալել գնացել:*

Սակայն նույնիսկ այս պայմաններում միջինացված գնահատականներով գյուղական բնակչության եկամտի հիմնական մասը գյուղատնտեսությունն է:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է Տնային տնտեսությունների ամենաստորին և ամենավերին 10 տոկոսների եկամտի աղբյուրները Հայաստանում (տոկոսային հարաբերություններով):

| | *Գյուղ* | | *Քաղաք* | |
|---|---|---|---|---|
| | *ամենաաղքատ* | *ամենահարուստ* | *ամենաաղքատ* | *ամենահարուստ* |
| *Աշխատավարձ* | 39,0 | 30,1 | 44,7 | 56,9 |
| *Ինքնազբաղվածություն* | 0,1 | 3,2 | 2,2 | 15,6 |
| *Երկրագործություն* | 46,3 | 57,7 | 1,5 | 2,8 |
| *Դրամական փոխանցումներ* | 3,4 | 5,9 | 30,8 | 8,6 |
| *Տրանսֆերտային վճարումներ* | 11,0 | 2,9 | 16,6 | 4,6 |
| *Ունեցվածքի վաճառք* | 0,1 | 0,2 | 4,3 | 11,5 |
| Ընդամենը | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Դրսից ստացվող դրամական փոխանցումները, ինչպես տեսնում ենք, այնքան էլ շատ չեն: Ավելին, գյուղերում դրանք ավելի շոշափելի են ամենահարուստ 10 տոկոսի եկամուտներում (5,9 տոկոս ի տարբերություն աղքատ գյուղական տնտեսություններում դրանց ունեցած 3,4 տոկոսի), քաղաքներում՝ 30,8 տոկոս աղքատների մեջ և 8,6 տոկոս՝ հարուստների մեջ: Այսպիսով, հակառակ ընդունված կարծիքի, գյուղը շատ ավելի քիչ է դրսից փոխանցումներ ստանում, քան քաղաքը, և գյուղում դրսից եկամուտներ ստանում են ավելի շատ ունևորները, քան աղքատները: Դրան հակառակ, քաղաքում դրսից փոխանցումներով եկամուտ ստացող քաղաքաբնակներն ավելի շատ աղքատներն են: Այսպիսով գյուղերում եկամտի հիմնական աղբյուրը ինչպես ամենաստորին 10 տոկոսի, այնպես էլ ամենավերին տասը տոկոսի

*12. Վառելիքը:*
*13. Փոստատան:*
*14. Ծանրաբեռնվածությամբ:*



մեջ երկրագործությունն է, համապատասխանաբար 46,3 և 57,7 տոկոս:

***Գյուղացիական ՏՏ-ների եկամուտների աղբյուրները և կառուցվածքը[15]***

| Եկամտի հիմնական աղբյուրը | Ընտանիքների թիվը | Նույնը ընդհանուրի նկատմամբ տոկոսներով | Եկամտի տարեկան գումարը 1 ընտանիքի հաշվով /հազար դրամ/ |
|---|---|---|---|
| Ընդամենը | 3400 | 100 | 893 |
| որից՝ դրամական եկամուտներ այդ թվում | 3400 | 100 | 322 |
| -գյուղատնտեսությունից | 3096 | 91,1 | 293 |
| -աշխատավարձ | 1417 | 41,6 | 86 |
| -կենսաթոշակ | 1738 | 51,1 | 50 |
| -նպաստներ | 802 | 23.6 | 31 |
| -առևտրից և ոչ գյուղատնտեսական աշխատանքների իրացումից | 556 | 16,3 | 177 |
| -արտասահմանում ապրող հարազատներից | 356 | 10,5 | 139 |

Ինչպես տեսնում ենք, ոչ գյուղատնտեսական աշխատանքներից ստացվող եկամուտները չնչին են և ձևավորվում են հիմնականում աշխատավարձերից (40 տոկոսը), 13 տոկոսը՝ փոխանցվում է արտասահմանից, մյուս 23 տոկոսը կազմում են կենսաթոշակները: Եթե ներառվեր ներքին սպառմանն ուղղված արտադրանքի դրամի վերածված արժեքը, գյուղատնտեսությունից ստացված եկամուտը կկազմեր ամբողջական գյուղական եկամտի մոտավորապես 3/4-ը: Գյուղատնտեսությունը շարունակվում է գլխավորապես էժան աշխատուժի շնորհիվ, գրեթե բացակայում են ֆինանսական և նյութական ռեսուրսները: Գյուղացին հողից վերցնում է հիմնականում այնքան, որքան կարող է տալ բնությունը՝ առանց պարարտանյութի և մեխանիզմների կիրառության: 1999թ. 3400 գյուղացիական տնտեսությունների մեջ կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ գյուղական տնտեսությունների ավելի քան 4/5 մասն ի վիճակի չի եղել ներդրումներ կատարելու իրենց արտադրական ռեսուրսների նույնիսկ պարզ վերարտադրության նպատակով: Հիմնական ֆոնդերի ձեռքբերման կամ նորոգման վրա ՏՏ-ների միայն 17,4 տոկոսն է ներդրումներ արել[16]: Արված ներդրումների դրամային ծավալն էլ շատ փոքր է՝ միջինը՝ 65 հազար դրամ: 1997 թ-ին ֆերմերների միայն 8 տոկոսն է հայտնել իրենց ֆերմաներում ներդրումներ կատարելու մասին: Հայտարարված ներդրումների մոտավորապես 60 տոկոսը ուղղվել է ընտանի անասունների ձեռքբերման, տան կառուցման կամ վերանորոգման վրա:

Գյուղական տնային տնտեսությունների բացարձակ մեծամասնության կողմից դրամական եկամտի օգտագործման հիմնական ուղղությունը խանութից սնունդ գնելն է: Որոշ գյուղերում, ինչպես, օրինակ, փախստականաբնակ գյուղերն են, խանութից են գնվում նույնիսկ բանջարեղենը, ձուն, կար-

***15. Գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական վիճակը և գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 1999թ, էջ 25:***

***16. Տե՛ս նույն տեղում, էջ 24:***

նամբերքը: Կանխիկ դրամի սակավության պատճառով ընտանիքները հաճախ ստիպված են լինում փոխանակել սնունդը և լայն սպառման ապրանքները: Կանխիկ դրամ չունենալու պատճառով շատ գյուղացիներ պարտքեր ունեն կամ հողի հարկի, կամ ջրի վճարման կամ երկու ուղղությամբ միաժամանակ, ինչպես նաև՝ խանութներին, ընդհուպ մինչև հացի պարտքեր:

Ներդրումների սակավությունը, ի թիվս այլոց, բացատրվում է նրանով, որ գյուղերից նկատելիորեն պակասել են աշխատանքային ակտիվ տարիքի տղամարդիկ: Եթե նրանք դրամ են ուղարկում, ապա այն ուղղորդվում է առաջին անհրաժեշտության սննդի, հագուստի և այլն բավարարմանը, ի թիվս այլոց նաև այն պատճառով, որ ընտանիքում մնացած անդամներն ավելի շատ սպառողներ են, քան՝ աշխատողներ (տարեցներ, երեխաներ, կանայք): Այսպիսի դեպքերում շատ ավելի հեշտ և հուսալի է դրամի օգտագործումը, քանի որ հատկապես երկրագործության մեջ ներդրումների դեպքում բնական աղետների վտանգ կա (երաշտ, կարկուտ), և հետո, ինչպես ասվեց, խիստ բարդ է լինում արդյունքի իրացումը:

Գեղարքունիքի գյուղերից մեկի գյուղապետը հետևյալ կերպ բնորոշեց խոպանչիների վարքը.

*- Խոպանչիները որպես կանոն իրենց փոքր գյուղում չեն ներդնում որևէ գործ սկսելու համար: Գնում են ծննդյա աշուրը, հագուստեղեն, անասուններ, սովորական է բերած փողերով ավտոմեքենա գնելը: Ուղղակի շախ են անում[17], բայց գործ չեն անում, հանգստանում ու քեֆ են անում մինչև մարտ ամիս:*

Ներդրումների պակասը բացատրվում է նաև նրանով, որ դրսից ստացվող գումարները այն ստացող ընտանիքներին հնարավորություն են տալիս գոյատևել և լրացուցիչ ուժ չվատնել ծանր գյուղատնտեսական աշխատանքների վրա: Դրա լավագույն վկայություններից է Կոտայքի մարզի Ծաղկաձոր գյուղի դեպքը: Այս գյուղում այս տարի, 2002թ. ցանել են գյուղացիական տնտեսությունների մոտ 30%-ը: Դրսից ստացված միջոցների հաշվին մշակվել են ցանքատարածքների մոտ 40%-ը: Ցանքերի տարածքն այս տարի՝ անցած տարվա համեմատ մոտ մեկ ու կես անգամ ավելացել է: Ըստ գյուղապետի տեղակալի, դրա հիմնական պատճառը, ինչքան էլ պարադոքսալ լինի, Ռուսաստանում գտնվող իրենց համագյուղացիների ֆինանսական պայմանների վատթարացումն է, դրսից օգնությունը պակասել է, գյուղում ակտիվությունը աճել է, քանի որ ստիպված են հույսերն իրենց վրա դնել: «Երբ շատ են օգնում՝ լողորություն են անում»:

Այսպիսով, արտագաղթի միջոցով գումար ստացող ընտանիքների թիվը մեծ չէ, ստացվող գումարների ծավալն աննշան է, այն ներդրումների չի ծառայում, գյուղերում երբեմն այդ պատճառով եղած հողը մնում է անմշակ, քաղաքում նվազում է տնտեսական ելքեր փնտրելու ակտիվությունը:

*- Իսկ մեկնողների հետ նաև ավելի է վատանում էն մարդկանց վիճակը, ովքեր միտք չունեն մեկնելու, ընդգրկված են առևտրի մեջ և ինչ-որ չափի կարողանում են ապրել, բայց մեկնողների հետ իրենց առևտրի վիճակը ավելի է վատանում և շուտով նրանք էլ կդառնան գնացողներից մեկը* **(Գյումրի):**

17. *Զվարճանում են:*



Այլ կերպ ասած, ժամանակավոր կամ մշտական արտագաղթի տնտեսական օգնությունը երկրին այնքան էլ շոշափելի չի և լրջորեն պետք է խորհել դրա տնտեսական ավելի շատ բացասական, քան դրական հետևանքների մասին: Հիմնական աշխատուժի կորստի հետ գործնականում տնտեսությունը զրկվում է ինտենսիվ զարգացման հնարավորությունից:

Ակնհայտ է, որ արտագաղթը տնտեսությանն ավելի վնասում, քան՝ օգնում է: Այնուամենայնիվ գյուղերի նկատելի մասում հարկերը հավաքվում են հիմնականում դրսից ուղարկված կամ բերված դրամի հաշվին: Սարգպետարաններից մեկի պատասխանատուն պատմում էր.

*- Կանչում ենք գյուղապետերին, հարցնում ենք՝ ինչու՞ հողի հարկը չի մուծվել: Գյուղապետն ասում է՝ գիտեք ինչ, մի 15 օր էլ սպասեք, դրանք վերադառնալու են: Դե սեզոնային գործ են բռնում: Էդ գյուղացիները Մոսկվայում ասենք, ինչ-որ շինարարական բանվորներ են աշխատում: Շենքը արդեն պիտի հանձնեն շահագործման ու գան, արդեն յուրեր կան, մի երկուսը արդեն եկել են...*

*- Փաստորեն մեր հարկահավաքը կատարվում է ոչ թե գյուղատնտեսական ապրանքների իրացումից, այլ Ռուսաստանից բերված գումարների հաշվին:*

*- Եթե անկեղծ լինենք, գյուղատնտեսական ապրանքների իրացումը շատ քիչ բան է տալիս, գները շատ ցածր են: Ասենք, պոմիդորը մեթրում են 20 դրամով, խաղողը՝ 50 դրամով: Հիմար բան է դա: Մի օրինակ բերեմ տիպիկ: Ցորենի մի կիլոգրամը գնվում է 90-ից 100 դրամով, իսկ խաղողը գնվում է 40-ից - 50-ով: Ուրեմն խաղողի վրա ծախսված էներգիան, եթե ինքնարժեքը հաշվարկենք, կկազմի 4-5 անգամ ավելին, քան ցորենինը: Գնագոյացման մեխանիզմներն անհասկանալի են:*

**Շիրակ, Ազատան գյուղ** *- 2 տարի Ռուսաստանում գործը վատացավ, 1996-98 թթ.: Մեր հարկ-տուրքն իջավ 90-ից 30 տոկոսի: Մինչև վատանալը հավաքում էինք հողի հարկը 90 տոկոսով, բայց էդ ժամանակ վատացավ չէ՞ Ռուսաստանը: Դե էս 2 տարին էլի լավացավ, էս տարի ավելի շատ: Հիմա 50-ն տոկոսն անցել ենք, շրջանի մակարդակով մենք միշտ ավելի լավ ենք, ուրիշներին օգնում ենք վար ու ցանքսով: Բայց մեր գյուղից տարեկան 1500 մարդ, երբեմն ավել խոպան է գնում: Դա է պատճառը, որ հարկերը հավաքվում են:*

# ԿԱՄՔԻ ԱՐՏԱՀՈՍՔ

Արդեն խոսվեց այն մասին, որ արտագաղթի պատճառով երկրում նկատելիորեն ավելացել է տարեց մարդկանց և սոցիալական ու կենսաբանական անկարողների, աջակցության կարոտ մարդկանց թիվը: Եթե նրանց մի մասը դրսից նույնիսկ նյութական օժանդակություն ստանում է, ապա նրանց բազմաթիվ կարիքները հոգալու խնդիրը ընկած է մնացողների մի մասի և սոցիալական ծառայությունների վրա: Չխոսելով այն մասին, որ օգնողները հոգնում են, սպառվում է օգնության բարոյական պաշարը, սկսում է ձևավորվել նաև հուսալի հենարանի պակասի և անզորության զգացողությունը: Երևանը մասամբ նոսրացնում է այդ զգացողությունը, բայց գյուղերում և փոքր քաղաքներում այն խիստ նկատելի է: Գյուղեր կան, որտեղ տարվա ընթացքում 8-10 ամիս բացակայում է 20-60 տարեկան տղամարդկանց 70-80 տոկոսը, ընդ որում մնացած 20 տոկոսը հիմնականում խեղճ ու անճար, խիստ կարիքավորներն են: Ամենևին պարտադիր չէ, որ այս երևույթը ցայտուն արտահայտված լինի ծավալային մեծ արտահոսք ունեցող բնակավայրերում: Այնպիսի խոշոր գյուղերում, ինչպես Լիճքը, Երանոսը, Վարդենիկը Գեղարքունիքի մարզում, Ոսկեհասկը, Ազատանը Շիրակի մարզում և այլն, որտեղից գյուղացիների վկայությամբ գարնանը դուրս է գալիս մոտ 1500-2000 մարդ, սոցիալական անկարողությունը քիչ է արտահայտված: Սրանք արտագաղթի հին ավանդույթներ ունեցող գյուղեր են, որոնց բնակիչները ամուր կապեր ունեն Ռուսաստանում, մեկնում են հասցեական, աշխատանքի հաստատուն երաշխիքներով, որպես կանոն հիմնականում վերադառնում են, և վերադառնում են փաստակով: Այսպիսի գյուղերում մնացողները կարողանում են շարունակել գյուղատնտեսական աշխատանքները, այստեղ հարկերը ավելի հաճախ վճարվում են: Այս գյուղերի մնացող բնակչությունը վստահ է, որ աշնանը իրենց տղամարդիկ կվերադառնան փաստակով, կմարեն պարտքերը, կամքը չի ջլատվում: Այս կարգի բնակավայրերում տեղի են ունենում շքեղ հարսանիքներ, ուրախություն կա, պահպանվում է նաև փոխադարձ օգնության ավանդույթը:

Այլ է իրավիճակը այդպիսի ավանդույթներ չունեցող բնակավայրերում: Տղամարդկանց բացակայության ընթացքում տան գործի, անասունների և հողի խնամքի ծանրությունն ընկնում է տարեցների և կանանց վրա: Երբեմն, ինչպես ասվեց, դրանք ուղղակի մնում են անխնամ: Այն դեպքերում, երբ մարդիկ զբաղվում են տնտեսությամբ, այնպիսի ծանրության տակ են ընկնում, որ ոչ ժամանակ, ոչ կամք, ոչ ցանկություն, ոչ էլ երևակայություն է մնում որևէ բան նախաձեռնել, գնահատել... Սրանք հիմնականում խիստ աղքատ ընտանիքներ և գյուղեր են, որտեղ աղքատությունը դադարել է ամոթալի լինել: Հոգնած և անհույս մարդիկ չարանում են, և խտացող չարությունը հնարավոր է դարձնում դաժանությունը միմյանց հանդեպ: Օգտակար գտնվելու անկարողությունից մարդիկ «գերադասում են չտեսնել» անխնամ մնացած տարեցներին, հիվանդներին, երբեմն էլ ուղղակի զայրանում են նրանց խեղճության ու անզորության վրա: Սա հատկապես ցավագին է անդրադառնում այն



տարեցների վրա, որոնք երեխաներ ունեն, բայց նրանց երեխաները բացակայում են և չեն օգնում իրենց ծնողներին: Սեփական անկարողությունը արդարացնելու լավագույն դեղատոմսը - եթե սեփական երեխաները տեր չեն կանգնում, մենք ի՞նչ անենք: Անզորության խտության այսպիսի տարածքներում ուղղակիորեն զգացվում է երիտասարդ և ուժեղ մարդկանց կամքի կարիքը:

Գյումրիում և Վանաձորում, որտեղ ինտելեկտուալ մակարդակը համեմատաբար պահպանվել է, այս երևույթը գնահատում են որպես հնարավոր ընբոստությունը արմատապես ոչնչացնելու միջոց: Ոմանց էլ մտահոգում է երկրի ճակատագրի վրա այս երևույթի հնարավոր ազդեցությունը:

***Պատառիկներ զրույցներից.***

*- Ամուսինս... 1999թ. գնաց ԱՄՆ և չվերադարձավ... Հիմա ես էլ եմ պատրաստվում գնալ: Ես հիմա պատրաստվում եմ գնալ ամուսնուս մոտ, Ամերիկա: Քանի՞ մարդու եմ այստեղ օգնում-կերակրում, ջերմացնում, բերում եմ իմ տուն: Կմնան անտեր: Մեր բակից ով կարող էր մի բան անել՝ գնացել է, մնացել են անտեր թշվառները: Ու՞մ են հույս թողնելու* **(Գյումրի):**

*- Մեր դասարանցիներից մնացել են հինգ հոգի՝ հիվանդներն ու հաշմանդամները* **(Գյումրի):**

*- Մեր դասարանից միայն ես եմ մնացել* **(Կապան):**

*- Սրանք հիմքից կտրեցին, որ ոչ մեկը չկարողանա գլուխ բարձրացնի, ով էլ հանկարծ գլուխ բարձրացնի, աշխատում են ճնշել: Ո՞նց կարա կառավարությանը վիզողնի[1] լինի, որ իրանցից բացի մեկը ապրի: Եթե մեկը ապրի, ձայն կբարձրացնի: Եթե մարդու դուխը տեղն է, ձեն կբարձրացնի... Իսկ էսօրվա ժողովուրդը խսկի չի կարողանում ոտքերը քաշ տա... Մարդի դուխը նենց են կոտրում, որ սկի աչքերն էլ չբարձրացնի... Էս մեր թաղում (Գուգարքի շենքերը) աշխարհի էրեխա կար, մեծացան, գնացին բանակ ու... փախան: Շատ լավ տղերք, նամուսով, աշխատող, ուժեղ: Նրանցից հետո ո՞վ է մեր մեջքին կանգնողը: Մենք բոլորս էլ արհամարհված ենք* **(Վանաձոր):**

*- Էգուց մյուս օրը սալդատ[2] էլ չենք ունենալու: Մի հատ եկեք նայենք, թե էդ էստեղի տղերքը քանի տղա էին ունենալու, սենց էկեք մտածենք, էլի, որ մի 10-15 տարի հետո նրանք պիտի կռիվեին, կանգնեին, որ մեր երկիրը նորից պաշտպանեին, բայց չկան, մարդ չկա:*

*- Ամբողջ ջահելությունը կթողնի կգնա: Գնում են բանակ, գալիս են ու հայդե՝ Ռուսաստան: Բա էլ ու՞մ համար են բանակ տանում, ծախսեր անում, փող ծախսում, մարդկանց բան սովորեցնում, եթե բանակից հետո պետք է թողնեն գնան: Ես երկու տղա ունեմ, երկուսն էլ բանակից հետո թողեցին գնացին Ռուսաստան: Ասում եմ «այ բալա, մնացեք, կարտոշկա կծախենք, կուտենք»: Ասում են՝ «մինչև կարտոշկեն հասցնում ենք Երևան, տաս միլիցի փող ենք տալի: Միլիցեքին ավելի շատ ենք տալի, քան տուն ենք բերում: Ինչո՞վ ապրենք»: Հիմա Ռուսաստանում համ իրենք են ապրում, համ էնդեղից էստեղ մեզ են պահում: Ինձ ու պառավիս* **(Գեղարքունիք, Վարդենիկ):**

---

*1. Ձեռնտու:*
*2. Զինվոր:*

*- Ինչու՞ եք այդպես հուսահատվել, կարծում եք այս երկիրն էլ չի՞ սարքվելու, չի՞ լավանալու:*

*- Չէ, ինչի՞, ոմանց համար կլավանա, բայց մասսայական չէ: Հետո էլ մտածում ենք, թե բա գոնե մի երկու ճարպիկ տղա էլ ա չմնա՞ն: Բա դրանք որ չլինեն, երկիրն ո՞վ ա լավացնելու:*

*- Տղամարդ չկա, լրիվ անմարդ կնանիք ենք, Արարատը ասալ ա՝ սաղ իրփիվների[3] կնանիք ենք, այսինքն անմարդ կնանիք, էլի: Ամբողջ Ղափանը շտեղ եշում ես՝ անմարդ կնանիք են: Հետո Ղափանն էլ Երևանը չի, օրինակ մարդդ չկա, վազ տաս քինիս մի ուրիշ տեղ... Ստեղ փոքր քաղաք ա, ստեղից մինչև ընդեղ մեկի հետ քընաս, ըսելու են պի, քընացել ա, արդեն վսյո: Փոքր քաղաք ա, բոլորը իրար ճանաչում են:*

3. *Որբևայրի:*



# ՄԵՆՏԱԼԻՏԵՏԸ

Մեծ քանակությամբ մարդկանց արտամղումը երկրից և նրանց կուտակումը դրսում նկատելիորեն փոխել է թե՛ ներսիՆների, թե՛ դրսեցիների պատկերացումը Հայաստանի ու հայերի մասին, ձևավորվում է նոր վերաբերմունք, հարաբերությունների նոր միջերնիկ մշակույթ: Արտերկրներում հայտնված հայերը սկսում են մտնել նոր ոլորտներ, սկսում են հարմարվել այդ երկրների կյանքի տրամաբանությանը: Նույնիսկ այն երկրներում, որտեղ հայկական համայնքներ եղել են դարեր ի վեր, վերջին արտագաղթի ալիքի ծավալային կուտակումների դեպքում սկսում է ձևավորվել հայերի և Հայաստանի հանդեպ նոր վերաբերմունք, նոր կարծիք: Լեհահայերին ուսումնասիրող Թոմաս Մարչինյակի վկայությամբ, օրինակ, չնայած միջնադարից սկսած համալեհական մշակույթում հայերի մեծ ներդրմանը, ««հայ» ասելիս միջին լեհը այսօր պատկերացնում է եռխորհրդային Հայաստանից դուրս եկած և շուկայում առևտուր անող կամ, լավագույն դեպքում, սեփական ռեստորան ունեցող մեկին»:

Ընդհանուր առմամբ ծանր մրցակցային պայմանների մեջ ընկնելով, նրանց վարքը նույնպես միշտ չէ, որ համապատասխանում է ընդունված դրական չափանիշներին: Հայերից յուրաքանչյուրն ինքն է հարմարվում կյանքի պայմաններին՝ կամ լռելյայն հաշտվելով, կամ՝ ընդդիմանալով իրենց արտամղմանն ուղղված քայլերի դեմ, «տեղավորվելով» իրենց նման «արտաքսված» մերժվածների միջավայրում ձևավորվող մրցակցության մեջ: Ծանր վիճակում են հայտնվում հատկապես այն մարդիկ, ովքեր գնացել են «անհասցե», այսինքն նրանց համար տեղում ոչինչ չի նախապատրաստվել՝ աշխատանք, ապրելու որոշ պայմաններ: Վախենալով պետական կառույցների հետ գործ ունենալ, նրանցից շատերն ապրում են կիսալեգալ, աշխատում են շատ չերևալ և գործ ունենալ հիմնականում իրենց նմանների կամ իրենց հայրենակիցների հետ: Տեղացի գործատուները հաճախ օգտվում են այս անօգնական վիճակից և, համոզված լինելով, որ նրանք չեն դիմելու իրավական ինստիտուտներին, երբեմն ուղղակի շահագործում են այս մարդկանց: Հազվադեպ չեն նաև այն դեպքերը, երբ հենց առավել ճկուն հարմարված հայերն են շահագործում իրենց հայրենակիցներին: Վարքի զսպման մեխանիզմները չեն գործում պարտավորությունների, բարոյականության, պատժի անխուսափելիության բացակայության պայմաններում: Երբեմն հուսահատության հասած մարդիկ դիմում են նույնիսկ պարզ գողության, և մեկ-երկու դեպքը բավական է լինում, որ արագորեն ձևավորվի արատավոր հայերի վերաբերյալ կարծիքը:

*- էն մարդիկ, որ մեր հետ շփում չեն ունեցել, ըողոնք կմտածեն թե մենք վայրենի ազգ ենք, թե մենք կռնանք մարդկանց սպանենք, մի խոսքով վատ կարծիք ունեն մեր մասին:*

*- Հայերը ենպես վատ անուն են հանել, որ շատ երկրներ իրանց ուզում են ետ ուղարկեն: Գերմանիայում էլ սահմանափակվեցին հնարավորությունները, որովհետև որոշում կայացվեց կառավարության մակարդակով, որ չբող-*

նեն, հանենզը սաղին: Որովհետև հայերը գնացին սաղ գողություն էրին, թալլին: Դիմնական զբաղմունքը էդ էր: Սայլիս տղեն կանչել էր, բդի էրթայինք, ըսի՝ ըսիք վո՞վ է: Ինձի թե՝ գիտե՞ս ինչ, տանող է, կսե՝ ինքը աուդիո, վիդեոտեխնիկայի մասնագետն է: Ամեն մեկը մասնագիտացել են մի գործով, գողնալու մի ապրանքիմ ուղղությամբ: Էդ տղեն էլ վիդեո, աուդիո կգողնար: Մեր մայլեն[1] մի համո տղա կար, գողական էր: Ֆրանսիա գնաց՝ լավ թալլել էր, գողցել էր, էնտեղ որ շուխուրը[2] էլել էր, հիմի գնացել է Անգլիա, էնտեղ կթալլե: Դիմ կնիկն ու էրեխեքն էնպես մի հարստության մեջ են, որ դու չես պատկերացնե: Ինքն էլ՝ հեչ, թաղի խուժան լակոտ: Հիմի Անգլիայում է, կինը էս վերջերս էկել էր ստեղ, մենակ տեսնեիր ինչ հարստությունով, էն էլ փողոցային մարդ էին: Հիմա Անգլիայում են ապրում, տուն են առել:

- Գող ու ավազակները գնացին, մեր անունն էլ գցեցին, մեր երկրի անունն էլ:

Իրականում գնացողների մեծագույն մասը աշխատում է խիստ դժվարին պայմաններում, կատարում է ամենածանր աշխատանքը՝ շինարարություն, ճանապարհաշինություն և այլն.

- Գիշեր-ցերեկ աշխատանքի, իրիկունը գալիս ենք հոգնած, գործը շատ ծանր ա: Մենք, հայերս, միշտ էլ տանջվել ենք, թուրքերը կոստյումները հագած առևտուր են անում, ավելի շատ փող են աշխատում, սաղ խանութները իրանցն ա, մեր հայը լապատկեն ա ծեծին, իսկ թուրքը ամեն իրիկուն փող ա հաշվում: Առաջ առևտուրը մեր հայերն են արել, հին շրջանից էլ Հնդկաստանից առևտուր են արել, հիմա թուրքերն են անում:

Շատ դժվար է այն հայերի վիճակը, ովքեր Ռուսաստանում են հայտնվել մինչև Հայաստանում անձնագրերի փոփոխությունը, իրենք չունեն ՀՀ նոր անձնագրերը և շարունակում են ապրել խորհրդային կարմիր անձնագրերով: Չկարողանալով ժամանակավոր գրանցում ձեռք բերել, նրանց մի մասը աստիճանաբար քրեականացել է և լրացուցիչ բարոյական բեռ է ստեղծում նոր գնացողների կամ համեստորեն աշխատող հայերի համար: Աշխատել չկարողանալու պատճառով նրանք նաև դրամ չունեն վերադառնալու: Սովորական, պարզ ճանապարհով վերադառնալ չեն կարող իրենց ունեցած անձնագրերով, քանի որ ոչ մի սահման այդ անձնագրերով օրինական ճանապարհով չեն կարող անցնել, կաշառելու գումար էլ չունեն: Հատկապես Ռուսաստան գնացողները շատ ցավոտ պատմություններ են պատմում հայերի հանդեպ ռուսաստանցիների փոխված վերաբերմունքի մասին:

***Պատառիկներ զրույցներից.***

- Տարբերություն կա՞, թե դիմացինը հայ է, թուրք է...

- Առաջ՝ չէ, առաջ տարբերություն չէին դնե, որ կտեսնեին, որ սև ազգ են՝ էդ է, որ ազգը շատ էր, էդոր գիտեին, մնացածին էլ էդոր անունով կըսեին: Օրինակ, մեր քաղաքում հայությունը շատ էր, ու թուրքերն էլ որ գուկային անշնորհքություն կանեին, կսեին՝ առմյանե[3]: Բայց հիմա՝ չէ, հիմա տարբերություն

1. Թաղում:
2. Աղմուկը:
3. Հայեր:



կդնեն: Էս կրոնական պատերազմներն են, թե ինչը՝ չգիտեմ... Օրինակ, թաթարներն էլ են մուսուլման ու իրանք ադրբեջանցիներին ավելի շատ տեղ կուտան, քան հայերին: Հիմի արդեն կրոնական բաներ կան, Ռուսաստանում էդիկ միանգամից իրան զգացնել կուտա: Իսկ քրիստոնյաները մեզի ավելի շատ տեղ կուդան, քան մուսուլմաններին:

- Իսկ հայերի վարքը ո՞նց է էնտեղ:

- Ընդհանուր առմամբ շատ լավ հայեր ունինք, շատ լավ մարդիկ ունինք Ռուսաստանում, լավ բիզնեսմեններ: Իհարկե կան և անշնորհքները:

- Մանր խուլիգաններ ե՞ն, թե՞ կազմակերպված ռեկետիրներ:

- Հիմի Ռուսաստանում առաջվա նման ռեկետ համարյա թե չկա, հիմի ինչ-խոր էդիկ մարավ: Էդ ռեկետի շրջանը 1990 թ-ից հետո էղավ ու տևեց երևի մինչև 1995 թ-ը, կարող է մի քիչ շատ, բայց հիմի արդեն մարավ: Էդ ռեկետի մեջ ռուսներ էլ կային, հայեր էլ, շատ չեչեններ կային: Օրինակ, ես որ Լենինգրադում էի, ես 3 տարի Լենինգրադում ապրա՝ 1993 - 1995: Ես էնտեղ հորեղբոր տղա ունեի, որն օֆիս ուներ, խանութներ ուներ, պահեստներ, ես էնտեղ պահեստապետ էի աշխատել, հետո՝ խանութում: Ու էդ ախպերս երկար տարվա աշխատող, ապրող էր, ու լավ էլ շրջապատ ուներ ու ռեկետի մոտեննով իրան մոտիկ գալացող չկար: Բայց էն ժամանակ ընդհանրապես կար ռեկետ: Ասենք, մարդը խանութ է բացել, էդ խանութը անպայման բդի կրիշա[4] ունենար: Գուկան կհարցնեն՝ ունե՞ս կրիշ: Եթե ունես, կսես, որ ունեմ, էս մարդն է, եթե չունես, իրանք քեզի կարող են ստիպեն, որ էղնին քեզի կրիշ՝ այսինքն էդ մարդկանց բդի փող տաս, վրեդ անպայման փող կդնեն ու դու էլ պրոբլեմ չես ունենա, կաշխատես նորմալնի: Չեչենական մաֆիան Լենինգրադում շատ ուժեղ էր, ամեն մեկը իրանց տարածքը ունեին: Ռուսների մաֆիա էլ կար, հայերի էլ: Հայերի մաֆիա բոլոր տեղերում էլ կա, ընձի կթվա բոլոր քաղաքներում էլ կա: Ես ինքս չեմ շփվել: Լենինգրադում որ կաշխատեի խանութում, ընձի էկան հարցին կրիշի համար, ես էլ ախպորս հասցեն տվեցի, ու ըսի գնացեք իրա հետ խոսացեք, խանութը իրանն է, ես գործ չունեմ: Ինքն էլ ուներ, համ էս կողմից, համ էն կողմից, կառավարական կապեր ուներ ու լավ էլ կաշխատեր: Ես էդքան էլ շատ չեմ շփվել մաֆիայի հետ, որովհետև եթե շինարարության հետ գործ ունես, դու կհամարվիս բանվոր դասակարգ, իսկ իրանց վրա նայող չեն դնե: Չնայած բանվորն էլ լավ փող կաշխատի, բայց իրանց վրա նայող չեն դնե, կդնեն էն մարդկանց վրա, ով հեշտությամբ փող կաշխատի, ով որ խանութ ունի, բենզակոլոնկա, ռեստորան... Կեղնի, որ բանվորին կգցեն: Հիմի էլ կպատահի, որ մեր ժողովուրդը կերթա էնտեղ կաշխատի, պայմանագիր կըռնեն, հիմի էլ պետական գործ չկա, սաղ մասնավոր են: Ու կան մարդիկ, որ խղճերը կորցրած էդպես մարդկանց փողերը չեն տա, գիտենալով հանդերձ, որ դու էնտեղ ոչ գրանցում ունես, չեզոք մարդ ես, ու բոլոր դեպքերում կվախենաս միլիցիայի դիմել, որովհետև կսկսվի ուրիշ հարցեր՝ պասպորտի, ինչի՞ գրանցում չունես, ռեգիստրացիա և այլն: Ու կպատահի էդպիսի բաներ, որ մարդկանց կխաբեն: Էդիկ իրանք կանեն կամ չերեզ միլիցիա, կամ չերեզ գողերի, լսել եմ էդպիսի բաների մասին, մենք էդպես բան չենք կատարել:

4. Տանիք, այստեղ՝ ոչ օրինական հովանավոր, որին վճարում են:

- Էդ քաշողները ռուսնե՞ր են:
- Հա, ռուսներ են, բայց հայեր էլ կան: Հակառակը, նույնիսկ հայը հային ավելի շատ կքաշի: Ում կտեսնիմ, սաղ բողոքավոր են: Ու ինչխոր իրանք իրանց էլ երդումի կբերեն, որ հայի հետ էլ գործ չեն էնե, ավելի լավ է ռուսի հետ էնեմ, քան հայի: Հատկապես իրար հեշտ է բիզնեսի մեջ քցել: Ենթադրենք մենք իրար հետ կաշխատինք, բիզնես կենենք՝ պեսոկ[5] կծախենք իրար հետ: Ու քանի որ մենք պարտնյոր ենք, ես դավերիա[6] կենեմ, որ, ենթադրենք, էս 10 տոննա պեսոկը տանես մեկին ծախես ու փողը բերես: Դու կծախես ու ընծի կսես՝ ծախեցի, բայց փողը չտվեցին, կամ ծռիցս առան, կամ որևէ նման մի բան, ու հայերը նման բաներ շատ կենեն: Ռուսներն էլ կենեն, բայց էնոնց մեջը էղիկ շատ քիչ է: Ընդհանրապես ռուսները չեստնի[7] կաշխատին:

- Մի ժամանակ մեր գյուղի գնացածների 20 տոկոսին մենակ հետ գալու սամոլյոտի[8] փողը կուտային ու կսեն՝ առեղից գնացեք, թե չէ կսպանենք, ու էդքան մարդ 6 ամիս կաշխատեին ու դատարկ հետ գուկային: Սողքուրիս տղերքն անցած տարի աշխատել են՝ 2001 թ-ին ու էդպես դատարկ հետ են էկել: Աշխատել են 4 հոգով, մի տարի, ու հեչ բան չեն վերցրել, մենակ 200 դոլար տոմսի փող: Էդ մի ռուսի հետ էին բռնել գործը, առաջին տարին լավ տվել էր փողը, երկրորդ տարին աշխատացրել էր ու տվել՝ մենակ սամոլյոտի փողը, թե՝ «ես ավելի շատ եմ ծախսել շինարարության վրա, քան նախատեսել էի, էսքան վերցրեք ու գնացեք»: Իսկ հայերի հետ որ գործ կբռնեն, շատ անգամ էսպես պայմաններով է՝ իրանց մնալու տեղն ու ուտելու փողը կպահեն, ու անկախ նրանից թե քանի ժամ օրվա մեջ կաշխատացնեն, մեկ-մեկ գիշերն էլ հետը, ամիսը կուտան 200 դոլար: Ու շատ հայեր կգերադասեն էդպես էդ 200 դոլարի վրեն էրթան, քան թե ուրիշի հետ գործ բռնեն, որ չիտեն վերջում ինչ կեղնի: Լավ է չախագործվեն, քան թե խաբվեն: Մեր մյուս բարեկամներից էլ մի դեպք պատմեմ, մերոնք մեծ մասը Յակուտիա են, մեկն աշխատել էր ռուսի վրա, մի քանի ամիս նորմալ աշխատել, էդ տղեն էլ գումարի ինչ-որ մի փոքր մաս տվել է իրանց: Բայց գործի վերջին արդեն 10 օր մնացած կեղնի, էդ տղեն կփախնի, ու սաղին, էդ աշխատողներին հեչ կենեն իրանց աշխատածը, կոպեկմ էլ չեն տա:

- Հայն էլ կխաբե, ռուսն էլ կխաբե:
- Ով որ խաբվավ, սաղն էլ կխաբեն՝ հայն էլ, ռուսն էլ: Ռուսի խաբելը քիչմ ավելի վտանգավոր է, ինքը չի խաբե, թե փող չունեմ, էս չունեմ, այլ՝ չեմ տա ու վերջ: Կամ լավագույն դեպքում տոմս կառնի, կսե՝ առ քեզի տոմսի փարա ու գնա:
- Հմի մենք էնտեղ (Ռուսաստան) ոչ մի զաշիտա[9] չունինք: Մեր ղեկավարությունը մեզի չի պաշտպանե ոչ մի բանով: Ռսներիի մեջ էլ շատ կեղտոտ մարդիկ կան: Ռսերեն կսեն «в каждой деревне есть собака»[10]: Բայց մեր

5. Շաքարավազ:
6. Կվստահեմ:
7. Ազնիվ:
8. Ինքնաթիռի:
9. Պաշտպանություն:
10. Ամեն գյուղում էլ շուն կա, այստեղ՝ ամեն տեղ էլ վատ մարդ կա:



ժողովրդին էնտեղ ոչ մի ձևի չեն պաշտպանե, միլիցեն կռնա բռնե քեզի, տանե իզոլյատոր[11] էլ էղնի, փողերն էլ առնի, ինչ ուզենա, կռնա էնե: Ու՞մ բողոքես: Նույնիսկ տամոժնին էլ: Առաջ 1500 դոլար կթողնեին բերել, հմի ոչ մի դոլար չեն թողնի բերել: Եթե ես Ռուսաստանի քաղաքացի եմ, ես կռնամ 10 000 դոլար բերեմ, ես որ եկա, բերել եմ փող ու ոչ մի պրոբլեմ չեմ ունեցել, որովհետև ես Ռուսաստանի քաղաքացի եմ: Բայց եթե դու Ռուսաստանի քաղաքացի չես, դու մի դոլար իրավունք չունես բերելու ստեղ, կարող ես ռուսական 49 հազար բերել: Էդ օրենքը արդեն մոտ 3 ամիս է, ինչ կգործե: Առաջ 500 դոլար էր, առանց բանկովսկի չեկ, առանց դոկումենտի կռնայիր բերել, հետո հասցրեցին 1500 դոլար, հիմա՝ ոչ մի դոլլար, էս սեպտեմբերի 11-ից հետո էլ չթողին ոչ մի դոլար բերել: Հետո դոկումենտներին էլ կկպնին: Պասպորտին կնայեն, թե ինչի՞ պեռեվոդ[12] չունիս, ես պարտավոր չեմ անգլերեն իմանամ, ես ռուս եմ, ռուսերեն գիտեմ ու քո պասպորտը ստեղ չի անցնի: Կսեմ, այ հիմար, ենթադրենք ես Հայաստանից չեմ եկել, այլ եկել եմ Ամերիկայից, դու էդ մարդու պասպորտը բռի վերցնես ու կարդաս, բա դու պարտավոր ես անգլերեն իմանաս:

Այնուամենայնիվ անհուսալի վիճակում հայտնվածները զանազան ձևերով հիմնականում հենց հայերի են փնտրում օգնություն ստանալու հույսով.

- Ինձ իմ տարիքը չի թողում, թե չէ ես էստեղից վաղուց գնացած կլինեի: Վախում եմ գնամ հասնեմ ու մեռնեմ, ու ո՞նց բերեն էստեղ թաղեն: Թե չէ ես էս սրիկաներից ու խաբեբաներից շատ եմ զզված:
- Մի՞շտ են մահացածներին ետ բերում:
- Ով կարողանում է: Կամ ով շրջապատ ունի: Անցած տարի Ստեփանավանի Ագարակ գյուղից մեկը մահացավ: Ինքը շատ ուժեղ էր, ուժի համար անունը «Գազան» էին դրել: Գազանը որ մահացավ, էնտեղ աշխատող համագյուղացիները 1200 դոլար հավաքեցին ամեն ինչի համար, կնոջ ու երեխայի տոմսն էլ առան, դիին սամոլյոտ ու ուղարկեցին: Հայի թասիբը էդ մոմենտով էլի մնացել է:
- Գործ չգտած հայերը դոշերին տաբլիչկա են կախում. «Հայեր, փող տվեք՝ տուն հասնեմ»:
- Հա, ես էլ եմ շատ տեսել: Կրասնոդարում 10 ռուբլի կամ հիսուն ռուբլի են խնդրում, որ տոմսի փողը հերիքացնեն:
- Վնուկովոյում, Մոսկվայում էլ շատ կան: Բայց շատը ստից է, ոմանք էլ իսկապես տոմսի համար են ուզում: Զեմլյակ[13] ասածը էստեղ անցնում է:
- 100 տոկոսով: Ես, օրինակ, Լոռեցի մարդ եմ, Երևանի, Լենինականի ժողովրդի վերաբերյալ էդքան հավատ չունեմ, որովհետև մի երկու անգամ քաշվել ենք: Մի օր վեշչն ա վերցրել համարից գնացել, կամ եկել են գործի մեջ իրանց էշի տեղ են դրել: Իսկ լոռեցուն ես բարբառից էլ ջոկում եմ, պատահական մարդուն էլ ասում ես արի, գործ կանենք, ու կարող ա դա 100 անգամ ընկերոջիցդ լավը դուրս գա:

Չնայած «խոպանային» կամ արտերկրյա կյանքի դառնություններին, այ-

11. Ձեռ առնել:
12. Թարգմանություն:
13. Հայրենակից:

նուամենայնիվ շարունակում է մեծ մնալ գնալու ցանկությունը: Դրամի պակասից զատ այդ ցանկությունը չի իրականանում նաև այն տագնապի պատճառով, որ Ռուսաստանում հայերին շատ վատ են վերաբերվում: Հայաստանում խիստ տարածված պատկերացումներ կան Ռուսաստանում զանազան ձևերով սպանված հայերի մասին.

*- Ֆինանս չունեմ, թե ուղարկեմ մի ծանոթի տուն Ռուսաստան, դե բարեկամներ էլ ունեմ, բայց տղա երեխա ա, բա որ փողոցներն ընգնի կամ էլ, ուրիշների նման Աստված հեռու տանի, մեջքի վրա բերեն:*[14]

*- Շատ կա՞ն էդպիսի դեպքեր:*

*- Էնքա՜ն, Սպիտակ հարցրեք՝ շաբաթ չկա, որ տենց դեպք չլինի, տո ասում են՝ վեր ա ընկել, տո քարն ա խփել, տո թոկն ա վիզն ընգել, շաբաթ չկա, որ տենց դեպքի ռասս չգանք Սպիտակում, տո մաշինի տակ ա ընգել:*

*- Անտեր ենք, անտեր: Տեսած կա՞ք, որ մեր երկրի ղեկավարությունը մի անգամ Ռուսաստանին հարցնի, թե բա՝ ախպեր ենք, էս ինչու՞ եք ձեր ախպորն էդտեղ կոտորում: Տաս քահելի էլ որ սպանեն, ծնողներից բացի իմացող չկա, հետաքրքրվող չկա: Ռուսներն էլ էդ գիտեն, ու ինչ ուզում են՝ անում են: Ես մի դեպք գիտեմ, Սոչիում մի լավ քահելի սպանեցին: Հերն իմացավ երկու ամիս հետո, հետևից գնաց, Սոչիի ղաստարանն ասեց՝ ադրբեջանցիներն են սպանել: Դե գնա իմացի՝ ո՞վ է սպանել: Ձեռից փողն առնում են ու սպանում:*

*- Ամուսինս զանգեց, որ դեռ դոլարը գոյություն չուներ, զանգեց, թե Կարինե, 5 հազար դոլար փող եմ աշխատել մի հատ տուն ճարի (մենք էլ դոմիկում), գամ առնեմ, տեղափոխվենք: Ուրախացած տունը ճարեցի, մեկ էլ մի շաբաթ հետո մի հատ զանգ էկավ, թե՝ Կարինե, Աշոտը գոյություն չունի, հոգեկան վիճակում, շաշացված հիվանդանոցում ա, Ուֆայում ա: Մահացու տվել են նարկոտիկ, որ ինքը մահանա ու էդ փողերը տանեն մոտից: Ինքը անգզա ձմերուկը բարձած, որ տեսել ա, որ օդերում թռչում ա, ինքը իր երակները կտրտել ա, որ փրկվի, սիրտ ա թափել, մտել ա ռուս տուն էդ վիճակով: Դե չի մահացել, բայց դա արդեն ազդել ա: Ավելի լավ, ասել իրան, մահանար, մի փրկություն կլիներ:*

*- Մինչև էդ ինքը օգտագործե՞լ է նարկոտիկ:*

*- Չէ, ինքը չի օգտագործում, ինքը տաղը չի զգացել: Ինքը մեկ ասում ա՝ չայը տվեցին տենց էղա, մեկ ասում ա՝ ճաշը կերա տենց էղա, ինքը չի հիշում ոնց ա եղել: Ինքն առանց անձնագիր ա մնացել... Ստեղից աղբերներս փող վերցրին գնացին, ամբողջ աշխարհի մասշտաբով ռոզիսկ, բան Աշոտ գոյություն չունի: Ինքը պատմում ա, որ սարերով Ռուսաստանից հասել ա ստեղ, ո՞նց ա հասել՝ ոչ մեկիս դա պարզ չի: Ճարել բերել են իրան, իջացրել, ինքը օյաղացել*[16] *ա, օյաղանլուց հետո էլ, տեսել են ոչ մի բան, մահճակալի տակերն ա մտնում:*

---

**15. Սահացած, սպանված:**
**16. Սրափվել:**



# ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ, ԸՆՏԱՆԻՔԸ

Լինի ժամանակավոր, թե մշտական արտագաղթը նկատելի ձևափոխությունների է ենթարկում ազգակցական և ընտանեկան համակարգը, ներազգակցական պարտավորությունները, ներընտանեկան հարաբերությունները: Կրկին հիշենք, որ Հայաստանում խիստ մեծացել է տարեց միասնրուն կամ միայնակ մարդկանցից բաղկացած ընտանիքների թիվը: Այդ մարդիկ ապրում են ոչ միայն իրենց զավակներից բաժանված լինելու ողբերգությունը, այլև հարևանների վրա բեռ դառնալու զգացողության ողբերգությունը: Սա հատկապես ընդգծվում է զավակների և նրանց օգնության տևական բացակայության պարագայում, երբ հարևանական-համայնքային օգնության բարյացկամության պաշարը սկսում է սպառվել: Այսպիսի դեպքերում տեղի է ունենում վարքի երեք ցավալի ձևափոխություն: Այդ մարդիկ կամ փակվում-մեկուսանում են, հնարավորինս քիչ տեսանելի դառնում, կամ, ընդհակառակն, շատ ակտիվանում են և դառնում օգնության բարձրաձայն, ագրեսիվ պահանջատեր, ընդհուպ մինչև մուրացկանություն և, վերջապես, երրորդ դեպքում սկսում են յուրացնել պատրաստակամ աղքատ ազգականի արհամարհված վարքը: Քանի որ վերջին երկու կերպարները տեսանելի են և հասարակայնորեն ընդհանուր առմամբ անընդունելի, հասարակությունում սկսում է նվազել հարգանքը տարեցների հանդեպ:

Արտագաղթի հետևանքով կտրուկ փոխվում է նաև հայկական ընտանիքի որակը: Նյութերը ուղղակի վկայում են, որ ընտանիքների ավանդաբար ձևավորված հարաբերությունները արագորեն տեղի են տալիս արտագաղթի տրամաբանությանը: Բազմաթիվ են այն ամուսինները և հայրերը, ովքեր արտագնա աշխատատեղերում անհաջողություն կրելուց հետո կամ «մոռանում» են ընտանիքները, կամ՝ վերադառնում են կոտրված, կամազուրկ, և իրենց նոր որակները կամ «փոխանցում» են զավակներին, կամ դառնում են տղահարբեցող, կռվարար, հիստերիկ: Կանանց մեծ մասը սարսափում է տղամարդու անգործությունը տեսնել: Չաշխատող տղամարդիկ կամ ամաչում են կանանցից ու երեխաներից, կամ՝ դեգրադացվում: Անգործ տղամարդը կամ խիստ ագրեսիվ է դառնում, հարբեցող, կամ՝ վախկոտ, խեղճ: Երկու որակն էլ հավասարապես սարսափելի և անընդունելի է: Այսպիսի դեպքերում կանայք ուղղակի «արտամղում» են ամուսիններին՝ գնա՛, գնա՛: Բազմաթիվ հարցազրույցների ընթացքում միջին տարիքի կանայք այսպիսի անհաջողակ ամուսինների մասին խոսելիս առանց թաքցնելու ասում են, որ երազում են, որ «գնա մի ռուսի հետ կապվի ու էլ հետ չգա», «ծանր նաֆաս է դառել, ամեն ինչի վրա խոսում է անգործությունից», «մենակ ուտում է ու քնում, երեխեքն ի՞նչ պիտի սովորեն հորից»... Հաճախակի են նաև այն դեպքերը, երբ տարիներով հայաստանյան ընտանիքը «մոռացած» տղամարդը վերադառնում է անդամալույծ, հիվանդ:

*- Հենց կողքիս հարևանը՝ անցած ա 10 տարի, բնական ա, որ նա էնտեղ ընտանիք ունի: Ո՞վ 10 տարի կարող ա գնա ու առանց կին ապրի, տարիներով չի գալիս: Էնտեղ ընտանիք ունի և կինը լռում ա, հասկանալով ա լռում:*

*Նախ իր էրեխեքի հեղինակության հարցն ա, ոչ բոլոր կնանիք են էդպես հայտարարություն գրող: Լռում ա ու նստում, ասում ա՝ գուցե ժամանակ կանցնի, հետ կգա, հետ էլ չգա՝ էրեխանցս կտեղավորեմ, չի լինի, որ որբ են, հայր չունեն:*

*- Իմ տեգրը աղջիկն էլ ա տենց՝ 5 աղջիկ ստեղ ունեն, ամուսինն էնտեղ էրկու էրեխա ունեն: Տարեկան մի անգամ թե փող ուղարկի, թե Նոր տարուց Նոր տարի գալիս են ստեղ կռիվ սարքում, սկանդալ սարքում՝ «քեզ էլ եմ տանելու, քեզ էլ», մեկ էլ իմանում ենք, որ փախել ա գնացել՝ 5 էրեխա ստեղ են: Ամուսնացրել ա մեկին, բայց թե հորն, թե հայր ունեն:*

*- Հա, էն ժամանակ, երբ 1-2-ն էին գնում, շատ հազվագյուտ էր խոպան գնալը, մերոնք շատ քիչ էին գնում, իսկ հիմի էլ՝ լիքը, էն էլ հայ ամենալավ տղեքը, ամենաաշխի ընկնող տղեքը, որոնք և գործունյա են, և դուխներն ա տեղը, և տեսքներն ա տեղը: Ո՞վ ա հետ գալիս՝ ոչ մեկը:*

*- Պատճառ են բռնում, թե փող չունենք, որ ձեզ կանչենք:*

*- Այո, յուրաքանչյուր դուրս էկող մարդուց ձեռներս լվանանք:*

**(Երևան)** - *Ընկերուհուս ամուսինը գնացել էր Պյատիգորսկ, եղբայրն էնտեղ էր: Լավ էլ աշխատանք էր գտել: Կապվեց էնտեղ մի ռուսի հետ ու տուն տեղ, կին-երեխա մոռացավ: Կինն այստեղ մեծ դժվարությամբ երկու երեխային մեծացրեց, խմորեղեն էր թխում, գիշեր-ցերեկ աշխատում էր: Նույնիսկ տունը վաճառեց: Հիմա, փառք Աստծու, երեխաները մեծացել են: Բայց երկու տարի առաջ ամուսնուն ինսուլտը խփեց, ռուսն էլ տանից դուրս արեց: Գնացել էր եղբոր տուն, բայց եղբայրն էլ չուզեց տեր կանգնել: Եղբայրը՝ ընկերուհուս տեգրը, որ էդքան տարի մի անգամ չէր զանգել, չէր հետաքրքրվել, զանգեց ասեց «մեքենա ենք նստեցնում, ուղարկենք»: Կինն էլ ասեց՝ «ուղարկում եք, որ ի՞նչ անեմ: Չեմ ընդունելու»: Էդ հիվանդ մարդուն նստեցրել էին մեքենա, ուղարկել: Բայց կինը չընդունեց: Ուղարկեցին Վարդենիս, մի տարեց մորաքույր ուներ, նրա տուն: Էս տարի մահացել է, բայց նույնիսկ էրեխեքը չգնացին: Գյուղացիներն էին թաղել:*

Պակաս չեն նաև հակառակ դեպքերը, երբ «հաջողակ» ամուսինները իրենց աշխատատեղերում երկրորդ ընտանիքով են ապրում, բայց օգնում ու այցելում են նաև հայաստանյան ընտանիքներին: Ավելի հաճախ կանայք գերադասում են «չտեսնել» այդ իրավիճակը և օգտվել ամուսնու նյութական աջակցությունից: Կան նաև այլ դեպքեր, երբ կանայք «տեսնում» են և նույնիսկ կապ են պահում ամուսնու երկրորդ ընտանիքի հետ, փոխադարձ նվերներով կամ այցելություններով, դարձյալ նույն ակնկալիքով՝ օգտվել ամուսնու նյութական աջակցությունից: Հասարակական բարոյականությունը գերադասում է «հասկանալ» այդ իրողությունը, առավել ևս, որ այդ կարգի ամուսինները երբեմն նաև համայնքային օգնություն են առաջարկում և բարեգործի համարում ունեն:

Այն դեպքերում, երբ զավակները կամ ամուսինները տևական բացակայում են և չեն օգնում մնացողներին, վերջիններս ընկնում են ծայրահեղ անելանելի վիճակի մեջ: Ֆորմալ ամուսնացած, բայց փաստական միայնակ կանայք տարիներով չեն կարողանում ոչ ապահարզան ստանալ, ոչ օգտվել սոցիալական աջակցության միայնակ կանանց հասցեագրվող օգնության ձևե-



րից: Ծայրահեղ չքավորության հասած կանայք կան, որ չեն կարողանում վաճառել ոչ բնակարանը, ոչ ամուսնու անունով գրանցված ավտոմեքենան, եթե այդպիսին կա: Վերջինս անգործությունից ժանգոտում է, փչանում, բայց անգոր կնոջ վրա գույք է հաշվվում, որից ոչ մի կերպ հնարավոր չի ազատվել: Գյուղերում մի քանի դեպք է գրանցվել, երբ կանայք փորձել են վարկային ծրագրերի մասնակցել, բայց ամուսնու բացակայության և գտնվելու վայրի անհայտ լինելու պատճառով չեն կարողացել, քանի որ որպես գրավ առաջարկվում էր հողը, իսկ հողային գրավը բանկը վերցնում է միայն ընտանիքի չափահաս բոլոր անդամների համաձայնության դեպքում: Նույն կերպ բազում բնակարաններ կան, հատկապես քաղաքներում, որտեղ միայնակ կամ տարեց ամուսինները ապրում են ծայրահեղ չքավորության մեջ, երազում են վաճառել բնակարանը, բայց կամ չունեն բացակայող և իրենց մոռացած երեխաների համաձայնությունը, կամ չգիտեն նրանց տեղը: Օրերս «Օրրան» թերթը տպագրել էր այդպիսի մի հոդված՝ Ռուլիխան Չարքազյանի լուսանկարով: Չորս սենյականոց բնակարան ունեցող տարեց այս մարդը միայնակ է, ապրում է ծայրահեղ չքավորության մեջ և ոչ մի կերպ չի կարողանում վաճառել իր բնակարանը՝ ապրուստի նվազագույն հարցերը լուծելու համար, քանի որ... չգիտի իր զավակների տեղը, որպեսզի նրանցից համաձայնագիր վերցնի: «Խնդրում եմ՝ ինձ նման հազարավորների անունից, որոնք ծայրահեղ աղքատ են ապրում և գտնվում են ահավոր պարտքերի մեջ, օրենքում փոփոխություն կատարեք»: Տարիներ շարունակ կուսակցություններին ու թերթերին դիմելուց հետո Ռ.Չարքազյանը դուրս է եկել փողոց այսպիսի բովանդակությամբ մի պլակատով.

**- ԵՍ ԻՆՁ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՄ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ Ի ՎԻՃԱԿԻ ԵՄ ՏԻՐՈՋՍ ԽՈՆԱՐՀՎԵԼ ՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԾ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՎԱՐՈՐԴ ԵՄ ՏՐԱԿՏՈՐԻՍՏ ԿՈՄԲԱՅՆԱՎԱՐ ՄԵԽԱՆԻԿ, ԻՆՁ ՀԱՐԿ ԵՄ ՀԱՄԱՐՈՒՄ ՏԻՐՈՋՍ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԻՄ ՎԱՃԱՌՔԻ ՆՊԱՏԱԿԸ ՀԵՏԵՎՅԱԼՆ Է...** [1]

Իսկ նպատակը, ինչպես ասվեց, իր իսկ բնակարանը վաճառելու իրավունքը ստանալն է:

Աղքատությունը և արտագաղթը նկատելի ազդել է նաև ազգակցական հարաբերությունների վրա: Առկա է նաև հակառակ միտումը՝ ազգակցական հարաբերությունների որոշ կայունություն ապահովելու անհրաժեշտությունը իր հերթին նպաստում է արտագաղթին: Բազմաթիվ են գրանցված դեպքերը այն մասին, որ այս կամ այն մարդը գնաց Ռուսաստան, որովհետև աղջկան (տղային) պիտի ամուսնացներ, կամ՝ տանը մարդ էր մահացել և թաղման պատճառով պարտքեր էր արել և այլն: Արտագնա աշխատանքները, ինչպես ասվեց, կազմակերպվում են հիմնականում ազգակցական միջավայրից և մեկը մյուսին տանում են: Ընտանեկան իրադարձություններին միմյանց հրավիրվում են խոպանային կապերով կապված ազգականները: Նախ՝ համոզված են, որ միմյանց անհարմար վիճակի մեջ չեն դնի, քանի որ գիտեն միմյանց նյութական հնարավորությունները, երկրորդ՝ ազդում է փոխադարձ

1. *«Օրրան» օրաթերթ, 10 դեկտեմբերի, 2002թ.*

պարտավորությունների իրավունքը: Այն դեպքերը, որ սովորութային իրավունքով թելադրում են ազգականների պարտադիր մասնակցություն, մարդկանց կանգնեցնում են ընտրության առջև: Հրավիրող կողմը բարդություն ունի հրավիրելու հարցում, եթե հրավերը ենթադրում է հրավիրվողի մասնակցությունը նվերով, հրավիրվողը նույն պատճառով մտահոգություն ունի իր մասնակցության առիթով:

*- Քույր, ոչ մեռլի տունը կռնաս որպես մարդ էրթաս, ոչ հարսնեքտունը: Որ հարսնիք կէղնի, տուն կա, որ սուգ կէղնի. թե ալ մարդ, մենք էդ փարեն ուրտից գտնինք, որ էրթանք հարսնիք:*

*- Բայց ստիպված էլի մե տեղիցմ բըի գտնիս, որ էրթաս: Էս վերջերս հարսնիք էինք Էրևան գնացել, մի կերպ գնացինք, էկանք, մինչև հիմի չիտեմ պարտքս ինչխ բըի փակեմ, բայց չերթալ չէր էղնի, հորեղբորս տղեն է, ես էլ էրեխեք ունիմ, ընպես ինքն էլ իմ ուրախությանս չի գա, ընպես էլ կապը կկտրվի: Որ մոտիկներով կկանչեն, մենք էդպես 28 տուն ենք, չերթալ չի էղնի, ստիպված բըի մե բանմ հնարես, որ էրթաս:*

*- Ձեր բարեկամ էդ 28 տնից քանի՞սն են դրսում և քանիսի՞ց գնում են խոպան:*

*- Մի 20 ընտանիքից խոպան գնացող կա:*

Այս մտահոգությունների հիմնական պատճառը՝ կապերի կտրվելն է: Կապերի կտրվելուց շատերն են վախենում, սակայն ակնհայտ է, որ Հայաստանում սոցիալական կարգավիճակային կապերն սկսում են ակնհայտորեն հաղթել ազգակցական կապերին: Հատկապես մարզերում մարդիկ ծևեր են մտածում իրենց ազգակցական հզորությունը, իրենց ազգակցական կապերի զորեղությունը ցուցադրելու, դրանով փորձելով նաև պաշտպանել այդ կապերի ամրությունը: Այդ երևույթի ինքնատիպ դրսևորումներից է Գավառում ավելի ու ավելի տարածվող հետևյալ սովորությունը. տարիներով խոպանում գտնվող տղամարդիկ կամ նույնիսկ ընտանիքները նկարահանում են իրենց այնտեղի կենցաղը և ուղարկում գյուղերի իրենց հարազատներին: Վերջիններս, որոշ գումար վճարելով, այդ նկարահանումների ժապավենները ցուցադրում են տեղական հեռուստաալիքներով, իբրև թե՝ մարզի իրենց ազգականներին նույնպես ցույց տալու համար, իրականում՝ մարզի բնակչությանը իրենց ազգակցական ամրությունը ցույց տալու համար: Ազգակցական կապերի այս պատրանքային ամրությունը երբեմն դառնում է հետագա քննարկումների և նույնիսկ ծաղրի առարկա, բայց, այնուամենայնիվ, երբեմն խաղում է իրեն վերապահված պաշտպանական դերը:

***Պատառիկներ զրույցներից***

*- Շիրակ, գյուղ Ազատան- շատերը Յակուտում երկրորդ կին ունեն, մանավանդ նրանք, որ դեռ կոմունիստների ժամանակից են գնացել:*

*- Մարդը գնացել ա, մի կարճ յուրքով մեկին տեսել, կնիկ-երեխա մոռացել: Կնիկն էլ էստեղ 10-12 ժամ աշխատում ա, երեխուն ո՞վ նայի...*

*- Չորս երեխա անհեր կմեծացնեմ: Մի տարի ա գնացել ա խոպան: Իրա վիճակը լավ ա, մեզ էլ մոռացել ա:*

*- Բա տարին մի անգամ փող չուղարկե՞ս երեխուն:*



*- Աշխատանք որ լիներ, հո չէր գնա, գնաց ու ընկավ ռուսների ճանկը:*

*- Փողը ինչ կապ ունի, թող մի անգամ զանգի, որ իրա երեխան իմանա, որ իր հերը կա: Թաթարիա է գնացել: 15 տարվա մեջ առաջին անգամ է գնացել: Աշխատանք չկա, 4 երեխա ո՞նց պահեմ: 5, 10, 11, 13 տարեկան՝ երեքը աղջիկ և վերջինը տղա: Երկու օրով եկել է 2001 թվին: Բայց որ եկավ՝ հասկացա, որ էլ... .Ութ ամիս ընդեղ էր, գնաց մարտին, եկավ նոյեմբերին, փող չթողեց:*

*- Հիմա ներկա դրությամբ տան տղամարդը, մի ռուսի հետ կապվել, ինքը իրան ընդեղ կպահի: 50 տարվա մարդ ու կնիկ էլ կբաժանվեն, ճիշտն ասենք. Մարդը գնաց Ռուսաստան, տան հոգսերից հեռու, աչքը չի տեսնում, մի օր էլ թե հանկարծ հիշի ստեղի պայմանները, ինքը գիտի որ ստեղ էլ լինի, ինքը չի կարա ստեղծի:*

**Տաթև, Զանգեզուր** - *Ամուսինս անընդհատ խոպան է: Էսա մի հինգ տարի է չի գալի: Որ ամուսնացանք, մի տարի մնաց, աղջիկս երկու ամսեկան էր, որ գնաց: Դե մի քանի տարի Իրկուտսկ գնաց, Խաբրովսկ, հետո Ուլան-Ուդե՝ Բուրյաթիա: Երկու տարի էլ էր մնում, երկու ամիս ստեղ էր մնում: Ծնողը, որ մահացավ՝ մերը, էլ չի եկել:*

**Կապան** - *Վերջի երեխես հինգ տարի ա՝ ծնվել ա, հերը էդ վախտ գնաց, մինչև հիմի տեղը չգիտենք:*

*- Մարդիկ կան, երեխեն 10-ն ավարտել է, իսկ ինքը 7-8 տարեկանում է տեսել:*

*- Ինչի՞ պիտի սենց լիներ, որ հայ տղամարդը տանից դուրս գա, և տան կինը օրերով, ամիսներով նստած սպասի, թե մի օր պիտի դուռը բացվի ու ներս գա: Կարոտով նստած սպասում ենք, գիշեր-ցերեկ: Էլ, Նոր տարի է գալիս, պիտի բոլորը երջանկանան, բայց ես չեմ երջանկանում, ինչի՞ս վրա: Թեկուզ փող ուղարկեն: Ե՞ս պիտի երջանկանամ, որ Նոր տարուն սեղան գցեցի, երբ որ ընտանիքիցս երկուսը՝ դուրս, երկուսը՝ էստեղ, և ես սեղան սարքեմ, դռնիկը նստեմ սպասեմ, թե ո՞վ պիտի դուռը բացի: Ո՞վ պիտի գա, թաղում մարդ չկա, բոլորը դուրս էկած են, բոլորը: Մարդ չկա, մնացածները՝ ինձ նման...*

*- Ավելի լավ է, որ տղամարդիկ գնան: Թե չէ ամբողջ օրը տանը դիվանին նստած: Ու՞մ հարցնում ես՝ մարդդ ի՞նչ է անում, ասում է՝ դիվան է քշում: Բոլորը դիվանագետ են դառել: Տղամարդն ամբողջ օրը տանը նստած՝ սարսափելի է: Վախկոտ են դառել, վախում են նույնիսկ մի ղեկավարի մոտենան: Արհամարհանքից են վախենում: Կոտրվել են:*

*- Եղբայրս Օդեսայում մահացավ, ես չկարողացա նույնիսկ թաղմանը գնալ: Հիմի մարդիկ էլ չեն կարողանում մեկը մյուսին պինդ բռնել: Առաջ օրվա տակին էլ, գլխին էլ եղբայրներիս տեսնում էի, հալը հարցնում, մի բանով օգնում: Հիմա ղալաթ կանի, եթե մեկը Տյումենից, Օդեսայից... երեք տարին մեկ կարողանա գա: Էդպես էլ կապերը կտրվում են, իրարից սառում են:*

# ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞Ն, ԱՐԴՅՈՔ

Աշխատանքային ժամանակավոր արտագաղթողների մեծ մասը պատրաստվում է կրկին մեկնել, անգամ անհաջողակները: Դրսում աշխատելու հեռանկարն ավելի որոշակի է, քան՝ ներսում: Դրսում անարդարությանը դիմանալը ավելի հեշտ է, քան ներսում:

*- Ես էնքան ընկերներ ունեմ, որ դրսերում են, գործերը էստեղ դատարաններում է, իրանք դրսերում 31 էլ առան, կամազ մեքենաներ առան, տներ առան: Էդ մարդիկ, որ մնային ստեղ, բդի իմ օրս ընկնեին՝ սոված մնային: Շինարարական կոոպերատիվի նախագահ էր, մարդիկ գնացին հիմի 31 էլ ունին, տունն էլ, կամազ բեռնատար մեքենան էլ ունի, առևտուր էլ են անում, բիզնես են անում Ռուսաստանում:*

*- Բայց Ռուսաստանում էլ են անպաշտպան...*

*- Ավելի լավ են, քան ստեղ: Եթե ցումարներ մուծելու համար է, էնտեղ կաշխատին կմուծեն, ստեղ որ չես մուծե, ինչ օգուտ, մեկ է չես էլ աշխատի, ավելի լավ է աշխատիս մուծես, քան չմուծես ու չաշխատիս: Այո, մուծում են էդ ժամանակավոր գրանցման համար՝ օրը 7 ռուբլի է, ինչքան է...*

*- Բայց վտանգավոր է բոլոր դեպքերում, դեմքդ արդեն ասում է, որ տեղացի չես և ամեն անգամ ծեծ ուտելու սպառնալիքը կա:*

*- Ստեղ պակա՞ս կծեծեն, ստեղ էլ կարող է պայուսակդ փախցնեն, ստեղ էլ ինչ-որ մեկի տունը գողություն է կատարվում, ի՞նչ տարբերություն: Իսկ ծեծ ուտելը, որպես կովկասցի, էդ ոչինչ, էդ ուղղակի ռուսական շովինիզմն է:*

Աշխատանքից ավել դրսում մնալու գայթակղությունը պայմանավորված է նրանով, որ նույնիսկ Ռուսաստանում, որտեղ շատերի վկայությամբ իրենք անընդհատ տագնապ ունեն, նախ՝ ինչպես աշխատանքային, այնպես էլ մարդկային արդարությունն ավելի մեծ է, երկրորդ՝ կյանքն ավելի հետաքրքիր է: Շատերին սկսել է վախեցնել այն խորը մարդկային դեպրեսիան, որ Հայաստանում առկա է: «Այստեղ շատ տխուր է», «Մարդ վախենում է մի կարգին ծիծաղել», «Եթե նույնիսկ աշխատանք ունես, անելու ոչինչ չկա», «Այստեղի իրականությունը շատ գորշ է»... «Ընտանիքով գնացողներն էլ հետ չեն գա»,-համարյա ամենուր պնդում էին մեր զրուցակիցները: Չվերադառնալու օգտին է խոսում նաև փոփոխվող իրավիճակը. «Մարդիկ ենտեղ հարմարվել են, հիմա հո չե՞ն կարող նորից էստեղ հարմարվել», «էստեղ մնացողները հո չե՞ն թողնի նորերին մոտ գալ»... Չվերադառնալու օգտին է նաև կրթության խնդիրը. «Էնտեղ երեխաները արդեն օտար լեզվով են դպրոց գնացել, այստեղի դպրոցներում չեն կարող հարմարվել», ,Եկողը պիտի գա Երևան, բայց Երևանը ինչքա՞ն մարդ կարա ընդունի»...

Սյունիքից գնացողների մեջ արդեն նկատելի թիվ են կազմում գերդաստանները: *«Ես իմ մոտի թվերը կբերեմ, իմ մոտ թվեր կան,-ասում է Կապանի հասարակական կազմակերպություններից մեկի նախագահը: Բերեմ մեր գյուղի գերդաստանների օրինակը, թե ինչպես են գնում: Երբ որ մեկի գործը հաջողվում է, գնում են ու այլևս չեն վերադառնում, հերթով տանում են մյուսներին: Այդպես մեր գյուղից գնացել են Զաքարյանները, Աղաջանյանները,*



*Պատվականյանները... Դրանք հաստատ հետ եկող չեն: Մեծով, փոքրով գնացել են: Մեր մոտ, առհասարակ Զանգեզուրում ոչ թե խմբերով են գնում, այլ գնում մնում են: Պատերազմի տարիներին գնացողների մեծ մասը վերադարձել է, բայց հիմիկվա գնացողները ետ եկող չեն: Մեր հաշվարկով միայն Կապան քաղաքից գնացել են 12-14 հազար մարդ՝ լավ շինարարներ, ինժեներներ... Հիմի արդեն մի կարգին գաջ քաշող չես գտնի: Դրանք էնտեղ էլ աշխատանք ունեն, ետ եկող չեն»:*

Այնուամենայնիվ վերադառնալու և Հայաստանում հաստատվելու կամ վերահաստատվելու ցանկությունը գնացողների կամ գնացածների քանակական մեծամասնության, հատկապես Ռուսաստանում գտնվողների մեջ մեծ է: Խեղդում է կարոտը, արմատներից կտրվելու տագնապը: Սրանց մեծ մասը այն մարդիկ են, որ ռուսերեն վատ գիտեն, ապրում են բավական մեկուսի կյանքով, օրվա եկամտի խնդիր են լուծում: Սակայն տևականորեն այնտեղ ապրողներն ավելի ու ավելի քիչ հավանականություն ունեն վերադառնալու: Անող, մեծացող և կրթություն ստացող երեխաները արմատավորվում են այնտեղ և, շատերի վկայությամբ, նրանք ծնողներին «կպահեն» այնտեղ:

Վերադառնալու ցանկությունն իրականացնելուն Ռուսաստանում գտնվողների մոտ 20 տոկոսին խանգարում է մեկ այլ, միանգամայն լուծելի պրոբլեմ: Դա հին, խորհրդային անձնագրերով մարդիկ են, ովքեր տարիներ շարունակ Հայաստան չեն եկել և նրանց մոտ մնացել են հին անձնագրերը, որոնք այլևս իրավական ուժ չունեն:

### Պատառիկներ զրույցներից

**Գյումրի** - *Ռուսաստանից որ գալանք ստեղ, ահռելի տարբերություն կտեսնինք: Էնտեղաց աշխուժությունը, էնտեղաց աշխատանքը, մարդիկ առավոտ գելնին գործի կերթան, գործից գալան, վերջը ուրախություն կա, հարսնիքները, ամեն բանը: Մարդիկ կերթան ռեստորան, էնտեղ կյանք կա, բայց ստեղ կյանք չկա:*

*- Հետ գալու միտք չունե՞ք:*

*- Հլը չէ: Բայց ընդհանրապես վերադառնալու ենք: Ես էնտեղ տուն ունիմ: Հմի տղաս ուզում է գա էստեղ սովորի, եթե ատացվեց իր սովորելը, ուրեմն տղաս, հարսս ու մամաս կգան էստեղ:*

*- Ինչը՞ պիտի փոխվի, որ դուք գաք: Ասում էք տուն ունեք, քաղաքացիություն ունեք, ինչը կարող է ձեզ հետ բերել:*

*- Պետք է, որ մեր Հայաստանի պայմանները փոխվեն, ժողովրդին չխեղդեն, թողնեն աշխատի, աշխատանք ունենա, որ ժողովուրդը կամաց-կամաց հետ գա իրա հայրենիքը: Որ տղամարդը կարողանա իրա պարտականությունները կատարե... Որ ուրախություն ըլնի, հույս ըլնի...*

**Գյումրի** - *Կգան միայն այն ժամանակ, երբ Հայաստանը գա էն վիճակին հասնի, որ տնտեսական զանգվածը, տնտեսությունը կախված չըլնի քաղաքականությունից, այլ քաղաքականությունը կախված ըլնի տնտեսությունից: Ոչ թե մեր պուզատիների նման, այլ իսկական բիզնեսի մասին է խոսքը, իսկական կապիտալի, իսկական բիզնեսմենների: Այ էդ մարդիկ գան, որ նոր պետությունը պետություն դառնա, որ կյանքն էլ լավընա:*

# ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*— Ինչ կգրես, չես գրի, - գրույցի վերջում ասաց մեր բանաստեղծներից մեկը,- բայց սպես կգրես: Ամեն ինչը հնարավոր է վերականգնել: Հնարավոր է նույնիսկ էն Անգլիա էշտեցողին էլ հետ վերադարձնել, հնարավոր է, որ էս մնացողն էլ էստեղ մնա, սաղ կերթա ու գուկա, բայց մի բանն կա, որ չի վերականգնվի, դա բարոյականությունն է, որ կորավ՝ կորավ: 1995 թվերին մարդիկ ելան բազար առևտուր էնելու, չէ՞, էն ժամանակ, որ կդնեին կշեռքին կկշռեին, դախլի ժողովուրդը, հրա տվածը կարմրելով կուտար, կամնչեր, որ քեզի կխաբեր, հմի 2 կիլոյի մեջ կես կիլոն կխաբեն ու ուղիղ աչքերիդ մեջն էլ կնայեն: Էդիկ է կորել, էդիկ էլ չես կրնա վերադարձնել: Մնացածը, ինչ-որ լացանք, ըսինք, էդոնք սաղ հնարավոր է վերականգնել, էդ մեկը՝ չես կարող: Հմի էս պահին մարդու բարոյական կերպարը արդեն փչացել է, էլ չես կրնա վերականգնել:*

Բարոյականության խնդիրը շատերին է հուզում: Այն դիտարկվում է ամենատարբեր չափանիշներով՝ համապետական, համազգային, համայնքային, գերդաստանային, տարիքային, անհատական, կանանց ու տղամարդկանց բարոյականությունը: Մանրամասնությունների մեջ չմտնելով և վավերացնելով, որ այս գրքում զետեղված պատմություններում հարուստ նյութ կա այս հարցի շուրջ (քննարկվում է ամոթի սահմանը, ընտանիքների փոխված նկարագիրը, արդարացվում կամ դատապարտվում են ավանդաբար ընդունված նորմերից շեղումները և այլն), նկատենք, որ մտավորականների մեջ իշխում է այն համոզմունքը, որ բարոյականության սահմանը գծվում է սոցիալական կամ քաղաքական ընտրախավի կողմից և այս կամ այն ձևով կրկին նպաստում է արտագաղթին՝ թե այդ բարոյական նորմերն ընդունողների, թե մերժողների կողմից: Հարցազրույցից քաղված ստորև բերվող պատառիկը երկրում բարոյական նորմերից մեկի սահմանմանն է վերաբերվում.

*- Շիրակը խոպան է Հայաստանի մնացած հատվածի համեմատ: Կրթության նախարարությունը ոնց որ գիտի, որ Շիրակցին անպայման պիտի ջանա իր երեխային ընդունել տա, ընդունելու կաշառքի գինը երկու-երեք անգամ էստեղ բարձրացնում է: Էստեղ հնարավոր չի գիտելիքներով ԲՈՒՀ ընդունվել, թե չէ գները կընկնեն: Հենց որ մեկը գիտելիքով ընդունվեց, հույս կառաջանա, և դա կգցի գները: Մի ամբողջ փիլիսոփայություն են մշակել էս տարածքի համար. իրոք էս տարածքի մարդիք հատուկ մարդիք են, իրենց երեխեքի մասին շատ կմտածեն, երեխեն հըլը չծնված պտի սկսեն էտ երեխի համար փող հավաքել, երբ որ էտ երեխեն հասավ էն տարիքին, երբ որ պտի ճակատագիրը որոշվի, էտ փողը կսկսեն ձեռքերտ վառել, դու պտի մարդ գտնես էտ փողը տաս ու քո ծնողական պարտքը համարես կատարված: Եվ այլն, և այլն... Էնքան ասացին, շիրակցին էլ հավատաց ու հենց էդպես էլ անում է: Այսինքն այլ կերպ չի էլ կարող: Կամ էլ պիտի թողնի էստեղից գնա, որ էդ կախարդական շրջանից դուրս գա: Գնա թեկուզ Երևան: Գնացողն էլ այլևս չի ուզենա վերադառնալ այս գորշ իրականություն:*



# ՊԱՍԻՎ ԱՐՏԱԳԱՂԹ ԿԱՄ ՆԵՐԿԱ ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐ

Արտագաղթի մեկ այլ տեսակ է Հայաստանում ֆիզիկապես ներկաների մի մասի խիստ պասիվ, կրավորական կեցությունը: Նկատելի թվով մարդիկ նստած ուղղակի սպասում են. սպասում են, որ իրենց համար աշխատատեղեր բացվեն, սպասում են, որ իրենց բնակարանները կառուցեն կամ նորոգեն, սպասում են, որ իրենց երեխաների կրթության և այլ հոգսերը հոգան, սպասում են, որ իրենց օգնություն բերեն... Այս սպասողների բանակը տարբեր որակ ունի: Երբ դրանք տարեց կամ կենսաբանորեն անկարող մարդիկ են, նրանց սպասումը մասնակիորեն պայմանավորված է նրանց ֆիզիկական անկարողությամբ: Սակայն «սպասողների» մեջ նկատելի թիվ են կազմում աշխատունակ միջին տարիքի մարդիկ՝ կանայք ու տղամարդիկ, որոնց սպասումը բուն էության սոցիո-մշակութային անկարողության հետևանք է: Շատերը դեռ սպասում են, որ «պետությունը» (այսինքն՝ կառավարությունը) պիտի հոգա իրենց կյանքի ծրագրավորումը: «Էս պետությունը մի գործարան բացեր», «Էս պետությունն ի՞նչ է մտածում, հինգ երեխա ունեմ, ինչո՞վ եմ նրանց պահելու», «Բա էս պետությունը չի մտածու՞մ, մեր երեխաները ո՞նց են սովորելու», «Էս պետության հեչ պետքը չի, որ մենք սոված-ծարավ յոլա ենք գնում»... Բանաձևի մակարդակ ձեռք բերած այս արտահայտությունները հնչում են պոռթկուն, դժգոհ, անտարբեր, ծույլ, սպառնալից, հեգնանքով, սպասումով, հաստատումով... Խորհրդային տարիներին առաջարկված սոցիալական փաթեթի տրամաբանությամբ ձևավորված սոցիալական միտքը, խելքը, կամքը շարունակում է մնալ վարքի ակտիվության հիմնական խոչընդոտներից մեկը: Պետությունից սպասումը խոչընդոտում է ինքնուրույնությանը, իսկ այլոց ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը սպասողների կողմից դատապարտվում է: Այս մարդիկ և՛ կան, և՛ չկան երկրում: Նրանց ֆիզիկական գոյությունը խտացնում է պասիվության մթնոլորտը, իսկ դեպքերի ընթացքին մասնակցելու նրանց բացահայտ չկամությունն ու կամազրկությունը նրանց դնում է մի տեսակ վերացական արտագաղթածների խմբի մեջ:

Գլխավորապես տղամարդկային արժեքների վրա խարսխված արժեքային համակարգի երկրում, ինչպիսին Հայաստանն է, այս սպասողական, կրավորական պահվածքը պայմանավորված է նաև հասարակության որոշակի շերտում տղամարդկանց զգալի մասի ֆիզիկական բացակայությամբ: Նրանք բացակայում են հիմնականում հասարակության ստորին բևեռում, որը նույնիսկ դասական իմաստով «բևեռ» չէ, քանի որ, ինչպես ասվեց, այն կազմում է բնակչության քանակական մեծամասնությունը: Հասարակության վերին 20 տոկոսում, որն էլ երկրում հենց եղանակ է ստեղծում, տղամարդիկ չեն բացակայում տարիքային և ոչ մի խմբում: Որքան հասարակական շերտում նվազում է երիտասարդ, համարձակ, ճկուն վարքի մարդկանց, հատկապես տղամարդկանց խումբը, այնքան մեծանում է դժգոհ անտարբերությունը:

Իմ երիտասարդ բարեկամներից մեկը, որի հետ քննարկում էինք ստեղծ-

ված իրավիճակը, կարծում եմ շատ լավ ներկայացրեց ընդհանուր հոգեբանությունը: Հայաստանի հանրապետության քանակական մեծամասնությունը, կամ օտարվելով, կամ բարոյական և այլ նկատառումներով և կամ դեպքերի բերումով ինքնօտարվելով պետությունից, այս պետությունը իրենը չհամարելով, իրեն նաև մասնակիցը չի զգում երկրում կատարվող իրադարձությունների: Այս հոգեբանությունը նա անվանեց «ներկաների էմիգրացիա». «Ես այստեղ եմ ֆիզիկապես, բայց ես մաս չունեմ երկրի ոչ մի գործընթացի, և չեմ էլ ուզում ունենալ»: Վերջին տաս տարիներին Հայաստանի հանրապետության բնակչության ձևավորվող կաղապարային կերպարը հենց այս «մասնակցության» մերժումն է: Ինչքան շատ ենք խոսում «մասնակցության» մասին, այնքան քիչ ենք մասնակցում: Ինչքան շատ ենք քննարկումներ կազմակերպում «մասնակցության» ակտիվացման համար, այնքան նեղացնում ենք մասնակցության շրջանակը: Քիչ ենք մասնակցում, նախ, ձևավորված պետական ինստիտուտների կողմից մասնակցությունը խոչընդոտելու պատճառով («մասնակցության» ամենացածր աստիճանը «ընտրական մասնակցությունն է», որին մասնակցությունը փաստորեն սահմանափակվում է նյութական ակնկալիքով), երկրորդ՝ բարոյապես չաղտոտվելու պատճառով, երրորդ՝ «իսկ ի՞նչ պիտի փոխվի» տրամաբանությամբ...



# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

- Անտեր երկիր է:
- Անտեր երկիր է, գնաս ու՞մ դուռը ծեծես:
- Երկիրն իրենցն է, մենք էլ իրենց ծորտն ենք:
- Մենք ի՞նչ գործ ունենք այս երկրի հետ:
- Սա հո մեր երկիրը չի, իրենց երկիրն է:
- Ոչ ամոթ ունեն, ոչ՝ խիղճ (իշխանությունները):
- Նրանց առաջ խաղ չկա (իշխանությունները):
- Գնացքը գնացել է, ով կարող էր մի բան անել՝ արել է, ով արդեն չի արել՝ ոչնչ չի կարող անել: Հիմա արդեն տերերը պարզ են, նրանք էլ ու՞մ մոտ կթողնեն:

*Տերերը*

- Տերն էլ են իրենք, տերտերն էլ:
- Տերն իրենք են:
- Անտեր ժողովուրդ ենք:
- Մենք որ տեր ունենայինք, էս օրին չէինք լինի:

Ովքե՞ր են այս «տերերը», «իրենք» և «մենք»
- *Երբ փախստականներն են ասում, երբեմն նկատի ունեն տեղացիներին:*
- *Աղքատները նկատի ունեն հարուստներին:*
- *Բոլորը միասին նկատի ունեն իշխանություններին:*

*Օրենքը, իրավունքը*

- Ոչ օրենք կա, ոչ դատ, ոչ՝ դատավոր:
- Օրը մի օրենք ա փոխվում: Թաքուն էլ փոխվում ա: Փոխված հաջորդ օրը գալիս են, տուգանքները գրում՝ գնում:
- Դրանց համար դատ ու դատաստան չկա:
- Իրանք են անում, գնաս ու՞մ բողոքես: Լավն են ա՝ թողնես գնաս:

# ԱՐԴԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

*ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ*

**«Հայ տղամարդիկ գնում են Ռուսաստան,**
**հայ կանայք՝ Թուրքիա,**
**արաբական երկրներ, իսկ ընտանիքները՝**
**Եվրոպա և Ամերիկա»:**
*(«Արտագաղթը և կառավարման խնդիրները» թեմայով*
*դաշտային հետազոտությունների*
*ընթացքում գրանցված հարցազրույցից)*

**«... Իմ ընկերները հեռանում են ինչպես թռչունների երամ... »**
*Ռ. Հախվերդյան «Արտագաղթ»*

Գիտության մեջ ընդունված է այն տեսակետը, որ արտագաղթը, կամ բնակչության զանգվածային որևէ շարժ (ինչպես նաև ներգաղթը, ժամանակավոր միգրացիան ևն) կառավարելի գործընթացներ են[1]: Այլ հարց է, թե որքանով է այդ կառավարումն արդյունավետ և հաշվի առնում տարբեր հանգամանքներ ու մոտեցումներ:

Բնական է, որ անցումային շրջան ապրող հասարակությունն ունի կառավարման բազում խնդիրներ, որոնք, չլուծված տնտեսական և իրավական հարցերի հետ մեկտեղ, առավել նպաստում են արտագաղթին[2]: Սակայն անցումային իրավիճակում հասարակությունը նաև մոբիլիզացնում է իր ներքին ուժն ու ինքնակազմակերպվում: Առաջ են գալիս դարերով փորձություն ապրած գոյատևման այլ, ոչ պետական, հասարակական և ընտանեկան հարաբերությունների վրա վրա հիմնված մեխանիզմներ: Բազմիցս նշվել է, որ հայերի այսօրվա գոյատևման առեղծվածը հիմնականում բացատրվում է հենց ընտանեկան և ազգակցական ամուր համակարգով[3], հասարակական փոխօգնության սովորույթով[4]: Մյուս կողմից, պետական սոցիալական քաղաքականության արդյունքում հայ ընտանիքը վերջին տասնամյակում ապրեց մի քանի ձևափոխություն, երբեմն թղթի վրա, երբեմն՝ իրականում: Այսպես, եթե «Փարոս» համակարգն ստեղծեց «փաստաթղթային միայնակների» հոծ բանակ (միայնակ մայրերի, ծերերի), ապա «ընտանեկան նպաստները» կրկին «միավորեցին» ազգականներին և նույնիսկ «վերակենդանացրին» որոշ հանգուցյալների:

Մինչդեռ արտագաղթն ստեղծել է իսկապես միայնակ կանանց բազմություն, որոնց միայնակությունը հաստատող ոչ մի փաստաթուղթ չկա, բայց

1. *Տե՛ս Ю. В. Арутюнов, Л. М. Дробижева, А. А. Сусоколов, Этносоциология, М., 1999, с. 88-93; Ср.: В. И. Переведенцев, Методы изучения миграции населения, М., 1975, ст. 5.*
2. *Տե՛ս Հ. Խառատյան, Արտագաղթի երևույթը. - Սույն ժողովածուում:*
3. *Տե՛ս Պատմություններ աղքատության մասին, Վերլուծական հոդվածները, Եր., 2001:*
4. *Տե՛ս օր. Գ. Շագոյան, Օգնություն, կամեցողություն, թե՞ պարտականություն. - Պատմություններ աղքատության մասին, էջ 350-369:*



մեծ է իրական օգնության կարիքը[5]: Նրանց սոցիալական նպաստի բացակայությունը հիմնականում լրացվում է ի հաշիվ ազգականների ու հարևանների օգնության[6]: Ընդհանրապես համայնքային և ընտանեկան փոխօգնության ներքո ճգնաժամի առաջին շրջանում հայ հանրությունը ապրում էր ներքին համախմբման մի փուլ, երբ ուժեղացել էին քաղաք-գյուղ, Հայաստան-սփյուռք, առանձին ազգակցական, բարեկամական և ընտանեկան տնտեսական փոխհարաբերությունները: Այսպես, ըստ գյուղապետերից մեկի բնորոշման, արդի հայ գյուղում ստեղծվել է հարևանության երեք տիպ. հողի, անասունի և բնակավայրի հարևանություն: Առաջին երկուսն ուղղակի տնտեսական համատեղ գործունեության ձևեր են, և իրենցից ներկայացնում են պետական որևէ ատյանում չձևակերպված խմբային տնտեսության տարբերակ: Մինչև հողի սեփականությունը վկայող անձնագրեր ստանալը, ինչպես նաև հաճախ ստանալուց հետո, միայն բանավոր պայմանավորվածությամբ ազգականներն ու հարևաններն իրարից հող էին/են վարձակալում: Արդյունքում, բացակայող բազմաթիվ ընտանիքների հողերը մեծ մասամբ գտան իրենց նոր մշակողներին: Այսինքն, արտագաղթողներն օգնում էին իրենց հարազատներին ոչ միայն դրամային փոխանցումներով, այլև՝ որոշակի աշխատանքային, հողային ռեսուրսներ տրամադրելով: Թեև որոշ շրջաններում արտագաղթի ծավալները գերազանցում են մնացողների հող մշակելու հնարավորությունները, իսկ շուկայական ցածր գների պայմաններում նաև ցանկությունն ու շահագրգռվածությունը[7]: Երբեմն «ռեսուրսներ տրամադրվում են» դրսում՝ աշխատանք ճարելով կամ բնակարան տրամադրելով: Այսինքն, ամեն մի նոր գնացող՝ պոտենցիալ «տանողի» դերում է հանդես գալիս: Այս մեխանիզմն առավել բնորոշ է Ռուսաստան մեկնողների համար: Մինչդեռ ԱՄՆ և հատկապես Եվրոպա մեկնածների մեծ մասը փորձում է տեղավորվել ինքնուրույն՝ ապավինելով մեկնած երկրների սոցիալական ծառայություններին և հիմնականում հանդես գալով փախստականի կարգավիճակով, որը զրկանքների ցանկում ենթադրում է նաև ազգականների և բարեկամների բացակայություն: Փախստական լինելու այս «առավելության» շուրջը ձևավորվեց մի ամբողջ «ինդուստրիա»՝ փախստականի մետրիկա ճարողների կամ դրանց «արտադրողների» ու օգտվողների ստվար բանակով: Արդյունքում ստեղծվեց այնպիսի իրավիճակ, երբ իրական փախստականը նույն ճանապարհով Հայաստանից դուրս գալու դեպքում ունենում է այն հիմնավորված մտավախությունը, որ կարող է հանդիպել իր «կրկնօրինակին» և անկարող լինել ապացուցելու, որ ինքն ինքն է: Այսպես, փախստականներից մեկն իր ծանոթ պաշտոնյայից իմացել էր, որ իր փաստաթղթային տվյալներով Հայաստանից յոթ մարդ են մեկնել, և «անձնագրային երկվորյակին» հանդիպե-

5. *Տե՛ս Հ. Խառատյան, Նշվ. աշխ.:*
6. *Տե՛ս Գ. Շագոյան, Նշվ. աշխ. էջ364:*
7. *Շիրակի Արևիկ գյուղում, ըստ տեղացիների հաշվարկների, հողի վրա արված ծախսերը հազիվ են ծածկվում ստացված բերքի արդյունքներով, այսինքն հողի մշակումը վերածվել է անշահութաբեր մի գործունեության և, ըստ գյուղացիների, իրականացվում է ոչ տնտեսական պատճառներով. «Մնրթի գյուղ կմշակինք, որ չասին՝ թե գյուղ կապրիք ու հող էլ չէք մշակի»: - Տե՛ս «Արտագաղթ և կառավարման խնդիրներ» գիտաժողովի Շիրակի նյութերը:*

լու հավանականությունն այնքան մեծ էր, որ նա գերադասեց մեկնելու համար նոր այլազգիի փաստաթուղթ ճարել:

***Փախստական***

*Փախստականների ազգանունները Հայաստանում վաճառվում են: Սահմանն անցնում են ու ասում, որ իրենք փախստական են: Եվ նրանց ընդունում են հենց մեր փաստաթղթերով: Բոլորն էլ գիտեն: Մեր ծննդյան վկայականները վաճառվում են 50-100 դոլարով, հետո էլ դրանց հիման վրա անձնագրեր են վաճառում: Ես, օրինակ, ինը չեմ վաճառել, բայց իմ անունով յոթ հոգի յոթ երկրներում մարդիկ կան: Ինձ համար հիմա սարսափելի է գնալ ու հանդիպել դրանցից մեկն ու մեկին: Ինքը հիմա երևի փող ունի ու հանգիստ կարող է ինձ «դուրս անել»: Դե գնա ու գլուխ հանի, ապացուցի՝ դու էս, թե դու չես:*

Եթե Եվրոպա և ԱՄՆ մեկնելու և տեղավորվելու ճանապարհը պարտադիր անցնում է բարդ «փաստաթղթային աշխարհով», ապա Ռուսաստան մեկնելն ավելի հեշտ է: Այստեղ տեղափոխվելու նախապայմանն է որևէ ծանոթի, միջնորդի առկայությունը, ով գոնե սկզբնական շրջանում կարող է ապրելու տեղ տրամադրել (հմմտ. «մեկի վրա գնալ» տարածված արտահայտությունը): Թեև ավանդաբար խոպան գնացողներից համեմատաբար քչերը փոխեցին իրենց հիմնական բնակության վայրը, բայց նրանք հաճախ հանդես էին գալիս որպես արտագաղթածներին «տեղավորող» միջնորդ, քանի որ տեղացիների հետ որոշ կապեր ունեին: Հարկ է նշել, որ հայերիս մեջ տարածված արտագնա աշխատանքի, իսկ ժողովրդի մեջ «խոպան գնալու» ավելի լայն բովանդակություն ստացած, սովորույթը վերջին շրջանում մի շարք կարևոր ձևափոխություն ապրեց: Նախ փոխվեց գործունեության բնույթը: Նախկինում խոպան և ամայի տեղերում քաղաքներ կառուցելու փոխարեն, հետ-խորհրդային Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ զգալի կրճատվեցին շինպատվերները, հայ խոպանչիները ստիպված էին նոր աշխատանք փնտրել: Նրանց մի մասը այդպես էլ չկարողացավ վերադառնալ նախկին զբաղմունքին և իրենց ուժերը ներդրին գյուղատնտեսության մեջ, գնացողների զգալի մասը տեղափոխվեց առևտրի ոլորտ: Եվ, վերջապես, ռուսաստանյան առատ շուկան ձգեց նաև հայ մանր արտադրողին, ովքեր հիմնականում կոշկակարության, կարի կամ այլ տիպի կոոպերատիվ-ցեխեր հիմնադրեցին Ռուսաստանում և ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններում[8]: Սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից և քաղաքական ուժերի վերադասավորումից հետո հայերը մեծ մասամբ կորցրեցին արտադրության ոլորտը՝ չկարողանալով դիմանալ ներմուծվող էժան ապրանքի մրցակցությանն ու հաճախ էլ՝ զոհ գնալով

8. *Որպես առանձին խումբ է կարելի նշել «ոսկու գործ անողներին»: Այս «գործն» առավել տարածված էր աղետի գոտում, հատկապես Գյումրիում: Ոսկի պարունակող էլեկտրամասերից ոսկին ձուլելու մի ամբողջ արտադրություն էր ձևավորվել՝ «արդիբաշ» անվանմամբ, բաժանված աշխատանքային փուլերի և դրանք իրականացնող մասնագիտացված խմբերի. մասեր բերողների, դրանք «հալողների», ոսկին «գնողների» և այլոց: «Ոսկու տենդը» տևեց մինչև 1990-ականների կեսերը, մինչև որ սպառվեցին տվյալ տեխնիկական մասերի հասու պաշարները: Բայց այս ընթացքում հասցրեց ձևավորվել մի ուրույն «կենցաղային քիմիայի» միջավայր (որին տիրապետում էին նույնիսկ 5-ամյա երեխաները)՝ իր բառապաշարով հանդերձ (այսպես, «Հայր մեր» աղոթքը չիմացողներից շատերն անգիր ասում էին նրա «արդիբաշյան» տարբերակը):*



տեղական ռեկետից (երբեմն ձևավորված նույն արտագաղթածներից, որոնք ի թիվս այլոց լրացրին նաև հանցագործ աշխարհի շարքերը): Նախկին սեզոնային շինարարական գործունեության նվազումն ի հաշիվ մշտական առևտրական կամ արտադրական գործունեության նպաստեց, որպեսզի աշխատանքային ժամանակավոր միգրացիան վերածվի արտագաղթի՝ երկարատև կամ ընդմիշտ բնակության[9]: Ըստ որոշ վիճակագրական տվյալների, վերջինիս գագաթնակետը 1992-1994 թթ. էին՝ պատերազմական իրավիճակի, արդյունաբերական ձեռնարկությունների փակման և էլեկտրականության խիստ ճգնաժամի տարիներին[10]: Այդ ժամանակաշրջանի առավել բնորոշ բնութագիրն է «էն մութ տարիներն» արտահայտությունը: Բայց, եթե զանգվածային արտագաղթի այս փուլի պատճառները, կարծես թե, ակնհայտ են, ապա արտագաղթի մյուս երկու ալիքների՝ 1995-1997 և 1998-2000 թթ.[11] առաջացումը բազմաթիվ մեկնաբանությունների և գնահատականների (ընդհուպ Հայաստանը դատարկելու հատուկ մշակված քաղաքականության՝ «սպիտակ գենոցիդի»)[12] առիթ դարձավ: Փուլ առ փուլ ալիքների առաջացումը, երբ չկան դրա համար ակնհայտ արտաքին պատճառներ, առիթ է տալիս հիմքեր փնտրել նաև հասարակական ներքին հարաբերությունների տրամաբանության զարգացման մեջ:

Ինչպես հայտնի է, ամեն մի գնացող և դրսում աշխատանքի տեղավորված մարդ ապահովում էր ոչ միայն իրեն, այլև մի խումբ այստեղ մնացած բարեկամների: Սակայն հասարակական փոխօգնությունն ունի որոշ սահմանափակումներ: Արդեն փոխօգնություն բառը մատնանշում է, որ «օգնելը» պետք է լինի երկկողմանի: Նույնիսկ տալ և առնել բառերի հնդեվրոպական արմատները պարունակում են փոխադարձ գործողության իմաստը: Օրինակ, հայերեն «տուր» բառը, որը հնդ. *dō= արմատից է, միաժամանակ նշանակել է և տալ, և վերցնել[13]: Եթե օգնությունն իրականացվում է միակողմանի, դա վաղ թե ուշ հանգեցնելու է այդ հարաբերությունների խզմանը: Այսպես, «մութ տարիների» համախմբմանը, երբ նույնիսկ հեռու (երրորդ, չորրորդ պորտի) ազգականները արտասահմանից գումարներ էին ուղարկում կամ իրենց մոտ աշխատանքի տեղավորում Հայաստանում ապրող ազգա-

9. *Նշենք, որ ինչպես «մշտապես մնալու», այնպես «չգնալու» տրամադրություններն անկայուն են, և, կախված այս կամ այն քաղաքական և տնտեսական իրավիճակից, սկսում են տատանվել: Այսպես, շատ ընտանիքներ, ովքեր վաճառեցին իրենց բնակարանները Հայաստանում չվերադառնալու մտադրությամբ, վերջին շրջանում «կովկասատյաց մթնոլորտի» արդյունքում ստիպված էին բախել վերադարձի ճանապարհը՝ մի խնդիր, որ կարոտ է առանձին ուսումնասիրության:*

10. *Օրինակ հմմտ. Հ. Սարգսյան, Ա. Բոյաջյան, Գյումրու աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության վերլուծման փորձ (1990-2000 թթ.). - Գիտական աշխատություններ III. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2000, էջ 157:*

11. *Տե՛ս նույն տեղում, էջ 157-158:*

12. *Տե՛ս «Արտագաղթ և կառավարման խնդիրներ» գիտարշավի Լոռվա նյութերը. Կանանց ֆոկուս-խումբ:*

13. *Вяч. Вс. Иванов, Происхождение семантического поля славянских слов, обозначающих дар и обмен. - Славянское и балканское языкознание, М., 1975, с. 51-53; З. В. Харатян, Берущие и дающие (армянские обозначения брачной пары в фольклорно-этнографическом контексте). - Историко-этнографические исследования по фольклору. М., 1994, с. 256-266.*

կաններին, հաջորդեց մի փուլ, երբ գոյատևման խնդիրները փորձում էին համատեղ լուծել ընտանիքի կամ բարեկամների ավելի նեղ խմբով: Ինչպես ցույց տվեցին մեր դաշտային նյութերը, ի տարբերություն նախկինում հորեղբոր տղաների կամ եղբայրների արտագնա համատեղ աշխատանքի կազմակերպման սկզբունքի, այժմ ավելի տարածված են աներ-փեսա, փեսա-աներձագ (աշխատանքային տարիքով պայմանավորված), այսինքն խնամիական աշխատանքային միությունները: Փաստորեն, այս ընթացքում հայոց ընտանիքն ապրեց կառուցվածքային կարևոր փոփոխություն՝ նահապետական ազգակցական հորիզոնական կապերից կամ տղամարդկային գծով ազգականների տնտեսական միությունից դեպի խնամի-աներ կամ կնոջ հայրական ընտանիքի հետ տնտեսական միություն: Սակայն այն դեպքերում, երբ սպառվում է նաև այդ մակարդակի օգնության լիմիտը, իսկ գոյատևման միակ ճանապարհը կրկին մնում է դրսում աշխատանք փնտրելը, ընտանիքի մինիմիզացիայի14 այս ընթացքը հասնում է մինչև ընտանեկան ամենափոքր միավորների՝ ամուսինների, ծնող-զավակ կապերին: Արդյունքում այսօր կարելի է հանդիպել դեպքեր, երբ միայնակ մայրն ստիպված է թողնել իր երեխաներին ազգականների մոտ՝ մեկնելով արտագնա աշխատանքի: Իսկ տղամարդկանց զանգվածային բացակայությունը բարձրացնում է ոչ միայն մի ամբողջ սերնդի թերի (միայն կանացի) դաստիարակության խնդիր, այլև երկկնության կամ միաժամանակ երկընտանիքների առկայության հասարակական նոր ընկալման հարցը: Մեր հետազոտած մի շարք գյուղերում բավականին հանդուրժող էին Ռուսաստանում երկրորդ ընտանիքի առկայության փաստի հանդեպ: Հանդիպում էին դեպքեր, երբ մի տղամարդու երկու կանայք և երեխաներն իրար նկատմամբ ոչ միայն համերաշխ, այլ նույնիսկ բարեկամական վերաբերմունք ունեին, ընդհուպ միմյանց հյուր գնալը: Այս երևույթին դրական կամ բացասական գնահատական տալու հարցում ձեռնպահ մնալով ուղղակի նշենք, որ այսպիսի իրավիճակը գոնե չի համապատասխանում հայոց ընտանիքի ավանդական ընկալմանը15: Բայց նույնիսկ երկրորդ ընտանիք կազմելու վտանգի դեպքում, հաճախ հենց կանայք են տնից «քշում» իրենց անգործ (կամ ինչպես հաճախ բանասացներն էին ասում «դիվանագետ», այսինքն, «դիվան-բազմոցին» օրն անցկացնող) ամուսիններին՝ գերադասելով միայնակությունն իր բոլոր դժվարություններով անապահով կամ չքավոր վիճակից:

**Վանաձոր, կանանց ֆոկուս-խումբ.** *«Բոլոր տղամարդիկ դիվանագետ են դարձել: Ասում եմ՝ ինչ ա անում մարդդ, ասում է՝ դիվան ա քշում: Տղամարդը ամբողջ օրը դիվանին նստած, իսկ կինն էլ դրսում ի՞նչ անի»:*

Արտագաղթն ազդել է ամուսնության ինստիտուտի վրա ավելի լայն առումով՝ անդրադառնալով հարս ընտրելու և աղջիկ տալու սկզբունքների վրա: Խորհրդային ժամանակաշրջանում ամուսնացող զույգի իրար ընտրելու մոտեցումը, կարծես, իր տեղն է զիջում երբեմնի ծնողական ընտրությանը: Հայաստանից դեռ չամուսնացած արտագնա աշխատանքների մեկնած տղաները ընտանիք կազմելու համար կամ պիտի հարսնացու ընտրեն այլազգիներից, կամ այդ նպատակով վերադառնան Հայաստան: Միշտ չի հնարավորություն լինում այնքան գումար կուտակել, որ երիտասարդը կարողանա ընդհատի աշխատանքը, վերադառնա Հայաստան և մնա այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է հարսնացու ընտրելու, ամուսնանալու և նոր միայն նորահարսի հետ միասին Հայաստանից մեկնելու համար, թեև այդպիսի դեպքեր հաճախ են հանդիպում: Բայց ժամանակ և գումար տնտեսելու համար, կամ երբեմն էլ ուղղակի ծնողների խնդրանքով, քիչ չեն այն երիտասարդները, ովքեր իրենց հարսնացուի ընտրությունը թողնում են մայրերի նախաձեռնությանն ու ճաշակին: Իսկ երբեմն չեն հասցնում մինչև հարսանիք նույնիսկ ծանոթանալ հարսնացուի հետ: Ինչպես մեզ պատմեցին եզդիական գյուղերից մեկում, այստեղ տեղի են ունեցել նաև «անփեսա հարսանիքներ»: Երբ Հայաստանում կատարվել է հարսանեկան ծեսի հարսի կողմի մասը՝ «աղջիկ տանելը», որը նկարահանվել է տեսախցիկով, իսկ հետո հարսը մեկնել է Մոսկվա, որտեղ փեսայի և նրա այնտեղ բնակվող բարեկամների հետ միասին նշվել է հարսանիքի երկրորդ մասը՝ պսակադրության արարողությամբ: Հարսանիքի երկու մասերը «միացվել» են տեսաֆիլմի միջոցով: Ընդհանրապես տեսախցիկի ներխուժումը ծիսական աշխարհ ստեղծում է ոչ միայն ծիսական մոնտաժի, այլև իրական տարածության հաղթահարման նոր հնարավորություններ: Այսպես, երբեմն հենց տեսաֆիլմ դիտելով են փեսացուներն իրենց կարծիքը կազմում առաջարկվող հարսնացուի թեկնածության մասին: Իսկ ինչ վերաբերվում է հարսի կողմին, ապա նրանց վիճակը լավագույնս նկարագրեց մեր զրուցակից «աղջկատեր» մայրերից մեկը. «Առաջ մինչև յոթ պորտ չիմանային տղուն, աղջիկ չէին տալիս, հիմա դուռն առաջին խփողին աչքերը փակ աղջիկ են տալիս: Էնքան որ ասեն՝ տղան Ռուսաստանում կամ արտասահմանում է ապրում: Իմ բախտը բերել է, որ մեզ լավ տղա է հանդիպել, բայց ինչքան կան, որ պարզվում է էնտեղ ուրիշ կին ունեն ու նույնիսկ երեխաներ, կամ գող ու ավազակ են, գողությամբ են ապրում»: Բոլոր դեպքերում ամուսնությունը, հատկապես աղջիկների համար, դիտվում է արտագաղթելու առավել հեշտ ու ցանկալի հնարավորություն: Մյուս կողմից, քանի որ գրանցում կամ քաղաքացիություն ստանալու ամենակարճ ճանապարհը և ամուսնության միջոցով է, ապա դա բերում է բազմաթիվ կեղծ կամ հաշվենկատ ամուսնությունների մի կողմից, և որպես դրա հետևանք՝ կեղծ կամ իրական ամուսնալուծությունների՝ մյուս կողմից:

Ընդհանրապես յուրաքանչյուր արմատական փոփոխություն իր մեջ պարունակում է հոգեբանական ստրեսի վտանգ, հատկապես եթե այդ փոփոխությունը կապված է առաջին հայացքից աննկատ, բայց իրականում խիստ կարևոր ամենօրյա կենցաղի հետ: Եթե մեծահասակներն ավելի լավ են պատկերացնում այդ փոփոխությունները և հոգեբանորեն նախապատրաստվում են դրանց, ապա երեխաները հայտնվում են ավելի անպաշտպան վիճակում: Նախևառաջ նրանք, որպես կանոն, զրկված են լինում մեկնելու կամ մնալու որոշումն ընդունելու վրա ազդելու հնարավորությունից: Փաստորեն,

*14. Տե՛ս Լ. Աբրահամյան, Ազգ-պետություն, թե՞ ընտանիք-պետություն. Հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները. - Ընտանիքի հետազոտման խնդիրներ, Եր., 2001, էջ12-16:*

*15. Հայկական գյուղերում լինում էին երկկնության դեպքեր, բայց դրանք հասարակության կողմից ընդունվում էին միայն կնոջ չբերության պատճառով երկրորդ կին բերելու պայմանում:*

նրանք ստիպված են հաշտվելու հարազատների բացակայության և օտար միջավայրի հետ: Հակառակ երեխաների ավելի ճկուն հարմարվողականության մասին ընդունված կարծիքի, նրանք երբեմն ապրում են խորը դեպրեսիաներ և հաճախ այդպես էլ չեն համակերպվում նոր իրավիճակի հետ:

**Պատմում է Շիրակի գյուղերից մեկի գյուղապետարանի հաշվապահը.** *«Սկզբից ամուսինն էր Մոսկվայում, որը 6-7 տարի արտագնա աշխատանքի էր մեկնում, հետո ընտանիքին հետը տարավ, արդեն մոտ տարիուկես ինչ այնտեղ են մնում միասին: Նրանց որդին 9-րդ դասարանում է: Չկարողանալով այնտեղ մնալ, նա միայնակ վերադարձել է հետ՝ գյուղ, մնում է հորեղբոր տանը և հրաժարվում է գնալ: Այնտեղ տարիուկես մնալուց հետո հիմա նորից վերադարձել և սովորում է իր դասարանում: Նա պատմում է, որ «էնտեղ լավ բաներ շատ կա, թե պայմանները դպրոցում, թե ընտանիքի եկամուտը, ապրուստը»: Միակ դժվարությունը երեխայի համար կարոտն է ու միջավայրը, ինչպես նա է ասում. «Շատ հայեր կան էնտեղ, բայց ես Հայաստանի հայերին եմ ուզում»: Միակ խնդիրը, որ կարող է ազդել երեխայի որոշմանը՝ մնալ այստեղ թե մեկնել - դա սովորելու խնդիրն է: Նա դեռ չի կողմնորոշվել, թե որտեղ է ուսումը շարունակելու: Նա լավ սովորողներից է»:*

**Ք. Աբովյան, 30 տարեկան երիտասարդ.** *«Եղբայրս գնաց Մոսկվա, իր հինգ տարեկան որդին կես տարի ամեն օր լաց էր լինում, հորն էր ուզում, էդ երեխան ուժասպառ էր եղել, մեզանից էլ էր արդեն ամաչում, գնում էր պառկում ու թաքուն լացում: Հայրը զանգում էր, նա էլ չէր կարողանում խոսել, սա էստեղից է լացում, նա՝ էնտեղից: Մի կերպ հաջողվեց գումար ճարել, էդ երեխուն ուղարկեցինք հոր մոտ, ոնց որ սրտիցս մի քար գցեն, տուն չէի կարողանում մտնել, որ հիշում էի, որ էդ երեխու աչքերին եմ նայելու:*

Միայնակ մնացած տարիքավոր ծնողների մահվան որոշ դեպքեր հարևաններն ու բարեկամները բացատրում են մի բառով՝ կարոտ: Դժվար է այլ լեզուներում գտնել այս բառի լիարժեք թարգմանությունը: Առավել հարմար թարգմանությունը կլիներ «նոստալգիա» բառը՝ որը հունարեն nostos՝ վերադարձ տուն և algos՝ տառապանք, ցավ բառերից է կազմված: Սակայն հայերենում դրա ճիշտ թարգմանությունը կարոտախտ բառն է, որն ինչ-որ այլ տեղից վերադառնալու անհաղթահարելի ցանկության իմաստն ունի, մինչդեռ հայերեն «կարոտն» ավելի ընդհանուր բովանդակությամբ է հագեցած, և այդ զգացմունքի զոհերն են ոչ միայն և ոչ այնքան մեկնածները, որքան մնացողները՝ տարիքավոր ծնողներն ու երեխաները: Տվյալ իրավիճակում «կարոտը» հայերիս մոտ ծեռք է բերել ուղղակի բժշկական ախտորոշման իմաստ և բաժանված ընտանիքների մշտական վիճակ:

Այսպիսով, վերջին տաս տարիների արտագաղթը, բացի պետության և տնտեսության զարգացման համար հիմնականում բացասական ազդեցության (հմմտ. վիճակագրական տվյալները՝ կապված հանրապետության միջին տարիքի, մահացածության ցուցանիշի բարձրացման և ծնելիության նվազեցման հետ) նաև որոշակիորեն միջամտել է ներընտանեկան և հասարակական հարաբերություններին՝ երբեմն դրանք հանգեցնելով որակապես նոր վիճակի, ինչն առանձին ուսումնասիրության կարիք ունի:



# ԼԵՀԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԲԵՎԵՌՆԵՐԸ

*ԹՈՄԱՍ ՄԱՐՉԻՆՅԱԿ*
*Կոպեռնիկոսի անվան համալսարանի*
*Սոցիոլոգիայի ինստիտուտ,*
*Լեհաստան*

Սոցիալ-տնտեսական պրոբլեմների պատճառով վերջին տասնամյակում շատ հայեր ստիպված են եղել հեռանալ հայրենիքից և նրա սահմաններից դուրս, մասնավորապես նաև Լեհաստանում ընտանիքը պահելու միջոցներ փնտրել: Նրանց թիվը, ամենայն հավանականությամբ, Լեհաստանում անցնում է 100.000-ից, և Եվրոպայում, Ռուսաստանից ու Ֆրանսիայից հետո, լեհահայերը հայկական սփյուռքի թվական ցուցանիշներով երրորդ տեղում են: Նրանք չափազանց կարոտում են իրենց հայրենիքը, ծտերիմներին, բայց այլ ելք չունեն: Շատ ցանկալի է, որ այս տխուր իրականությունը վերջանա և հպարտ ու աշխատասեր, հայրենասեր հայերը կարողանան իրենց հայրենիքում մնալ: Այս պահին, սակայն, Լեհաստանում նրանց մեծ մասը զբաղվում է առևտրով, բնականաբար նրանցից շատերը շուկաներում են: «Հայ» անվլիս միջին լեհը պատկերացնում է ետխորհրդային Հայաստանից դուրս եկած և շուկայում առևտուր անող կամ, լավագույն դեպքում, սեփական ռեստորան ունեցող մեկին:

Այս «նոր հայերից» զատ, սակայն, Լեհաստանում արդեն մի քանի հարյուրամյակ ապրում են դեռևս միջնադարում հաստատված հայեր: Հայերը համալեհական մշակույթում հին լեհահայերի ներդրմամբ, լեհահայ մշակութային շատ գործիչներով կարող են հպարտանալ: Ժողովրդական կրթության հանձնաժողովի հիմնադիր ու քարտուղար Գժեյոշ Պիրամովիչին, Շոպենի ուսուցիչ Կարոլ Միկուլին նախապատերազմական հռչակավոր նկարիչ Թեոդոր Ակսենտովիչին Լեհաստանում հաճախ են հիշում: Վերջինիս դուստրերը Աննան և Մալգոժատան ցայսօր Հայկական մշակույթի վարշավյան խմբակի ակտիվ անդամներ են: Յուլիուշա Սլովացկեգոյի երակներում հայկական արյուն է հոսում, հիշվում է Կրակովի բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկին իր անունը տված պատմաբան Սադոկա Բարոնչայի հայկական ծագումը: Այս ցուցակը երկար է: Այսօր նույնպես Լեհաստանում հայկական նոր սփյուռքի մի քանի ներկայացուցիչներ զբաղվում են գիտությամբ ու մշակույթով:

Ազնվականական Լեհաստանի արևելյան գավառներում շատ ժողովուրդներ էին ապրում, այդ թվում հայերը: Վերջիններս նախապես բնակություն էին հաստատել Լվովում, Լուցկում, Կամենեցու Պոդոլսկիում և Վլադիմիժու Վոլընսկիում: Փոքր ինչ ուշ ձևավորվեցին Բալտայի, Բրոդի, Բժեժանի, Խորոդենկի, Յազլովեցի, Կիևի, Կուտի, Լըսեցի, Մոգիլև Պոդոլսկի, Օբերտինի, Պոդխայցի, Ռաշկովի, Ստանիսլավովի, Շնիատինի, Տըշմենիցի, Զամոշչի, Զլոչովի և Ժուլկովի հայկական համայնքները: Այսօր այդ բնակավայրերը Ուկրաինայում են: Հայերի նախկին բնակության միայն ամենաարևմտյան կե-

տը՝ Զամոշչն է այսօր գտնվում Լեհաստանի տարածքում: Այս քաղաքի համար հայկական համայնքի նշանակության մասին է խոսում այն փաստը, որ, ինչպես և Լվովում, այստեղ նույնպես շուկայից դուրս եկող փողոցը, որի վրա բնակվում էին հարուստ վաճառականները, կոչվում է «հայկական»: Փողոցի վրա ցայսօր պահպանվել են որոշ հայկական կառույցներ: Այս համայնքը ձևավորվել էր 19 դարում: Դրա համար հայերը պետք է երախտապարտ լինեն գրաֆ Յան Զամոյսկեցյին, որը դեռևս 1585թ. թույլ էր տվել հայերին Լվովում և Կամինեցու Պոդոլսկիում ինքնավարություն ունենալ և զբաղվել մասնավոր ձեռներեցությամբ: Այս ավանդույթը հիշելով է, որ 2000թ. փետրվարին Հայաստանի և այս քաղաքի միջև կնքվել է մշակութային և տնտեսական կապերի համաձայնագիր:

Լեհաստանի շարունակ փոփոխվող սահմաններում հայերը հաստատվել և տեղաշարժվել են անընդհատ, բայց այդ անընդհատությունը կարելի է ուրվագծել երեք փուլով: Առաջին փուլը վերոհիշյալ, միջնադարում սկսված և 18դ. ավարտված փուլն է: Երկրորդը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ուկրաինային մնացած տարածքից հայերի «հայրենադարձության» փուլն է, որի ընթացքում լեհահայերի մոտ 99 տոկոսը վերաբնակվեց Լեհաստանի ներկայիս սահմաններում, և երրորդը՝ այսօրվա Լեհաստանում «նոր հայերի» հաստատվելու շրջանի սկիզբն է:

Համարյա ամբողջովին լեհացած հայերի երկրորդ ալիքը, իրենց նախկին բնակության վայրերից հեռանալով, հաստատվել են Վիտովում, Բժեգում, Գլիվիցայում, Կատովիցայում, Օրորնիկա Շլոնսկում, Օլավիեում, Օպոլում, Ստշելինիեում, Վրոցլավում և Զաբժում: Լեռնային և Ցածրավայրային Շլոնսկում այս տեղափոխությունները հաստատում են ետպատերազմական վերաբնակեցումների օրինաչափությունը: Այդ տարիներին հայերը բնակություն հաստատեցին նաև Կրակովում, Վարշավայում և Տրույմեշչեում: Շատ փոքր խմբեր հաստատվեցին նաև Լյուբլինում, Լոձում, Օլշտինում, Պոզնանում, Շչեցինում, ժելոնա Գորեում, Զակոպանեում: Առաջին և երկրորդ ալիքների հետնորդների քանակն այսօր հասնում է հավանաբար մոտ 15000 մարդու:

Ինչ վերաբերվում է հայերի երրորդ ալիքին, ապա 90-ական թթ. կեսերին Հայաստանից Լեհաստանում գտնվել է մոտավորապես 200000 մարդ: Այսօր այդ թիվը կարող է կրկնակի պակաս լինել, քանի որ առևտուրը Լեհաստանում կտրուկ նվազել է: Կրակովում, սակայն, կա մոտ 100 ընտանիք:

Լեհաստանում մոտ 400 հայեր ունեն երկրում ապրելու իրավունք, սակայն կարելի է ենթադրել, որ շատ հայեր կարող են լեհուհիների հետ ամուսնանալ, ինչը, հավանաբար, կհարկադրի լեհական իշխանություններին նրանց համար պարզեցնել Լեհաստանում ապրելու իրավունքի և քաղաքացիության երկարատև ու դժվարին գործընթացը:

Հայերի բնակեցման յուրաքանչյուր ալիք ուղեկցվել է նոր համայնքների կազմավորմամբ: Սովորաբար «հին» ու «նոր» հայերի շփումների հաստատման համար ժամանակի որոշ անհրաժեշտություն է եղել: Այսօր այդ իրավիճակը փոխվում է: Ինչպես «հին», այնպես էլ «նոր» հայերը հպարտորեն ընդգծում են իրենց կրթական ու մշակութային բարձր մակարդակը: Նրանք մեծ



ղառնությամբ են վերաբերվում այն փաստին, որ չնայած Լեհաստանը ստորագրել է ներգաղթածների (նույնիսկ անլեգալ) երեխաների կրթության երաշխիքներն ապահովող միջազգային պարտավորությունները, իրականում շատ հաճախ խոչընդոտներ են ստեղծվում: Սակայն երբեմն, ուշադրություն չդարձնելով գրանցման բացակայությանը և ընտանիքի՝ ապրելու ոչ օրինական կարգավիճակին, որոշ դպրոցների տնօրեններ դպրոցներում ընդունում են հայ երեխաներին, ինչ հնարավորություն է տալիս նրանց գոնե միջին մակարդակի անվճար կրթություն ստանալ:

1957թ Կրակովի հայերը անհաջող փորձ էին արել սեփական կրթօջախ ստեղծելու, և մինչ այն պաշտոնապես կհաստատվեր (պաշտոնապես հաստատվեց, ինչպես ստորև կտեսնենք, միայն 1990թ.), գործում էր «Հայ մշակույթով հետաքրքրվող ժողովրդական ընկերության խմբի» թիկունքի տակ: Վերջինս Վարշավայում, Գդանսկում և Կրակովում դարձավ երեք փոքրիկ համայնքների ձևավորման սկիզբը (մոտ 100 ընտանիք). Վարշավայում հիմնադրվեց 1980թ., Գդանսկում՝ 1984թ.: Լեհական Սեյմի կողմից «Ընկերությունների» մասին օրենքի հաստատումից հետո միայն (1989թ.) Կրակովի հայ գործիչները ստեղծեցին 1990թ. վոևվոդների դատարանով հաստատված Հայկական մշակութային ընկերությունը: Այն ղեկավարվում է խորհրդի կողմից, որի կազմի մեջ մտնում են Աղամ Տերլեցկին՝ նախագահ, Անտոնի Ամիրովիչը՝ քարտուղար, Աղամ Մույեցկը՝ գանձապահ, Վահե Ամիրբեկյանը, Միքայել Նազլույանը, Մաչեյ Բոխոշյեվիչը և Վոյչեխ Զախարիաշյեվիչը: Նրանք ընտրվում են չորս տարին մեկ Ընկերության ընդհանուր ժողովում: Վերջին ընտրությունը տեղի է ունեցել 2002թ. սեպտեմբերին: Այս պահին կազմակերպությունն ունի 81 անդամ: Սակայն սա էթնիկ կազմակերպություն չէ. նրա անդամ կարող է դառնալ Հայկական մշակույթով հետաքրքրվող ցանկացած մարդ: Անդամները հանդիպում են ամիսը մեկ անգամ և արդեն կազմակերպել են հայերի համալեհական չորս հանդիպում (1991, 1992, 1994, 1998թթ.): 1999թ. նոյեմբերին 27-ի կրակովյան հանդիպման ժամանակ սկսվեց գոյություն ունեցող բոլոր հայկական կազմակերպությունների միավորման գործընթացը, որը նախատեսված էր ավարտել 2000թ. 1-ին եռամսյակում: Հայկական մշակութային ընկերության կրակովյան բաժանմունքը հովանավորում է մի քանի տասնյակ ուսանողների, իսկ վերջերս «նոր հայերի» առկայությունը Լեհաստանում սկիզբ դրեց նոր, պաշտոնական - քաղաքական երկկողմանի հարաբերություններին, ինչ հնարավոր դարձրեց Լեհաստանում հայկական դեսպանատան բացումը:

Լեհահայերի համար միշտ բացառիկ կարևորություն են ունեցել կրոնական գործիչները: Առափնյակում հայ-լեհական արևելյան ավանդույթները շարունակող ժառանգորդ չգտնվեց: Կրակովում որոշ հույսեր էին կապվում հայկական ծագմամբ կապլանի՝ Թադեուշ Զալեսկի-Իսակովիչի հետ, որը, սակայն, 80-ական թթ. սկզբին իր հայացքների համար հետապնդումների ենթարկվելու պատճառով չկարողացավ կրթությունը շարունակել: Լեհահայերի կրոնական նշանակության երկրորդ կենտրոնը նույնպես Կրակովում էր՝ պատերազմից հետո բացված ծխական դպրոցը: Այստեղ ղեկավարը Ֆրանցիշեկ Յակուբովիչն էր: 1973թ. նա վախճանվեց, սակայն ընդհուպ մինչև 1999թ. ա-

շուն այստեղ շարունակում էին աղոթել փոքրիկ գոթական տաճարում Սուրբ Իծեգոյում: 1985թ. սկսած հայ կապլանի գործառույթը ժառանգեց Գլիվիցկայից ժամանած Ֆիլիպիակը: Գլիվիցկայում առանձին համայնք ձևավորեց վերաբնակված հայերի Ժչպանյան խումբը: 1946թ. այժմ Ուկրաինայում գտնվող Լըշցուից ծածուկ հենց այստեղ տեղափոխեցին Սուրբ Մարիամ Աստվածածնի հրաշագործ պատկերը: 1989թ. տեղի ունեցավ պատմական իրադարձություն. Գլիվիցկայում մի քանի հայուրամյակի ընդհատումից հետո տեղի ունեցավ հայածես պատարագ: Սրա պատճառը հիշյալ սրբապատկերի պապական պսակով թագադրումն էր: Պսակը գողացվել էր 1985թ. սեպտեմբերի 17-ին: Այդ շրջանում Լեհաստանում Խորհրդային Հայաստանից շատ քիչ հայեր կային, և այդ մասին իմացան միայն կաթոլիկ մամուլին հետևող հայրենադարձներն ու նրանց սերունդները: Պատարագը կատարում էր Յան Պյոտր 12-րդ Կասպարյանը, հայ կաթոլիկների պատրիարք-կաթողիկոսը, ներկա էր նաև այսօրվա կարդինալ Յուզեֆ Գլեմպը, լեհահայերի փաստական պատրիարքը Լեհաստանում: Թագադրված Սրբապատկերը Սուրբ Երրորդության տաճարից հանդիսավորապես դուրս տարվեց, մի քանի ժամ տևող քայլարշավով հանդիսավոր պտույտ կատարվեց փողոցներով և վերադարձվեց նույն տեղը: Ցավոք, Երևանից հրավիրված երգչախումբը չկարողացավ ժամանել. մահմեդական Ադրբեջանի հետ պատերազմի թեժ շրջանն էր և երգչախմբի մուտքը օդանավակայանում կասեցվեց: Հանդիսավոր թագադրության հաջորդ օրը պատրիարք-կաթողիկոսը Գլիվիցկայի հռոմեական կաթոլիկ տաճարում հանդիպեց նաև լեհահպատակ հայերի հետ:

Հայերի ներկայիս դավանանքների մասին խոսելիս անհնար է չհիշել Ուկրաինայում մնացած խմբի մասին: Ինչպես ասվեց, պատերազմից հետո հայերի 99 տոկոսը վերաբնակվեց ներկայիս Լեհաստանում: Ուկրաինայի տարածքում մնացած սրբազան գանձերն ու արխիվը ոչնչացվեցին խորհրդային իշխանության տարիներին: Խորհրդային տարիներին Ուկրաինայում հաստատվեցին Հայաստանի շատ քաղաքացիներ: Սրանք ոչ մի ընդհանուր բան չունեին երբեմնի լեհահայերի հետ: Նրանք հայ ժողովրդի ներկայության բացառիկ հետքեր պահպանած մեծ քաղաքներում՝ Օդեսայում, Ղրիմում, Լվովում ստեղծեցին նոր փոքրիկ համայնքներ: Օդեսայում 1994թ. կատարվեց հայկական նոր եկեղեցու օծումը: Նորաբնակները ջանում էին տեր դառնալ Հայկական փողոցի վերանորոգված եկեղեցուն, սակայն դա հաջողվեց միայն ձևականորեն: Պատարագն ընթանում է եկեղեցու բակում, իսկ ներսում արվեստի ստեղծագործությունների պահեստ է: Հայկական եկեղեցու անդամները և Ուկրաինայի թեմի էպիսկոպոսը գտնվում են Լվովում: Հենց այդ պատճառով էլ անմիջական կապեր չկան լեհահայության ավանդույթների ժառանգորդների հետ, որոնք տեղափոխվել են արևմուտք:

1997թ., յուրախություն Լեհաստանում ապրող հայերի, Վարշավայում Աշոտ Ավակիմյանի գլխավորությամբ բացվեց հայկական դեսպանատուն: Հայկական դեսպանատունը հայերին հնարավորություն է տալիս նրանց որոշ պրոբլեմներ լուծել՝ հրավերի ստացում, մշտական քարտեր, քաղաքացիության ստացում...

1999թ. հուլիսի 14-ին Լեհաստան այցելեց Հայաստանի Նախագահ Ռ.Քո-



չարյանը: Թղթակիցների հետ հանդիպման ժամանակ նա պատմեց Լեհաստանում գտնվող հայերի մասին: Ռ.Քոչարյանը մի քանի խոշոր քաղաքներ այցելեց Լեհաստանում՝ Վարշավա, Կրակով: 2001թ. նոյեմբերին բարեկամական այցով Հայաստան մեկնեց Լեհաստանի Նախագահ Ա.Կվաշնևսկին իր տիկնոջ հետ, Նախագահ Քոչարյանի հետ միասին նշեցին նրա ծննդյան օրը: 2002թ. Ադամ Տեսլեխը և Թոմաս Մարչինյակը մասնակցեցին «Հայաստան-Սփյուռք» համաժողովին: Լեհաստանի հետ կապերն իրականացնելու համար Հայաստանում գործում է «Պոլոնիա» խումբը, որտեղ շատ հարցեր են վճռվում: 2002թ. Երևանում Լեհական դեսպանատունը գլխավորում է դեսպան Բոգուսլավ Սելեքը:

# ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

## *ԳՐԱՆՑՎԵԼ ԵՆ 2001-2002ԹԹ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԵԼ Է ՀԱՐՅՈՒՐԻՑ ԱՎԵԼԻ ԶՐՈՒՅՑ, ՈՐՈՆՑ ՁԱՅՆԵՐԻԶՆԵՐՆ ՈՒ ՏԵՔՍՏԵՐԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ԵՆ «ԱԶԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի ԱՐԽԻՎՈՒՄ: ԱՅՍ ԳՐՔՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏՐՎԵԼ ԵՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ, ՁԵՎԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ: ԲՈԼՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԸ ՔԱՂՎԱԾ ԵՆ ՏԵՔՍՏԵՐԻՑ, ԵՎ ԱՐԴԵՆ ԻՍԿ ՎԵՐՆԱԳՐԵՐԸ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ԱՅԴ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ: ԴՐԱՆՔ ՀԱՐՈՒՍՏ ՆՅՈՒԹ ԵՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ, ԱՅԼԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ: ԴՐԱՆՑ ՄԵՋ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ ՆՅՈՒԹԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՉԷ, ՈՐ ՆԵՐԱՌՎԱԾ Է ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ ՄԱՏՆԱՆՇԵԼՈՒՑ ԶԱՏ ԴՐԱՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՂԲՅՈՒՐ ԾԱՌԱՅԵԼ ԱՅԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ:



# ԵԹԵ ՄԱՐԴՈՒ ԴՈՒԽԸ ՏԵՂՆ Ա, ՆԱ ՁԱՅՆ ԿԲԱՐՁՐԱՑՆԻ, ԲԱՅՑ ՄԵՐ ԴՈՒԽԸ ԿՈՏՐԱԾ Ա

*Զրույցը տեղի է ունեցել 2002թ. հունվարին, Վանաձորի թաղամաս, գյուղի կարգավիճակ ունեցող Մեղրուտում: Զրույցը կանանց մի խմբի հետ է, որոնց ամուսիններն ու որդիները Ռուսաստանում են: Զրույցին ավարտին խմբին միացել է զրուցակից կանանցից մեկի ամուսինը, որի հետ նույնպես որոշ չափով քննարկվել է շոշափվող թեման: Զրույցին զրուցավարի մասնակցությունը նվազագույն է: Տեքստում գրանցված (1), (2), (3) և այլ թվերը նշանակում են 1-ին կին, 2-րդ կին, 3-րդ կին...*

**(1)** - Լոռվա մարզի, Գուգարքի շրջանի նախկին շրջկենտրոնի շենքերից ենք, որոնք առայժմ գտնվում են անսարք վիճակում: Շենքը դրված է ուսիլենու[1] տակ արդեն 12 տարի, բայց մինչև հիմա ոչ մի աշխատանք չի տարվում: Ստիպողական մարդկանց շենքից հանել են, շինվերանորոգման աշխատանքներ սկսել ու կիսատ թողել, և դա տևել ա 11 տարի: 11 տարի նայում ենք կռանին, թե մի օր կառավարությունը կբարեհաճի մարդ ուղարկել ստեղ աշխատանքները սկսելու, բայց ոչ մի բան: Մարդիկ ինչքա՞ն կարան դոմիկներում մնան, թող մտածեն վերադաս մարմինները: Բերեք փոխանակում անենք թեկուզ մի շաբաթով, թող իրանք գան, տեսնենք, թե մի շաբաթով կարո՞ղ են դոմիկում ապրել: Ոչ: Եթե ինքը էս ծմեռվա շրջանում կարողանա էստեղ գոնե մի շաբաթ ապրել, մենք էլ խոսելու ոչ մի բան չունենք, ուրեմն կարող ենք էլի դիմանալ: Ընտանիքում 4 անձ ենք՝ տղա, աղջիկ, հայր, մայր: երկուսը՝ բարձրագույն կրթությամբ, երկուսն էլ՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ: Բարձրագույնը՝ ամուսինս ա ու աղջիկս, իսկ ես ու տղաս միջնակարգ մասնագիտական կրթություն ունենք: Ամուսինս ավարտել ա պոլիտեխնիկը ու 12 տարի անգործ նստած ա:

- Մինչև էդ ի՞նչ էր աշխատում:

**(1)** - Մինչև էդ աշխատել ա շինվերանորոգման տեղամասում պրարաբ, այնուհետև գնացել ա մեր գյուղը՝ Սովխոզի դիրեկտոր աշխատել երկու տարի, իսկ սովխոզները ցրվելուց հետո մնացել ա անաշխատանք: Հետո եկել ա շրջկենտրոնում ԲԸԳ-ի պետ ա աշխատել, շրջկոպում՝ շինարարության բաժնի ինժեներ: Փակվելով, փակվելով էդ աշխատանքները՝ մնացել ա դուրս ու 10 տարի ա տունը նստած ա, 1991-ից մինչև հիմա անգործ ա: Ինչքա՞ն կարելի է: Մի քանի անգամ գնացել ա արտագնա աշխատանքի, անհաջող էլ ա էկել, ասենք, հաջող էլ ա էկել, նայած տարին ինչ ձևի ա: Գնում էր որպես շինարար: Ինքը բրիգադ ա տարել, պատահել ա դատարկ են էկել, ընդհանրապես դատարկ, իսկ պատահել ա ինչ-որ չափով գումար են բերել, կարելի է ա-

---

*1. Ուժեղացման,ամրացման: Երկրաշարժից տուժած որոշ շենքեր չքանդվեցին, բայց վթարային դառնալու պատճառով դրանց բնակիչներին երկրաշարժից հետո տեղավորեցին ժամանակավոր կացարաններում՝ մինչև շենքերը կամրացվեին: Զրուցակիցը նկատի ունի այս հանգամանքը:*

սել միայն հացի փող: Տղաս էլ դպրոցից հետո գնացել ծառայել ա, ծառայությունից էկել ա, ոչ մի աշխատանք, երկու տարի դոմիկի չորս դռնով ֆռռացել ա, ոչ մի տեղ, ոչ մի աշխատանք: Ստիպված բռնել ա դրսի ճանապարհը, մի տարի ա Մոսկվա ա: Ու ոչ մի բան չգիտենք էլ, պատահում ա, ամիսներով չի զանգում, ո՞վ գիտի թե էնտեղ ի՞նչ վիճակ ա, ո՞նց ա: Աղջիկս ուսուցչուհի ա աշխատում, ուսուցչուհու աշխատավարձը ի՞նչ պիտի լինի: Ինքն իրան պահում ա, 26 տարեկան ա:

- Ամուսնացած չի՞:

**(1)** - Չէ, ի՞նչ ամուսնության մասին ա խոսքը: Ամուսնացածները էսօր սկի չեն կարող հաց հայթայթեն, ի՞նչ ամուսնության մասին կարելի ա խոսել, նույնիսկ չեն էլ մտածում դրա մասին: Էդող կառավարությունը մտածի, որ վաղըմյուս օրը պիտի մնա առանց ժողովուրդ: Ինչի՞ վրա է ղեկավարելու, ավերակների վրա՞, թող ղեկավարի: Վաղը չէ, մյուս օրը, ում ձեռքին էլ փող լինի էսօրվա դրությամբ, կթողնի ու կգնա, որովհետև զզված են, կառավարությունից հիասթափված: Որ հետ ես նայում՝ ուղղակի լացդ գալիս ա, որ ինչքա՞ն կարան մարդուն ստիպեն, որ իրա հայրենիքից սենց զզված գնա: Վերջապես մարդ ես, ուզում ես գոնե առաջին կենսական պահանջներդ բավարարես: Ինչքա՞ն ա կարելի մարդուն լցնել երկաթե վագոնն ու ասել՝ գնա: Ավելի լավ ա մի հատ թույն բաց թողեն ու սպանեն, էլի: Պիտի մարդուն անպայման ֆիզիկապե՞ս ոչնչացնեն, իրանց համար հոգեպես ոչնչացնելը ավելի լավ ա: Ու զարմանում ես, որ ինչքա՞ն կարելի ա հետ չնայել, հլե մի հատ չեն սթափվում, հետ նայեն, ասեն, հլե նայենք տեսնենք, ժողովուրդը ինչո՞վ ա ապրում, ի՞նչ ա ստանում: Տարիներով աշխատավարձ չես տալիս: Ինչքա՞ն կարելի ա մարդուն աշխատավարձ չտալ, ո՞ր երկրում ա էդպես: Կա՞ էդպիսի մի երկիր, որտեղ մարդուն աշխատացնեն ու աշխատավարձ չտան, մենակ Հայաստանն ա, ուրիշ տեղ տենց բան չկա:

- Ձեր ամուսինը քանի՞ տարեկան է:

**(1)** - 46 տարեկան: Ու վերջին 10 տարիները, որ իր ամենալավ տարիներն են, ոչ մի բան չի անում: Ի՞նչ կարա անի: Մի քանի անգամ փորձել ա առևտրով զբաղվել, բայց դա չի ստացվում էդ մարդու մոտ, ամեն մարդ չէ, որ ճարպիկ ա, որ առևտուր անի, դա բոլորի համար չէ: Ինքը քանի անգամ փորձել ա, շատ-շատ, որ ասեմ՝ չի պրպըտացել, որ աշխատանք անի, սուտ կըլի: Ո՞նց կարող ա սովխոզում դիրեկտոր աշխատած մարդը չիմանա, կամ 10 տարի պրարաբ աշխատած մարդը հանգիստ խղճով տանը նստի, հոգեկան հիվանդ են դարձրել արդեն: Բայց էսօրվա դրությամբ աշխարհում կարող ես մենակ առևտուր անել, և պիտի փող ունենաս, որ ներդնես: Որտեղի՞ց փող ստեղծես, փողի գլխին նենց են տվել, մարդիկ միլիոնավոր գումարներ ունեին, բայց էսօր մի 10 դրամ էլ չունեն, որ աշխատեն, ինֆլյացիա գնաց փողի, ոչ մի կոմպենսացիա, ոչ մի բան չտվեցին: Այսինքն՝ իրենից կտրեցին, որ ոչ մեկը չկարողանա գլուխ բարձրացնի, ով էլ հանկարծ գլուխ կբարձրացնի, մի ձևով, անընդհատ աշխատում են, որ ճնշեն: Ո՞նց թե կարելի ա, որ ինչ-որ մեկը ապրի: Դա կառավարությանը վիգոդնի[2] չի, որ որևէ մեկը ապրի:

*2. Ձեռնտու:*



- Ինչու՞ վիգոդնի չի:

**(1)** - Ո՞նց կարող ա իրան վիգոդնի լինի, որ մեկը հանկարծ ապրի, իրանից առաջ ընկնի, ձայն կբարձրացնի: Եթե մարդու դուխը տեղն ա, նա ձայն կբարձրացնի: 1989-90 թթ-ին տեսա՞ր ոնց էին, կերած-խմած կոմունիստական ժամանակաշրջանում ապրած ժողովուրդ էին, տեսա՞ր ոնց գլուխ բարձրացրին ու միանգամից հեղաշրջում արեցին: Իսկ էսօրվա ժողովուրդը սկի չի կարող ոտները քաշ տա, նա ի՞նչ գլուխ կբարձրացնի: Մարդու դուխը նենց են կոտրում, որ սկի աչքերն էլ չի բարձրացնում: Մարդ ամաչում ա, որ էս գոմից ա դուրս գալիս, ասելն էլ ա ամոթ, խսկականից գոմի տպավորություն ա թողնում: Որ աղջիկ ուզելու լինես, գնաս մեկի դուռը, կասի լսի, դոմիկում ապրող մարդը երևի աշխարհի ամենաանճար մարդն ա, դրան ինչ աղջիկ տաս, կամ ինչ աղջիկ վերցնես նրանից:

Բայց թե իրանց հեչ վեջները չի, թավալելով ապրում են, իրանց համար վայելում են: Որ մտնում ես Երևան, էդ ի՞նչ տներ են սարքած, այ խղճըներդ կտրի, բա էս մարդկանց մասին ո՞վ պիտի մտածի, որ ամբողջ օրը դոմիկներում են: Էդ տներն էլ նոր են սարքած, և երևի շատը հենց մեր դոմիկները սարքելու հաշվին: Մարդը 15 տարի դոմիկներում որ ապրի, մարդու ամենալավ տարիները, նրանից ի՞նչ կմնա: Չէ՞ որ մինչև 40 տարեկանը մարդու ամենալավ տարիներն են: Մենք անցկացրինք, ոչինչ, բա մեր էրեխեքը: Գլուխն առել կորել են: Էս մեր կենտրոնը, որ նայեիր, սաղ մի չափսի էրեխեք էին, հավեսներդ գալիս էր, ինչքան էրեխա էին, երևի մի 20-25 էրեխա: Անունները «hզոր» էին դրել մինչև բանակ գնալը: Իսկ հիմա դուրս եկեք, նայեք, փնտրեք, մեկը չկա: Սաղ նենց են գլուխ առել կորել: Ո՞նց ա կարելի երեխանցը իրանց տնից, տեղից, մորից, հորից քշել ռուսաստանները, ու սաղն էլ էնտեղ մի բանով են ապրում... Մարդ ենք, չէ՞, վերջապես, ամեն ձևի հեղինակազրկեցին: Էստեղի ժողովուրդն էլ էսպես խեղճ կապրի: Ան, քերել են իբր ամրացնում են շենքը, պարզ է՝ կտուրը մի բան կանեն, փողերը կդնեն գրպանները, իսկ ժողովուրդը էդպես էլ էս դոմիկներում կմնա: Յուրաքանչյուր պաշտոնի նստած մարդ առաջին հերթին մտածում ա, թե ինչքան գրպանը դնի: Բա մի հատ հետ նայեք, էլի, էդ գրպանը դրածը վաղը չէ մյուս օրը ու՞մ հետ էս վայելելու: Մեկ ա, քո էրեխեն դա չի վայելելու, մարդ չի մնալու էստեղ, էգուց մյուս օրը սալդատ[3] էլ չենք ունենալու: Մի հատ եկեք նայենք, թե էդ էստեղի տղերը քանի՞ տղա էին ունենալու, սենց էկեք մտածենք, էլի, որ մի 10-15 տարի հետո նրանք պիտի կռվեին, կանգնեին, որ մեր երկիրը նորից պաշտպանեին, բայց չկան, մարդ չկա: Կնանիք կան 4-5 տարուց ավել անմարդ էստեղ նստած են: Դա ի՞նչ ա նշանակում, որ գնացել են ու էնտեղից չեն կարում գան: Մի էրկու կոպեկ փող են դրկում, մարդիկ մենակ հաց են առնում: Մարդիկ կան, ընտանիքը թողած, էրեխեն արդեն 10-ն ավարտել ա, իսկ էդ էրեխուն ինքը 7-8 տարեկան թողել գնացել ա ու չի կարողանում գա, որ տենա իր էրեխուն: Որ խոսելու տեղ լիներ... Բժիշկ մասնագետ մարդիկ կան, որ ես ամաչում եմ, ուղղակի գետինն եմ մտնում, երբ դրանց եմ նայում: Էդ մարդիկ 7-8 տարի սովորել են: Ախր էդ սովորելը հեշտ չի, հեշտ լիներ՝ մի դասարանում 1-2 գերազանցիկ չէր լինի.

*3. Զինվոր:*

տասը կլինեին: Մարդիկ սովորել, հասել են էդ աստիճանին, հիմա մի տարի փող չեն ստանում, ամաչում ա, որ իր քրնձոտ շորերով մտնի հասարակության մեջ: Ամեն ինչ անում են, թե վեշդ առ, ստեղից գնա: Ստել ենք մարզպետի մոտ, ասում ենք, լավ, գոնե ասեք, թե տներն կսարքե՞ք, որ գոնե հույս ունենանք, իմանանք, որ մեր տունը 7-8 տարի հետո կունենանք: Ինքը թե՝ քող փող տան, սարքեմ: Ասում ա՝ ճամփեքը բաց, որդ որտեղ ուզում էք, վեր կացեք ու գնացեք: Երեխեքիս արև, մնացի նայելով, ամոթից գետինն եմ մտնում, որ էսօր իմ կառավարության ներկայացուցիչը սենց ա: Էլ ի՞նչ ազգի մասին խոսալ, ի՞նչ երեխու մասին խոսալ, ի՞նչ մտածել, որ մեկին տուն կտան, մյուսին չեն տա: Ո՞վ ա տեսել, որ մերը մղկտա ստեղից էնտեղ, կամ երեխան պահել, մեծացրել ա ու մի գալով պատահական մարդուն աղջիկ տան: Որ պատահական մարդը գալիս ասում ա «ուզում եմ էս աղջկան», էլ չեն հարցնում՝ ո՞վ ա, ի՞նչ ա, մենակ վեր են կենում տան, որ ստեղից գնա: Էդ մարդը թե նարկաման ա, խուժան ա, էնտեղ բանդիտ ա, ինչ ուզում ա լինի, մենակ թե Հայաստանից դուրս հանեն երեխանցը: Այսինքն հասցրել են էն աստիճանի, որ մարդը չուզենա իր հայրենիքում ապրի: Ո՞վ չի ուզում իր հայրենիքում ապրել, ու՞ր էլ գնաս՝ երրորդ սորտի մարդ ես: Մարդիկ կան, որ գնացել են սրա, նրա տանը քծնություն են անում, պառավներ պահում ու եսիմ ի՞նչ անում: Բայց դրանց հեչ պետքն ա՞: Գետինը մտնեն դրանք, գնտինը, գետինն էլ ա ափսոս: Տելեվիզորը միացնում ենք, որ դրանց տեսնում ենք՝ անջատում ենք, ուրիշ ալիք ենք տանում, որ ֆասոնները չտեսնանք: Պատկերացրու, որ հանրապետության ղեկավարի կամ մի պաշտոնյայի, որ պիտի հարգենք, գլուխ խոնարհենք, չես ուզում, որ անգամ լսես, որովհետև սուտ ա ասում: Անցած ամսի նոյեմբերի 16-ին առողջապահության ֆինանսները էկել ա գանձապետարան, որ գանձապետարանից բաշխում պիտի տա գործակալությունը, որ գա տվյալ հիմնարկի հաշվին: Նոյեմբերի 16-ին բաշխումն արել են, մինչև հիմի էդ գումարը չկա: Պատկերացրեք, որ կոմպյուտորներ են աշխատում, էդ գումարը պիտի վայրկենական գնա, էսքան ժամանակ օգտագործում են: Բա դրանց ինչի՞ն հավատաս:

Մարդիկ 11 տարի է դրսերում են, երկրաշարժից հետո գնացածները[4]: Մի տարի չի, երկու չի, որ ասես կառավարություն ա, էլի, երևի փող չունի: Բայց 11 տարի: Շինարարության փողերը, որ երկրաշարժից հետո գալիս էին, կառավարիչ, գործկոմի նախագահ նենց էին կոխում էդ փողերը իրանց գրպանները, էդ ամարաթները ինչո՞վ են սարքել: Ամբողջ շին-մատերիալը[5] գալիս ծևակերպվում էր էդտեղ, ծևակերպվում էր, իբրև թե քանդված շենքերն են սարքվում, իսկ գյորմա մարզպետը, որ գործկոմի նախագահին էր, անամոթաբար կանգնում ա ամբիոնից ասում ա «Գուգարքում տուն չկա սարքելու»: Վերջում էլ ասում եմ՝ չես ամաչու՞մ, Այվազյան, էդ ի՞նչ բառեր էիր ասում էնտեղից: Ինձ ասում ա՝ ես էդ մտքով չեմ ասել, դու ինձ սխալ ես հասկացել: Դե դու խելոքն ես, ես էլ՝ դեբիլը, մի բան նենց ասա, որ հասկանանք: Ու էդ դեբիլը մինչև մարզպետի աթոռը գնացել ա: Ու՞մ գնաս բողոքելու, իրա՞նց:

4. Նկատի ունի երկրաշարժից հետո էվակուացվածներին:
5. Շինանյութը:





Մարուսը մղկտում ա, երկու տարի ա ինչ էրեխեն գնացել ա, վատ ա, հիվանդանոցները պառկած ա, ոչ մարդ կարում ա զանգի, ոչ էնտեղից զանգ ա գալիս, վերջապես բաղեք պոծեք էլի սաղին: Մեր սաղ սիրուն, գյոզալ աղջիկները մնացել են, տղեքը գնացել դրանց երրորդ խավի ինչքան աղջիկ կա դրանց են ուզել: Մարդիկ 10 տարի սպասեցին, սպասեցին, ասում էին մի բան կփոխվի, հետո ճարները կտրած ստիպված թողեցին, գնացին: Մարդն էլ ինքնասիրություն ունի, վեշերը լցրեցին մի տեղ, հենց ընենց, ի միջի այլոց, ենքան սրանցից գլուխները առնեն կորչեն, էս զզվելիներից: Ամոթ չեն անում, մեծամ հայկական ալիք էլ դրել են ու խոսում են:

(9) - Բա էս Նաիրիի դատավորությունը ո՞նց են տանում:

(2) - Իրանք արել են ու մարդկանց ծեռ են առնում:

(3) - Փողոցային անամոթ խաղ ա:

(1) - Էս անամոթները խսկականից մեզ ծեռ են առնում: Չէ մեկը հարևանի ծուն գողանա, հլե տես ոնց կտանեն, դատը երկու օրում կանեն ու կդնեն մի կողմ:

(3) - Չիմի ալյումին գողացողներին ինչքա՞ն են դատում:

(1) - Մեկը հացի համար մի էրկու կտոր ալյումին ա թռցրել, դատ են արել ու մի հատ էլ ցույց են տալիս: Իսկ ամբողջ Վահագնին մտան 10 մարդ մի տան միջի մի իրիկվա մեջ սպանեցին ու դուրս եկան, ու՞ր ա նրանց գտածը:

(4) - Կիրովականի էսքան սպանությունները ինչի՞ չեն դատում:

(1) - Կամ էս իրեք տղեքին, որ սպանեցին, ոչ մեկին էլ չգտան, իրանց ծեռք չի տալիս գտնել և վերջ: Ասում են՝ հայ կնիկ, հայ կնկա արժանապատվություն... Հայ կնիկ է՞ք թողել, սաղի հերն անըծել էք: Ամեն մի կնիկ, յոթ տղամարդ գլուխը քարովն են տվել, տան ամբողջ ծանրությունը ուսերին դրած տանում են: Երբեմն ասում եմ՝ այ մարդ, անմարդ կնանիքն ավելի լավ են, չեմ ասում անբոռայականները: Էն իմաստով, որ աշխատում էին ու ամեն մեկը իրանց տունը առել, դրել էին, սաղ հնացավ, անցավ: Էսօր հասարակության միայն 5 տոկոսն ա, որ կարող ա իր համար տուն ստեղծել, բան առնել, մնացածը հնի վրա ապրողներն են: Մեկը տեգրոս տուն մտավ, տեգրս քանվոր տղա էր, ասեց՝ որ բանվորի տունը սա է, բա նաչալնիկի տունը ի՞նչ կլի: Այսինքն էնքան լի ու մեծ էր, որ մարդ ռիսկ չէր անի առաջ գնա: Իսկ հիմա՞: Ու՞մ տուն մտնես: Խալադիլնիկները[6] հացաման ենք սարքել: Ազնվությամբ, որ մուկ-բան չմտնեն, ո՞վ ա հիմա խալադիլնիկ միացնում: Ամառը ամբողջ թաղամասը մի միացրած խալադիլնիկ չկար:

(4) - Ի՞նչ դնես խալադիլնիկը:

(1) - Ամոթ դրանց, մարդկանց էս աստիճանի տրորել, նվաստացնել:

- Եթե համեմատենք գնացողներին, որտեղի ապրողներն են ավելի շատ գնում՝ դոմիկի՞ց, շենքերի՞ց, թե՞ դա նշանակություն չունի:

(1) - Նշանակություն չունի, բայց դոմիկներից ավելի շատ: Նորից ասեմ, էստեղ աշխարհի էրեխա կար հավաքված, էն էրեխեքը, որ երկրաշարժի ժամանակ եղել են 10-14 տարեկան, էրևի էս մեր շրջապատում մի 20-30 տղա կային, մեծ մասը մի դասարանի էրեխեք, շատ լավ էրեխեք, նրանցից ոչ մեկը

6. Սառնարան:

վառ մարդ դուրս չէր գա՝ շնորհքով, պատվով, նամուսով, բոլորը պոստերում ծառայած էրեխեք են, բոլորը: Երկու տարի խրամատներում ծառայած էրեխեք, փառքով, պատվով վերադարձած: Թող մի հատ վայենկոմը[7] կանգնի ասի, որ էս շրջանի մի հատ էրեխա պոստից գոնե մի օր փախել ա, հնարավոր չի տենց բան: Շատ լավ էրեխեք էին: Գնացել են բանակ, էկել տեսել են նույն վիճակն է, նույն դոմիկները, նույն աղքատությունը, թողել են, գլուխ առել ու կորել: Ասել են՝ դուք տանն էք, հլը ձեր տարիքները մեծ ա, բա մենք ինչի՞ համար պիտի մնանք ստեղ, էն կառավարության համա՞ր, որ գնացել կանգնել ենք թուրքի դեմ, գլուխ ենք տվել ու էսօր էլ էկել դոմիկն ենք մտել: Առողջ են դատել մարդիկ: Արհամարհված ու էսքա՞ն արհամարհված: Իրան հարգող մարդը կամ կտա կսպանի, կամ՝ կթողնի, կգնա:

**(2,3,4,5,6,7)** - Հա, հա:

**(4)** - Մենք բոլորս էլ մեզ արհամարհված ենք զգում, ոչ միայն երիտասարդությունը:

**(1)** - Երկրաշարժից հետո շրջկենտրոնը եղել ա առանձին: Առանձին Գուգարքի շրջանն ունեցել ա շրջկենտրոն: Առանց շրջկենտրոնից որևէ մի մարդու հարցնելու, հազարավոր բնակչությանը, մոտ 15 հատ շենք 50 կվարտիրանոց, բերել դրել են գյուղի վզին, որը կարող էին միացնել քաղաքին: Հող չես տվել, անասուն չես տվել սեփականաշնորհման ժամանակ, ոչ մի բան ու էսօր դու էդ ժողովրդին համարում ես գյուղացի: Ինչո՞վ ա ես գյուղացի, ոչ հող ունեմ, ոչ անասուն ունեմ, ոչ տուն ունեմ, իսկ եթե ունենամ էլ, դա կվարտիրա է, էդ կվարտիրայում պիտի բերեմ խոզ ու անասուն պահե՞մ:

- Իսկ ի՞նչ է կառավարությունը շահում, տեղափոխելով էդ շենքերը քաղաքի հաշվեկշռից գյուղ:

**(1)** - Առաջ դա եղել է շրջկենտրոն, քաղաքի հետ չի եղել: Գոնե որ հաշվի առնեին, որ սեփականաշնորհմանը մեզ ոչ մի բան չեն տվել, որ էս մարդիկ գյուղի հետ ոչ մի կապ չունեցող մարդիկ են, քաղաքին միացնելու փոխարեն բերել ա, դրել գյուղի վզին: Գյուղապետն էլ ասում ա՝ բա ինձ պետք ա՞ էդ ժողովուրդը, ես սկի իմ գյուղը չեմ կարում յոլա տանեմ:

- Ի՞նչ է նշանակում գյուղապետին տալ, ի՞նչ էք դուք կորցնում, հայտնվելով գյուղի հաշվին: Ի՞նչ, էլ հույս չկա՞, որ տուն էք ստանալու:

**(1)** - Այո, դա: Էսօր քաղաքի բնակչությանը սերտիֆիկատներ են տալիս: Քաղաքի բնակչությանը տալիս են, գյուղին չեն տալիս: Օգնությունը որ գալիս ա, էլի միայն քաղաքին: Բացի երկու անգամ ստացած նավթից, էլ օգնություն չենք տեսել: Չնայած տնակի ապրող ժողովուրդ ենք, բայց ոչ մի նպաստ: Հիմա ասում են նպաստ տալիս ենք դոմիկում ապրած անչափահասներին: Հլա լսի, իմ էրեխեն 15 տարի դոմիկում ապրած էրեխա ա, էսօր էլ իրա էրեխեն ա ապրելու: Դու հլե էդ էրեխուն, որ էդ դոմիկի ցավն ու տանջանքը, հետն էլ ցուրտն ու սովը տարել ա, մի բան տուր, գոնե սերունդ տան էդ էրեխեքը: Արդյոք ընդունա՞կ են սերունդ տալու, էդ էլ չեմ ասում: Սկի քարի շենքում ապրող մարդիկ ընդունակ չեն, էդ դոմիկի էրեխեն պիտի ընդունակ ըլի՞ սերունդ տալու: Գուգարքի, շրջկենտրոնի էդ բոլոր շենքերը նստել են, էդ

7. Զինկոմիսարիատը:



շենքերն են նստել, մեկ էլ խիմզավոդը: Նա, որպեսզի ուղղակի քաղաքը յոմանրաքեռնացնի իրեն, գցել ա գյուղի վրա, 15 հատ շենքի ժողովուրդ են էլի, ըլնեն-չըլնեն, նրա համար սկի պետքն էլ չի:

**(3)** - Դու էն ասա, որ գյուղապետը մեծ տարբերություն ա դնում գյուղի ապրողների և էս շենքերի ապրողների միջև:

**(1)** - Անուններս գյալմա են դրել: Գյուղի ժողովուրդը մեզ տենց է ասում, գյալմա, այսինքն՝ էկողի: Ամբողջ գյուղում ավագանի կա ընտրած, շրջկենտրոնի շենքերից մի հատ մարդ չկա:

**(3)** - Ես իմ հարցը բարձրացրեցի, չընդունվեց: Գուգարքի շենքերից մեկը ուսիլիտ արեցին, բաշխում էին, ամբողջ ավագանին գյուղից էր: Ես հարց բարձրացրեցի, որ մեր դոմիկներից արժանի մարդիկ կան, որ կարան ավագանու կազմի մեջ մտնեն, որպեսզի էդ շենքը ռեալ բաժանվի, իրանք դրան դեմ էղան, դեմ էղան, որովհետև իրանց ձեռք չէր տալիս, որովհետև մենք գիտեինք մեր պրոբլեմները, մեր ցավերը, գյուղապետը ոչ մի անգամ մեր պրոբլեմով չի ապրել: Էկավ շենքը բաժանեց, ու տվել են էնպիսի մարդկանց, որ էսօրվա դրությամբ չեն ապրում էդ շենքում, վարձով տվել են, իրանց պետք չի, ուրիշներն են ապրում, իսկ մեզ նմանները 13-րդ տարին դոմիկում կմնան:

- Իսկ էդ նոր շենքերի բնակիչները գյուղից ե՞ն, թե՞ ուրիշ տեղից են

**(5)** - Էլի մեր ժողովուրդն է, բայց չկան, որը Ռուսաստան է:

**(3)** - Տունը տվել են էնպիսի մարդկանց, որ ամեն մեկը երկու տուն ունեն իրանց անունից, բայց դեռ գրանցման մեջ մնում են, որոնք ապրում են կվարտիրայում, բայց ստացել են երկրորդ տունը, երրորդ տունը, մարդ կա՝ չորրորդ տունը, էս պահին կամ ծախում են, կամ վարձով տալիս են, իսկ մեզ նմանները, անձամբ իմ նմանը, որ յոթ անձով ապրում է երկու դոմիկում, երեք անչափահաս երեխա ունեմ, և եկավ էն պահը, որ տունը տալիս էին, ամեն ինչ փոխվեց, ով կարողացավ իրանց պահանջները ներկայացնել՝ իրանց տունը ստացան, մեզ նմանները մնացին:

- Պահանջները ներկայացնելը ո՞րն է:

**(3)** - Դե, գումարն ա, մաղարիչներ, ճաշկերույթներ: Ու ես առանց վախենալու իրանց ներկայությամբ էսքան բանը ասել եմ, իրանց երեսին, ու առանց ամոթ զգալու նրանք էդ ամբողջը տանում էին: Մենք իրանց վիրավորում էինք, իրանք տանում էին, ծիծաղելով էլ անցնում էին:

**(1)** - Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես մաձ գալիս:

**(3)** - Եվ էս դրությամբ երկու-երեք անգամ մարզպետարանից էկել ստուգել են, որ տեսնան ով ա ապրում, ու գիտեն էլ, որ վարձով տված տներ ա, որ իրանց ստացած մարդիկ ոչ մեկը չեն ապրել, ու ոչ մի բան էլ չեն ձեռնարկում:

**(6)** - Ես էս նույն շենքի բնակիչ եմ, մեր ընտանիքը չորս հոգուց ա բաղկացած՝ ամուսինս ա, ես ու երկու տղես, մեկը 12 տարեկան, մեկն էլ բանակում ծառայում ա՝ 18 տարեկան: Ամուսինս 7-8 տարի ա տառապում ա հոգեկան հիվանդությամբ: Բժշկուհին ինձ թուղթ տվեց, որ քեզ որպես արտահերթ մի սենյակ ավել տուն ա հասնըմ, կարաս ազատ ստանաս: Թուղթը տարել տվել եմ իրանց, գյուղապետը ինձ պատասխանել ա, որ ես քո արտահերթը չեմ կարա տամ, բայց մեր հիվանդին մի սենյակը կարամ տամ: Դրանից հետո էլ որպես շենքի բնակիչ նպաստս կտրել են, տղես ծառայող ա, ոչ մի բանից չեմ

օգտվում: Ներկա պահին ես ապրում եմ իմ մոր տանը, տունս էլ 3 հազար դրամով վարձով եմ տվել, կարաս տիրոջն էլ հարցնես, որովհետև էստեղ 3 հազար դրամից ավել գումար ոչ ոք քեզ չի տա, որ ապրես: 3 հազար դրամով տվել եմ մեկին, ինչէ թե, որ էդ 3 հազար դրամը ինձ տա, որ էսօր դեղը վերջացել ա, գնամ էդ դեղերը առնեմ: Դեղն էլ ա վճարովի, էն էլ հոգեկան հիվանդի դեղը, պապիրոս ծխըմ ա: Հետո էլ մի խղճի մեջ հոգեկան հիվանդի հետ տառապելով ապրում եմ, ներկա պահին իմ էրեխեն իրանից վախում ա, և բոլորս վախելով ապրըմ ենք, բայց հնարավորություն չկա, իմ ամուսինս ա, ես տանըմ եմ: Իսկ եթե իրա համար հատկացված երկու սենյակը տային, գոնե ինքը առանձին սենյակ կունենար, ես էլ ստիպված իմ տանը չեմ ապրըմ: Ինչի՞ ես իմ տանը չպիտի ապրեմ: 3 հազարը ի՞նչ դրամ ա, որ, բայց ես տվել եմ, որ էդ փողերով դեղերն առնեմ: Հիմա ես հերթագրված եմ, գնացել եմ 100 դոլար «Կամուրջից» փող եմ վերցրել, որ ես կարենամ իմ հիվանդի դեղն ու պապիրոսն առնեմ: Ինձ ասում են՝ քեզ նպաստ չի հասնըմ: Եթե ինձ չի հասնըմ, ու՞մ ա հասնըմ, եթե էսօր իմ տղեն սահմանում ա, ամբողջ տարի ա ես չեմ կարող մի հատ պապիրոս կամ պլիտկա ուղարկել: Ամուսինս, որ հիվանդ տառապում ա, նրան հասնըմ ա ընդամենը 1700 դրամ թոշակ: Էդ թոշակն էլ, ես պիտի 50 դոլար ծախսեմ, որ էդ թոշակին հասնեմ: Էսօր իմ տունը դրա պատճառով քայքայվըմ ա: Ես դժգոհ չեմ, կյանքն է ստիպել, որ իմ ամուսինը հիվանդ դառնա, ամենալավ տղաներից մեկն ա էղել, թող բոլորը ասեն, բայց փողի համար ընկել ա Ռուսաստան, դժբախտություն ա պատահել: Ես տեր եմ իմ հիվանդին, բայց էսօր իմ տղես 18 տարեկան ա, նշանածի հավասար, կարելի է ասել, ընկերուհի ունի, բայց էսօր իմ էրեխեն իր սիրածին չի արժանանալու: Ինչի՞ համար, - իմ հիվանդ ամուսնու, որ մենք էլ հնարավոր չէ իրար հետ ապրենք: Նպաստն ի՞նչ ա, իմ պես ընտանիքին նպաստ չեն տալիս: Իսկ մարդիկ կան, որ գիտեմ արտասահմանում մարդ ունեն, Ռուսաստանում ունեն, բայց նպաստից օգտվըմ են: Ինձ մի սենյականոցը տվել են, թե դու քու հերթին կմնաս, երբ որ հասավ, էն ժամանակ էլ կգնաս կապրես, իսկ մի սենյակը քո հիվանդին, թող գնա ապրի: Բայց հիվանդ մարդը ո՞նց կգնա մենակ կապրի: Ոչ տելեվիզոր կարող եմ միացնել, ոչ շարժվել, չէ՞ որ իմ էրեխու հասունացման շրջանն է, ուզում ա ուղեղն աշխատացնի: Իսկ ինձ ասեցին՝ կառավարություն գոյություն չունի, դա եղել ա մեր թվարկությունից առաջ: Ինձ ասեց, աղջիկ ջան, էդ գիտես ո՞ր դարերում ա էղել, որ օրենք կար:

- Իսկ ինչի՞ց հիվանդացավ Ձեր ամուսինը:

**(6)** - Յոթ տարի առաջ, էլի իրանց պատճառով... Պետը իրա քարտուղարուհու վեշը բարձեց, ծրի, մեքենան, կամազը տարավ Ռուսաստան: Վարորդը ամուսինս էր: Սաղ վկա են, էդ վեշը բերել էին մի սուտկա մեր հայաթըմ մնաց: Հասել էին էնտեղ, սա էլ, տղա է, ասել է՝ գործ անեմ, մի քիչ փող աշխատեմ, նոր գամ: Զանգեց, որ դեռ դոլարը գոյություն չուներ, զանգեց, թե Կարինե, 5 հազար դոլար փող եմ աշխատել, մի հատ տուն ճարի (մենք էլ դոմիկում), գամ առնեմ, տեղափոխվենք: Ուրախացած տունը ճարեցի, մեկ էլ մի շաբաթ հետո մի հատ զանգ էկավ, թե՝ Կարինե, Աստոծ գոյություն չունի, հոգեկան վիճակում, շաշացված հիվանդանոցում ա, Ուֆայում ա: Մահացու տվել են նարկոտիկ, որ ինքը մահանա ու էդ փողերը տանեն մոտից: Ինքը



անգգա ծմերուկը բարձած, որ տեսել ա, որ օդերում թռչում ա, ինքը իր երակները կտրտել ա, որ փրկվի, միրտ ա թափել, մտել ա ռսի տուն էդ վիճակով: Դե չի մահացել, բայց դա արդեն ազդել ա: Ավելի լավ, ասել իրան, մահանար, մի փրկություն կլիներ:

- Մինչև էդ ինքը օգտագործե՞լ է նարկոտիկ:

**(6)** - Չէ, ինքը չի օգտագործում, ինքը տալը չի զգացել: Ինքը մեկ ասում ա չայը տվեցին տենց էղա, մեկ ասում ա՝ ճաշը կերա տենց էղա, ինքը չի հիշում ոնց ա եղել: Ինքը առանց անձնագիր ա մնացել... Ստեղից աղբերներս փող վերցրին գնացին, ամբողջ աշխարհի ճամպրով ռոզիսկ, բան՝ Աստոծ գոյություն չունի: Ինքը պատմում ա, որ սարերով Ռուսաստանից հասել ա ստեղ, ո՞նց ա հասել՝ ոչ մեկիս դա պարզ չի: Ճարել բերել են իրան, իջացրել, ինքը օլաղացել ա, օլաղանալուց հետո էլ, տեսել են ոչ մի բան, մահճակալի տակերն ա մտնում: Տարել ենք Երևան հոգեբուժարան, 1000 դոլար ծախս ա էղել, որ մի քիչ վերանորոգվել ա դեղերի միջոցով: Պըտի անընդհատ ինքը էդ դեղորայքը օգտագործի, որ մի քիչ սենց վիճակի լինի: Վիճակն էլ ո՞րն ա՝ անաշխատունակ, էնքան որ գոյություն ա պաշտպանում:

- Մինչև էդ դեպքը ինքը գնացե՞լ է Ռուսաստան:

**(6)** - Շատ... էդ անգամն էլ մեքենան տարան, կոխեցին տամոժնի[8], փող պարտք արեցինք քանի անգամ, որ մեքենան բերենք: Մտածեցինք, որ եթե ղեկին նստի, կարող ա նոր լավանա: Տամոժնին էլ մեկից մյուսին ա տանում, ռուսական համարներ չունի, հիմա էլ ասում են Չեբոկսարիի տամոժնիում ա, 1000 դոլար բերեք, տարեք: Ես 1000 դոլար ունենամ էն ա դեղս կվերցնեմ: Դեղը վերջինը վերջացել ա, սպասում եմ թոշակը երբ են տալու, որ գնամ դեղ վերցնեմ: Յոթ տարվա հիվանդ ա, դեղը գրում են ծեռ են տալիս:

- Ինքը ո՞ր կարգի հաշմանդամ է:

**(6)** - Ո՞ր կարգի: Եթե 50 դոլարը տալիս ես՝ երկրորդ, առաջին կարգ ա, եթե չունեմ՝ երրորդ կարգ: Երբ ունեմ, փող եմ տալիս՝ երկրորդ են գրում, երբ չունեմ, չեմ տալիս՝ երրորդ են գրում:

- Թոշակի տարբերությունը ինչքա՞ն է երրորդ և երկրորդ կարգերի միջև:

**(6)** - Հիմա 1700 է, էն էլ ինչի՞, որ տրուդովոյը[9] չկա, որ 15-20 տարի աշխատել ա: Որ գնում ես հաշվապահի մոտ, ասում ա մենք տեղյակ չենք տրուդովոյից, որ ես տրուդովոյը վերցնեմ, կարող ա 3 հազար ստանամ, չեն տալի:

- Ձեր տանը 3000 դրամով վարձով ապրողը որտեղի՞ց է:

**(6)** - Էլի մեր շենքից ա:

**(1)** - Էստեղ երկու շենքի բնակիչներ են: Մեկում մարդ չկար, իսկ մյուսում մի 10 ընտանիք ապրում էին: Էդ ընտանիքներին հանել լցրել են էդ շենքը, որ հիմա հանձնել են, որ սա ուսիլենին լինի, մարդիկ հետ կգան իրենց շենքը:

**(6)** - Հիմա իմ տնվորները նենց ա, որ մարդիկ են, տուն կստանան՝ կգնան, ստեղ ոչ ոք չի գա, որ ասես, թե վարձով տուն կտաս՝ կապրես: Ու էս ժողովրդին ոչ մի նպաստ չի հասնըմ, իսկ եթե նպաստ չես ստանում, օգնություն էլ չես ստանում, դա նույն մարդիկ են:

---

*8. Մաքսատուն:*

*9. Աշխատանքային գրքույկ:*

(1) - Մեր ժողովուրդը շատ մեղք ա, շատ մեղք: Հայ մարդը ո՞նց ա կարող նայել իր էսքան անճար չքավոր ժողովրդին: Գյուղ եմ մտնում, գյուղի հետ կապ ունեցող մարդիկ ենք: Ռայոնի գյուղերից մեկն ա, երանի մտնես էդ գյուղը ու նայես, ինձ թույլ եմ տալիս ասելու, էդ ծերանոցից, ծերանոց խսկական, ոչ մի երիտասարդ մարդ չկա: Ի՞նչ մարդ, սկի քաղաքում չկա, ու՞ր մնաց, որ գյուղերում լինեն: Հազարավոր հեկտար տարածություններ կան, որ անմշակ են, էնքան, որ քթիդ մուխը հելնում ա: 1990-91 թվին, երբ որ էնտեղ սովխոզ գոյություն ուներ, էդ հողերին, որ նայում էիր, բեֆդ գալիս էր, թե ինչ բերք ու բարիք էին ստանում: Էսօր ոտքով կարա՞ մարդը հողը մշակի, չի կարա, մեխանիզացիան հնացած, ոչ մեկը պիտանի չի, մարդիկ փող չունեն, որ զափրուչին[10] առնեն, օգտագործեն, փող չկա ոչ մի ձևով էդ հողերը մշակելու: Էդ ժողովուրդը սովից դրդված, սովից դրդված, դուրս են էկել: Մարդ չկա, մենակ էդ ծերակույտերն են, էտ էլ կարաս հանդիպես թոշակի օրերին, որ փետով բանով գալիս են պոչտայի[11] դռները, որ էդ գումարը ստանան, որ ինչ-որ մի հատ հաց լուծեն: Չահել տղեք են, տեսել են, որ մեխանիզացիան փչացած ա, իրանք էլ չեն կարող էդքան նագրուզկով[12] աշխատեն, որ ընտանիք պահեն, գլուխները առել ու ընտանիքներն էլ հավաքել ու գնացել են: Գլուխ են առել վեկալել գնացել: Էսօր մեր խորհրդարանի դեպուտատները ամեն մեկը 300 դոլար փող են ստանում... խիղճդ մեռնի, հլը նորից էլ ուզում են բարձացնել: Իսկ թոշակառուին 3000 դրամ ես տալիս: Է, նույն փորը համ քո վրա ա, համ նրա, էդ ո՞նց ա, որ քեզ հասնում ա 300 դոլար, իսկ նրան՝ 3000 դրամ, դա խղճին մոտիկ բան ա՞: Կամ պալատ ես սարքում, կուտակում ես, կուտակում ես... Լավ ես անում: Մեր նախնիները մի լավ բան են ունեցել, ասել են՝ մեղր քամողը իրա մատը լիզում ա: Ես չեմ հարգի էն ղեկավար մարդուն, որ էսօրվա դրությամբ կանգնում հանկարծ ասում ա՝ ես սև հաց եմ ուտում: Ի՞նչ ղեկավար ես, որ սև հաց ես ուտում, երբ որ սիպտակ հացը գոյություն ունի: Բայց եթե դու սիպտակը ուտում ես, գոնե քո ենթակա մարդուն, քո ստորադասին գոնե սևը տուր: Սևը տուր, որ գոնե քո ժողովուրդը ապրի, յոլա գնա: Յուրաքանչյուր մարդ ղեկավար ա իր ժողովրդով, ավերակների վրա ղեկավար ա՞ լինում, ես չեմ հասկանում: Բա հետ չդառնա մտածի՝ էսօր իմ ժողովուրդը ի՞նչ կերավ: Պետությունը, էս Հայաստանը, մի մեծ ընտանիք ա: Ամեն ընտանիքի գլուխը՝ ղեկավար մարդը, պիտի մտածի, թե իր ընտանիքը ի՞նչ ա ուտելու, իր ժողովուրդը ի՞նչ ա ուտելու, ոչ թե ամեն մտնողի ասի՝ պասպորտը ջեբիդ ա, գաղթի ճամփան էլ բաց ա, ուր ուզում ես գնա:

- Այդ ղեկավարը, որ խորհուրդ է տալիս թողնել և գնալ այստեղից, ինքը ի՞նչ շահ ունի, որ ժողովուրդը թողնի գնա:

(1) - Պատասխանատվությունից է պրծնում: Գնացել եմ դրա մոտ, ասում եմ՝ 1991 թ-ին ես մտել եմ մարզպետի մոտ որպես մեր Լոռվա մարզպետ, ղեկավար անձ, նու, հարգի մարդ, կարելի է ասել, մենք էդ դաստիարակությունն ենք ստացել, որ ղեկավարին պիտի հարգես, որ ղեկավարը կարողանա աշխատի, բայց թե հարգանքի տեղ ու նպատակ թողնու՞մ են: Մտել ենք, ասում

10. *Վառելիքը:*
11. *Փոստատան:*
12. *Ծանրաբեռնվածությամբ:*



եմ խնդրում եմ ասեք, էս ժողովրդին, 50 ընտանիք 13 շենքից դուրս ես արել ու ասել, որ մի տարի հետո ես քո շենքը կսարքեմ: Հա, հասկանում ենք, որ կառավարությունները շուտ-շուտ փոխում էք, մարզպետը նա էր, հիմա էլ՝ դու ես: Բայց թե պաշտոնը ընդունելուց մենակ աթոռն ու սեղանն ե՞ս ընդունում, իհարկե ոչ: Դու, որ ընդունել ես, մի հատ չե՞ս մտել, մի հատ շրջել, որ տեսնես, թե էս ինչ մարզ եմ ընդունել: Էկել ես, լավ ես արել, բա մի հատ էլ արի մտածենք, թե 50 ընտանիքը ե՞րբ պիտի տուն ունենա, որ մտնի մեջը: Մենք մտնում ենք քու մոտ, ասում ես՝ կառավարությունը փող չի տալիս՝ չեմ սարքում, ես չեմ կարա ձեր պահանջը բավարարեմ: Դե, լավ, ասում ենք, հլը սրա վերջը ասա, տեսնանք ինչ ա լինելու: «Վերջը ո՞րն ա, - ասում ա, - պասպորտը ջեբիդ, ճամփեդ էլ՝ բաց, ուր ուզում եք, գնա»: Բա դա ղեկավարի տված պատասխան ա՞: Էսքան գումարներ են գալիս, մենք էլ մարդիկ ենք, մեկ-մեկ նայում ենք, իհարկե մեկ-մեկ, եթե իհարկե չենք զզվում, չենք անջատում իրանց սուտ խոսալու համար, նայում, որ էդքան գումարները գալիս են: Լավ են անում, որ գալիս են, լավ է, որ օգնում են, մեր ժողովուրդն է, արարել են, ստեղծել են տարբեր տեղեր, էսօր ձեռք են մեկնել մեր ավերված, քանդված պետությանը, օգնում են: Նրանց օգնածը որտե՞ղ ա էրևում: Ժողովուրդը էլի նորից դոմիկներում: Աէրոպորտից, որ Փարաքյարով մտնում ես, էդ ինչ տներ ու պալատներ են իրանց համար սարքել, հլը թող մի հատ էդ շենքի տիրոջ բյուջեն հաշվեն, թե նա ինչքա՞ն եկամուտ ա ունեցել, ինչքա՞ն ծախս ա արել և ինչո՞վ ա դա կառուցել: Թող ունենան, ո՞վ չի ուզենա, որ իր ժողովուրդը հարուստ լինի, ո՞վ չի ուզենա, որ պետության ղեկավարը հարուստ լինի, մեր պետությունը բարգավաճի, լավ շենքեր ունենանք, լավ երիտասարդություն, եթե դա մերն է՝ բոլորս էլ կուզենք: Բայց ոչ թե էրկու հոգի ունենան, մնացած էրեխեքին էլ դուրս գցեն, ասեն՝ գնացեք, բաց են ճամփեքը: Ամբողջ կյանքըմ ցուպը ձեռներին ման են էկել, էսօր ասում են Քոչարյանը գնաց էս ինչ տեղը, էս ինչ պետությունը էս ինչ բանը խնդրելու համար: Ես վատ եմ զգում որպես հայ կին, ամոթից աչքերս գետինն եմ գցեմ, ինչքա՞ն կարելի ա մարդը ձեռը մեկնի, ասի՝ փող տվեք:

(3) - Ինքը հոմ քո համար չի խնդրում, նա իր գրպանի համար է խնդրեմ:

(1) - Թեկուզ իր գրպանի համար, բայց որ հայ մարդ ա, ազնվությամբ գետինն եմ մտնում, որ հայ մարդը ո՞նց քյուչեքը կընկնի, կասի՝ փող տվեք, որ ես ապրեմ: Խի՞, հլը մի հատ նայի տես ինչ երիտասարդություն ես ունեցել, ինչ մարդիկ ունես, ու՞ր են դրանք, - սաղ դրսում թափառում են: Հավաքի բեր, դու ինքդ քոնն ստեղծի, դու՝ ստեղծի, ինչի՞ ես գնացել սրանից, նրանից խնդրում: Ավարտած մարդիկ գնացել են, ամաչում ես, որ իմանում ես ինչ են աշխատում: Մարդուս որ նայում եմ, մեկ-մեկ ձեռ եմ առնում, թե Կարմիր գրքում են տենց տղեքը գրվում, որ թափով, բոյով, խելքը, ամեն ինչը տեղը, բայց էսօր ամաչում ա իմ աչքերի մեջ նայի: Ես, որ իրա կինն եմ, ամաչում ա իմ աչքերի մեջ նայի, որովհետև գիտի, որ ամբողջը պակաս-պռատ ա, էսօր էլ դոմիկում հաց չկա, էս չկա, էն չկա:

- Ո՞նց է, որ ինքը մնաց, իսկ Ձեր տղան գնաց:

(1) - Որովհետև իր տարիքը մեծ ա, էս անպատվությունը էլի տանում ա... Ասում ա՝ անպատվությունը բոլորով ա, իմ բայ մարդիկ են:

\- 46 տարեկան էդքան էլ մեծ չի:

**(1)** - Մեծ չի, բայց խելքը հասնում ա: Իսկ իմ տղեն արդեն ներվային էր ընկել, ամոթից գետինն էր մտել, ասում էր՝ ամաչում եմ էրկու հատ ընկեր գա մեր տուն, կասեն՝ էս անճար, ամենավերջին մարդիկ են, որ դոմիկում են ապրում: «Գետինն եմ մտնում, մամ, - ասում էր, - որ մեկը դուռը բաց ա անում, ներս ա մտնում»: Շատերն էլ գնըմ են ու ընտանիք բան մոռանըմ են:

**(2)** - Իմ ամուսինը չորս տարի ա ինչ գնացել ա, բայց լավ էլ սիրում ա իր ընտանիքը, ես գիտեմ, ի՞նչ անենք, որ չորս տարի ա, ինչ չկա (ծիծաղում է):

**(3)** - Իմ ամուսինն էլ ա գնացել: Վերջին անգամ, որ իրան ճանապարհեցի, մայիս ամիսն էր, ասի՝ ձմեռը չգաս: Գալիս ես, մի-երկու կոպեկ բերում ես, ուտում ենք, էլի նույն վիճակն ա, կմնաս, ձմեռը մի գործ կճարես, կաշխատես, մի քիչ փող կկուտակես, հետո նոր կգաս, էդ ձևով եմ իրան ճանապարհել: Էրեխեքն ասեցին երազում տեսել ենք, ոնց որ պապան գալու ա, ասի՝ չէ, ես պապային ասել եմ չգաս, իզուր մի սպասեք: Մեկ էլ գիշերվա մի ժամին դուռը խփեցին, գնամ դուռը բացեմ, տեսնեմ՝ ինքն է...

**(7)** - Խայտառակություն...

**(3)** - Ասում եմ՝ բա ես փողի էի սպասում, դու ինչի՞ եկար: Ասեց՝ այ կնիկ, մրսած եմ, հլա թող տուն գամ:

**(1)** - Ինչքան էր մեջը...

**(3)** - Մի ամիս մնաց, թե՝ էլ չէ, էլի չի ըլնի, ես չեմ կարըմ: Ման էկավ՝ էս կողմ, էն կողմ...

**(7)** - Դատա՞րկ էկավ, Ալվարդ:

**(3)** - Չէ, ազիզ, դատարկ չէր:

**(2)** - Չէ, հետը սումկա կար:

**(1)** - Դե գիտե՞ս ոնց ա, էնքան են բերըմ, որ գոնե պարտքերը փակըմ ենք, էլի ասում ենք՝ ապրեն իրանք, որ էդքան բերել են, էլի: Ոչ թե ապրելու համար, այլ պարտքերը փակելու համար:

**(4)** *(խոսում է հուզվելով, լացակումած)* - Էս դոմիկները ոնց որ մի ընտանիք լինեն, ես իմ կողմից ասեմ, չորս անձ ենք էղել, էսօր մենակ եմ մնացել: Կներեք, որ հուզվում եմ, ես տղամարդ եմ էղել, բայց հիմա, էլ չեմ կարողանում ինձ... լավ կհասկանաք: Երկու աղջկաս ամուսնացրել եմ, մեկը Գյումրի, մյուսը՝ Ռուսաստան, պատահական մի տղա էկել ա, տենց տվել եմ, ստացվել ա, ես դժգոհ չեմ, ամենակարևորը լավ մարդ են, լավ ընտանիք են կազմել, մի աղջիկս էլ Լենինականում ա, նրանք էլ վատը չեն, բայց ապրելակերպ չունեն, նրանք էլ են տնակում, ապրում են, յոլա են գնում: Իմ ամուսինը հենց էս պայմաններից մահացավ, ինսուլտ... Փայտ բերելուց, ճանապարհին մնաց, կայկով[13] փետ էր բերում: Ես տեղյակ չեմ էղել, դասի եմ էղել, անունով դասախոս եմ *(հեգնանքով-Գ.Շ.)*, ոչ բարով էսօրվա դրությամբ դասախոս: Բայց ես ամաչում եմ իմ թե հագնվելուց, թե ապրելակերպից: Ոչ մի բանը էն չի: Եթե ես մտնում եմ լսարան, ես ինձ անհարմար եմ զգում: Էն, ինչ-որ հնուց ունեցել եմ... Եվ մեծ գումար ունեմ բանկում, որ պահում էինք, որ երեխաներին և կրթություն տալու, և նրանց ապագան ապահովելու, բնակարան, մի խոսքով, օժիտ

*13. Երկանիվ ձեռնասայլակ:*



էինք տալու, աղջիկներ էին, երկու աղջիկներ էին: Էսօրվա վիճակով և դրանից եմ զրկվել, և ընտանիքից եմ զրկվել, մնացել եմ մեն-մենակ: Իմ հարևանները իմ աչքերին արցունք չեն տեսել, բայց հիմի չեմ կարողանում ինձ զսպել, որովհետև արհամարհված ենք էս վիճակով: Ես երեք սենյականոց բնակարան եմ ունեցել, տալիս էին, ցուցակում գրված էր, նրանից հետո երկուս, հետո՝ մեկ, նրանից էլ հանեցին, հենց էդ բնակարան ստանալու պատճառն էր, որ իմ ամուսինը գնաց: Ասում եմ՝ էս պետության մեջ արհամարհված անձինք ենք, բոլորս էլ: Ամեն ինչ միայն իրենց համար է: Եթե գնում ես[14], արտակարգ ճանապարհ են դնում՝ լավ կլինի, բայց ոչ մի արդյունքի չենք հասել: Իմ ամուսինը դաշտում մնացել ա, ճանապարհին, եթե իմ հարևանները չլինեին... ու ամեն ինչով... Ես տուն եմ մտել՝ նրան արդեն դագաղում եմ տեսել տանը: Ամեն ինչը իմ հարևաններն են արել: Մարդը էս պայմաններում... ապրեմ, աշխատեմ երկու ինստիտուտում, Ակադեմիա եմ ավարտել, ինստիտուտից հետո Ակադեմիան ավարտել եմ, քանի անգամ վերապատրաստման գնացել, ինձ համար ես հպարտ եմ, որ էդքան իմ ծնողները ի վիճակի են էղել, ինձ կրթության են տվել, որ էսօրվա օրով ես մի կտոր հացի, իբր թե հացի, տեր եմ էղել: Իմ ծնողները ի վիճակի են էղել յոթ էրեխուն բարձրագույն կրթության տալ, դա հեշտ չէ: Բայց էսօր ես երկու երեխա ունենամ, ապրուստի միջոց չունենալու համար իրենց ցրել եմ, հնարավորություն չունենամ իրենց մի կրթության տամ: Էսօրվա վիճակով, ես ասում եմ՝ եթե իմ հարևանները չլինեին, ես իմ ամուսնուն չէի կարող ճանապարհել, բա մարդ չկարողանա՞ ինքն իր դիակը տանից հանի: Ես ի վիճակի չլինեմ, ես վախենում էի, որ էկել էի ու ինձ ասեցին մահացել ա, ես չէի պատկերացնում, ես պատկերացնում էի, որ պիտի մնա փողոցում: Գումար ունենաս դրսում, ամեն ինչը պետությունը տանի զոռովի, էդքան գումարը մենք խնայել ենք, երկուսով աշխատել ենք, ինքը բանվոր ա էղել, աշխատել ենք, մեր քրտինքով ստեղծել, արարել ենք, բայց էսօր տարան իրենք կերան, ու մենք էլ մնացինք էսպես դատարկաձեռը: Արդեն ոչ մի հավատ չունենք պետության նկատմամբ: Գալիս են, պատգամավորներ են գալիս, սկսում են նախընտրական կամպանիան, կգան, կսկսեն, խոստումներ կտան, մտնում են տները, ջանով, ղուրբանով խոստումներ տալիս...

**(1)** - Դու էլ պատգամավոր լինես, 500 դոլար փող ստանաս, դու էլ ամեն ինչ կխոստանաս:

**(4)** - Արտագաղթ եք ասում, իմ աղջիկներն էլ են արտագաղթել, ի՞նչ տարբերություն: Իմ ամուսինը մահացավ, իմ աղջիկը չկարողացավ գա իր հորը թաղի: Ի՞նչն էր, էս արտագաղթի հիմքը չէ՞ր, որ իմ էրեխեն արդեն տարի ու կես ընդամենը երկու ամիսը մեկ դժվարությամբ զանգում ա, բայց չի կարողանում երկու բառ անգամ փոխանակի: Մամ, ո՞նց ես: Հենց ասում եմ՝ լավ եմ, լաց է զգում, որովհետև նա պատկերացնում է, թե իմ վիճակն որն է, որ ես մենակ չորս պատի մեջ եմ, էս ժեշտի դագաղներում, դագաղ է: Օդ չկա: Ես սրտային հիվանդ եմ, բայց թթվածնի սով եմ զգում: Ես էս ամբողջ գիշեր չգիտեի, թե ինչ անեմ, մահանում էի, պուլս եմ բռնում՝ չի աշխատում, դեղ եմ

*14. Ուզում է ասել՝ «երբ գնում ես պաշտոնյաների մոտ»:*

խմում՝ ի վիճակի չեմ, թթվածին չկա: Ամառը պատուհանը կամ դուռը բաց էի քնում, որ գոնե թթվածին ստանայի: Հիմի դուռն էլ փակում եմ՝ իսկական դագաղի պես փակմիշ էղած մնում ենք: Էրեխեքս դաղարգյուն, բա մեկը մոտս չլինի՞:

- Գյումրիի աղջիկը չի՞ կարողանում գնալ, գալ:

**(4)** - Ինքը չգիտի: Փառք Աստծո, լավ մարդիկ էին, որ հոր մահից հետո թողեցին վեց ամիս մնաց մոտս: Բայց նրանք էլ ընտանիք են, երիտասարդ են, էդքան հնարավորություն չունեն: Ես պիտի ի վիճակի լինեմ գնամ, ինքն էլ արդեն փոքր երեխա ունի, մի տարեկան է:

- Ե՞րբ է Ձեր ամուսինը մահացել:

**(4)** -Անցյալ տարի նոյեմբերի երկուսին:

**(1)** - Փայտի էր գնացել սայլով քաշի: Հլա տես, մարդուն ու՞ր են հասցրել, մեր ժողովրդին: Նայում եմ էս մեր նեղ ճանապարհի վրա, իջնում եմ ներքև քաղաքից՝ ամբողջը ցախ են քաշ տալիս, կամ էդ սայլակները փայտով, սաղ ջահել մարդիկ, կանայք մեշոկի մեջ փետերը դարսած շլակին դրած էստեղից տանում են:

**(3)** - Դեռ ոչ թոշակ են տված ըլնըմ, ոչ նպաստ, էլեկտրիկը արդեն տնե տուն է մտն գալիս, լույսերն անջատելով գնում: Ասում եմ՝ այ ընկեր, փող չենք ստացել, երբ կստանանք, կբերենք կտանք, գոնե էդ օրն արի: Չէ, ինձ հրամայել են, որ անջատեմ, ես անջատում եմ, գնամ, դուք մի քանի օր առանց լույս մնացեք, էրեխեքը թող ժամը ութին տեղը մտնեն, չքնեն մի քանի ժամ, մինչև թուղթերը տանի, քնեն:

**(4)** - Մի օր էկա, իմ լույսն էլ էին անջատել, արդեն ես էլ էի ինֆարկտ ստանում, որովհետև էս պետությունը ստիպում ա, որ մահանանք: Մենակ եմ հիմի, ես չեմ համարում, որ միայնակ կին եմ, փառք Աստծու, էրեխեք ունեմ, շրջապատված եմ իմ հարևաններով ու հարազատներով, բայց լույսը նրանք... էնքան անխիղճ մարդիկ են, ծմեռվա կեսին վատանայի, ես ի՞նչ էի անելու: Նստում են ուտում, ուռչում, ժողովրդին սպանում: Հիմա ինչքան դիագնոզները կարդում ես՝ ինֆարկտ: Իմ ամուսինը կյանքում ամենաառողջ մարդն է էղել, ոչ մի անգամ չի դժգոհել, ինձ ծեռ էր առնում, որ ես հիվանդ եմ: Եթե տենց առողջության տեր էր ու էս հոգեկան ապրումներից նա մահացավ, ես չեմ պատկերացնում, որ առողջ մարդ կլինի: Բա էս հոգեկան ապրումները... Տղամարդը նստած տանը պիտի դիվան քշի՞: Բոլոր տղամարդիկ դիվանագետ են դարձել: Ասում եմ՝ ինչ է անում մարդդ, ասում է՝ դիվան ա քշում: Տղամարդը ամբողջ օրը դիվանին նստած, իսկ կինն էլ դրսում ի՞նչ անի:

**(3)** - Ես գյուղապետին ասում եմ «էս ինչ մարդը,- անունը տալիս եմ,- արժանի չէ, որ տուն ստանա»: Գյուղապետը լավ էլ գիտեր, որ տվյալ մարդը երեք տեղ տուն ունի, էդ էլ չորրորդն է ստանում: Ասում ա՝ բայց նրան էլ է հասնում: Ասում եմ, բայց չէ՞ որ ինձ էլ ա հասնում: Ասում ա՝ չէ, կատեգորիա չունես: Կատեգորիան ո՞րն է, երեք անչափահաս էրեխա կա իմ տանը: Ոնց որ ծաղրածու լինեինք, էդ ամբողջ տաս հոգով վերկացան, հանձնաժողով են կազմել, էկել են մեր տուն: Էկան մեր տուն, ներս մտան, թոռներիս մեկը տանն էր, տղես դպրոցում էր, մեկն էլ հորքուրի տանն էր: Արձանագրություն կազմեցին՝ էս պահին թոռը տանը չի, ուրեմն նա տատի տանն է ապրում: Պատկերացնու՞մ էք, ոնց որ ծաղրածու, բեմի վրա խաղան: Արձանագրությունը կազմեցին գյուղապետով, իրա հանձնաժողովով, ստորագրեցին, իրանց համար թուղթ կազմեցին, որ ուրեմն թոռները ստեղ չեն ապրում, ուղղակի գրանցված են: Մի խոսքով իրանք դերասաններ են, ամբողջ գյուղապետարանով, մենք էլ հանդիսատես ենք:



**(2)** - Իմ ընտանիքը վեց անձից ա, չորս աղջիկ ունեմ, չորսն էլ դպրոցական, ամուսինս Ռուսաստան էր...

**(1)** - Անհայտ կորածներից, ու հանկարծ հայտնվեց:

**(3)** - Դժբախտություն է պատահել, դրա համար է էկել, էդ էլ ասա:

**(2)** - Ասե՞մ, բերանս էլ չի բացվում, որ ասեմ: Եթե բժիշկ լինեմ, կասեմ նույնիսկ կարգավորած, թե ինչ կարգի հաշմանդամ է էկել:

**(1)** - Մատները կտրած էկել է:

**(2)** - Հիմա չգիտեմ՝ ասեմ թե՞ չասեմ:

**(1,4)** - Ասա:

**(4)** - Պատմի, փոքր էրեխուդ ոնց ես դպրոց տանում:

**(2)** - Հիմա ինքն անաշխատունակ ա, ծեռքերը էն չեն, հույս էլ չունեմ, որ նման գործ կճարվի, որ աշխատի:

- Էնտեղ ինքը բանվորություն էր անու՞մ:

**(2)** - Հա, շինարարության վրա աշխատում էր ու էդտեղ էլ դեպքը պատահել ա: Էնտեղ նույնիսկ յուրիստի ա դիմել, բայց ոչ մի հարցով էլ չեն օգնել, որ գոնե թոշակ տան:

**(1)** - Իրանց ժողովուրդը չի, ինչի՞ պիտի օգնեն:

**(4)** - Մեզ մերոնք շա՞տ են օգնում, որ նրանք օգնեն:

**(2)** - Դե գրանցում չունի, ժամանակավոր է էղել գրանցումը:

- Եթե ինքը ժամանակավոր գրանցում ունեցել է, ինքը ոչ մի ապահովագրություն չէ՞ր ստանալու:

**(2)** - Չէ, որովհետև դա մասնավոր գործ է եղել, պետական գործ չկա հիմա, որ ոնց որ առաջ ունեինք, չէ, հիմնարկներում տենց բան, հիմա ոչ մի նման բան չկա: Երեք ամիս հիվանդանոցում պառկել ա, 5 հատ նարկոզ ա ընդունել, անդամահատված մատներով էկել ա:

- Ի՞նչ հարցով է ինքը յուրիստի դիմել:

**(2)** - Որ թոշակավորեն, խորհուրդ է հարցրել, ինքն էլ նույնիսկ ոչ մի փաստաթուղթ էլ չի վերցրել, կարողացել է մի կերպ, ինչքան որ աշխատած գումար ա ունեցել, հիվանդանոցի, իրա վրա մնացած ամեն ինչը, մի կերպ, նենքան, որ վերքերը փակված, արյուն չի գնում վերքերից, տենց էկել ա: Էս մի քանի օր ա: Չորս երեխա եմ դպրոց ուղարկում: Մեծս իններորդ դասարան ա, փոքրս՝ առաջին: Դպրոցն էլ իրա պահանջներն ունի, իրա պայքարն ունի: Երեք մեշոկ փետ եմ առել՝ չորսն էլ վառելիքի համար պետք ա սենց սումկեքը լցնեն ու տանեն դպրոց: Հույս ունեի, թե մարդս աշխատում ա, կգա: Էն էլ... Փառք Աստծո էկել ա:

- Դուք ինչ-որ տեղ աշխատու՞մ էք:

**(2)** - Չէ:

- Քանի՞ տարեկան էք:

**(2)** - 41:

- Իսկ Ձեր ամուսինը՞:

(2) - 41:

- Հիմա ի՞նչ էք անելու:

(2) - Անհույս նստած ենք, դեռ չեմ էլ կարող կողմնորոշվել, դեռ ոչ մի բանի հույս չկա: Նախ ցուրտ ա եղանակը, նա ի վիճակի չի նույնիսկ պահակություն անել, որովհետև եթե դուրս եկավ, ինֆեկցիայի բուն ա, մատները դեռ ուռած ա, գույնը փոխված ա...

- Գնալն այլևս բացառվու՞մ է:

(2) - Եսիմ, էլ ու՞ր գնա տենց:

(4) - Էլ չի կարա աշխատի: Մանավանդ իր գործը ձեռքի աշխատանքի հետ էր կապված: Քանի՞ ընտանիք էդպես քայքայվեցին:

(1) - Կամ ինքը որտե՞ղ աշխատի, էստեղ աշխատողները փող չեն ստանում:

- Երբ որ Ձեր ամուսինը դրսում էր, գումար ուղարկու՞մ էր, դուք դրա հաշվի՞ն էիք ապրում:

(2) - Նպաստ էի ստանում:

(4) - Ինքը գործում ա շատ ընտիր, գործելով էր պահում աղջիկներին:

(2) - Նպաստով մի կերպ հասցնում էի հոսանքի վարձը տալ, դեռ մի 30 հազար պարտք ունեմ, դա գումարված ա տարիների ընթացքում, դա 5 տարվա ընթացքում պիտի տամ տոկոսներով:

- Ինքը ոչ մի բան չէր կարողանում ուղարկե՞լ:

(2) - Ոչ մի բան:

- Փաստորեն, հիմա իր գալը ձեր վրա անդրադառնում է ոչ թե գումարի աղբյուրից զրկվելով, այլ մի նոր ծանրություն է ավելանում...

(2) - Հա, ես մեծ հույսեր ունեի իր գալու հետ կապված:

(1) - Հա, այսինքն մի բան թեթևացնելու փոխարեն, հոգսը կրկնապատկեց:

(2) - Հա, ճիշտ է: Նույնիսկ իրան էլ եմ ասել՝ եթե տենց էիր գալու, չգայիր, էլի համբերում էի, սպասում էի, որ դու պետք ա գաս, ուրիշ ձևով... առաջ շատ լավ ընտանիք էինք, բայց թե հիմի ոչ ջերմություն ա մնացել, ոչ սեր ա մնացել...

(7) - Իմ աղբերս էլ դրա համար չգնա՞ց: Փողի պարտքի համար, տոկոսը վրեն էր: Էրեխուն բանակ էր ուղարկում, հետո բանակում գործերը հաջող չգնաց...

(4) - Օպերացիաներ էղան...

(5) - Վիրահատվեցին...

(7) - Ինքը վիրահատվեց, տղեն վիրահատվեց, աղջիկը վիրահատվեց, սաղ էդ հիվանդանոցի պարտքերը, բանակի պարտքերը կուտակվեց էդ մարդու վրա...

(1) - Էդ ժամանակ տոկոսը տոկոսի հետևից, 100 դոլար վերցնեիր, նենց էր գալիս հասնում իրեք, չորսի, սկի աչքդ չքարթած:

(7) - Մենք նույնիսկ 30 տոկոսով էլ ենք վերցրել:

(2) - Բացարձակ ոչ մի բանի չեմ հավատում: Ես չորս էրեխու մղկտալով եմ պահում, որ գոնե գրքերի փողը տամ: Դեպուտատ պիտի ընտրվեր, ասեց



գրքերի հարցում կօգնեմ: Ես դրան ձայն տալու համար հասել եմ դատարան ձայնս վերականգնել եմ, որ գամ դրան ձայն տամ, ու հավատ ա, չէ՞, էդել մեջս, որ ես մի հարցով կարամ քեզ դիմեմ:

- Ինչու՞ էք հասել դատարան:

(2) - Ցուցակում անունս չկար:

(4) - Ընտրության ցուցակներում էլ էինք արհամարհված, տնակում ապրողների մի մասին էդ ընտրության ցուցակներից հանել էին:

(2) - Որ ամուսնուցս բաժանվեմ, ես էդ հարցերով չեմ գնա դատարան, դա պատիվ չի բերում, բայց հասել եմ, որ պատգամավորի ձայնը բերեմ: Բերել եմ, որ ստորագրեմ, իմ ձայնն անցնի, ու գյուղխորհուրդն էլ դեռ ինձ ամոթանք ա տվել՝ էդ խի՞ ես հասել էստեղ, դու գիտե՞ս ինչի համար ես գնըմ: Ոնց որ մի ուրիշ հավատ կար մեջըս, որ մի հարց կլուծվի: Ոչ մի բան:

(1) - Բա դրանք լավ բան կանե՞ն:

(2) - Բայց չեղավ: Դպրոցի գրքի փողն ի՞նչ ա, դու կարայիր շվացնելով[15] էլ էդ հարցը լուծեիր, բայց ես ինչի՞ համար ամեն մի դիրեկտորի կաբինետ մտնելուց, քրտինքը իմ վրա է տվել, վայել չի էլի հայ կնոջը, որ տենց գնա: Առանց ձեռքս մեկնելու մուրացկանություն եմ արել, բայց թե գոնե հաց կբերեի իմ էրեխեն կուշտ կուտեր, գրքի համար եմ ուզել: Բայց առանց գրքի ո՞նց կլինի, իմ էրեխեն սովորող էրեխա է, ո՞նց գնա դպրոց:

- Էդ պատգամավորի ինչի՞ն էք էդպես հավատացել, որ մինչև դատարան էք հասել: Ծանոթ էր, բարեկամ էր...

(2) - Չէ, մենակ խոսքին:

(4) - Խոսքին:

(1) - Ասել ա՝ հայ մարդ ա, մեկը պիտի լինի, որ գործ անի, ինքն էլ լավ տղա ա, գործ անող տղա ա:

(2) - Հայ ա, մտածել եմ, որ լավ կլինի, լավ տղա յա, նույնիսկ ագիտացիա եմ տարել, մեքենայի մեջ լցվել գնացել ենք... Նույնիսկ խաբարն էլ տեղ ա հասել, որ Գուգարքըմ սենց արտակարգ վիճակ ա, որ քանի հոգու դիտավորյալ, չգիտեմ թե մեղք կգործեմ, հանել են ցուցակից: Ամուսինս ստեղ չէր, անունը կար ցուցակում, ես ստեղ եմ՝ իմ անունը չկար:

(4) - Մեռած մարդկանց անունները կար, մենք կենդանի, մեր անունը չկար: Գնում ես ընտրության՝ քեզ ասում են՝ անունդ չկա:

(3) - Էդ դիտավորյալ են արել, որ մեռած մարդկանց տեղը իրանք ում որ ուզում էին, ստորագրությունները կարող էին դնել, իսկ ժիվոյ[16] մարդու ստորագրություն չէին կարող դնել:

(2) - Ես մեծ, բազմանդամ ընտանիքի երեխա եմ եղել, ես Սպիտակի գյուղից՝ Ջրաշենից եմ: Էն ժամանակ, որ մի օգնություն էին ցույց տալիս մեզ, մի զույգ կոշիկ, ինչ-որ բան, ամոթխած լացակումաց ասում էինք՝ ո՞նց տանենք: Պապայիս էլ հաճելի չէր, մամայիս էլ, կամ դպրոցում, 30 էրեխա կար դասարանում, ինչի՞ ես վերցնեմ: Բայց թե դա մուրացկանություն չէր, դա տալիս էին: Հիմա էլ խնդրըմ ենք, բայց թե չի հասնըմ: Էն օրը Սիլվան էկել դրսից ա-

*15. Սուլելով:*

*16. Կենդանի, ներկա:*

սում ա աչքդ լույս, օգնություն կա: Իջել եմ, ոտով էլ գնում եմ, եթե գումար ունենամ, ավտոբուսով կգնամ, իջել եմ, խնդրում եմ՝ էդ կատեգորիայի մեջ ես մտնում եմ, բա խի՞ չկա: Ասում ա Գուգարքում էք ապրում՝ ձեզ չկա: Էն ժամանակ իրենք էին բերում՝ մենք ամաչում էինք, չէինք ուզում, հիմա գնում խնդրում ենք՝ ասում են «չի հասնում»:

**(1)** - Լսեցի՞ք, Գուգարքի ու քաղաքի տարբերությունը ինչն է:

**(2)** - 20 կգ ալյուր, մի լիտր ձեթ, որ դա ես արդեն մտովի կես ամիսը անցկացրեցի, բայց չկար:

- Ձեզ հողատարածք չի՞ հասնում էստեղ:

**(4)** - Գնացել ենք գյուղապետի մոտ, էդ հողի բաժանման մոմենտներին էր, ասել ենք՝ մոտիկ տեղ մեզ էլ մի քիչ հող տվեք, որ մի երկու վեդրո[17] կարտոշկա ցանենք: Ասել ա՝ օրդերդ դիր, տանից հրաժարվի՝ ես քեզ հող տամ: Շենքը չկա, գիտե՞ս, կվարտիրեն գոյություն չունի, դոմիկում ենք: Ասում ա օրդերդ դիր, որ ես քեզ հող տամ: Էդ չեղած շենքի օրդերը:

**(1)** - Էս ժողովուրդը դեռ ապահովված չէ, դեռ դոմիկում են, էս տան տերն էլ գալիս ասում ա՝ էս հողատարածքը գործկոմի որոշումով տվել են ինձ, էս դոմիկը հանեք, Մարուս, ստեղ ազատեք: Մարուսենք էրկու հատ մալինի քուփ ունեին տնկած, հանեցին շպրտեցին: Ու հլը մի հատ էլ խնդրել ա էս տան տիրոջը, որ միք շպրտի մեզ ստեղից, որ հլա տեսնանք մեզ ինչ են անում: Գործկոմ, դու չգիտե՞ս էդ շենքի տեղը, ինչի՞ համար ես ծախում, էդ ժողովրդին չես ապահովել, կամ էն, որ էդտեղ դոմիկներ կան դրած:

**(3)** - Որովհետև էս տան տերը Գերմանիա ա, փող ա ուղարկում, որ իր տները ստեղ սարքեն:

**(2)** - Ի՞նչ ես ասում, ծաղկած կանաչ լոբին չպոկեցի՞ն ու գցեցին ճանապարհին, բա Ճանոյի[18] տղեն ա:

**(4)** - Ճանոյի էդոյի տունն են սարքում, ճանապարհ ա պետք:

**(3)** - Իրեք հատ շենք է, ամեն մեկը մի կվարտիրի չափ են, ու մի հատ ապրող չկա:

**(1)** - Հենց դրա համար էլ մեծամասամբ թողել գնացել են, զզվել են էս վիճակից: Սպասում են տուն ստանան, փակեն ու թողեն գնան:

**(3)** - Մենք էլ, որ ստանանք, թողելու ենք ու գնալու ենք:

**(2)** - Հակառակ քեզ՝ ես խիստ հայրենասեր եմ, խի՞ պիտի գնամ, չեմ գնալու:

**(3)** - Չէ, ինձ համարի գնացած: Որ պահին տունս ստացա, վեշս կդնեմ մեջը, դուռը կփակեմ, Նունեին էլ կասեմ՝ կնայես իմ տանը, ես գնացի, աստված գիտի, երբ կգամ:

**(2)** - Իսկ ես կարող ա էրեխան բանակի հասնի, նոր գամ: Որ գամ՝ ուղարկեմ բանակ:

- Բայց հակառակն են անում՝ գնում են, որ բանակում չծառայեն:

**(2)** - Մեր մոտ տենց չի:

**(3)** - Ես չեմ փախցնում իմ էրեխուն, տանում եմ, որ ապրի, գոյատևի, բայց գա հայրենիքի համար ծառայի:

---

*17. Դույլ:*

*18. Վանաձոր քաղաքի առևտրային տնտեսության ոլորտի հեղինակավոր մարդ:*



**(4)** - Իմ եղբոր ընտանիքը Կրասնոյարսկ ա, 3 աղջիկ ուներ: Էսօրվա օրով իմ եղբոր աղջիկները դպրոցական են ու հայերենը մոռացել են, պտի գնա արդեն մերձեցում, բա ի՞նչ պիտի լինի: Էրեխեքը նամակ են գրում ինձ՝ тетя Сильва, լրիվ ռուսերեն են գրում, հայերեն չեն գրում, որովհետև ընկել են ռուսական միջավայր, հայեր չկան էնտեղ, մի կերպ ապրում են, որ իրենց գոյությունը պահպանեն:

**(1)** - Կգա ժամանակ, որ մենք ոնց էինք Ստալինին սխալ հանում, մեր ժամանակաշրջանում, մեր պակալենիեքը[19] ոնց էր սխալ հանում, Ստալինը փառք ա ընելու:

**(4)** - Մարդու մտքով ինչ ասես, որ չի անցնում:

**(1)** - Ամեն քայլում քաղաքականություն է, ամեն ինչ մտածում ենք, ամեն ինչ: Նույնիսկ մտածում էինք, որ դիտավորյալ նենց են անում, որ Հայաստանում մարդ գոյություն չունենա, ինչ-որ մի պետության համար ռազմական բազա դառնա սա: Հնարավոր չի՞: Իհարկե հնարավոր ա:

- Ո՞ր պետության համար:

**(1,2,4,7)** - Ամերիկայի:

**(1)** - Որ ցուցանիշի վրա նայում ես, էն ժամանակ ռուսերեն էր գրվում, հայերեն էր, հիմի՝ անգլերեն ա գրվում:

**(4)** - Երևանում էլ՝ պարսկերեն:

**(1,2)** - Որ ռուսի հետ էինք ապրում՝ լավ էինք ապրում:

**(1)** - Ամենակարևորը, որ լավ էինք ապրում:

**(7)** - Հիմա էլ Ամերիկան է պահում:

**(1)** - 10 տարի հա օգնում ա, ի՞նչն ա լավացել:

**(3)** - Զատո[20] անունով անկախ ենք:

**(1)** - Չհասկացա, անունն ա՞ կարևոր: Անունը կա՝ ամանում չկա:

**(7)** - Ալվարդ, ումի՞ց ես անկախ:

**(3)** - Չգիտեմ:

**(1)** - Էսօր Ռոբերտ Քոչարյանը խոսում ա՝ հայ մարդ ա: Նայում եմ, ասում եմ որպես հայ մարդ, մանավանդ հայ տղա, մեր սաղ տղամարդիկ էլ լավն են, վատ հայ տղա չկա, նայում եմ տղեքին՝ մեջները մի հատ վատը ես չեմ տեսնում, բայց ես ափսոսում եմ, որ նման այրեր ունենք: Եթե նա իրան թույլ ա տալիս, որ հայ կինը էսօր Սաղախլովում յաշիկ[21] ա քարշ տալիս, նա խոսալու տեղ չունի: Ասում եմ՝ ափսոս ա «հայ» բառը, որ նրանց կպցնում ենք՝ մեր պետական այրերին: Ո՞նց ես թույլ տալիս, որ հայ կինը, հայ աղջիկը գնա... Հարեմներ էս բացել: Էրևան հայ աղջիկները, 15-16 տարեկան էրեխեքը իրանց ծախում են: Ես մենակ մի բան եմ ասել, ես Աստծուց խնդրել եմ, որ նման մարդկանց աղջիկն իրան ծախի, էդ ցավը իրա վրա զգա, որ իրա էրեխեն իրան ծախի, պարսիկից կամ թուրքից ինչ-որ մի հատ էրեխա ունենա, աչքերը չքարձացնի, որ զգա էն հայ բանվոր մարդուն, որ նրա աղջիկը էսօր հարեմում իրան օգտագործել ա տալիս պարսիկներին կամ ինչ-որ մեկին: Ամոթ չէ՞ք անում, բա հայի պատիվը ու՞ր մնաց, բա էն մեր լավ էրեխեքը, որ սր-

---

*19. Սերունդը:*

*20. Փոխարենը:*

*21. Արկղ:*

րություն են, որ հայ տղեն պիտի ամպերին նայելով ման գար, հմի գլուխը չպիտի բարձրացնի: էդ հայ աղջիկը իրեն կամ քուր ա, կամ հարազատ ա, հորքուրի էրեխա: Բոլորն էլ եղբայր ունեն կամ հայր ունեն: Ամոթ չէ՞ք անում:

- Կիրովականում էլ կա՞ նման պրոբլեմ:

**(1)** - Բա չունե՞նք: Ունենք, որ գնացել են Իզրայել, ստեղ, ընդեղ էս գործով են զբաղվում: Մնացածներին էլ գալիս ասում են՝ էնտեղ լավ ա, տուն են գալիս առնում, ավտո են առնում:

**(4)** - Փողը բերում են:

**(1)** - Ասում են՝ փող ենք բերում, լավ հագուստ ենք բերում: Նյութականը էն բանն ա, որ յուրաքանչյուր մարդ օգտում ա էդ լավին, նյութականին, անկախ նրանից, թե դա մարմնի գնով ա, ինչի գնով ա: Կան մարդիկ, բա բոլորի ուղեղը միքատի չի, որ չհասկանա, որ դա դրանով ա աշխատում: Թեթև մտածող էրեխեքը ընկնում են էդ հոսանքի մեջ ու գնում:

- Խաբու՞մ տանում են, թե՞ գիտեն ինչի են գնում:

**(4)** - Մի մասին խաբում են, մի մասին էլ մտածված են տանում:

**(1)** - Չէ, նա գիտի ու գնում ա ֆինանս աշխատելու:

- Ո՞վ է դա անում:

**(1)** - Մի քիչ ավելի զարգացած, ավելի դուխը տեղը աղջիկն ա ընկնում էդտեղ, իմանում ա, թե ոնց ա աշխատում, գալիս ա մնացածին էլ, մի քիչ թույլ էրեխեքին հավաքում խաբում տանում ա:

**(3)** - էդ էլ ա բիզնես:

- Ամեն մեկդ քանի՞ դեպք կարող է հիշել, որ Կիրովականից էդ բանով են գնացել դուրս:

**(1)** - Ես գիտեմ, օրինակ, որ մի աղջիկ, Ալավերդու աղջիկ, ինքը գնացել ա ու հետն էլ ընկեր ա տարել մի 5-6 հոգի, նրանք Դուբայ են գնացել:

**(4)** - Ի՞նչ ենք իմանում ուր են գնում, ու՞մ են առնում:

**(1)** - Կամ էստեղ շրջապատում գիտենք, որ կին է գնացել Թուրքիա ու տարիներով մնացել է էնտեղ: Դուք ինքներդ մտածեք, ինչո՞վ է ինքը էնտեղ մեծ-մեծ գումարներ աշխատում բերում, կամ ինչո՞վ է էնտեղից ստեղ մնացողին օգնում, ո՞վ ա օգնում:

**(4)** - Հիմա էլ ասում են, որ հենց իջնում են ավտոբուսից, արդեն գիտեն, ասում են՝ էս ինչ խանումն էկավ:

- էդ Ալավերդու աղջկա պատմությունը ինձ շատ հետաքրքեց, բա էդ էրեխեքի ծնողները ո՞նց թողեցին:

**(1)** - Լավ էլ ընտանիքի աղջիկ ա: էսօր նրա հայրը նրա ուղարկած փողերով ա վեր-վեր թռչում, լավ ա ապրում:

**(4)** - Ինքը շատ գեղեցիկ, սիրունատես աղջիկ ա:

**(1)** - Ծնողները ստեղ շատ լավ ապրում են, ասում են՝ ի՞նչ ա էղել, փող ա աշխատում ուղարկում ապրում ենք, բոլորը հոմ նույն գաղափարն ու հասկացողությունը չունեն, թե նա ինչո՞վ է էնտեղ աշխատում:

- Չե՞ն գիտակցում, չե՞ն հասկանում:

**(1)** - Երբեմն հասկանում են...

**(4)** - Բայց մի բան էլ բացատրում են, թե ամուսնացել ա:



**(1)** - Նրանք էլ վարիանտ[22] չունեն, փող ա գալիս, ֆինանս ա գալիս, դա էլ իրա աշխատանքն ա: Ի՞նչ ա էղել որ, մտածում են, դե նա էդ ճանապարհն ա ընտրել, թող գնա դրանով փող աշխատի: Բայց դու ամաչում ես:

**(4)** - Մի ժամանակ մենք ամաչում էինք, որ իմ կողքի նստածը անբարոյական է, հիմի ցանկացած երեքից մեկը անբարոյական է ու էլ ոչ մի ամաչելու բան չկա:

**(4)** - Դե հայ ընտանիքներում միշտ էլ բարոյականությունը բարձր է եղել: Իսկ հիմի հայ ընտանիք չի մնացել:

- Իսկ դեպքեր եղե՞լ են, որ գործով գնացել են, ամուսինը կամ կինը, ու էդ գնալը բաժանության առիթ է դարձել:

**(1,4)** - էղել են դեպքեր:

**(4)** - Ասեմ, իմ բարեկամն էր: Երեք քույր էին, երեքն էլ գնում էին Թուրքիա, էն մեկի ամուսինը էնքան էր էս խոսակցությունները լսել, թե կինը էնտեղ անբարոյականությամբ է զբաղվում, որ ասեմ ինֆակտից, թե ինչից, հիվանդացավ մահացավ: Էկավ ամուսնուն թաղեց, ու որ հիմա ստիպված էրեխեքը մնացին իր հույսին, էրեխեքին պահում ա: էն մյուս քրոջ ամուսինը մահացավ՝ քույրը տենց էլ կորած ա Թուրքիայում, չեկավ, որ գոնե ամուսնուն թաղի, տունը ծախեցին: էդ կնոջ տոկոսով փողի համար, որ փող էր վեկալել, որ հասներ Թուրքիան: Հիմի իրա զոքանչը էդ տունը ծախեց, որ աղջկա պարտքերը փակի, գնաց ինչ-որ բարեկամի ընտանիքում ապրում ա:

**(1)** - Մեր աղջիկներից մեկի ամուսինը գնաց Ռուսաստան, էնտեղից ընդհանրապես չեկավ, սկի չգիտի էլ, որտեղ ա, նույնիսկ լուր էլ չկա, մի անգամ գոնե չի զանգել, որ տենա, թե իրա իրեք էրեխեն ինչով են ապրում: Կինն էլ իր մոր վրա իրա 3 էրեխեն բրախել[23] ա ստեղ, գնացել ա Թուրքիա: Դե որ ամուսինը չկա, էդ 3 էրեխուն ո՞նց պահի, դրանց մի ձեւով պիտի պահե՞ր, թե՞ չէ: Նա էլ գնացել ա Թուրքիա, փողը աշխատում ա, ուղարկում ստեղ, որ էրեխեքին պահի:

**(4)** - Ս.-ի դասընկերուհին՝ ամուսինն էնտեղ էր, ինքը մի տարի հետո գնաց, էրկու աղջիկ էրեխա ունի: Գնաց էնտեղ, մի տարի թե էրկու տարի մնաց, էրկու էրեխեն գրկին հետ էկավ, թե՝ ամուսինը չէր ընդունել, էնտեղ նորից ընտանիք ունի:

**(1)** - Մեծամասամբ ընտանիք ունեն:

**(4)** - Հիմա ընկել ա դատարանները, որ դատի տա առանց ամուսնու, ամուսինն էնտեղ ա, չի գալիս, արհամարհական քշել ա: Հիմա ծնողները ընկել են դատարանները, որ էդ աղջկա համար գոնե մի անկյուն ստեղծեն: Էրկու աղջիկ էրեխա ո՞նց ա պահելու, 24 տարեկան աղջիկ ա:

**(1)** - Մեծամասամբ էնտեղ երկրորդ ընտանիքըն ունեն, հազվագյուտ մարդիկ, որ էնտեղ չունեն ուրիշ ընտանիք:

- Կա՞ն կանայք, որ գիտեն էդ երկրորդ ընտանիքի մասին, ու հանգիստ են դրան վերաբերվում, հաշտվում են:

**(1,2,4)** - Շատերը կան:

---

*22. Տարբերակ:*
*23. Լքել, թողել:*

(3) - Մեր հայ կնոջը տված ա, տենց ենք:

(2) - Որ չհաշտվի, ի՞նչ պետք ա անի:

(4) - Ստեղ էլ կան, որ մի տղամարդը երկու, երեք կին ունի: Էն մեկը տանը, էն երկուսը իրանց տներում:

(1) - Հենց կողքիս հարևանը՝ անցած ա 10 տարի, բնական ա, որ նա էնտեղ ընտանիք ունի: Ո՞վ 10 տարի կարող ա գնա ու առանց կին ապրի, տարիներով չի գալիս: Էնտեղ ընտանիք ունի, դոմիկում ապրող մարդիկ են ստեղ, որ տղեն ստեղ էր, ծնողները ստիպված իրանց մեքենան ծախին՝ տուն առան գնացին իրանց համար տեղավորվեցին, և կինը լռում ա, հասկանալով ա լռում: Նախ իր երեխեքի հեղինակության հարցն ա, ոչ բոլոր կնանիք են էդպես հայտարարություն գրող: Լռում ա ու նստում, ասում ա՝ գուցե ժամանակ կանցնի, հետ կգա, հետ էլ չգա՝ երեխանցս կտեղավորեմ, չի լինի, որ որբ են, հայր չունեն:

(4) - Իմ տեգրոջ աղջիկն էլ ա տենց: 5 աղջիկ ստեղ ուներ, ամուսինն էնտեղ երկու երեխա ուներ: Տարեկան մի անգամ թե փող ուղարկի, թե Նոր տարուց Նոր տարի գալիս են ստեղ կռիվ սարքում, սկանդալ սարքում՝ քեզ էլ եմ տանելու, քեզ էլ, մեկ էլ իմանում ենք, որ փախել ա գնացել: 5 երեխա ստեղ են: Ամուսնացրել ա մեկին, բայց թե հերն, թե հայր ունեն:

(1) - Ռուսների բախտը բերել ա, ժողովուրդ ջան, հայ տղեքը գնացել են... Նրանք չէին էլ պատկերացնի, որ սենց մեծ պատոկով[24] կգնան, իրանց բախտը կբերի:

(2) - Որ կարողանան աշխատեն, հետ կգան, ստիպված են մնում:

(1) - Հա, էն ժամանակ եթե 1-2-ն էին գնում, շատ հազվագյուտ էր խոպան գնալը, մերոնք շատ քիչ էին գնում, իսկ հիմի էլ՝ լիքը, էն էլ հայ ամենալավ տղեքը, ամենաաչքի ընկնող տղեքը, որոնք և գործունյա են, և դուխներն ա տեղը, և տեսքներն ա տեղը: Ո՞վ ա հետ գալիս՝ ոչ մեկը:

(4) - Պատճառ են բռնում, թե փող չունենք, որ ձեզ կանչենք:

(1) - Այո, յուրաքանչյուր դուրս էկող մարդուց ձեռներներս լվանանք:

(4) - Ես իմ մաշկիս վրա զգացել եմ: Ես իմ աղջկաս պսակեցի՝ յոթ ամիս փեսես կորավ, կորավ ու կորավ:

(1) - Սիլվան հույսը կտրել էր արդեն:

(4) - Արդեն ասում էի՝ էս ինչ հանցագործ եմ, որ պատահական տղայի վերցրեցի ու տվեցի: 7 ամիս էր՝ ես չգիտեի էդ տղան որտեղ ա:

(1) - Դու պատկերացրու էդ նշանված երեխու հոգեբանությունը, բա էդ հլե մայրն ա, բա էդ երեխեն ի՞նչ ձևի կտանեն:

(4) - Մինչև որ 7 ամիսը լրացավ, էկավ տարավ գնաց: Փող չուներ, որ գար: Գնացել էր փող բերելու, որ գա ամուսնանա:

(3) - Գնացել էր փող ստանար գար, փողերի էդ հարցերը չէր լուծվում՝ էդքան երկար մնաց:

(2) - Մեկ ա, մեղավորը մեր հայ կինն ու աղջիկն են, որ նավսոտ[25] են էղել:

(4) - Նրանից հետո էլ ամուսնացավ տարավ, մի տարի հետո, արդեն երե-

*24. Հոսքով, մեծ քանակությամբ:*

*25. Այստեղ՝ նեղացկոտ, դժվար խառնվածքով:*



խա ուներ, արդեն հայրը մահացավ, հիմի էլ էդ ժամանակ մի տարի մնաց: Ինքը գնաց, էլի աղջիկս ու թոռս մնացին: Մինչև որ մի տարվա մեջ փող ստեղծեց, որ էկավ տարավ: Դրա համար, վախից, ես հոր մահվան ժամանակ ասի՝ հանկարծ թող չգան, եթե գար, պիտի ստեղ մնար, արդեն ընտանիքի քայքայում էր գնում: Ես ի՞նչ իմանամ նրանք էնտեղ ո՞նց էն ապրում, մեզ ասում են՝ լավ ենք ապրում:

(1) - Մեր երեխեքը, որ բանակից էկան, համարյա լրիվը մի տարիքի երեխեք էին, մի 20 երեխա: Բանակ են գնացել, էկել, ստեղ նստած գռույց են անում: Դե գործ չկա, դե էս երեխեքը դես են կպչում, դեն են կպչում, պապիրոսի փող էլ չեն կարողանում իրանց համար աշխատեն, ճարները ինչքան կտրի, որ ի՞նչ անեն: Իմ տղեն վեր կալավ, թե՝ մի կռվից-բանից, մի պատերազմ չի վեր կենում, որ մարդ գնա մասնակցի: Պատկերացրու մեջները էնքան էներգիա կա, բայց վատնելու տեղ չկա, որ նրանց էդ պատերազմն էլ է ձեռք տալիս, որ գնան կռիվ անեն, այլ ոչ թե պատի տակին նստեն: Ինչքա՞ն կարելի ա պատի տակին նստել, պապիրոս ծուխալ:

(4) - Մեր հարևանը երեք տղա ունի. 31, 29, 27 տարեկան տղաներ են, դոմիկի պատճառով չի կարողանում ամուսնացնել:

- Բայց չեն գնացե՞լ:

(4) - Մեկը գնացել ա:

(3) - Էս մի ընկերուհին չի խոսում, ասա՝ տղեդ ու՞ր ա: Հիմա լաց կլինի, բանակից էկել ա ու ու՞ր ա:

(5) - Ի՞նչ ասեմ, գնացին երեխեքը, երիտասարդները աշխատելու, փողը ստեղծելու, որ գան տուն առնեն, բոլորը, էդ մեր 25 երեխեն, որ ասում ա ընկերուհին, դրանք վատ երեխեք չեն, բոլորը գնացել են... ինչի՞ պիտի սենց լինեն, որ հայ տղամարդը տանից դուրս գա, և տան կինը օրերով, ամիսներով նստած սպասի, թե մի օր պիտի դուռը բացվի ու ներս գա: Կարոտով նստած սպասում ենք, գիշեր-ցերեկ: Այ, Նոր տարի է գալիս, պիտի բոլորը երջանկանան, բայց ես չեմ երջանկանում, ինչի՞ս վրա: Թեկուզ փող ուղարկեն: Ե՞ս պիտի երջանկանամ, որ Նոր տարուն սեղան գցեցի, երբ որ ընտանիքիցս երկուսը՝ դուրս, երկուսը՝ էստեղ, և ես սեղան սարքեմ, դոմիկը նստեմ սպասեմ, թե ո՞վ պիտի դուռը բացի: Ո՞վ պիտի գա, թաղում մարդ չկա, բոլորը դուրս էկած են, բոլորը: Մարդ չկա, մնացածները ինձ նման...

- Էստեղից գնացողները էնտեղ հիմնականում շինարարությամբ են զբաղվու՞մ, թե՞ ուրիշ գործեր էլ են անում:

(1) - Չէ, պատահական ինչ ստացվի: Իմ ամուսինս վարորդ ա, իմ տղան առևտուր ա անում, իրա տղան շինարարությունում ա աշխատում: Հիմա էլ բրիգադ չկա, հիմա արդեն առանձին են:

- Իսկ ե՞րբ էր, որ միասին էին գնում:

(1) - Անցած տարի:

(3) - Բոլորը միասին գնացել են՝ էկել:

(4) - Էն էլ լավ չէկան: Փողերը չէին տվել: Բոլորը սոված էին նստած:

(1) - Բա ինչ կլինի, եթե մենք էստեղ ենք ապրում ու մեր փողը մեր կառավարությունը, մեր հայրենիքը մեր փողը չի տալիս, մենք ի՞նչ ենք անում, ոչինչ էլ չենք անում, ու՞մ գլուխը կարող ես ջարդել, ոչ մեկի: Իսկ նա էլ օտար

երկիր ա, դու էլ էնտեղ օտար մարդ ես, կուզի՝ կտա, կուզի՝ չի տա:

(3) - Լավ են անում, շատ լավ են անում:

(1) - Ինքն իր խիղճը, ինչ կարաս անես, աշխատում ես էն հույսով, որ չի քաշի[26], իսկ եթե չուզեց, գլխիդ կտա կանցնի, ոչ մի բան էլ չես կարող անել, օրը 100 հատ դիակ են բերում: Ինչքան էրեխա ունենք՝ տարան գլուխները կերան, բերեցին:

- Իսկ իրար էնտեղ պահելու, մեկը մյուսի համար, ոնց որ ասում են կրիշա կանգնելու...

(3) - Չէ, մերոնք էդ աստիճանի թափով չեն:

(4) - Դա մեծ կրուգի շրջապատ է պետք, որ գլուխդ պահես, դա ավելի թափովների համար է խնդիր: Թեկուզ և որ իրենց մարդ զգան, շրջապատ ունենան:

(1) - Սրանք օրվա հաց աշխատող ժողովուրդ են, որ մի էրկու կոպեկ աշխատեն, բերեն ծնողահան անեն, պարտքեր-մարտքեր ունեն, էդ տան... Թե չէ ստեղ մեծ փող աշխատող մարդ չկա, որ աշխատեն՝ դոմիկում կմնա՞ն: Շատ ոտքի հետ գները գնում են[27]: 3 սենյակը 1800 - 2000 դոլար է, որ փող աշխատեն, կգնան իրանց համար կառնեն, էլի, քան թե որ մնում ա էս երկաթի վագոնի միջին:

- Դուք ասում էիք, որ եթե նույնիսկ տուն էլ ստանանք, կփակեք ու կգնաք...

(3) - Այո: Ամեն ինչը ծախում են, որ մի տոմսի փող անեն: Մեր շրջապատում կա, գդալներից բռնած: Տան վեշը սենց կապած, ինչ որ տանը կա, բոլորը ծախըմ են, էժան-մեժան, մի փոքր փող ունեցողն էլ իրան ինչ պետք ա առնըմ ա, ծախում են, որ գնան:

- Ամեն մեկդ քանի՞ ընտանիք հենց հիմա կհիշի, որ գնացել են ու գիտեք, որ հետ գալու միտք չունեն:

(3) - Գնունին, հլե հաշվի, էս արանքներում մի էրկու հոգի գնացին:

(1) - Մանուկյանի տղեն ա, Ռուկյաններն են, Վիոլան...

(4) - Իմ խնամին 7 էրեխա ունի, յոթն էլ ստեղ չեն, ամեն մեկն էլ արդեն ամուսնացած, իրենց ընտանիքներով: Հիմա էդ իմ աղջկա կեսուրը յոթ էրեխա ունենալով հանդերձ իմ նման մենակ ա: Ես երկուսը ունեմ՝ դժվարանում եմ: Բայց նա յոթ էրեխա ունի՝ 5 աղջիկ, էրկու տղա ու բոլորը տարբեր տեղեր:

(1) - Ես մի աֆիցիալ[28] տվյալ ասեմ, ես մանկական պոլիկլինիկայի հաշվապահ եմ: Անցյալ տարի հունվարի մեկի դրությամբ մանկական պոլիկլինիկան ունեցել ա 8200 էրեխա, պատկերացնու՞մ եք, կամուրջից էս կողմ, այսինքն Բազում, Դիմաց թաղամասերը: 8200 էրեխա է ունեցել, էսօր հաշվառում ենք արել դեկտեմբերի 20-ի դրությամբ, մնացել ա 7036 էրեխա, այսինքն 1164 էրեխա դուրս ա էկել Կիրովական քաղաքի Դիմաց ու Բազում թաղամասերից, մենակ էդ էրկու թաղամասերից մի տարում: Իմ կարծիքով, եթե սուտ չխոսանք, մեր քաղաքի 60 տոկոսը չկան:

- Դուք հիմնական և ժամանակավոր գնացողներին միասի՞ն եք հաշվում:

26. *Այստեղ՝ չի խփի:*

27. *Այսինքն՝ շատ էժան են:*

28. *Պաշտոնական:*



(1) - Հա, միասին:

(3) - Հիմնականում առաջինը տղամարդիկ են գնում ու եթե հնարավորություն է լինում տուն, տեղ ստեղծելու, ընտանիքին կանչում են:

(4) - Ու արդեն դառնում են հիմնական:

- Այսինքն, եթե վիճակը այնտեղ լավ է լինում, ընտանիքը գնում է, եթե վատ է լինում, ընտանիքը էստեղ էլի փող չի ստանում ու միշտ պատրաստ է էն վիճակին, որ մի տեղ գնա:

(2) - Բոլորը ճամպրուկային տրամադրությամբ են ապրում, մեկը ես, եթե հիմի հնարավորություն ունենամ, ես էլ կգնամ:

(1) - Էսքան տարի մեր էրեխեքին պահել ենք, մեծացրել, հենց էդ դոմիկներում, ու ուղարկել էդ պոստերում պաշտպանելու, հիմի ցավ եմ զգում, որ ու՞մ համար գնան պոստ պահեն: Ճիշտ ա, ես հայրենասեր մարդ եմ: Նույնիսկ մի մատ հողը իմ համար թանկ բան ա: Ուղղակի ափսոսում եմ, թե ու՞մ համար, որ էդ նույն դոմիկի ապրողը վատ կառավարության պատճառով էսքան մեր էրեխեքը թողել են ու գնացել: Ու՞մ համար գնացին էդքան պաշտպանեցին:

(4) - Գնացին պարտքերը կատարեցին:

(5) - Հլե չգնային, կարայի՞ն:

(1) - Խի՞ չէին կարա, իրանց տղեքը ո՞նց կարային, որի՞ տղեն ա ծառայել: Վերցնենք, ո՞ր պետը, ո՞ր նաչալնիկը... Ամեն մեկը մի բանկ ստեղծել են, ու իրանց ուղեղները աշխատացնում են մի ուղղությամբ, թե ոնց անեն, որ իրանց էրեխեքը չծառայեն:

(4) - Արտասահման են ուղարկում, ուր ասես ուղարկում են:

(1) - Դե ձևերը գիտեն, էկած փողերը սաղ իրանք ուտում են ու ուղարկում:

- Ձեր թաղից արտասահման գնացող կա՞, թե միայն Ռուսաստան են գնում:

(3) - Կան, Գերմանիա են գնացել, ով հնարավորություն ունի, արտասահման է գնում:

(4) - Գերմանիա, Հոլանդիա...

(3) - Հունաստան էլ կա, Հունաստան շատ կա:

- Էդ արտասահման գնացողների համար էստեղից ավտոբուսներ կա՞ն գնացող:

(1,3,4) - Չէ, վերևի ճանապարհներով. Մոսկվայով, Երևանով են գնում:

(4) - Իմ աշխատանքային ընկերուհին Ամերիկա էր ուզում գնալ, չկարողացավ, տարբեր ճանապարհներով գնաց տեղ հասավ, հետո էկավ աղջկան ամուսնացրեց ու աղջկան էլ տարավ:

(3) - Մի ընկերուհի ունեմ, երեխան ինստիտուտում սովորում էր, էկավ էն պահը, որ վճարները չէր կարողանում վճարել: Էս աղջկա հորքուրի աղջիկը Թուրքիայում էր աշխատում, առաջարկեց սրան, թե գնանք ինձ մոտ ժամանակավորապես աշխատես, վերջը էրեխեն ինստիտուտից դուրս չի մնա: Էս աղջիկը գնաց Թուրքիա, ամուսինը մնաց էստեղ, ինքը գնաց: Էստեղ էդ աղջկա մասին բամբասանքներ տարածվեց, չնայած ինքը տենց աղջիկ չէր, դա բամբասանք էր: Ամուսինը էնքան նեղվեց, որ ստիպված տոկոսով փող վերցրեց ու կնոջ հետևից անհասցե գնաց: Գնացել գտել էր ու տեսել էր, որ կինը

աշխատում է կարի ֆաբրիկայում արդուկի վրա, էդ արդուկներն էլ արեստով են, տենց էին նկարագրում: Ամուսինն էլ հետն ընդունվեց, միասին աշխատում էին, էս ա արդեն մի տարի ա: Որ ամուսնու հերը մահացավ, ամուսինը մի անգամ էկավ, հողը թաղեց, վերջացրեց ու նորից հետ գնաց: Հիմի արդեն գալիս են հետ: Բա ի՞նչ պիտի անեն: Իրեք աղջիկ էրեխա ունեն: Մեկը վճարով ինստիտուտում ա սովորում, բայց որ ինքը գերազանցիկ էր, վճարը կիսով չափ կրճատեցին: Հիմա ամուսիններով հետ գալիս մի տարի երևի էստեղ կանգկացնեն, բայց նորից ըստ երևույթի պիտի գնան:

**(1)** - Բա միջոց չկա էստեղ, ինչքան ուզում են աշխատեն, օրվա հացը չեն կարողանում ստեղծեն, մի վարիանտ պիտի գտնեն:

**(3)** - Իրանք ստեղ իհարկե աշխատում էին: Էդ աղջիկը ստեղ հացի փռում, լոշի փռում թխում էր, տանը պոնչիկ թխում էր՝ օբյեկտներում հանձնում, բայց արդյունք չկար, չէր կարողանում վճարները հասցնել: Ուրեմն առավոտը ժամը ութին վեր էր կենում պոնչիկի խմորն անում, գնում լոշի փռում լոշը թխում, ընթացքում գալիս էր պոնչիկը թխում էր, կեսօրին տանում՝ օբյեկտներին հանձնում: Էդքան չարչարվում էր և չէր կարողանում օրվա հացի փողը ստեղծել: Ստիպված ընկավ երկրե երկիր էդ աղջիկ էրեխեն: Էրեխեքին կիսուրն ա պահում, էսօր էլ չգիտի իր հասած էրեխեն ի՞նչ օրի է:

- Կարինե՞ն էլ է թխում հանձնում:

**(1,2,3,4)** - Չէ, յաշչիկ[29] ա քաշում, Սադախլո է գնում:

**(1)** - Գիշերը ժամը 1-2-ին գալիս է նստում ավտոբուսը, գնում Հոկտեմբերյան, յաշչիկներով: Պատկերացրու՝ համ բերում էր, համ ծախում ու նորից գնում էր, որ դա տղամարդն անգամ գլուխ չի հանի: Հիմա էլ Սադախլոյի վրա, էնտեղից մանդարին ա, ապելսին ա, քաշ ա տալիս բերում, գիշերը ժամը 2-3-ին ծախում, է...

**(4)** - Քույր[30] աղջիկ ա: 40 տարեկան էլ չկա:

**(3)** - Մի հատ էստեղ խանութ ունենք, որ ստնես՝ ամբողջ առևտուրը միայն պարտքատետրով ա, մինչև ամսվա վերջը: Հենց թոշակը գալիս ա, ամբողջությամբ գնում ա էդ խանութ: Ու էդ խանութի աշխատողը ամբողջ թաղին պաղծերժկա[31] ա անում, որ քո էրեխեն սովից չմեռնի, մեզ բոլորիս մի կերպ տենց յոլա ա տանում, պարտքերը մի ամսից տեղափոխվում են մյուսը: Ու մենք էդ աղջկան ենց դավերիա[32] ենք, որ, ասենք մենք էս ամիս մեր տուն 10 հազարի ապրանք ենք բերել, մենք մեր տանը չենք գրում թե ինչ ենք բերել: Ամսվա վերջին գնում ենք, ասում Անո, հլե հաշվի իմ ցուցակը: Ու Անոան ոչ մի անգամ 5 դրամ մեզ խաբած չկա: Չենք հաշվում, բայց համոզված ենք, որ նա մեզ չի խաբում:

**(1)** - Մի անգամ էլ նեղած չկա, թե պարտքը ինչի՞ չես բերում: Ասում է, գիտեմ, որ նպաստն ու թոշակը որ ստանան, պիտի բերեն, էլի: Երբ որ չունեն, ո՞նց մարդուն խեղդես: Էդքան ժողովրդի հետ յոլա է գնում:

- Բա ինքը ինչի՞ հաշվին է կարողանում էդ գումարը շրջանառության մեջ

*29. Արկղ:*
*30. Բուժքույր:*
*31. Օգնել, օժանդակել:*
*32. Վստահություն:*



պահել, ապրանք բերել:

**(1)** - Ինքը տնտեսություն ունի՝ խոզ, կով...

**(3)** - Նա էլ է դոմիկում, ես գնացել եմ Անոյի ծեռքին տեսել եմ ոսկեղեն կա, ասում եմ՝ Անո ջան, էս ի՞նչ ա: Ասում ա, գնում եմ, բանկից փող բերեմ ծեր պարտքերը փակեմ, ապրանք բերողին տամ, որ հետո ծեզանից փողերը հավաքեմ, տանեմ բանկում տոկոսը փակեմ: Էլ նրա օգուտը որտե՞ղ ա մնում, գիտակցում ենք, որ նա օգուտ չի հանում էդ խանութից:

- Վերադառնանք դուրս գնալուն, էդ ճանապարհների վրա մեծ գումարներ են ծախսվում...

**(1)** - Ով որ գնացել ա, իր աշխատածի 50 տոկոսը միայն ճանապարհի վրա է գնում: Ով որ գնում է ժամանակավոր աշխատանքի, մեծամասամբ բարեկամների ոսկեղենը հավաքել են, տարել դրել բանկում, պարտքով փող վերցրել, դրան ճանապարհել, որ 2-3 ամիս հետո էդ աշխատած փողը ուղարկել ու փակել են: Ստացվեց, որ 2-3 ամսվա փողը գնաց միայն ճանապարհի մի ուղղության վրա: Դրա համար բերած փողը հերիքում է, որ գան ստեղ մնացած հացի պարտքերի փողը տան, ծմեռվա երեք ամիսները յոլա գնան, ու նորից, հենց արևը կպավ՝ պոկվեն գնան, որ բերեն նորից նույն տարին նման ձևով կրկնվի:

**(3)** - Ես ստույգ տվյալ ասեմ: Իմ ամուսինը գնացել ա մայիսի 10-ին: Աշխատել ա մայիսի 20-ից 4 ամիս, արանքում 200 դոլար ուղարկել ա, որի 100-ը իրա գնալու ճանապարհածախսը տվել եմ, 100 դոլարով էլ մի փոքր յոլա ենք գնացել: Էդ չորս ամիսներից հետո 500 դոլարով էկել ա, էդ արանքում մենք ապրել ենք ու արդեն պարտքեր ունեինք: Էդ գումարը գնաց պարտքերին, ու մի 100 դոլար էլ դրանից դրաղ ա դրել, որ մի ամիս հետո նորից գնա: Էնտեղից իր ճանապարհածախսն էլ չեմ հաշվում, որովհետև փեսեն ա իրան ճամփա դրել:

- Գնալ-գալը ինքնաթիռով է՞:

**(1,2,3,5)** - Չէ:

**(3)** - Ինքնաթիռով հետ ա էկել, գնալը ավտոբուսով ա: Բայց էլի գնալը 100 դոլար նստում ա: Ինքը Պերմ ա գնում: Ինքնաթիռով նստում ա 200 դոլար, ավտոբուսով, Սադախլոյով՝ 100 ա նստում:

**(1)** - Երկու ամիս առաջ իմ ամուսինը իրա տղեքի հետ գալուս ա էղել: Ինքը գիտակցել ա, որ գալու ժամանակ Վրաստանի ճանապարհով չի կարա փող անցկացնի, ինքը էրկու հոգու ու իրա փողը բերել էր, բանկով աֆորմիտ էր արել[33] Վլադիկավկազից, Նազրան, էդտեղ էին աշխատում: Աֆորմիտ էին արել, հեշտ էկավ ստեղ բանկից ստացավ: Տղեքից մեկը ռիսկ ա արել իրա փողը իրա հետ բերել: Անցնելու ժամանակ Վլադիկավկազում լրիվ էդ գումարը վերցրել էին: Ու էդ խեղճ տղու երեք ամիսվա քրտինքով աշխատած փողը տամոժնին լրիվ տարել էր: Խղճները էնքան կտրած ա, որ գոնե կեսը վերցնեն:

**(7)** - Անունն ի՞նչ ա էդ վերցնելու:

**(1)** - Վալյուտա ես տանում, դոլար ա, չի կարելի և վերջ: Հետո մեկ էլ

*33. Ձևակերպել էր:*

մնում, ասում ա՝ հանցագործ ես, կոմպյուտորի մեջ հանցագործների մեջ էրևում ես: Դե արի, ապացուցի, որ ես հանցագործ չեմ:

**(3)** - Ուղղակի իրանք օրենքները չգիտեն, չեն կարողանում իրենց շահերը պաշտպանել, դա օրենքի չիմացությունից ա:

**(2)** - Մերոնք էլ, որ անցկացնում էին, ասել են՝ գրանցում չունենք, միայն ռուսական են թողել բերելու: Ու եթե բանկ էլ ես գցում, էլի չես կարող դոլար գցել:

**(1)** - Եթե աշխատել ես, ռուսականով ես աշխատել, որ դոլարով գցես, պիտի դրա դակումենտը ունենաս:

- Որտեղի՞ց էր բերում իր գումարը ձեր ամուսինը:

**(2)** - Օրենբուրգից:

- Որպեսզի մարդ Օրենբուրգից դոլար բերի, ի՞նչ պիտի անի:

**(1)** - Չենցում, որ փոխանակումը կատարում ա ու ռուսականը փոխում ա դոլարի, չենքը նրան պիտի դակումենտ տա, որովհետև դու որ պետությունում, որ աշխատում ես, էդ պետության փողով ես վարձատրվում: Նա, ով ձեռք ա բերել դոլար, պիտի դրա դակումենտը ունենա: Իսկ էս տղեքը էդքան գրագետություն չունեն, բանվոր տղեք են, խելքները չի հասնում, որ էդ դակումենտը վերցնեն: Իսկ էնտեղ էլ ասում են, լսի, Ռուսաստանից ես գալիս, դոլարը քեզ որտեղի՞ց, դա վայլուտա է, գողացել ես:

**(2)** - Իսկ իմ ասածն էլ էն է, որ չենքի տեղում, որտեղ պիտի փոխես, կարող են անձնագիրը ուզեն ու գրանցում չլինելու համար չտան էդ թուղթը:

**(4)** - Դա նրանից է, որ մարդիկ աշխատանքային պայմանագրեր չունեն, որ էդ տիպի հարցերը լուծվեն:

- Ձեր ամուսնու վրա, որ Պերմ էր գնացել ավտոբուսով, ինչքան նստեց պաշտոնական տոմսը և իրական ճանապարհը:

**(3)** - Պերմը չեմ կարող ասել, բայց հիմա Ռոստով ա գնացել, էդ տվյալները կարամ ասել: Ուրեմն 23 հազար ավտոբուսի տոմսն ա, 500 ռուսական էլ տամոժնյային են տալիս, դա մոտավորապես 9500 դրամ է: Փաստորեն 50 դոլարով հասնում են: Գնալուց էլ պիտի իմանաս, դա շատ կարևոր է, թե ում մոտ ես գնում: Օրինակ, իմի իմ ամուսինը իր աղբոր մոտ ա գնացել: Աղբերը մի քանի ամիս առաջ գնացել ա ու հիմա քաղաքային ավտոբուս ա քշում Ռոստովում, հիմա էս մի աղբորն էլ կանչել ա, որ միասին սմենշիկով[34] աշխատեն:

- Ո՞նց է, որ սկզբից Պերմ էր գնում, այլ ոչ թե միանգամից Ռոստով:

**(3)** - Պերմից որ եկավ, էնտեղ սեզոնային գործ էր շինարարության վրա: Էդ էլ ասեմ, որ ինքը շատ դժվարությամբ ա շինարարական աշխատանքին գնում, որովհետև ամբողջ կյանքում վարորդ ա աշխատել: Հիմա ստիպված ամեն ինչ աշխատում ա, որ արդեն հնար չկա, բայց չի կարողանում բանվորություն անել: Հիմա, որ էս ավտոբուսի գործը էղավ, շատ մեծ ուրախությամբ էդտեղ գնաց:

- Ինչո՞վ են ավելի շատ գնում, ավտոբուսո՞վ, թե՞ ինքնաթիռով:

*(ձայները կխառնեցին)*

34. *Հերթափոխով:*



- Ավտոբուսով, որ գնում են, ինչքա՞ն ժամանակ է դա տանում:

**(3)** - Երեք օր: Ամուսինս ամսի 28-ին դուրս էր եկել, ամսի 2-ին զանգեցին, որ տեղ ա հասել:

- Ինքը 50 դոլարը տվել է տոմսի համար, 500-ն էլ տամոժնյան, իսկ ճանապարհածախսը, ասենք՝ ուտելը և այլն ի՞նչ գումար է կազմում:

**(3)** - Ուտելը ես տանից էի սարքել հետը դրել: Ես իրան փող էի տվել, որ ռուսական սարքի ճանապարհածախս ու երբ փեսես ու տղես գնացել էին իրան ճանապարհ դնելու, էդ փողից 3000 դրամ հետ էր ուղարկել: Տվածս քիչ էր, ես դարդ էի անում, թե էդքան քիչ փողով նա ոնց պիտի հասնի, բայց վերջին պահին, ավտոբուս նստելով, էդ փողը տվել ա, որ հետ բերեն: Ես ասում էի՝ բա որ ուտելիքդ չհերիքի ու փող էլ չկա ձեռքիդ, ի՞նչ ես անելու, ինձ պատասխանեց, որ մարդ 40 օր կարող է սոված մնալ:

*(Խմբին միանում է 1-ին կնոջ ամուսինը, որին խնդրում են պատմել, թե ինքը ինչպե՞ս է հաղթահարել ճանապարհը-Շ.Գ.):*

**(1)** - Հլա մի հատ պատմի, թե գնալու ժամանակ էդ ճանապարհը ո՞նց եք անցել:

**Տղամարդ** - Լակոտներ են, էլի, ասում ա՝ «տյանցուլ[35]», ասում եմ՝ «չեմ կարա», ասում ա՝ «դա տի չտո, տագդա պեսնյու պեյ[36]»: Ասում եմ՝ «ո՞րը երգեմ», ասում ա՝ «Ով սիրուն, սիրուն», հայերեն էլ ասում ա: Որ գնում ես, փող են ուզում, ասում ես՝ փող չունեմ, ասում ա՝ դե պար արի, երգի, ծիծաղըմ ա, ձեռ ա առնում:

- Դա Վրաստանու՞մ:

**Տղամարդ** - Օսետինները, չէ, ռուսները տենց բան չեն անում, ռուսական պոստում ասի՝ «փող չունենք», ասեց «լադնո, իդի[37]»: Իրանց մոտ մարդկություն կա:

- Եթե համեմատես Վրաստանի, Ռուսաստանի, Օսեթիայի և մյուս պոստերը...

**Տղամարդ** - Կավկազը սիավոր ա, Կավկազը իրավունք չունի ասրելու: Մենք հպարտանում ենք, որ Կավկազից ենք, բայց մենք իրավունք չունենք հրապարտանալու, որ Կավկազից ենք:

- Դուք Ձեզ կովկասցի՞ եք զգում:

**Տղամարդ** - Ես ուրախ եմ, որ կավկազցի եմ, ամեն տեղ հպարտանում եմ, բայց հիմա արդեն ամաչում եմ, որ կավկազցի եմ:

- Ամեն մի պոստում ինչքա՞ն են դրված նալոգները:

**Տղամարդ** - Աչքաչափով ա, վիդդ[38] լավն ա՝ շատ կուզեն, լավը չի՝ քիչ կուզեն: Ասում եմ «սլուշայ, նա օբռատնոյ դառօգե[39], որ փող աշխատենք կտանք, էլի»: Ասում է «խի ետ գալուց ես չգիտե՞մ ինչքա՞ն պիտի վերցնեմ»: Հետ գալը միշտ ավելի թանկ է նստում:

**(1)** - Մինչև վերջ տղեքին դատարկել էին:

35. *Պարիր:*
36. *Ի՞նչ ես ասում: Դե ուրեմն երգիր:*
37. *Լավ, գնա:*
38. *Տեսքդ:*
39. *Լսիր, ետդարձի ճանապարհին:*

- Ուրեմն շահավետ է էստեղից ավտոբուսով գնալ, իսկ վերադառնալ ինքնաթիռո՞վ:

**Տղամարդ** - Զեռք ա տալիս, որ եթե էստեղ կարողանալ գնեն հացի փող աշխատես, վաարշե[40] դուրս չգաս, դա իմ տեսակետն է: Ես չեմ սիրում օտարությունը: Էն կոմունիստների ժամանակ էլ, միշտ քննադատում էի մարդկանց, ով գնում էր խոպան: Ասում էի՝ ու՞ր ես գնում, արա: Ինչ-որ անելու ես, ստեղ արա, էնտեղ 200 ստանալու փոխարեն, ստեղ 150 ստացի, բայց, շատ կներես, քո ընտանիքին, քո կնկադ ծոցին, քո էրեխեքի կողքը: Միշտ էլ ասել եմ, ասել... Բայց էսօր ես էլ եմ էդ ճանապարհը բռնել, գնում եմ էնտեղ, Ինգուշեթիա, աշխատում եմ ու գալի... 32 տարեկան հասակում սովխոզ եմ ղեկավարել: Մեր գյուղը ընդամենը 100 տնտեսություն է, որից 80-ը թոշակառու են, 20-ն էլ՝ շունչ չէ, ասել է Յովհաննես Թումանյանը: 170 տոննա միս պլան էր տալիս, 600 տոննա կաթի պլան, 200 տոննա կարտոշկի պլան: Ես մի անգամ Ռուսաստան ասի էսքան հեկտար հող ունեմ, էսքան ապրանք եմ պահում, ասին դու գերոյ[41] ես: Բայց էսօր մեր գյուղը ինքն իրան չի կարող պահել:

(1) - Էնքան շատ են անմշակ տերիտորիաները: Էս տարի չայի խոտ էինք հավաքում, ինքը ստեղ չէր, աղբրս հետ էինք: Ուրեմն ամենաբարձր մասում դուզ տեղերը նայում ես՝ քեֆդ գալիս ա, և ընդամենը երկու հողամաս կա ցանված, էդ ահռելի տարածության վրա էդ մի-երկու հողամասն ա, որ անեցված ա, լացս գալիս էր, ասում էի՝ էս մեր գյուղի կողիքը էս հողամասն ա, է, բայց ցանքս չկա արած, ո՞վ ցանի: Մեր ժողովրդին ննջ են խեղճացրել, որ չի կարող գլուխը բարձացնի, հարգած[42] ժողովուրդ պիտի լինի, որ ղանակը փողը կոխեն, որ իմանան, ի՞նչ են անելու: Այ մարդ, մարդը իրա տունը կդամարդել էք, դուրս էք անում էս ժողովրդին, մասնավորական ավտոբուսները տրամադրում, որ ղանակը... Բա դուք չէ՞ք հասկանում, որ մասնավորական ավտոբուսները տրաքով ավտոբուսը տրամադրում են, ասում են ժողովուրդ ջան, գնացեք: Տենաք, ինչ քափով են ժողովուրդը գնում: Յլա ճանապարհելու ժամանակ, երանի գնաք, տեղ ու դաքար չունեն, էրեխեքն ուսերին նստած, ՞թե ի՞նչ վիճակով են ստեղից գնում, մենակ թե պոկվեն ստեղից:

**Տղամարդ** - Էն օրը տելեվիզորով քննարկում էին, թե՞ խի նստած դուրս էկած[43] տղեն իրավունք չպիտի ունենա ղեկավարել:

(1) - Յամայնքապետ...

**Տղամարդ** - ... նստելու: Բայց խի՞ նստած դուրս էկածը պիտի գա ինձ ղեկավարի[44] ասի՝ արա աղբեր սենց կամ ննց պիտի ըլնի:

(1) - Կամ մեր գյուղապետը, տրակտորիստը, դերիլ, անգրագետ...

**Տղամարդ** - Կամ խի՞ պիտի բարձրագույն չավարտածը էդ պոստերին կավարի... Տենց բան չկա, եթե մարդ միայն կռվի հետ գործ ունի՝ նրա ուղեղը զարգացած չի: Ոնց Յրանտ Բագրատյանն էր ասում՝ ործ կովերին լծեք: Նա

40. Առհասարակ:

41. Յերոս:

42. Յանդուգն, այստեղ՝ նաև երես առած, անպատկառ:

43. Այստեղ՝ կալանավորված, դատապարտված:

44. Այստեղ՝ քրեական հանցագործին բնորոշ լեզվով:



իլե չգիտի, որ ործ կովին եզ են ասում...

- Իսկ Ինգուշեթիայում էդքան գործ կա՞, որ էստեղից էնտեղ եք հասնում:

**Տղամարդ** - Էնքա՞ն, Ռուսաստանից փողը բերում են իրանց հաշիվները փակում են, փող, փող էնտեղ ա:

- Վտանգավոր չի՞:

**Տղամարդ** - Լավ ընդունում են, բան չունեմ ասելու, թե որպես կավկազցի... Քեզ լավ պահես՝ լավ ընդունում են, հարց չկա: Բայց դրանց մեջ, ով հային ճանաչում ա, ասում են՝ այ մարդ, մենք ինչքան գիտենք, հայը ուղեղով ա աշխատում, էդ ի՞նչն է փոխվել, որ էկել եք լապատկով եք աշխատում, մենք իլե լոպատկով աշխատած հայ տեսած չկանք: Էտ էլ գիտեն, որ հայը պալկով[45] չի շարժվում, ուղեղով է շարժվում, բայց հիմա էն օրին է, որ լապատկով էլ չի կարող աշխատի: Ով շփվել ա՝ գիտի:

- Ուղեղի գործով գնացող չկա՞ն էն կողմերը:

**Տղամարդ** - Էդ էլ կա, ես չեմ ասում, որ չկան, բայց թե էնտեղ ուղեղի գործ չկա: Իրանք թույլ չեն տա, որ դու գնաս էնտեղ ղեկավարես: Մի հատ տղա կա, պրեզիդենտի մոտիկ ընկերն ա, սևանցի տղա ա, միասին ծառայել են, շատ լավ էլ ընդունում ա, բայց թե մի անգամ ինքն ա արտահայտվել, իր բարեկամն ինձ ասավ, «այ մարդ, մի հատ ինգուշ չկա՞, որ էդ գործին դնես, խի պիտի հայը լինի»: Ինքն էլ ասել ա «ես իմ կյանքն եմ էդ տղուն դավերիա արել Աֆղանստանում, նա ինձ մահից է փրկել, ի՞նչ տարբերություն, հայ ա՞, թե՞ ինգուշ, էդտեղ նացիանալնոստ[46] չկա»: Բայց գործ տալիս են քեզ: Ասենք էն գործը, որ իրանք պտի անեին, քեզ տալիս են ավելի էժան գնով: Պաղվալի գործերը քեզ են տալի, վերևի գործերը իրանց են տալի:

- Տարբերություն կա՞, Ինգուշեթիայում ես, թե՞ ռուսական երկրամասերում:

**Տղամարդ** - Մեծ տարբերություն: Ավելի լավ ա Ռուսաստան:

- Իսկ ինչու՞ եք Դուք Ինգուշեթիա գնում:

**Տղամարդ** - Էնտեղ, Ռուսաստան, գները թանկ են: Յամ էլ ես ծանոթ ինգուշներ ունեմ: Յասկանու՞մ ես, ցիվիլիզացիա չունի էդ ազգը, ցիվիլիզացիա, բայց էս Կիրովականի չափ տներ են սարքում: Մեր էրևանցոց ջոջերի տները ի՞նչ են որ, մարդ պիտի դրանց տները տենա՝ 4,5,7-հարկանի, կամարներով: Բայց որ խոսացնում ես, զահլեդ գնում ա: Մենակ մի բան գիտեն, «կազդա առմյան ռադիլսյա, եվրեյ պլակալ, դա՞»[47]: Էդպես զրից, մթամ, որ իրանցից խելոք ազգ ա ծնվել: Յայերին տենց են ճանաչըմ:

- Գնացողների մեջ կրթություն ստացածներն էլ կա՞ն:

(1,2,3,4,5,7,8) - Յա, սաղ:

(4) - Յենց իրանք են վիրավորված էս հասարակությունից, որ աշխատանքի բնագավառ չկա:

**Տղամարդ** - Յիմնականում սովորածներն են դուրս գալիս: Ես հիմա, որ իմ դասախոսիս տեսնում եմ, ոնց է նա բազարում առևտուր անում՝ ես իրանից եմ ամաչում, ինքը՝ ինձանից:

45. Փայտով, այստեղ՝ հրամաններով, հարկադրաբար:

46. Ազգություն:

47. Երբ հայերը ծնվեցին, հրեաները լացեցին, հա՞:

(1) - Հիմա գիտե՞ս ոնց ա, եթե նույնիսկ մեկը իր տեղում լավ ղեկավարում ա, բայց ես էլ դեպուտատ եմ, ու էդ մեկի տեղը իմ դուրը գալիս ա, ուզում եմ, որ իմ աղբերը էդտեղ աշխատի, անմիջապես դրան գործից հանել ա տալիս ու ում ուզում ա դրան դնում, անկախ նրանից, նրա ուղեղը հերիք կանի՞, թե չի անի:

**Տղամարդ** - Մեկը ասում ա՝ քաղաքում մի հատ երաժշտական դպրոց չկա, էկեք մի հատ երաժշտական դպրոց բացենք, մարզպետն ասում ա՝ ես ու դու, որ սոլֆեջիո չենք սովորել, մարդ չե՞նք:

**(4)** - Մի կինոյի չենք ունեինք, դարձրել են հացի փուռ:

**(1)** - Բայց ո՞րն ա էդ ելքը, որ գոնե էս մնացած մեր ժողովրդին փրկենք: Ես գտնում եմ, որ միակ ելքը էն ա, որ ամեն մարդ իրա արածի համար պիտի պատասխան տա: Մեծը մեծ չափով, փոքրը՝ փոքր չափով:

**(4)** - Չես կարող, քեզ ավելի շուտ կսպանեն:

**(3)** - Բա օրինական դրա զուգահեռը ո՞րն ա:

**(1)** - Օրինական զուգահեռը նա ա, որ մի երկրում օրինական խորհրդարան են մտել, 8 հոգու սպանել և մի տարի դատ են անում: Խելքի աշնցեք, մի տարի, երկու տարի դատ են անում:

**(3)** - Քիչ են արել, պիտի բոլորին ջնջեին:

**(1,4)** - Ես էլ էդ եմ ասում, քիչ են արել:

**(1)** - Ասում էի՝ շան տղա, էն ա մտել էիր խորհրդարան, պիտի սաղին վաբեիր ու նոր դուրս գայիր, վերջը մեր հայրենիքի հերոսի կոչում կստանայիր, հլա կիմանայինք ինչ ես արել:

**(4)** - Էդ նստածներին լրիվ պիտի հայրենիքի հերոսի կոչում տան:

**Տղամարդ** - Սերունդ պիտի գա, որ դրանց էդ հերոսի կոչումը տա:

*Գայանե Շագոյան, 2002թ. հունվար*



# ՌՈՒՍԱՑԵԼ ԵՆ, ԷԼԻ, ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՐԵԼ ԵՆ

*Սպիտակ, գյուղ Ղուրսալի[1] (զրույցին մասնակցում են մի խումբ փախստականներ) 2002թ. գարուն*

- Մենք Մինգեչաուրից ենք էստեղ, 1988թ.-ից: Իմ տղես ծառայել ա Ղարաբաղում՝ Հորադիզ, Ջիբրայիլ, Կուբաթլի, հիվանդ վերադարձել ա մալարիայով, ես ստիպված էի տոկոսով փող վերցնել, որ բուժեմ: Մեծ դժվարությամբ բուժվեց, հետո էլ դարձյալ պարտքով պսակվեց, հիմա էլ գնացել ա Ռուսաստան, փող աշխատի, որ պարտքերը տանք: Հիմա իմ ջահել, տասնինը տարեկան հարսիս իմ կողքիս եմ քնացնում, տղես Մոսկվայում ա, ապրիլ ամսին նշանել եմ, մայիսին գնացել ա:

- Ծառայությունից հետո ի՞նչքան մնաց գյուղում մինչև Մոսկվա գնալը:

- Մի տարի, 24 տարեկան ա:

- Էդ մի տարին, որ էստեղ էր, ի՞նչ էր անում:

- Ի՞նչ պիտի աներ, ուրիշներն ի՞նչ են անում, հողն օգնում էր՝ բախչի գործն էին անում: Մի թեթև բախչա ա: Մինչև հիմա վագոնի մեջ ենք ապրում, գարնանը պիտի թոռ ունենամ, երեխան պիտի ծնվի՝ ինքը չտեսնա. եթե իրան աշխատանք ունենար, բնակարան ունենար, իմ տղեն կթողե՞ր իրա ջահել կնգան ու գնար: Երկու աղջիկ ունեմ ամուսնացած, ո՞վ կուզի իրա մինուճար տղեն իրա մոտ չլինի:

*Երկրորդ կին* - Իմ երեխեն էսա ավարտում ա դպրոցը, մնում ենք օդում կախված: Ես ինքս էս գյուղից եմ 1988թ. դեկտեմբերի 4-ից, ստի գրանցված եմ, ապրել եմ առաջին պալատկում[2], 3 տարեկան երեխի հետ, տներ սարքեցին ու՞մ տվին, ու՞մ չտվին, ո՞վ գիտի: Թողել եմ գնացել քաղաք աշխատելու, շատ հեռու էր, ոտով էինք գնում Համամլու (Սպիտակ), աշխատել եմ 6 տարի շինարարությունում, էդ մարդկանց խիղճը տանջել ա, բանվորական բաղամասում՝ թուրքի մայլայում փետերից սարքած տուն են տվել մի սենյականոց՝ մի կուխնյա, մի զալ:

- Երեխային ո՞վ էր պահում:

- Ես, իմ երեխեն հիմնականում ինձ հետ աշխատանքի եմ տարել-բերել, հետո երեխեն դպրոց ա գնացել, թողել եմ առավոտ 8-ին գնացել գործի, թե երեխեն ոնց ա ինքնուրույն իր ոտով գնացել-եկել, չգիտեմ:

- Որտե՞ղ էիք աշխատում, որպես ի՞նչ:

- Սպիտակում թեթև արդյունաբերության նախարարության շինմոնտաժտրեստ էր, որպես հաշվապահ, ես Խանլարից եմ, երկրաշարժի ժամանակ ստեղ եմ եղել, առաջին օրվանից օբշի[3] պալատկեքում ենք ապրել, հետո վա-

---

1. *Ղուրսալի գյուղը շատ մեծ արոտավայրի ծավալ ուներ մինչև գյուղապետի փոխվելը: Ներկայիս գյուղապետը, որ փախստական է, ընտրվել է 1996թ.: Փախստականների կարծիքով արդարամիտ և անաչառ մարդ է: Օբյեկտիվորեն ներկայիս գյուղապետի ընտրությունից հետո գյուղից արոտավայրը կանգ առավ:*
2. *Վրանում:*
3. *Ընդհանուր:*

գոն են տվել, հենց տեղափոխվել եմ Սպիտակ աշխատելու, էդ ժամանակ վագոնը ձեռքիցս առան:

- Ինչու՞:

- Նախկին գյուղապետը հարմար ա գտել, որ տա դատախազի երկրորդ զոքանչին, որ նա դաչի տեղ ունենա: Իմ դոմիկը, որ ես պետությունից ստացել եմ, Նալբանդից գնացել եմ բերել, տվել ա դրան (էդ մարդը էջմիածնից ա), հիմա իմ վագոնս իմ հայաթի ներքևը դրած ա:

- Հիմա մարդ ապրու՞մ է այնտեղ:

- Չէ, ժամանակին էջմիածնից եկել են տիրացել իրանց քոռների համար, ես որ վերջի անգամ էդ մարդու հետ կռվել եմ, ինձ ասել են տար դատի տուր, ասի «ում դատի տամ, դատավորի՞ն»: Ընենց էլ էդ մարդուն ասել եմ,- «որ օրը էս դուռը կբացես, բենզին կլցնեմ կվառեմ»: էդ օրվանից էդ դուռը չի բացվել, հիմա ոչ ինքն ա օգտվում, ոչ էլ ինձ են վերադարձնում:

- Հիմա դու որտե՞ղ ես մնում:

- Սպիտակում վեց տարի աշխատեցի՝ կրճատեցին, որ ստաժավոր չեմ, միայնակ էլ մայր եմ: Մնացի անգործ: Ղուրսալիում որ մերոնցից գյուղապետ ընտրվեց *(նկատի ունի՝ փախստականներից-Թ.Վ.)*, ասարի ինքը, հարմար ա գտել, որ ես չոլերին չմնամ, վերցրել ա գյուղապետարանում աշխատանքի: Ես ամեն օր ժամը 9-ին գալիս եմ հիմնարկ, ստեղ բացում, 5-ին գնում եմ Սպիտակ, բայց ես ստեղ եմ գրանցված: Գյուղապետը կարար ուրիշին բերեր ստեղ գործի, շատ մարդ կուզեր քաղցրուղար աշխատեր ստեղ: Կրճատելուց հետո ապրել եմ միայն նպաստով:

- Նորմալ տալի՞ս են նպաստը:

- Ոչինչ, էնքան որ կարում ենք լույսի փողը տանք, մեկ էլ ջրի:

- Ձեր տղան որտե՞ղ է դպրոց գնում:

- Սպիտակ չեխական դպրոց կա, չեխերն են կառուցել, բայց հայկական դպրոց ա, էստ իմ երեխեն պրծնում ա, ի՞նչ տի անեմ, չգիտեմ, ֆինանս չունեմ, թե ուղարկեմ մի ծանոթի տուն Ռուսաստան: Համ էլ չնայած բարեկամներ ունեմ, տղա երեխա ա, բա որ փողոցներն ընգնի կամ էլ ուրիշների նման, Աստված հեռու տանի, մեջքի վրա բերեն[4]:

- Շատ կա՞ն էդպիսի դեպքեր:

- Էնքա՞ն, Սպիտակ հարցրեք՝ շաբաթ չկա, որ Ռուսաստանից տենց դեպք չլինի, տո ասում են վեր ա ընկել, տո քարն ա խփել, տո թոկն ա վիզը ընգել, տո մաշինի տակ ա ընգել: Շաբաթ չկա, որ տենց դեպքի ռաստ չգանք Սպիտակում:

*Առաջին կին* - Եթե ես իմանայի իմ տղեն կգնա Ղարաբաղ, կծառայի ու կհիվանդանա, կգա ստեղ պառկի ու ոչ մի օգնություն, չէի թողա գնա: Էդքան չարչարվելուց հետո, հայրենիք պաշտպանելուց հետո էլի չոլերն ընգավ:

*Երկրորդ կին* - Ու՞մ համար ծառայի, եթե հայրենիքս ա, բա ու՞ր ա, միայնակ կին էի, բա ի՞նչի ինձ կրճատեցին: 12-13 հազար դրամ էի ստանում, ինձ բոլ էր: Ու՞մ համար ծառայի իմ երեխեն, էգուց էլ մի հիվանդություն ստանա, ունեմ-չունեմ էդ մի հատը, չեմ թողի, հլա ուզում ա Աստվածն էլ իջնի՝ ես իմ երեխուն չեմ թողի բանակ, թող մի հնարավորություն տա, մինչև հիմա մի աշխատանք տա, նոր բանակից խոսի: Էլի իմ փախստականը ինձ խղճաց բերեց ստեղ, ամեն օր Սպիտակից մեռնելով գալիս եմ, ես 2 ժամ շուտ եմ վեր կենում գալիս, դե թող իմ վագոնը բերի դնի ստեղ իմ հայաթում, ես իմ հողը մշակեմ:

- Ինչքա՞ն է հողը:

- Տնամերձ ունեմ 2000 քառակուսի մետր, ճիշտ ա՝ ջուր չունեմ, հարևանին խնդրում եմ մեկ-մեկ տալիս ա, եղանակն ա լավ լինում, դե հիմի ինձ բոլ ա:

- Ի՞նչ եք ցանում

- Ամեն ինչ մեր հողում աճում ա:

- Ձեր տղան դպրոցը երբ ավարտի, հետո սկսի հող մշակել, բանակի տարիքը որ գա, կգնա՞ բանակ:

- Կտեսնեմ, եթե զգամ, որ փոփոխություն կա մեր նկատմամբ, կգնա, առաջին հերթին տղուն բանակ ա պետք, տղամարդ ա դառնում: Բայց հիմի գնա ինչի՞ համար, որ քուչեքում նստի սրան-նրան ասի՝ ծառայել եմ Հայրենիքին, ո՞ր Հայրենիքին, եթե գլխիս կտիշ[5] չկա, փորս դատարկ ա, ի՞նչ հայրենիք: էգուց-մյուս օրն էլ ամուսնացնել կա, ինչո՞վ, որտե՞ղ ապրի:

*Առաջին կին* - Ամուսնացնում էս, հետո էլ ընգնում կրակը, էս ա պիտի թոռ ունենամ, չգիտեմ ուրախանա՞մ, թե տխրեմ, հիվանդանոց տանել կա, շորմոր առնել կա...

- Որտե՞ղ եք տանում հիվանդանոց, Սպիտա՞կ, թե՞ Վանաձոր:

*Երկրորդ կին* - Վանաձոր, Վանաձորում մարդկություն կա, հասկանում են, որ չունես, ընդեղի ժողովուրդը լավն են, մեր ժողովուրդը *(այսինքն՝ փախստականները-Թ.Վ.)* նրանց հետ լավ են, մենք մեր եղունգի փուշը տանում ենք ընդեղ ենք հանում: Սպիտակցիները լավը չեն, ուր գնում ենք, մեզ «թուրք» են ասում, «թուրքի մատրոս» են ասում: Ես աշխատում էի հաշվապահ, ասում էին «հլա էս թուրքի մատրոսը պիտի գա փողի վրա նստի, մենք էլ իրա առաջին պետք ա գրություն անենք», ու ինձ կրճատեցին, իսկ Կիրովականում ես 13 տարի շփվել եմ, հլա մեկն ասած չի, դու ով ես, իսկ Սպիտակի երեխեքը իրար հետ որ կռվում են, կանգնում ասում են «մենք ինչ իմանանք, դուք թուրք ե՞ք, թե մաքուր հայ»: Քիչ ա մնում կանգնեմ ասեմ ես Մարտունաշենցի եմ, էս երեխու հերն էլ Գետաշենցի ա, հիմա ասա, ես եմ հա՞յ, թե դու: Հայրենիքը սա ա՞, սա ատելություն չի, բայց մեջքդ կոտրած ես զգում:

*Երրորդ կին (գնացել են Ռուսաստան ընտանիքով և ետ են վերադարձել).*

- Մենք 1993 թ. փետրվարին գնացել ենք Ստավրոպոլ, 1998-ին եկել ենք: Աշխատանքի տեղ չկար՝ վերադարձել ենք: 5 տարի խոզի գործ էինք անում, վարձով էինք ապրում, երեք երեխա՝ 2 տղա, 1 աղջիկ, ընդեղ դպրոց էին գնում:

- Ո՞նց էին իրենց զգում երեխաները:

- Լավ չէին վերաբերում, երեխեքի համար դժվար էր, հայերի հետ լավ չեն, «չոռնի» են ասում:

*Տարեց տղամարդ* - Ես էլ Շամխորից եմ, Սպիտակաշեն գյուղից: Էս գյու-

4. *Մեջքի վրա բերեն՝ նշանակում է դիակը բերեն:*

5. *Տանիք:*

րի Ղուրսալի անունը մնացել ա թուրքական գյուղի անունից, մենք էլ Սպիտակաշենից ենք, ասում ենք փոխեք դարձրեք Սպիտակաշեն, ասում են՝ ուզում եք ձեր գյուղի անունը դնե՞ք: Ես Հայրենական պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ եմ, 88թ.-ից մինչև երկրաշարժը եկել ենք ստեղ. 4 աղջիկ, 3 տղա ունեմ, 4 աղջիկս ամուսնացած են, Ռուսաստան են ապրում: Մեկը եկել էր ,15 տարի ա չէի տեսել, մեծ աղջիկս ա, եկել էր հարգանքով ճամփա դրի, Անապայում ա ապրում: 3 տղես էլ Հայաստանում էին աշխատում, մեկը Հոկտեմբերյան, 2-ը Մասիս, ամուսնացել են գնացել Ռուսաստան, էս ա 15-20 տարի ա տղերը գրանցված են ընդեղ: Կենտ-կենտ որ գալիս են, ես եմ իմ փողով ճամփա դնում, գործ չկա, հազիվ իրանց պահում են: Պեմզայում մի աղջիկս իրա ամուսնու հետ ֆաբրիկայում են աշխատում, վրեղնի ցեխում, Անապայի աղջիկս տորթեր ա թխում, 3 երեխա ունի: Կոիվ ենք տալիս ես ու կինս, ասում ա փախանք եկանք էս անտեր տեղը, ասում եմ՝ այ կնիկ, ես էլ իմ Հայրենիքըն եմ եկել, ես ընդեղ ռուսների քշտին ի՞նչ տի անեմ, ասում ա՝ փողը, պենսեն *(թոշակը-Թ.Կ.)* շատ ա ընդեղ՝ Ռուսաստան, մեծերը *(տարեցները-Թ.Կ.)* լավ պատիվ ունեն ընդեղ:

- Ձեզ օգնու՞մ են երեխաները, գոնե մի անգամ փող ուղարկե՞լ են:

- Չէ, նրանք անգաղ իրանք են ապրում, բայց մեզ կանչում են, ասում են եկեք գրանցվեք, պուճուր տղես ա կանչում, իմ հարսս ասում ա գնանք, ես ուզում չեմ, մեր հարևան մի տղա գնացել ա ընդեղ ու մեռել, ասում եմ «թե ուզում ես, որ ես էլ մեռնեմ, գնանք», էդ տղեն հիվանդ չի եղել, առողջ էր:

- Պապի ջան, Հայրենիքը սիրում ե՞ս:

- Սիրում եմ, էս տեսքիս, թե Ալիևը լեզուն հանի տափը գցի, սաի իմ ժողովուրդը պիրեք, ես քնյալ չեմ, ինչքան ապրեմ, թող ստեղ ապրեմ:

*Առաջին կին* - էդքան տարի իրար հետ լավ ենք եղել, թուրքը մեզ դավաճանեց:

- Իսկ մինչև 88 թ. լավ ե՞ք ապրել, մենակ փողի տեսակետից չէ, ընդհանրապես:

- Շատ լավ, ընդեղ որ հարցնում էին ինչ ազգ ես, ուրախությամբ ասում էի «հայ եմ», որովհետև հային հարգում էին, իսկ ստեղ չենք կարողանում ապացուցենք, որ մենք հայ ենք: Ընդեղ մենք առաջին սորտի[6] հայ էինք, ստեղ 3-րդ, իսկ Ռուսաստանում՝ 10-րդ, էն որ խոզին են տալիս, ամենավերջի սորտը: Ռուսի հետ ապրելը շատ դժվար ա, էդ ռուսները գիտեն, թե հայերը ընդեղ իրանց հաշվին են ապրում, էլ չեն ասում էդ սիրուն-սիրուն տները որ սարքում են՝ ու՞մ շնորհքով ա, սաղ հայերն են սարքում, իրանք մենակ խմում են, հայը ամեն տեղ իրա քրտինքով ա ապրում, ռուսինը կրթությունն ա, հայինը փեշակն ա:

*Երկրորդ կին* - Ղեկավարից շատ բան ա կախված: Ոնց մեր գյուղում, տենց էլ՝ վերևներում: Առաջվա գյուղապետը որ ստի նստած էր, ո՞նց էր ապրում: Պոմոշ *(օգնություն-Թ.Կ.)* ե՞նք տեսել նրա ժամանակ, էնքան փողեր կերավ: Հիմա մեր Ռաֆոն էլ ա գյուղապետ, ո՞նց ա ապրում, բենզին չունի, որ լցնի, սրա-նրա ավտոներով ա գնում մարզպետարան, ինչը՞ ծախի, արդեն

---

6. Տեսակի:

ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ





նա *(նախկին գյուղապետը-Թ.Կ.)* սաղ ծախել կերել ա: Նույնն էլ Քոչարյանը: Լևոնը ծախել կերել ա, արտասահմաններում կզգիներ ա առել, բա հիմա Քոչարյանը ի՞նչը ծախի: Ինչ-որ ստեղ տեղումն ա կատարվում, նույնն էլ վերևում, պռոստո *(ուղղակի-Թ.Կ.)* մեծ մասշտաբներով: Սովետի զապասը *(պաշարը-Թ.Կ.)* էլ չկա, պրծավ, հիմա մի էլեկտրոցանց ա մնացել, էտ էլ կամ կծախեն, կամ էլ՝ չէ:

*Չորրորդ կին* - Ես երկրաշարժի հենց օրվանից ստեղ եմ, Բաքվից եմ, ստեղի գրաժդանկա *(քաղաքացի-Թ.Կ.)* եմ: Մի աղջիկս ընդեղից ամուսնացել եմ Ալմա-Աթա, մի աղջիկս ստեղ ա, ամուսնացել ա: Հետո տղաս բանակից եկել ա ստեղ, ամուսնացել ա, 6 ամիս էլ Շահումյան են տարել կռիվ: Անցել վաննկոմին ասեմ, ամուսինս մեռել ա, տղես մի տարեք, ապրելը դժվար ա, ասեց «չէ, մամա, ճկատիս ինչ գրած ա, էդպես էլ լինելու ա, ես գնում եմ»: Վիրավորվել ա, եկել, գործ չկա, հիմա դոմիկում ենք, ասեց «մամա, ես չեմ կարա»: Գնացել ա Պյատիգորսկ, հինգ տարի ա տղի երես չեմ տեսել, 2 երեխա ունի, կինը, վարձով են ապրում, ինքն էլ քանի ամիսը մեկ գնում ա փող ա տալիս, որ պրապիսկան *(գրանցումը-Թ.Կ.)* երկարացնեն, զոքանչն էլ ընդեղ ա, տեքորս տղան էլ: Իրանք շուտ են գնացել: Հիմա իմ տղաս գա ստեղ, ի՞նչով ապրի, էլի ընդեղ բազարում մի գործ կարա անի:

- Տղան օգնու՞մ է ձեզ:

- Հինգ տարի ա 10 դոլար չի ղարկել, թոշակով ենք ապրում:

- Հայերեն գրել-կարդալ գիտե՞ն

- Չէ: Ռուսացել են, էլի, հայությունը կորցրել են:

*Տղամարդ* - Հայը ռուսը մեկ ազգ են, պետք ա հայը ռուսին բռնած պահի:

- Առանց ռուսի չենք կարո՞ղ ապրել:

- Չէ, ոչ մի պետություն մենակ չի կարա ապրի, իրենք էլ առանց մեզ չեն կարա, իրանց շինարարությունը մենք ենք անում: Բաքուն սարքեցինք տվինք թուրքերին, հիմա էլ Ռուսաստանն ենք սարքում: Իմ ախպերը լավ շինարար էր, հիմա Ստավրոպոլում ա: Ալիևի տունը Պարապետում ինքն ա շինել, Ալիևն էլ իրա յուղը վրին մաշինը տվել ա իրան: Ստավրոպոլում մեքելի ցեխ ունի, Մասիսում տները փակած ա:

- Որ տեղներդ նեղանում է, ու՞մ մոտ եք գնում:

- Մենք չենք բողոքում, ու՞մ բողոքենք, մեր գյուղապետը լավ տղա ա, ուսկի տղա ա, երեխեքի համար յոլկա դրեց, մի 10-ը Ռաֆոյի նման ըլնի՝ մեր պետությունը կապրի: Ոչ մեր ռայոնից ա, ոչ ճանաչել ենք, եկել ենք ստեղ ենք ճանաչել: Գյուխը կամպյուտեր ա, հունվար ամսից մինչև հիմա ես աշխատ չեմ առել, ինքը իրա փողով բենզին ա լցնում, գնում ա մարզպետարան դարիցա ա լինում, որ մեր ժողովուրդը լավ ապրի, ոչ բարեկամ ա, ոչ էլ, թամուզ աշխատող տղա:

- Սրանից առաջվա գյուղապետը մի ցեյ էր, մի ոչխար կուտեր: Կոմբայնը ծախեց, փողը կերավ, հիմա մենք կոմբայն չունենք, գնում ենք կողքի գյուղից ենք կանչում, անծրևը գալիս ա, ցորենը մնում ա գետնին, որովհետև մենք կոմբայն չունենք: Գյուղի ժողովրդի կեսը նրանից փախավ, ընգավ ռուսաստանները: 1996թ-ից Ռաֆիկն ա, երկրորդ անգամ ընտրվեց: Նախկինը մեր ժողովրդին դաղարգյուն արեց, ցրեց, էս ա իրա ընտանիքն էլ վեր ա կենում,

գնա: Դե արի, մենք իրա ծակ մեշոկը պտի կարենք, որ ապրենք: Ռաֆոյից հետո գաղթը կանգնել ա: Որ ուզենան՝ ժողովրդին կօգնեն: Հիմա Ռաֆոյանք մի ծրագիր են արել, մի միջազգային կազմակերպությունից, գոմ են վարձել, ոչխարից հատուկ բուրդ ա, մենք պիտի հանձնենք բուրդը խալու համար, հիմա նրանք բերել են, ֆիրմա են բացել. պանիր սարքող կա, քանդվոր կա, քանի մարդ աշխատում ա, որ մի 2 հատ էլի տենց ծրագիր բերեն, ժողովուրդը կապրի:

- Ապրի Ռաֆոն, Ռուսաստանից եկել ենք տկլոր, ոչ մի բան չունեինք, ամեն ինչով ապահովեց՝ դոմիկ ա տվել, ալյուր, աշխատանք ունենք, ամուսինս ու ես էդ ֆերմայում ենք աշխատում, սերմացու տվեց:

- Եկամուտը մոտ ի՞նչքան է:

- 20 հազար դրամ ամուսինս ա ստանում, 3 երեխա ունենք, հլա որ կարտոշկա էլ ունենանք՝ վափշե *(առհասարակ-Թ.Վ.)* կապրենք: Ռաֆոն տղխտով *(խղճով-Թ.Վ.)* մարդ ա, իրա համար սաղս հավասար ենք: Քոչարյանն էլ ա լավը՝ մեր Ռաֆոյի պես խելացի ա: Քոչարյանը ի՞նչ անի, կերել են, հետո էլ եկել նստել ա, ծեռը բան չկա:

- Ամենավատ ժամանակները ե՞րբ է եղել:

- 93-95թթ., նախկին գյուղապետի ժամանակ, ինչի՞ մեր կոմբայնը ծախեց, մի 20 կմ հեռվից կոմբայնը բերում ենք, ծախսը մեծանում ա, ծեռ չի տալիս:

- Աղջիկ ջան, խնդրում ենք, Քոչարյանին ասա, քո խաթրից մի կոմբայն թող տա էլի, մենք կփրկվենք:

***Թամարա Վարդանյան, 2002թ.***



# ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*(Կապան. գրույց ընտանիքում)*

Մ*այրը (մոտ 55 տարեկան), որդին (մոտ 25 տարեկան), հարսը (20 տարեկան)*

- Ինչի՞ ոչ մի ծրագրում չեն մտցնում, որ մարդիկ բանկում դրած իրենց փողերը ստանան, ե՞րբ են էդ փողերը տալու: Խի՞, էս պետությունը էդ փողերը չունի՞, չէ որ իրա կերածն ա: Ամերիկան էս արանքում չգիտեմ քանի միլիարդ դոլար վարկ ա տվել, գումար ա հատկացրել աղքատության համար, բա թող էդ գումարից տան: Չեն տա, դրա համար էլ գնացողը էլ հետ չի դառնա: Իմ քույրերուհիս ընտանիքով պատերազմի ժամանակ ա թողել գնացել Կուրսկ: Նա ասում ա թքած ունեմ Կապանի վրա, ընտիր տուն ունի: Իրանք էստեղ խանութում էին աշխատում, ես էլ եմ առևտրի աշխատող եղել, ինքն իմ քույրերուհիս էր: Ամուսինը գործարանում ինժեներ էր, ինստիտուտ ավարտած էր, գլխավոր ինժեներ էլ է աշխատել: Էս կրակոցներից վախեցան, փախան գնացին Կուրսկ, քանի տարի էնտեղ վարձով են ապրում, բայց ասում են մենք Ղափանի տունը չենք գալու: Հիմա տուն տեղը թողած, ամեն ինչը ընտիր ռեմոնտ արած, մեբելներով, փակած են դուռը ու գնացած: Էնտեղ վարձով են ապրում, ամիսը 200 դոլար վարձ ա տալիս: Աղջիկներն էլ ավարտած, էնտեղ ինստիտուտ ընդունված սովորում են: Գան Ղափան ի՞նչ անեն, Ղափան ի՞նչ կա, ասում են՝ գամ սոված մնա՞մ, գամ՝ պարտքով ապրե՞մ:

*Որդին* - Գնացողներն ավելի շատ գործ չլինելու պատճառով են գնացել, ոչ թե պատերազմի, գործ չկա էստեղ:

*Մայրը* - Թեկուզ պատերազմից էլ չի վախեցել, ճիշտ ա, են ժամանակ ա գնացել, բայց ասում ա՝ գամ ի՞նչ անեմ, որ գործ չկա: Հիմա մենք 20 հազար ենք ամբողջ տնով ստանում, ու դա մի կերպ է հերիքում, որ ուզես մի շոր առնես, պարտքով պիտի անես, ու հետո մի տարի չես կարողանում փակես:

*Հարսը* - Աշխատում ենք ուտելու համար:

*Մայրը* - Դե, բոլորն էլ տենց են՝ ուտելու համար են աշխատում, բայց թե ուտել էլ կա, ուտել էլ: Մին էն է, որ ամբողջ օրը մակարոն ուտես, մին էն է, որ խորոված ուտես, խալադիլնիկդ բացես՝ տեսնես կալբասը հեն ա դրած, հավը հեն ա դրած, էն մինը հեն ա դրած, բայց թե որ չկա, ի՞նչ անես: Մեր էնքան շատ փող եմ գցել բանկը, մտածում էի, փողերը հեն ա բանկում, որ երեխեքին պիտի ամուսնացնեի, որ ամեն մեկը ամուսնանա իր բաժինը թող ա իրան՝ էլ հարսանիք արա, օժիտ տուր, ինչ ուզում են անեն, բայց թե հիմա... Տղա ա, ամուսնացել ա ու ոչ մի բան չես կարողանում անել:

*Որդին* - Դրա համար էդ փողերը ոչ թե բանկն ես դնում, այլ լիքը տուն ես անում, ոսկի ես առնում:

*Մայրը* - Չէ, կեսրարս ասել ա ամենապահով տեղը բանկն ա, ինչքան փող ուներ տարեք գցեք բանկը, չէր թողնում, որ տանը փող պահեինք, եղած փողը՝ տար քից էնտեղ, ապահովը բանկն ա: Հիմա տեղն ա, մարդ դառնա ասի՝ դե բանկի փողերս տուր:

*Որդին* - Մի 4-5 հատ 31-ի փող ա, քիչ չի:

*Մայրը* - Ամեն մի երեխուն 30 հազար փող ենք դրել: Չամ էլ ուտում էինք, խմում, բայց խելքս չէր կտրել, որ բանկը չգցեի, այլ ոսկի առնեի դնեի տանը, երեխեքիս տուն առնեի Երևանում, էսօրվա օրով էլ ծախեի նստեի էդ փողը ուտեի: Չենք իմացել, որ էսպես ա լինելու, ինչ իմանայինք, որ կարող է փողը արժեքազրկվի: Ու մարդիկ էլ թողեն գնան էստեղից: Քույրս էլ ա գնացել: Որ վիճակ չկար, սկսեց առևտուր անել, Սադախլո էր գնում, ընդ որում էդ առևտուրն էլ տոկոսով էր անում: Ասենք մեկից 1000 դոլար էր վերցնում, հետո ամսվա վերջ պիտի 100 դոլար տոկոս տար: Հիմա իր աշխատածը ինչքա՞ն պիտի լիներ, որ ամսվա վերջ համ էդ գումարը տար, համ տոկոսը, համ էլ իրեն մի բան մնար, որ ապրի: Էդպես վերցրել ա, վերցրել ու ինքը էդպես հաշվարկ չի արել, որ էսօրվա բերածը էդքան փող անու՞մ ա, որ ես ուտում եմ: Չի հասկացել, տունն էլ ձեռքից խլել են, պարտկատերն ա էկել վերցրել: Ամուսինն էլ էդքան հաջող չէր, ընդհարվել ա, երեխեքին էլ թողել ու գնացել ա: Անհնարին էր իր էստեղ մնալը, ամեն օր մի պարտկատեր գալիս էր իր փողը ուզում էր: Որ հաշվում էինք, 18 հազար դոլար բան էր ստացվում, բայց թե հնարավոր չէր, որ ինքը էդքան ծախսած լիներ, տոկոսներով էդպես էր դարձել: Հիմա արդեն 5 տարի ա ինչ էստեղ չի, չկա: Մի չորս տարի առաջ իրան Մոսկվա բռնել էին, ինքը հիմա ռոզիսկի տակ ա: Էնտեղի միլիցաությունից են զանգել, ամուսնուն են պահանջել, հետո կեսուրն էլ է գնացել հետը խոսացել, ասել ա ես մի ամիս հետո գալու եմ, էդ մի ամիսը դառել ա չորս տարի: Բայց մինչև բռնվելը խոսում էր, երկու-երեք ամիսը մեկ խոսում էր, զանգում էր, ասում էր ոնց ա, որտեղ ա, ինձ հետ էլ էր խոսում: Ասում եմ որտե՞ղ ես, ասում է՝ չեմ իմանում, որտեղ եմ: Չդայնանում ես, թե ոնց կարելի ա տենց, չգիտե՞ս որտեղ ես, ասում եմ տեղդ ասա, եթե չես կարողանում գաս, ստեղից ազգականներիս կասեմ կգան, կբերեն, էնքան որ տեղդ ասա: Թե վախենում էր տեղը ասի, թե ինչ... չէր ասում: Իրան էստեղ չէին բռնի, ինքը ոչ քաղաքական հանցագործ էր, ոչ էլ մի բան, կարող է դու էլ իրան պարտք տված լինես, ոչ մեկն էլ էդ պարտք տվողներից ստորագրությունը չի ունեցել, որ իրան էդքան գումար է տվել, ոչ մի փաստաթուղթ չի եղել: Միակ մարդը, որ փաստաթուղթ է վերցրել, էդ մարդն էր, որ տունը վերցրեց պարտքի դիմաց: Նա գրություն է գրել, որ էս պարտքի դիմաց ես իմ տունս զալոգ եմ թողնում: Մենակ էդ պարտքատերն է կարողացել իր փողը վերցնի, երեխեքին հանել ա տնից, տունը ծախել: Երկու աղջիկ երեխա ունի, ու իրանց որ տնից հանել են, իրանք գնացել են ու հանրակացարան են մնում, իրանց տատիկի ու հոր հետ: Աղջիկներից մեկը երկրորդ դասարան էր, մյուսն էլ՝ չորրորդ: Հիմա մի աղջիկը ութը պրծել ա, փոխվել ա ինը, մյուսն էլ՝ վեց: Էդքան մեծացել են: Հերն էլ մի անճարակ է, ոչ ստեղ ա կարողանում գործ գտնել, ոչ էնտեղ: Իսկ ինքն էլ էդ ռոզիսկից հետո վաարշչե[1] չի էլ զանգել, ոչ մի տեղեկություն չունենք: Իրանց տատիկն է պահում, նպաստ է ստանում, երեխեքին ձևակերպել են իբր միակողմանի ծնողազուրկ, ու որ գիշերօթիկում սովորում են, դիրեկտորը ամերիկացի սպոնսոր[2] ունի, իրանց դպրոցի երեխեքին լավ են նայում: Հիմա ինքը չկա,

1. Առհասարակ:
2. Հովանավոր:



չորս տարի է ինչ ոչ զանգում է, ոչ էլ մի տեղեկություն ունենք, չենք իմանում կենդանի ա, թե մեռած ա: Երեխեքը ստեղ, ինքն էնտեղ: Ռոզիսկից հետո չենք իմանում ինչ վիճակում ա, միգուցե ձեռքին ոչ մի փող չկա, կամ գիտակցությունն էլ տեղը չի, հոգեկանը խանգարված ա: Հիմա ինքը 45 տարեկան ա:

- Ընդհանրապես գնացողների մեջ կանայք են շա՞տ, թե՞ տղամարդիկ:

*Մայրը* - Ռուսաստան գնացողներից ավելի շատ են տղամարդիկ: Էն ա մեր շենքում էնքան տղամարդ կա գնացած, իրենց ընտանիքները թողած: Կնացել են էնտեղ կապվել ռուսի հետ, ստեղի ընտանիքը թողած: Ընտանիքները հիմնականում ստեղ են, իսկ կան, որ ընտանիքով են գնացել, բայց էդի միասին չեն: Մեր հարևաններից մեկը կա տենց, գնաց, հետո կինը գնաց, բայց հիմա առանձին են ապրում, առանձին էլ տուն վարձում, կինն էլ մնացել ա էնտեղ իր երեխեքի հետ, ինքն աշխատում ա ու պահում, որ հետ գա էստեղ ի՞նչ անի, ոչ աշխատանք կա, ոչ էլ: Էնտեղ գոնե կարողանում ես առևտուր անել, բայց գա ստեղ ի՞նչ անի՝ ոչ գործարան կա, ոչ էլ աշխատանք: Ես Զանգեզուրի շրջանի ամենաահավոր վիճակը Կապանինն ա: Գորիս շատ լավ են ապրում ժողովուրդը, չգիտեմ ինչի հաշվին ա, թե աշխատասիրության, թե իրանց քաղաքում վարածի հաշվին, իրանց հողը լավն ա, մրգեր շատ կան, իսկ Կապանը նախալեռնային շրջան ա, վարածից արդյունքը չես տեսնում: Ստեղ վաարշչե հնարավոր չի ապրել: Նախ աշխատավարձ չկա, մի կոմբինատ ա, բայց 3 ամիս ա, ինչ աշխատավարձ չեն ստացել: Մեկ էլ առևտուրն ա մնում, դա էլ ամեն մարդ իր համար խանութ ա դրած ու աշխատող որ պետք ա լինում՝ վերցնում են, բայց առևտուր չկա, ո՞վ պիտի առնի, իրարից են առնում: Տրիկոտաժի գործարանը կա ու չի աշխատում, կոշիկի գործարանը կա՝ չի աշխատում, ռելեի գործարան կա, լամպերի, կոնդենսատորի, պահածոների գործարան, էլեկտրոգործարան կա, ու ոչ մեկը չեն աշխատում: Էսքանից մենակ Պղինձ-մոլիբդենի գործարանն ա աշխատում: Կոշիկի գործարանը մի քանի հոգով, ինքը մի քանի աշխատող ա պահում, էդ ինքն իրա գոյությունն ա պահում, բայց քաղաքին ոչ մի օգնություն չի տալիս: Իսկ Պղնձամոլիբդենային գործարանում ընդամենը 1000 մարդ են աշխատում, դե Կապանի համար դա շատ քիչ ա, էն էլ աշխատավարձը 3 ամիսը մեկ են ստանում: Մնացածը առևտուր են անում... Չես ասի, որ բոլորն էլ աղքատ են, շատ լավերն էլ կան, շատ հարուստ մարդիկ էլ կան:

- Ձեր բարեկամներին եթե հաշվենք, քանի՞ մարդ կհիշեք, որ գնացել են Հայաստանից:

*Հայրը* - Իմ բարեկամներին եկեք թվարկենք: Սկսեմ փոքր քեռուցս, առաջինը ինքն էր, ինքը բանակից ա փախել, դրա համար ա գնացել, որ չծառայի, դա մինչև պատերազմն էր, նա ուղղակի ծառայությունից հրաժարվել ա ու գնացել Ռուսաստան, Կրասնոյարսկ, էնտեղ ամուսնացել ռուսի հետ, հիմա 3 երեխա ունի, 3 անգամ ամուսնացել ու բաժանվել ա: Ինքը հիմա 27 տարեկան կլնի, էն ժամանակ 19 տարեկանում ա գնացել, որ չծառայի: Գնացել ա մի 16 տարեկան աղջիկ ա ուզել, մի երեխա ունեցել, տղա երեխա, 2 տարուց հետո բաժանվել: Դե մինչև հիմա հետ չի վերադառնում, մեկ-մեկ իր մայրին ա զանգում, բայց ընդհանրապես փող չի ուղարկում: Մինչև հիմա չի իմանում, ասում են, որ 3 երեխա ես ունենում, ծառայությունից ազատվում ես, ին-

րը ասել ա նենց անեմ 3 երեխա ունենամ, ինքը զուտ ծառայությունից ա փախել: Բայց հիմա, որ ծառայության էլ չկանչեն, էլ չի ցանկանա գալ, ուղղակի ստեղ իրա մաման մենակ ա, չորս սենյականոց տուն, ինքն էլ մենակ կին ա, ինչքան կանչում ա, չի գալիս, ասում ա ես եկող չեմ: էն մյուս քեռիս կրակոցներից հետո, ավելի ուշ ա գնացել, մի չորս-հինգ տարի ա ինչ գնացել ա, պայկնոջից երկու երեխա ունի, երկրորդ կնոջից՝ չորս երեխա: Ստեղ գյուղում էր ապրում ու չէր հասցնում, Ներքին Գյոդաքլուում էր ապրում, Ղափանից մի կես ժամում մեքենայով կհասնես: Ինքը գյուղատնտեսությամբ էր զբաղվում, անասուն էր պահում: Երկրորդ ընտանիքի հետ միասին գնացին, հլը չորրորդ էրեխեն Ռուսաստան ծնվեց: Մոսկվայի շրջաններից էր իրենց գնացած տեղը, ինչ-որ գյուղ է, ծայրամաս է: էդ քեռիս մինչև իր երկրորդ ամուսնությունը շատ էր Ռուսաստան գնացած-եկած ու էդ տեղերում իրան ծանոթ ուներ, որոնք իրան օգնեցին տեղավորվել: Ինքը մասնագիտությամբ վարսավիր ա: Հիմա հիմնականում էնտեղ գյուղատնտեսությամբ ա զբաղվում, բայց իր մասնագիտությամբ էլ ա զբաղվում: Իրանք իրանց ստեղի գյուղի տունը վաճառել են, բայց քաղաքում էլ տուն ունեին: Բայց ինքը ոչ մի բարեկամի հետ ոչ մի կապ չունի, ոչ մի զանգ, բան չկա: Նույնիսկ գնալուց իր մամային էլ հաջող չի ասել[3]: Ինքը նենց որ տենց հանկարծակի էր որոշել՝ ծախել ու գնացել, ասկի մի հատ էլ չի զանգած, մի հատ էլ ձեն չի հանած: Մորքուրս կրակոցների ժամանակ է գնացել իր ամուսնու և երեխաների հետ: Ստեղ շատ վատ էին ապրում, կարող ա օր պատահի կես հաց առնեին ու չորս շունչ դրանով յոլա գնային, ամուսինը աշխատող չէր, բեզդելնիկ էր, սաղ օրը դիվանին պառկած: Մենակ մորքուրիս աշխատանքով էին ու էրկու հատ էլ էրեխա: Մորքուրս Կոնդենսատորի գործարանում էր աշխատում, բայց էդ կրակոցների ժամանակ ինքն էլ էր անգործ: Մի հատ ընտանիքի բարեկամ ունեին, որ կրակոցների ժամանակ պարտքով փող ա տվել, ասել ա դուրս եկեք, էրեխեքին դուրս հանեք, մի հացե ա տվել ու էդ հացեով գնացել են: Ճիշտ ա, էդ ամուսնու հետ էնտեղ բաժանվել ա: Դե Ռուսաստան տեղը դիվանին նստած չես կարա ապրես: Հիմա ինքն ուրիշի հետ ա էնտեղ ամուսնացած, էլի ղափանցի ա, էդ էլ իր ընտանիքն ա ստեղ թողել գնացել, որ էրեխեք էլ ունի, նույնիսկ թոռնիկներ, էդպես մեծ մարդ ա, մորքուրս ջահել ա, երևի 34 տարեկան, էրեխեքը՝ մեկը վեցերորդ, մյուսը՝ ութերորդ դասարան են: Ինքը մորքուրիս հետ ԶԱԳՍ ընկած չի, պրոստո[4] ապրում են միասին: Իրանք Նովոսիբիրսկում են, սկզբից Կրասնոյարսկում էին, հիմա տեղափոխվել են Նովոսիբիրսկ, արդեն տաս տարի ա ինչ էնտեղ են: Կրասնոյարսկում քեռուն հանդիպած էին, բայց միասին չէին: Նովոսիբիրսկում նոր են տուն առել, մինչև հիմա վարձով էին: Ով որ շուտ ա գնացել Ռուսաստան, հիմա կարողանում ա լավ ապրել, բայց նոր գնացողները չեն կարողանում: Պապաս արդեն երեք տարի ա ինչ գնացել ա:

*Մայրը* - Պապան նա ուռա ա գնացել[5], մաման էլ էրեխեքի հետ հետևից: Գնացել են հերիք չի, դեռ տատիկին էլ հետներն են տարել:

*3. Հրաժեշտ չի տվել:*
*4. Ուղղակի:*
*5. Առանց ծրագրավորելու, հաջողության հույսով:*



*Հայրը* - Մամայիս մամային: Պապիկս մահացած, դե բոլոր էրեխեքն էլ դրսում: Մենակ մամաս էր ստեղ ու ինքն էլ դրա համար մեզ հետ էր ապրում: Դե պապաս չէր ցանկանում գնալ, ստեղ աշխատում էր, կոմբինատում 20 տարվա ստաժ ուներ, ինքը էլեկտրիկ էր, ցանցում էլ էր աշխատում: Մենք էլ չորս էրեխա ենք՝ երկու տղա, երկու աղջիկ, ես մեծն եմ:

*Որդին* - Լևի[6] գործեր էր անում, հարևաններին լևի լույս էր տալիս:

*Հայրը* - Մորքուրս միշտ կանչում էր պապայիս, մեր շփումը իր հետ շատ ա էղել, տենց մորքուրս էլի փող ուղարկած ա, թե իմ նշանիս կապակցությամբ, որ քույրիկս ամուսնացել ա, էլի ուղարկել ա: Մենակ մորքուրիս հետ ա էղած մեր կապը, մյուս քեռիներիս հետ կապ չկա: Մորքուրս կանչած ա պապայիս, ասել ա՝ արի: Պապաս ասել ա՝ չեմ կարող իմ գործը թողնեմ, աշխատում եմ, 20 հազար՝ էլեկտրոցանցից, 40 հազար՝ կոմբինատից ստանում եմ, ընտանիքիս բավարարում ա: Քույրիկս շուտ ա ամուսնացել, հենց տասը ավարտել ա, փախցրել են:

*Որդին* - Մերը իր ձեռքով տնից դուրս ա հանել, գիշերը տուն ա էկել, ասել ա որտեղից որ եկել ես, էնտեղ էլ գնա, դե էդ տղան ինչ անի, տանում ա իրանց տուն:

*Հայրը* - Քույրիկիս ամուսնանալուց հետո արդեն գումարի հարց առաջացավ: Բացի էդ, մի հատ դեպք պատահեց իր աշխատավայրում, էդ օրն ինքը հերթապահ ա էղել, ու էնտեղ պոդստանցուց[7] տոկեր են գողանում: Պետը, որ իմանում ա, էդ օրվա բոլոր աշխատողներին, էլեկտրիկներին կրճատման տակ ա գցում: Իմ պապաս էլ 20 տարվա ստաժով էլեկտրիկ, բայց պետը հաշվի չի առնում: Դա էլ նոր պետ էր, ոչ մեկին չէր ճանաչում, իր աշխատողներից ոչ մեկին չէր վստահում, որ հաստատ իմանար ով կարող ա դա արած լիներ: Կարող է դա պատահական երեխաներ են արած: Պապաս տուժվել ա էլի դրանից: Ու փաստորեն մնացել ա միայն կոմբինատի գործը, բայց թե 20 հազարով չորս երեխա ո՞նց պահի: Մամաս էլ մանկապարտեզում էր աշխատում, կես դրույք ու երեք հազար դրամ էր ստանում, էն ժամանակ տենց էր: Ուզում եմ ասել, պապայիս իրա Ղափանից դուրս գալու պատճառը իրա աշխատանքը կորցնելն էր: Էդ ընթացքում ես եմ նշանվել, էլի ծախսերի հետ կապված հարց է: Իմ նշանվելուց մի քանի օր հետո պապաս դուրս ա եկել Ղափանից, ասել ա՝ գնամ, որ էդ պարտքերը կարողանամ փակել, լրիվ պարտքերով ենք արել: Պապաս, որ գնացել էր, մի տարի էնտեղ մենակ էր, գնացել էր մորքուրիս մոտ, իրա տանն էր ապրում ու իր ամուսնու հետ էլ աշխատում էր: Պապաս էնտեղ իրան մասնագիտությամբ չէր աշխատում, շինարարության վրա էր: Մի քիչ էլ վատառողջ ա ու էնքան էլ չէր հասցնում: Քսան տարի ա, ինչ ստամոքսի խոց ունի ու գարնանը միշտ նեղություն ա տալիս, իսկ փոքր եղբայրս էլ հլը նոր առաջին դասարան է գնում, էդքան փոքր եղբայրներ ունեմ, մյուս եղբայրս փոխվել ա յոթերորդ դասարան: Էնա մի տարի հետո մամայիս էլ ա կանչել, փող ա ուղարկել ու ասել՝ եկեք: Ասում ա՝ ստեղ նենց ա պայմանները, որ չեմ կարող համ ես ստեղ աշխատեմ, համ ձեզ ուղարկեմ, դուք պիտի ստեղ լինեք, որ աշխատենք ու միասին ուտենք: Մամաս էլ տատիկիս էլ ա

*6. Ձախ: Այստեղ՝ անօրինական:*
*7. Ենթակայանից:*

տարել: Դե որ թողնեին, ոչ ես կկարանայի նայել, ոչ քույրիկս, մենք արդեն ամուսնացած, իսկ տատիկն էլ մենակ ի՞նչ աներ, տատիկին էլ վերցրել են ու գնացել: Տունը փակել են, բանալին իմ ձեռքիս էլ կա, քույրիկիս ձեռքին էլ: Մամաս էնտեղ չի աշխատում, չեն կարողանում գրանցվել, մենակ պապաս է գրանցվել ժամանակավոր: Հիմա իրանք բոլորը Նովոսիբիրսկի ռայոնում են Կայլաւ ռայոնում են, դա գյուղից մի քիչ մեծ ա, ավան, էլի: Մենակ պապաս ա աշխատում շինարարության վրա: Էնտեղ ամռանը աշխատում են ու ձմռանը նստում տանը: Ամառվա աշխատածը էնքան պիտի բավականացնի, որ ձմռանը ուտեն: Օրինակ մորքուրենքս էնտեղ լավ են ապրում, որովհետև իրանք վաղուց են գնացած, բայց էս նոր գնացողների համար շատ դժվար ա: Մորքուրս էնտեղ աշխատում ա, կոմպյուտորի վրա, բայց հետո որ ամուսնու ձեռը լավ գործ ա ընկել, էլ մորքուրիս չի թողել աշխատի, մենակ ինքն ա աշխատել: Հիմա իմ աղբերներս էնտեղ են դպրոց գնում, էն փոքրը էնտեղ զրո է նստել ու էս տարի նոր առաջին պիտի գնա: Էն մեծի համար դժվար ա, ինքն էստեղ ծույլ էր սովորում, բայց հիմա նամակներում գրում են, որ ահագին ակտիվ ա ստեղ: Մորքուրիս էն մի էրեխան, հենց աղբերիկիս հետ ա, աղջիկ ա, ինքը պադդերժկա ա անում, տնայինները միասին են գրում: Հիմա որ ուզեն հետ գալ, դա արդեն մեծ ծախսերի հետ ա կապված, փաստորեն հինգ հոգի էնտեղ են, մենակ նրանց տոմսը մի 1000 դոլարից ավել ա նստում: Բայց մամաս ասում ա, որ եթե պիտի միայն տոմսի փողը աշխատեմ ու հետ գամ, էլ ինչի՞ համար եմ էկել հասել ստեղ, որ աղջիկներին մի օժիտ տամ, ինչ-որ մի նպատակի համար եմ էկել ստեղ, գոնե բացի ճանապարհածախսից ձեռիս մի քիչ էլ փող գամ:

*Որդին* - Փաստորեն էլ չեն գալու:

*Մայրը* - Մեր հարսն արդեն ամուսնացած էր, որ իր պապան գնաց:

*Հայրը* - Որ մամայենցս շենքը գնաս, ամեն մի հարկում 4 հատ դուռ կա, բայց ամբողջ շենքում, երևի, 85 տոկոսը Ռուսաստանում են, էդ 4 տներից ամեն հարկում մի տուն կա ապրող, կան, որ 2-3 հարկ ոչ մի տուն մարդ չկա ու մի հարկում բոլորը լինեն, բայց միջինը ամեն հարկում մի տուն քիչ:

*Մայրը* - Ինը հարկանի շենք ա, վերջին հարկում մի կին ա ապրում ու ալարում ա ամեն անգամ իջնի, իր էղած-չեղածը զուգարանում ա թափում ու իրենց մոտ էլ անընդհատ զասարենի[8] ա, հարսիս ծնողների տունն էլ առաջին հարկն ա, անընդհատ էդ զասարենին ենք մաքրում:

*Հայրը* - Փաստորեն մեր ուղղությամբ երկու մարդ ա ապրում 9-րդ և 3-րդ հարկը ու վայր: Ստեղ մենք ենք տուժվում ես ու քույրիկս, ավելի շատ ես, որովհետև քույրիկս փոքր երեխա ունի, չի կարողանում հաճախ գնալ:

*Մայրը* - Ճիշտն ասա, էլի, ես ու դու, ի՞նչ քույրիկ:

*Հայրը* - Բայց գրանցումից ոչ մեկը դուրս չի եկել, որովհետև հետո գալը երկար պատմություն ա, ոչ մեկը դուրս չի եկել, գնում են էնտեղ ժամանակավոր գրանցվում: Պապայիս կողմից, օրինակ, հորեղբայրներս էլ, հորքուրներս էլ կրակոցների ժամանակ էնտեղ էին, հետո եկած են: Էն փոքր հորեղբայրս շուտ-շուտ գնում ա, գալիս: Բայց էն մի հորեղբայրս ու հորքուրս կրակոցից

8. *Ջրագծերի խցանում:*



հետո եկել են, ասենք, իրանք վախից էին գնացած, հետո էլ, որ ամեն ինչ հանդարտվել ա, եկել են: Էն էլ գնացել էր էնտեղ լավ գործի էր, իսկ էկել ա ստեղ ու աշխատանք չի ճարում, սոված մեռնում ա, չի կարողանում աշխատի, երկու երեխա ունի:

*Մայրը* - Ղափանի 90 տոկոսը չի աշխատում:

*Հայրը* - Էն օրը գնացել ենք իրանց տուն, ասում ա նայի, մի տարի ա ինչ լույսերս անջատված են, 160 հազար լույսի պարտք ունի: Իսկ հեռախոսը շատ թանկ ա, ու կարող ա ամբողջ պադյեզդի[9] մեջ մի 2-3 հոգու աշխատի, շատերինը անջատված ա:

*Մայրը* - Դե մեր Ռոբերտն էլ *(նկատի ունի որդուն)* գործից դուրս ա գալիս, որ գնա Ռուսաստան, իր ընկերոջ մոտ, էն էլ գնացել ա, որ փող աշխատի իր ուզած աղջկա հետ պսակվի:

*Որդին* - Ես գործից դուրս եմ գալիս, բայց Ռուսաստան չեմ գնում:

***Գայանե Շագոյան, Կապան, 2002թ.***

9. *Մուտք:*

# ԵՍ ԻՆՉԻ՞ ՉԳՆԱՑԻ, ԻՆՉԻ՞ ՄՆԱՑԻ

*Գյումրի, Մուշ թաղամաս: Զրույցը ընթանում է մի ընտանիքում, որտեղից կինը մեկնել է ԱՄՆ աշխատելու, հաշմանդամ ամուսինը խնամում է երեք երեխաներին: Ապրում են չորս հարկանի շենքի 3-րդ հարկում: Շենքի կոյուղու գծերը ձմռան ցրտերից պայթած են, ջեռուցում չկա: Բետոնե պատերը սառցակալած են:*

- Ինչ եկել ենք Մուշ թաղամասի էս բետոնի, աշխարհից կտրված տները, ինչ-որ գայի մի մեծ փոս ընգնեյի ու էդ ժամանակվանից կըսեմ «ես ինչի՞ չգնացի, ինչի՞ մնացի»:

- Ու՞ր էիք գնալու, Ռուսաստա՞ն:

- Չէ, Ամերիկա պիտի գնայի, չգնացի ու փոշմանել եմ:

- Իսկ ինչու՞ չեք գնացել:

- Չէի ուզել գնալ, երբեք չեմ մտածել գնալու մասին, ես հոգով ուրիշ եմ եղել: Բայց հիմա ուրիշ ա, աշխատանք չկա, ես թոշակառու եմ, 45 տարեկան եմ, Չեռնոբիլի թոշակառու եմ, ստեղ Զինկոմից որպես կամավոր գրեցին ու տարան, շինարարական աշխատանք էի անում, առողջականս քայքայվեց, ներվային համակարգս: 1987 թ-ին եմ գնացել, չնայած հիմա որ աշխատանք լինի՝ կաշխատեմ, բայց որ նույնը լինի՝ չեմ աշխատի: Ես վարպետ էի գործվածքեղենի ֆաբրիկայում:

- Իսկ հիմա որ գործարանը լինի, չե՞ք աշխատի:

- Չէ, որովհետև աշխատավարձ չեն տալիս կամ էլ շատ-շատ պիտի նստեկի տան տեղը, տանես դռնեդուռ ընգնես, ծախես: 5 երեխա ունեմ՝ 4 աղջիկ, 1 տղա, 2-ը չափահաս են, ավարտել են դպրոցը:

- Ինչո՞վ եք զբաղվում:

- Ոչ մի բանով, սովորելու համար ուր էրթաս՝ փող է, ու՞ր հանձնեն գործերը, հնարավորություն չկա: Աշխատանք էլ չկա:

- Ձեր կինը աշխատու՞մ է Ամերիկայում:

- Հա, կաշխատի ընդեղից մեզ կուղարկի, մենակ ուտելուն կհերիքի, մեզ մոտ ջեռուցում չկա, տունս երկրաշարժից հետո քանդեցին, վտանգավոր էր: Մանկապարտեզի մեջ էինք ապրում մինչև 1997թ., հետո էս տունը ստացանք: էն էլ փողով: Սաղն էլ փողով են ստացել: Դա սովորական բան է, ում հետ գուզես խոսա, սաղն էլ տարբեր չափի փող են տվել, որ ստացել են, էն էլ էս տունը: էս շենք չի՝ բետոն ա, դուռ չկա, պոլին պարկետ չկա, բետոնի վրա փալաս ենք գցել, անունով շենք են սարքել, պատավորյն էլ մի տռուբա է, կանալիզացիան ամեն օր սառչում է, հալացնում ենք, տղերքը կխնդան թե բարի լույսներս պադվալի մեջ կանգնի: էս շենքերը համաշխարհային բանկն է կառուցել, 1500-1600 դոլար 25 տարվա մեջ պիտի բանկին մուծենք ամեն ընտանիք, էս բետոնե պատերի համար: Խոսակցություն է գնում, իբր ուզում են էդ փողը հանեն, որովհետև էդ Կարմիր խաչի սարքածը 58 թաղամասում հանձնել են ամեն ինչով՝ ռեմոնտով, կաֆելով, դռներով, դրա համար էլ մեր Մուշի



ժողովուրդը բողոքեցին, որ էս դատարկ տների համար փող չենք տա, իսկ նրանց ոչ մի մուծում չկա:

- Իսկ մաղարիչը ինչքա՞ն էր:

- 500-ից մինչև 1200 դոլար, նայած մարդ, դաժե 1500 տվող ա եղել, կա որ առանց փող են ստացել: Մի տարուց ավել է ասում են յանի էդ պաշտոնական մուծումը հանել են, խոսք են տվել, մենք քանի տեղ բողոքել ենք, դեպուտատները եկան, ասեցինք Ազգային ժողովում էդ հարցը բարձրացրեք:

- Դեպուտատների հետ հանդիպումներ ունենու՞մ եք:

- Հա, մերը Սուքիաս Ավետիսյանն ա, հետը մոտ ենք, շատ կգա, շատ հարցեր ա եղել, լուծել ա, ինչքան հնարավորություն ա եղել: Ինքը քաղաքից ա, մեկ-մեկ սրտներս կշահե, ֆուտբոլի կամանդ կպահենք՝ ինքը երեխեքին շոր ուղարկեց:

- Ձեր կինը ինչքա՞ն ժամանակ է, որ գնացել է:

- Տարի ու կես, չի եկել, որովհետև որ գա՝ էլ չի կարա գնա:

- Այնտեղ ծանոթներ ունե՞ք:

- Ընդեղի եղածը սուտ է, պիտի դու աշխատես, Հոլիվուդում ա:

- Ձեզ չի՞ ուզում կանչել:

- Ուզենալը քիչ է, պիտի հնարավորություն լինի, ընդեղ կնոջ գործը հնարավոր չի լավ լինի, քիչ կվարձատրեն: Քաղաքացի չի, չեմ էլ իմանում ինչ գործ ա անում: Լենինականը մարդ չի մնա, սաղ կերթան, ժամանակին Լենինականը 200 հազարանոց քաղաք էր, հիմի ժամը 6-ից հետո քաղաքում մարդ չես տեսնի փողոցում, ցերեկը գյուղի ժողովուրդն են առևտուր անում, հենց իրիկուն կերթան, մարդ չես տեսնի քաղաքում:

- Ձեր շենքի բնակիչների քա՞նի տոկոսն է դուրսը:

- Այս շարքում մենակ ես եմ մնացել, 4 հարկանի շենք ա, սաղ տները փակ են, շատը Ռուսաստան են, չեն էլ ուզի գան, գան ինչ՞ անեն: էն մի ժամանակ էր, որ կսեին Հայրենիք ա, հիմա ժողովուրդը ավելի շատ ուտելու ետևից ա գնում, իսկ էդ Հայրենիքը երկրորդական ա: Հնարավորություն եղավ կերթանք, զոռով ենք մնում: էս քաղաքը ապագա չունի, նայես հեռուստացույց՝ ինչ-որ կեղծի Երևանում ա, Արարատյան դաշտավայրում, Կիրովական, Լենինական ինչ բան չկա, 14 տարվա մեջ նոր կնտածեն, որ շենքեր կառուցեն, ժողովուրդը դոմիկներից դուրս գա, բայց ժողովուրդ չկա՝ 50-60 հազար մարդ գնացել են:

- Հիմնականում ու՞ր են գնում:

- Հիմնականում Ռուսաստան, խառը քաղաքներ, որտեղ հնարավորություն լինի, չնչին ջահելություն կա, եթե աշխատանք չկա, մարդ չի մնա: Որ վերցնես քաղաքը, սեզոնային մի քանի շենք սարքեցին, մարդիկ կաշխատեն էն էլ աշխատավարձ չեն տա ամիսներով:

- Կա՞ ընտանիք, որ էստեղի աշխատավարձով ընտանիքը պահի:

- Ասենք բազարում առևտուր անես, հիմնական աշխատանքները բյուջետային են կամ էլ առևտուր, ուրիշ բան չկա, ոչ մի արտադրություն չկա:

- Միջազգային կազմակերպությունները օգնու՞մ են:

- Նոր երբ շենքը ստացել էինք, «Կարիտասը» օգնեց՝ շենքի մոտ հրապարակ սարքեցինք, մեկ էլ World Vision-ը 1500 կիլովատ էներգիայի չեկ տվեց,

նվերներ են տալիս երեխեքին:

- Իսկ պետության կողմից՝ մարզպետարանի, քաղաքապետարանի կողմից ի՞նչ օգնություն է եղել:

- Ոչ մի բան, նրանք ի՞նչ ունեն, որ ինչ էլ տան:

- Ասենք որ տեղերը նեղանում է, ու՞մ եք դիմում բողոքելու:

- Ու՞մ բողոքենք, մարդի տեղ չեն դնում, յոլա կերթա ժողովուրդը: Անգործությունից հարբեցող են դառել, պարապությունից ի՞նչ անեն, 15-20 տարեկաններն են խմում ավելի շատ, մենք հլա ոչինչ: Էս քաղաքը ապագա չունի, Վանաձորը Լենինականից լավ է, Երևանն էլ լավ է, դե բարեկամներ ունենք, որ կերթանք Երևանցիք էնպես բանից կբողոքեն, որ լենինականցիք կզարմանան, իրանց կսեն «բա դուք որ մեր տեղը լինեք, ձեզ ի՞նչ ա եղել, հլա եկեք Լենինական»: Երևան դե տենց ցուրտ չի, ստեղ 20-30 աստիճան մարդ ա անում՝ պաղվալից դուրս չես գա, որ կանալիզացիայի ջուրը հալացնես, երևանցին չի դիմանա: Ով հնարավորություն ունենա կթողա կերթա, ջահել տղեքը կմտածեն «մնամ ի՞նչ անեմ, պատի տակ կանգնելուց ի՞նչ», բանակի մոմենտն ա, ծառայում են ու գնում: Գյումրիականում տղամարդը կերթա, եթե տենա կարա ընտանիք պահի, կանչում ա ընտանիքը:

- Կա՞ն ձեր շրջապատում ընտանիքներ, որ առաջ են գնացել, կարողանում են ապրել:

- Չէ, առաջ գնացողը կթողի կերթա, Լենինականում հնարավոր չի առաջ գնալ:

- Ես գիտեմ, որ լավ հյուրանոց կա քաղաքում, էդ ո՞վքեր են սարքել:

- Ես խաբար չեմ, եթե գրպանդ դատարկ ա, չես մտածի ուրիշ ինչ կա:

- Նախքան ձեր կնոջ գնալը ո՞նց էիք յոլա գնում:

- Մեկ-մեկ չուլոչնի ցեխը աշխատանք էր լինում, գնում աշխատում էի: Փող չէին տալիս, նասկի էին տալիս, որ փոխանակում անենք, չարչիություն:

- Հիմա էդ չուլոչնի ցեխը չի՞ աշխատում:

- Հիմա սեզոնը չի, գարնանը նոր կբացեն, հիմա չի ծախվում:

- Քա՞նի մարդ կա այնտեղ աշխատող

- Ամեն ցեխում 10-15 հոգի, մասնավոր ցեխեր են, պետական ոչինչ չկա, պետական մենակ ֆաբրիկան է, էն էլ ամբողջ տարվա մեջ մի 2 ամիս չի աշխատում, հին ստանոկներն ա դրած, ռետուզ են արտադրում: Ընդհանրապես մեր ժողովուրդը զարմացած է, թե էս ղեկավարությունը ի՞նչ կմտածե, դատարկ աղետի գոտուց են խոսում, առաջին հերթին արտադրություն պիտի լինի, ժողովուրդը աշխատի, ուրիշ ձև չի լինի, Լենինականը հիմնականում թեթև արդյունաբերական գործարաններ ուներ, մեքենաշինական կա, հիմա սառ կանգնած են:

- Այստեղ չկա՞ն մասնավոր ձեռներեցներ:

- Խոսակցություն եղավ, կուզեին տեքստիլը աշխատացնեին, էն էլ չեղավ, թեկուզ եղնի էլ էնքան էն սուտ խոսացել, էլ ժողովուրդը չի հավատում: Եթե պետություն չկա, իշխանություն չկա, ու՞մ հավատաս: Էսօր պրեզիդենտ ունենք, վարչապետ ունենք, բայց դատարկություն ա՝ մատերիալ չկա: Ժողովուրդը կկարծե, թե ղեկավար ով էլ լինի՝ մեկ է, ոչինչ չի փոխվի, հույս էլ չկա, Քոչարյանը թե ուրիշը, մեկ ա, հայ ա՝ ուրենն կաշառակեր ա: Մեծը փոքրի մոտ



կխոսա, փոքրը ի՞նչ կարծիք կկազմի՝ ծրիակերություն, կաշառակերություն, ժողովուրդը կտեսնի, որ ինչ ղեկավար կփոխվի նույնը կմնա, դրա համար էլ կթողի կերթա: Ով ղեկավար կեղնի՝ սկզբում իրա բարեկամությանը կկշտացնե, դրա համար էլ հավատը կորել ա: Լենինականը մեծ գյուղ ա, քաղաքի սպասավորություն չի թողնի, էս վերևում քաղաքապետարանը ժողովրդին հող տվեց, շատերը վերցրին կարտոշկա կմշակեն, սերմացու տվին, բայց ջրի պրոբլեմ կա:

- Եթե փող ունենաք, կգնա՞ք, թե՞ մի գործ կդնեք այստեղ:

- Կերթամ, ես առևտուր չեմ կրնա անեմ, ես արտադրության մարդ եմ, ախպերս, քույրս ընտանիքներով Ռուսաստան են, քույրս Լենինգրադում ա, ախպերս էլ Թաթարստանում, շինարարություն ա անում, իրանք իրանց պահում են, թաթարները լավ ժողովուրդ են, ախպերս կանչում ա: Ես Չեռնոբիլի հաշմանդամ եմ, թոշակ եմ ստանում, մինչև 1991 թ. Ռուսական պետությունը օգնում էր, դաժե մեքենա էին տալիս: Ես ամոթ կզգայի, որ մի բան ուզեյի, մինչև 1994 թ. ես թոշակ չեմ ստացել: Տղերքը ստիպեցին թղթերս տանեմ, որ թոշակավորվեմ, ասում էի «ես ջահել եմ, ամոթ չի՞, որ թոշակ ստանամ»: Մենք ուրիշ ձևի էինք մեծացել, մեր մանկության ժամանակ Հայրենիք կսիրեինք, հիմա մեր սիրած Հայրենիքը մեր երեխեքի համար չկա, հիմիկվա երեխեքը տարբերություն չեն դնում՝ ստեղ ապրեն, թե Ամերիկա, որտեղ լավ ապրեն՝ ընդեղ Հայրենիք ա:

***Թամարա Վարդանյան, 2002թ., փետրվար***

# ՄԱՐԴԻԿ ՈՐ ԳՆՈՒՄ ԵՆ, ՃԱՏԵՐԸ ՎԻՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՆ ԳՆՈՒՄ

*Զրույցը մի դերասանուհու հետ է, որի ամուսինը ԱՄՆ-ում է:*
*Ապրում է Գյումրիում, փայտե տնակում:*
*Զրույցին ավելի պասիվ մասնակցում են նաև նրա երկու ընկերուհիները:*

- Ամուսինս Գյումրու հումորի թատրոնի հիմնադիրն էր, նաև Գյումրու դրամատիկական թատրոնի առաջատար դերասան, երկրաշարժից հետո գնացել էին հյուրախաղերի Ամերիկա 20-30 օրով, շատ լավ ընդունելության էին արժանացել: Այս դոմիկը երկրաշարժից հետո մեզ տվեցին թատրոնից:

- Իսկ դուք շենքում էիք ապրու՞մ:

- Այո, շենքը քանդվեց, 1 տարի 8 ամիս էր ստացել էինք: Մենք երկրորդ հարկում էինք ապրում, ցնցումների ժամանակ նախ չհասկացանք ինչ էր, հետո դուրս վազեցինք ու շենքը շուռ եկավ, բայց չփլվեց: Մեր շենքից միայն մեկը զոհվեց: Ընկել էր կողքի շենքի տակ, կողքի շենքը լրիվ փլվեց, իսկ մեր շենքի վերևից մինչև 5-րդ հարկերի պատերը միայն քանդվեցին: Մեկ-երկու ամիս հետո թատրոնի կոլեկտիվին Խորեն Աբրահամյանը հավաքեց տարավ Երևան, էնտեղ տեղավորեց, օթևանով ապահովեց: Խորենը շատ բան արեց գյումրեցիների համար: Հետո դասավորեց տարավ Ամերիկա հյուրախաղերի: Երբ ետ պիտի վերադառնային, ամուսնուս ընկերները չէին թողնում ինքը գա: Բայց այն ժամանակ մենք չէինք մտածում գնալու մասին, նույնիսկ մինչև 1998թ. չէինք ուզում գնալ: 1998թ. ամուսնուս ընկերոջ կինը եկավ Ամերիկայից, եկավ մեզ հյուր: Նա ռեժիսորի կին էր, այնտեղ թատրոն էր բացել սիրողական: Նա դասավորեց ամուսնուս ու իր խմբին բոլորին տարավ: 1999թ. հոկտեմբերի 17-ին բոլորը գնացին և բոլորն էլ, բացի մի երկու հոգուց, որոշեցին չվերադառնալ: Մինչ այդ առիթներ էր եղել, որ մնար Ամերիկայում, բայց միշտ ասում էր «բա ես իմ վիրավոր քաղաքը ո՞նց թողնեմ»:

Երկրաշարժից հետո մեր ընտանիքը երեք մասի էր բաժանված, ես Արտաշատում մեծ տղայիս հետ մայրիկիս էի խնամում, ինքը Երևանում էր, փոքր տղաս էնտեղ տատիկի հետ: Մի տարի էդպես մնացինք, մինչև նորից հավաքվեցինք իրար գլխի: Բայց ես որ Արտաշատում էի, վեց ամսվա ընթացքում ամեն կիրակի կանչում էի մորաքրոջս աղջկան, որ մամայիս հետ մնա, ես էլ գալիս էի Գյումրի, պատարագը երգում էի, նորից գնում Արտաշատ: Մի տեսակ պարտքի զգացում կար մոտս, մի տեսակ ներքին ուժ կար, որ մեզ կապում էր էս քաղաքի հետ: Երկրաշարժից հետո մերոնք ասեցին մնացեք Արտաշատում, իրանք ազատ բնակարան ունեն, ամուսնուս թատրոնում աշխատանք առաջարկեցին, բայց մենք չուզեցինք, մի տեսակ Գյումրին հարազատ էր: Կարող էինք Երևանում մնալ, բայց էլի չուզեցինք:

Մի խոսքով եկանք նորից Գյումրի, հետո էդ ընկերոջ կինը իր ռեժիսոր ամուսնու հետ հրավեր ստացան Ամերիկայից, նրանց երեխան հիվանդ էր, պետք է տանեին բուժելու, ուշացնաց էր լինում: Անմիջապես երկրաշարժից հետո մեկնեցին, հիմա արդեն քաղաքացիություն ունեն: Հետո նրանք էլ դա-



սավորեցին մերոնց վեց հոգու կանչեցին, մերոնք էլ գնացին: Շատ ծանր պայմաններով տեղ հասան, իրենք խաղացին մի հատ ներկայացում, շատ քիչ փող աշխատեցին: Ամուսնուս ընկերները աշխատանքային վիզա դասավորեցին ու իմ ամուսինը մնաց, հիմա ինքը իրեն շատ լավ է զգում, գոնե իր մասնագիտությամբ է զբաղվում:

Իմ ամուսինը գնաց, որովհետև շատ հիասթափվեց: Հիմա ասեմ ինչից. այստեղ մեծ բիզնես ուներ, զբաղվեց ձկնաբուծությամբ, գնացին Ռոստովից բերեցին իշխանի իկրա, ձկներ ստացան, երևի Հայաստանում միակն էր էն ժամանակ, մեծ շինարարություն արեցին, վարկ վերցրեց, մեծ ձկներ աճեցրին, Ռոստովից մեծ վաննաներ բերեցին ձկների համար: Բայց ինքը մի աշխատող ուներ, որ պետք է հսկեր էդ լուսավորման պրոցեսը, երկու գիծ ունեին լուսավորման, բայց որ երկու գիծն էլ անջատվում էր, մատորն էին միացնում: Բայց այդ սարքը մի օր չաշխատեց, ձկները խեղդվում էին ու ամուսինս էդ շլյուզները բացեց, էդ ձկները թողեց գետը: Փաստորեն, էդքան գործը արեց ու չօգտվեց, իսկ էդ պարտքը մնաց իր վրա: Դրանից հետո էլի չհիասթափվեց, գնաց արտագնա աշխատանքի, ինչքան գումար ունեինք ու ոսկի, ծախեց գնաց Սոչի: Դա էլ չստացվեց, հետ եկավ լրիվ հիասթափված, նորից մտավ թատրոն: Բայց փող չէին ստանում: Ինքը լավ մտահղացում ուներ, որ պայմանագրով աշխատեին, լավ ռեժիսորներ հրավիրեին, բայց իր ծրագրերից ոչ մեկը չհավանեց, որ կիրականանա: Երեխեքն էլ մեծանում էին, մեր ծնողներն էլ մահացան, ի՞նչ էր մնում անել: Պիտի գնանք, որ մի բան աշխատենք, մեր երեխեքին գոնե իրենց նպատակին հասցնենք: Ես էլի չեմ ուզում գնալ, բայց ինքը լրիվ հիասթափված գնաց այստեղից, ասեց՝ կուշտ եմ էս քաղաքից, ես էսքան իմ քաղաքի համար անեմ, ամբողջ հանրապետությունը գիտի, բայց էսօրվա օրով հերթագրված էլ չենք բնակարանի: Վերջին օրերին արդեն սիգարետի փող էլ չուներ, մեկ էլ էդ կինը կանչեց, էդպես գնաց:

- Իսկ ինչու՞ հերթագրված չեք:

- Մենք չուզեցինք: 58 թաղամասում էին տալիս, մենք միշտ կենտրոնում ենք ապրել, մեր աշխատանքի տեղը կենտրոնում է: Եթե աշխատավարձ չեն տալիս, ո՞նց ենք տրանսպորտով գնալու գործի, մենք էլ չուզեցինք: Հիմա ես իրեն ասում եմ «Լսի եթե մենք գանք, կարող է դու ավելի նեղվես, դու քեզ լա՞վ ես զգում էդտեղ, որ մենք էլ գանք»: Ինքն էլ ասում է «ի՞նչ ես խոսում, ես էստեղից նայում եմ, ինձ թվում է, որ ես մի բարձր շենքի վրա եմ կանգնած, իսկ դուք դժոխքում եք, ես ուզում եմ ձեզ էլ հանեմ էդ դժոխքից»: Հիմա ես էլ պիտի գնամ, բայց վախենում եմ: Ես երբեք բանվոր չեմ աշխատել, ես երգչուհի եմ: Մի տղաս էնտեղ է արդեն, բանակից եկավ՝ ուղարկեցի, բայց մյուս տղաս մնում է: Իրեն հետո ենք տանելու: Իմ երկու տղաներս էլ բանակում ծառայած են, ամուսինս ասում էր՝ բա իրանց հայրենիքն է, պիտի ծառայեն: Չնայած երիկամների պրոբլեմ ունի, բայց էլի գնաց ծառայելու, ես ամեն ամիս դեղեր էի ուղարկում բանակ: Ամուսինս շատ հայրենասեր է, բայց ստիպված գնաց: Եթե նա չգնար, մենք ո՞նց էինք ապրելու: Ես հինգ տեղ աշխատում եմ, բայց նորմալ փող չեմ ստանում: Տղաս կլասիկ մենամարտի չեմպիոն էր, չկարողացանք ֆինանսավորել, որ շարունակի: Ես դպրոցում էլ եմ աշխատում, բայց աշակերտներիս չեմ ասել, որ գնում եմ, որովհետև երեխե-

քի ծնողներն ասում են, որ երեխեքը շատ ծանր կտանեն: Ես էլ թաքուն եմ գնալու: Կգնանք, էս տղայիս էլ կտանենք, չգիտեմ, թե հետո ոնց կլինի:

- Ձեր ամուսինը փաստորեն իր մասնագիտությամբ է աշխատում:

- Սկզբում չէր աշխատում, հետո վարորդ աշխատեց, ես չեմ պատկերացնում ինքը ոնց է համաձայնվել, բայց աշխատեց: Հիմա արդեն մի հեռուստատեսությունում է աշխատում:

- Դուք հույս ունե՞ք, որ ձեր մասնագիտությամբ կկարողանաք այնտեղ գործ գտնել:

- Չգիտեմ, եթե գտնեմ էլ, դե շատ փող չեն տա, ամիսված կարող է ուրիշ գործ անեմ, դա էլ չեմ պատկերացնում, այ դա էլ է ինձ վախեցնում: Էսօր տնօրենիս մոտ գնացի, հարցրեց, «բա չես վախենու՞մ, տղային թողում ես մենակ, շրջապատ է, կարող է մի փորձանք պատահի»: Ես էլ ասում եմ, «բա ի՞նչ անեմ, ուրեմն գլուխս քարին պիտի տամ, որ իրեն էլ շուտ էստեղից տանեմ»:

- Ովքեր գնացել են էդ խմբի մեջ, բոլորն էլ մնացի՞ն:

- Հա, մենակ մի երկու հոգի եկան, գործերը չստացվեց՝ եկան: Իմ ամուսինը էստեղ չկարողացավ ինչ-որ բան անել, ինքը վիրավորված էր: Երբ ձկան գործը սկսեց, ես ասում էի «ի՞նչ գործ ունես, դու դերասան մարդ ես», բայց դրանից հետո էլ պանրի գործ սկսեց: Էլի բանկից վարկ վերցրեց, սկզբում լավ էր, մեկը կար, բայց օրինավոր մարդ դուրս չեկավ, խաբեց: Նա գյուղացիներին էլ խաբեց, կաթի փողը չէր տալիս: Հետո Բաքուից մի մարդ եկավ, ասեց տուր պանիրը տանեմ Բաքուում ծախեմ: Ամուսինս էլ հավատաց, դե ամեն մարդ իր արշինով է չափում, առաջի երկու անգամը բերեց նորմալ փողը տվեց, երրորդ անգամ տարավ մեծ գումարի պանիր ու էլ չեկավ, փողն էլ կորավ, ամուսինս էլ էդ բանկին մնաց պարտք: Մինչև հիմա գալիս են բանկից ուզում են, հիմա էլ դատական գործ են բացել, ինչի՞, իմ ամուսինը խաբեբա է՞: Նա էդպիսի մարդ չի, կաշխատի, կտա: Ես ասում եմ կգնանք, փող կաշխատենք, հետ կգանք, Երևանում տուն կառնենք: Դե Գյումրին անհեռանկար քաղաք է, ի՞նչ տեսան իմ երեխեքը էստեղ: Երկրաշարժի ժամանակ փոքրս առաջին դասարան էր, մեծս 4-րդ, երկուսին էլ փլատակների տակից ենք հանել, տնակաշեն դպրոցում սովորել են:

Տնակում ապրելը դժվար է, երկու տարի մեր հարևաններին իմ տանն եմ պահել: Մենք գոնե վառարան էինք վառում, հիմա տեսնում եմ ծուխը դուրս է գալիս էդ դիմացի տնից, սիրտս ուրախանում է: Էն դիմացինը ամբողջ ընտանիքով Սվերդլովսկում են, ուզում են հետ գան, փող չունեն, հիվանդ են, չեն դիմանում: Իսկ կողքիս մի ծեր կին է, տղան Ռոստովում է ընտանիքով, չկարողացան տատիկին տանեն, փող չունեին, խեղճ տատիկը ամբողջ ձմեռ առանց վառելիք յոլա գնաց: Մի ամբողջ ձմեռ մենք կերել ենք կաթի փոշի ու պեսոկ, խառնել ենք իրար, սարքել խտացրած կաթ, քսել ենք հացին ու կերել, չհաշված որ սաղ թատրոնի կոլեկտիվն էլ մեր հետ, ովքեր ծանր պայմաններում էին ապրում, բոլորը առաջատար դերասաններ են: Դերասանուհիներից մեկը շատ վատ վիճակում էր, ընտանիք չուներ, երկրաշարժից հետո մնացել էր մի շորով: Մենք նրան շոր տվինք, կոշիկ, օգնեցինք: Հետո լավ էր, դերասաններից մեկը գնաց Ամերիկա, իր տունը տվեց էդ աղջկան, նա էլ սեփականաշնորհեց ու ծախեց էդ բնակարանը, հետո գնաց ծնողների մոտ



Ռուսաստան: Թատրոնը քայքայվեց լրիվ, մի երկու-երեք հոգի են մնացել, հազիվ են էստեղ ապրում, շատ նվաստացած ապրում են:

Լավ էր առաջ չգիտեինք դրսում մարդիկ ոնց են ապրում, հիմա հեռուստացույցով ցույց են տալիս՝ ընտիր տներ, մենք էլ զարմանում ենք: Ճիշտ է, ուրախանում ենք, որ մեր հայերը սկսել են լավ ապրել, բայց մենք էս դոմիկում զարմանում ենք, թե ինչ շքեղ տներ են կառուցում Հայաստանում:

- Հիմա էս դոմիկի հատակը ինչից է՞:

- Փայտ է խփած գետնից մի քիչ վերև: Ամուսինս գնալուց հետո փող էր ուղարկել, ես էլ վերանորոգել եմ, դե էս տնակները 3 տարվա ժամկետով էին: Ձեռներս էնքան փող չի լինում, որ մի հատ ներկենք գոնե դռները: Չնայած ամուսինս Ամերիկայում է, բայց էլի էն չի, չկարողացա էս մյուս տղայիս սովորելու վարձը փակեմ, «Պրոգրես» համալսարանում է սովորում, կոոպերատիվ:

- Ձեր մյուս տղան որ Ամերիկայում է, ինչո՞վ է զբաղվում:

- Վերջերս է գնացել, նոր-նոր տեղավորվել է մի հատ ոսկերչական ֆիրմայում, ինքը ոչ մի կրթություն կամ մասնագիտություն չունի: Երկրաշարժից հետո չստացվեց, որ ուսումը տանք, բանակից առաջ ուժեղ պրիստուպներ ունեցավ, կանչեցինք բժիշկ, պարզվեց, որ երիկամներում քար ունի: Ամուսնուս կողմը բոլորը երիկամներից հիվանդ են, մեզ ասում էին խաբում եք, որ երեխեն չծառայի, բայց իմ երեխեն էդպես հիվանդ գնաց ծառայեց:

- Փաստորեն բոլոր դերասանները փախել են:

- Համարյա, մի քառասուն տոկոսը Ամերիկայում են, մի մասը՝ Ռուսաստանում, մի մասը իրենց գործը թողել են, ուրիշ գործ են անում: Թատրոնը քայքայվեց: Առաջ մարդիկ իրար օգնում էին, երբ մեկը վատ էր ապրում, հիմա էդ բան չէ: Էս պետությունը ի՞նչ է մտածում, դու ինձ տալիս ես հինգ հազար դրամ, ամեն ինչը վճարովի ես սարքում՝ լույսը, ջուրը, բժշկությունը, ուսումը: Ո՞նց անենք, էնքան նվաստացուցիչ է: Ես հինգ տեղ աշխատում եմ, գոնե ինձ չեմ կարողանում պահել էդ փողով: Ես պարտաճանաչ ամեն անգամ լույսի վարձը մուծել եմ, մի օր եկա տեսա անջատել են, տեսնեմ բոլորը ունեն, հարևանուհուս խնդրեցի, որ գնա լույսի մարդուն կանչի, ինքը ճանաչում է: Պարզվեց խմած տանը քնած է, գիշերը եկավ լույսը միացնելու, ես ուզեցի դուրս գամ մի բան ասեմ, որ հանգստանամ, ախր մուծել էի, ինչու՞ է անջատել, տղաս չթողեց: Ես էնքան էի ներվայնացած, որ հիստերիայի մեջ ընկա, կյանքում էդպես բան չէր եղել ինձ հետ, ես ուշաթափվեցի: Այ էդպես կուտակվում է քիչ-քիչ ու մի օր պայթում ես:

- Հետաքրքիր է, գնացողներն իրենց ո՞նց են զգում Ամերիկայում:

- Ես չգիտեմ, մի բան գիտեմ, որ գալիս են երկու օրով այստեղ, չեն դիմանում, փախչում են, դեռ մեզ էլ վիրավորում են, ասում են «դուք ո՞նց եք էստեղ մնում»:

- Իսկ ովքեր չեն գնում, նրանք ինչու՞ չեն գնում:

- Որովհետև հնարավորություն չունեն, մի քիչ հնարավորություն լինի՝ կգնան: Մարդիկ որ գնում են, շատերը վիրավորվածությունից են գնում: Իմ ամուսինը կոնկրետ շատ վիրավորված էր: Հիմա ինձ հետ մի աղջիկ է ապրում, ապրելու տեղ չունի, բերել եմ մոտս: Ես նոր եմ ծանոթացել իր հետ, նա ընտանիք չունի, աշխատավայրում էր ապրում, հիմա աշխատանքից ազատել

են ու կացարան չունի: Դժբախտ աղջիկ է, ծնողները զոհվել են, մայրը քաղցկեղից է մահացել, եղբայրը զոհվել է Ղարաբաղում, ես մինչև իմ Ամերիկա գնալս կպահեմ իրեն, բայց որ գնամ, չգիտեմ ի՞նչ պիտի անի: Գոնե աշխատանք ունենար, գոնե մի հինգ հազար դրամ ստանար, էլի բան է: Էսօր առավոտ ասել եմ գնա քաղաքապետարան քո կացարանի հարցը լուծի, որ ես խիղճս հանգիստ գնամ:

- Վաղը մենք քաղաքապետարանում սեմինար ունենք, եկեք մասնակցեք ու պատմեք այդ մասին:

- Ես կարո՞ղ եմ մասնակցել ձեր կազմակերպած սեմինարին:

- Այո, իհարկե:

- Ես ուզում եմ էս դժբախտ աղջկա տան հարցը բարձրացնեմ, բայց վախենում եմ, որ ինձ չեն թողի ներս գամ:

- Ոչ, պրոբլեմ չկա:

- Ես հավատացած եմ, որ եթե իմանան ինչի՞ համար եմ եկել, մի բան կանեն, որ խանգարեն իմ մուտքը դահլիճ, էստեղ էդպես է: Օրինակ մի բան պատմեմ, իմ տղան ծառայում էր, իմ ամուսնու քեռու աղջիկը Վազգեն Սարգսյանի հետ գնացել էին զորամաս, ինքը ինչ-որ կազմակերպություն ուներ «Որդեկորույս մայրերի», ուզել էր երեխային տեսնի: Երեխային ասել են «արի, քո մորքուրը քեզ է կանչում»: Երեխեն զարմացել էր, գնացել էր տեսնել, իրար փաթաթվել են, մի երկու բառ խոսացել, մեկ էլ երկու հոգի իրար աչքով-ունքով հասկացրել են, կանչել են երեխուն տարել մի սենյակ մտցրել պահել, մինչև որ դրանք կգնան: Հետո ամուսնուս էդ քույրը զանգեց ինձ, ասեց «երեխուն տեսա, էն էլ փախավ, նորմալ չկարողացա հետը խոսեմ», բայց երեխուն չեն թողել փաստորեն, վախեցել են ԶՊ[1] չլինի իրենց համար:

- Մեր սեմինարին մասնակցելու պրոբլեմ չեք ունենա

*Ընկերուհին* - Եթե ինչ-որ ծրագիր է լինում ամերիկյան կազմակերպության կողմից, ասենք դպրոցականների համար, բերում են տալիս մարզպետարան, նրանք էլ չեն տալիս ինֆորմացիան, դպրոցի տնօրենից թաքցնում են, քննությանը մի հինգ հոգի են մասնակցում ու իրենց ծանոթները, մնացածը չգիտեն, էդ լավ աշխատող սիստեմա է ինֆորմացիան փակելու, միշտ խոչընդոտում են ինֆորմացիայի տարածմանը:

- Մենք միայն ուզում ենք հասկանալ Հայաստանից մարդկանց գնալու պատճառները:

- Դուք չե՞ք կարծում, որ դա հատուկ քաղաքականություն է: Նույն Քոչարյանի, Պուտինի քաղաքականությունն է: Հնարավոր չե՞ք համարում, որ Բուշն ու Պուտինը պայմանավորվել են Հայաստանը դատարկել, որովհետև գուցե իրենց այս տարածքը պետք է առանց հայերի: Նախ Հոլանդիայի դռները բացվեցին, հիմա բացել են Ամերիկայի դռները,-գնացեք, գնացեք... Էն օրը ընկերուհուս հետ հաշվեցինք, մեր դասարանից մնացել են հինգ հոգի՝ հաշմանդամներն ու հիվանդները: Սա սպիտակ ցեղասպանություն է: Գյումրում նախկինում տղամարդիկ կռվելիս եթե հեռվից կին էին տեսնում, կանգ էին առնում, սպասում: Հիմա բոլորովին ուշադրություն չեն դարձնում, հազար ու մի կոպիտ բառ են ասում, հայհոյում, և բոլորովին չեն քաշվում: Տղամարդ

***1. Արտակարգ դրություն:***







չի էլ մնացել, մատների վրա կարելի է հաշվել տղամարդ ունեցող ընտանիքներին: Կանանցից էլ բան չի մնացել, տղամարդ են դարձել: Հեռուստացույցով գնացողներին քննադատում են, ասում են՝ Թուրքիա են գնում հայ կանայք, մարմնավաճառությամբ են զբաղվում: Բա ի՞նչ վաճառեն, ուրիշ բան առնող չկա: Իսկ երեխաներն ուտել ուզում են: Նայում ես՝ ապրել չես ուզում: Ես էլ գնացած կլինեի, բայց գիտեմ, որ չեմ դիմանա, կարոտից կմեռնեմ: Գնացողներից շատ կան, որ կարոտից մահացել են:

*Տանտիրուհին* - Հիմա ես քանի մարդու եմ այստեղ օգնում կերակրում, տուն եմ բերում՝ տաքացնում: Հիմա որ ես գնամ՝ ու՞մ հույսին են մնալու:

*Ընկերուհին* - Երկրաշարժից հետո, երբ Գորբաչովը եկավ, բոլոր փողոցները փակեցին, ոնց որ փիղ էին պտտացնում: Երեք օր տեխնիկան չէր կարողանում շարժվել, աշխատել... Գյումրեցիները լրիվ հիվանդ են, հոգեկան խանգարումներով: Երկրաշարժից հետո չորս տարեկան երեխան ինֆարկտից մահացավ: Տեսնեիք, թե ինչի նման էին գյումրեցիները Թուրքիայի երկրաշարժից հետո՝ սմքած, գորշացած, վախեցած, հոգեկան հիվանդի հայացքով... Ու ոչ մեկն էլ մեղավոր չի, ոչ Պուտինը, ոչ Քոչարյանը, ոչ մարզպետը, ոչ քաղաքապետը... Ոչ մեկը: Եթե ինձ էլ նստեցնեն նրանց տեղը, ես էլ նույնը պիտի անեմ, պիտի վերցնեմ ներքևիններից, որովհետև պիտի տամ վերևիններին: Որովհետև եթե ես չանեմ, շղթան կընդհատվի, և ինձ կհանեն աշխատանքից: Բայց էդ բոլորը դեռ ոչինչ, դա դեռ կարևոր չի: Կարևորն էն է, որ մարդն ինքն իր համար ոչինչ չի անում, նույնիսկ ամաչում է ասել՝ «ինձ համար», եթե մի բան էլ անում է, ասում է՝ «երեխաների համար»: «Ինձ համարը» չկա, ուրեմն մարդը չկա, ապրելու ցանկությունը չկա, կենդանի դիակ ենք մնացել:

Երբ 1988թ. այս ամենն սկսվեց, ես հավատացի, որ հիմա արդեն էլ կարևոր չի, թե դու արյան ի՞նչ խումբ ունես, ի՞նչ կուսակցությունից ես: Բոլորս իրար սիրում ու հարգում էինք: Բոլորս հավասար էինք: Հետո հասկացա, որ, ախր, ճիշտ հակառակը, նոր-նոր սկսվում է: Արյան խումբը, փողի չափը, սեփական տունն ու դոմիկը, երևանցին ու գյումրեցին... Մենք հավաքվեցինք, հավասարվեցինք, որ բաժանվենք, շերտավորվենք... Պարզվեց, որ այդ միասնությունը պատրանք է, թատերական մեծ ներկայացում, որին հավատացինք... Հիմա արդեն գիտեմ, որ էդպես չի լինում, ով հաղթեց՝ նա էլ ծրագրավորել էր: Ով հավատաց, հիմա կամ սոված է, կամ՝ գնացել է:

*Տանտիրուհին* - Մենք ապրում ենք անօրեն երկրում:

*Ընկերուհին* - Սա մի երկիր, որտեղ օրենք կա: Լենինգրադի բլոկադայի ժամանակ ամեն ինչ էլ կար, ով փող ուներ՝ ամեն ինչ էլ ուտում-խմում էր: Ես կարդացել եմ այդ մասին «Իզվեստիայում»: Մարդիկ սովից մեռնում էին, բայց մարդ կար՝ հայկական կոնյակ էր խմում, որովհետև փող ուներ: Հիմա մենք էլ ենք ապրում նույն պայմաններում:

*Տանտիրուհին* - հիմա ես գնալու եմ, որովհետև այնտեղ լավ է, ես կարող եմ ամբողջ շաբաթ աշխատել, հետո շաբաթ-կիրակի ոնց ուզեմ՝ հանգստանամ: Մեկը այստեղ լավ էր ապրում, էլի գնաց, հիմա շատ գոհ է: Անցյալ տարի եկել էր, ասում էր «մեռնեմ չեմ մնա ստեղ, էս ի՞նչ երկիր է, դուք էլ կարող եք՝ փախնեք»:

*Զրուցավար* - Փաստորեն լավ ապրողն էլ է գնում, վատ ապրողն էլ:

*Տանտիրուհի* - Այո, որովհետև անօրեն երկիր է, ղեկավարություն չկա: Մեկը 600 դոլարով իր երկու սենյակը ծախեց, միայն թե տոմսի փող անի, փախչի էստեղից:

*Ընկերուհին* - Ես գիտեմ, որ մեր փրկությունը բնության մեջ է: Չի կարելի ոչնչացնել բնությունը: Երբ որ բնության ներդաշնակությունը կոտրում ես` չարիք է: Չի կարելի բնության ներդաշնակությունը խախտել: Մեզ մոտ խախտվել է, որովհետև տղամարդը իր դերում չի, կինը` իր դերում: Տղամարդը պիտի լինի տան սյունը, կոճղը, իսկ կինը` տերևները, գեղեցկությունը:

*Տանտիրուհին* - Մի հատ հարց տամ: Մեր երկրի ղեկավարը, որ բոլորս նայում ենք իրեն, ի՞նչ է մտածում, որ հարցնես` կասի գործ եմ արել: Այ մարդ, մարդիկ աշխատանք չունեն, դու լույսի վարձ ես բարձրացնում, հեռախոս ես թանկացնում: Սաղ գնացին, մարդ չի մնացել: Ո՞ւմ թողողես, ոչ մի իրավունք չունենք: Մեր ղեկավարը ոչ մի բան չի անում ժողովրդի համար: Ես անձամբ իրեն եմ ընտրել, բայց գործ չի անում, եթե մի լավ բան էլ արել է, էնքան քիչ է, որ չի երևում: Այս տարի մեծ միջոցառում արեցին, մարզպետը եկավ, մեր ղեկավարությունը նախորոք ասել էր «ավելորդ բան չխոսեք», ասեցինք «եղավ, սուս-փուս կնստենք, իբր մեզ մոտ ամեն ինչ լավ է»: Երբ որ Քոչարյանն էր եկել, սաղ ակտիվ, լիրբ կանանց պահել էին, թե չէ կհարձակվեին կհոշոտեին էդ ղեկավարներին: Մի հատ թատերական բեմադրություն էր:

***Թամարա Վարդանյան, Գյումրի, 2002թ.***



# ՄՆԱՆ Ի՞ՆՉ ԱՆԵՆ

*Զրույց մտավորականի հետ: Գյումրի:*

- Այստեղ, Ախուրյանում, մի քանի գյուղեր կան, դրանք հին խոպանչիների գյուղեր են, 30-40 տարի շարունակ դրսում են աշխատել: Ոսկեհասկն է, Ազատանը: Հարուստ գյուղեր են, նույնիսկ հիմա: Էդ գյուղերից մարդիկ գնում են ոչ թե օրվա հաց վաստակելու, այլ` որովհետև ավելի մեծ ձգտումներ ունեն, իսկ այստեղ չեն կարող դրանք իրականացնել: Դրանցից ընտանիքներով չեն գնում, սովորաբար ընտանիքները մնում են: Կամ, եթե գնում են ընտանիքներով, երիտասարդ ընտանիքներն են: Հները, որ այնտեղ վաղուց կայացել են, հիմա չեն էլ վերադառնում, տարիներով այնտեղ են մնում: Նորերը, երիտասարդները գալիս են միայն մեկ-երկու ամսով, գալիս են իրենց ցուցադրում, իրենց հարստությունը ցուցադրում, իրենց նոր հայացքները, նոր մշակույթը ցուցադրում ու ետ են գնում: Մի տեսակ ինքնահաստատման նման բան է: Էնտեղի նոր ռուսների նման` նոր հայերի կերպար են ստեղծում: Մի տեսակ շիկ է: Դրանց մեծ մասն այլևս այստեղից բանվորներ, շինարարներ չեն տանում: Գերադասում են ազգականների հետ կապ չունենալ: Աշխատանքային դեպքում, եթե բրիգադիրներ են, հիմնականում տեղի մարդկանցից են կազմում, երբեմն հենց նույն Հայաստանից, բայց ուրիշ տարածքից, այսինքն` մեր Շիրակի տարածքից չեն, զանգեզուրցի, թալինցի, գավառցի, մյուս-մյուս տեղերից: Իսկ հիմա շատ ավելի տարածված է հենց տեղում վերցնելը, տեղում նույնպես ոչ տեղաբնակ, այսինքը, եթե հեռավոր արևելք է, ուրեմն` չինացիների, կորեացիների: Ամենաէժան և լավ աշխատուժն է համարվում:

- Եվ այդ մարդիկ այնտեղ մնում են և որոշ սեզոններից հետո, գալիս են այստեղ` իրենց գյուղում մեկ երկու ամիս ապրելու՞:

- Սեզոն հասկացությունն էլ է փոխվել: Հիմա տարեվերջին, ասենք թե երկշաբաթյա արձակուրդ, ամենաշատը չորս շաբաթով կգան:

- Այդ մարդկանց ընտանիքը այստե՞ղ է մնում:

- Հա, հիմնականում էստեղ է ... հա:

- Չե՞ն դժգոհում:

- Չէ, մեծ մասը չեն դժգոհում ու էտ ընտանիքները ավելի բարեկեցիկ ընտանիքներ են, այսինքն, եթե էտ ընտանիքն ունի ապրելու բան` երեխեքին հագցնելու, մնացած բոլորը, իրանք առանձնապես չեն բողոքում, շատ հազվադեպ, կա` երբ որ կինը կուզե, որ անպայման ինքն էլ էնտեղ լինի ամուսնու հետ, մնացած բոլորը չեն դժգոհում, միայն թե ժամանակին զանգ տան, ժամանակին ուղարկեն փողը, վերջացավ, էլ պրոբլեմ չկա:

- Իսկ երիտասարդները, որ ասում եք այնուամենայնիվ ընտանիքով են էնտեղ ապրում, ինչքա՞ն կլինեն:

- Ահագին շատ կա:

- Շա՞տ:

- Հա, շատ-շատ կա:

- Բրիգադիրների մե՞ջ, թե՞ պարզ հասարակ աշխատողների մեջ:

- Բրիգադիրների և աշխատողների են տեսակի, որոնք որոշակի հատվածում անփոխարինելի աշխատող են և կարող են պահանջել, պայմաններ թելադրել:

- Եվ նրանք մնում են այնտեղ ու հետո ընտանիքները տանում: Դրանք նո՞ր գնացողներ են, թե՞ հին:

- Հնուց ավանդաբար գնացողները, ուրեմն էտ սերունդը էլ չի էլ վերադառնում: Նորերը գնում են հենց սկզբից այն բանով, որ «Հա, չպիտի էլ վերադառնամ»:

- Գնալու են հաստատո՞ւն:

- Հա, գնալու են հաստատուն:

- Իսկ կա՞ն որոշ թիվ կազմող ընտանիքներ, որ գնացել են և արդեն երբեք չեն վերադառնա:

- Կան, շատ կան:

- Շատ՝ ինչքա՞ն, տա՞ս, հարյո՞ւր:

- Տոկոսով, ես գիտեմ առնվազն մի երեսուն-երեսունհինգ տոկոսը, էտ արդեն վերջնականապես չվերադարձողներն են:

- Գնացողների՞ երեսուն-երեսունհինգ տոկոսը, թե՞ գյուղի բնակչության երեսուն- երեսունհինգ տոկոսը:

- Չէ, գնացողների երեսուն-երեսունհինգ տոկոսը:

- Արդեն ընտանիքներով:

- Արդեն վերջնական ընտանիքներով, ասենք երեխեքի ուսումը էնտեղ է, էտ գյուղի դպրոցում էտ երեխեքի համար, ասենք թե վերադառնալու դեպքում տեղ չկա, նույնիսկ Գյումրիում էլ չկա:

- Ես կարծեցի գյուղերը պիտի տարբերվեն քաղաքներից:

- Չէ, չէ, տարբերություն շատ քիչ կա: Չնայած որպես կանոն այդ մարդիկ հաջողակ մարդիկ են, հաջողակ են շնորհիվ, ասենք, ձեռներեցության: Գուցե և մի տեսակ սոցիալական խելք ունենալու շնորհիվ: Այսինքն էտ մարդիկ կարող են նաև էստեղ երկրորդ, երրորդ բնակարան, հենց բացի, Գյումրիի մեջ գնեն, որպես անշարժ գույք, արժեք կահավորած: Ցանկացած կահույք կարող է պետք գա ու... Գնում են, տեղավորում, դուռը փակում ու գնում:

- Այնուամենայնիվ այնտեղ են արդեն:

- Հա, էնտեղ են, շատ բարեկեցիկ: Այսինքն եթե ինքը գյուղում որպես գյուղապետ չի կայացել, գերադասում է գնալ, քանի որ Ռուսաստանի այն վայրերում, որտեղ մերոնք են՝ Յակուտսկ, Սախալին և այլն, նրանք լիդերներ դառնալու ավելի մեծ շանս ունեն: Էստեղ, գյուղում, մի տեսակ տարածքը փոքր է, էստեղ չեն կարող մի քանի մարդ հորիզոնական հարթությամբ նույն բարձր դիրքն զբաղեցնել, իսկ այնտեղ կարող են: Գյուղում այստեղ լավագույն հնարավորությունը գյուղապետ լինելն է, այլ հնարավորություն չկա: Իսկ կյանքը հայտարարված է հիերարխիկ, էդ մարդիկ էլ կարող են հիերարխիկ համակարգում համեմատաբար բարձր դիրքեր ունենալ: Ուղղակի մեր սոցիալական կյանքը հարմարեցված չի:

- Իսկ գյուղում մնացողները որոշ նախանձով են նրանց վերաբերվու՞մ, թե հակառակը, թե՞ անտարբեր են այդ խնդրին:







- Իմ գիտեցած գյուղում նախանձ չկա, որովհետև էտ գյուղի իրականությունը համարյա թե մեկն է. մատներիտ վրա կհաշվես տուն, որ Ռուսաստան ներկայացուցիչ չունի:

- Այո, բայց բոլորը չեն այնտեղ այդպես կայացած, կարող սոցիալական դեմքեր:

- Էլի նախանձ չկա, ավելի շատ կա ակնածանք, քան նախանձ, խոսքի մարդը կարողացել է ու խելքը լավն է:

- Իսկ այստեղից գնացած բնակչությունը ուզում է նման ձևով կայանա՞լ, թե՞ իրենք կուզենային այստեղ կայանալ:

- Մենք մեզ մի պարզ հարց տանք. ի՞նչ է նշանակում էստեղ կայանալ, ինչպե՞ս կարելի է էստեղ կայանալ: Եթե գյուղապետը կայանալ է գյուղապետը մենք է, ավագանին որ մեծ քաղաքներում մի բան չի, առավել ևս գյուղերում ինչ որ բան չի: Հա, խամաճիկների խումբ է, դրածոների, մարիոնետների... Դպրոցը... եթե դուք նկատի ունեք դպրոցում կայանալը, ամենաանճարակ և խեղճ ու կրակ մարդիկ հիմա դպրոցի ուսուցիչներն են:

- Ոչ, ես նկատի ունեմ վաթսունից հարյուր հեկտար հող մշակող, ֆերմա ունեցող և նյութական բարեկեցության որոշ մակարդակ ձեռք բերած մեկը, որը կարող է նույնիսկ դրամ չունենալ, բայց ունի ազդեցություն, ինքնուրույն է, և մի քանիսի էլ կարող է օրավարձով կամ այլ կերպ աշխատանքով ապահովելով, դրանով իր հավակնությունները բավարարել:

- Ուրեմն մեր գյուղում սեփականաշնորհումից հետո յուրաքանչյուր ծուխ ունի մի հեկտարից պակաս, խոսքը Շիրակի մարզի հողերի մասին է, որը կարող է տալ ցորեն, գարի: Առայժմ մեր հատվածի գյուղերում խոշոր հողատերեր չկան, խոշոր հողատերերը կարող են լինել հենց գյուղապետերը, որոնք ֆոնդի հողերը կարող են տնօրինել որևէ կերպ: Գյուղերում, մեր գյուղերում այդ տեսակ ուրիշը չունենք:

- Ազատավան գյուղում մինչև վաթսուն հեկտարանոց հողատարածք մշակող մեկին հանդիպեցի:

- Մեզ մոտ չկա:

- Իսկ խոշոր, թեկուզ հարաբերական, անասնաֆերմա ունեցո՞ղ:

- Չէ, չկան: Նախ էտ հնարավորությունները բոլորը չօգտագործվեց: էն, ինչը կարող էր ծառայել անասնաֆերմայի հիմք, նոր կառուցված գոմերը մինչև հիմքերը քանդեցին, մեկ տարի առաջ կառուցված, էն տեխնիկայի վերջին խոսքով, բաղնիքով և այլն:

- Թալանվեց:

- Էտ բոլորը արված էր ու հիմա էտ բոլորը չկա:

- Իսկ եթե էտ ակտիվ մարդիկ, որ գնում են Ռուսաստան, մնային, նրանք կարո՞ղ էին ակտիվ տնտեսական կյանք ունենալ գյուղում:

- Չէ, մեզ մոտ՝ չէ:

- Կարծում եք, որ չէ՞:

- Ես համոզված եմ, որ չէ: Ուղղակի տեղ չկա էտ բոլորի համար ծավալվելու և հնարավորություն չկա, չէ:

- Եթե օրինակ հիմա, այ էս պահին, գյուղում առաջարկվեր, անհատ մարդկանց, ոչ թե գյուղապետարանին, և ազնվորեն առաջարկվեր անտոկոս

վարկ, բայց երկարաժամկետ, ասենք երեքից չորս տարով, կլինե՞ն մարդիկ, որոնք կկարողանային այդ վարկը օգտագործել գյուղում, գյուղատնտեսական կամ այլ տիպի աշխատանքում:

- Համարյա թե չէ, որովհետև նախ էտ բոլոր մարդիկ, ով որ դրսում են, շատ մեծ դիմադրություն են հաղթահարել էտ դիրքը դրսում ունենալու համար: Այսինքն էտ մարդկանց մեջ և կազմակերպական, և մնացած բոլոր հատկությունները կան, բայց այստեղ էտ հնարավորությունը չկա: Խոսքը էս տարածքի մասին է, որը բանուկ ճանապարհների վրա չէ և ոչ էլ մոտակա հեռանկարում հնարավորություններ են բացվելու: Այստեղի սովորական բիզնեսը խանութն է, խանութը պիտի ծառայի մենակ էտ գյուղի բնակիչներին, ուրիշ ոչ մեկին: Քաղաքում՝ Գյումրիում ռեստորանային, բնակարանաշինարարական ոլորտները արդեն տնօրինվում են ոմանց կողմից, նույնիսկ՝ երևանցիների: Նոր մարդկանց նրանք թույլ չեն տա մտնել, հատկապես որ իրենք արդեն բավական ուժեղացել են: Այդպես է նույնիսկ հասարակական կազմակերպությունների ոլորտում: Լավագույն օրինակը Արմեն Դարբինյանի օրինակն է, նախկին վարչապետի: Ծագումով Գյումրեցի է: Հենց որ ազատեցին, անցավ հասարակական կազմակերպությունների ոլորտ, և ամենամեծ գումարներն է տնօրինում: Հենց այստեղ, Գյումրիում, ստեղծել է երկու հասարակական կազմակերպություն, ամենամեծ գումարներն ունեն, բայց իրապարակում չեն երևում: Կամ, երբ երևում են, ամենաապաշնորհ ձևով: Դրանց երևալուց հետո այն մարդիկ, ովքեր ինչ որ հավատ ունեին հասարակական կազմակերպությունների հանդեպ, բոլորովին ետ քաշվեցին: Մտածում են, որ դա էլ մի ոլորտ է, որ ստեղծվել է ազդեցության կամ փողի համար: Եվ երևի սխալ չեն մտածում: Նույն կերպ նաև գյուղացին շատ մեծ դիմադրություն պետք է հաղթահարի, որպեսզի գյուղի շրջանակներից դուրս գա ու, ենթադրենք, Գյումրիում ծավալվի: Սահմանի հետ կապված հարցեր էլ կան, երկաթուղին չի աշխատում:

- Թուրքիայի հետ հույսե՞ր եք կապում:

- Բացարձակապես հուսալի աղբյուր և շուկա չէ, բայց Սեդրին հուսալի՞ է:

- Իսկ Սեդրին ավելի՞ լավ վիճակում է:

- Է, որովհետև էտ ամբողջը վերահսկվում է նորից երևանցիների կողմից, հիմի մեր մոտ նույնիսկ էտ մաքսային, հարկային և այլն և այլն աշխատողները, ինչքան կային, բոլորը գնացին, որովհետև երևանցիներն են տնօրինում, շատ հեշտ է զգալ շարժումից: Էս է իրականությունը: Ամենատարբեր ոլորտներում, նույնիսկ ամենաամենեղ ու ամենա, ասենք, բարձր ոլորտը վերցնենք, բարձրագույն ուսումնական հաստատությունները: Շիրակը խոպան է Հայաստանի մնացած հատվածի համեմատ: Կրթության նախարարությունը ոնց որ գիտի, որ Շիրակցին անպայման պիտի ջանա իր երեխային ընդունել տա, ընդունելու կաշառքի գինը երկու-երեք անգամ էստեղ բարձրացնում է: Էստեղ հնարավոր չի գիտելիքներով ԲՈՒՀ ընդունվել, թե չէ գները կընկնեն: Հենց որ մեկը գիտելիքով ընդունվեց, հույս կառաջանա, և դա կգցի գները: Մի ամբողջ փիլիսոփայություն են մշակել էս տարածքի համար, իբրև էս տարածքի մարդիկ հատուկ մարդիկ են, իրենց երեխեքի մասին շատ կմտածեն, երեխեն հըլը չծնված պտի սկսեն էտ երեխի համար փող հավաքել,



երբ որ էտ երեխեն հասավ էն տարիքին, երբ որ պտի ճակատագիրը որոշվի, էտ փողը կսկսե ծեքերտ վառել, դու պտի մարդ գտնես էտ փողը տաս ու քո ծնողական պարտքը համարես կատարված: Եվ այլն, և այլն... Ենքան ասեցին, շիրակցին էլ հավատաց ու հենց էդպես էլ անում է: Այսինքն այլ կերպ չի էլ կարող: Կամ էլ պիտի թողնի էստեղից գնա, որ էդ կախարդական շրջանից դուրս գա: Գնա թեկուզ Երևան: Գնացողն էլ այլևս չի ուզենա վերադառնալ այս գորշ իրականություն:

- Համեմատությունը մինչերկրաշարժայի՞ն Գյումրու հետ է, թե՞ ներկայիս ընդհանուր գործընթացների:

- Երկուսի էլ: Մինչերկրաշարժային Գյումրին ուներ իսկապես դեմք, դիմագիծ, լուրջ ինտելեկտուալ միջավայր էր: Այսօր այն բոլորովին ոչինչ չունի մարդու հոգուն առաջարկելու: Հոգևոր, մտավոր, հուզական պահանջմունքները բավարարելու ոչ մի հնավորություն չի մնացել: Ինտելեկտն էլ է գնացել, ինֆրաստրուկտուրան էլ: Հիմա Գյումրին պահանջում է հատուկ օրենք ընդունել: Է, Հայաստանն ենքան փոքր է, որ ողջ Հայաստանի համար պետք է հատուկ օրենք ընդունել, ի՞նչ տարբերություն: Հայաստանի ամեն գյուղն էլ հայտնի է իր առանձնահատուկ պրոբլեմով, ուրեմն յուրաքանչյուրի համար հատուկ օրե՞նք ընդունենք: Նույն կերպ կարող ենք հատուկ օրենքներ ընդունել Գյումրու Սլաբոդկա, Թուրքի մայլա թաղերի համար... Հանուն ինչի՞ էդ մտքերի, երևույթների վրա ժամանակ, ներվ ծախսել... Եթե կառավարությունը մտադիր է Գյումրին, Շիրակը զարգացնել՝ կանի, դրա համար հատուկ օրենքներ պետք չեն, եթե մտադիր չէ, եթե դա երկրորդական է, ուրեմն հատուկ օրենքներն այստեղ չեն օգնի: Դա ոչ մի արդյունքի չի բերի: Ի վերջո էստեղ իսկապես չափից ավելի շատ մնացել են էնպես անճարակ մարդիք, յուրաքանչյուր մարդ, ով ունի հնարավորություն, նա էլ էստեղից գնում է:

- Այսինքն հնարավորությունը հարյուր, երեքհարյուր դոլար ձեռքի վրա ունենալ գնա՞լ, թե՞ էնտեղ, ուր գնում են, կապեր և աշխատանք գտնելու շանս ունենալն է:

- Դրանք բոլորն էլ կան: Մարդիկ կան, որ կարող է ուղղակի զինվորական կալոննայի հետ էլ գնան, առանց մի կոպեկի, գնան ուղղակի բախտ փնտրելու: Բայց մենք այդ պիկը արդեն անցել ենք, հիմա մարդիկ վերջին հույսերն են կապում, էդպես խաբուսիկ իրավիճակ է: Նախագահը խոստացել է, ես ի՞նչ գիտեմ, մնացած բոլորը խոստացել են՝ քաղաքապետը և այլն, և այլն աղետի գոտին վերականգնել երկուհազար երկու թվականին: Բնակարանային շինարարություն կա, դա էլ աշխատատեղ է, ընդ որում՝ վճարվող աշխատատեղ: Վատն այն է, որ դրանից հետո դարձյալ հեռանկար չկա: Ասենք սարքեցին, ասենք՝ բոլորին բնակարան տվեցին: Հետո՞: Նախ՝ բնակարանները: Մուշ թաղամասը սարքած է, բետոնե ահավոր շենքեր, ոնց որ մի գրաքնից[1]: Մարդիկ տներն ստացել են ու չեն գնում ապրելու: Շատ ճնշող տպավորություն է: Բայց իրոք՝ ո՞նց գնան: Քաղաքից կտրված, ահավոր ցուրտ, ջրերը սառած, կոյուղին՝ սառած, ջեռուցում չկա, աշխատանք չկա... Մուշը լուրջ պրոբլեմ է քաղաքապետարանի համար, ու չգիտեն հարցը ոնց լուծեն: Հիմա

---

*1. Դամբարան:*

էլ քննարկվում է Մուշը քաղաքից անջատելու հարցը: Ամենահեշտ լուծումն է: Քանի որ թաղամասը միայն պրոբլեմային է, ոչ մի օգուտ չի տալիս, նույնիսկ տարածքի վարձակալման գումար չի տալիս քաղաքապետարանին, ավելի լավ է՝ քաղաքի կազմից «դուրս անել»: Ու հանգստանալ: Մուշ թաղի բնակիչներն էլ՝ դե ոնց ուզում են, թող ապրեն: Հատկապես որ քաղաքի վարչական, քարտեզային տարածքից դուրս է: Մշեցիները ոչ հող ունեն, ոչ անասուն կարող են պահել, ոչ ճանապարհ ունեն, շենքերը՝ 9 հարկանի, կոյուղի չկա... Ու ոչ մի ծրագիր: Միայն պրոբլեմներ: Մարդիկ բնակարան ստացել են, ամենահիմնական բանը իրանց համար արված է՝ վերջացավ գնաց, էլ իրանք պահանջատեր չպիտի լինեն ու վերջացավ: Մուշի բնակչության 70-80 տոկոսը քոչած է: Ուղղակի փախել են: Ով էլ լիներ՝ կփախչեր: Եթե հնարավորություն ունենա: Մնացել են ամենաանճարները, խեղճերը: Բայց լուծումներ կան, ախր, պետք է աշխատել այդ ուղղությամբ: Կարելի է ուսումնական կենտրոններ տանել Մուշի և 58-ի արանքը, տրանսպորտ աշխատի, մի քիչ աշխուժություն մտնի... Կարելի է, բայց ո՞վ անի:

- Հասարակական կազմակերպությունները չե՞ն կարող ազդել դեպքերի ընթացքի վրա:

- Շատ ենք փորձել: Էտ բոլորը, հա, գիտե՞ք ինչով է տգեղ: Օրինակ, անցած տարի, թե նախանցած տարի Ռոբերտ Քոչարյանի այցն էր Գյումրի և կար հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Նորմալ է, այսինքն նախագահը եկել է, պետական կառույցների հետ հանդիպում է, գործարար կառույցների հետ հանդիպում է, զանգվածային լրատվական միջոցների հետ հանդիպում է, քաղաքացիական հասարակության հետ հանդիպում է, այսինքն էն ամենաբարձր մակարդակի հետ համեմատած նորմալ է: Բայց էտ հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումը բաղկացած էր երկու մասից: Առաջինը՝ մեկ առանձին, փակ դռների ետևում հանդիպումն էր: Արմեն Դարբինյանը իրա դասարանի տղերքին հավաքեց, հանդիպեցին: Երկրորդ հանդիպմանը մասնակցում էին ցուցակով ընտրված հասարակական կազմակերպությունները: Ցուցակը նույն Արմեն Դարբինյանն էր կազմել: Չնայած ես էլ եմ մասնակցել էտ հանդիպմանը: Առաջին, փակ դռների ետևում հանդիպեցին մի երկու ժամով, ցուցակով՝ տասնհինգ-քսան րոպեով, որի ժամանակ հնարավոր չէր որևէ նորմալ բան ասել: Գրել էինք վերլուծություն, մի շարք առաջարկություններ: Օրերով աշխատել էինք վրան, տարել ենք, հավանաբար, մի տեղ գցած է, ոչ մի խոսք, ոչ մի արձագանք: Ասեն՝ վատ է, ասեն՝ սխալ է, ասեն՝ հնարավոր չի: Բայց ոչինչ չեն ասել, ոչ լավ, ոչ վատ:

*Հրանուշ Խառատյան, Գյումրի, 2002թ.:*



# ԲՈՒՏԻՐԿԵՆ ՆՍՏԵԼ ԵՄ, ՀԻՄԻ ԻՆՁԻ ԳՈՐԾ ՏՎԵՔ

*Զրույց երկու բրոկերների հետ: Այստեղ բերվում է առանց զրուցավարի հարցերի*

- Բրոկերային այս ֆիրման գործում է արդեն երեք տարի: Տներ վաճառողները հիմնականում քաղաքից մեկնողներն են: Ինչու՞ են գնում: Քաղաքն ավերվել է, և դա ունի ոչ միայն սոցիալական հետևանքներ, այլև՝ հոգեբանական: Էստեղ կա ծանր բարոյական պահ, երբ մարդը դուրս է գալիս և տեսնում է քարուքանդ եղած քաղաքը: Դա ահավոր ծանր ազդեցություն է ունենում մարդու հոգեբանության վրա: Հոգեբանական ստրես է ապրում ժողովուրդը, երբ ոչ մի բան չի փոխվում: Երեկ ես մեքենա եմ նստել, գնացել 58 թաղամաս, սարսափելի վիճակում են ճանապարհները, ընդ որում կենտրոնական փողոցներն են քանդված, ոչ միայն երկրորդական: Մեքենայում ջարդվում ես, մինչև տեղ ես հասնում: Մարդ կարող է վատ սնվել, բայց նման հոգեբանական ճնշվածություն չի կարողանա տանել, քաղաքի կեսը հիվանդ է, անընդհատ ստրեսի մեջ: Ու ոչ ոք դրա մասին չի մտածում: Գիտեն, թե որ դպրոցը կառուցեցին, ուրեմն խնդիրը լուծվեց: Հիմա մեր քաղաքում վաճառվում է 1000 սեփական տուն, գրանցվել են, որ վաճառվում են, և մոտավորապես 1500 բնակարան: Դրանց վաճառողները հիմնականում էն մարդիկ են, որոնք ուզում են մեկնել Լենինականից: 90 տոկոսը վաճառում են, որպեսզի գնան, 10 տոկոսն էլ նրանք են, ովքեր կարող է հայրենասեր են կամ ինչ-որ այլ պատճառով չեն ուզում գնալ, բայց, ասենք, երեք սենյականոցը վաճառում է, որ գնա 2- կամ 1-սենյականոց, որ էդ փողով ապրի: Իսկ մեկնողների հետ նաև ավելի է վատանում էն մարդկանց վիճակը, ովքեր միտք չունեն մեկնելու, ընդգրկված են առևտրի մեջ և ինչ-որ չափով կարողանում են ապրել, բայց մեկնողների հետ իրենց առևտրի վիճակը ավելի է վատանում և շուտով նրանք էլ կդառնան գնացողներից մեկը: Մարդիկ ինչ-որ տանը ունեցել են, արդեն վաճառել են ու հիմա էլ վերջին բանն է մնում՝ տունը, որը վաճառում են, որ գնան արտերկիր: Բա ի՞նչ անեն: Էսօր հայրենասիրությունից խոսելը հիմարություն է: Ճիշտ է, կան նաև, որ շատ փող ունեն, ստեղ ամաչում են ծախսել, որովհետև կողք-բոլորը սոված են, ու ինքը վատ է զգում լավ ապրելուց: Ու էդ մարդիկ գնում են արտասահման իրենց ունեցածը վայելելու համար: Բայց, իհարկե, հիմնական գնացողը չունեցողն է, որ ամեն ինչ վաճառել է, մնացել է տունը, դա էլ վաճառում է ու գնում: Իմ բարեկամների օրինակը բերեմ. մեխանիկ-ինժեներ, ինքն էլ ռուսաց լեզվի դասատու իմ մորաքրոջ աղջիկը, երկու հատ էլ երեխա ունեն՝ 8 և 7-րդ դասարաններում: Էստեղ էդ ինժեների համար աշխատանք չկար, դե ոչ մի գործարան չի աշխատում, ինքն էլ ռուսաց էր տալիս դպրոցում ու արդեն էլ չէին կարողանում ապրել: Ստիպված ընտանիքով գնացին, ինչ-որ ունեին ծախեցին: Լավ էլ 2 հարկանի տուն ունեին, բայց օգուտը ո՞րն է, եթե մեջը սոված ես: Հազիվ փողերը հավաքեցին, պիտի էրթային Իսպանիա: Ջարդած ավտոբուսով, ճամփեքին մնալով, հասան Իսպանիա, էնտեղ չընդունեցին: Փող էլ չունեին հետ գալու, էնքան են

փող ունեցել, որ էկել են մինչև Փարիզ, սոված, ծարավ, առանց փողի: Էդ իմ մորքուրիս աղջիկը ժիր էր: Հեռագիր էր տվել Ամերիկա, էնտեղ բարեկամ ունեինք, թե էսպես վիճակով ենք մնացել: 3 օր քնել են Էյֆելյան աշտարակի մոտի տակ, մինչև էդ աղջիկը 800 դոլար փող էր դրկել: Էդ փողով էկել էին Հոլանդիա, էնտեղ շատ լավ էին ընդունել, 3-սենյականոց բնակարան են տվել: Իրանք, ինչպես և մնացած բոլորը, ով գնում է Շենգենյան երկրներ, գնացել էին որպես փախստական: Բոլորը գնում են որպես փախստական ու ոչ մի դակումենտ չեն ներկայացնում, էնտեղ են ճարում յուրիստներ, փաստաբաններ, որոնց միջոցով էլ էնտեղ տեղավորվում են: Ու էդ մեր բարեկամների ամեն մեկին 70 դոլար են տվել, իրենց մանր մունր ծախսերի համար: Հիմա արդեն տարին լրացավ, իրանք շատ լավ վիճակում են, երեխաները դպրոցում են սովորում, իրանք արդեն դատարան են տվել, որ քաղաքացիություն ստանան: Հիմա առոք-փառոք ապրում են ու էստեղ ել ծնողներին ամեն ամիս փող են ուղարկում: Իրանք նաև աշխատում են, ճիշտ է, թույլ չեն տալիս աշխատելու, բայց իրանք ներքին կարգով ամեն մեկը մի տեղում աշխատում են: Իմ բարեկամը գիտեմ, որ թարգմանություն է կատարում, իսկ ամուսինը չգիտեմ որտեղ է աշխատում, ինչ-որ մի տեղ էլ էն է աշխատում: Իմ բարեկամներից գնացել են նաև Լեհաստան, հորեղբորս աղջիկը և տղան, առանձին ամեն մեկը իր ընտանիքներով, մեկն էլ գնացել է, դաժե[1] Լեհաստանում է ամուսնացել, լեհացի տղա է առել: Մեր բարեկամներից գնացել են նաև Ֆրանսիա, Անգլիա: Էդ Անգլիա գնացողները օգտվել են առիթից, իրանք բժշկական էին ավարտել, գնացել են ստաժիրովկի ու մնացել են, որովհետև էստեղ պիտի սոված բժիշկ աշխատեին, իսկ հիմա գնացել են էնտեղ, էրկու ընկեր էին, ու էնտեղ էլ մնացել են, ամուսնացել են ու շատ շքեղ ձևով են ապրում: Դա իմ մորաքրոջս տղեն էր: Ինքը լավ էր սովորում, գնաց էնտեղ, 2 տարի էնտեղ նախապատրաստեցին, բժշկական մագիստրոսի կոչում և չգիտես ինչ, էնտեղ էդպես բաներ կան, հիմա ամիսը 3000 դոլար է ստանում, մեքենա է առել, տուն ունի՝ 2-սենյականոց բնակարան, անցած տարի ամառն էլ մի հատ հայ աղջիկ առավ, ամուսնացավ: Կասետները նկարած ուղարկել էին, թե ոնց են առոք-փառոք մեքենաներով գնում-գալիս: Շատ հետաքրքիր էր:

Մեր հաճախորդներին մենք միշտ հարցնում ենք, թե ինչու՞ համար ես վաճառում տունդ, հետաքրքրվում ենք, ու հաստատ կարող եմ ասել, որ դրանք հիմնականում գնացողներն են: 100-ից 5-ն են, որ սոցիալական պայմանները լավացնելու համար են վաճառում, կամ, որ գործի մեջ դնի փողը, կամ՝ պարտք տա: Դա էլ է հաճախ պատահում, երբ մարդ տոկոսների տակ է մնացել ու ստիպված վաճառում է էդ փողերը վերադարձնելու համար: Մարդիկ կան, որ տունը ծախել են, դոմիկ են առել, պարտքերի պատճառով:

Գնացողներն էս տարվա մեջ քչացել են: Դա էլ կախված է նրանից, որ փող ունեցողները գնացել են, էլ մարդ չկա, որ կարողանա էրթալ: 1999 և 2000 թթ-ը եթե համեմատենք, գնացողների քանակը 2 անգամ քչացել է, 2001-ում էլ 2000-ի համեմատ է համարյա 2 անգամ քչացել: Հիմի ինչքան էլ ուզեն էրթալու, էլ միջոց չունին, որ էրթան: Մարդկանց մեղքը չէ, չեն թողնի ստեղ աշխա-

1. Նույնիսկ:



տելու: Մի հատ դոմիկ տեղադրելու համար, 10մ$^2$, պետք է 17 կետ պայման ապահովես: Դա ֆիզիկապես անհնար մի բան է: Դա հենց մալիյ[2] բիզնեսի զարգացմանը խփելու մեթոդն է: Ընդ որում էնպիսի 17 կետ են, որ անհնարին է լրացնել, կապեր էլ ունենք, մոտիկ մարդու գործ էլ է, բոլորին իրար ենք խառնել, բայց նույնիսկ շինարարության պետը, որ մոտիկ մարդ է, ասում է, որ հնարավոր չի, գալու են տռուգանեն: Այսինքն, գործ անելն էստեղ անհնար է, չեն թողնի մարդ աշխատի: Մի բնագավառ չկա, որ մարդ գնա ու աշխատի, երևի հավաքարար էլ մարդ չկարողանա աշխատել: Սովետի ժամանակվա բյուրոկրատական ապարատը փառք ու պատիվ էր սրա հետ համեմատ: Սովետի ժամանակ թույլտվության մեջ ընդամենը գրվում էր՝ թույլ տալ կառուցել բնակարան համաձայն ճարտարապետի նախագծի: Ճարտարապետին էլ տալիս էիր պատվերը՝ նախագիծը ստանում ու գործը սկսում: Իսկ հիմա գրում են՝ ապահովել գազինները, տարածքները, լուսավորվածությունը, որ էգուց էլ ասի՝ որ էս տարածքը չես լուսավորել, դոմիկդ առ, գնա: Կանաչապատումը, լուսավորման և մուտքի գումարը ինքը պիտի մուծե միանգամից, 15 000 դրամ էդ տղեն պիտի մուծե, որ նոր գործ դնե, երբ որ էդ տղեն հլե հեչ մի բան չի աշխատել, բրի բերե դնե, որ հացի փող աշխատի: Ասում են գնա մասնագիտացված կազմակերպություն գտի, որը իրավունք ունի դոմիկդ բերե էստեղ դնե, մանտաժի համար էլ փող մուծե ու էդ մուծումները ցույց տուր, որ հարկային դաշտով է կատարվել: Այ մարդ, ես կերթամ, կռանը կանգնած, կվարձեմ, կբերեմ, կդնեմ, ոչ բետոն, ոչ մի բան... Կսեն՝ իրավունք չունիս, գնա ընձի թուղթ բեր, որ բերել ես: Կսե՝ գնա մուծե պետությանը, հետո ինչխ գուզես բեր, գուզես՝ գրկած: Էդ էլ ինչի՞, որ ես մի թուղթ բերեմ մի կազմակերպությունից, որը իրա հերթին ստիպված էղնի լիցենզիա հանե, որ ինքը էդ իրավունքը ունի, որ էդ փողը էրթա պետությանը: Էդ տղեն հլե հեչ մի բան չի էրել, արդեն 300 դոլար մուծում է էրել էս պետությանը: Էդ տղեն քանի օր էլ աշխատի, էդ 300 դոլարը չի աշխատի: Ընդ որում ասեմ, որ էդ 300 դոլարի մեջ ոչ մի կոպեկ կաշառք չկա, դա բոլորը պետական մուծումներ են: Թե չէ էգուց մյուս օրը քաղաքային գուկա՝ բուդկա էս դրել, քելե, փակենք: Հղոր բրի տաս, հարկայինին բրի տաս, սանեպիդին բրի տաս, էլ եսիմ ում: Մնացել է գրեն, որ թափառող շներին էլ բրի կեր տաս, որ չսատկին: Հետո էլ կսեն՝ ինչի՞ կերթան: Էլ ի՞նչ էնեն, թող մնան իրանք իրանց ղեկավարեն, հետո իրանք էլ կերթան, վերջին մնացողն էլ՝ թող լույսը մարե, նոր էրթա: Էս քաղաքում անհնարին է աշխատել, ոչ մի բնագավառ չկա. քաղաքապետարանի աշխատողները՝ բողոքավոր, մարզպետարանի աշխատողները՝ բողոքավոր, բոլորն էլ բողոքավոր են: Էնպիսի ապարատ է ստեղծվել, որ առանց կաշառքի, ծանոթի հնարավոր չէ, որ մարդ իր պահած խոզը ծախե: Եթե գուզեք իմանալ, թե ինչի ժողովուրդը ստեղից կերթա, մտեք բանկերը ու հաշվեք ինչքան գումար կա նստած աշխատավարձերի, թոշակների ու նպաստների հաշվին, բաժանեք էս բնակչության քանակի վրա ու տեսեք, թե հնարավո՞ր է էդ գումարով ապրել: Էլ չասած, որ էդ գումարի մեծ մասն էլ դրսից ուղարկած փողերն են, որ մեզ մեղքալով կուղարկեն: Ընկերս ընձի Ռուսաստանից փող կղրկե, որ ես ապ-

2. Փոքր:

րիմ, բայց ինչի՞, ինչի ես բոլ չկարողանամ դրկել: Կսե խաչը լավ բան է մե օրըմ ձեր տունը ուտենք, մե օրըմ մեր տունը: Բայց մենք անընդհատ ուրիշի տունը կուտենք: Երևանը դարձել է հանրապետություն, Հայաստանն էլ բաժանվել է երկու մասի՝ Երևանի ու մնացածի: Էսօր Երևանում ապրում է Հայաստանի բնակչության 70 տոկոսը, էլ ինչի՞ մասին է խոսքը: Ինչի բոլ միլիցիայի աշխատողը ստանա 40 000 դրամ, իսկ մարդը, որ սաղ կյանքը աշխատել է, 4-5 հազար: Ի՞նչ է էրել միլիցիայի աշխատողը, ինչ լավություն է էրել, բացի կաշառք վերցնելուց: Կամ նույն միլիցիայի աշխատողը, եթե սովետի ժամանակ է աշխատել, բոլ 4000 ստանա, իսկ եթե Սերժ Սարգսյանի հետ է աշխատել՝ 40 000: Ձուկը գլխից է հոտած, սաղին պետք է ոչնչացնել, որ մի բան սարքես: Ոչ մեկը արժանի չեն էդտեղ նստելու: Իսկ էն, որ կխոսա, թե աշխատատեղ են ապահովել, լրիվ դատարկ խոսակցություն է: Չնայած աշխատատեղ ավելացել է գերեզմանոցում: Պրեզիդենտը, որ հայտարարեց, թե 40 000 աշխատատեղ է ավելացել, էդ 40 000 ուրտե՞ղ է էղած: Էն ճշմարիտյանը ահագին զարգացած կարդացած տղա է, գրագետ, փորձեց ինչ-որ մանիտորինգ, բան էնել... Այ մարդ, ես գեղացի տղա եմ, ես հեչ բանից էլ չեմ հասկնա, ընձի ըսեք, թե 40 000 տեղ ուրտե՞ղ է: 1200 տեղ Լենինականի Տրիկոտաժի ֆաբրիկան է, 2000՝ Կիրովականը, 400 էլ... Ինքը՝ թե որ մանիտորինգով, որ վերցնենք, միջին հաշվով, միջին հաշվով... Էն ժամանակ Ղանդիլյանը մե լավ խոսքըմ ուներ: ԳԵՊՈ-յի պետին հարցրեց, թե «քանի՞ հատ էլեկտրավոզ ունիք, 6 հատ թազա ուղարկել եմ, ինչի՞ չեք աշխատցնե»: Ըսից գնաց թե՝ «միջին հաշվով օրեկան ռեմոնտ կենենք, միջին հաշվով սկան գելնի»: «Այ տղա», սավ, ընդհատեց: Ընիկ ամբիոնի վրա էր, ինքը՝ դահլիճում: «Այ տղա, ես քեզի կսեմ, թե օրեկան քանի՞ էլեկտրավոզ վիպուսկ կենեք, քանի՞ հատ դուրս գուկա գիծ: Միջին մի ըսա, ըսա օրեկան 4 կամ 3 հատ»: Ըսից էլի դառավ, թե՝ «միջին հաշվով, միջին հաշվով... »: Սից, թե «լսե, այ ընկեր, միջին հաշիվը ուրիշ բան է, ես չեմ հասկնա: Ըսավ մեր պառյեզդը, 3 պլաշչադկի վրա 3 տուն կա, էն երկուսի կնկետիկը, կներես, բոզ են, երրորդն էլ ես եմ: Հմի միջին հաշվով դուրս գուկա, որ իմ կնիկս էլ է բոզ»: Ըրե միջին հաշիվը էդ է, ճիշտ կսե: Հմի տես, կսե, թե միջին հաշվով, որ մանիտորինգ կենենք, Գավառում կամ Գյումրիում, որ մարդիկ 10 հատ շենք են սարքել, 10 շենքի վրա բոլ որ աշխատած էղնին, ըսենք, 1000 հոգի, մենք կհաշվենք, որ միջին հաշվով... Ու էս իմ պատմածս անեկդոտը կդառնա: Ու 40000 աշխատատեղ իրանք չկարողացան դաժե հաշվարկեին, բայց իրոք, 40000 մարդ զբաղվածություն ունի մեր հանրապետությունում: Հայաստանում քանի՞ քաղաք, շրջան, ռայոն, գյուղ կա, մի 1000 հատ կեղնի, մենակ Շիրակի մարզում էդքան կա, մի 1000 հատ կեղնի: 1000 բնակավայրերում 2 մարդ կմեռնի՞: Մենակ Լենինական օրեկան 10-12 մարդ կմեռնի: Էդ 2000 մարդուն հուղարկավորություն պետք է կատարել, 2 հոգին մենակ փոս փորողներն են, ավտոյի շոֆերը, արդեն 16 հազար մարդ: Թաղման բյուրոյի աշխատողներն էլ որ գումարես՝ 40000 կլրանա: Օրեկան 40000 մարդ զբաղված են թաղման հարցերով: Չհաշված ծաղիկ ծախողներին ու մնացածին: Էնպես որ պրեզիդենտը ճիշտ էր աշխատատեղերի քանակի առումով, բայց չիդեր՝ ինչ կհաշվեր:

Ապակու գործարանը պիտի աշխատեր, էն էլ, էդ տղեն էկավ, ահագին մի-



ցոցներ ներդրեց, ես ստույգ ինֆորմացիա ունեմ դրա մասին, հանին գործի, ու ընդամենը 3 օր, չթողեցին մարդը աշխատի: Ստեղ շաքարի գործարան կսարքեին, էնպես էժան տեխնոլոգիա էր, որ աշխարհում նմանը չկար: Բերին, հանգին, դրին, սև ածուխ բերին, սարքավորումները կլն, մնացել է, թե իբր կառավարությունը պիտի լսե: Կառավությունը լսեց ու էնպես բան էրեց, որ էդ տղեն նույն օրը փախավ, ինչ էլ որ բերել էր, ամեն ինչ թողեց փախավ: Ինչի՞ համար, որովհետև էս Շիրակի մարզում չի կարելի նման բան էնել: 13 տարվա ընթացքում ստեղ բացի մանվածքների ֆաբրիկայից ուրիշ բան չեն բացել, բա էդ հատուկ վերաբերմունք չէ՞, մեր մարզի նկատմամբ: Մարդու գլուխը կուտեն, չեն թողնի աշխատի:

- Կառավարությունը պետք է ստաբիլ մաքրել ու թողնել, սաղ դեբիլներ են: Սաղ մաֆիա է, իրար կուտեն ու կպաշտեն: Սաղ բոլ մաքրեն ու նոր մարդիկ դնեն: Ես կարող եմ հայտարարել, որ ավազակների ոհմակ է:

- Շաքարի գործարանի ներդնողը արտասահմանցի էր, ինքը գտել էր մի քրախված[3] շենք, որը ինքը ուզում էր վերցնել ու իրան բոլ անվարձահատույց տային, ավելի շուտ ոչ թե անվարձահատույց, այլ, ըսենք, 5 միլիոնի բոլ ծախեին, իրան 500000-ի էին տվել, 10 անգամ էժան, որ ինքը շաքարի շենքը սարքեր: Էդ մարդը մի 10000-ի ներդրում էրեց, բերեց սարքավորումները տեղադրեց, 3 ամիս անցել էր: Սրանք գտան, որ իրանց ձեռք չի տա, թե՝ մենք խաբել ենք քեզի, շենքի գինը ոչ թե 500000 էր, այլ 5 միլիոն բոլ տաս: Չնայած մինչև էդ պայմանագիրը արդեն կնքած է էղել՝ Պետական գույքի կառավարման կոմիտեն գրել է, որ էդ շենքը 500000 արժե: Ու 3 ամիս հետո, իբր պարզվավ, որ Սեփականաշնորհման կառավարման կոմիտեն սխալ թիվ է գրել, 5 միլիոնի փոխարեն 500000 է գրել: Ու էդ մարդուն ըսել էին՝ աղբեր ջան, էս շենքի համար 5 միլիոն բոլ տաս: Էդ մարդն էլ թքեց գնաց, ներդրումների էլ, ամեն ինչի վրա էլ: Ի՞նչ տարբերություն, մարդ դոմիկի մեջ կապրի՞, թե՞ տան, եթե փող չունիս հաց ուտելու, մեկ է, կթողնիս, կերթաս:

- Հանրապետության երկրորդ քաղաքն է, վրեն նայել չեն ուզե: 10 տարի Լևոն Տեր-Պետրոսյանը մե հատըմ չեկավ, չնայեց, էս Քոչարյանը, հլե ոչինչ, ստիպված մեկ-մեկ կնայե:

- Տեսեք, սերտիֆիկատների հետ ինչ օրինաչափություն է ստեղ: Լենինական քաղաքում հանձնված կա մոտավորապես 24 000 բնակարան: 37000 ընտանիք մնացին անօթևան: Բայց Լենինականում 37000 բնակարան չի սարքվել, որ էդքան սերտիֆիկատ տան, որ մարդիկ էրթան էդ տների մեջ ապրին: Լենինականում էսօր սարքվել է 10 000 բնակարան, պատահական թիվ եմ ասում: Բոլոր դեպքերում, քաղաքի 30 տոկոսն էլ նույնիսկ չի կառուցվել: Բայց եթե դու ինձի էսօր կուտաս 37000 սերտիֆիկատ, ես ու՞մ տունը էրթամ առնիմ, ինչքան տուն էս սարքել, էդքան սերտիֆիկատ տուր: Եթե արտագաղթը չեղնի ու էդուրից տները չազատվին, ուրեմն էս սերտիֆիկատները ընդհանրապես աբսուրդ են: Ուրեմն իրանք ստիպում են, որ մարդիկ գնան: Այսինքն, փող են տալիս, թե, աղբեր ջան, առ, փախի, շուտ էրա ստից: Մարդիկ էլ տները կվաճառեն: Վաճառելու պատճառները հետևյալներն են. առաջինը էն, որ

*3. Անտեր, թողնված:*

մարդ պարտքեր ունի, ու ստիպված բդի տունը վաճառե, որ պարտքերը տա ու կեսն էլ ինքն ուտե, երկրորդ պատճառը՝ միանշանակ, որ էրթալու հնարավորություն ստանա, էլ ուրիշ պատճառ չկա: Սերտիֆիկատ ստացողներից մեկն չկա, որ ուրախանա, կսե՝ ես սոված կմեռնիմ, ընձի տունը ինչի՞ս է պետք:

- Մարդիկ կան, որ արդեն երկրորդ կռուգով[4] սերտիֆիկատի տները վաճառել են: Երբ որ սերտիֆիկատը կստանաս, իրավունք ունես միայն մի տարի հետո վաճառելու, հմի արդեն 2 տարի են դարձրել: Մի տարի կալանքի տակ կդնեն, հետո կթույլատրեն: Ու մենք արդեն երկու դեպք ունինք, որ տարին արդեն լրացել է ու մարդիկ էդ տները ծախել են, որ գնան: Մարդիկ փող չունեին, որ էրթային, հմի էդ ստացած տները ծախենք ու կէրթան: Մեր մոտի էջմիածինցի Սուրենը փող չուներ, որ էրթար, հմի էդ սերտիֆիկատով տունը ծախեց ու արդեն կերթա:

- Որովհետև էս կառավարությունը սխալ կենե, փողը ընչի՞ կուդա, թող տունը սարքե տա, փող ընչի՞ կուդա: Մինչև սերտիֆիկատների տալը Գյումրիում բնակարան բաժանելը մեծ պրոբլեմ էր: 1 սենյականոց բնակարանը 700 դոլար էր: Հիմի էդ 700-նոց բնակարանը դառել է 1500 դոլար, այսինքն հմի բնակարան վաճառելու հնարավորություն կա, առաջ չկար: Այսինքն, մարդ որ տունը ստանար, ստիպված մեջը բդի նստեր, ուրիշ վիխոդ[5] չուներ, չէր կրնա ծախել, ծախելը բացառվում էր: Հմի բոլորը դառել են պոտենցիալ վաճառող: Այսինքն, երբ մտքին էղավ, կսե՝ տունս կծախեմ ու կերթամ, սերտիֆիկատով կծախե, ու փողը կառնի կերթա: Իսկ առաջ էդ հնարավորությունը հեչ մարդ չուներ: Նույնիսկ 7000-նոց տունը 1000 դոլարով առնող չկար: Հմի շուկա է, գործում է, որը մեխանիչեսկի նպաստում է արտագաղթին: Ես չեմ մտածե, թե ամերիկացին դիտմամբ արեց, որ արտագաղթ էղնի, պայմաններ էղան՝ արտագաղթը էղավ:

- Հմի մարդ որ սերտիֆիկատ կստանա, առաջին բանը, որ կմտածե, ոչ թե էն է, թե ինչխ աշխատի, որ էդ տան մեջ ապրի, այլ ինչխ էդ սերտիֆիկատը փող դարձնե, որ ստեղից փախնի:

- Հմի արդեն երկրորդ կռուգը կֆռա՝ սերտիֆիկատը վաճառվիցը սերտիֆիկատի վրա: Այսինքն իրանք կարող է 60000 սերտիֆիկատ տան, բայց իրականում դա 6000 տուն է: Այսինքն, ով առավ՝ գնաց: Պզդիկ վախտերս խաղ կար, թաշկինակը կգցեին, ում կնգներ՝ գելներ, հմի ըսիգ է, սերտիֆիկատը ում ընկավ՝ գելնի կերթա, սամալյոտի տոմս կառնի ու թռավ... Էսօր նույն խաղն է՝ թաշկինակ կխաղանք: Անցած տարի դեկտեմբերին նոր լրացավ սերտիֆիկատ ստացածների իրանց էդ նոր տան մեջ մտնելու առաջին տարին: Այսինքն մինչև դեկտեմբեր իրանք իրավունք չունեին իրանց տները ծախելու, հմի էդ մարդիկ արդեն կարող են ծախել: Իսկ հիմի, երբ արդեն մտել ենք ծրագրի հիմնական փուլը, ժամկետը երկարացրել են մինչև 2 տարի: Մինչև երկու տարի չանցնի, չեն կարող վաճառել: Իբր էն փորձնականը շատ լավ անցավ, իրար գովեցին... Հմի Գյումրիում բդի տան 2000 բնակարան, էս բնա-

4. Երթանով:
5. Ելք:



կարանները արդեն 2 տարվա ժամկետով են, այսինքն 2 տարի չես կարող վաճառել: Չնայած էնքան մեթոդներ կան էդ բնակարանից ազատվելու՝ մեկին կուդա դավերենոստով[6] ու ինքը էլի կերթա: Սենց իրան հասանելիք 2000-ից կվերցնե 500, կուդա իրա բալնիկն էլ, տունն էլ, ու էն բանով, որ 2 տարի հետո էդ մարդը իրա 1500-ն էլ էլի կուդա, ու ինքը էդ տան 500 դոլարով կերթա ստեղից: Այսինքն էդ էն տիպի ներքին կուխնյա է, որ կառավարությունն էլ ուզենա՝ չի կարող գտնել:

- Էստեղի սերտիֆիկատների բաժանումը Երևանի վրա էլ ազդեց: Ստացողները եթե հնարավորություն ունեն, կարող են Երևանում էլ տուն առնեն: Ձգտում են Երևան տեղափոխվել, էնտեղ շուկայում դեռ հնարավոր է բան վաճառել, իսկ էստեղի դատարկվելը ամենաշատը շուկայի վրա է ազդում, իսկ զբաղմունք էլ չկա, դրա վիճակը գնալով անընդհատ վատանում է:

Իրականում ստացած տների 90 տոկոսը չեն ապրի, որովհետև հնարավոր չէ ապրել: Երեկոյան գնացեք Մուշ առաջին թաղամաս ու կտեսնեք, որ էնտեղ մարդ չկա: Չնայած ամենալավ թաղամասերից է իրա բարեկարգման տեսակետից, բնակարանների պլանիրովկի[7], մակերեսի չափի, ամեն ինչով ավելի լավն է, քան 58-ի բնակարանները: Բայց ջեռուցում չկա, լույս չկա, ոչ մի հատ հեռախոս չկա, կոյուղի չկա, ջուր չկա: Լույսը մեկը մեկից են քաշել, համարյա թե չկա: Բայց բնակարանները ավելի լավն են, քան թե 58-ինը: Ու բոլորն էլ բետոնային շենքեր են, որտեղ անհնարին է ապրել, ինչխոր Հիտլերի բունկերները էղնին: Էդպես սանիտարական նորմա աշխարհում գոյություն չունի, որ մարդ բդի բետոնի մեջ ապրի:

- Ո՞ր երկրներն են ավելի շատ գնում:

- Շենգենյան երկրները, բայց ամենաշատը՝ Ռուսաստան: Իսկ շենգենյանից էլ՝ Հոլանդիա, Բելգիա, Իսպանիա: Գերմանիայում էլ սահմանափակեցին հնարավորությունները, որովհետև որոշում կայացվեց կառավարության մակարդակով, որ չթողնեն, հանենցը սաղին: Որովհետև հայերը գնացին սաղ գողություն էրին, թալլին, հայերի ուղեղը էդ ուղղությամբ կաշխատի, չի՞: Հիմնական զբաղմունքը էդ էր:

- Մայլիս տղեն կանչել էր, բդի էրթայինք, ըսի՝ ըսիք վո՞վ է: Ինձի թե՝ գիտե՞ս ինչ, տանող է, կսե՝ ինքը աուդիո, վիդեոտեխնիկայի մասնագետ է: Ամեն մեկը մասնագիտացել են մե գործով, գողնալու մե ապրանքին ուղղությամբ:

- Մեր մայլեն մի հատըմ տղա կար, գողական էր ապրում: Ֆրանսիա գնաց՝ լավ թալլել էր, գողցել էր, էնտեղ որ շուխուրը[8] էլել էր, հմի գնացել է Անգլիա, էնտեղ կթալլե: Հմի կնիկն ու էրեխեքն էնպես մի հարստության մեջ են, որ դու չես պատկերացնե: Ինքն էլ՝ հեչ, թաղի խուժան լակոտ: Հմի Անգլիայում է, կինը էս վերջերս էկել էր ստեղ, մենակ տեսնեիր ինչ հարստությունով, էն էլ փողոցային մարդ էին: Հիմա Անգլիայում են ապրում, տուն են առել:

- Ես ասեմ, ի՞նչ կգրես, չես գրե, բայց սպես կգրես: Ամեն ինչը հնարավոր է վերականգնել: Հնարավոր է նույնիսկ էն Անգլիա էշտեցողին էլ հետ վերա-

6. Վստահագրով:
7. Նախագծման:
8. Աղմուկը:

դարձնել, հնարավոր է, որ ես մնացողն էլ էստեղ մնա, սաղ կերթա ու գուկա, բայց մի բանըմ կա, որ չի վերականգնվի, դա բարոյականությունն է, որ կորավ կորավ: 1995 թվերին մարդիկ ելան բազար առևտուր էնելու, չէ՞, էն ժամանակ, որ կդնեին կշեռքին կկշեին, դախլի ժողովուրդը, իրա տվածը կարմրելով կուտար, կամնչեր, որ քեզի կխաբեր, հմի 2 կիլոյի մեջ կես կիլոն կխաբե ու ուղիղ աչքերիդ մեջն էլ կնայե: Էդիկ է կորել, էդիկ էլ չես կրնա վերադարձնել: Մնացածը, ինչ-որ լացանք, ըսինք, էղոնք սաղ հնարավոր է վերականգնել, էդ մեկը՝ չես կարող: Հմի էս պահին մարդու բարոյական կերպարը արդեն փչացել է, էլ չես կրնա վերականգնել:

- Պետք է էդ կառավարությունը հանել, մաքրել, դայդին մարդկանց դնել: Ես մի նկատառումով էդա Դավթաշեն, որտեղ մի արտառոց բան տեսա: Տեսա, որ 3 հարկանի տուն է, բազավորական սարքած, պարիսպապատված, էդ էլ էնպես մի ճարտարապետական տեսքով է շարած, որ Կենտկոմի շենքը էդ ճարտարապետական բանով սարքած չէր, մեջն էլ սեփական ժամ: Հլե մեկմ չի հարցնում, թե քեզի էդ միջոցները ո՞վ է տվել, որ հայաթիդ մեջը սեփական ժամ ես դրել, էս մեր ժամի չափ: Ես զարմացա, որ տեսա պարիսպների մեջը էդիկ, հետո մարդուն հարցրի՝ թե էս ի՞նչ բան է: Ըսավ թե՝ թաղապետի տունն է, էն էլ իրա սեփական ժամն է: Է, մեկմ չի՞ տեսնի, չի՞ հարցնի, թե ու՞մ միջոցներով է: Սպես պետություն կպահե՞ն: 4 հազար դրամ թոշակ կուտաս, էն էլ 3 ամիսը մեկ, դու ի՞նչ պետություն ես: Սաղ փողերը ուրիշ երկրներում կծախսես ու ման գուկաս: Առավոտից իրիկուն քու Ազգային ժողովդ ման է գալիս երկրները, ու՞մ փողերն են ծախսվում: Իսկ մեզի աղքատի, մուրացկանի թոշակ են նշանակել: Ես 54 տարի աշխատել եմ ու էն էլ ինչխ եմ նվիրված աշխատել: Իսկ հմի իրա տված թոշակը շաբաթվան ապրուստ էլ չէ: Չեք կարող կառավարել, ռադ էղեք, թող կառավարողները գան:

- Հմի ընձի որ մեկմ տոմս առնի, որ ուղղությամբ գուզե էղնի, միանգամից կթողնիմ կերթամ: Նույնիսկ Շենգենի երկիր պետք չէ, էստեղից մինչև Մինվոդ ընձի հասցրու, հետո ես գլխիս ճարը կտեսնիմ, ավել բան պետք չէ:

- Չես լսե՞լ, որ ստեղից մարդիկ ոտքով գնացել էին, Վրաստանում էին բռնել, Լենինականի ժողովուրդն էր: Իմ արև, երեխանցով, ընտանիքով, էլել, գնացել են:

- Մարդ կա՝ ամեն ինչի մինիստր է *(տալիս է Հայաստանի նախարարներից մեկի ազգանունը-Գ.Շ.)*: Մեկմ չկա՞ հարցնե՝ խոմ հայվան չէ՞, հայվա՞ն է: Ինքը չի՞ մտածե, որ սաղ վրեն կխնդան, բոլոր մինիստրությունների մինիստր նստավ: Էդ ինչ բազմապրոֆիլ մասնագետ է: Իսկ եթե ստեղից կհանեն, էնտեղ կդնեն, էդիկ ընդամենը կնշանակե, որ կաշառք կուտա: Ինչի՞ ստեղից կհանես էնտեղ կդնես, էդքան անփոխարինելի է՞ էդ մինիստրը: Հավն էլ կհասկանա, մի փոքր տրամաբանություն ունեցող մարդն էլ էդ բանը կջոկե: Մեկըմ էլ կա (անվանում է Հայաստանի նախարարներից մեկ ուրիշին-Գ.Շ.), մազութ ծախողին, ստեղից կհանեն էնտեղ կդնեն: Ստքերը չեն շարժե, անփոխարինելի մարդիկ են, սաղ մազութն ու բենզինը կերան, հմի էլ տեղից տեղ կդնեն: Այ էդ գրեք, գուզես անունն ազգանունս էլ տակը ստորագրեմ: Էդ ի՞նչ անփոխարինելի մարդիկ են:

- Էդ մարդը որ ծնվել է, ծնողատանը իրան «մինիստր» է ընկել: Մի բան է



լավ, ինչ գուզես՝ խոսի: Բայց թե որ դատարկ էլ բդի խոսանք, ինչքան գուզեն բուլլ տան, էդ ու՞մ է պետք: Սաղ վերևներից գուկա: Ամեն ինչը Երևանինն է ու Երևանցունը: Կա մեկը մեկին մասշտաբ, երբ որ նույն հարաբերությունն է, կա նաև մեկը 100 000-ի մասշտաբ, հմի Լենինականի մասշտաբը համեմատած Երևանի հետ 1-ը 1 000 000-ի է: Հմի էնքան փոքր է ստեղի մասշտաբը, որ էլ համեմատելի չէ: Ի՞նչ քաղաքապետ, քաղաքապետի հետ հաշվի նստողը ո՞վ է, ի՞նչ քաղաք: 95-ը՝ Երևանինն է, 5-ն էլ՝ մերը ու պրծավ:

- Լենինականը ի՞նչ են դարձրել՝ երկրորդ կարգի քաղաք: Այսինքն էնքան վատ կվարվին, որ նույնիսկ մարզպետին էլ են Երևանից բերել, ուրեմն Լենինական մարդ չկար, հա՞: Ուրեմն Փիլոյանի պես մե խելացիմ չկա՞ր, հա՞, միլիցիայի պետ չկա՞ր, գայի պետ չկա՞ր, կամ տամոժնյու պետ չկա՞ր, սոցապ բաժնի պետ չկա՞ր:

- Այսինքն էս քաղաքը դարձրել են չիդեմ ինչ, որ ղեկավարությունն էլ պիտի Երևանից գա: Իբր թե դուք ո՞վ էք, որ քաղաք ղեկավարեք, տեր էղնիք, իրանց մարդիկ բդի էղնին: Այսինքն էդ բոլոր ղեկավար պոստերում իրանց դրածո մարդիկ են, ու շաբաթը մեկ օրն էլ գռնե բդի էրթան ոտլյոտ[7] տան գան, թե ինչ են էրել: Հարկայինի պետը քանի՞ օր է Երևան, կամ մնացած բնագավառները, որ բնագավառը ուզում ես վերցրու: Գնա կաղաստրը հարցրա՝ շաբաթը քանի՞ օրն է Երևան:

- Այսինքն մենք էսքան տարի էստեղ ծանոթ ենք ու չենք կարող էրթանք մե բանմ ըսենք, բանմ ուզենք, պայմանավորվինք, միանգամից՝ «արա, էս ի՞նչ ես խոսում, էս եքա կաբինետը տվել ենք քեզ, ուրեմն չե՞ս կարա մի 200 դոլար տաս մեզ, արա, սամալյոտը պասադկա կանի ստեղ[10]»: Է, սամալյոտն որ էկավ դատարկ ստեղ պասադկա էրավ, ընձի ի՞նչ: Հնարավոր չէ ապրել, էնքան մեծ է տարբերությունները: Ինչխոր հմի ընձի դրկեն մանկապարտեզ: Մենք նալոգների դեմ չենք, բայց բդի որոշակի հավասար պայմաններ էղնին: Ընպես է վիճակը, ինչխոր ես հմի էրթամ Տրետյակի հետ խակկեյ խաղամ, նույն բանն է, ինչխոր ընձի մանկապարտեզ դրկեն, մեր ու Երևանի տարբերությունը էդքան է: Մեծ անդունդ կա, էնտեղ արդեն բդի տամոժնի դնես: Հասարակ բան կա, ամեն ինչը մեծից է գալիս: Ստեղից հլե Երևան չհասած՝ միլիցեն միանգամից ավիստոկ[11] կուղա՝ կայնի: Էդիկ տան տիրոջից է, որ մեկմ գուկա մեր տուն, ես իմ երեխուս կսեմ՝ բրվե: Մինչև Երևանից ֆուռա դուրս գաս, ավելի լավ է ավտոդ տաս դուրս գաս, քան քու ավտոյովդ ֆռաս: Լենինականի համարով Երևանում հնարավոր չէ ման գալ, եթե 6 թիվը վրեն չեղավ, ոչ մի գայի տեսուչ բաց չի թողնի: Ու դու մեղավոր ես: Ու 500 դրամ էլ եթե կուտաս, կսե՝ չէ, Չարենց[12] տուր, Երևանցին մենակ Չարենց գիտե:

- Ո՞վ է դառել էսօր վարչապետ, ո՞վ է դառել մինիստր: Մարդը բդի գեր-

---

*7. Հաշվետվություն:*

*8. Ուզում է ասել,որ տվյալ ղեկավարն ակնարկում է այն փաստը, թե Գյումրին օդանավակայան ունեցող մեծ քաղաք է, ուրեմն պետք է ակտիվ տնտեսական կյանք ունենա և մարդիկ կաշառքի կամ ստվերային հարկի համար գոնե 200 դոլար կարող են ունենալ:*

*9. Սուլել:*

*10. Չարենցի լուսանկարը վրան ունեցող թղթադրամ, տվյալ դեպքում՝ հազար դրամանոց:*

դաստան ունենա, տուն ունենա, օջախ ունենա: Իսկ հմի կսեն՝ գնացել կռվել եմ, Բուտիրկեն նստել եմ: Տո Բուտիրկեն խելացի մարդը ընչի՞ կնստի: Էդ Բուտիրկա նստելը ի՞նչ սարքիք՝ չիղեմ: Խելացի մարդը չի էրթա նստի, նստելը խելքի պակասության նշան է, ինչ հասարակարգ գուզե էղնի: Հմի Բուտիրկա չկա՞: Հմի էլ ղնե գյուլլենցը, մենք էլ մեզի խելոք կպահենք, որ չգյուլլեն, հեչ բան չենք էնե, որ չգյուլլեն: «Բուտիրկեն նստել եմ, հմի ընձի գործ տվեք»: Ընչի՞, Բուտիրկեն համալսարա՞ն էր, ի՞նչ էր:

***Գայանե Շագոյան, Գյումրի, 2002թ. փետրվար:***



# ՄԵԶԻ ՀՄԻ ԿՆԻԿՄԱՐԴԻԿ ԵՆ ՊԱՀՈՂԸ

*Շիրակի մարզ, Արևիկ գյուղ, ընտանիք:*

*Զրույցին մասնակցում են ամուսինները, նրանց դստեր ամուսինը, հարևաններ:*

- Մեր ընտանիքն է՝ ես, ամուսինս, տղես և աղջիկս: Աղջիկս ամուսնացած է, ունի 3 երեխա: Ես 41 տարեկան եմ, ամուսինսն էլ՝ 43: Տղես մի 6-7 ամիս է, ինչ բանակից էկել է տուն:

- Ինչքա՞ն հող եք սեփականաշնորհել:

-Երկու հեկտար: Երկու հողաբաժին ունինք, երկու հեկտար երկու հազար քառակուսի մետր, մեկ հողաբաժինը՝ մեկ հեկտար 1000 քառակուսի մետր է: Մենք էս տանը երկրաշարժից հետո ենք ապրել, էդ վախտ առանձնացանք կեսրանցիցս: Ամուսինս 2 աղբեր են, փոքր աղբերը մնացել է կեսրանցս տունը: Ես էս գյուղի աղջիկ եմ ու էս գյուղի էլ հարս եմ: Գյուղը ֆրանկների[1] գյուղ է: Կան, որ հայ ենք բերել, բայց ընդհանրապես տղամարդիկ սաղ ֆրանկ են: Նույն բանն է, ի՞նչ տարբերություն:

- Իսկապե՞ս ոչ մի բանում տարբերություն չեք զգում:

- Մենք որ չենք զգում: Հայն ու ֆրանկը իրար հետ առնչվել են ու հայի աղաքները էկել են ֆրանկի մոտը, իրար աղջիկ, տղա ուզել, բերել են, նույն բանն է:

- Մոտավորապես ո՞ր թվից, երբվանի՞ց սկսեցին իրար աղջիկ տալ, առնել: Առաջ չէ՞ որ դա ավելի խիստ էր:

- Հա, առաջ շատ խիստ էր, բայց հմի նշանակություն չունի:

- Ռուսաստանից հարս ունե՞ք գյուղում:

- Հա, կան, ռուսական գյուղերից էլ է, Մոսկվայից էլ է: Կեմերովոյից մի հատ աղջիկ ունենք, ինքն էլ շատ լավ աղջիկ է, 3 հատ էլ երեխա ունի, հայերեն էլ կխոսա: Շատ-շատ են, 1960 թ-ից կբերեին, կերթային կոլխոզը կաշխատեին, հայերից էլ լավ կաշխատեին:

- Ձեր ամուսինը մի՞շտ է գնացել խոպան:

- Հա, հենց բանակից էկել է, միշտ գնացել է խոպան: Շինարարություն կենե:

- Քանի՞ ամիս է էնտեղ, ինչքա՞ն էատեղ:

- Հմի, էս տարի 7 ամիս էղավ ինչ Ռուսաստան էր, դեկտեմբերի 27-ին նոր էկավ: Ու էլի բդի էրթա, կկանչեն էնտեղ ու ինքն էլ կերթա:

- Միշտ նու՞յն տեղն է գնում:

- Չէ, բայց արդեն երկու տարի է՝ ինչ էդ նույն տեղը կերթա:

- Ինքը բրիգադո՞վ է:

- Հա, բրիգադով: Տարբեր տարի բրիգադների հետ կերթա: Էդ բրիգադները բարեկամների, ծանոթների միջոցով կկազմվին: Օրինակ, էս վերջի 2 տարին մեր խնամու միջոցով կերթան: Ինքը մշտական էնտեղ է, գործ կբռնե ու ստեղից բրիգադով կերթան, կաշխատեն, գուկան: Հմի կերթան Բաքաև՝ Վոլ-

1. *Կաթոլիկներ, կաթոլիկ հայերի:*

գոգրաղ:

- Անուսինդ խոպան է գնացել, իսկ Դուք ինչո՞վ եք զբաղվել:

- Բոստան ենք էրել, առաջ կոլխոզի մեջ ենք աշխատել՝ ճակնդեղ ենք մշակել: Անասուն կպահենք: Չնայած ոչ հողից, ոչ էլ էդ անասունից եկամուտ չկա: Էնքան որ գյուղացի ենք ու կպահենք:

- Իսկ ո՞վ է հողը մշակում, չէ որ Ձեր ամուսինը այստեղ չի լինում:

- Ես եմ, պապաս կօգնե, տեգրս՝ տուն կապելուց: Իսկ բոստանի մշակելը, անասուն պահելը լրիվ իմ վրա է: Մեխանիզատորների գործը խնամիս է: Փեսես տրակտոր ունի, ըղիկ իրանք կենեն: Մի հեկտար ցանելու համար 300 տուկ ցորեն է պետք, 5 պաչկա սելիտրա, չնայած եթե շատ ունենաս, ավելի լավ: Օրինակ, մենք ֆինանսներ չունեինք ու էս տարի սելիտրա չտվեցինք: 1 հեկտարի մեջ մոտավորապես կներդնենք 400-500 դոլար գումար: 12 հազար մենակ ջրին կուտանք, հենց մուծեցիր՝ կուտան, հերթով է դրված: Բայց անցած տարի երաշտ էր, ու քանի որ գյուղը ընդհանուր չէր կարող լրիվ մուծումները էներ, ավելորդ ջուր չտվին գյուղին: Էս տարի մենք 4 տոննա ցորեն ենք ստացել, 1 տոննա գարի: 1 տոննան թողել ենք սերմացու ցանելու, մնացածը մեզի օգտագործելու, չենք ծախել: 1 տոննայից 750 կգ ալյուր կեղնի: Մենք էդ ալյուրով տուն կպահենք՝ հաց կթխենք, կծախենք: Չնայած ընթացքում ամուսինս մի քանի անգամ էնտեղից էլի գումար կուղարկե: Բայց մենք պարտքեր շատ ունենք՝ կապված էրեխուս հետ: Գնաց բանակ՝ վիրավորված: 2 ամիս հիվանդանոց պառկավ ու էդ սաղ մեր ֆինանսներով, պարտքերով: Ոտը հեռացրեցին: Ու հմի մենք էդ պարտքերը չենք կրնա մարել: Էրեկ լրացել է արդեն մի տարի, ինչ մենք ոչ մեր թոշակը, ոչ օգնությունը չենք ստացել: Իրան էլ կհասնի, քանի որ ինքը ծառայության ժամանակ է դարձել հաշմանդամ, մինի[2] վրա է պայթել, ոտը հեռացրել են: Էրեխու բուժումն էլ բդի ձրի էղներ, բայց իրանք մեզնից փող վերցրեցին, գոսպիտալն էլ է փող վերցրել, առանց փող չէր էղնի, ու էրեխուն հարի[3] հմի հլե թոշակ չեն տվել: Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներն արդեն էղավ, էրեխեն Լենինական կերթա կհարցնե, կսեն՝ թոշակ չկա, էսօր, էգուց: Մեր աշխատած գումարի մեծ մասն էլ մենք ծախսել ենք էրեխու վրա: Հիմի էլ եկել են, հարկերն են ուզում: Դուք դեռ մեր հասանելիքը տվեք, նոր մեզնից ուզեք: Ի՞նչ եկամուտ եմ ունեցել, որ ինչ հարկ տամ: Ասում են՝ հայրենիքի համար է: Էդ հայրենիքը մենակ մեզ համա՞ր է: Էդ հարուստների համար հայրենիք չկա՞: Բանակում հայրենիքը մենակ մենք ենք պահելու՞: Լավ, հայրենիքը պահենք, բայց հայրենիքն էլ մեզ պետք է պահի, չէ՞:

- Կարո՞ղ է ընտանիքով տեղափոխվեք:

*Սոնիկ* - Ընտանիքը չի էրթա:

*Ամուսին* - Չէ, բացառված ա: Օրինակ, 1985 մենք գնացինք Դոնեցկ մնալու համար, բայց չկարողացանք, կարոտից, օտարության մեջ, դժվար է մնալը, հետ էկանք: Մինչև էդ, ես Դոնեցկում աշխատել էի, մերվել էի, ես կմնայի, կինս, էրեխեքս չուզեցին: Համեմատած ստեղի հետ էնտեղ էն ժամանակ էլի շատ ավելի լավ էր: Մենք էստեղ էլ խնդիր չունեինք, ստեղ էլ էդ ժամանակ էլի լավ էր, բայց հլե էս տունը չկար, երկու աղբերներով որոշել էինք մնալ Ռուսաստան, փող աշխատել, գալ ստեղ առանձին տներ սարքել: Բայց մերոնք չուզեցին ընդեղ մնալ, ես որոշել էի էլ հետ չգալ:

- Ռուսաստանից գումարը դուք ամե՞ն ամիս էիք ուղարկում:

*Ամուսին* - Չէ, երկու անգամ եմ ուղարկել՝ 200 դոլարով, իսկ մնացածն էլ իմ հետ եմ միանգամից բերել: Էդ գումարն էլ տեղ հասցնելը շատ մեծ խնդիր է, մենք փոշտի միջոցով ենք ուղարկել:

- Այսինքն բանկի՞:

*Ամուսին* - Հա, բանկով ենք ուղարկել: Մենք մի բրիգադիր ունինք, ինքը Լենինական կապրի, իրա անունով կուղարկենք, ինքը հաշիվ ունի, ու հետո իրանից գումարը ստեղ կստանան:

- Սա առաջի՞ն տարին է, որ այդպես եք տեղափոխել գումարը:

*Ամուսին* - Հա: Հեռուստացույցով իմացանք նման փոխանցումի համար: 1991 թ-ին փողն ուղարկել եմ 20 տոկոսով, հետո 18 տոկոսով: Հետո հեռուստացույցով իմացանք «Անելիք» բանկի մասին, որ 2 տոկոսով կենե էդ փոխանցումը:

- Իսկ այն ընթացքում, երբ Դուք Ռուսաստանում եք, տունը պահողը և ընթացիկ ծախսերի համար գումար հայթայթող Ձեր կի՞նն է:

*Սոնիկ* - Այո: Դե ստեղ էլ կանայք հիմնականում լավաշ թխելով ու ծախելով են ապրում: Բայց հիմի, պատկերացրու որ լավաշ թխելն էլ էդքան ձեռնտու չէ, մեզի կմնա մենակ վառած հացերը, կոֆեն, պեսոկը, որովհետև արդեն շատ էժան է, 35 դրամ 1 լավաշը: Էս տարի էլ ալյուրը մեր տնից էր, կտորըմ ձեռք տվեց, բայց որ ալյուրն առնովի կեղնի, էդպես ձեռք չի տա:

- Շատե՞րն են ալյուրը գնում, այլ ոչ իրենց հողից ստացվածով թխում հացը:

*Ամուսինը* - Մոտ 50 տոկոսը կառնին:

*Սոնիկ* - Հլե ավելի շատ, մոտ 60-70 տոկոսն ալյուրն առնելով է: Եթե ալյուրը կառնինք, մեկ մեշոկին կուտանք 8500 դրամ, որից մոտ 400 հատ լավաշ կհանենք: Բացի ալյուրից բդի փետին, աղին, դրոժին փող տաս: Եթե էդ ծախսերն էլ հաշվենք, մեշոկից սարքողին կմնա 7-8 հազար դրամ:

*Ամուսինը* - Եթե ալյուրն առնես ու մի մեշոկից քեզի 7-8 հազար մնա, էդիկ շատ ուժեղ բիզնես է, բայց էդքան չի մնա, շատ կսես:

*Սոնիկ* - Ավելի ճիշտ կմնա մոտ 5000 դրամ ու ուտելու հացը: Իսկ եթե ալյուրն իմս է, էդ 400-ը բազմապատկենք 35-ով, կստացվի 14000 դրամ: Հլե ծախելու հացն էլ հանե, մի օրը կանգնելու համար 1000 դրամ փող կուտանք:

*Ամուսինը* - Հմի մեր բազարը ամեն քառակուսին ծախած է:

- Դու՞ք եք վաճառողը:

*Սոնիկ* - Հա, ես կկանգնիմ բազարը, բայց օր կա՝ մեկիմ կուտամ, ես գուկամ: Ես իրան 35-ով կուտամ, բայց 1000 դրամ տեղի փողն էլ կուտամ, իսկ ինքն էլ 40 դրամով կծախե, հետն էլ 30 հատ լավաշ կուտանք: Եթե ես կանգնեմ, 200 հատ լավաշ տանեմ ու 40-ով ծախեմ՝ կեղնի 8000 դրամ, իսկ որ 35-ով կուտամ, կեղնի 7000 դրամ:

- Ստեղից Լենինական հասնելն ի՞նչ արժի:

*Սոնիկ* - 100 դրամ: 50 դրամ էլ վեչիի համար կուտանք՝ 150 դրամ:

*2. Ականի:*

*3. Դեռևս, մինչև հիմա:*

- Ձեր գյուղից քանի՞ կին են գնում Լենինականի շուկա լավաշ վաճառելու:

*Սոնիկ* - Շատ, օր կա 6-7 կին, օր կա՝ 10: Ձմեռվա ընթացքում քիչ կեղնին: Ցուրտ է, համ կանգնելն է դժվար, համ էլ ցուրտ է: Իսկ ամառը շատ, մոտավորապես՝ շաբաթը մեկ անգամ: Բայց մեր գյուղը մարդ կա, որ ամեն օր կերթա:

- Շաբաթը մեկ Դուք մի պարկ թխու՞մ էք:

*Սոնիկ* - Չէ, կես պարկ:

- Փաստորեն, շաբաթը 8 հազար դրամ մաքուր եկամուտ ստանալով, 4 շաբաթների ընթացքում դուք մոտավորապես 30 հազար դրամ էք աշխատում, և այդ գումարով էք կարողանում ընտանիքը ապահովել մինչև Ձեր ամուսնու վերադառնալը:

*Սոնիկ* - Պատկերացրու, որ հա, յոլա էրթալով է:

- Զուգահեռ ոչ մի այլ առևտուր չէ՞ք անում:

*Սոնիկ* - Չէ, ուրիշ ոչ մի բան չենք ծախում: Ասենք, եթե անասուն որպես մսացու վաճառքի հանենք, ուրեմն էդ ինչ-որ բան է պետք, կոշիկի, կամ ինչ-որ մեծ ծախս է, իսկ յոլա էրթալու համար էդ է: Որ ըսես լավ կապրիս, կուտես, կհագնվիս՝ չէ: Այսինքն, էդ 30 հազարով հացի ու ծխախոտի փողն է, ուրիշ էլ ոչինչ:

- Բայց փաստորեն էդ 30 հազարից նաև հողն եք մշակում, որ քո ալյուրն ունենաս:

*Սոնիկ* - Չէ, էդ գումարով հող չես մշակի, էդ կմնա, որ անասուն մորթես, կամ ինքը խոպանից փող ղրկե:

- Ձեր գյուղից շատե՞րն են գնում:

*Սոնիկ* - Հա, մեր գյուղի համար ընդունված է դուրս գալ ու դրսում փող աշխատել:

- Կողքի գյուղերի՞ց էլ են այդքան շատ գնում:

*Սոնիկ* - Հա, Ազատանից էլ, մյուս գյուղերից էլ:

*Ամուսին* - Օրինակ, երկրաշարժից հետո հաջորդող մյուս տարիներին, երբ ըստեղ շինարարություն էր գնում, աշխատանք կար, գյուղից համարյա մարդ դուրս չգնաց աշխատանքի, ամենաշատը երկու հոգի:

- Մնացել էին հայրենասիրական մղումներից դրդվա՞ծ, թե՞ դա նաև ձեռնտու աշխատանք էր:

*Սոնիկ* - Համ Ձեր տարբերակով, համ էլ ձեռնտու էր, նայած ով սովորաբար ինչ գործի վրա էր գնում, մեկի համար ձեռնտու էր, մյուսը՝ հոգու պարտքը կեներ:

*Ամուսինը* - Ընոնք որ էդ էրկու տարին դուրս էկան, լավ իրանց գործը առաջ տարան ու հետո իրանք էին, որ մյուսներին դրսում գործ կուտային, բայց ընոնք էլ, ով մնացել էին՝ սոված չէին, էնքան կաշխատեին, որ էդ էրկու տարին տան վրա ապրան:

*Սոնիկ* - Էն ժամանակ շատ լավ էր, բայց հմի քանի կերթա՝ վատի կերթա:

- Կա՞ն ընտանիքներ, որ տղամարդ չկա, և կանայք են պահում: Հնարավո՞ր է միայն լավաշի վաճառքով ընտանիքը ապահովել:

*Սոնիկ* - Նման ընտանիքներ կան, բայց մենակ լավաշով անհնարին է տուն պահել, իրանք անասուն էլ կպահեն հետը, եթե բերք եղավ, մի քիչ էլ



նրանից ինչ-որ բան կմնա:

- Իսկ կա՞ն կանայք, որ իրենք են դուրս գալիս, ասենք, առևտուր անելու համար:

*Ամուսին* - Մի հոգի Սաղախլու է գնում, մի 45-50 տարեկան կին է:

*Սոնիկ* - էդ էլ ամուսինը մահացած է, ստիպված կերթա Սաղախլու առևտուր էնելու համար: Ինքն անասուն էլ չունի, իրան հերանքն են օգնողը:

*Ամուսին* - Տունը կիսակառույց տուն, կեսն են շարել ու էդ մասում գործ կենեն, առանձին խանութ չունի:

- Կանայք գնու՞մ են իրենց ամուսինների մոտ Ռուսաստան:

*Սոնիկ* - Չէ, որ էրթան, սաղ փողը մենակ էրթալ- գալու կերթա:

*Ամուսին* - Հմի որ կերթան, սաղն իրար հետ կերթան, էլ ամուսինն էլ հետ չի գա: Որ մի 5-6 տարի իրար վրա կտեսնին՝ լավ է, կնոջն էլ գուկան կտանին ու էնտեղ կմնան:

- Կանայք այնտեղ աշխատու՞մ են, թե ոչ:

*Սոնիկ* - Եթե գործ գտնին, կաշխատին, հիմնականում խանութները կաշխատին, վաճառող:

- Իսկ կա՞ն դեպքեր, որ կինն է դուրս գալիս աշխատանքի, ասենք, Ռուսաստանում ինքը խմորեղեն է թխում, վաճառում, իսկ ամուսինը մնում է գյուղում...

*Սոնիկ* - Չէ, էդպես չկա, որ ամուսինը մնա, կինը էրթա: Շատերը կան, որ ընտանիքներով կերթան Ռուսաստանի գյուղերում, էլի անասուն կպահեն:

*Ամուսինը* - Էնտեղ որ կերթան, արդեն մարդ ու կնիկ իրար հետ կաշխատին, իրար հետ գործ կդնեն, ինչխոր իրար հետ աշխատին, իրար հետ ապրին:

- Սեփականաշնորհման հետ կապված մի խնդիր պարզենք: Հողը սեփականաշնորհվում է տան գլխավորի անունով: Դուք ընտանիքում ունեք և տղա, և աղջիկ, որն արդեն ամուսնացել է: Աղջիկը այդ հողից փայ ունի՞ ստանալու:

*Սոնիկ* - Չէ, սաղ էդ հողը տղունն է: Աղջիկս հլե ամուսնացած չէր, որ մենք սեփականաշնորհեցինք: Ի՞նչ, հմի իրա՞ն տամ: Չէ:

*Աղջկա ամուսինը* - Եթե իմ կինս իրանց հետ չեղներ, իրանց մեկ հողաբաժին կհասներ, որովհետև 3 անձին 1 հողաբաժին է հասնում: Բայց իմ կնոջ համար իրանք 2-ն են ստացել, որովհետև 3-ից ավել են դարձել՝ 4 մարդ: Մեր ընտանիքն էլ 6 անձ էին ու ստացել էին 2 հողաբաժին, բայց հիմա, կինս որ եկավ մեր տուն, փաստորեն, մենք դարձել ենք 7 անձ ու երեխաները: Ու ինձ էլ է հետաքրքիր՝ ես իրավունք չունի՞մ մի հողաբաժին վերցնելու:

*Ամուսինը* - Օրենքով 10 տարին մեկ հողաբաժանում բդի էղնի, բայց հմի չկա:

- Էդ ե՞րբ է էդպես եղել:

*Ամուսինը* - Առաջ, մինչև կոլխոզը:

*Սոնիկ* - Աղջիկը կերթա ամուսնու տուն, ամուսինն էլ իրա քուրն ունի, որ էդ տան վրա գրանցվել է ու գնացել է ուրիշ տեղ հարս, կնշանվի ու կերթա, իրան էլ են հաշվել հողը բաժանելուց:

*Աղջկա ամուսինը* - Ես քուր չունիմ, մենք 4 աղբեր ենք ու ունենք 2 հեկ-

տար հող, որը 4 տեղ բդի բաժանենք:

- Իսկ դուք ունեք 2 հողաբաժին, որը ամբողջությամբ տալու էք Ձեր որդուն, իսկ աղջկան՝ ոչինչ:

*Սոնիկ* - Օ, դե օրենքն է, ի՞նչ էնեմ: էդ օրենքը հլե գյուղում չի էղել:

*Աղջկա ամուսին* - Սրանից հետո պետք է էնպիսի օրենք գործի, որ աղջկան էլ բան հասնի:

*Սոնիկ* - Եթե օրենքը կիրառվավ, մենք ի՞նչ բդի էնենք, որ չտանք:

- Իսկ դեպքեր չե՞ն եղել, որ աղջկան հողը որպես օժիտ տան, թեկուզ ձևական, ոչ թե փաստաթղթերով գրանցված:

*Սոնիկ* - Չէ, նման բան հլե չի էղել, աղջկան հող հլե որ չեն տվել:

*Աղջկա ամուսին* - Խոսքի, որ ես կերթամ Ռուսաստան, կուտամ իմ մորքուրիս, կամ ծարդ կա՝ քրոջը, բայց դա բացառիկ դեպքեր են, շատերը 200 դոլարով մեկին կուտան, որ հետո գան, մենակ փողը վերցնեն: Բայց շատ մոտիկ հարազատություն որ կեղնի, իրանք հողը կուտան իրար մեջ, իրանք էլ կմուծեն հարկերը, իրանք էլ կստանան բերքը:

- Իսկ կա՞ն անմշակ հողեր, ու հենց այն պատճառով են անմշակ, որ գնացողները չեն կարողացել մշակող գտնել որևէ պայմանով:

*Սոնիկ* - Չէ, էդ ժամանակ կծախեն: Ով որ չի կրնա մշակել, արդեն կծախե, շատ դեպքեր կան:

*Աղջկա ամուսինը* - Մարդիկ հողը մշակելու համար գումար կվերցնեն, տունը կծախսեն ու հետո չեն կարող էդ գումարը հողի մեջ ներդնել՝ կծախեն:

- Կա՞ն դեպքեր, երբ հողի դիմաց ստացած գումարը օգտագործվում է որպես գնալու տոմսի փող:

*Սոնիկ* - Ընչի չէ՞, շատերն են: Բայց կուտան 1-2 տարով:

- Այսինքն, վարձակալության են տալիս, ոչ թե վաճառում են:

*Աղջկա ամուսին* - Հողի երեսը կծախեն, այլ ոչ թե հողը, սեփականատերը նույնը կմնա: 2, 3, 5-6 տարով կուտան, կգանես, ստացածը կվերցնես ու հետո նորից հողը կվերադարձնես:

- Այսինքն վարձակալության գումարո՞վ են նաև շատերը մեկնում այստեղից:

*Սոնիկ* - Հա:

- Իսկ տներն ի՞նչ գին ունեն:

*Աղջկա ամուսին* - Երկրաշարժից հետո սարքած տունը և սեփականաշնորհված 1-2 հեկտար տարածքն էլ հետը, 15-20 հազար դոլար: Իսկ եթե հին ու անհարմար տուն է, 1-2 հեկտար էլ հող՝ 7-8 հազար դոլար:

- Իսկ նոր տիրոջը վաճառելու գործարքն ի՞նչ գումար է կազմում:

*Աղջկա ամուսին* - Եթե կես հեկտար հող ես վաճառում, կադաստրի բաժնում 40 հազար դրամ պետական տուրք ես անում:

- Կա՞ն դեպքեր, որ գնացողը տունն է վաճառել:

*Սոնիկ* - Չէ, տուն չեն ծախե, մենակ՝ հողը:

- Հողի երեսը ծախողներն ընտանիքո՞վ են գնում, թե՞ միայնակ:

*Աղջկա ամուսին* - Ընտանիքով էլ, միայնակ էլ:

*Սոնիկ* - Կա, որ հեկտարուկեսը կծախե տոմսի փող կենե, մենակ կերթա, ընտանիքն էլ մնացած հողը կմշակե:





- Գյուղից գնացողներն ավտոբուսնե՞րով են մեկնում, թե՞ ինքնաթիռով:

*Աղջկա ամուսին* - Առաջ ավտոբուսներով, բայց հիմի կվախենան ու սամալյոտներով են:

- Մինչև ո՞ր թիվն էին ավտոբուսներով նախընտրում:

*Աղջկա ամուսին* - Մինչև նախանցած տարի, երբ շատերին խաբեցին, թալանեցին:

*Սոնիկ* - Որ արդեն սամալյոտի գնին գուկա:

*Աղջկա ամուսին* - Նախանցած տարի որ հաշվեցի, ստացվավ, որ 4-5 հազար դրամի տարբերություն կուտա ավտոբուսով ու սամալյոտով էրթալն, ու կհաշվես որ ավելի լավ է էդ գումարը տաս, քան թե 4-5 օր ավտոբուսներում չարչարվիս:

- Իսկ ի՞նչն է փոխվել մի տարում, որ ավտոբուսների գներն այդ աստիճան բարձրացել են, և գնալն էլ դարձել է վտանգավոր:

*Աղջկա ամուսին* - Ստեղից մինչև տեղ հասնելը դու մի տեղ փողը կմուծես, բայց 3 կալգո[4] կանցնիս, ամեն մեկը իրա ավտոներով: Ստեղ դու փողը նաղդ կուտաս՝ քեզի տաքսիստը կտանի մինչև մյուսը, էդ մյուսն էլ կտանի մինչև պոյեզի տեղը: Իսկ ստեղ ընդունված է, որ փողը կուտաս կտանեն երկրորդ պանելին՝ էնտեղ կսեն ինձի փող չեն տվել, դու բդի տաս: Կհասնիս տամոժնին, կսեն՝ էս բանը չենք թողնի, էսիկ չի կարելի տանել, պասպորտի մի վիզան 5 հազար դրամ է: Շատերը պեչատ չունին, էդոր վրա լեքա պատմություն կենեն, իսկ ստեղ խոսալուց կսեն՝ դու ըդոր հետ գործ չունես: Իսկ որ արդեն հասել ես 10-20 դոլար տուր, որ սահմանն անցնիս:

- Տաքսիո՞վ էին գնում, թե՞ ավտոբուսներով:

*Աղջկա ամուսին* - Էնրով էլ, մյուսով էլ, հետո էն ժամանակ կանոնավոր չկար ավտոբուսների էրթալը տարբեր տեղեր:

- Բայց հիմա կա, ու դուք էլ ասում էք, որ ընդհակառակն, հիմա էլ ավտոբուսով չեն գնում: Միգուցե վիճա՞կն է ավելի լավացել:

*Աղջկա ամուսին* - Վիճակն էլ է ավելի լավացել, հատկապես Ռուսաստանի վիճակն ավելի է կանոնավորվել, մյուս կողմից էլ ժողովրդի հավատը էլ չկա նման գործակալությունների հանդեպ, որ վստահեն, նրանց հետ գնան: Իսկ Ռուսաստանի վիճակը հաստատ ավելի կայունացել է: Մի ժամանակ մեր գյուղի գնացածների 20 տոկոսին մենակ հետ գալու սամալյոտի փողը կուտային ու կսեյին՝ ստեղից գնացեք, թե չէ կպաշնենք, ու էդքան ծարդ 6 ամիս կաշխատեին ու դատարկ հետ գուկային: Մորքուրիս տղեքն անցած տարի աշխատել են, 2001 թ-ին, ու էդպես դատարկ հետ են էկել: Աշխատել են 4 հոգով, մի տարի, ու հեչ բան չեն վերցրել, մենակ՝ 200 դոլար տոմսի փող: Էդ մի ռուսի հետ էին բռնել գործը, առաջին տարին լավ տվել էր փողը, երկրորդ տարին աշխատացրել էր ու տվել՝ մենակ սամալյոտի փողը, թե ես ավելի շատ եմ ծախսել շինարարության վրա, քան նախատեսել էի, էսքան վերցրեք ու գնացեք: Իսկ հայերի հետ որ գործ կբռնեն, շատ անգամ էսպես պայմաններով է, իրանց մնալու տեղն ու ուտելու փողը կպահովեն, ու անկախ նրանից թե քանի ժամ օրվա մեջ կաշխատացնեն, մեկ-մեկ գիշերն էլ հետը, ամի-

---

*4. Օղակ:*

սը կուտան 200 դոլար։ Ու շատ հայեր կգերադասեն էդպես էդ 200 դոլարի վրեն էրթան, քան թե ուրիշի հետ գործ բռնեն, որ չիտեն վերջում ինչ կեղնի։ Լավ է շահագործվեն, քան թե խաբվեն։ Մեր մյուս բարեկամներից էլ մի դեպք պատմեմ, մերոնք մեծ մասը Յակուտիա են, մեկն աշխատել էր ռուսի վրա, մի քանի ամիս նորմալ աշխատել է, էդ տղեն էլ գումարի ինչ-որ մի փոքր մաս տվել է իրանց։ Բայց գործի վերջին արդեն 10 օր մնացած կեղնի, էդ տղեն կկախվի, ու սաղին, էդ աշխատողներին հեչ կենեն իրանց աշխատածը, կոպեկմ էլ չեն տա։

*Սոնիկ* - Հայն էլ կխաբե, ռուսն էլ կխաբե։

*Աղջկա ամուսին* - Ով որ խաբվավ, սաղն էլ կխաբեն՝ հայն էլ, ռուսն էլ։ Ռուսի խաբելը քիչմ ավելի վտանգավոր է, ինքը չի խաբե, թե փող չունեմ, էս չունեմ, այլ՝ չեմ տա ու վերջ։ Կամ լավագույն դեպքում տոմս կառնի, կսե՝ ան քեզի տոմսի փարա ու գնա։

*Ամուսին* - Կամ իրա գործը կենես, գուկա՝ գործդ դուրը չի գա, կսե՝ բռակ[5] է, ան քեզի տոմսի փող ու գնա։

*Սոնիկ* - Օրինակ, տես անցած տարի մորքուրիս տղեն փող աշխատել էր ու ավտոբուսով էր էկել, սաղ գումարը ծեռից առել էին, Յակուտիայից էկել հասել էր ու շատ փող էլ չի էղել մոտը, ընդամենը 400 դոլար, ու սաղն էլ ծեռից առել էին։ Էդոր համար մարդիկ կվախենան, ռիսկ չեն էնե, եթե նույն ձևի բդի գան ու ծեռներից էղքան գումար առնին, ավելի լավ է սամալյոտով գա, նույն գումարը կնստի։

*Ամուսին* - Էդոր համար հմի մերոնց մեծ մասը բանկով կենեն գումարի փոխանցումը։ Շատ քչերն են, որ իրանց հետ կբերեն գումարը։

*Սոնիկ* - Տես, իրանք էկան ու փողը բրիգադիրը իրանց հետևից ուղարկեց։

*Ամուսին* - Մենք որ կստանայինք, մանավանդ էդ ժամանակ կսեին, որ դոլար չեն թողնի տանել, մենք էլ ապահովության համար լրիվ գումարը թողեցինք իրանց տունը, սաղս։ Դեկտեմբերի 28-ին եկանք, դեկտեմբերի 31-ին արդեն փողը ստացել եմ։ Բրիգադիրն էլ մեր գյուղի տղա էր, բարեկամ, լրիվ վստահելի էր։ Ինքը ոչ թե փոդրադչիկ էր, այլ բրիգադիր էր, մեզի հետ հավասար աշխատել է ու հլե ավելի շատ է աշխատել։ Տես, մենք 15 օր իրանց տունը պառկել ենք, մինչև փողն էղել է։

- Ինչպե՞ս է, որ ձերոնք մինչև Յակուտիա են հասել։

*Աղջկա ամուսին* - Պայմանագրով է, էնտեղ համ էլ փողն է շատ։ Քեզի կաշխատցնեն, կկերցնեն, կպահեն, վերջում էլ 1000 դոլար կուտան։ Ամիսը 500 դոլար փող կստանաս։

*Սոնիկ* - Տոմսի փողն էլ տանողների վրա։

*Աղջկա ամուսին* - Տամոժնին էլ է տանողի վրա, ուտելը, պահելը, երկու ամսով կտանեն, ամիսը 500 դոլար էլ կուտան։ Իսկ տանողի համար էլ էդիկ շատ ձեռնտու է, որովհետև մի տարած անձի գործից ինքը 3-4 դոլար կստանա։ Աշխատողին էդիկ շահավետ է, որ ինքը փող չունի դուրս գալու, գուկան իրան տնից կտանեն, ու 1000 էլ կուտան, բայց որ իրան կանչեն, ըսեն՝ արի Յակուտիա, ըղքան էլ փող կուտանք, ինքը ճամփի ծախսը չունի, որ էրթա։

5. Անորակ։





- Գյու՞ղ են գնացել, թե՞ քաղաք։

*Սոնիկ* - Նարիլսկ, էդ ջրհեղեղն որ էղավ, հմի պետությունը էնտեղ փող է տվել սարքելու, էդոր վրա են գնացել, հենց սարքին վերջացրին, էդ տեղից կերթան։ Այսինքն, ուրտեղ փող կա, մերոնք միանգամից վրեն կերթան։

*Աղջկա ամուսին* - Ուրիշ դեպքում նման գործի համար իրանք 200 դոլար կունենային ամիսը, իսկ ստեղ ուղղակի գումարն է շատ նախատեսած էդ գործի համար։

- Ստացվում է, որ հայերը շատ շարժունակ են և անմիջապես արձագանքում և հայտնվում են «փողոտ» տեղում։ Ո՞նց է ստացվել, որ էդ ցանցը այդքան լավ է աշխատում։

*Աղջկա ամուսին* - Էդ մեր դրսի հայերի շնորհիվ է։ Տես, մեր գյուղից, որ 20 հոգի գնացել էին էդ գործին երկու ամսով... Դրսից մենք ունենք 4-5 հոգի, որ գնացել էին ավելի շուտ, ու իրանք են կազմակերպել, իրանք պատվեր էին ստացել, որ 40 շենք պիտի սարքեն ու էդպես կանչել են։ Դրսի հայերն են։

*Ամուսին* - Դրսի հայերն են, ներսից հեչ բան չկա։ Այսինքն ես մինչև էրբամ, հասնիմ, իմանամ, Մոսկվայի, Յակուտիայի հայը արդեն գիտե։

*Աղջկա ամուսին* - Ու ինքը իրա 40 շենքի պատվերը ստացել է, բայց գիտե, որ էղքան չի կարող էնե, հեռախոսով կկանչե, ինքը իրա 20 շենքը կսարքե, ու 20-ն էլ քեզի կուտա, մեջն էլ իրա շահը կստանա։

*Ամուսին* - Դրսի հայերի մեջ արդեն էդպես կայուն խմբեր կան, որ միանգամից կհայտնվին էդ տեղերում։ Օրինակ, նույն խմբով Մոսկվա կաշխատեին, հետո նույն խումբը հայտնված Յակուտիա էդ շինարարության վրա, նույն աշխատող բրիգադն է, իրանք դաժե ավելի շատ ինչխոր փոդրադչիկների խումբ էղնին։ Շատ տեղեր շինարարությունը փոդրադչիկները վերցրել են իրանց ծեռը, Յակուտիա էդ ձևը կար։ Ըսենք, ինչխոր 9 հարկանի շենքը սարքես իրանց ծեռքը տաս ու հետո իրանք էդ շենքը կծախեն։

- Այսինքն, ինքը ոչ թե փոդրադչիկն էր, այլ հենց տերը։

*Ամուսին* - Հա, ինքն էնքան ֆինանս ուներ, որ կարողացավ իրա համար սեփական շենք սարքել ու հետո վաճառեց տեղի բնակիչների վրա որպես առանձին բնակարաններ։ Ասենք, շենքը սարքեց 20000 դոլարով, ծախեց 40000 դոլարի։

- Եթե այդ մարդը այնտեղ կարողանում է այդ կարգի շինարարություն կազմակերպել, հնարավոր չէ՞, որ նմանատիպ մի բան այստեղ անի։

*Աղջկա ամուսին* - Չէ, որովհետև ստեղ ինքը էդ իրավունքը չունի։

*Ամուսին* - Ստեղ էդ պայմանները չկան։ Նախ՝ ըդիկ իրան չեն տա, հետո էլ էղքան առնող ստեղ չկա։

- Ո՞րն է որոշիչը՝ ձեռնտու չլինե՞լը, թե «թույլ չտալը»։

*Ամուսին* - Ձեռնտու չէ, չնայած եթե թույլ էլ տան, չի էնե, որովհետև իրան էլ ձեռնտու չէ։ Մի փանիբցիմ կար, ինքն իրա փողերով մի քանի շենք սարքեց, միլիոնների հետ խաղ կենը, ու հմի էլ Մոսկվա է, Յակուտսկից տեղափոխված Մոսկվա, որովհետև փողը հմի տվին արդեն Մոսկվային։ Իմ գալուց 1998 թ. մոտը 180 մարդ կաշխատեր։

- Էդ դեպքում ստացվում է, որ հայերը ռուսների աշխատատեղերն են զբաղեցնում...

*Ամուսին* - Հա, էնտեղի գործ տվող ռուսները կսեին, որ էն գործը, որ դուք 3 ամսում կենեք, մերոնք 1 տարիմ կենեն, հետն էլ խմելով: Իսկ մերոնց, ինչ սոոկ[6] որին կհասցնեն, եղել է, որ գիշերն էլ են աշխատել, որովհետև սաղ գնացել են փող աշխատելու: Ընծի բան չեն էսել, բայց կողքից լսել եմ, որ էնտեղի ռուսները կսեն, որ մենք էկել ենք ու իրանց չենք թողնի աշխատելու:

- Մի տարի առաջ շատ էին Միջին Ասիայից եկածները, որոնք եթե չեմ սխալվում մի պարկ ալյուրով համաձայնվում էին յուրաքանչյուր աշխատանքի:

*Ամուսին* - Հա, հմի զուգուլները շատ գուկան, որովհետև իրանց երկրում օրենք չկա... Ուրտեղ որ մենք կաշխատինք, խոսքի էն գործը, որ մենք համաձայնվել էինք 100000-ի էնել, իրանք էկան դրա կեսով համաձայնվեցին էնել, մենք 6 հոգի էինք, իրանք եկել էին 20 հոգի ու կես գնով, մենք 10 էինք ուզել, իրանք թռնին 4 ուզին:

- Ի՞նչ նմանատիպ այլ խմբեր կան, որոնք հայերի արած գործերից են անում, այսինքն իրար մրցակից են:

*Ամուսին* - Շատ կան, բայց խոսքի ուր էլ էրթաս, առաջին հերթին հային գործը կուտան որպես շինարար, տաջիկին ու հային երբեք իրար հետ չեն համեմատե: Ու խսկականից էդ տարբերությունը շատ մեծ է: Օրինակ, ուզբեկները էկան ստեղ տուն սարքին, ի՞նչ սարքել՝ հեչ բան: 4 տուն էին էնելու, էլի մենք վերջը էրինք, բայց իրանց ներդրած փողն իրանց գնաց:

- Ձեր գյուղի՞ մեջն են կառուցել:

*Ամուսին* - Հա: Երկրաշարժից հետո էկան: Ճիշտ է, երկրաշարժին ստեղ տուն չքլվեց, բայց վքարային տներ շատ կային: Սերոնք էլ իրանց մոտ կաշխատեին, ես էլ եմ աշխատել, ու մերոնց, խոսքի, կուտային 600 ռուբլի, էն ժամանակ ռուսականն էր, իրանց աշխատողին կուտային 2000, մեր փողը էն չէր: Ընդամենը 3 շենք սարքեցին, էն էլ կիսատ թողեցին գնացին: Իսկ Ռուսաստան իրանք գին քցողներն են:

- Կա՞ն խառը խմբեր, երբ դուք իրենց վերցնում եք ոչ մասնագիտական աշխատանքների համար:

*Ամուսին* - Շատ:

- Գյուղից կա՞ն մարդիկ, որ կորած են, գնացել են աշխատելու, բայց նրանցից տեղեկություն չկա:

*Ամուսին* - Կան նման մարդիկ, տեղերն էլ գիտեն, բայց, խոսքի, փող չունին հետ գալու, բայց որ կորեն՝ էդպես բան չի էղել: Շատերը փող չունեն գալու...

*Սոնիկ* - Շատերը գնացել են էնտեղ ու ընտանիք ունին:

- Կա՞ն, որ էնտեղ երկրորդ ընտանիքն ունեն:

- Էնքա՞ն, մեր գյուղում լիքն են, որ էնտեղ երկրորդն ունեն:

- Կա՞ն դեպքեր, որ երկրորդ կնոջը բերեն:

- Չէ, էդպես բան չկա:

*Աղքկա ամուսին* - Փող չեն ունեցել գալու, համակերպվել են էդոր հետ ու ընտանիքներ են կազմել:

---

*6. Ժամկետ:*



- Այստեղի ընտանիքն իմանու՞մ է մյուսի մասին: Ու նորմա՞լ է վերաբերվում:

*Սոնիկ* - Գիտեն, բայց թե ինչ նորմալ վերբերվին, էլ չի գա էդ մարդը ստեղ, փաստորեն իրա ընտանիքի հետ ինքը բաժնվավ:

- Բայց ոչ մի փաստաթղթում ինքը բաժանված չէ՞:

*Սոնիկ* - Չէ, փաստաթղթերով բաժանված չեն, էնտեղ էլ փաստաթղթերով ամուսնացած չէ:

- Ռուս հարսներ շա՞տ ունեք:

*Սոնիկ* - Հա, լիքը, և մեծ, և ջահել: Օրինակ, անցած տարի իրա հորեղբոր տղեն մէ ռուս աղջիկմ առած էկավ:

- Հարսանիքն այնտե՞ղ էք անում:

*Սոնիկ* - Առանց որևէ հարսանիքի, առավ ու էկավ:

- Իսկ տեղացիները ո՞նց են ընդունում էդ փաստը:

*Սոնիկ* - Նորմալ, չեմ ըսէ, որ մեծ ուրախություն է, որ հարսդ ռուս է, սովորաբար կսեն, թե ռուս ընչի՞ ես բերել, մենք հայ չունեի՞նք, որ ռուս ես բերել, բայց հետո որ իրար հետ կապրեն, կընդելանան իրար:

- Երկրաշարժից հետո քանի՞ ռուս հարս են բերել:

*Սոնիկ* - Մի 6-7, եթե ոչ շատ ու էդքան էլ հնուց ունենք: Հին, թազեն իրար հետ մի 20 հոգի կեղնին: Մենակ ռուս չեն, մեծամասնությունը նենցկա են, Ռուսաստանից են բերված, իրանք ռուսախոս են: Մեկն էլ արդեն գնաց Գերմանիա: Իրա ամուսինը որ մահացավ, ինքը սկզբից Հոլանդերիայան գնաց, հետո Գերմանիա, ու որ ազգությունը գերմանացի էր, իրան ընդունեցին: Իրա տղեն, որ Հոլանդերիայան է, ինքն չի գնացել, գուցե էրթա, բայց հլե դժվար է, չի կարող:

- Գյուղից դեպի արտասահման գնացած ընտանիք ունե՞ք:

*Սոնիկ* - Մոտ 4 տուն կեղնի Գերմանիա, Հոլանդիա: Էն երկուսն իրար բարեկամ էին՝ էրկու բաջանաղ էին, իսկ էն էրկուսը պատահական, առանձին են գնացել:

- Գյուղում ինչքա՞ն տուն կա, որ դռները փակ է:

*Սոնիկ* - Քիչ են, մեր գյուղից չեն էրթա, հայրենասեր են (ծիծաղում է): Կերթան մենակ տղամարդիկ, խոպան, կաշխատին ու հետ գուկան, իսկ ընտանիքներով չեն էրթա: Խոպան գնացողները մոտ մի 70 տոկոսը կեղնին: Էն մնացածն էլ՝ ով տրակտոր ունի, մեխանիզացիայով յոլա կերթա, մի 10 տոկոսը հնարավորություն չունին էրթալու, իսկ մի տաս տոկոսն էլ տեղ չունին, բարեկամություն չունին, չեն կրնա էրթա:

*(Հարցազրույցին միացան ևս 2 համագյուղացի, ովքեր իմացել էին մեր գալու մասին և ցանկացել էին ավելի մոտիկից տեղեկանալ մեր գալու նպատակի մասին)*

1 - Մեր գյուղի մոտ 80-90 տոկոսը կեղնի աղքատ, եթե դուրս գալը չեղնի: Ջահել տղա ենք, ամեն գործի էլ պատրաստ ենք, բայց «Չիբուխ» կծխենք:

- Դուք Ձեր գյուղն աղքա՞տ եք համարում:

1 - Աղքատ ենք, ըըե ի՞նչ ենք, ոչ հողերից բան կհանենք, ոչ էլ հեչ բան: Ով կարողանացը դուրս էրթալ, էլի տարին վատ, տարին լավ յոլա կերթա, մնացողը լրիվ անճար կմնա: Էրթացողի 50 տոկոսն էլ անհաջող գուկա:

- Առաջ էլ է՞ր այդպես:

*1* - Չէ, առաջ որ տունը 1000 մանեթ կմտներ, արդեն լավ գալ կհամարվեր, իսկ հմի մարդու ծեռը 1000 դոլար ընկնի, էդիկ հազիվ էրթալ ու գալու փողը կեղնի:

- Ինչքա՞ն պետք է աշխատել, որ ասեք՝ այս տարի լավ ենք եկել:

*1* - Մեր գյուղի պայմաններում մի 4-5 հազար դոլար բդի բերես:

*2* - Ես հիմի գյուղը կմնամ, բայց լուբոյ[7] դուրս էրթացող ընծնից լավ կապրի: Ես տրակտորիստ եմ, եթե դրսի մարդը բերեց փողը, ուրեմն, ես էլ կունենամ, եթե ինքը չբերեց, ուրեմն ես էլ չեմ ունենա: Սաղ ցուցակով, պարտքերով իրանց գործը կենեն, մինչև հմի էդ ցուցակները մոտս են:

- Ուրեմն այդ ցուցակներով կարող եք ասել, թե որ տարին էր գյուղի համար առավել անհաջող:

*2* - Ամենաանհաջողը 2000, 1999 թթ: 1998-ը մէ քիչմ լավ է էղել, ու 2001-ն էր մէ քիչմ լավ: 2001-ին ինչխոր մի 20 տոկոս վերելք ունենար: Մինչև փող փոխվելը լավ է էղել, դրանից հետո վատ է էղել մինչև 1998 թ-ը: Մեր գյուղն ընդհանրապես հա վատի է գնացել: 1993-ից հետո հա վատացել է, 1998-ին մէ քիչմ լավ էղավ ու հետո էլի վատի է գնացել: 2001-ին շատ քիչ լավ տարբերություն էղավ, շատ քիչ:

- Գնացողների քանակն էս վերջին տաս տարվա մեջ փոխվե՞լ է:

*2* - Էնքանով է փոխվել, որ օրինակ ես երեք մտադրություն չեմ ունեցել դուրս էրթալու, էս տարի բդի էրթամ: Որ մեխանիզատոր եմ, սեփական տրակտորն էլ ունիմ, ես իմ վրես կվերցնեմ, որ ես չեմ կրնա ստեղ ապրի, էրկու հատ էրեխա ունեմ ու չեմ կրնա ստեղ ապրի: Անցած տարի կանչեցին, ես չգնացի, բայց էս տարի անպայման բդի էրթամ: Տրակտորը կուտամ ընկերոջս, թող աշխատցնի, ես կէրթամ:

*1* - Էն վախտ ավտոներ առանք Զիլ ու ... , ըսինք գործ կեղնի կաշխատինք, մինչև հմի կանգնած են: Էս կանգնած տեղն ընծնից հարկ գուզեն, բայց ինչի՞ համար ես էդ հարկը բդի տամ, ընծի հմի ավելի ծեռնտու է ես ուրիշ ավտո քշեմ, սալյարկեն լցնեմ, ինչն որ պետքն է էնեմ, քան թե իմ ավտոս աշխատցնեմ:

*Սոնիկ* - Գյուղում կոմբայն չկա, քաղելու ժամանակ կարիքը կա, բայց թե ավտոն չկա:

*2* - Մեր գյուղն ընդհանրապես շատ լավ գյուղ է էղել, էն կոմունիստների ժամանակ շատ լավ գյուղ է էղել, բայց հմի կարելի է ըսել, որ ամենավատն է Շիրակի մարզում:

- Ինչու՞:

*2* - Որովհետև հողը քիչ է, բերք չենք առնի:

*Սոնիկ* - Բայց հարկն ամենաշատն է:

*2* - Մերի հարկը շատ է, կողքի գյուղը քիչ կուտա, որովհետև մերը ջրովի է, բայց էդ ջուրը երբեք ժամանակին չեն տա, երբ որ ընծի պետք է հողերը ժամանակին ջրել՝ ջուր չկա: Իսկ երբ որ պետք չի, արդեն կբերեն ջուրը: Անցած տարի երաշտ էր, ջուրը էնքան ուշ էկավ, որ ես ջրել եմ հունիսի վերջում:

---

*7. Ցանկացած:*



*1* - 26-ին ջուրն էկավ, ամենաառաջինը ես եմ ջրել:

*2* - Ես 30-ին եմ ջրել, 10 հազար դրամ ես իրանց պարտք եմ, բայց ընծի էդ վախտ ջրելը հեչ պետք չէր, արդեն ուշ էր: Աշունն էլ ջուրը ուշ գուկա ու շատ քանց է:

- Ինչի՞ հետ է կապված ջրի ուշ տալը:

*2* - Կսեն՝ փողը տվեք, նոր կուտանք, բայց ես փող չունեմ:

*Սոնիկ* - Էդ էլ գյուղի մասշտաբով:

*1,2* - Եթե գյուղը լրիվ, 100 տոկոսով, չտվեց իրա գումարը, չեն թողնի ջրել:

*1* - Անցած տարի հարսս, մերս հիվանդ էին, 2000 դոլար պարտք էի, գնացի խոպան 3000 դոլար փարա աշխատա, բերի պարտքս փակի, վար ու ցանքը էրի ու էլի դարդակ նստա:

*Սոնիկ* - Սաղս էլ նույնն ենք:

- Ասացիք, որ լավ գալը՝ 4-5 հազար դոլար է, իսկ իրականում միջինը ինչքա՞ն՞վ են վերադառնում:

*1, 2, Սոնիկ* - Երկու, ամենաշատը իրեք հազար դոլար, էդ էլ բախտի բան է:

*1* - Ավելի շատ բախտի բան է, մարդ կա կերթա 10-ը կբերե, մարդ էլ կերթա էդ տաս բերողից ավելի շատ կաշխատի ու դարդակ գուկա:

*2* - Միջինը 2000 դոլար չի կազմե: Եթե իմ դաշն վրա 100 դոլարով գործ էղնի, ես չեմ էրթա ուրիշ տեղ ամիսը 1000 դոլարով գործ էնեմ, գոնե մեր մոտ ես ամիսը 100 դոլար ունենամ, ես տնից չեմ ելնի:

- Եթե այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է հողը լավ մշակելու համար, անեք, դուք ձեր բերքից այդքան գումար չէ՞ք ստանալու:

*2* - Չմի ես կարտոլ բդի առնիմ, սելիտրա էլ է պետք, ես 2 հեկտար հող ունիմ, էդոր ինչքան սելիտրա կերթա, բայց փարա չունիմ, պարտք բդի էնիմ, որ էդոնք առնիմ, պարտք էլ չիմ էնի, կարկուտ գա զարկե, ես էդ մարդու փողը ուրտի՞ց տամ: Չեմ տա, չեմ էլ ստանա ու 2 տարի եուև ոչ կվարեմ, ոչ կցանեմ:

- Անընդհատ վախեցնում եք, բայց ամեն տարի նորից ցանում եք, ուրեմն համենայն դեպս ծեռ է տալիս:

*1* - Անոր կհամարենք: Անոր է, որ հարևանս իրա արտը վարեց, ցանեց, ես չերեցի:

*2* - Ես մեխանիզատոր եմ, ես ուղղակի կամաչնամ, թե չէ ես իսկապես էդ հողից հեչ մի բան չունեմ, հակառակ՝ մինուս է:

*1* - Աշնանից ալյուր կառնինք, էլ էդոր քյարը ու՞ր մնաց, աշնանից ալյուր կառնինք:

*2* - Եթե ընտանիքում քիչ շունչ կա, կարող է հերիքե, բայց որ քիչմ շատ կեղնի՝ չեն կրնա, բդի հացը առնին:

*Սոնիկ* - Անցած տարի մենք հա առանք, բայց էս տարի լավ է, էս տարի ունինք:

*2* - Չերս 8 հատ խոզ էր առել, կես տոն ինքն էր առել գարի, կես տոն ես առա, հմի որ ծախեմ, էդ խոզերն իրանց գինը չեն հանե: 80 հազար տվել գոջին եմ առել, 80 հազար՝ գարին, հմի որ 8 հատը ծախենք՝ 130000 մանեթ փարա կքռնե: Ու մնացել եմ ստիպված կպահեմ:

*Սոնիկ* - էնքան բան, որ գյուղացի ենք, բդի պահենք:

*2* - Ես հաշվարկ եմ էրել, անցած տարի էրկու կովի մեջը վնաս եմ էրել, ե-թե կովը 9 լիտրից պակաս կաթ կուտա, դու վնաս կկրես:

*Սոնիկ* - Մեր տեղն էղնեիր՝ ի՞նչ կնեիր, ամեն տարի կհանեինք, գուկար զարուն, ծնելու ժամանակ՝ կսատկեին:

*2* - Ամեն մի հեկտարին մենք կտրամադրենք 200 դոլար փող, բայց կհա-նենք 70-80000 դրամ, ուղղակի ամոթի դատր կպահենք, որ կողքինս չսե՝ չի ցանել:

- Եթե դուք ամեն տարի ոչ թե եկամուտ, այլ մոտ 20 հազարի վնաս էք կրում, ո՞նց էք դա լրացնում:

*2* - Դրսի էկածի հաշվին: Ես գործը կնեմ, իսկ ինքն էլ, որ դրսից կաշխա-տի կբերե, իրա աչքին էլ չի էրևա էդ մոմենտին, որ ինքը պակասով գործի վրա կուդա էդ փողը: Կբերե ընձի կուտա ես իմս կլցրնեմ, ինքն էլ՝ իրանը: Ամոթի խաթեր կնենք, վսյո[8]:

*1* - Շուրջ բոլորս սաղ պարտք են:

*Սոնիկ* - Մեկը մեկին պարտք են:

*2* - Որ մարդ պարտք չի ունենա, քունը չի գա:

*Սոնիկ* - Մենք հլե ունինք մեր պարտքը:

*1* - Ան, մարդը 7 ամիս աշխատել է ու հլե պարտք ունին, որ մի 14 ամիս աշխատի, նոր կարող է էդ պարտքը մարեն:

*Սոնիկ* - Սաղ հիվանդանոցի պարտքերն են:

*2* - 400 դոլար պարտք ենք: Հմի ատամը քաշելը 1000 դրամ է, մեր խեղճ հարսը 15 օր տանջվավ, փող չկար ծեռը, որ տաներ քաշել տար:

- Ի՞նչ ելք էք տեսնում:

*2* - Սաղիս հավաքեն, ինչխ էր առաջ՝ թող Սիբիր ղրկեն, էս ի՞նչ կյանք է, լավ է էնտեղ հմի զոնե կաշխատեինք: Հետո բդի ըսենք՝ ապրանք ու մեռա՞նք, էսիգ՝ մեռանք ու մեռանք:

- Իսկ եթե գնաք Ռուսաստան...

*2* - Բայց ոչ հեյս գուկա, ոչ մեյս, ես էլ էրթամ աղա ապրիմ, ու անունն ի՞նչ դնեմ:

- Իսկ եթե ծեր ծնողները, դե բնական բան է, Աստված տա հնարավորինս ուշ, բայց եթե մահանան...

*2* - էդ ժամանակ կհավաքվիմ կէրթամ...

*1* - էդ ժամանակ մենք մեր ծնողներեն բեթար կեղնինք ու չենք էրթա:

*2* - Հմի իրանց վզին ենք նստած, բդի էրթամ վիզ ծռեմ, թե թոշակդ տուր, էրթամ պապիրոս առնիմ, ըըը որ չտա՞ն: Էնքան կնենն, որ վերի գեղի նման էղ-նի, որ մեռելի տուն վերաայա[9] էրթաս, կէրթան կսեն՝ ընձի էսքան փող գրե, հմի

8. Վերջ:

9. Աղատիկ: Խոսքը այն սովորույթի մասին է, ըստ որի գյուղում կամ ազգականական խմբում երբ մարդ է մահանում, համայնկիցները, ազգականները օգնության կարգով դրամ են հավաքում՝ թաղման ծախսերի հոգսը թեթևացնելու: Սովորույթի ուժգնությունը այն դարձրել է, ըստ էության, պարտադիր: Բնականաբար այդպիսի դեպքերում միայն կանխիկ դրամ են տալիս: Զրուցակիցը դժգոհում է, որ նույնիսկ այդ կարգի բարոյական պարտավորություններում մարդիկ սկսել են «ապառիկ օգնել», այսինքն ցուցակ են կազմում, որում գրվում է, թե ո՞վ ինչքա՞ն գումարի օգնության պարտավորություն է ստանձնում:



չունիմ, երբ ունեցա՝ կուտամ: Քուր, ոչ մեռելի տունը կռնաս որպես մարդ էր-թաս, ոչ հարսնեքտունը: Որ հարսնիք կեղնի, տուն կա, որ սուգ կեղնի՝ թե, այ մարդ, մենք էդ փարեն ուրտից գտնինք, որ էրթանք հարսնիք:

*Սոնիկ* - Բայց ստիպված էլի մե տեղիցմ բդի գտնիս, որ էրթաս: Էս վերջերս հարսնիք էինք էրևան գնացել, մի կերպ գնացինք, էկանք, մինչև հմի չիտեմ պարտքս ինչխ բդի փակեմ, բայց չէրթալ չէր էղնի, հորեղբորս տղեն է, ես էլ է-րեխեք ունիմ, ըդպես ինքն էլ իմ ուրախությանս չի գա, ըդպես էլ կապը կկտ-րվի: Որ մոտիկներով կկանչեն, մենք էդպես 28 տուն ենք, չէրթալ չի էղնի, ստիպված բդի մե բանմ հնարես, որ էրթաս:

- Ձեր բարեկամ էդ 28 տնից քանի՞սն են դրսում և քանիսի՞ց գնում են խոպան:

*Սոնիկ* - Մի 20 ընտանիքից խոպան գնացող կա: Էդ 28 տունը, որ ես ըսի, էղիկ ըղքան տնից էր մարդ կանչել հարսնիք, հմի ամենամոտիկներին հարս-նիք կկանչեն: Առաջ որ գյուղում հարսնիք կեղներ, մոտ 100 տուն հարսնիք կկանչեր, հմի էդ նույն գյուղից մենակ՝ 20 տուն. քուր, աղբեր, հորքուր, մոր-քուր:

*2* - Իմ հարսնիքս էղել է 1991 թ-ին, զալը՝ 12-ը 4.5 մ-ի վրա էր, տեղ չկար: Բայց հմի որ աղբորս նշանենք, մոտ 40 հոգի որ էղնին՝ լավ է:

- Հարսանիքը անելիս հաշվի առնու՞մ էք, որ այնպիսի ժամանակ ընտրեք, որ խոպանից վերադարձած լինեն:

*Սոնիկ* - Անպայման:

*1,2* - Գոնե մոտիկներն էկած բդի էղնին:

*Սոնիկ* - Միշտ էլ հարսնիքները էղել են աշնան կողմ:

*1,2* - Աշուն, զարուն:

- Էս տարի դու՞ք էլ էք գնալու:

*2* - Հա, որ տանող էղնի: Անցած տարի հեչ բան էլ ծեռիցս չէր գա, աներս տարավ, ընձի տանեին՝ ի՞նչ էնեին, իրանց վարպետ մարդիկ են պետք:

*1* - Սաքոն հմի բրիգադիր է, առաջ ինքը կտաներ իրա ընկերոջը, հորող-բոր տղերին, հմի որ էրթա՝ ինքն իրա փեսին կտանի անպայման, ամենաառա-ջինը փեսին կտանի, հետո իրա աղբոր տղին, թե ունի տանիգը ու նոր կաշե կողք ու քոլորը: Էն առաջին տարին որ ես գնացի, ես խոպան չէի էրթա, բերեց ինքը փարեն տվեց՝ 2000 դոլար: Ես հմի էդ մարդու փարեն բդի տամ, բայց գե-ղը ննալով ու՞ր տամ, ստիպված եյա գնացի: Հմի, էս տարի, թագա փեսա ու-նի, էնոր բդի տանե: Սաղ փեսա ու աներ դառան, հմի աղբորն էլ էլ[10] չի տանի: Հմի որ ես չունենամ, ու գիտենամ, որ ինքն ունի, բդի էրթամ իրանից ուզեմ: Ինքն էլ կսե՝ արի դու աշխատի ու քեզի համար էլ յոլա գնա: Թե չէ առաջ ո՞վ էր աներոջը բանի տեղ դնողը:

- Դուք մեխանիզատոր էք, ու՞ր էք գնալու և ու՞մ հետ:

*2* - Մինչև Մասկվա, շինարարության վրա էլի բդի աշխատիմ: Տանողն էլ պապայիս հորողբոր թոռն է: Աներս էլ Յակուտիա է, էնիգ չի գա արդեն, էս տարի էլ չի էկել, ուղղակի փող կղրկե տուն, աղջկան նշանեց, էն էլ պարտքի տակ ընկավ, էլավ գնաց խոպան, արդեն համարյա 60 տարեկան մարդ է ու էս

10. Այլևս:

տարի էլ չի գա: Ինքը 57 տարեկան մարդ է, 57 տարեկան էն ժամանակ մենակ թախտի վրա նստելու իրավունք ուներ:

- Իսկ ինչու՞ իր մոտ չեք գնում:

*2* - Նախ փողս էդքան չի հերիքե, որ իրա մոտ էրթամ հասնիմ, Մասկվա ավելի մոտիկ է, ու եթե անհաջող էղնիս, Մասկվայից ավելի շուտ հետ կհասնիս, քան թե Յակուտիայից:

*1* - Էնքան մարդ է էկել իմ աներոջս մոտ, որ հետը տանե խոպան, բայց տեղ չունի էդ մարդը: Հմի էս տարի ես էլ բդի աներոջս մոտ էրթամ, որ ես էլ չէրթամ՝ ինքը կտանի, որովհետև իրան եմ պարտք:

- Եթե ձեր գյուղը կողքի գյուղերի հետ համեմատենք...

*2* - Ազատանը մեզնից լավ կապրին, էնտեղանց ժողովուրդը լավ են, իրար հետ են, էն ժամանակ, որ մեր գյուղին ջուր չեն տա, էնտեղ մի 10 հոգի գելնին սիրուն մի էրկու խորաքա կենեն՝ կուտան:

*Սոնիկ* - Տան հոգսը ամառվա ընթացքում քաշողը կնիկն է:

*2* - Կոոբշչեմ[11] մեզի հմի կնիկմարդիկ են պահողը, էդպես էսենք ու էդիկ ճիշտ է: Բայց թե ի՞նչխ կպահեն, էդ էլ չիտեմ:

*Սոնիկ* - Լավաշը կծախեն, էդ է:

- Ո՞ր գյուղն է, որ ձեզնից ավելի վատ վիճակում է:

*Սոնիկ*, 1 - Այգաբաց, ջուր չունին, հող չունին, շատ քիչ է: Խոպան գնացողներն էլ շատ քիչ են:

*2* - Էնոնք համ էլ թամբալ են, աշխատող չեն:

*1* - Մեր կոլխոզի ժամանակ ես 14-15 տարեկան էրեխա եմ էղել, գնացել եմ էնտեղ, որ տուկ կապեմ, մեր գյուղում տուկ կապելու տեղ չկար, իսկ էնտեղ աշխատող չկար:

*Սոնիկ* - Բայց էնտեղ համ էլ անջրդի է հողը:

*1,2* - Բայց մեզնից լավ են, մեզնից հանգիստ են, գիտեն որ չկա ու պռծ:

*Սոնիկ* - Իսկ մենք լավին ենք սովոր, կծգտինք: Մենք հարսնիքներին բարեկամներով միշտ լավ նվեր կենինք, մեծ նվեր, էդ բանին սովոր ենք:

*1* - Էն ժամանակ, որ մարդ հարսնիք կէրթար, ամենահետու մարդը 50 մանեթ պարտադիր կուտար, էն էլ ամնչելով, որ 50 մանեթը վայթե քիչ էղավ: Լավն էլ՝ ամենալավ մատնիքը, բրիլիանտը, կուլոնները՝ 750 ռուբլով:

*Սոնիկ* - Մերը հարուստ գյուղ է էղել:

*2* - Էղել է, բայց հմի՝ չէ:

- Ձեր գյուղում կողքի գյուղերից կամ ուրիշ տեղից տեղափոխվածներ կա՞ն:

*2* - Չէ, գյուղերից ելածը՝ Էրևան են:

- Իսկ Լենինակա՞ն:

*1* - Լենինական մեր գեղից քեթար է:

*Սոնիկ* - Չէ, Լենինական չեն էրթա:

*2* - Եթե մե տեղմ աշխատանք չկա, ուրեմն՝ վսյո, բայց Էրևան կա աշխատանք, որոշ չափով:

*Սոնիկ* - Գյուղից եթե դուրս էկան, Ռուսաստան կէրթան՝ ոչ Լենինական, ոչ

---

***11. Մի խոսքով, ընդհանուր առմամբ:***



Էրևան: Էրևան էլ կբողոքեն:

*1,2* - Բայց մեզնից լավ են, մեզնից էլ լավ կուտին, իսկ մեր մոտ ամեն ինչ բնազդի պես է, մալի պես բանինք էղե:

- Եթե այդքան վատ է այստեղ, ինչու՞ են գնացողները վերադառնում:

*1,2* - Գնացողները փող բդի ունենան, որ գրանցում դասավորեն, կարողանա մնալ, էնքան հետևից կընկնին:

*Սոնիկ* - Տուն բդի ունենա, որ իրա ընտանիքը տանի, բայց որ տարավ, ինքն էլ վարձով կմնա, ի՞նչխ բդի պահե: Մեր կապը Լենինականի հետ շատ է, շուկա է, մյուս բաներն են:

*2* - Էս պետությունն ի՞նչ լավ բան է էրե: Սեփականաշնորհում է էրել, էդորով ի՞նչ օգուտ է տվել ինքը: Ոչ մի բան, ընդհանրապես հեչ մի բան չի էրել: Մենակ ընտրությունների ժամանակ գուկան կհարցնեն, էսպես կենե՞ք, էնպե՞ս կենե՞ք ու վերջ: Մենակ մե լավ բանմ էղավ, որ էս մեր տարածքի Սամվել Ալեքսիսյանը, գյուղի դպրոցի մի կորպուսը չէինք սարքել, էկավ հարցրեց, թե ինչու՞ համար չեք սարքել, երկրորդ օրը խորհրդարանը հարց բարձրացրեց, հմի բդի սարքեն: Ըդիկ լավ է, էդ էլ էս 12-13 տարվա մեջ, ուրիշ լավ բան չի էղել:

*1* - Էդ էլ հլե հարց է՝ բդի սարքե՞ն:

*2* - Անկախ ըդորից, գոնե էդ մի պրոբլեմը տարել հասցրել է էնտեղ: Թող չսարքեն, բայց հասցրել է:

*1* - Հարցը դրվավ, իրանք էլ ըսին, որ մենք չենք կրնա, քննարկելու հարց է:

*2* - Մեր գյուղը մի անգամ կարկուտ էղավ, մի անգամ երաշտ, կողքի գյուղերը սերմացու տվեցին, մեր գյուղին չտվին: Անցած տարի տվեցին սերմացու՝ մի ընտանիքին 80 կգ գարի: Էդ ի՞նչ է, 80 կգ-ն ի՞նչ է, ամոթ էլ է:

- Ո՞վ պիտի այդ հարցը բարձրացներ, որ ձեզ էլ ձեր հարևաններին հավասար բաժանեին:

*2* - Ես մենակ գյուղապետ գիտեմ, այսինքն, ես մենակ կարող եմ գյուղապետից հարցնեմ, թե էդ հարցն ի՞նչ էղավ: Իսկ ինքն էլ կսե որ մեր գյուղին չի հասնի կոմպենսացիա, Գյուղնախարարությունը չի տվել: Կողքի գյուղին տվել է, որովհետև կամ էնտեղի կարկուտն է ավելի շատ էղել, կամ իրանք ավելի ազդեցիկ մարդ ունին վերևը, իսկ մեր գյուղը չունի: Օրինակ, Այգաբացի Կիրակոսյանը շատ մեծ դիրք ունի, ինքը Էրևանում է ու մեծ պաշտոն ունի, ինքն էլ լավ կնայե իրանց գյուղին: Ավելի շուտ, լավ նայելը էն է, որ ինչ-որ բդի հասնի իրանց գյուղին, ինքը էնպես կենե, որ տրամադրե:

- Ձեր գյուղից նման դիրքում որևէ մեկը չկա՞:

*2* - Խոսքի՝ ունինք, բայց էդ մարդը էդ բնագավառը չէ, կամ էդ դիրքերը չունի:

***Գայանե Շագոյան, Շիրակ, գյուղ Արևիկ, 2002թ.***

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻԳԵ՞, ՈՐ ՀԵՉ ՄԻ ՏԵՂ ՈՉ ՄԻ ՕՐԵՆՔ ՉԻ ԱՇԽԱՏԻ

*Զրույցը տեղի է ունենում Գյումրի քաղաքի Մուշ թաղամասում ապրող ընտանիքում*

*Ընտանիքը ամուսիններ են, ունեն 3 երեխա: Հիմնական բանասացը տանտերն է (1), որը նոր է վերադարձել խոպանից: Հարցազրույցին մասնակցում էին տանտիրուհին (2), հարևան-ընկերը (3) և երկու հարևանուհի (4, 5): Սրանցից մեկը (5) եկավ հարցազրույցի կեսից: Ունի 4 երեխա, ամուսինը գնացել է խոպան և չի վերադառնում:*

*(3)* - Էստեղ *(նկատի ունի Գյումրիում-Ա.Գ.)* աշխատում ենք ժամանակավոր մի ամիս, երկու ամիս, մշտական աշխատանք չկա, աշխատածդ փողն էլ մեծ դժվարությամբ ես ստանում: Դա էլ հարց է,-թե ինչ ճանապարհով պիտի ստանաս, բողոքելով էլ հարց չի լուծվում: Իշխանավորների խղճին է տված, կուզեն կտան, կուզեն չեն տա: Տվյալ աշխատողի իրավունքները պաշտպանող չկա, նախ աշխատանքի տեսակետից: Երկրորդ տրանսպորտի տեսակետից. կուզեն կաշխատեն, կուզեն չեն աշխատի: Թաղամասը քաղաքից կտրված է: Իրենք լիցենզիա են հանել, բայց իրենց վրա պարտավորություն չկա դրած: Այսինքն դու պարտավոր ես աշխատես առավոտը 8-ից մինչև գիշերվա 10-ը: Այս պայմանները ձեռք տալիս են քեզ մտի աշխատի, ձեռք չեն տալիս... Իրենց քմահաճույքով է ինչ ձևի կուզենան, այդպես էլ կաշխատեն: Երեկոյան գնաս քաղաք չես կարող հետ գալ: Նպաստի հարցով, ներկա պահին չենք աշխատում, գնում ես կառավարչություն, փող են ուզում: Քաղաքում մշտական աշխատող են պաժառնիկները, միլիցիան ու վայեննին: Մշտական աշխատանքի տեղ չկա, գնում ես տեղեկանքի փող են ուզում: Բայց ինչի՞ համար փող տաս: Նպաստի տեղը գնաս, էլի փող կպոկեն: Հիասթափվում ես: Ջրի վարձը. Մուշ թաղամասը 6 ամիս ջուր չկար: Փող չունես վարձը տաս, ջուր էլ չեն տվել, բայց տարիների պարտքը կուտակվում է: Մեր ընտանիքը հինգ հոգով օրը 100 լիտր ջուր է օգտագործում: Ինչքան աման ունենք, այդքան ենք ջուր վերցնում: 4 տարվա ջրի պարտք ունենք, ամիսը 1700 դրամ, տարին 20000 դրամ: Բայց ինչի՞ համար: Երկրաշարժին շենքերը որ փլվեցին, տան ու գույքի փող 15000 տվեցին, բանկը դրած էր: Հիմա չի տալիս, որ գնե պարտքերը փակենք: 15 գունավոր տելեվիզորի փող եմ տվել քեզ, ճի՞շտ է, բայց այսօրվա օրով... Հաշվիչները անկանոն են աշխատում: Չկա մի գրասենյակ, որ շչյոտչիկը կարգավորի: Շչյոտչիկը[1] ռուսների ժամանակ զավոդի պլոմբով նորմալ աշխատում էին: Երկու տարի առաջ տարան լաբորատորիա, սկսեց արագ աշխատել: Ես չեմ կարող այդ մարդկանց հավատալ, ընդհանրապես հավատի տեղ չեն թողել:

*1. Հաշվիչը:*



*(1)* - Ո՞րինը այդպես չէ: Ընդհանրապես ոչ պետության վերաբերյալ, ոչ մեկի, աքսոլյուտնը[2] ոչ մեկի հանդեպ հավատ չի մնացել:

*(3)* - Դպրոցը, հասարակ բան, հա՞, փող կուզեն: Երկուսը դպրոցական են:

*(1)* - Երեքն էլ իմն են դպրոցական

*(3)* - Կիջնես բազար կխաբեն, կշեռքները աննորմալ են աշխատում, տրանսպորտը... հենց տանից դուրս կգաս, ինչի հետ կշփվես կհիասթափվես, ինքստինքյան հիասթափությունը հասել է գագաթնակետին, որ բնագավառում, որ քեզ կսպասարկեն, կհիասթափես:

*(1)* - Նպաստի դոկումենտները տարա, ասեց.- «մի ամսվա փողը բեր տուր դասավորեմ»:

*(3)* - Ի՞նչ անեն մարդիկ: Աշխատանք չկա, ոչ մի գործարան չի աշխատում, մենակ շինարարության վրա է:

*(1)* - 16 տարի, 16 սեզոն խոպան եմ գնացել: Հայաստանի խոպանչիները... պետությունը կարողանա հովանավորի, մի տարի մնան Հայաստանում, վայ թե մի տարում կսարքեն Հայաստանը: Էտ գործերը, որ մենք անում ենք ռուսի, ես ինչ գիտեմ էլ ում համար... մարդիկ այնտեղ հիմք կստեղծեն ու կմնան, պայմանները այնտեղ շատ լավ են, չտեսնված: Ամեն տարի չէ, որ գնում եմ, մի քիչ էլ ֆինանսի հարց է: 49 տարեկան եմ 16 սեզոն գնացել եմ խոպան: Մարդիկ գնում են այնտեղի հայկական բրիգադները: Ես ինքս առանձին բրիգադ չունեմ, հայերի մոտ եմ գնում: Այնտեղ ո՞վ է խաբողը, էլի հայ է:

*(3)* - Գոնե երեսուն տոկոսանոց պայմաններ ստեղծեին, մարդիկ այդքան շատ չէին գնա:

*(1)* - Հիմնավորվեցին մի տեղում, խաղ ու պար է այնտեղ ապրելը, դրա համար էլ գնում են: Այնտեղ այնքան քիչ ես մուծում, որ... Ռուսաստանի բնակիչը գիտի՞, թե մի կուբամետր գազը ինչ արժե, շատերը չգիտեն: Աշխատանքի պայմանները... թոշակը 25% բարձրացրին, հաստիքային աշխատողների աշխատավարձը 80% բարձրացրին:

*(3)* - Ես հասարակ օրինակ բերեմ: Հիմա որ ավտոբուսը նստել քաղաք իջնելու համար 50 դրամ պիտի տաս գնաս, տվյալ մարդիկ չունեն, որ տան: Թոշակ ստանալիս 300 դրամ պարտադիր պետք է վերցնեն.

*(2)* - Հերթում են կանգնում, պարտադիր 300 դրամ: Հանկարծ խոսես, բոլորը կասեն 300 դրամի համար ինչու ես խոսում:

*(3)* - Չթողեցին, ես մարդ գիտեմ, որ չի թողել, տեղը ստորագրել, մի ամսվա թոշակը վերցրել են: Չի կարողացել ապացուցի, որ ինքը չի ստորագրել, չի ստացել: Բայց ինչ է, դու չգիտե՞ս, որ այդպես է: Մայրաքաղաքում կարող է քիչ լինի, բայց մարզերում շատ-շատ է: Ստորագրությունը կնմանացնեն մի ամսվանը, իրանք իրանց բաժինը կտանեն: Գիտեք ի՞նչ կա, սաղն էլ գիտեն, որ փող պիտի տա իրենց գլխի հովանավորողին: Դրա համար էլ, ժողովուրդը... Ասում են, սրանք էլ փող են աշխատում (ստեղծում): Տասը տարի հետո ումի՞ց են փող աշխատելու: Երկիրը դատարկվել է, մնալու են թոշակառուները: Ամեն մարդ իր գործի մեջ պարտաճանաչ աշխատի, մարդիկ չթողեն գնան: Հիմա էլ շինարարություն կա, բայց տաս տոկոսը չի աշխատում:

*2. Բացարձակ:*

*(1)* - Եթե դա կարելի է հաշվել իրոք հիմնական աշխատանք։ Սմբատը իրա ֆիրման ունի, ասենք, իրա բարեկամներին է տեղավորում։ Մեկը կա, որի հետ շատ մոտ ենք, բայց ասում է, որ չի կարող տեղավորել։ Հիմնական աշխատանք չկա։ Չորս կամ տաս շենքերի վրա թող աշխատի 300 բանվոր, բայց Լենինականի մասշտաբով քանի՞ 300 մարդիկ կան։ Աշխատող ունենք, որ... Այնպիսի մարդիկ են աշխատում, որ մարդը նոր այս տարի շինարարության մեջ է մտել, այդ մարդը դաժե[3] չգիտի, թե մալեն ինչպես օգտագործի։ Դրանք են աշխատում։

*(3)* - Ամենակարևորը միլիցան իրա գործը անի, մյուսը իրա գործը, օրենքն էլ բոլորի համար լինի հավասար։

*(1)* - Հիմա ծեր էտ առաքելության նպատակը ո՞րն է։ Եթե պետական է, կարելի է ինչ-որ տեղ ուրախանալ, որ պետությունը արդեն զգացել է, որ ժողովուրդը ծեռքից գնացել է։

*(3)* - Պետությունը կուզի՞ իմանալ, թե ինչն է արտագաղթի պատճառը։ Պետությունը չիդե՞, որ հեչ մի տեղ ոչ մի օրենք չի աշխատի, մարդկանց սրտները կմռմռա ու հալից դուրս կուգան։

*(4)* - Հասարակ բան է, մարդը վատ կզգա՝ բենզինի փողը պիտի տաս, որ տանի *(շտապ օգնությանը-Ա.Գ.)*։

*(3)* - 1000 դրամ գուցե օր տանի։ Բոլորս էլ էն կոմունիստական շրջանի ապրածներն ենք, չէ՞։ Ավտոբուսը 2 տարի գարանտիայի[4] մեջ է, տրոլեյբուսը 6 տարի, տաքսին՝ 5 տարի։ Այսինքն էղքան տարում դրանք իրենց արժեքը հանում էին։ Հիմա մարդիկ կառնեն «Գազել», երթուղային որպես կքշեն։ 5000 դոլար կտա, 1 տարում դրա քաշը կհանեն։ Բայց ինքը ընչի՞ պիտի մի տարում գինը հանի, ուրեմն էտ 100 դրամը շատ բարձր գին է։ Ընչի՞ պիտի շոֆերը աշխատի 30 դոլար, իսկ շինարարը՝ 2 դոլար։ Եթե ես լինեի տրանսպորտի նախարար, ես էտ հարցը կկարգավորեի։ Արժեքը 50 դրամ է, սպասարկումը 12 ժամ է։ Շոֆերը պիտի պայմանագիր ունենա, դու մի աշխատի 30 դոլար, աշխատի 10 դոլար, քո մարշրուտկայի գինը հանի 4 տարում, ոչ թե 8 ամսում։ Նույն լոմ ու լապատկով ես կեթամ շինարարության վրա կաշխատեմ, օրական երկու դոլար։ Եթե նա 30 է աշխատում, ես գոնե 20 պիտի ստանամ, չէ՞։ Գերշահույթ կստանան։ Իմ 2 դոլարից 200 դրամը ինքը կտանի։ Իրա վրա պայման պիտի լինի, որ գինը 50 դրամ է։ Ես արդեն հիասթափված եմ այստեղից։ Երկրաշարժից էս կողմ ես 2 տարի եմ եղել խոպան, անցած տարի ու նախանցած տարի։ Սովետի ժամանակ գնացի 88-ին։ Երկրաշարժից հետո ըստ ցանկության էր գործը *(երկրաշարժի գոտում-Ա.Գ.)*։ Առաջին անգամ 1980 թվին բանակից եկել եմ, գնացել եմ խոպան։ Ես Լենինական եկել եմ Գեղանիստից, 1983 թվին։ Գյուղը հիմա ամառը կանանց միություն է։ Արհեստ չունեի ես, ինչ գործի դնեին՝ կատարում էի։ Սովետի ժամանակ 6000 ռուբլի էի բերում, 3 հազարից պակաս չկար։ Հիմա նույն աշխատանքն է, բայց եթե ես հանկարծ 3 հազար դոլար փող բերեմ, հազարը քեզ մաղարիչ կանեմ։ Ամբողջ տարին ես գնացել եմ խոպան, մինչև հունիս սպասել եմ, գործ չեղավ։ Հնար չեղավ։ Երեք երեխան ստեղ պահել պե՞տք է, թե՞ չէ։ Գործ չկա, վերջի աշխա-

*3. Նույնիսկ։*
*4. Երաշխիք։*



տանքային տարին եղել է 1997 թվ-ին։ Անցած տարի գնացի, հինգ ամսվա ընթացքում 600 դոլար փող եմ բերել։

*(4)* - Երկու տարի առաջ խոպան գնաց, խաբեցին, չտվեցին։ Մյուս տարի էլ գնաց՝ չտվեցին։ Մոսկվա էր գնացել։ Էստեղից է ճանաչում դրանց, 1500 դոլար չեն տվել, փող փաքշե[5] չի ստացել։

*(1)* - Ճամփի փողը տվել է, թե դու գնա, ես կուղարկեմ։ Էն ուղարկելն է, ինչ պիտի ուղարկի։ Պայմանավորվել են, որ մաքուր ամիսը 700 դոլար պիտի տա։ Բոլոր ծախսերը իրա վրա, գրանցում է... ամիսը 100-150 դոլար ծախսն է, առանց դրա է մաքուրը։ Ժամը առավոտ 6-ին՝ պադյոմ[6]։ Մենք հավաքվանք, 4 հոգեղբոր տղա, ես ստեղից, երեքը՝ այնտեղից։ Հունիսի 1-ից այնտեղ էի։ Մենք բռնեցինք 60000 ռուբլու գործ, մեզ տվեցին 25000։ Մեզ տվել էին ռեմոնտի գործ, էտ գործի մեջ մտցրեցին պարավոյ ատապլենի[7], ասվեշչենու[8] և վադապրավոդի[9] գործը։ Մի ամսում՝ 200 դոլար։

Ամեն քայլափոխին միլիցիան կանգնեցնում է, շատ խիստ ռեժիմ է։ Էտ ինչ որ ավելացրեց, դրա գինը սկսեց հանել։ Մի ամիս աշխատեցինք։ 150 դոլար տան վարձ էինք տալիս։ 50 դոլարից պակաս ուտելու փող չկա։ Էտ էլ՝ կոպեկ-կոպեկ հաշված։ 4 անգամ էլ միլիցեն բռնեց, թե տեղում տվեցիր՝ քաղմաս չի տանի։ Պադյեզդի[10] գործ բռնեցինք, 14 հարկանի շենք էր։ Պադյեզդը՝ 1200 ռուբլի։ Մանր մանր գործով ամիսը 100 դոլար։ Ես բերել եմ 450 դոլար։ Հիմա հորեղբորս տղեն եկել է, մի 150 էլ ինքը բերած կլինի։

Լավ էլ գործ ենք անում, որ տեսնես, թե հայերը ինչ տանջանքներ կուտեն, չես պատկերացնի։ Մոսկվայի մեջ քաշողին շատ է, սաղ պատրեղնիկ են։ Մեկը, օրինակ, գործը կվերցնի 100 հազարի, կտա մյուսին, մյուսը Սմբատին, մինչև հասնի մեզ, էլ տակը բան չի մնա։ Պրյամոյ գործ Մոսկվայի մեջ չես կարա բռնես։ Ժողովուրդը արտագնա աշխատանքի ընչի՞ կգնա։ Ձմեռը կանալիզացիան սառում է, դե գնա դրսում զուգարանի տեղ ման արի, շուրջ բոլորն էլ ինը հարկանի շենքեր են, բոլորն էլ՝ նույն օրի։ Էն ամառվա պայմաններում էլ կանալիզացիան կելնի, կլցվի, վարակի բուն է։

*(3)* - Հասարակ բան, քաղաքում կապրենք, չէ՞, ոչ երաժշտական դպրոց կա, ոչ արվեստի դպրոց կա, կարող ա երեխու մոտ տաղանդ կա, չէ՞։ Պետությունը պայմաններ չի ստեղծում։

*(5)* - Չորս երեխա անհեր կմեծացնեմ։ Իբր գնացել ա խոպան։ Իրա վիճակը լավ ա։

*(1)* - Բա տարին մի անգամ փող չուղարկե՞ս երեխուն։

*(3)* - Աշխատանք որ լիներ, հո չէր գնա, գնաց ու ընկավ ռուսների ճանկը։

*(5)* - Շատ լավ ենք եղել իրար հետ։

*(1)* - Իրոք լավ են եղել, մենք որպես հարևաններ գիտենք։

*(5)* - Փողը ինչ կապ ունի, թող մի անգամ զանգի, որ իրա երեխան իմանա,

*5. Ընդհանրապես, առհասարակ։*
*6. Վերկաց։*
*7. Շոգեջեռուցում։*
*8. Լուսավորության։*
*9. Ջրմուղ։*
*10. Մուտք։*

որ իր հերը կա: Թաքարիա է գնացել: 15 տարվա մեջ առաջին անգամ է գնացել: Աշխատանք չկա, 4 երեխա ո՞նց պահեմ: 5, 10, 11, 13 տարեկան երեքը աղջիկ և վերջինը տղա: Երկու օրով եկել է 2001 թվին: Բայց որ եկավ, հասկացա որ էլ... Ութ ամիս ընդեղ էր, գնաց ծարտին, եկավ նոյեմբերին, փող չբերեց: Էստեղ էլ փաստորեն ոչ մի բան, ամիսը մեկ են նպաստ տալիս, էն էլ քրոջերիցս են բերում:

- Ինչու՞ չեք դատարանով բաժանվում:

*(5)* - Ասենք թե դատարան տվեցի, օգուտը ո՞րն է: Այսօրվա դրությամբ օգնել են հարևանները: Որ գործ լինի, կաշխատեմ մեծ հաճույքով:

*(4)* - Նախանցած տարվա երկու ամսվանը պարտք են դեռ *(նպաստը - Ա.Գ.)*:

*(1)* - Որ ստեղ մնամ, ավելի շատ կաշխատեմ: 700 դոլարը մեր ընտանիքին ի՞նչ պիտի անի: Ինչով ասես կգնան, ավտոբուսով: Նախանցած տարի 300-400 դոլար փող կար մոտս: Սամալյոտի փող էլ որ տայի 230 դոլար, մտածեցի, որ 70-80 դոլարով ավտոբուսով գնամ: Հետ գալուց եկանք Գրոզնին անցանք ու բռնեցին, մինչև գիշերվա 2-ը պահեցին միլիցեքը: Սաղի մոտից փողը հավաքեցին, 20 ռուբլով տուն եմ եկել, նախանցած տարի: Սվերդլովսկից մարշուտնի տաքսի էր: Նագլի[11] տարան:

*(2)* - Ես Հոկտեմբերյանի աղջիկ եմ: Մերոնք մի քիչ ավել կօգնեն: Երկու քույրս էլ աշխատող են, մեկը բուժաշխատող է, մյուսը՝ կոմիսիոն ունի:

*(5)* - Մենք ոչ բերող ունենք, ոչ օգնող:

*(1)* - Ասենք գյուղում երեք հեկտար հող վերցրի, ջուր չկա, հետո ինչո՞վ մշակեմ:

*(2)* - Իսկի խմելու ջուր չկա:

*(1)* - Լենինականի պայմաններում ինչ է, վերև Աստված, ներքև՝ ինքը, անձրև եկավ... աշխատանք եղավ...

***Ամբաստ*** - Դժվարությամբ մարդիկ կերթան, Մոսկվայից առևտուր կանեն, մարդ կա, որ ավտոբուսով, տամոժնին կոպեկը ձեռներից կառնեն: Պետությունն էլ բյուջեի հավաքած փողերը կտա ընենց մարդկանց ձեռքը, որ մեծ գումարը իրենք կուտեն: Հենց շինարարությունը, էս տարի 06 է, մյուս տարի մերսեդես ու ջիպ կառնի: Պետությունը մարդկանց հետ լավ ու վատ լինելով կոպեկ-կոպեկ հավաքում է, որ տա ստեղ չենք սարքի: Մարդը 6 ամսում հարստություն ա կուտակում: Հիմա ներկա դրությամբ տան տղամարդը, մի ռսի հետ կապնվել, ինքը իրան ընդեղ կպահի: 50 տարվա մարդ ու կնիկ էլ կբաժանվեն, ճիշտն ասենք. Մարդը գնաց Ռուսաստան, տան հոգսերից հեռու, աչքը չի տեսնում, մի օր եթե հանկարծ հիշի ստեղի պայմանները, ինքը գիտի որ ստեղ էլ լինի, ինքը չի կարա ստեղծի: Միակ ստեղծելը գողությունն է: Մինիմալը[12] չկա, տղամարդիկ որ գնացին, թող ոչ մեկն էլ ոչ մեկին չմեղադրի: Գոնե մինիմալը լինի, քայքայվող ընտանիքների թիվը քիչ կլինի: Էդ մարդը պապիրոսի փող ստեղ չի կրնա ստեղծի:

*(3)* - Մուշ թաղամասում, 100000 դոլար համաշխարհային բանկից վերցրին, բերին կատելնին[13] սարքեցին, 97 թվին: Կատելնին չի աշխատում:

*(5)* - Եթե փող ունենամ, հենց վաղը կգնամ:

*(1)* - Երկու ամսվա աշխատանքով այստեղ չես մնա:

*(3)* - Ընդհանուր առմամբ անցած տարի ես աշխատել եմ 6 ամիս: Մաքուր ստացել եմ 60-70 հազար: Լրացուցիչ գումարի աղբյուր չկա, երեք երեխա: Ամիսը մեկ՝ մեկին մի շալվար առնենք... Տան մեջ ոչ մի փոփոխություն չկա:

*(2)* - Թող աշխատանք լինի, սաղս կաշխատենք:

*(4)* - Իմ տղան բանակում է, 20 տարեկան է: Հիմա, որ գա...

*(1)* - Խնամիներով կպայմանավորվեն...

*(3)* - Աղետի գոտու ծրագրերը մյուս տարի կվերջանան... Էս կուսակցություններից մեկը կա, գալիս է, խոսում է հայրենիքից, հայրենասիրությունից, բայց իրա տղան Ամերիկա է: Հիմա գիտես ինչ կա, սաղ ունևորների... .

*(1)* - Հիմա ես 100 տոկոսով գիտեմ, որ արտագնա աշխատանքը պետական մակարդակով խրախուսվող բան է: Եթե մեզ համար Ռուսաստանը օրենք հանի, որ դու աշխատես... եթե մի ամիս աշխատել ես: Վերցրել 500 հազարանոց գործ, 50 հազար է գրել:

*(3)* - Երևանում ո՞նց է...

*(5)* - *(Մնացած կանայք միաձայն համաձայնվեցին)* - Լավ է Երևանը, շատ էլ լավ է... Ամենավատը էստեղ է, Գյումրիում, Մուշ թաղամասն էլ ամենավատն է Գյումրիում:

*(2)* - Գիշերօթիկը օրը երկու անգամ սնունդ են տալիս: Բայց ամենալավը էն է, որ դասագրքի փող չես տալիս: 4 000 դրամ սեպտեմբերին, որ չտար, առանց գրքի կմնա երեխան: Լավ է գործարաններ լինեն...

*(3)* - Ստեղ ռեալը միայն գյուղատնտեսությունն է: Ստեղ տեքստիլը չի աշխատի, բամբակը Միջին Ասիայից էին բերում: Էտ փող ունեցողն էլ բացի ավիոկասսայից ու բենզակալոնկից բան չի դնի: Պարտադիր չի մեծ շահույթը, թող քիչ լինի՝ ստաբիլ լինի: Ստեղ Գրանտ տոքակոն թուքուն է ցանել, պետությունը խանգարեց: Մի տարի դրեցին, հարկերը շատացրին, եկամուտը իջավ, հանեց ստեղից Գրանտ տոքակոն:

*(5)* - Կանանցից էլ գնացող կան, Ամերիկա: Ծնողները այնտեղ են: Հիմա Թուրքիա առևտրի չեն գնում: Սաղախկլու են գնում:

*Արա Գուլյան, Գյումրի, 2002թ., փետրվար*

11. *Լկտիաբար:*
12. *Նվազագույնը:*
13. *Կաթսայատունը:*

# ՄԵԿ Է՝ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ: ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀՈՒՅՍ ՉԿԱ

*Զրույցը տեղի է ունենում Գավառի մարզի Վարդենիկ գյուղի գյուղապետարանում, նախ՝ գյուղապետի, ապա՝ 7 տղամարդկանց հետ:*

- Վարդենիկը Հայաստանի ամենախոշոր գյուղերից մեկն է, բնակչության պաշտոնական թիվը՝ 10.370 մարդ, մոտ 3000 ընտանիք: Բարձրլեռնային գյուղ է, հիմնական տնտեսական զբաղմունքը՝ անասնապահություն, երկրագործություն: Սակավահող գյուղ է, հողի սեփականաշնորհման ժամանակ մեկ փայաբաժին հողը կազմել է 0.54 հեկտար: Կան, սակայն, հողամասեր, որ գյուղից մոտ 15 կմ հեռու են գտնվում: Այդ հողերը չեն մշակվում: Գյուղի ընդհանուր 5300 հեկտար վարելահողերից 2002 թվականին աշնանացան արվել էր միայն 100 հեկտարի վրա: Գյուղն ունեցել է այգիներ, որոնք չէին սեփականաշնորհվել, մնացել էին որպես համայնքի սեփականություն: Նախկին գյուղապետը 1-2 գիշերում կտրտել է տվել այգիների մոտ 10000 ծառերը և հողերը բաժանել որպես վարելահող մի քանի մարդու, առանց համայնքի համաձայնության: Տնամերձերում մշակվում են հիմնականում կաղամբ ու կարտոֆիլ:

Խորհրդային տարիներին գյուղում աշխատատեղերի հարցը լուծվում էր հիմնականում սարքաշինական գործարանի մասնաճյուղի հաշվին, որտեղ աշխատում էր մոտ 2000 մարդ: Սարքաշինական գործարանի մասնաճյուղը սեփականաշնորհվել է և այսօր չի աշխատում: Դրանից հետո սկսվեց նախ ժամանակավոր, ապա նաև՝ մշտական արտագաղթը:

- Իրականում ինչքա՞ն մարդ կա այսօր դրսում:
- Մոտ 2500 մարդ, իրենց ընտանիքներով: Սրանք մշտական գնացածներն են, իսկ ժամանակավորը չեմ ասում, այն, որ տան ղեկավարը գնում աշխատում գալիս է:
- Ի՞նչ կարգի մարդիկ են գնացել: Ապրելու պայմաններ բոլորովի՞ն չունեին:
- Ապրելու պայմաններ բոլորովին չունեցողները չեն կարող գնալ: Բարձրագույն կրթությունով, ահեստավորներ...
- Ես ինչպես հասկանում եմ, համեմատաբար ունևորներն են գնացել: Իսկ աղքատներից գնացե՞լ են:
- Աղքատներից էլ կան, որ միամիտ գնացել են: Գնացողներից ոչ բոլորն են, որ հիմա ապահոված են աշխատանքով, այսինքն մարդիկ կան, որ ուզում են հետ վերադառնան, բայց հնարավորություն չունեն:
- Իրենց տները այստեղ մնացե՞լ են:
- Իհարկե: Կան ընտանիքներ, որ հայրը գնացել է, իսկ ընտանիքի մյուս անդամները այստեղ են:
- Իսկ հայրը տարիներով այնտե՞ղ է:
- Այո, տարիներով այնտեղ է: Բայց կարողանում են գումարներ ուղարկել:



- Այդ տղաները, որ գնում են, ինչ-որ կերպ օգնու՞մ են գյուղին:
- Այո, նրանց օգնությամբ վերանորոգվել են փողոցները, կառուցվել է եկեղեցի, քաղաքապետարանը ապահովել են համակարգիչներով, հետո գյուղի երեք հանրակրթական դպրոցներին նույնպես տրամադրվեց որոշ գումար:
- Դա իրե՞նց նախաձեռնությունն էր:
- Այո, եկան այստեղ, համաձայնության եկան, դպրոցների ուսուցչանոցները կահավորվեցին, տնօրեններին նվիրեցին համակարգիչներ, կարգի բերեցին երաժշտական դպրոցը:
- Դա վճարովի չի՞, ծնողները չե՞ն վճարում:
- Չէ, հիմնականում աշխատավարձը ստանում են գյուղապետարանից:
- Մանկապարտեզ ունե՞ք:
- Չէ, մանկապարտեզ չունենք:
- Իսկ այդ հարցը ո՞նց է լուծվում:
- Ճիշտն ասած՝ չգիտեմ: Ֆինանսական հնարավորություն ընդհանրապես չունենք, որովհետև մեր բյուջեն մեր հարկերի հաշվին է գոյանում, իսկ հարկերը ժողովրդի մեծ մասը չի տալիս:
- Միջին հաշվով ձեր հարկերը ինչքա՞ն են հավաքվում:
- Երբ որ մենք 1999թ. ստանձնեցինք այդ պարտականությունները, հարկերը հավաքվում էին 4%-ով, մենք այդ թիվը հասցրեցինք 27%-ի, իսկ հաջորդ տարի, որ մենք աշխատեցինք, արդեն 65%-70%:
- Այ հիմա աշնանը խոպանից գալիս են, հնարավո՞ր է, որ գյուղում հարկերը, գյուղի ունեցվածքները ավելի շատացվեն: Կա՞ն մարդիկ, որ խոպանից առանց փող են գալիս:
- Իհարկե, մեծ մասը աշխատանք չի կարողացել գտնել: Մարդիկ կան, որ գնում են ինչ-որ մեկի կանչով, բայց գնալուց հետո իրենց գործերը չի ստացվում, որովհետև ով իրենց կանչել էր, բիզնեսմեն է, գործարար է, իր գործերը ձախողվում է: Ինչ էլ որ կարողանում է աշխատել, բերում է ու միանգամից պարտքերն է տալիս ու նստում է: Գալիս է մեկից նորից տոկոսով փող է վերցնում, նորից գնում Ռուսաստան:
- Օրինակ, Շիրակի մարզի Ազատան գյուղում մենք հաշվարկ արեցինք, ստացվեց, որ մարդը միջինը 2000դոլար եկամտով է գալիս, եթե ձեր գյուղում այդպիսի հաշվարկ անե՞նք:
- Այստեղ էլ կան մարդիկ, որ վերադառնում են 2000 դոլարով, բայց այդ մարդիկ շատ քիչ են: Չնայած այդ 2000 դոլարը եթե բաշխենք 5 շնչից բաղկացած ընտանիքի վրա, դա շատ քիչ գումար է:
- Եթե այդպես է, եթե 2000 դոլարը այդպիսի մեծ գումար չէ, և հետն էլ ասում եք, թե շատ քիչ մարդիկ են այդքան գումարով գալիս, էլ ինչու՞ են գնում: Իսկ եթե այստեղ մի 10-15 կով պահե՞ն:
- Չեն կարողանա պահել, խոտհարք չունենք:
- Դուք ասացիք, որ 2000 մարդ գնացել են: Ինչքա՞ն ընտանիքներ են գնացել: Ես պետք է հրատարակեմ այս թվերը, ցանկալի է, որ իրական լինեն այս թվերը: Հիմնականում ո՞ր թվերից սկսեցին գնալ:
- Մոտ 300 ընտանիք: Շատ ընտանիքներ էլ ուղղակի ընտանիքի հաշիվ են, բայց տանը միայն տարեցներն են մնացել: Այսինքն ընտանիքը կա, աշ-

խատող չկա: Սկսեցին գնալ 92-93թվ.:

- Հիմա է՞լ են գնում:

- Այո, գնում են, բայց ոչ այնքան, որովհետև փող չունեն: Հիմնականում գնում են բարեկամների, ծանոթների մոտ և այդ բարեկամներն էլ փող են ուղարկում, կամ ինքը մեկից տոկոսով փող է վերցնում և մի քանի ամսից վերադարձնում են: Իսկ մարդ կա, որ այնտեղ բարեկամներ չունի և ինքը չի կարողանում գնալ:

- Ուրեմն ով փող ուներ գնաց, ով էլ չուներ մնաց այստեղ: Ինձ թվում է, որ դուք շատ ծանր թիվ եք ասում:

- Մի քանի տարի առաջ, որ ոչ լույս կար, ոչ գազ կար, գյուղապետարանի կազմն էլ լրիվ հիասթափեցրեց ժողովրդին: Մենք որ եկել ենք աշխատանքի, այս շենքը լիովին քանդված էր: Նախկին կազմը երկու տարի չի աշխատել, հարկերը չեն հավաքել, բյուջե չի գոյացել:

- Հիմա այդ նախկին գյուղապետը շարունակում է այստեղ ապրե՞լ:

- Մի երեք ամիս էլ կապրի, մինչև տակից տունը կքանդեն... ... ... .

- Ինքը այդքան փո՞ղ է պարտք:

- Պարտք չի, հողերը խաբելով վաճառել է, տնամերձի տակ, սուտ: Վաղը, մյուս օրը մենք այդ հողերը կբաժանենք: Առհասարակ էնքան խաբեցին էս ժողովրդին, որ էլ հավատ չի մնացել: Դրա համար էլ թողնում գնում են: Ոչ մեկի հետ հույս չեն կապում: Այ հիմա ընտրությունները սկսվում են, բայց մեր ժողովուրդը ոչ մեկին չի հավատում: Չկա եղպես կուսակցություն, որ պաշտպանում է ժողովրդի շահերը: Ո՞ր կուսակցության հետևից գնանք:

*Զրույցը շարունակվում է մի միջահասակ տղամարդու հետ, որ ամեն տարի գնում է Ռուսաստան՝ սեզոնային աշխատանքի:*

- Հայաստանում այս ճանապարհաշինարարական գործերը սկսվել են: Ավելի լավ չի՞ այստեղ աշխատեք, քան գնաք Հայաստանից դուրս:

- Իմ կարծիքով այստեղ եթե մարդ 100-150 դոլար աշխատի, ոչ մի տեղ չի գնա: Ուղղակի մեզ մոտ այդ գործը չկա, Երևանում և Կիրովականում է, այնտեղ գնալով-գալով էլ այդ փողը կպրծնի:

- Այ, դուք տարիներ շարունակ գնում եք: Ձեր կարծիքով գնացողների ալիքը նվազե՞լ է, թե մնում է նույնը:

- Հիմա էլ ստիպված գնում են: Բայց գնալով մենք շատ բան ենք կորցնում, մենք, եթե այսօր ձեռք ենք բերում երկու կոպեկ փող Հայաստանի համար, նրանք այնտեղ կանգնում են շատ պրոբլեմների առաջ, նրանց մտածելակերպը լրիվ փոխվում է, նրանք ուրիշ աշխարհ են տեսնում, տղան, աղջիկը, երեխան:

- Ձեր գյուղից այս վերջին տարիներին, ձեր կարծիքով, այս վերջին տաս տարիների ընթացքում, ինչքա՞ն մարդ է գնացել:

- Մեր գյուղի 30%-ը ընտանիքներով գնացել են:

- Քանի՞ տարեկաններն են գնացել:

- 20-ից 50 տարեկան տղամարդիկ: Ամուսնացած ընտանիքներն ու երեխաները: Դրանք բոլոր տարիքներից էլ կան:

- Գնացողներն ի՞նչ են անում:

- Հիմնականում աշխատում են շինարարության վրա՝ շենքի, ճանապարհների, մեծ մասը շինարարներ են:



- Դուք որևէ փորձ արե՞լ եք այստեղի բանկերից վարկ վերցնել, ներդրում անել, այստեղ աշխատել:

- Նախ վարկ տվողը ասում է ոսկեղեն պետք է գրավ դնես, էնա այդ ոսկեղենը կծախեմ կուտեմ:

- Վարկ տվողը փողը չի տալիս ուտելու համար, նա տալիս է, որ դու այդ փողը գործի մեջ դնես, շահես և վերադարձնես:

- Մենք շահելու հնարավորություն չունենք: Ցանում ենք կաղամբ ու կարտոֆիլ: Կաղամբի մեկ կիլոգրամը դարձավ 5 դրամ, էդ քանի՞ տոննա պետք է վաճառես, որ գոյատևես և վարկ էլ փակես: Կաղամբն էնքան չվաճառվեց, մնաց, թափեցինք ծովը (Սևանը):

- Գյուղում քանի՞ հատ խանութ կա:

- Խանութներ չկան, կրպակներ են:

- Խանութպանի կյանքը, կենցաղը ո՞նց է:

- Խանութներից կարգին առևտուր չկա: Մարդկանց մոտ փող չկա, հիմնականում պարտքով են վերցնում և աշնանը պարտքը վերադարձնում են:

- Աշնանը հիմնական պարտքերը փակվու՞մ են:

- Այո, հիմնականում փակվում են:

- Իսկ Ռուսաստանում չե՞ք նեղվում:

- Շատ ենք նեղվում: Էս վերջին մի երկու-երեք տարին էլ նոր ձև գտան այնտեղ՝ անձնագրերի թարգմանություն են ուզում: Մարդիկ էստեղ տեղյակ չեն, միամիտ գնում են, էնտեղ ընկնում են պրոբլեմների մեջ:

- Դուք տարին քանի՞ ամիս եք դրսում լինում:

- Ես ամեն տարի վերադառնում եմ, չորս-հինգ ամիս մնում եմ գյուղում: Բայց շատերը գերադասում են գնալ և մնալ, որովհետև գնալ-գալը ձեռք չի տալիս: Շատ է փող ծախսվում: Հիմա էլ վերադառնալը շատ դժվարացել է, քանի որ շատերի մոտ հին, սովետական անձնագրերն են, դրանք էլ հաշվի չեն առնվում: Մոտավորապես 20 տոկոսը հենց անձնագրերի պատճառով չի կարողանում գալ: Ոչ աշխատանք ունեն, ոչ էլ կարողանում են ետ գալ: Այդ անձնագրերի պատճառով տնից չեն կարողանում դուրս գալ, բռնվում են: Բռնվեցին՝ մի 200 դոլար կպոկեն, որովհետև գրանցում չունեն: Մեր ղեկավարությունը մի անգամ ասեց, որ օրենք են ընդունել Ռուսաստանի հետ, որ եթե մենք գալիս ենք, երեք ամսով գրանցում տան: Ռուսաստանին ձեռնատու է, որ ամեն մի էկողին գրանցի ու փող վերցնի, դա մեզ էլ է ձեռնտու: Մեր ղեկավարներն էլ չեն մտածում, որ մեկ ա, ժողովուրդը գնում ա, այստեղ գործ չկա: Որպեսզի գործը նորմալ գնա, մենք էլ գնանք հանգիստ խղճով աշխատենք ու գանք, այդ պայմանները պետք է ստեղծեն այնտեղ, մեզ գրանցեն: Եթե մենք Ռուսաստանի հետ ենք քայլում, մեր ամեն ինչը Ռուսաստանի հետ է, այդ ամեն ինչն էլ պետք է ճշգրտվի ժողովրդի համար:

- Օրինակ, ինչը՞ պիտի ճշգրտվի:

- Պետք է մարդկանց տեղյակ պահել, թե ի՞նչ կարգեր են այնտեղ, ի՞նչ իրավիճակ: Հիմա գնում ենք, ճանապարհին թե Վրաստանում, թե Ռուսաստանում ով ինչ ուզում է՝ անում է: Ոչ մեկն էլ չկա, որին դիմես, ճշտես, հարցնես: Եթե, օրինակ, Վրաստանի տարածքով մեքենաներ են գնում Ռուսաստան,

չկա կոնկրետ դոկումենտ ոչ մի տեղ, որտեղ նշված լինի, թե այդ պետության ինչքա՞ն փող մուծեն: Բանավոր ինչքան ուզեն, այդքան էլ կասեն:

*Միջամտում է մի միջահասակ տղամարդ* - Դու Վրաստանից ես ասում: Բա մերոնք ի՞նչ են անում: Եթե ապրանք տանես Երևան ծախելու, ճամփեքին ինչքա՞ն փող կծախսես: Բա էս կառավարությունը էդ չի տեսնու՞մ: Բա չեն մտածու՞մ, որ վաղը մյուս օրը էլ բանակ գնացող չի մնալու, երեխա չի ծնվում, էրեխեքը Ռուսաստանում են ծնվում: Դրանք մարդ սպանողներ են: Մեր գյուղում ամսեկան 5-ից 6 մարդ է մեռնում: Մինչև հիմա այս կառավարության մարդիկ ու՞ր են, որ Վազգեն Սարգսյանի ու Ռեմիրոճյանի սպանողները չեն բացահայտվել:

- Իսկ Ռուսաստանից բացի ուրիշ էլ ու՞ր են գնում աշխատելու:
- 80 տոկոսը գնում են Ռուսաստան:
- Իսկ Երևան քոչածներ կա՞ն ձեր գյուղից:
- Նրանք, ովքեր դրսում են աշխատում, նրանք են Երևանում բնակվում: Տեղի բնակիչը չի կարողանա այստեղ տուն սարքի, ինչ մնաց Երևանում գնի:

*Միջամտում է վաթսուն տարեկանն անց մի տղամարդ* - Ամբողջ ջահելությունը կթողնի կգնա: Գնում են բանակ, գալիս են ու հայդե՛ Ռուսաստան: Բա էլ ու՞մ համար են բանակ տանում, ծախսեր անում, փող ծախսում, մարդկանց բան սովորացնում, եթե բանակից հետո պետք է թողնեն գնան: Ես երկու տղա ունեմ, երկուսն էլ բանակից հետո թողեցին գնացին Ռուսաստան: Ասում եմ «այ բալա, մնացեք, կարտոշկա կծախենք, կուտենք»: Ասում են՝ «մինչև կարտոշկեն հասցնում ենք Երևան, տաս միլիցի փող ենք տալի: Միլիցեքին ավելի շատ ենք տալի, քան տուն ենք բերում: Ինչո՞վ ապրենք»: Հիմա Ռուսաստանում համ իրանք են ապրում, համ էնդեղից էստեղ մեզ են պահում: Ինձ ու պառավիս:

- Ընտանիքներո՞վ են գնացել:
- Հա, ընտանիքներով: Մեկը բանակից եկավ, պսակվեց, հարսին առավ ու գնաց: Էնդեղ երեխեքը լավ էլ դպրոց են գնում, կրթություն են ստանում: Իսկ էստեղ որ մնում են, ոչ կարգին դպրոց են գնում, ոչ էլ դպրոցի ծախսերն են կարում անեն: Ավարտելուց հետո էլ գնան որտե՞ղ սովորեն: Էստեղից Երևան էրեխա չես պահի, սովորելն էլ լրիվ վճարովի է: Չեն էլ ասում էս գյուղերի էրեխեքը առանց էն էլ պահող չունեն, վճարը որտեղի՞ց տան: Դրա համար էլ խոպանից եկողը եթե մի քիչ փողով է գալիս, գնում է Երևան:
- Իսկ գյուղում մնացած երիտասարդությունն ինչո՞վ է զբաղվում:
- Երիտասարդություն է՞ մնացել, որ զբաղվի: Եղածներն էլ կամ խմում են, կամ՝ պատերի տակ կանգնում: Կյանքը շատ տխուր է էստեղ: Այ, մենք տարիքով մարդիկ ենք, մերը պրծել է, լավ-վատ ապրում ենք: Բա էս ջահելության հեռանկարը ո՞րն է լինելու: Վախենում եմ ընտանիք կազմեն՝ չկարողանան պահել: Ով էլ աղջիկ ունի մարդու տալու, ուզում է Ռուսաստան գնացողի տա, որ իրա հացը գտնի: Ոչ մի ուրախություն չի մնացել:
- Իսկ գյուղապետարանը ոչինչ չի կազմակերպու՞մ. տոներ, ժամանց:

*Գյուղապետ* - Մենք մեծ շուքով տոնում ենք մայիսի ինը՝ հաղթանակի օրը: Վետերաններին ենք հրավիրում, ճաշկերույթներ ենք կազմակերպում: Հրավիրում ենք և հայրենական պատերազմի վետերաններին, և Արցախյան



պատերազմի մասնակիցներին: Դրսում խաչքար ունենք, դրա մոտ ենք հավաքվում:

- Նո՞ր է սարքված այդ խաչքարը:
- Այս անկախության տարիներին է պատրաստվել:
- Իսկ այս անկախության գաղափարի հետ կապված ուրախության, տոնական օրեր չունե՞ք: Պետական տոները չեք նշու՞մ:
- Առայժմ այս անկախությունը մի լավ բան չի տվել, որ նշենք: Համ էլ պետությունն ինքը չի ասում, թե ո՞նց նշենք, ի՞նչ անենք: Հեռուստացույցով նայում ենք, թե Երևանում ոնց են նշում: Երևի էս անկախությունը մենակ Երևանի համար է եղել: Բայց մեր հին տոներից էլ ենք նշում. Վարդավառն ենք նշում, երբ որ հայտարարում է եկեղեցին: Նաև վերականգնել ենք խաչը ջուրը գցելու օրը: Տերտերը գալիս է, օծում է ջուրը, մեռոնները լցնում է գետը: Այդտեղ լինում է նաև երաժշտություն: Այդ ջրից տանում են իրենց ընտանիքները: Վարդավառի տոնը ջուր ցանելու տոնն է, ժողովուրդը գնում է Իշխանավանքի ձորը: Ջահելները իրար ջրում են, մի քիչ ուրախանում են, մի քիչ երգ, պար՝ քեֆի օր է: Բոլոր վարդենիկցիները գալիս են այդ տոնակատարությանը մասնակցելու: Ջահելները իրար բախտ են գուշակում: Աղջիկ,տղա մտնում են քար կպցնելու, մտքում պահած ինչ մուրազ ունեն, որ կատարվի: Նախկինում վերացել էր, բայց հիմա վերականգնել են: Այս վերջին տարիներին կա: Նույնը՝ Զատիկի տոնը: Էս անկախությունը էդ մի բանը տվել է՝ հինը կարող ենք վերականգնել, չեն արգելում: Բայց մեկ է՝ ուրախություն չկա: Ոռոգիետև հույս չկա:

*Հրանուշ Խառատյան, Գեղարքունիք, 2002թ.*

# ՉԵՆ ԹՈՂՆԻ ՀԵՉ ՄԻ ՏԵՂ, ՈՐ ՄԱՐԴ ԱՇԽԱՏԻ, Ի՞ՆՉ ԱՆԻ, ՈՐ ՉԵՐԹԱ

*Գյումրի, Զրույց ավիատոմսարկղի և ավտոբուսների գործակալության աշխատողի հետ*

- Ո՞ր թվին է գնացողների քանակը հասել պիկի:

- 2000-ին: Էդ ժամանակ չափազանց շատ գնացին: 2001-ին պակասեց, մոտավորապես կեսով: 2002-ը նոր է սկսվել ու հիմնականում էն արտագնա աշխատանքի գնացողներն են, որոնք միշտ էլ գնացել են: Այսինքն գնացող ընտանիքներ, ինչպես 2000 թ-ին էր` չկա: Էդ ժամանակ էր, որ վեշով, կաի-կարասիով, ընտանիքներով գնացին, ու չափազանց շատ գնացին: 1999-ին էլ շատ գնացին, ես անձամբ սկսեցի աշխատել 1999-ը թվականից: Բայց 2000թ-ին չափազանց շատ էին, պիկը էդ ժամանակ էր: Ավտոբուսներում տեղ չկար, ավտոբուսների գլխներին բարձած վեշերը, էրեխեքով, կանանցով... : Իսկ հիմի` չէ, էն է, որ գնացել է աշխատելու, կամ աղքերն է, էկել են Նոր տարվան մոտիկ, Նոր տարին էրել են, նորից հետ են գնում: Հիմնականում էդ մարդիկ են: Ընտանիքների գնալ, կարծես թե էլ չկա:

- Ձեր գործակալությունը ո՞ր թվից է սկսել աշխատել:

- 1999-ից: Մենք էրկու հոգով ենք բացել, էրկուսս էլ, կարելի է ասել, փախստեր ենք:

- Ի՞նչ ծառայություններ է մատուցում գործակալությունը:

- Ավտոբուսի տոմսերի վաճառք: Ես վերջերս պրոբլեմներ էղավ փաստաթղթերի, Ռուսաստանի միլիցիան գնացողների պասպորտները ստուգում էր, ասում էր` ես ինչ պասպորտ է, չենք հասկանում, հայերեն, անգլերեն է գրած... էդ անձնագրերի թարգմանությունն էլ ենք անում: Պատրաստում, դնում ենք անձնագրի մեջ, ընդ որում անվճար, որ պրոբլեմ չլինի: Հետո սկսեցինք զունավոր հանել, դա էլ ծախսերի հետ է կապված, դրա համար առաջարկում ենք, եթե ուզում են` 1000 դրամ տալիս են: Սկոչով կպցնում ենք, եթե պետք չի լինում, կարողանում են հանել, անձնագրերում միշտ տենց էջեր լինում են, որտեղ նման թղթեր կարելի է կպցնել:

- Ո՞ր թվից սկսեցիք այդ ռուսական տարբերակը անել:

- 1999-ից արդեն հարցնում էին, մենք նոտարի մոտ էինք ուղարկում, հետո տեսանք, որ մերն էլ է անցնում: Ռուսաստանում կան չաստնի[1] նոտարներ, Հայաստանում նոտարը պետական պաշտոնյա է, իսկ էնտեղ եթե դուք իրավաբան էք, լիցենզիա էք հանում, ու ձեր ուզած համապատասխան գործունեությունն էք ծավալում, բիզնեսը: Ու մեր թարգմանություններն էլ տեսանք, որ անցնում են: Էնտեղի միլիցիոներները կարծես թե զարգացած չեն, որովհետև ցանկացած մարդ կարող է ստորագրել էս թարգմանության տակ ու դա էնտեղ անցնում է: Մենք մեր իրավաբաններին հարցրել ենք, իրանք ասել են,

1. Մասնավոր:





որ մենք էդ իրավունքը ունենք, հիմի ուզում ես Թումանյանի «Չարի վերջն» էլ թարգմանի, կամ որևէ մեկի անձնագիրը թարգմանի, թարգմանությունը որևէ մեկը չի արգելել: Եթե կարող եմ գիրք թարգմանել, ուրեմն անձնագիր էլ եմ կարող թարգմանել: Իսկ անձնագրում կպցնելն էլ` ձեր իրավունքն է, դուք` ձեր անձնագիրը, ինչ ուզենաք, էդ էլ կարող էք կպցնել, ուզենաք Փարոսի գրկույքը կարող էք կպցնել:

- Դուք և ավտոբուսի տոմսեր էք վաճառում, և ինքնաթիռի: Ո՞ր մի ծառայությունից են ավելի շատ օգտվում:

- 2000 թ-ին` ավտոբուսներով, հիմի արդեն` սամալյոտներով:

- Իսկ ո՞ր ուղղություններով:

- Ամենաշատը, հիմնականը` Ռուսաստան, 80 տոկոսը: Շատ քիչ քանակ է, որ գնում են Ուկրաինա, իսկ մյուս երկրները գնացող չկա` Ղազախստան, Մոլդովա: Մեր ավտոբուսներն էլ գնում են Ռուսաստան` Արմավիր, Ռոստով, Մոսկվա, իսկ երեք քաղաքներից հետո ուր են գնում ժողովուրդը` չեմ կարող ասել: Էնտեղից գնացքով շարունակում են, Անապա, Վոլգոգրադ, Սարատով և այլն:

- Իսկ Բելգիա, Հոլանդիա տանող ավտոբուսներ դուք չունե՞ք:

- Մենք Թուրքիա ենք ունեցել ավտոբուս, հիմա էլ կա: Առաջ, 1999-ից մինչև 2000-ի նոյեմբերը, որ շատ էին գնում` ամեն չորեքշաբթի, շաբաթ օրերին էր: Բայց հետո ցեղասպանության հետ կապված, որ հայերը ստեղ ցեղասպանության հարց բարձրացրին, մի քիչ դժվարացրեցին ու 2001 թ-ի հունվարից մուտքը դարձրեցին վիզայով: Իսկ էն ժամանակ հենց սահմանի վրա 10 դոլարը մուծում էիր, գրանցում էին, պասպորտի մեջ շտամպը խփում էին ու ազատ անցնում էիր: Իսկ հետո մտցրեցին վիզան: Ու քանի որ մենք էլ իրանց դեսպանությունը չունենք, գնում ենք Վրաստան` Բաթում, հյուպատոսի մոտ, կամ Թբիլիսիում, որ էնտեղի դեսպանատանը խփեն վիզա, ընդ որում դա էլ հիմա 40 դոլար է ու առաջին ել չլոցի[2] է: Հիմա իմ մոտ մի տենց խփած անձնագիր կա, որի էդ կնիքը Թբիլիսիում խփել է տվել Թբիլիսի-Լենինական ավտոբուսի վարորդը, տենց ավտոբուս կա: Մենք էլ ենք արել, մեր ֆիրմայի ղեկավարը հավաքել տարել է, իրանք իրենց էլ են անում:

- Ի՞նչ մարշրուտով են գնում Թուրքիա:

- Սադախլոյով, հետո Թբիլիսի, Բաթումի, հետո ծովի ափով:

- Վտանգավոր ճանապարհ չէ՞:

- Չէ, բողոքը Վրաստանի ճանապարհների հետ է կապված: Բողոքներ կան նաև Հյուսիսային Օսեթիա, Կաբարդա, մինչև Մինվոդ, էնտեղից արդեն էլ բողոք չկա: Արմավիրից Ռոստով էլ կազակներ կան, նրանք էլ պոստեր են դրել ու սկսել են կպնել, 1999 թ-ից դրանք կային: Իսկ հետո արդեն ազատ է ճանապարհը: Իսկ Կաբարդան ու Օսեթիան շատ վատ են, ավելի վատ, քան Վրաստանը:

- Այնտեղ ավելի շա՞տ են գումար վերցնում:

- Էդ չեմ կարող ասել, ամեն անգամ դա տարբեր է լինում, ամեն մարդ մի ձևի է տալիս, մի ռեյսը մի ձևի է ստացվում, մյուսը` ուրիշ: Բայց միջինը էդ բո-

2. Քաշքշոց:

լոր պրոտերը իրար հետ վերցրած մի 500 ռուբլի բան է նստում, այսինքն մոտ 10000 դրամ: Մարդը ստեղ տոմսը առել է 24 հազար դրամով, մի 10000 դրամ էլ կծախսի մինչև կհասնի Արմավիր: Օրինական մուծումներ էլ կան: Ինչպես Հայաստան մտնելու համար հիմա որոշում են հանել, որ օտարերկրացին պիտի մուծի, Ռուսաստան մտնելուց էլ 250 ռուբլի պիտի մուծես:

- Թուրքիա գնացողները ավելի շատ կանա՞յք են, թե՞ տղամարդիկ:

- Կանայք, հիմնական մասը, մոտ 80 տոկոսը՝ առևտուր անողներն են:

- Բերե՞լն էլ է ավտոբուսով:

- Հա: Մարդիկ կան, որ էնտեղ տներում են աշխատանք գտնում, կամ շուկաներում, խանութներում՝ էդ մարդիկ մոտ 4-5 ամիս մնում են: Իսկ առևտրով զբաղվողները 7-10 օրով են գնում: Հիմա ավտոբուսը ամիսը երկու անգամ է գնում: Իսկ առաջ շաբաթը երկու անգամ, 45 տեղանոց ավտոբուս: Հիմա արդեն շարժը կանգնած է, ժողովուրդ էլ չկա էստեղ: Առևտուրն էլ արդեն էն չի, առաջ երևի առևտուրը ավելի աշխույժ էր:

- Ավիատոմսե՞րն էլ հիմնականում դեպի Ռուսաստան:

- Հա, դե մյուս երկրները թանկ է, վիզա է պետք. Շենգենը թանկ է: Էսքան ժամանակ մի հոգի Դամասկոսի՝ Սիրիա, տոմս է վերցրել: Երկու տարի է ինչ ավիատոմսեր ենք վաճառում, դա առաջին դեպքն էր, որ մարդը արտասահման տոմս է վերցրել մեզանից: Իսկ հիմնականում Ռուսաստանն է, Ուկրաինա են առել՝ Խարկով, Օդեսա:

- Ինչի՞ հետ եք կապում էն, որ ընտանիքներով էլ չեն գնում:

- Էլ մարդ չկա, ով որ պետի էրթար, արդեն գնացել են, մնացողներն էլ մնացել են: Վպրինցիպե[3], բոլորս էլ ուզում ենք ստեղից գնանք:

- Գնացողների քչանալը ձեր գործին խփու՞մ է:

- Պատկերցրու էդքան էլ չէ, հմի ավիատոմսերի հաշվին նույն բանն է գալիս: Ավտոբուսի վրա ուղևորները շատ են պակասել, ու, ճիշտ է, գումարային տեսակետով առաջվա պես չէ, առաջվա պես շատ փող չենք աշխատի:

- Ավիատոմսի մեջ դուք ավելի՞ շատ գումար եք աշխատում:

- Չէ, ավտոբուսի մեջ ենք ավելի շատ աշխատում: Ավիատոմսերի դեպքում մենք մի տոմսի մեջ աշխատում ենք կամ 500, կամ 1000 դրամ, բայց օրական լավագույն դեպքում վաճառվում է 4 տոմս: Եթե վերցնենք, որ մի երկուսը 1000 դրամանոց տոմսերն են, 2-3 հատն էլ՝ 500, ստացվում է օրը 3500 դրամ, ու էստեղ էլ 3 հոգի մարդ ենք, բաժանած մեր մեջ ու գումարած էս հոսանք, հեռախոսի ու մյուս ծախսերը: Ավտոբուսներից մեր գումարը տոմսի 10 տոկոսն է: 24000-ի 10 տոկոսը 2400 դրամ է, ամեն տոմսից էդքան դուրս է գալիս, դա արդեն գումար է: Կամ աշխատավարձ ենք տալիս՝ 50000 դրամ: Էստեղից մենք երկու վարորդ ունենք, մնացածը Երևանի վարորդներն են, իրանք են գալիս էստեղից մարդ տանում: Առաջ ուղարկում էինք ամեն չորեքշաբթի, կիրակի, հիմա ուղարկում ենք միայն կիրակի, որովհետև մարդ այլևս չկա, շարժը կանգնել է: Հիմի առաջվա նման չեն գնում:

- Տարվա սեզոնների կտրվածքով ո՞նց է փոխվում գնալ-գալու աշխուժությունը:

*3. Սկզբունքորեն:*



- Գարնանը խոպանչիններն են գնում, դեկտեմբերին, Նոր տարվան մոտիկ գալիս են: Հիմնականում էդ շարժն է:

- Ի՞նչ գներ են այստեղից Մոսկվա ավտոբուսով:

- Մինչև Մոսկվա 35000 դրամ է, 23000 դրամ՝ Արմավիր: Էժանացել է, ի միջի այլոց: 2000թ. 26000 դրամ Արմավիրն էր, հիմա 3000-ով էժանացել է: Ու էդ ավելորդ ճանապարհի գումարն էլ 2000-3000 էր, բայց հիմի 10000 է եղել՝ դա էլ հիմնականում միլիցիոներներինն ու ԳԱԻ պոստերինն են, ռեկետ, հանցագործություն չկա: Վրաստանից էլ է շատ արտագաղթ: Ու որ Ռուսաստանը դարձրեց իրանը վիզովի երկիր, վրացական կողմից արդեն ավտոբուսներ չգնացին: Էդ մարդկանց գրպանի գումարը պակասեց: Էդ բալանսը, տարբերությունը վերականգնելու համար, սկսեցին հայկական մեքենաներից շատ կորզել:

- Ո՞ր ամիսներին են ավելի շատ գալիս:

- Դեկտեմբերին: Հիմա ավելի շատ են գնում, քան գալիս են, 150 հոգի մարդ է գնում ինքնաթիռով, 30 հոգով գալիս են: Իսկ դեկտեմբերին, նոյեմբերին հակառակը՝ ստեղից 30-20 հոգի գնում են, իսկ էնտեղից 150-ը գալիս են:

- Ձեր մոտ Շիրակի գյուղերից է՞լ են գալիս տոմս վերցնելու:

- Հա, լենինականցիներին հավասար 5 մարդ Լենինականից, 5 մարդ՝ կողքի գյուղերից կեղնին:

- Ձեր գործակալությունից բացի այս տիպի այլ գործակալություններ կա՞ն Գյումրիում:

- Հա, երկու հատ էլ կան, մի հատը ավտոկայանն է, էնտեղից էլ կերթան ավտոբուսները, մի հատ էլ Ստամբուլի շուկայի մոտինն է, իրանց վարորդները հիմնականում երևանից են: Տեղացիները շատ քիչ են, երկու հոգի են, դրանք էլ ամսվա մեջ կարող են մենակ մի ռեյս անեն ժամանակի առումով, չեն հասցնի, որ համ գնան, գան ու հետո էլ մի 10 օր հանգստանան: Նախկինում ես Շինարարական կոոպերատիվում եմ աշխատել, ու չեն թողնի հեչ մի տեղ մարդ աշխատի, ի՞նչ էնե, որ չերթա: Էնտեղ իմ վրա սխալ ակտ են գրել, ես էդ ակտի հետ համաձայն չեմ եղել, 5 տարվա մուծելու փող է եղել: Տվել են դատարան, էնտեղ կա վաղեմության ժամկետ՝ 3 տարի: Էդ ժամկետը չի պաշտպանվել... Ըստ քաղաքացիական օրենսգրքի, եթե պատասխանող կողմը չի գալիս դատարան, դա չի նշանակում, որ իրա դեմ որոշում բդի հանես: Դու բդի օրենքով, ապացույցներով քցես, բռնես, ուսումնասիրես ու որոշում հանես: Իսկ դատարանը ընձի կպատասխանե, որ դու դատարան չեկար՝ ես քու դեմ հանի որոշումը: Չհասկացանք, ով որ դատարան չեկավ, ուրեմն իրա դեմ որոշում բդի հանե՞ս: Էդ մարդը իմ վրես 2.500 000 ակտ է կազմել, ես ասում եմ սխալ է, էսքան թիվ չկա, դատարանին կսեմ, հլե նստեք հաշվեք, դատարանը ընձի կսե՝ գնացեք իրար հետ հարցերը լուծեք: Է, որ լուծեինք, էլ դատարան չէինք գա, որ էկել ենք դատարան, ուրեմն լեզու չենք գտել: Ես ասում եմ սխալ ես հաշվարկել 2.500 000 իմ վրա, էդոր համար ես պարտք չեմ, փորձագետ բերեք, ուրիշ հիմնարկի հաշվապահ բերեք, թող հաշվե, տեսնինք ո՞վ է ճիշտ: Բերող չկա, հաշվող չկա: Ես էնքան ընկերներ ունիմ, որ դրսերում են, գործերը էստեղ դատարաններում է, իրանք դրսերում 31 էլ առան, կամազ մեքենաներ առան, տներ առան: Էդ մարդիկ, որ մնային ստեղ բդի իմ օրս ընկ-

նեին՝ տված մնային: Մարդիկ գնացին հին 31 էլ ունին, տունն էլ, կամաց բեռնատար մեքենան էլ ունին, առևտուր էլ են անում, բիզնես են անում Ռուսաստանում:

- Բայց Ռուսաստանում էլ են անպաշտպան...

- Ավելի լավ են, քան ստեղ: Եթե գումարներ մուծելու համար է, էնտեղ կաշխատին՝ կմուծեն, ստեղ որ չես մուծե, ինչ օգուտ, մեկ է չես էլ աշխատի, ավելի լավ է աշխատիս մուծես, քան չմուծես ու չաշխատիս: Այո, մուծում են էդ ժամանակավոր գրանցման համար՝ օրը 7 ռուբլի է, ինչքան է...

- Բայց վտանգավոր է բոլոր դեպքերում, դեմքդ արդեն ասում է, որ տեղացի չես և ամեն անգամ ծեծ ուտելու սպառնալիքը կա:

- Ստեղ պակա՞ս կծեծեն, ստեղ էլ կարող է պայուսակդ փախցնեն, ստեղ էլ ինչ-որ մեկի տունը գողություն է կատարվում, ի՞նչ տարբերություն: Իսկ ծեծ ուտելը, որպես կավկազցի, էդ ոչինչ, էդ ուղղակի ռուսական շովինիզմն է: Բոլոր դեպքերում էդ մարդը ի՞նչ անի: Ան, ես ու դու ստեղ ենք, ասենք դու ինչ-որ մի տեղից աշխատավարձ ես ստանում, ես էլ ինչ-որ մի բան անում եմ, որ մի քանի կոպեկ աշխատեմ: Բայց էդ մարդն ի՞նչ անի: Հա, մնաց Հայաստանում, մնաց... 1996 թ-ին ժողովուրդը ոտքի ելավ, Վազգեն Մանուկյանն էր ընտրվել նախագահ, կռվեց, հարձակվեց կենտրոնական հաշվիչ հանձնաժողովի վրա: Փորձեց իր իրավունքները պաշտպանել, չէ՞: Ի՞նչ արին: Իսկ էն էլ, որ 3 տարի հետո փոխվավ, էլի մեզնից անկախ էր, իրար մեջ կռիվներ էր, վերևների կռիվ: Կարո՞ղ է Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը ես ու դու պահանջեցինք ու ինքը մեր պահանջով հրաժարվեց: Իրանց մոտ՝ Ազգային անվտանգության խորհրդի ժամանակ էդ մարդուց հրաժարական պահանջեցին, ինքն էլ հրաժարվեց, պահանջողներն էլ՝ Քոչարյանը, Վազգեն Սարգսյանը, էն մյուսը և այլն: Ու ոչ մի վարիանտ չունինք, ինչքան ոտի ելնինք՝ էլի բդի ծեծեն, ի՞նչ անենք: Ես մեր պետության մեջ բանակը բդի չխառնվի քաղաքական գործերին, պաշտպանության նախարարը էնքան զարգացած բդի էղնի, որ ըսե՝ ես ներքաղաքական պայքարին չեմ մասնակցում, զորքը չեմ բերի, որ ժողովուրդն էլ բարձրանա իրա իրավունքները պաշտպանի: Արգենտինա տվեցին խանութները ջարդեցին, դու տեսա՞ր, զո՞րք մտավ իրանց մայրաքաղաքը: Չնայած Արգենտինան մեզնից շատ զորք ուներ, չէ՞: Չմտավ, չէ՞: Բայց ստեղ կմտնի, իբր կարգ ու կանոն հաստատելու նպատակով՝ ժողովուրդն էլ ոտքի չի կանգնի:

- Շատ հիմնարկությունների վերջ է դրել հարկայինը, հենց իրա հարկային օրենքներով: Ընդհանրապես էդ հարկերը դրել են մեր վրա, է, ի վիճակի չէ էդ տնտեսությունը բյուջե էնքան հարկ ավելացնել: Դրել են. մենակ իրանց մասին կմտածեն: Տեսնին խնձորը կածի, կսեն՝ մեզի կերակուր տու: Բայց խնձորի ծառն էլ բդի դեղեն, ջրեն... Իսկ ես մարդիկ դրել են էդ ծառից ինչքան հնարավոր է կպոկեն, ինչքա՞ն, մինչև ե՞րբ: Այնինք տնտեսության մասին էլ բդի մտածես, ինչքա՞ն կարելի է մենակ բյուջեի մասին մտածել: Էդ ջիպերը, որ ծառայողական առել են... է, թող չառնեին էդքան, բյուջեն թեթևացնեն ու հիմնարկներին հնարավորություն տան էդ մարդիկ զարգանան, նոր հաստոցներ դնեն, նոր տեխնոլոգիաներ բերեն, որ հնարավոր էղնի աշխատել, կարողանան ինչ-որ գումարներ հետ գցեն: Դրել՝ քաշենգը մենակ: Գազը քանի՞ դոլա-



րով է մտել Հայաստան: 50, չէ՞: Իսկ ծախվել է մոտ 100 դոլարի, դրա համար կրկնակի է վաճառվում: Էդքան գումար ո՞վ է դնում բյուջեն: 12 դրամով էներգիա արտադրողը վաճառում է բաշխիչ ցանցերին, 22-ով կծախե: Մեկին մեկ դրել է կծախե: Էդ ի՞նչ ծախսեր կկատարե էլեկտրաէներգիայի վրա, որ 28 դրամով դրել է բնակչության վրա կծախե:

- Հիմա էլ ես Գյումրվա բնակարանների սերտիֆիկատների պատմությունը: Առաջին ստացողներն արդեն սկսել են վաճառել իրանց տները: Այսինքն առաջին ստացողը տունը ստացավ՝ գնեց ու երկրորդ ստացողի վրա վաճառում է: Այսինքն մուֆթա փողերը վերցրեց ու կերթա: Իսկ ես բաները բդի կառավարությունը թույլ չտա: Իսկ կառավարությունը ասում է՝ շատ լավ ծրագիր է, Քոչարյանն է ասում: Ավելի ճիշտ կեղներ, որ էդ բնակարանի գումարը, թող էղնի 4000, պետք էր պետությանը տալ ու ըսել՝ ան, բնակարան կառուցիր, համ աշխատատեղ կունենան, գոնե շինարարները, համ հարկերի ձևով ետ կամտահարկ, կենսաթոշակային ֆոնդ ևլն գումար կմտնի բյուջե, դա ավելի ճիշտ չէ՞, քան տան ընծի՝ ան գնա քեզի համար տուն առ: Նախ էդ խթանում է արտագաղթին: Իսկ տուն, բնակարան ասածը չի ավելանում, չի կառուցվում, էդ էղածն է իրար մեջ վաճառվում, բայց ավելի լավ չի՞ տան թող կառուցեն: Թող ավելի շատ դատարկ բնակարան էղնի: Իսկ տնակներից մարդիկ մեկ է, դուրս չեն գա: Մարդ տունը ստացել է, բայց տնակից դուրս չի գա, որովհետև խնկող չկա: Որովհետև բդի ստանա, որ նոր տնակից դուրս գա, իսկ որ ստացավ՝ էլ հեչ մարդ էլ չի կարող ըսե, թե ընչի տնակիցդ դուրս չես էկել: Իսկ դուրս չի գալիս, որովհետև մինչև երկրաշարժ 5-6 հոգանոց ընտանիք էին, հիմի դառել են 12 հոգի: 2 սենյականոց տուն է ստացել՝ 12 հոգու կեսը կմնա դոմիկի մեջը: Օրենքը սպես է, եթե դու մինչև երկրաշարժ երկու սենյակ ես ունեցել, դու 2 սենյակից ավել չես ստանա, անկախ նրանից, որ ծեր ընտանիքը դառել է նույնիսկ 10-12 հոգի: Բայց եթե դու ունեցել ես 4 սենյականոց ու ընտանիքի անդամների թիվը պակասել է, բնակտարածությունն էլ պակաս կստանաս: Եթե էդ ժամանակ դուք 2 հոգի էք էղել ու 2 սենյակ էք ունեցել, հիմա 2 սենյակ չեք ստանա: Բայց եթե 5 հոգի էք էղել ու հիմա 10 էք դառել, ունեցել էք 2 սենյակ՝ հիմի 2 սենյակ կստանաք: Իսկ եթե 4000 դոլար, որ տալիս են 4 սենյականոց բնակարանի համար, էդ գումարով կարելի է բնակարան կառուցել, եթե էդ մարդկանց հարկերը մի փոքր քչացնեն, մաքսային տուրքերը քչացնեն, շինանյութերը շատ մտնին Հայաստան՝ կարելի էր կառուցել: Բայց գոնե արդյունքում աշխատումը կմնա, մարդիկ կաշխատեն՝ ընտանիք կպահեն, ոչ թե հիմիկվա պես գումարը բերեք տանք տուն վաճառողի ձեռքը: Իսկ եթե տային պետության ձեռքը, շինարարական կազմակերպությունները կաշխատեին:

- Ձեզ երբևէ Ռուսաստան գնացողները դիմե՞լ են հարցումներով էնտեղի օրենքների, մաքսային տուրքերի, փողերի փոխանցումների հետ կապված...

- Չէ, մենք էդ գործերով չենք զբաղվի: Իսկ էն որ անձնագրերում խփում ենք, դա հենց էդ մարդկանցից էկած գաղափար է, պահանջ կար, վարորդներին էին անընդհատ ստուգում՝ անձնագրերի թարգմանությունը պահանջում: Ուրեմն մեզ անձնագրերի թարգմանություն են ցույց տվել, որը կատարել են Մոսկվայի հայկական դեսպանատանը, ու իրանց ասելով 18 դոլար գումար

են մուծել դրա համար: Հյուպատոսական բաժինը, փոխանակ ասի՝ աղբեր ջան, դու Հայաստանի քաղաքացի ես, ով քեզի իրավունք ունի բան ասի, ռուսերեն լեզվով անձնագիր պահանջի, քելը, տեսնինք, եղիք ո՞վ է... Փոխանակ էդ մարդու իրավունքները պաշտպանեն, ինքն է էդ թարգմանությունը տալիս՝ գումար աշխատում:

- Ո՞ր թվին էր դա:

- 2000թ-ին: Տրամաբանորեն ինքը բդի գնար էդ մարդու շահերը պաշտպաներ, էնպես աներ, որ էդ մարդուց թարգմանություն ոչ ոք չպահանջեր, բարի էղի միլիցիոներ, անգլերեն սովորի, էս մարդու անձնագիրը միջազգային անձնագիր է, բոլոր պետություններում ուժի մեջ է: Ինքն է թարգմանություն տալիս, էդ ի՞նչ տրամաբանություն է: Ի՞նչ, հիմի էլ որ Վրաստան գնամ, մի հատ էլ վրացերեն բդի սարքեմ, այսինքն 130 պետություն կա, 130 հատ թարգմանություն բդի ունենա՞մ: Էս պատմության վերջը դուք դժվար թե գտնիք: Էս զակալդովաննի կրուգ[4] է: Ամեն ինչը մեկը մեկի հետ կապված է: Մեր կառավարության մեղքն էլ չէ շատ դեպքերում, ամբողջ երկիրն է էդպես, ամբողջ Խորհրդային Միությունն է էդ ձևի:

- Եթե Գյումրին համեմատենք մյուս հայկական քաղաքների, բացի Երևանից, ասենք Վանաձորի...

- Վանաձորից էլ ենք հետ: Նախ շենքերի առումով ենք հետ: Էնտեղ ընդամենը մի 3-4 շենք փլվեց, իսկ իրանց շենքերը կանգնած են, քաղաքը՝ մաքուր: Իսկ ներքին կառավարման հետ կապված հարցերը ես չգիտեմ էնտեղ ոնց է, ես էնտեղ չեմ ապրել: Հետո իրանցը ի տարբերություն մեր թեթև արդյունաբերությանը, քիմիական արդյունաբերություն էր, որը չտուժվավ երկրաշարժի ժամանակ, չփլվեց, ու իրանց նկատմամբ դրսից հետաքրքրություն կա, ինչ-որ ներդրումներ են անում: Չնայած ավելի շատ գործարաններն «աշխատում» են մինչև լենտ[5] կտրելը, դրանից հետո փակվում են: Բայց էստեղ մինչև լենտ կտրելն էլ չի հասնում գործը: Էստեղ մինչև առաջին քար գցելն է... Երկրաշարժից հետո առաջին շենքը որ գցեցին, Ռիժկովի ներկայությամբ... Ցեխը բերին լցրեցին, հետո Ռիժկովը գնաց, էդ պանել-մանել հանեցին, երկաթը հանին թափեցին ու էնտեղ շենք չկառուցվեց, տարան ուրիշ տեղ: Ճիշտ է, կառուցվեց, բայց ուրիշ տեղ, էդ ձևական էր, էդ խորհրդային միությունից էկած ձևականություն էր: Էստող բան չի փոխվի, մինչև Հայաստանը չգա էն վիճակին հասնի, որ տնտեսական զանգվածը, տնտեսությունը կախված չեղնի քաղաքականությունից, այլ քաղաքականությունը կախված եղնի տնտեսությունից: Ոչ թե մեր պուզատիների նման, այլ իսկական բիզնեսի մասին է խոսքը, իսկական կապիտալի, իսկական բիզնեսմենների: Այ էդ մարդիկ գան, որ նոր պետությունը պետություն դառնա, որ կյանքն էլ լավանա:

*Գայանե Շագոյան, Գյումրի, 2002թ.*

*4. Կախարդական շրջան:*
*5. Ժապավեն:*



# ԵԹԵ ՕՐԵՆՔԻՑ ԽՈՍԵՍ, ԳԻՆՆ ԵՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ

*Հարցազրույց Ռուսաստան ավտոբուսներ տրամադրող ծառայության աշխատողի հետ, Վանաձոր*

Այս ծառայությունը տեղավորված է փայտե տնակում: Տնակի ներսում պատին փակցված է այն քաղաքների ցանկը, որոնց ուղղությամբ մեկնում են ավտոբուսները, ինչպես նաև նշված են համապատասխան գները: Քաղաքները հետևյալներն էին. Վլադիկավկազ, Պյատիգորսկ, Մինվոդի, Եդինոմինսկ, Արմավիր, Կրապոտկին, Տիխորեցկ, Ռոստով, Վորոնեժ, Ելեց, Լիպեցկ, Մոսկվա: Գները՝ 18 հազարից մինչև 38 հազար - Մոսկվա:

- *Ի՞նչ հաճախականությամբ են գնում ավտոբուսները:*

- Ձմեռը գործը կանգնած է, երկու ամիս միայն մի ավտոբուս է աշխատում դեպի Կրասնոդար: Հիմնական հոսքը մինչև Արմավիր է, Արմավիրից շարունակվում է հիմնականում գնացքով:

- *Ըստ սեզոնի ո՞նց է փոխվում ավտոբուսների քանակը:*

- Կիրովականում չորս տեղ կա, որ տոմս են ծախում, ավտոկայանի տարածքում են: Ամենաշատ տեղափոխողը մենք ենք և ավտոկայանը: Մենք աշխատում ենք հինգ օրը մեկ, նկատի ունեմ գնալը: Ապրիլից մինչև հուլիս ամենաշատ գնացող սեզոնն է:

- *Հինգ օրը մեկ ի՞նչ ավտոբուս է:*

- Իկարուս, 45 տեղանոց: Նստատեղերը չեն բավարարում, մարդիկ ստիպված ոտի վրա են գնում, ճիշտ է՝ ավելի էժան, եթե, ասենք մինչև Մինվոդ 20 հազար է, կանգնած՝ 15 հազար է: Չունենալու դեպքում էլ գնում են մարդիկ, եթե տեղ լինում է՝ տաբուրետով էլ գնում են: Ռուսաստանից ավտոբուսով են գալի, հասնում են Թիֆլիս, Թիֆլիսի միլիցիան վերջին շորերը հագից հանում ա, հետո Վլադիկավկազի միլիցիան էլ էնտեղ, էնտեղից էլ արդեն սոված, ծարավ...

- *Մարդիկ Ձեզ մուծում են, ասենք, էս 70 դոլարը մինչև Մոսկվա, իսկ այդ «ռեկետը» ինչքա՞ն գումար է իրենց վրա նստում, էդ միլիցան, տամոժնին և այլն:*

- Իրենց մոտ 400 ռուբլի է: Անցած տարի 200 էր, հիմա թանկացավ: Ռուսաստանի միգրացիոն սլուժբան մտցրեցին, որին 200 տալիս ես, 200 էլ փեչատն ա՝ ամեն անձի համար:

- *Ինչքա՞ն են կետերը, որտեղ պետք է մուծել:*

- Սահմանները սենց են. դուրս եկանք Հայաստանից, մտանք Վրաստան, Վրաստանից դուրս եկանք, մտանք Յուժնի Օսեթիա՝ Ցխինվալի: Որ Վրաստան մտանք՝ 50 ռուբլի, Յուժնի Օսեթիայում, որը Վրաստանին է պատկանում՝ 50 ռուբլի էլ էդտեղ, եղավ 100: Յուժնի Օսեթիայից մտնում ենք Սևերնի Օսեթիա, Ռուսաստան, 50՝ տամոժնին ա, 200 էլ՝ միգրացիոննի սլուժբան ա, էդ եղավ 350: Հետո իրանք պահանջում են պասպորտի ռուսերեն թարգմանությունը, օրինակ, ոչ ոք ֆրանսիացուց չի ուզի պասպորտի ռուսերեն թարգմա-

նությունը, իսկ հայերից պահանջում են: Հենց Ռուսաստան մտար, Կաբարդայի պոստը, պահանջում են էդ թարգմանությունը: Եթե ունենում ես, ասում են՝ ինչի՞ ես թարգմանել:

- *Եթե չունես, ինչքա՞ն ես գումար տալիս:*

- 50 ռուբլի: Ինքը 500 է ուզում, դու զոռով, համոզում ես, 50-ով դուրս ես գալիս: Իսկ եթե ունես էլ էդ թարգմանությունը, ասում է՝ դե լավ, գոնե 50 ռուբլի տուր ու գնա: Էսպես, ամբողջ գումարը իրար հետ բռնում է 400 ռուբլի: Իսկ էնտեղից էն կողմ մարդիկ էլ չեն տալիս, մնացածը վարորդն է տալիս: Վարորդը մինչև Ռոստով հասնելը 1400 դոլար ծախսում է ճանապարհին, սաղ իրար հետ, բենզինն էլ հետը: 200 դոլար միայն Վրաստան իր մուտքն ա, դա՝ պետական: Վրաստանից դուրս եկավ, մտավ Ռուսաստան՝ 7000 ռուսական ռուբլի, էդ էլ երկու հարյուր քանի դոլար է անում՝ ավտոբուսը պիտի մուծվի, որ մտնի Ռուսաստան:

- *Ուրեմն, եթե տոմսի միջին արժեքը 50 դոլար է, ուրեմն վարորդը իր 40 ուղևորը պիտի ունենա, որ իրեն շահավետ լինի աշխատելը:*

- Դե, շահավետ է, որ էնտեղից գալիս է՝ մի քիչ ապրանք է բերում, գործ են անում:

- *Իսկ էնտեղից դատա՞րկ են գալիս:*

- Մարդ լինում ա մեկ-մեկ: Դա էլ անհաջող խոպանչիներն են հիմնականում, ով, ասենք, գործ չի կարողացել լավ բռնի, տուն չի ճարել, որ մնա, հետ է գալիս, որ փող ճարի, մյուս տարի նորից պարտք անի, գնա:

- *Եկողները քանի՞ մարդ են: Ավտոբուսի կե՞սն է լցվում, ամբո՞ղջը...*

- Գիտե՞ք ոնց, ասեմ: Էն ամիսները, որ էստեղից հոսք կա, էնտեղից, որ 5 հոգով էլ են գալիս, ասում ենք՝ լավ եկավ: Շատը ստեղից են գնում: Իսկ էս ամիսները, որ, ասենք, Նոր տարին ա և այլն, 40, լինում ա, որ 50 մարդ էլ է գալիս: Դա ոչ մի շոֆեր ճիշտը չի ասի:

- *Փաստորեն դուք էդ տեղափոխությունների կազմակերպիչն էք: Ուրեմն իրենք մի բան էլ Ձեզ պիտի մուծեն:*

- Մենք մեր շահութահարկը ստանում ենք, ասենք, վաճառված տոմսից 10 տոկոսը գանձում ենք, իսկ մնացածը լրիվ հանձնում ենք վարորդին:

- *Վարորդը բոլոր հաճախորդներին ձեզնի՞ց է վերցնում, թե՞, այսպես ասած «տաբուրետկաներով» եկողները էլ ձեզ չեն դիմում:*

- Նայած:

- *Դուք ասացիք, որ բացի պետական մուծումներից վարորդը մուծում է նաև պոստերին: Դա ի՞նչ կարգի գումար է կազմում:*

- Ամենաքիչը պոստը 100 ռուսական ռուբլի է, որ չէր էլ ուզում կանգնացնի, ոնց որ զոռով կանգնես: Իսկ սովորաբար 500, մինչև նույնիսկ 1000 ռուբլի ուզում են:

- *Ինչքա՞ն են էդ կարգի պոստերը:*

- 5 հատ:

- *Էդ գումարը ավելի շատ է ստացվում, քան թե պետականորեն գանձվածը:*

- Պետությունը, ասենք, մենակ իրա, սև ճանապարհի համար է փող վերցնում, իսկ միլիցեքը՝ իրանց գրպանի:



- *Վրաստանն էլ է էդպես նեղու՞մ, թե՞ դա միայն Ռուսաստանում է:*

- Ավելի շատ Վրաստանն է: Միայն Թիֆլիս մտնելու համար, որ մի ծերից մտնում ենք ու մյուսից դուրս գալիս՝ ութ հատ միլիցիայի պոստ կա, ութն էլ յազվա, հայի նկատմամբ շատ վատ ձևով տրամադրված, վերին աստիճանի վատ: Ընդհուպ մինչև կանանց ստուգելը: Ես նույնիսկ զարմացա, որ մերոնք որոշել են Վրաստանին լույս տան, ես սկի հաց էլ չեմ տա, եթե սոված վրացու տեսնեմ՝ հաց չեմ տա, սա ազգ չի: Վրացին մեզ տառապանք ա: Հենց Վրաստանից դուրս ես գալիս՝ խաղաղ ձևով հասնում ես տեղ: Օսեթիայում քեզ սապրավաժդենեին[1] կա, քեզ ոչ մեկը էնտեղ չի նեղում, փողը տալիս ես, սապրավաժդենին քեզ տանում ա մինչև Կաբարդա հասցնում ա:

- *Օսերը ավելի լա՞վ են վերաբերվում հայերին:*

- Ոչ թե լավ են վերաբերվում, այլ Օսեթիա մտանք, հենց առաջին պոստում մարդ կա կանգնած, երկու հարյուր ռուբլի ես տալի, ինքը տանում մինչև իրանց սահմանը հասցնում ա:

- *Էդ ի՞նչ մարդ ա, տեղական «կրիշա՞ն» է, միլիցիա՞ է:*

- Միլիցիան, էնտեղ տեղական ռեկետը հենց միլիցիան է: Էնտեղի ռեկետը կարող է գա ասենք պապիրոս պահանջի, բայց միլիցիան 100-ից պակաս չի ունենում: Հետո Կաբարդան, էլի շատ վատ են: Մի հատ էսքան *(ցույց է տալիս մի կես մետր գետնից բարձր-Գ.Շ.)* լակոտ կգա ու մի 60 տարեկան մարդուն ապտակ կտա, ու դու չկարողանաս նույնիսկ պատասխանես: Եթե պատասխանես, կբռնեն, վրետ ինչ ասես կհնարեն:

- *Եղե՞լ են դժբախտ դեպքեր, լուրջ միջադեպեր:*

- Անցյալ տարի էր, ավտոբուսը Ռուսաստանից գալիս Թիֆլիս էր հասել, ավտոբուսը ավտոկայանում կանգնած միլիցիան էկել է ու, ոնց որ ռուսն է ասում, սկսել գրաբյոժը[2]: Թե՝ էս ինչ փող էք բերել, էս փողը Վրաստանով է անցնում, և այլն, և այլն, ու մոտ մի 1000 դոլար խլել էին, մի 7-8 հատ սումկա[3]: Դե որ մարդիկ եկան, բողոքում են, բնական է: Չնայած դա մեր գործն էլ չի, ի՞նչ կարանք անել: Ասի՝ տեսնամ էստեղ ինչ վրացու ավտոբուս կաշխատի: Իրանց ավտոբուսն ա էստեղ աշխատում, գնացի դրանց բռնեցի բերեցի, զանգեցի էդ պոստը, ասի՝ եթե հանկարծ չէք վերադարձնի, ես էլ ձեր վրացոց չեմ տալի, ու մեքենան էլ բռնագրավում եմ: Էդպես փողն ու ոսկիները վերադարձրեցին, սումկեքը, տեղ-տեղ դատարկած: Բայց էդ էլ էր բան, որ կարեցանք էդքանը վերադարձնել: Իրանք բերել էդ փողը հաշվել են, իրենց վրացոց բաց են թողել, տարել են: Բայց եթե էդ վրացին հիմա գա էստեղ ինձ վրա բողոքի, ինձ կնստացնեն, ինձ կնստացնեն հայ միլիցիոներները ու փող կուզեն: Իսկ էնտեղ սենց բան չկա: Կազմակերպված բռնում, տանում են տուպիկ[4] կոխում ավտոբուսը, ու խլում սաղ էղածը: Ում էլ դիմես՝ պետական ավտոկայանին դիմես, պետությանը դիմես, քեզ կպատասխանեն, թե քեզ ո՞վ ա թողել, որ դու գնաս Վրաստանի սահմանը անցնես: Չնայած որ իրավունքը ունես, լրիվ միջ-

1. *Ուղեկցողը:*
2. *Կողոպուտը:*
3. *Պայուսակ:*
4. *Փակուղի:*

պետական դոգովորները[5] կազմած, բայց պաշտպան չկա:

- *Ի՞նչ պայմանագիր էք կազմում:*

- Մենք պարիտետնիի միջոցով աշխատում ենք, էնտեղից էլ ունենք համաձայնություն, էստեղից էլ ունենք:

- *Իսկ իսկապես, իրավական հիմքը ո՞րն է, դուք իրավունք ունե՞ք այդ պոստերը անցնելու:*

- Հա, մեր ՍՊԸ-ն նման թույլտվություն ունի մեր պետությունից, նման թույլտվություն ես ունեմ նաև Մոսկվայից: Մոսկվայի տրանսպորտի և ճանապարհների նախարարությունը ունի պայմանագիր մերինի հետ, որ մենք կարող ենք օգտվել իրար ճանապարհներից: Բայց մեկ է, ոչ մի բան հաշվի չեն առնում: Մեր պետությունը չի կարող մեզ պաշտպանել:

- *Կոնկրետ այս դեպքում, եթե Ձեր համախորդները գային և բողոքեին ոչ թե Ձեզ, այլ պետական ինչ-որ մարմինների":*

- Պետությունը ոչ մի բան չէր կարող անել: Իմ բախտն էլ բերեց, էդ վրացիները կային, բռնեցի, դրանք չլինեին, ես էլ բան չէի կարող անել: Ասում եմ, եթե նույնիսկ էստեղի միլիցիան իմանա, ինձ կբռնեն, չեն ասի, որ էս մարդը էդ արել ա, որ վրացուց իր հացը պոկի, այլ ոչ թե արել եմ, որ իրենց ձեռից բան խլեմ: Ես վսեվո լիշ[6] ցանկացել եմ վերադարձնել:

- *Իսկ պետական ավտոբուսները պաշտպանություն ունե՞ն:*

- Նույնն է, տարբերություն չկա: Մենք հլե ավելի քիչ ենք ծախսում, որովհետև անընդհատ էդ ճանապարհին ենք, իսկ պետականը ամիսը մի անգամ է լինում, նրանք ավելի շատ են ծախսում:

- *Ի՞նչ առումով են ավելի շատ ծախսում:*

- Պոստերում, տարբեր զադերժկերում[7]: Օրինակ, մի ստից սպեկտոր[8], կարա գա քաշի ավտոբուսը աջի ու մի 5 ժամ պահի, թե որ պետք է, որ ավտոբուսի յուրաքանչյուր ուղևոր, մարդը 100 ռուբլի հավաքի տա քեզ: Մտնում ես պոստ, որ բարիշես, մի քիչ քիչ տաս, իսկ ինքը կարա պոստից դուրս գա, ավտոբուսը աջի քաշել տա ու ասի՝ ով ինչ վեչ ունի, հանեք, ստուգում եմ, զենք էք տանում, վսյո, նարկոտիկ: բայց ինքը իրավունք չունի նման բան անելու: Իսկ եթե օրենքով խոսես, գինն են բարձրացնում: Պիտի խնդրես, աղաչես, թող ոչ մեկը գլուխ գովա, թե գնա, ու լավ կլինի: Ես 1992 թ-ից էդ գործին եմ՝ ավտոբուս եմ տանում, բերում ու գիտեմ: Վրացոնց հայերը պիտի վաարշե չբողան էստեղ մտնել:

- *Մենք ուրիշ ճանապարհ չունենք:*

- Էդ է, էլի: Վրացին ազգ չէ: Հեռու մի գնա, որ մտնես Թիֆլիս, ինչ պոստ ուզում է, գնա մի երկու րոպե միլիցիայի կողքը կանգնի, տենց մեքենա չկա, որ անցնի ու պոստին փողը չտա, տենց բան չկա: Միայն Թուրքիայի ավտոբուսներն են, որ առանց փողի հանգիստ անցնում են, դե որովհետև դրանց պետությունը պետություն է, վրացիների ականջները նենց կքաշի: Իսկ մերոնց մոտ... ծուռ նստենք դուզ խոսենք: Էկավ վրացին՝ պայմանավորվեցինք:

5. *Պայմանագիր:*

6. *Ընդամենը:*

7. *Սպասավայրերում:*

8. *Ավտոտեսուչ:*



Վրաստանն արդեն սովոր է, իրանք 450 դոլար են ուզում, որ ավտոբուսը Վրաստանից հանեն, որը մենք ստիպված տալիս ենք, որ մարդկանց նադայել[8] չանեն: Մարդիկ գալիս են տարբեր ձևի, որի խոպան լավ չի էղել, որը փողով, որը անփող: Հիմա երեք սուտկա ճամփա են գալիս, որը ես առաջ 18 ժամում էի մտնում՝ Պյատիգորսկից մինչև Կիրով: Իսկ հիմի երեք սուտկա գալիս ես, որովհետև ամեն արժող-չարժող պոստ կանգնեցնում ա:

***Գայանե Շագոյան, Վանաձոր, 2001թ. դեկտեմբեր:***

8. *Այստեղ՝ չհոգնեցնեն, հունից չհանեն:*

# ԱՊՐՈՒՍՏ ՍՏԵՂԾՈՂԻՆ ԷԼ ԷՍ Է ԶԶՎԱՑՆՈՒՄ

*Զրույցը տեղի է ունենում մի խումբ տղամարդկանց հետ: Բոլորն էլ կամ արտագնա աշխատողներ են, կամ ընտանիքից արտագաղթած անդամներ ունեն: Տղամարդիկ 40-60 տարեկան են, միայն մի մեծահասակ մարդ կա, որին «պապիկ» էին ասում: Զրույցի մասնակիցների պայմանական անուններն են.*

1. *Կարո* - մոտ 50 տարեկան
2. *Վովա* - 40 տարեկանն անց է
3. *Սուրիկ* - մոտ 50 տարեկան
4. *Պապիկ*
5. *Արմեն* - 50-ին մոտ է
6. *Գարո* - 40 տարեկան
7. *Գարուն* - 55 տարեկան
8. *Ռոմիկ* - 42 տարեկան
9. *Դանիել* - 47 տարեկան

*Զրույցը տեղի է ունենում Վովային պատկանող ավտոտնակում:*

***Վովա*** - Թե ինչու՞ է ժողովուրդը արտագաղթում, ինչու՞ է գնում, ինչու՞ է մասնատված, ինչու՞ է աղքատ.-այս հարցերի մասին վերին խավի կարծիքը մի բան է, մեր կարծիքը՝ այլ բան: Իմ կարծիքով դա նախ պետության աղքատությունն է: Էն, որ նախկինում մենք սարի դոշի հողը ուղղել ենք, տափան ենք արել, հող ենք լցրել, ու հաց ենք ստեղծել, ուրիշ ժամանակների հարց է: Այսօր մարդիկ էլ էդ չեն անի: Չեն անի, որովհետև տեսան, որ իրանց արածին, իրանց ստեղծածին ուրիշները տիրացան: Մենք տափան արեցինք, հողը խլեցինք սարից, որ էսօրվա դրությամբ տանք ուրիշին, նրանց, ովքեր ոչ դրա գինը գիտեն, ոչ դրա վրա արված աշխատանքի գինը: Նեղացած գնում է Ռուսաստան, որտեղ միշտ էլ աշխատանք ունեցել է: Բայց էսօրվա դրությամբ Ռուսաստանն էնքան լցվել է էժան աշխատուժով, նախկին խորհրդային երկրներից էնքան սոված մարդ է գնացել, որ մեր աշխատանքի գինն էնտեղ էլ են գցել: Լավ հայ մասնագետն էլ հաճախ էնքան էժան գնով է աշխատում, որ հազիվ իրա գլուխն է պահում: Էլ ընտանիքի մասին չի էլ կարողանում մտածի: Մի տարի, երկու տարի՝ թքանում է, մոռանում է... Ու կարա էնդեղ բոյակ էլ դառնա: Էստեղ կարգին մարդ էր, ընտանիքով, պատիվ ուներ, կարող ա ընդեղ բոյակ դառնա, ու էդպես մարդն ավելի լավ է, որ իսկի չվերադառնա էլ... Չնայած էդպես էլ մեր ազգի անունն է գցում: Ես անձամբ գնացել եմ 1993թ.: Երկրաշարժից հետո ես շինարարության նյետ էի, էստեղ էլ շատ ռուսներ կային, հետները ընկերացել էինք: Կրասնոդարից: Զանգեցի, ասեցին՝ արի: Կնոջս ոսկեղենը ծախեցի, ճամփի փող արեցի ու գնացի: Բայց պետք է ավելի շուտ գնայի: 1988թ.-ից էդ մարդիկ էստեղ էին, լավ էլ մտերմացել էինք: Ինձ քանի անգամ ասեցին «արի Կրասնոդար, լավ աշխատանք էլ կլինի, տուն ու տեղ էլ»: Բայց էն տարիներին ամոթ էր գնալը, մեր տները քանդված՝ ուրիշ-



ներն էին շինում: Էդ մարդը, որ ինձ կանչում էր, հիմա էլ կա, Ռուսաստանում դեպուտատ է, անող մարդ է, առաջ գնաց: Նույն մարդն էինք, ինքը Ռուսաստանում աճեց, ես Հայաստանում տակ գնացի:

*- Բայց դու երկար տարիներ շինարարական բրիգադի պետ ես եղել, մի՞թե այնքան չունեիր կուտակած, որ մի քանի տարի ապրեիր, կամ այդ գումարով այստեղ գործ սկսեիր:*

***Վովա*** - Հա, շատ լավ եմ ապրել, իմ ունեցածը, ստեղծածը թոռներիս էլ պիտի հերիքեր, բայց Լևոն Տեր-Պետրոսյանը մի գիշերվա մեջ հավասարացրեց զրոյի: Ես ու իմ բանվորը մի գիշերվա մեջ դառանք նույն մարդը: Այսինքն մի գիշերվա մեջ բոլորս աղքատացանք: Մարդիկ իրանց թաղման համար փող ունեին հավաքած՝ կորավ գնաց:

***Սուրիկ*** - Իմ բոլոր ազգականները Ռուսաստան են՝ աներոջս տղաները, ախպերներս, նրանց երեխեքը, քիրս... Մենք ութ երեխա ենք եղել, հիմա էստեղ մնացել ենք երկուսը, ես ու Իջևան ապրող ախպերս: Բոլորն էլ ոչ թե երկրաշարժի ժամանակ գնացին, այլ՝ արտագաղթի: Գլուխներն առան փախան: Էգուց-մյուս օրն էլ եթե ինձ էլ մի քիչ փող տան՝ ես էլ կգնամ: Մնամ ի՞նչ անեմ: Եղբայրս Օդեսայում մահացավ, ես չկարողացա նույնիսկ թաղմանը գնալ: Հիմի մարդիկ էլ չեն կարողանում մեկը մյուսին պինդ բռնել:

***Գարո*** - Թոշակառու, 60-ն անց մարդիկ կորցնելու բան չունեն, նրանք կարան մնան: Բայց ես, որ 40 տարեկան մարդ եմ, գիտեմ, որ ոչ աղջիկս, ոչ տղաս ապագա չունեն էստեղ, որովհետև փող չունեմ, որ կրթության տամ, սաղ մաֆիա է գնում, ազգին դեբիլացնում են, դպրոցում էլ են փող ուզում: Էդ որտե՞ղ ա գրած, որ 500 դրամ հավաքեն, որ դպրոցի պոլը կրասկեն: Էդ մինիստրները դաչեքը ինչի՞ հաշվին են շինում: Ես նաղդ գիտեմ, որ որ եթե իմ 70 տարեկան ծնողները չլինեին, աղբերս 8 տարի է դուրս է եկել, Մոսկվայում է բնակվում, լավ ծանոթություններ ունի, ես վաղուց ընտանիքով գնացել էի էնտեղ, որովհետև իմ էրեխուն էստեղ ապագա չկա:

***Արմեն*** - Մեր էրեխեքի ապագայի հարցը շատ անորոշ է: Մի փեսա ունեմ, Ռուսաստանում կորած է: Կորած է, որովհետև չի կարողանում փող աշխատի, նույնիսկ մերը որ մեռավ, չկարողացավ գա, որ թաղի: Տյումենում է: Աղջիկս ու թոռս էլ ինձ հետ են ապրում: Համ դժգոհում եմ, համ ուրախանում, որ էրեխեն մոտս է: Էդ մի աղջիկն ունեմ, իրան կարողացա կրթության տալ, բայց հիմա թոռս դպրոցական է, չեմ կարողանում իրա կրթությունը բավարարեմ: Փեսես մի վեց տարի կլինի, որ գնացել է: Իրանք էլ շատ հաշտ, սիրով են եղել, հիմի երկուսն էլ մղկտում են, նա էնդեղ, սա՝ էստեղ: Առաջ օրվա տակին էլ, գլխին էլ եղբայրներիս տեսնում էի, հալը հարցնում, մի բանով օգնում: Հիմա ղալաթ կանի, եթե մեկը Տյումենից, Օդեսայից... երեք տարին մեկ կարողանա գա: Էդպես էլ կապերը կտրվում են, իրարից սառում են:

***Դանիել*** - Երեք երեխա էլ ես ունեմ: Փոքրը դեռ ամուսնացած չի: Երկու տղաներիցս մեկը էստեղ ամուսնացավ, կնոջը վերցրեց ու գնաց: Մի տարի էլ չմնացին: Նախ ինքը գնաց, հետո կնոջն ուղարկեցինք: Էդպես ավելի լավ է, որ գոնե ընտանիքը չի քայքայվի: Էրեխեն ընդեղ ունեցան: Հիմա Սամարայում են ապրում: Նրանից առաջ գնացել էր մյուս տղաս, որ դեռ ամուսնացած չի: Հենց նա էլ եղբորը կանչեց:

- *Իսկ այդ մի տղան ու՞մ մոտ գնաց:*

**Դանիել** - Իմ աղբոր տղեն արդեն էնտեղ էր, շինարարության վրա էր աշխատում: Նա կանչեց տղային:

- *Իսկ մինչ այդ տղաները խոպան չէի՞ն գնացել:*

**Դանիել** - Չէ, սովորում էին Պոլիտեխնիկում, ավարտեցին ու գնացին: Ու էնդեղ շինարարությունում են աշխատում: Ինքը լավ է, ծանոթի, բարեկամի վրա է գնացել, էնքան կա՞ն, որ դատարկ են գնում ու երբեմն էլ սոված են մնում: Մտածում են կամ դես կլնի, կամ դեն: Մոսկվայում շատերը սալդատսկի հանրակացարանում հենց պոլին էլ քնում են, էնքան՝ հացի փող աշխատեն: Ուզում են հետ գան, չեն կարողանում: Դոշերին տաբլիչկա են կախում, վրան գրած «Հայեր, փող տվեք, գնամ տուն հասնեմ»:

**Վովա** - Հա, ես էլ եմ շատ տեսել: Կրասնոդարում 10 ռուբլի կամ հիսուն ռուբլի են խնդրում, որ տոմսի փողը հերիքացնեն:

**Սուրիկ** - Վնուկովոյում, Մոսկվայում էլ շատ կան: Բայց շատը ստից է, ոմանք էլ իսկապես տոմսի համար են ուզում: Չեմյակ ասածը ըդտեղ անցնում է:

**Վովա** - 100 տոկոսով: Ես, օրինակ, Լոռեցի մարդ եմ, Երևանի, Լենինականի ժողովրդի վերաբերյալ էդքան հավատ չունեմ, որովհետև մի երկու անգամ քաշվել ենք: Մի օր վեշն ա վերցրել համարից գնացել, կամ եկել են գործի մեջ իրանց էշի տեղ են դրել: Իսկ լոռեցուն ես քարքարից էլ ջոկում եմ, պատահական մարդուն էլ ասում ես արի, գործ կանենք, ու կարող ա դա 100 անգամ ընկերոջիցդ լավը դուրս գա:

**Արմեն** - Սերոնք որ մնացել են, ի՞նչ օգուտ: Երկու տղա ունեմ, մի աղջիկ: Հենց էգուց էլ թե փող ընկավ ծեքները՝ կգնան:

- *Ինչու՞ եք այդպես հուսահատվել, կարծում եք այս երկիրն էլ չի սարքվելու՞, չի լավանալու՞:*

**Գարուն** - Չէ, ինչի՞, ոմանց համար կլավանա, բայց մասսայական չէ: Հետո էլ մտածում ենք, թե բա գոնե մի երկու ճարպիկ տղա էլ ա չմնա՞ն: Բա դրանք որ չլինեն, երկիրն ո՞վ ա լավացնելու: Էսպես որ գնա, կմնան մի 400-500 հազար մարդ:

**Պապիկ** - Ինձ իմ տարիքը չի թողում, թե չէ ես էստեղից վաղուց գնացած կլինեի: Վախում եմ գնամ հասնեմ ու մեռնեմ, ու ո՞նց բերեն էստեղ թաղեն: Թե չէ ես էս սրիկաներից ու խաբեբաներից շատ եմ զզված:

- *Մի՞շտ են մահացածներին ետ բերում:*

**Գարուն** - Ով կարողանում է: Կամ ով շրջապատ ունի:

**Վովա** - Անցած տարի Ստեփանավանի Ագարակ գյուղից մեկը մահացավ: Ինքը շատ ուժեղ էր, ուժի համար անունը «գազան» էին դրել: Գազանը որ մահացավ, էնտեղ աշխատող համագյուղացիները 1200 դոլար հավաքեցին ամեն ինչի համար, կնոջ ու երեխայի տոմսն էլ առան, դրին սամալյոտ ու ուղարկեցին: Հայի թասիբը էդ մոմենտով էլի մնացել է: Բայց Գազանը շրջապատով տղա էր, դրա համար: Թե չէ էնքան կան, որ մնում են անտեր: Էս մեր կողքի շենքից մեկն էլ է Ռուսաստան, Ապո են ասում: Վեց տարի առաջ ես եմ տարել էնտեղ գործի դրել: Հիմի 66 տարեկան է, լղարել, չոփ է դառել: Ասում եմ «Ապո, գնա, գնա Հայաստան, որ թաղումդ ծանր չնստի», ասում է «էստեղ ավելի լավ կթաղեն, տանն ի՞նչ կա, որ ինչ թաղեն»:



**Գարո** - Ես էլ տարվա 7-8 ամիսը Ռուսաստան եմ, 4-ը, ձմռան ամիսները էստեղ: Ծնողներս էստեղ են, 70 տարեկան են, նրանց պատճառով ընտանիքս չեմ տանում: Ախպերս Մոսկվայում է: Ես գտնում եմ, որ ով շուտ գնա, նա կշահի: Ես ու ախպերս Գերմանիայից ու Չեխիայից որ եկանք, երկրաշարժն եղել էր, մեզնից միայն թուղթ էին ուզում, որ մեր տները քանդվել են: Մեզ առաջարկում էին երեք սենյականոց կահավորված բնակարան: Հերս ասեց՝ բրախի արի: Եկանք: Մենք մարդս երկու ավտո ապրուստ էինք բերել: Մենք կյանք ենք տեսել, աղջիկս էնտեղ ապրել է: Հիմա իրենց շատ դժվար է էստեղի կյանքին հարմարվելը:

**Կարո** - Ես էլ եմ մեծ ընտանիք, ճիշտ է, մի երեխա ունեմ, բայց կինս, մերս, աղբերս եթե հաշվենք՝ լինում ենք հինգ անձ: Ես մեծն եմ, միջնակ աղբերս Մոսկվայում է, փոքրն էլ՝ ինձ հետ: Միջնակ ախպերս էստեղ պրապորշչիկ էր, գիծը պահպանում էր: Երեք հոգով գնացել էին, աշխատանքի էին ընդունվել: Մեկի հրամանը հուլիսի 4-ին էր եղել, մյուսինը՝ հուլիսի 5-ին: Էդ հուլիսի 4-ին աշխատանքի ընդունվածի աշխատավարձը 24 հազար էր, հինգին ընդունվածինը՝ 16 հազար: Պատճառաբանում էին հրամանի օրով: Թե ի՞նչն էր փոխվում,- նույն աշխատանքն էր: Մի օր էլ փեսես Մոսկվայից զանգեց, թե խադավիկի[1] գործ կանե՞ս: Ասինք՝ հա: Դեսից-դենից փողը հավաքեցինք, ուղարկեցինք: Ասել եմ թե գործ լինի՝ ինձ էլ կանչեք: Էսօր չգնանք՝ վաղը կգնանք: Հիմի էլ աղջիկ ենք ճարել, աղբերս էս երկու օրը կգա, կամուսնանա, կգնա:

- *Ինքը աղջկան տեսե՞լ է:*

**Կարո** - Չէ, դեռ չի տեսել, մենք ենք ճարել, հավանել, իրեն ասել ենք գա: Հիմի շատերը էդպես են ամուսնանում: Կամ մենք ենք աղջկա տեղն անում, կամ էնտեղի հայերն են տեղն ասում: Էս վերջերս Արճիս գյուղից մի տղա կար, էնդեղ տեղն ասել էին, եկավ էստեղից՝ Ալավերդուց աղջկան տարավ: Որ գնացել էինք ուզելու, աղջկա պապն ասեց «տարեք, գոնե էս մեկն էլ ա մի կուշտ փորով հաց կուտի»: Հենա Դանիելի տղան էլ է եկել էստեղ ամուսնանա, հետ գնա:

**Գարուն** - Ես երկուսն ունեմ, երկու տղա, մեկը էստեղ է, մեկը՝ Գերմանիա: Էդ Գերմանիայի տղիս կինն ու երեխեքը ինձ մոտ են: Փոքր տղաս էլ է ինձ հետ իր ընտանիքով, ինքն ավտո է քշում: Օրը 12-14 ժամ ռուլին նստած է, ջահել տղա է, բայց բոլոր օրգանները հիվանդ են՝ թոքերը, աղիքները, գեղձերը... : Գործից տուն է գալիս, մի քիչ քնում ու առավոտ շուտ՝ էլի ռուլին[2]: Եթե ավտոն աշխատում է: Որովհետև հին ավտո է, անընդհատ փչանում է, աշխատածի կեսը գնում է սարքելու վրա: Էլի ոչինչ, եթե էդքան չտանեն, էս ԳԱԻ-ն ա, էս՝ հարկայինն ա... Քաղը վերցնում են, տակի ջուրը հասցնում ա էրեխեքին: Էս պահին ընտանիքով 9 հոգի ենք՝ ես, կինս, երկու հարսներս, չորս թոռներս, տղաս: Բոլորս էլ իրա վրա ենք:

- *Բա Գերմանիայի տղադ չի օգնու՞մ:*

**Գարուն** - Չէ, նրա խերը դեռ չենք տեսել: Բայց, ճիշտն ասած, ինքը գնալիս մեզ շատ պարտքերի տակ գցեց, գոնե լավ է՝ էդ պարտքերը ուղարկեց,

*1. Մեքենա նորոգող:*
*2. Ղեկին:*

տվեցինք: Թե չէ տոկոսներն ամեն օր աճում էին: Բայց, ախպեր, էդ էլ չեմ ուզում, իրա ընտանիքը տաներ: Զահել հարս է, երկու փոքր երեխա, իրանց հորը հինգ տարի ա չեն տեսել: Ինքն էլ սկսել է քիչ-քիչ զանգել, հարսս էլ բան չի ասում, բայց տեսնում եմ, որ շատ է ազդված: Մտածում է, որ երևի ինչ-որ մեկի հետ կապվել է: Ու կարող ա հենց էդպես էլ ա: Էրեխեքը առանց հոր են մեծանում: Հոր մասին պատմում ենք, պատմում: Էրեխեքն էդպես հորը մենակ տեսությունով գիտեն:

*- Նա՞ ում վրա գնաց, ե՞րբ գնաց, ինչպե՞ս որոշեց գնալ:*

***Գարուն*** - Նա գնալու միտք չուներ: Անընդհատ ծեռը էստեղ-էնդեղ էր գցում, որ բալքի մի բանի կհասնի: 1996թ. ընտրություններին մեր թաղից երկու դեպուտատության թեկնածու կար, երկուսն էլ զոռբա էին ու հաստատ դրանցից մեկը կանցներ: Այսինքն թեկնածու շատ կար, բայց զոռբեն էդ երկուսն էին: Տղաներս իրար մեջ բաժանեցին, ամեն մեկը մեկի վրա աշխատում էր: Տղաներս էլ լավ շրջապատ, ընկերություն ունեն: Լավ թափով գործ արեցին: Իրանց հույս էին տալիս, որ մեկն ու մեկը կանցնի, ու որն էլ որ անցնի՝ իրանցից մեկը մի գործ կստանա, առաջ կգնա: Ու էդ մեծ տղիս փայը անցավ, դեպուտատ դառավ: Հենց հիմի էլ դեպուտատ ա, հետո նորից ինքն անցավ (տալիս է պատգամավորի անունը-Ա.Գ.): Բայց անցավ ու բոլորին էլ մոռացավ: Տղես, որ էդքան դրա համար գործ էր արել, մինչև ընտրվելն էլ վայ թե լավ ընկերներ էին, իրար հետ էին ուտում-խմում, էլ չկարողացավ դրա երեսը տեսնի: Ոչ մի գործ, ոչ մի բան: Դե սա էլ զզվեց, ասեց ես թողում եմ գնամ: Էդ ժամանակ, 1998թ.-ին ես էլ Սամարա գնացի, գործ էլ արեցինք, բայց էնդեղ էլ ինֆլյացիայի տակ ընկանք: Դոլարը վեց ռուբլուց դառավ 29, մենք էլ ռուբլով էինք գործ անում, մարդս 4000 դոլար պիտի ստանայինք, ստացանք 1000: Մի կերպ տոմս առանք, փախանք եկանք, որ չմնայինք էնտեղ: Իսկ տղաս Մոսկվա գնաց, քրոջս տղան էնտեղ է, մանր-մունր առևտուր է անում, նրա վրա գնաց: Չորս ամիս մնաց Մոսկվայում, չկարողացավ գործ ճարել, գնաց Տվեր: Տվերում էլ ախպորս տղեն է: Տվերի խերն է մնաց, որ շատից-քչից գերմաներեն սովորեց: Հետո եա է գնացել Մոսկվա, քրոջս տղան փող տվեց մինչև Լեհաստան, Լեհաստանից հետո էլ ոտով է գնացել: Դժվարը Լեհաստան հասնելն էր: Գերմանիայում էլ որպես փախստական է ներկայացել:

*- Գերմանիայից ուրիշ հետ եկող կա՞, Գարոյից բացի: Ճանաչում է՞ք էդպես մեկին:*

***Գարուն*** - Որ զոռով դուրս չանեն, ո՞վ կգա:

***Գարո*** - Ես Չեխիայից եմ հետ եկել: Ի՞նչ տարբերություն: Իմ կամքով եմ եկել: Եկել եմ երկրաշարժից հետո, 1989թ.: 1992-ին, 1993-ին էլ եմ գնացել, իմ ավտոյով գնացել եմ ու հետ եմ եկել: Ռոմիկն է Գերմանիայից հետ եկել:

***Ռոմիկ*** - Ես հետ եմ եկել ուրիշ նպատակով: Ծնողներս ապրում են սահմանի վրա, Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղում: Հարազատներս բոլորը էնտեղ են: Էն կռվի ժամանակներում իրանց ո՞նց բռախեի[3]: Ամբողջ ընտանիքով, կանայք էլ հետը, կռվին մասնակցել ենք:

***Վոլա*** - Դու արյունով հող ես պահել, բայց եթե մի զարաժի համար տեղ

3. Թողնեի:



ուզես՝ 500 դոլար պիտի տաս:

***Ռոմիկ*** - Ի՞նչ զարաժ, ես հիմի վարձով եմ ապրում: Ես զամկամանդիր դիվիզիոն եմ եղել, Քելբաջարի, Ֆիզուլու ռայոններն եմ վերցրել: Պատերազմից հետո հասել եմ զրոյի: Հիմա կոպեկ չունեմ, որ դուրս գամ, էսօր էլ ֆինանս ունենամ, հենց էսօր էլ կգնամ: Լեզուն էլ գիտեմ, տեղանքն էլ, ընկերներ էլ ունեմ: Աշխատող մարդու համար պրոբլեմ չկա:

***Վոլա*** - Աշխատող մարդու համար պրոբլեմն էստեղ է: Մեր ղեկավարության սխալներից մեկն էն է, որ ջահելներին հիասթափեցնում են, որ մի լավ բան չկարողանան անել: Այսինքն խաբում են, թեկուզ աշխատատեղի հարցով, թեկուզ ապրուստի հարցով: Ու գիտենք, որ էստեղ մեր էրեխեքին ապագա չկա: Իսկ իմ էրեխեն լավ սովորող ա, ինչի՞ հավասարվի գետնին: Կտանեմ էն պետություն, որտեղ նա մարդ կդառնա:

***Ռոմիկ*** - Ղեկավարությունը չի էլ ցանկանա, որ լավ մարդը էստեղ մնա: Լավ մարդը միշտ պիտի դրսում լինի:

***Վոլա*** - Դպրոցում մեր ազգին դեբիլացնում են: Դասատուին էրեխեն քոլորովին բանի տեղ չի դնում, դասատուն էլ ոնց որ չոբանի նման լինի: 6-րդ դասարանի գրքի մեջ մի բան չկա, որից երեխան մի բան սովորի: Ես ի՞նչ ծրագիր ընտրեցին, մի խնդիր չկա լուծելու, որից երեխան հասկանա, թե ինչպե՞ս պիտի լուծի: Դասատուն էլ չգիտի: Ասենք թե էստեղ նույնիսկ ուտելու հարցը լուծեցինք, բա մնացած հարցերը՞: Եթե միայն ուտելիքի, ստամոքսի հարց ենք լուծելու, դա ուրիշ բան է: Բայց ախր պիտի հեռանկարի, վաղվա օրվա համար մտածենք: Այ դա արդեն շատ դժվար խնդիր է, քանի որ մտածում ես, որ երեխան ինձանից լավ պիտի լինի, բայց պայմաններ չկան:

*- Միթե՞ արտասահմանում այդ հարցերն ավելի լավ են:*

***Ռոմա*** - Չվիճենք, էնտեղ կրթությանն ավելի են տեղ տալիս, ու պայմաններ էլ ստեղծում են:

*- Վոլա, բայց քո ընտանիքը կարծես թե լավ է ապրում:*

***Վոլա*** - Դե իրո հայ ժողովրդի ճակատագիրն ինձնով չի սահմանափակվում: Իմ հնարավորություններն ուրիշ են, բայց իրո բոլորը չունեն այդ հնարավորությունները: Ես էլ զզված եմ ուրիշ գծով: Հա, ապրուստ ունեմ, ավտո ունեմ, տուն ունեմ, ընտանիքս էլ կուշտ է ու շոր էլ կարողանում ենք առնել: Բայց որ համեմատում ես, տեսնում ես ինչքան են դժվարացնում էստեղ ապրելը: Հայաստանից մինչև դուրս ես գալիս, ներս ես գալիս, ամեն ինչ դժվար է: Տամոժնի, բան... Ամեն ինչ դժվար, խոսելու վրա, հանում ինչի՞... Եթե անծանկան ավտոյով մի տաս կգ կոնֆետ ես բերում, պիտի մտնես մեր տամոժնյան, պիտի մուծես 20 տոկոսը և ահագին փողեր էլ տաս: Հայ ազգը իրան լրիվ կորցրել է: Փողն է դարձրել կարևորը: Ումից կվերցնի, ինչ ճանապարհով կվերցնի՝ դա նրան չի հետաքրքրում: Ունի հնարավորություն, չունի՝ դա նրան չի հետաքրքրում... Սա՝ իրավունք չունես, դա՝ իրավունք չունես... Ախր թողել եմ, որ բերել եմ... էն երկիրը, որտեղից բերել եմ, թողել է: Իսկ եթե վճարեմ՝ ամեն իրավունքն էլ կլինի:

*- Կոնկրետ ասու՞մ են՝ ես մի բեր:*

***Ռոմիկ*** - Հա, ասում են: Ասում են վեշը քանդի՝ նայեմ: Ինչ տեսնում են, ասում են իրավունք չունես: Եթե տելեվիզորով տեսնում ես ամենի ինչը, ինչի՞

քանդեմ շաղ տամ:

- *Իսկ իրավունքի թուղթ չկա՞:*

***Վոլյա*** - Չկա: Բոլոր պետությունների տամոժնյաները մտնելիս կարդում ես правила таможни,- ի՞նչ գումար, քանի՞ կիլո և ի՞նչ չի թույլատրվում տանել: Օրինակ, պետություն կա, որ սիգարետ չի թողնում, որովհետև ինքն արտադրում է, բայց քանի որ դու ծխող ես, որոշ քանակ թույլ է տալիս վերցնել: Իսկ մեր քաղաքացին չի տեսնում այդ թուղթը:

***Գարուն*** - Էս բոլորը գալիս է նրանից, որ օրենք չկա: Գործող օրենք չկա: Ես պահանջել եմ, որ ինձ ցույց տան, թե ի՞նչն է թույլատրելի, ինչը՝ ոչ: Իսկ նա՝ «բա աշխատել ես, եկել ես, մի բան չես ուզու՞մ տաս»: Հա, աշխատել եմ, իմ քրտինքով, քեզ ինչի՞ փող տամ, թեկուզ 100 ռուբլի: Դե թող բերի, էլի, մեզ համար է: Փող ես բերում՝ ասում են շատ է: Եննտեղից 42 հազար թողում են... Ասում եմ, էլի, խսկի 10 կիլո կոնֆետը չեն թողում բերես:

- *Ինչու՞:*

***Վոլյա*** - Մի կիլոն տուր իրանց, իրավունք կունենաս: Մեր պետությունը սա ա: Էստեղ ապրելու համար ներվեր ու առողջություն է պետք, իսկ առողջությունը ֆինանսից է կախված: Ֆինանս չկա, առողջություն էլ չկա, և հակառակը, եթե առողջություն չունես... Գալիս ես Հայաստան, ու զզվում ես քո ազգից: Ամաչում ես, որ հայ ես ծնվել: Ուզում ես թքել, տուն-տեղ թողնել, գնալ: Այ, ապրուստ ստեղծողին էլ էս ա զզվացնում:

***Մի քանի հոգի*** - Բոլորն էլ զզված են գնում:

***Արա Գուլյան, 2002թ., Վանաձոր***



# ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՄ՝ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԸՆԴՀԱՏ ՍԿՍԵԼ

*Համարյա մենախոսություն*

Կիսլովոդսկից Հայաստան վերադառնալու որոշումը ընդունելուց հետո գնացի Պյատիգորսկ տունս գնելու: Կիսլովոդսկ եկել էի Հայաստանից որևէ աշխատանք սկսելու հույսով: Արդեն տաս տարի էր՝ տեղափոխվել էի Հայաստան, մի քանի անհաջող փորձեր էի արել աշխատանք սկսելու և, երբ այլևս երևակայություններս ու հնարավորություններս հասել էին զրոյական մակարդակի, իսկ պարտքերս՝ առասպելական թվերի, վճռական որոշում էի կայացրել գնալ Ռուսաստան և այստեղ և՛ս մի փորձ անել՝ կյանքը որևէ տանելի ընթացքի մեջ դնելու:

Հայաստան տեղափոխվել էի Տաջիկստանից հայտնի իրադարձություններից հետո, երբ ԽՍՀՄ տարածքի բոլոր ժողովուրդների ու երկրների նման տաջիկներն էլ ելք էին փնտրում «վերակառուցվելու»: Այդ նախնական շրջանում այս խաղաղ ժողովրդի «վերակառուցողական» տրամադրությունները դեռևս որոշակի իմաստավորված կերպարանք չէին ընդունել, և առաջին իսկ պատահական ալիքը իր ետևից տանում էր «վերակառուցվելու» ուղղությունները: Այսրկովկասում ղարաբաղյան իրադարձությունները գտնվում էին աննախադեպ փուլում, Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեն լցվել էր Սումգայիթից ու Բաքվից փախստական հայերով, որոնք իրենց տաջիկստանյան հայ ազգականների մոտ պատսպարան էին փնտրում: 1990-92թթ. Տաջիկստանում ապրող և նրանց մոտ եկած մի քանի ադրբեջանցիներ սկսեցին խոսել այն մասին, որ հայերն այստեղ՝ Տաջիկստանում շուտով պահանջներ կներկայացնեն, որ հայերը շատ բացասաբար են տրամադրված մահմեդական ժողովուրդների նկատմամբ, որ 1988թ. Հայաստանի երկրաշարժի զոհերին Տաջիկստանի կառավարության և տաջիկ ժողովրդի բարյացկամ օգնությանը Հայաստանում վերաբերվել են արհամարհական հեգնանքով և այլն: Սկզբում տարտամ վիրավորված խոսակցությունների մակարդակով, ապա ավելի ու ավելի կրքոտ որոշ տաջիկական խմբեր սկսեցին խոսել Տաջիկստանից նախ՝ հայ փախստականներին, ապա՝ առհասարակ հայերին վտարելու մասին: Հայերի Սումգայիթյան (1988թ.) և ապա՝ Բաքվի (1990թ.) ջարդերն այնքան թարմ էին, տագնապն այնքան մոտ ու հնարավոր էր, որ Տաջիկստանի հայերը արագորեն սկսեցին փախուստի ելքեր փնտրել, և երբ Դուշանբեի փողոցներում սկսեցին հայտնվել զինված ու մոլոր-ազդեսիկ հայացքներով երիտասարդների խմբեր, որոնք հրապարակում հայերին վտարելու և նրանց բնակարանները «խլելու» կոչեր էին անում, հայերն սկսեցին կուտակվել օդանավակայանում՝ որևէ կերպ երկրից հեռանալու ելքեր փնտրելով: Հայկական համայնքի այն ժամանակ նորաստեղծ ակտիվը որոշում կայացրեց, որ առաջին հնարավորությունը պետք է օգտագործել կանանց, տարեցներին ու

երեխաներին ուղարկելու: Օդանավակայանում կուտակված ու վախեցած մարդկանց հարաբերությունները խիստ ծանր հիշողություններ են թողել մեջս: Երբ հայտնի դարձավ, որ Տաջիկստանի կառավարությունը երեք ինքնաթիռ է հատկացրել ահաբեկված հայերի տեղափոխությունը կազմակերպելու համար, օդանավակայանում կուտակված մարդկանց մեջ շատ ծանր «առևտուր» սկսվեց: Վիզը հաստ, ամուր հայ տղաներ էին հայտնվում, որոնք փորձում էին կաշառել հայերի տեղափոխությունը կազմակերպող հայկական համայնքի ակտիվին՝ ինքնաթիռում իրենց համար «տեղ գնելու», մարդիկ գոռում էին իրար վրա, տարեց մայրերը, ում որդիները դեռևս մնում էին, չէին ուզում հեռանալ և լաց լինելով խնդրում էին իրենց էլ թողնել վերջին գնացողների հետ: Այս հակասական կրքերի, տագնապների, հուզմունքների, լացի, մտահոգությունների ու ծանր դավադրությունների մթնոլորտում հաջողվեց ինքնաթիռ նստեցնել ինչպես կանանց՝ երեխաների հետ, տարեցներին, և ուղարկել Հայաստան: Զանգեցինք Երևանում ապրող քրոջս, հաղորդեցինք նրան ինքնաթիռների մեկնման մասին, մի կերպ օդանավակայանից վերադարձանք քաղաք և որոշեցինք առայժմ փողոց դուրս չգալ:

Մենք՝ տղամարդիկս, և իրենց ամուսինների հետ մնացած մի քանի կանայք փոքր խմբերով տներում հավաքված դեպքերի զարգացմանն էինք սպասում, քանի որ ակնհայտ էր, որ երկրի իշխաններն ամեն ինչ անում են կրքերը հանդարտեցնելու համար: Պատուհաններից հետևում էինք ռազմատենչ կոչերով շրջող երիտասարդներին, խորհրդակցում էինք, թե նրանց կողմից հարձակման դեպքում ի՞նչ պիտի անենք, մեր հարևան տաջիկներին խնդրում էինք ուտելիք բերել և քննարկում էինք Հայաստան կամ Ռուսաստան տեղափոխվելու հնարավորությունները: Չնայած Տաջիկստանում մեր ապրած՝ տասնյակ տարիների խաղաղ կյանքին, ակնհայտ էր, որ այստեղ ապրել այլևս չենք կարողանալու:

Ոչ մի փորձ չեղավ մեր հեռախոսներն անջատելու, որքան ինձ հայտնի է, տաջիկ հարևաններից ոչ մեկն իրենց հարևանությամբ ապրող հայերի տեղը չմատնեցին, մեր ընկեր տաջիկները մեզ զանգում էին և մի տեսակ ամոթահար պատմում, որ մի քանի հայերի կրպակներ են ջարդվել ու թալանվել, մի քանի հայերի ծեծել են, նույնիսկ, որքան ինձ հայտնի է, մի հոգու սպանել էին, բայց դեպքերի զարգացումը հակահայկականից տեղափոխվում էր նախ սոցիալական հարթություն, ապա նաև քաղաքական: Ի հայտ էին գալիս հռետորներ, որոնք երկրի անկախության մասին էին խոսում, քաղաքական ռեժիմի փոփոխության մասին էին խոսում, և հակահայկականությունը աստիճանաբար դառնում էր երկրորդային: Այդ օրերին մեզնից մի քանիսը նույնիսկ փորձեր արեցին փողոց դուրս գալ, հրապարակ՝ ցուցարարների մոտ գնալ, երկուսը նույնիսկ օրերով կանգնում էին հրապարակում խմբված մարդկանց մեջ և լսում խոսակցությունները: Մի խոսքով, տագնապը որոշ չափով մեղմանում էր, և մի քանի օրից արդեն կարելի էր տոմս գնել ու հեռանալ երկրից: Ոմանք այդ օրերին նույնիսկ գնացքներով կարողացան իրենց տան գույքը տեղափոխել:

Ընտանիքիս ետևից ես էլ եկա Հայաստան: Այդ օրերին Տաջիկստանում բնակարանների վաճառքի մասին մտածել դեռ հնարավոր չէր, և տեղափոխ-



վողները մեծ պրոբլեմներ ունեին նոր տեղերում գլխին ծածկ ունենալու հարցը լուծելու կապակցությամբ:

Հայաստանը լցված էր փախստականներով, երկրաշարժից հետո երկրում գլխին տանիք չունեցող մարդկանց ահռելի թիվ կար: Իշխանություններից որևէ օգնություն սպասել անիմաստ էր, և ես իմ ու իմ ազգականների բոլոր հնարավորությունները գործի դրեցի Երևանի արվարձաններից մեկում բնակարան գնելու: Հայաստանում սկսվել էր էներգետիկ ճգնաժամը, հոսանք չկար, ջեռուցում չկար, նույնիսկ հաց չկար, աշխատատեղերը կրճատվում էին գլխապտույտ արագությամբ, այնպես որ ընտանիքիս ամենաառաջին պրոբլեմը՝ բնակարանի հարցը լուծելուց հետո գնացի Ռուսաստան որևէ աշխատանք գտնելու հույսով: Սկզբում կարծես թե ամեն ինչ հաջող էր գնում: Հնարավոր եղավ մի քանի մարդկանցով ներկի արտադրություն կազմակերպել, ընտանիքիս որոշ գումար էի ուղարկում գոյատևելու համար, և փորձում էի մաս-մաս վճարել բնակարանի գնման համար արված պարտքերս: Մեզ շատ էր նեղում այդ տարիներին Ռուսաստանի հարավում ակտիվ ձևեր ընդունած հակահայկականությունը, հատկապես կազակների կողմից հրահրվող տրամադրությունները: Անընդհատ գալիս էին հարբած կազակներ, հոխորտանքով խոսում էին մեր կողմից իրենց հայրենիքը գաղութացնելու, նվաճելու մասին, ինչ որ գումարներ էին պահանջում: Այդ հակահայկական հիստերիան լարվում էր հատկապես ադրբեջանցիների կողմից տարածվող այն լուրերով, թե իբրև հայերը աշխարհակալական տրամադրությունների ժողովուրդ են և Ռուսաստանում հաստատվելու նրանց փորձերը ծրագրավորված քաղաքականության թելադրանքով է: Դիմում էինք ոստիկանությանը՝ ապարդյուն: Տեղի հնաբնակ հայերը ինչ որ փորձեր էին անում մեզ պաշտպանելու, բայց Ադրբեջանից և Աբխազիայից փախստական հայերի այնքան մեծաթիվ բանակ կար, որ նրանք նույնիսկ մեր իսկ ներկայությունից նեղվում էին: Նրանց ավանդական հարաբերությունները տեղացիների հետ վերաիմաստավորվում էին, և տեղի հին հայերը նույնպես «ինքնադրսևորման» խնդիր ունեին: Տարածքում աշխատելու մեր փորձերը շատ էին դժվարացնում նրանց կյանքը: Աշխատանքի արդյունքի մեծ մասը գնում էր բազմաթիվ անօրինական պահանջատուների, այդ թվում նաև ոստիկանության ախորժակը փակելուն: Հարաբերություններն առանց այն էլ սրված էին, և առարկելու բոլոր փորձերը դատապարտված էին ագրեսիվ բախման: Թերևս ամենաճիշտը կաշառքը կամ այն ստվերային հարկերն էին, որ մենք վճարում էինք անընդհատ: Արդյունքում շատ չնչին բան էր մնում ընտանիքներին ուղարկելու, իսկ արտադրությունը ընդլայնելու մասին խոսք լինել չէր կարող: Աշխատում էինք ուժերի գերլարումով, անընդհատ զսպելով զայրույթը, փորձում էինք պահել հանդարտությունը և անհաջող փորձեր էինք անում բարիդրացիական հարաբերություններ ձևավորել պահանջատուների հետ:

Հայ փախստականների մեջ էլ շատ մարդիկ կային, որ աշխատանքի հույսը կորցնելով, գոյատևում էին մանր գողություններով, և նրանց գոյությունն ինքնին խտացնում էր բացասական հակահայկական մթնոլորտը: Մենք՝ ինչ որ կերպ աշխատող հայերս, փորձում էինք օգնել նրանց, նախ մարդկայնորեն թեթևացնելու նրանց անելանելի գոյությունը, երկրորդ՝ այդ ձևով մեղ-

մացնելու, նվազեցնելու նրանց բացասական վարքը: Բայց փախստականների թիվը մեր համեմատ ահռելի էր, և մեր նվազ միջոցներով այս հարցերը լուծել գործնականում հնարավոր չէր: Երկրամասային իշխանություններն էլ օրը մի որոշում էին ընդունում, որոնք միտված էին ներգաղթի տասնյակ ճանապարհները փակելուն, գրանցումը դժվարացնելուն և այլն: Արդյունքում ամեն ինչ ի վերջո հանգում էր կաշառքների գումարների ավելացմանը:

Այդ օրերին մի անգամ գնացի Հայաստան: Չնայած ընդհանրապես գիտեի, թե ինչ է այնտեղ կատարվում, բայց այն, ինչ տեսա, շատ ավելի ծանր էր: Ձմեռն էր: Երեխաներս հավաքվել էին մի սենյակում, որտեղ վառարան էր դրված: Վառարանը շատ վատ էր վառում, փայտը թաց էր, տունը լի էր ծխով: Ցուրտ էր և շատ ճնշող: Գումարները, որ ես կարողանում էի ուղարկել ընտանիքիս, հազիվ հերիքում էր հացին ու վառելիքին: Երեխաներիս աչքերում դատապարտվածության և հուսահատության կնիք էր հայտնվել: Մտածեցի մնալ ընտանիքիս հետ և փորձել Հայաստանում աշխատել: Ամեն ինչից բացի այստեղ որոշ չափով կազատվեի նաև ամեն օր հայ լինելուս համար արդարանալու ամենօրյա սիրտ մաշող տառապանքից:

Որոշեցի այստեղ նույնպես արտադրություն սկսել: Մտածում էի, որ արտադրությունը ճիշտ է, դանդաղ, բայց աշխատելու ամենահուսալի և արդարացված միջոցն է: Հետո էլ հայրենասիրությունը դեռ շատ ուժեղ էր, գտնում էի, որ արտադրությամբ պիտի նպաստեմ երկրի տնտեսության զարգացմանը և դեռ մի քանի մարդու էլ աշխատանք կտամ: Շատերը առևտրով էին զբաղված և կարծես թե ֆինանսապես արդարացված էին: Բայց ես սովոր էի արտադրության և առևտուրը մի տեսակ անորսալի, անպատվաբեր էի համարում: Գործընկեր գտա, կրկին պարտքեր արեցինք, աշխատանքը սկսեցինք: Վարկ գտնել հնարավոր չէր. Հայաստանում վարկերը տալիս էին ծանոթություններով կամ այնպիսի պաշտպանված երաշխիքներով, որ ես, անշուշտ, չունեի: Պարտք վերցրինք մասնավոր մարդկանցից՝ գործընկերոջս ազգականներից: Բոլոր հաշվարկներով վստահ էինք, որ մի տարուց պարտքերը կվերադարձնենք: Երկու տարի տևեց աշխատանքը՝ նախապատրաստությունը, ընթացքը և տխուր մարումը: Մինչ մենք նախապատրաստվում էինք արտադրանքի առաջին արդյունքը սպառողին հասցնել, Հայաստանը լցվեց նախ արաբական երկրներից բերված էժան ներկով, ապա եվրոպական, հատկապես գերմանական լավորակ ներկով: Այդ տարիներին ապրանք ներմուծելու հնարավորություն Հայաստանում ունեին միայն իշխանության կամ իշխանությանը շատ մոտ կանգնած մարդիկ, ովքեր օգտվում էին մաքսային և հարկային ստվերային արտոնություններից, և նրանց ապրանքը շատ էժան գին էր ունենում: Մեր արտադրած ներկի ինքնարժեքն անգամ բարձր էր երկրում վաճառվող ներկի շուկայական արժեքից: Գործը տապալվեց, գործընկերոջս ահաբեկված ազգականները հասկանալի ճնշում էին գործադրում պարտքերը վերադարձնելու ուղղությամբ: Գործընկերս ինձ էր նայում դատապարտող հայացքով և աստիճանաբար մարող հույսով: Շատ չարացած էինք. երկիրն ամեն ինչ անում էր իր ժողովրդի ոտքի տակից հողը հանելու և ուրիշներին ամրապնդելու համար: Մի քանի տարի էր անցել անկախացումը հայտարարելուց հետո, և Հայաստանում որքան ուզեք ինքնավստահ ստա-



րականներ կային, ովքեր զննում-գտնում էին լավագույն կառույցները, սեփականում էին դրանք և իրենց ուզած ուղղություններն էին թելադրում: Ղարաբաղյան պատերազմից վերադարձած կամավորների մեծագույն մասը թշվառ գոյության էր դատապարտվել, մինչ նրանք կռվում էին, նրանց սպաների մի մասը նորելուկ իշխանավորների հետ տաքուկ տեղերն էին զբաղեցրել և ավարտում էին այսպես կոչված «սեփականաշնորհման» գործընթացը, որ ժողովրդի մեջ «թալան» անունն էր ստացել: Կողքից նայելով նորելուկ հարուստների արագորեն կառուցվող պալատներին, շարունակ հիշում էի այն ցավալի վավերացումը, որ աշխարհի մեծագույն հարստությունների կուտակման հիմքում պատերազմներն են եղել:

Սակայն ոչինչ չանել չէր կարելի: Ինքս ինձ վրա հոգեբանական գրոհ կատարեցի՝ առևտրական գործունեության անցնելու: Վստահությունս, թե նվիրումով աշխատելու դեպքում կհաղթահարեմ այդ աշխատանքն անելու հոգեբանական բարդույթս, սնվում էր երեխաներիս մոտ ձևավորվող աղքատության գիտակցությամբ և այդ աղքատության թելադրած թերարժեքության արդեն նկատվող բարդույթներով: Մեկ տարի առևտուր սկսելու անհաջող ձեռնարկումներից հետո կրկին վճիռ կայացրի գնալ Ռուսաստան. այլ ելք չէի տեսնում: Երեխաները մեծանում էին անհեռանկար ապագային ընդառաջ, և այս անհուսությունը կոտրում էր հպարտությունն ու մարդկային արժանապատվությունը: Հայաստանում ակնհայտ էին դարձել հաղթող կողմերը. դրանք առանձին, միմյանց հետ ամուր թելերով կապված ընտանիքներ էին, մի քանի ընտանիքներ, որոնք իշխում էին բոլոր լծակներին՝ իշխանությանը, փողին, կապերին, հնարավորություններին, նույնիսկ բնական պաշարներին՝ ջրին ու անտառին: Հայաստանը աղքատանում էր ուղղակի աչքի առաջ, և աղքատացմանը զուգընթաց՝ չարանում էր: Աղքատացողները չարանում էին անզորությունից, անհուսությունից, երբեմն՝ ուղղակի սովից, հարստացողները չարանում էին աղքատացողների չարությունից: Երկրում սովին ու ցրտին ավելանում էր կարեկցանքի պակասը և անամոթությունը: Անկախացած Հայաստանում որևէ հնարավորություն ունեին միայն իշխանությունը զանազան ձևերով՝ փողով, ազդեցությամբ, պաշտոնով և այլն մասնակցողները: Ես ոչ մի կապ չունեի այդ մարդկանց հետ, իսկ երկրի ներսում իշխող հարաբերությունները այդ խմբերից դուրս գտնվող բոլոր մարդկանց նախաձեռնությունները դատապարտում էին անհաջողության: Մեջս հասունանում էր վստահությունը, որ Հայաստանում անիմաստ է կրկին փորձ անել, հատկապես, որ շուրջս այլևս մարդ չէր մնացել, ում հետ կարող էի որևէ բան սկսել: Եղբայրս, որ նույնպես Տաջիկստանից էր տեղափոխվել, ինձ նման մի քանի անհաջող փորձերից հետո դառնացած վաճառել էր բնակարանը և ընտանիքի հետ տեղափոխվել Եվրոպա, որտեղ անորոշ ու անհասկանալի մի գոյություն էր շարունակում: Ինձ շրջապատող մարդիկ նույնպիսի անհաջողակներ էին, ինչպիսին ես էի, ավելին, նրանք դեռ ինձնից էին սպասում որևէ վճռական գործողության: Դեռ 45 տարեկան եմ,- մտածեցի,- բավական հարուստ փորձ ունեմ, կոմունիստների ժամանակ մշտապես երազել եմ ինքնուրույն հնարավորությունների մասին, հարկավոր է ամեն ինչ նորից սկսել: Ռուսաստանից հուսադրող տեղեկություններ էին գալիս այն մասին, որ երկրի նոր պրեզիդենտի

Պուտինի իշխանության գալուց հետո որոշ չափով կարգավորվել են աշխատանքային հարաբերություններն ու հնարավորությունները. Ռուսաստանի ու Հայաստանի միջև համաձայնագիր էր ստորագրվել երկու երկրների քաղաքացիների աշխատանքային իրավունքների մասին, Ռուսաստանում Հայաստանի քաղաքացիները կարող էին լեգալ աշխատել: Որոշեցի կրկին գնալ Ռուսաստան:

Մի լուրջ բարդություն կար: Այս տաս տարիների ընթացքում ես որևէ երկրի պաշտոնական քաղաքացի չէի դարձել: Ինձ մոտ շարունակում էր մնալ Տաջիկստանի սովետական անձնագիրը, ԽՍՀՄ այլևս չկար, որի քաղաքացին էի տաս տարի առաջ: Հայաստանում երբեք չէի դիմել իշխանություններին քաղաքացիություն ստանալու: Միշտ մտածում էի, որ Տաջիկստանի հետ իրավական հարցերս դեռ չեմ կարգավորել և իրավունք չունեմ Հայաստանում քաղաքացիություն խնդրելու: Այս ընթացքում ինձ ծանոթ բոլոր երեք երկրներում՝ Տաջիկստանում, Հայաստանում և Ռուսաստանում կատարվել էին անձնագրային փոփոխություններ, նախկին խորհրդային անձնագրերը ուժը կորցրած էին ճանաչվել: Բացի այդ, իմ տրամաբանությամբ Ռուսաստան պետք էր գնալ որպես Հայաստանի քաղաքացի: Դիմեցի Հայաստանի ՆԳ բաժին, ասացին, որ անհրաժեշտ է Տաջիկստանի զինվորական կոմիսարիատի հաշվառումից դուրս գալ, Հայաստանում կանգնել հաշվառման, որից հետո նոր կքննարկվի Հայաստանից անձնագիր ստանալուս հնարավորությունը: Մի քանի անգամ գրեցի Տաջիկստան, ոչ մի պատասխան: Խնդրեցի Հայաստանի զինվորական կոմիսարիատին, որ իրենք պաշտոնական հարցում անեն: Մերժեցին, ասացին՝ դա մեր գործը չի, ինքդ լուծիր քո խնդիրը: Տաջիկստան գնալ չէի կարող, նախ՝ անձնագիր չունեի, որով կարողանայի ինքնաթիռի տոմս գնել, երկրորդ՝ ճանապարհը շատ թանկ էր: Մի խոսքով որոշ կաշառքով հաջողվեց հարցը լուծել առանց զինվորական իշխանությունների ներգրավման և անձնագիր ստացա:

Զանգեցի Կիսլովոդսկ, որտեղ մի ազգական ունեմ, որոշ հարց ու փորձ արեցի, 500 դոլար կրկին պարտք արեցի (զարմանում եմ, որ դեռ կարողանում եմ պարտք անել) և մեկնեցի: Երեք ամիս տևեց, մինչև վերջնականապես համոզվեցի, որ իզուր եմ եկել: Ռուսաստանն իրոք շատ էր փոխվել, երկիրը եռում էր նախաձեռնությունների ու աշխատողների պահանջից: Շատ բան կարելի էր անել, բայց... Դրամ էր պետք, գոնե երկրում գրանցում «գնելու» (այստեղ էլ ամեն ինչ վաճառվում է), իրավապես ձևակերպվելու և որոշ նախնական ներդրում անելու համար: Այն խղճուկ փորձերը, որ ես արեցի բացառապես մարդկային եռանդի՞ շնորհիվ, ևս մի անգամ ապացուցեցին, որ իշխանությունների նեցուկ կանգնելու դեպքում այստեղ շատ բան կարելի է անել: Բայց ինձ կանգնեցնում էին յուրաքանչյուր քայլափոխի, ստուգում փաստաթղթերը, ճանկածանքով զննում ոտքից գլուխ և... փող ուզում: Փող ուզում էին ցանկացած առիթով և անառիթ, ուղղակի որովհետև սև ես, այսինքն՝ ռուս չես, որովհետև Հայաստանից ես, գրանցումդ մեկ օր ուշացրել ես, հագուստդ մաշված է... Ամեն ինչ կասկած էր ներշնչում, կամ գոնե այդպես էին ձևացնում, և ամեն օր հսկայական ինքնատիրապետում էր պետք՝ չպոռթկալու, չգոռալու, չխփելու... Իսկ այդպես անելու դեպքում՝ արդեն հսկայական



գումարներ... Գրանցվել էի Կիսլովոդսկում, և գրանցման պայմաններից մեկն այն էր, որ կարող էի Կովկասի հանքային ջրերի վրա նստած քաղաքներում ազատորեն շրջել: Սակայն բավական էր Կիսլովոդսկից դուրս գայի, մնացած քաղաքներում ցանկացած ոստիկան կարող էր ապացույցներ պահանջել, որ ես «հենց այսօր եմ դուրս եկել Կիսլովոդսկից», պետք էր ցույց տայի էլեկտրագնացքի տոմսակը, խոսեի խիստ հանդարտ, հավասարակշռված, առանց հուզվելու, առանց գրգռվելու, համոզված:

Տեսա, որ այլևս չեմ կարողանում: Ես միայն աշխատել եմ ուզում, առանց գլուխս պահելու, նվիրվածությամբ: Դրա փոխարեն անընդհատ և բոլորին պիտի համոզես, որ դու սրիկա չես, գող չես, տեռորիստ չես, և այդ ամենը ոչ թե նրա համար, որ իրապես գողերին, սրիկաներին ու տեռորիստներին են դեմ, այլ՝ որովհետև փող են ուզում: Պատրաստ էի նաև անընդհատ այդ փողը տալ, եթե ունենայի: Թողնեին աշխատեի, ազնվորեն աշխատեի, և տայի: Բայց աշխատել չէի կարողանում, փող չունեի, մնում էր միայն անարգանքը, տագնապը, շարունակական ինքնազսպանքի անհրաժեշտությունը: Հարկավոր էր տուն վերադառնալ, Հայաստան: Գնալու ուրիշ տեղ ուղղակի չունեի, որևէ որոշակի ծրագիր չունեի, բայց մտքիս մեջ հյուսվում էր հերթական որոշումը. գնալ Հայաստան, վաճառել բնակարանը, վերադառնալ Ռուսաստան, փորձել կրկին սկսել: Վախ կար անշուշտ: Բնակարանն այն ամենն էր, ինչ մնացել էր: Եվ ահա ես եկա Պյատիգորսկ՝ Հայաստան գնացող ավտոբուսի տոմս գնելու: Ինքնաթիռի դրամ չունեի, պետք է ավտոբուսով գնայի, որը գնում էր շատ դանդաղ և, ինչպես զգուշացրել էին, բոլոր հնարավոր ու անհնար կանգառներում ժամերով կասեցվում էր ճանապարհային ոստիկանության կողմից:

Պյատիգորսկում առաջին իսկ հանդիպած ոստիկանը փաստաթղթեր պահանջեց: Տվեցի անձնագիրս: Խուզարկու հայացքով ոտքից գլուխ զննելուց հետո ոստիկանն ասաց, որ խախտել եմ գրանցման կարգը. Ռուսաստանում հարկավոր է գրանցվել երեք օրվա ընթացքում, իսկ իմ գրանցումը չորրորդ օրով է: Կրկնեցի տասնյակ անգամ արած պատմությունը՝ Ռուսաստան եկել եմ հինգշաբթի (սովորաբար ինքնաթիռի տոմսս ցույց էի տալիս, և այս անգամ էլ ցույց տվեցի), ուրբաթ հնարավոր չեղավ գրանցվել, շաբաթ-կիրակի բոլոր հիմնարկները փակ էին, իսկ երկուշաբթի արդեն գրանցվել եմ: Իհարկե չհամոզեցի, փող ուզեցին: Ասացի, որ փող չունեմ: Սկսեցին խուզարկել: Փորձեցի առարկել, վկաներ պահանջել: Հեգնանքով նայեց, քմծիծաղ տվեց, («ախ, քեզ վկանե՞ր են պետք, լավ, կգնանք տեղամաս, վկաներ կբերենք, միաժամանակ կպարզենք, թե ինչու՞ դեմքդ նման է տեռորիստներից մեկի տեղամասում կախված լուսանկարին») և գրպանիցս հանեց տոմսի համար նախատեսված գումարը՝ 2000 ռուսական ռուբլի: Ասացի, որ տոմս պիտի գնեմ, Հայաստան եմ վերադառնում: Առանց խոսելու հաշվեց 300 ռուբլի, վերցրեց, մնացածը ետ վերադարձրեց և ասաց, որ ազատ եմ: Սուս ու փուս շարունակեցի ճանապարհս: Ներսս վիրավորանքից եռում էր, բայց ամեն ինչ անում էի, որ դեմքիս չարտահայտվի. եթե կրկին կանգնեցնեն, կրկին փող է արժենալու:

Տոմսակղում ասացին, որ Պյատիգորսկ-Երևան ուղեվարձն արժի 1450

ռուբլի, բայց տոմս գնելու անհրաժեշտություն չկա, կարող եմ դրամն անմիջապես վարորդին տալ: Վարորդին գտա, հետը պայմանավորվեցի հաջորդ օրվա համար և վերադարձա Կիսլովոդսկ: Այստեղ ազգականս և նրա հետ աշխատող տղաներից մեկը խնդրեցին մի քիչ գումար տանել Հայաստան, առաջինն իր ազգականներին, երկրորդը՝ իր ընտանիքին: Այդ «մի քիչը» 350 ԱՄՆ դոլար էր: Միաժամանակ զգուշացրին, որ ավելի լավ է փողը թաքցնել, քանի որ ճանապարհին ստուգում են և կարող են ձեռքիցս վերցնել:

Հաջորդ օրը եկա Երևան ուղևորվող ավտոբուսների կանգառը: Մոտ 60 տեղանոց ավտոբուս էր, գնացողները 40 հոգի էին: Ավտոբուսները լիքն են գալիս Հայաստանից, բայց Ռուսաստանից վերադառնում են կիսատ, հիմնականում տանելով ինձ նման հուսախաբված անհաջողակներին: Վարորդը հավաքեց ուղեվարձը և շարժվեցինք: Ես խնդրեցի վարորդին վերցնել նաև իմ մոտի 350 դոլարը, բայց նա հրաժարվեց: Համենայն դեպս խորհուրդ տվեց պահել, թաքցնել: Չգիտեի՝ որտեղ թաքցնեմ, ուղղակի դրեցի պիջակիս ծոցագրպանում: Մեկնեցինք լուռ, տխուր, ամեն մեկը՝ իր մտքերի հետ: Բոլորի մեջ տագնապ կար, անհանգստություն՝ թե ինչ է լինելու ճանապարհին: Նատերը բավական փորձված էին և տխուր բաներ էին պատմում: Ոմանք ապրանք էին տանում վաճառելու և անհանգիստ էին իրենց ապրանքի համար, ուրիշները ուղղակի դժբախտ էին զգում իրենց անհաջողություններից:

Հենց որ մտանք Կաբարդինո-Բալկարիա, ավտոբուսը կանգնեցրին մաքսավորները: Երեք հոգի էին, մռայլ, անտրամադիր, կոպիտ: Պահանջեցին դուրս գալ ավտոբուսից, մեկն սկսեց ստուգել ավտոբուսը, մյուսները՝ ուղևորներին: Պահանջեցին հայերեն չխոսել, միայն ռուսերեն: Իրենք միմյանց հետ ռուսերեն չէին խոսում, խոսում էին կամ կաբարդերեն, կամ բալկարերեն: Փորձեցի լարել ուշադրությունս, լեզուն թուրքերենի նման չէր, մտածեցի, որ կաբարդերեն են խոսում, բայց վստահ չեմ: Պահանջեցին նախ անձնագրերը: Իմ չարաբաստիկ անձնագիրը կրկին ուշադրություն գրավեց՝ «ինչու՞ երեք օրվա ընթացքում չես գրանցվել»: Կրկնեցի պատմությունը: Անձնագիրը լուռ վերադարձրին և փող ուզեցին. «100 դոլար»: Ասացի, որ փող չունեմ: Սկսեցին խուզարկել, հանեցին 350 դոլարը: «Ինչու՞ հայտարարագրված չէ»: Ասացի, որ Ռուսաստանի օրենքներով մինչև 500 դոլարը չի հայտարարագրվում: «Ով քեզ այդ օրենքները բացատրել է, նրա մոտ էլ գնա, իսկ իմ կարծիքով դու այս փողերը ուղղակի գողացել ես, կգաս տեղամաս և այնտեղ բացատրություն կտաս: Միաժամանակ կբացատրես, թե որտեղի՞ց է ծանոթ ինձ քո դեմքը: Կարծեմ մեր տեղամասի ոստիկանության կողմից փնտրվող մարդկանցից մեկի լուսանկարը կպարզաբանի այդ խնդիրը»: Ողջ ինքնատիրապետումս հավաքելով սկսեցի համոզել, որ դրամը իմը չէ, որ եթե ես այդքան դրամ ունենայի, կգնայի ինքնաթիռով: Երկար սակարկելուց հետո համաձայնվեցին 50 ռուբլով թույլ տալ ինձ ճանապարհս շարունակել: Մյուս ուղևորները նույն վիճակում էին, բայց երեքի խնդիրը ավելի բարդ էր: Նրանցից երկուսը սովետական կարմիր անձնագրերով էին, իսկ մի տարեց մարդ առհասարակ անձնագիր չուներ և ցույց էր տվել միայն զինվորական գրքույկը: Այս երեքի համար «փրկագին» պահանջեցին՝ յուրաքանչյուրի համար 100-ական դոլար: Բոլոր երեքն էլ համառորեն պնդում էին, որ փող չունեն:



Մաքսավորները շրջվեցին և գնացին, բայց իրենց հետ տարան մեր փաստաթղթերը: Ակնհայտ էր, որ կամ այս երեքը պիտի «փրկագնվեին», կամ մենք բոլորս պիտի «փրկագնեինք» մեր փաստաթղթերը: Սկսեցինք խորհրդակցել՝ ի՞նչ անել: Ժամանակն անցնում էր, ոչ մեկը որոշում չէր կայացնում: Տղամարդկանցից մեկը երկար համոզում էր այդ երեքին որոշ դրամ տալ մաքսավորներին, որպեսզի բոլորս ազատվենք: Սրանք երդվում էին, որ փող չունեն: Կրքերը բորբոքվում էին: Մի քանիսը լուռ գնացին ավտոբուսի մոտ: Ցուրտ էր, սոված էինք, բոլորն էլ հոգնած էին: Ի վերջո բոլոր հայացքները ուղղվեցին ինձ. փող գտել էին միայն ինձ մոտ, բոլորին հայտնի էր, որ մոտս 350 դոլար կա: Կարմրեցի, սկսեցի արդարանալ, բացատրել, որ իմ փողը չի, որ Հայաստանում առանց այդ էլ շատ պարտքեր ունեմ: Երեք հոգի սկսեցին ինձ համոզել, որ ոչինչ, հիմա դրամը տամ, Հայաստանում կստիպեն պարտատերերին պարտքը վերադարձնել: Շուրջ երեք ժամ էր այդտեղ կանգնած էինք: Մի քանի անհաջող առարկություններից հետո ի վերջո կոտրվեցի: Մեկը գնաց մաքսավորների հետ բանակցելու և գործը գլուխ բերեց 100 դոլարով՝ բոլոր երեքի համար: Դրամը տվեցի և ինքս իմ թուլության դեմ չարացած բարձրացա ավտոբուս: Շարժվեցինք: Կանայք բացեցին իրենց ուտելիքի կապոցները և սկսեցին ուտել՝ ամեն մեկը իր տեղը նստած: Ուտելիքի հոտը շատ գրգռիչ էր. ես էլ բացեցի ազգականներիս պատրաստած ուտելիքի կապոցը և տարեց մարդուն հրավիրեցի միասին ուտելու: Այս մարդը անընդհատ լաց էր լինում, փորձում էր բացատրել իր անհաջողությունները: Անընդհատ հայհոյում էր Հայաստանը. «երկիր չդառավ, էլի», «անտեր ժողովուրդ ենք», «Ստալին է պետք, Ստալին, որ դրանց հարցերը լուծի», «սոված եկան իշխանության, լափում են, լափում, չեն կշտանում»... Ես լուռ լսում էի և երազում, որ նա լռի: Իմ բաժին դառնությունները էլ ինձ հերիք էին: Ներքին ընթացությունս զսպելու համար սկսեցի նայել ուղևորներին: Վաթսուն տարեկանին մոտ կարճահասակ, գեր մի կին, առանց որևէ մեկին նայելու, ինքն իր մեջ փակված, մարած աչքերով կուլ էր տալիս ծամած կտորները: Ակնհայտ զգացվում էր, որ նա ոչ զգում է ուտելիքը, ոչ՝ կողքի մարդկանց, ոչ՝ իրավիճակը: Այդ իրավիճակը վաղուց «իրենն» էր և ինքն առանց որևէ համաձայնության ընդունել է այն ու դարձրել իր կյանքի մի մասը: Նույն պահին գիտակցեցի, որ ես էլ նույն տպավորությունն եմ թողնում, և հենց այդ պահին կրկին «լսեցի» զրուցակցիս,- «այ, կտեսնես, քո տված փողն էլ չեն վերադարձնի: Մարդկանց մեջ էլ մարդկություն չի մնացել: Քաշողի երկիր է, մեկը մյուսին քաշելով ապրում են»: Ասում էր մի տեսակ դաժան վստահությամբ և, կարծես, նույնիսկ քինախնդրությամբ: Զգացի, որ չեմ դիմանում: Որոշեցի արագ ավարտել ուտելը և ձևացնել, որ քնում եմ: Բայց իրոք քնեցի: Կես քուն, կես արթուն՝ հիշեցի մի քանի ամիս առաջվա մի միջադեպ, որի ականատեսն էի դարձել Լաչինում: Գնացել էի Լաչին աշխատանքի հեռանկարները պարզելու և վերադառնում էի Երևան: Առավոտյան վաղ նստել էինք Երևան մեկնող մեքենան, որի վարորդն ու ուղևոր կանանցից մեկը բարձրաձայն վիճում էին: Վեճի առարկան այն էր, որ ուղևորուհին իր հիվանդացած դստերը տանում էր Երևան, և վարչակազմը նրան Երևան մեկնելու անվճար տոմսակ էր տվել, իսկ վարորդը հրաժարվում էր այդ տոմսակն ընդունել. «ով տոմսա-

կը տվել է, նա էլ թող տանի: Ամիսը քանի ծրի ուղևոր եմ տանում՝ դեռ ոչ մեկի դիմաց վարչակազմից վճար չեմ ստացել: Իսկ հարկերը ես եմ վճարում, վարչակազմը չի վճարում: Մինչև Երևան էլ ճամփին հինգ միլիցի փող պիտի տամ, մարդը 500 դրամ: Էդ վարչակազմը թե ուժ ունի՝ թող գոնե միլիցեքի բերանը փակի»: Կինը լաց էր լինում, դստերը ամուր գրկել էր ու լաց էր լինում: Ուղևորներից ոչ մեկը չէր միջամտում և միջամտելու բան չկար էլ. երկուսն էլ իրավացի էին, երկուսն էլ գոյության կռիվ էին մղում, և այդ գոյության կռիվը արդարացված չէր, քանի որ դա կռիվ էր ինքն իր դեմ: Վարչակազմը գոյություն էր ինքն իր համար, այս մարդիկ գոյություն էին իրենք իրենց համար, սակայն վարչակազմը գոյություն էր այս մարդկանց հաշվին, իսկ այս մարդկանց գոյությունը ինքնասպառման ճանապարհով էր: Եվ բոլորն էլ շատ լավ հասկանում էին, ինչպես հասկանում էին տեղի ունեցողի անիմաստությունը: Ի վերջո վարորդը դժգոհ տեղի տվեց, մեքենան շարժվեց՝ տանելով նաև մորն ու դստերը, որ մինչև Երևան մռայլ ու լուռ գնացին՝ առանց տեղից շարժվելու, առանց նույնիսկ միմյանց հետ խոսելու: Հիշում եմ, այն ժամանակ մտածում էի, թե աղքատության չարությունը որքան անիմաստ է: Ում դեմ չարացած են, նրանք ոչինչ չեն իմանում, փոխարենը իրենք իրենց կամ միմյանց են տանջում: Հետո այդ պատմությունը հիշելիս մտածեցի, որ այս մաքսավորների չարությունն էլ աղքատության չարություն է, սակայն սրանք այս պահին իշխանություն ունեն և այդ իշխանության հնարավորությամբ չարությունն ուղղվում է ավելի խեղճերի դեմ. այդ չարությունը իմաստավորված է, այդ պատճառով այս մարդիկ հավանաբար ինքնարդարացման ձևեր են փնտրում:

Արթնացա Կաբարդինո-Բալկարիան դուրս գալիս, երբ կրկին կանգնեցրին մաքսավորները: Այս պատմությունը տարբեր ձևերով, բայց բացարձակապես նույն բովանդակությամբ կրկնվեց և Հյուսիսային Օսեթիայում, և Հարավային Օսեթիայում:

Հյուսիսային Օսեթիայում մաքսատանը մնացինք մոտ հինգ ժամ: Սկզբում բոլոր ուղևորներից պահանջում էին 20-ական ռուբլի: Բոլորն ըմբոստացան, բողոքեցին: Մաքսավորները մեր փաստաթղթերը վերցրին և փակվեցին իրենց տնակում: Երկար խորհրդակցեցինք, ի վերջո որոշեցինք տալ այդ 20-ական ռուբլիները: Մեկին ուղարկեցինք բանակցելու: Գնաց, որոշ ժամանակ նրանց հետ քննարկումներից հետո վերադարձավ և ասաց, որ այժմ արդեն յուրաքանչյուրից 100 ռուբլի են ուզում: Հուզմունք, լաց, բողոք: Մաքսավորներից մեկը մոտեցավ և քմծիծաղով ասաց, որ թույլ են տալիս ավտոբուսը մնա այդտեղ մինչև հաջորդ օրը: Ասաց ու գնաց: Կրկին քննարկումներ, դժգոհություն, հուզմունք, անզոր զայրույթ: Երեք հոգով գնացինք, խնդրեցինք գինն իջեցնել: Կանգ առան 50 ռուբլու վրա: Արագորեն հավաքվեց այդ 50-ական ռուբլիները, վախենում էին, որ մաքսավորները միտքը կփոխեն: Վճարեցինք ու շարժվեցինք: Վրաստանում ճանապարհային ոստիկանները կանգնեցնում էին կես ժամը մեկ: Լսել էինք, որ այստեղ որպես ոստիկան ծառայում են հիմնականում փախստական մեգրելները: Ասում էին նաև, որ նրանց աշխատավարձ չեն տալիս, բայց հնարավորություն են տալիս կողոպտել ում կարող են: Իսկ մեզ կարող էին կողոպտել շատ հանգիստ: Սակայն Վրաստա-



նում ուղևորների փաստաթղթերը մինչև սահման չէին ստուգում, միայն վարորդն էր դուրս գալիս, ինչ որ գումար էր տալիս նրանց, և դարձյալ շարժվում էինք: Վրաստանից դուրս գալու վերջին մաքսատանը կրկին փաստաթղթեր ուզեցին, կրկնվեց կարմիր անձնագրերի տերերի պատմությունը, բայց հիմա էլ մի նոր խնդիր բացվեց: Ուղևորներից մեկը 4 տարեկան երեխայի հետ էր: Պարզվեց, որ երեխայի ծննդյան վկայականը թարգմանված չի, և վրացիները հայտարարեցին, որ կասկածում են, թե արդյո՞ք երեխան գողացված չի: Թող երեխայի տերը մնա, մինչև իրենք հարցը կպարզեն, մյուսները կարող են գնալ: Լաց, աղմուկ, խնդրանքներ, փող: Մենք կրկին շարժվում ենք: Լուռ ու մռայլ: Ուտելիքը վերջացել է վաղուց, իսկ ճանապարհին ամեն ինչ շատ թանկ է, նույնիսկ հացը երեք անգամ թանկ է սովորականից: Իսկ մենք փող չունենք: Այդ ամենին էլ ավելացած այն սրտմաշուք մտահոգությունը, թե արդյո՞ք ինձ կհաջողվի ուղեկիցներիս համար տրված 100 դոլարը ետ ստանալ և հանձնել տերերին: Նույնիսկ պատկերացնել չէի կարող, թե հակառակ դեպքում ինչ պետք է անեի:

Հայաստան հասանք լուռ, հոգնած, միմյանցից ավելի օտարացած, քան շարժվելու պահին էր: Ես մտածում էի, թե ի՞նչ պետք է անեմ տանը, որտեղ հույսով սպասում են, և վախենում էի, որ կուտակված բոլոր դառնություններս հենց այնտեղ՝ տանն էլ կպոռթկան: Ավտոբուսից իջանք մի տեսակ անօթահար, համարյա միմյանց չնայելով: Ենթադրում եմ, որ բոլորն էլ մտորում էին իրենց սպասվող հանդիպման հեռանկարի մասին: Ոչ մեկին չդիմավորեցին, նույնիսկ ուղեբեռով կանանց:

Երևանն էլ մի տեսակ մռայլ էր, մաշված, գորշ, տխուր, մի քիչ քանդոտ: Հենց առաջին քայլերից հասկացա, որ անելիքս չգիտեմ՝ ինչու՞ եմ եկել, կամ ինչպես կարող էի մնալ: Հասկացա, որ տանը չեմ կարող ասել՝ եկել եմ բնակարանը վաճառելու: Դանդաղ քայլեցի դեպի փողոցը:

*Հրանուշ Խառատյան, Երևան, 2001թ.*

# ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հետազոտությունը կատարվել է Հայաստանում արտագաղթի ընթացիկ փուլում, և որպես այդպիսին այն հեռու է սպառիչ կամ ամփոփիչ լինելուց: Գործընթացը իր ակտիվության շրջանում է և, անշուշտ, ունի բազում զգայական-սուբյեկտիվ գնահատականներ ու դրդապատճառներ: Արտագաղթի պատճառա-հետևանքային օրինաչափությունների խորքային վերլուծությունը դեռ կկատարվի նրա համեմատաբար խաղաղ փուլում: Այս գրքում զետեղված բանավոր պատմությունները, հուսով ենք, նույնպես հնարավորություն կտան որոշ հարցադրումներ անելու: Սակայն հենց հիմա էլ կարելի է փորձել մի քանի ընդհանրացումներ անել.

**1.** Հայաստանից կատարվող արտագաղթն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառների մեջ առաջնային են պատերազմը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, աղքատությունը, գործազրկությունը, ցածր վաստակը: Սուբյեկտիվ պատճառները արտագաղթի երևույթում տարբերակվում են ըստ սոցիալական շերտերի: Քանի որ այս հետազոտությունն իրականացվել է գլխավորապես սոցիալական ստորին շերտերում, այստեղ կարող ենք արձանագրել, որ այս միջավայրում առկա են ինչպես ճոճանակային (սեզոնային) և ժամանակավոր՝ մի քանի տարով արտագաղթի երևույթը, այնպես էլ՝ մշտական: Այս շերտի մարդկանց արտագաղթի հիմնական պատճառը չնայած որակվում է որպես աշխատանքային, իրականում ունի նաև բազում այլ դրսևորումներ, որոնք պայմանավորված են մեծավ մասամբ կառավարման համակարգի պրոբլեմներով՝ անարդարությամբ, իրավական ամենաթողությամբ, անպաշտպանվածությամբ, շորթողականությամբ, հուսահատությամբ, վիրավորվածությամբ, հեռանկարի բացակայության համոզվածությամբ, իշխանությունների հանդեպ թշնամանքի զգացողությամբ և այլն: Այս կարգի տրամադրություններում նկատելի դեր է խաղում հասարակական բևեռացվածության ձևը և բովանդակությունը: Իրականում այս պահին Հայաստանը բաժանված է առնվազն երեք հակոտնյա խմբերի՝ հարուստներ-աղքատներ, քաղաքացիներ-գյուղացիներ, երևանցիներ-Հայաստանի մնացյալ բնակչություն: Բաժանման երեք ձևերն էլ այս կամ այն ձևով նպաստում են արտագաղթին և, ունենալով իրենց առանձնահատկությունները, ընդհանուր առմամբ ունեն որոշ օրինաչափություններ: Այսպես, արտագաղթի բովանդակության տրամաբանությամբ հարուստներ-աղքատներ խմբերից արտագաղթի առաջին ալիքի մեջ ընդգրկվել էին առավելապես ունևորները, երկրորդ և երրորդ ալիքների մեջ՝ համարյա բացառապես չունևորները: Նույն տրամաբանությունը տարածվում է քաղաքացիներ-գյուղացիներ և Երևանցիներ-մնացած Հայաստան խմբերի վրա: Հատկանշական է, որ այսօր արդեն կարելի է խոսել հարուստ-քաղաքացի-երևանցի ընդհանրության մասին և Հայաստանի մնացած քաղաքները դիտարկել գյուղերի հետ մոտավորապես նույն սոցիալ-տնտեսական հարթության վրա: Այս բնութագրերը ոչ միայն արտագաղթելու իրենց ծրագրերը պատմող մարդկանց տեսական ընդհանրացումներն են, այլև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բացատրվում են ուղղակի և միանգամայն կոնկրետ իրավիճակով: Դրանք ուղղելի և վերացնելի իրավիճակներ են և խնդիրը ձևակերպելով հնարավոր է դրանք լուծել:



**2.** Զգալիորեն չափազանցված են ժամանակավոր կամ մշտական արտագաղթի դրական տնտեսական ազդեցության շուրջ գնահատականները: Անշուշտ դրսից բերված կամ ուղարկված գումարները որոշ շրջանառություն ունեն երկրի ներսում, անշուշտ գյուղերում հարկերի զգալի մասը վճարվում է դրսում աշխատած գումարների հաշվին և թեկուզ այդ ճանապարհով նպաստում բյուջեի ձևավորմանը: Որոշ ընտանիքներ հիրավի հանապազօրյա խնդիրները լուծում են արտագնա աշխատողների կամ արտագաղթած ազգականների օգնության հաշվին: Անշուշտ արտագաղթն «սպասարկող» կառույցները այդ գործընթացով պայմանավորված ստվերային և լեգալ որոշ եկամուտներ ունեն: Սակայն անհրաժեշտ է դիտարկել արտագաղթի՝ տնտեսական զարգացմանն ազդելու հակառակ միտումը նույնպես: Նախ, արտագաղթողների կամ դրսում աշխատողների մեջ նկատելի թիվ են կազմում այն մարդիկ, ովքեր իրենց կամային հատկանիշներով կարող էին մրցակցային դառնալ երկրի ներսում և մասամբ թուլացնել տնտեսության մենաշնորհայնացումը: Երկրորդ, դրսում սոցիալապես կամ տնտեսապես կայացող մարդիկ աստիճանաբար կապերը խզում են Հայաստանի հետ և հետագա կյանքը ծրագրավորում են իրենց կայացման վայրերի հետ: Նրանց օգնությունը իրենց հարազատներին գնալով պակասում է: Երրորդ, ընտանիքների նկատելի մասը, ովքեր ապրում են դրսի միջոցների հաշվին, հիմնականում պարզ սպառողներ են, արտագնա աշխատատեղերում վաստակած գումարները տնտեսության մեջ որպես կանոն չեն ներդրվում: Գլոբալ մակարդակով ավելի ճիշտ կլինի խոսել արտագաղթի տնտեսական վնասների, քան՝ օգուտի մասին: Արդյունավետ կառավարման դեպքում թե ձեռներեցների, թե համեմատաբար արդյունավետ աշխատանք ունեցողների թիվն անհամեմատ մեծ կլիներ:

**3.** Խիստ բացասական են արտագաղթի թողած հասարակական, հոգեբանական, մշակութային հետևանքները: Արտագաղթի ծավալներն արդեն նկատելիորեն ազդել են Հայաստանի ժողովրդագրական հավասարակշռության: Հայաստանի բնակչությունն աչքի է ընկնում տարեցների, սոցիալական և կենսաբանական անկարողների մեծ թվով: Արտագաղթի մեջ ներգրավված մարդկանց որակական բնութագրերը վկայում են, որ երկրում մնացած բնակչության սոցիալական ստորին շերտերում սկսում է գերիշխող դառնալ այն հոգեբանությունը, որ երկրում իրենք անզոր են պայքարել անօրինականությունների դեմ: «Եթե մարդու դուխը տեղն ա, նա ձայն կբարձրացնի, բայց մեր դուխը կոտրած ա», «Բա մի քանի ճարպիկ տղա էլ ա չմնա՞ն, որոնք կկարողանային երկիրը դեպի լավը տանել» և այլ նմանօրինակ արտահայտությունները բնութագրում են մնացողների անկարողության ինքնագիտակցման խորությունը: Փոխվում է ընտանիքի որակը, հասարակական կարծիքը նկատելիորեն հանդուրժող է դարձել բարոյական ավանդական արժեքների ձևախեղումների հանդեպ, ի հայտ են գալիս ազգակցական-ընտանեկան հա-

րաբերությունների նոր մոդելներ, որոնք իրենց հերթին նպաստում են առանձին ընտանիքների ու անհատների մարգինալացմանը: Հասարակությունում սկսում է երկրորդական դառնալ տարիքային խմբերի փոխադարձ պարտավորությունների մշակույթը, ձևավորվում է անհատական կարողությունների ճանապարհով ինքնահաստատման մշակույթը: Վերջինս, սակայն, ավելի շուտ կայանում է անկարողների հաշվին: Սոցիալական պաշտպանության ինստիտուտների բացակայության կամ թուլության պարագայում անհատական կարողությունների ճանապարհով ինքնահաստատման մշակույթը անկարողներին և օգնության կարոտյալներին դնում է մերժվածների շարքում, և հասարակական բարոյականությունը սկսում է արդարացնել հարաբերությունների այս ձևը:

4. Գնացողներն իրենք իրենց գնացած երկրներում ձևավորում են հայի և Հայաստանի բացասական կերպար: Ըմբոստ դժգոհ, նույնիսկ թշնամացած լինելով իշխանություններին, և իշխանությունն ու հայրենիքը նույնացնելով, արտերկրներում հայտնված հայերի զգալի մասը դադարել է բարոյական պարտավորություններ զգալ իրենց պատկերացմամբ իրենց օտար երկրի նկատմամբ:

Ա

*Աղքատ* .................. 15, 17, 23, 52, 58, 72, 85, 87, 149, 191, 222, 240

*Աղքատություն*.................. 17, 18, 21, 40, 76, 87, 114, 222, 240

*Ամոթ* .................. 11, 39, 48, 53, 76, 92, 95, 111, 112, 113, 115, 119, 120, 127, 157, 193, 194, 197, 222

*Անամոթ* .................. 113, 233

*Անբարոյական*.................. 13, 129

*Անձնագիր* .................. 65, 66, 84, 117, 136, 211, 216, 234, 235, 236, (տես նաև պասպորտ)

*Անօրեն, անօրինական*...... 30, 31, 32, 50, 57, 163, 164, 231 241

*Անխիղճ* .................. 122

*Աշխատանք* .................. 4, 7, 29, 36, 37, 40, 54, 55, 60, 68, 79, 86, 89, 90, 91, 97, 98, 100, 109, 110, 141, 143, 146, 149, 152, 154, 155, 156, 158, 164, 164, 169, 171, 184, 196, 198, 199, 200, 201, 202, 203, 205, 207, 212, 222, 229, 231, 232, 241

*Արհամարհանք*.................. 41

*Արհեստ* .................. 56, 200

Բ

*Բանակ*.................. 14, 38, 40, 48, 49, 54, 55, 61, 66, 69, 77, 93, 96, 97, 111, 114, 115, 124, 126, 131, 143, 145, 149, 156, 159, 161, 181, 182, 200, 203, 208, 214, 231

*Բարոյական*.................. 9, 12, 15, 28, 76, 80, 92, 94, 129, 171, 178, 241, 242

*Բարոյականություն*........... 12, 13, 79; 86, 92, 129, 177, 242

*Բիզնես* .................. 22, 31, 36, 82, 90, 91, 128, 159, 168, 172, 183, 210, 214, 216







*Բողոք, բողոքել* .................. 54, 61, 62, 112, 145, 155, 156, 198, 211, 219, 220, 238

Գ

*Գյուղապետ* .................. 25, 34, 35, 49, 50, 60, 74, 75, 97, 114, 115, 122, 123, 126, 138, 142, 144, 145, 166, 167, 197, 204, 206, 208

*Գյուղապետարան* .............. 33, 35, 39, 102, 123, 142, 167, 204, 205, 206, 208

*Գրանցում* .................. 69, 80, 81, 101, 123, 136, 145, 152, 197, 201, 207, 211, 232, 234, 235

Դ

*Դատ* .................. 48, 66, 95, 113, 140

*Դատաստան*.................. 67, 95

*Դեսպանատուն* .................. 65, 66, 67, 106, 107

*Դպրոց* .................. 36, 37, 42, 43, 44, 45, 90, 102, 105, 110, 122, 123, 125, 138, 140, 141, 142, 143, 148, 152, 154, 159, 160, 162, 166, 167, 171, 172, 197, 199, 201, 205, 208, 223, 227

Ե

*Երիտասարդ*.................. 3, 4, 8, 9, 14, 26, 32, 35, 56, 58, 70, 71, 77, 93, 101, 102, 118, 122, 131, 165, 229, 230

*Երիտասարդություն*.......... 4, 114, 119, 208

*Երկիր* .................. 4, 15, 40, 47, 53, 56, 57, 62, 66, 77, 78, 95, 110, 111, 131, 134, 163, 164, 178, 199, 213, 216, 224, 227, 232, 234, 237, 241

*Երկրաշարժ*.................. 5, 11, 12, 17, 36, 40, 53, 112, 113, 114, 141, 144, 145, 154, 158, 160, 161, 163, 169, 181, 184, 186, 190, 191, 198, 200, 215, 216, 222, 223, 225, 226, 229, 231

Թ

*Թալան* ........ 40, 167, 187, 230, 233

*Թոշակ* ........ 39, 42, 47, 54, 55, 69, 72, 116, 117, 118, 122, 123, 134, 138, 144, 145, 154, 157, 173, 178, 182, 194, 199, 223

Ի

*Իշխանություն* ........ 9, 10, 14, 15, 16, 31, 39, 40, 46, 47, 49, 53, 58, 95, 104, 156, 230, 231, 232, 233, 234, 238, 240, 242

*Իշխանավոր* ........ 198, 233

*Իրավունք* ........ 31, 32, 33, 50, 57, 63, 64, 65, 66, 83, 87, 88, 95, 104, 137, 138, 164, 173, 176, 185, 189, 196, 198, 211, 214, 216, 219, 220, 227, 228, 234

Խ

*Խաբել* ........ 82, 175, 188, 206

*Խիղճ* ........ 39, 95, 118, 131, 141, 162

*Խոստում* ........ 28, 46, 121

Կ

*Կամք* ........ 52, 58, 76, 77, 93, 226

*Կամազուրկ* ........ 85

*Կաշառք* ........ 39, 59, 92, 168, 173, 174, 178, 231, 232, 234

*Կառավարություն* ........ 20, 34, 49, 55, 65, 93, 109, 110, 112, 114, 116, 119, 131, 169, 175, 176, 177, 178, 208, 215, 230

*Կարոտ* ........ 4, 76, 89, 91, 99, 102, 103, 131, 163, 182, 242

*Կրթություն* ........ 3, 15, 23, 43, 45, 56, 68, 91, 105, 109, 139, 144, 161, 204, 208, 223, 230




ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ


*Կռիվ* ........ 37, 38, 54, 86, 130, 131, 144, 145, 214, 238

Հ

*Հայրենիք* ........ 11, 12, 15, 52, 53, 54, 55, 91, 103, 110, 112, 126, 131, 140, 142, 143, 144, 155, 157, 159, 182, 203, 231, 242

*Հավատ* ........ 28, 39, 40, 44, 46, 50, 55, 83, 92, 112, 121, 124, 125, 156, 157, 159, 160, 163, 168, 169, 187, 198, 199, 206, 224

*Հարկ* ........ 20, 30, 32, 34, 35, 55, 64, 70, 74, 75, 76, 179, 182, 186, 192, 203, 205, 206, 214, 215, 231, 238, 241

*Հարուստ* ........ 52, 54, 68, 72, 92, 95, 104, 119, 149, 165, 182, 196, 233, 240

*Հիասթափություն* ........ 15, 16, 30, 36, 44, 46, 199

*Հիվանդ, հիվանդություն* ........ 30, 69, 76, 77, 85, 86, 110, 115, 116, 117, 122, 141, 142, 144, 158, 160, 161, 162, 163, 171, 193, 224

*Հույս* ........ 14, 29, 34, 40, 46, 58, 74, 77, 83, 91, 92, 105, 112, 114, 123, 124, 129, 130, 131, 156, 160, 163, 168, 169, 206, 209, 226, 229, 231, 232, 239

*Հուսահատություն* ........ 16, 58, 78, 79, 224, 232, 240

Մ

*Մարզպետ* ........ 33, 50, 51, 112, 118, 119, 140, 163, 164, 179

*Մարզպետարան* ........ 25, 33, 44, 46, 48, 51, 60, 75, 115, 144, 145, 156, 162, 173

*Մաքսատուն* ........ 117, (տես նաև տամոժնյա)

*Մաֆիա* ........ 42, 81, 175, 223

*Միլիցա, միլիցիա* ........ 30, 31, 39, 51, 70, 81, 148, 174, 179, 198, 200, 201, 210, 217, 219, 220

Ն

*Նախագահ*........................ 46, 90, 105, 106, 107, 112, 169, 170, 214

*Նախարար*........................ 32, 178, 200, 214

*Նպաստ*........................ 55, 59, 96, 97, 114, 115, 116, 117, 122, 124, 134, 142, 148, 172, 198, 199, 202

Ո

*Ոստիկան*........................ 31, 65, 235, 238, (տես նաև միլիցիա)

Պ

*Պատգամավոր*........................ 27, 121, 125, 226

*Պատերազմ*........................ 3, 12, 13, 15, 37, 53, 54, 80, 91, 99, 103, 104, 105, 106, 131, 144, 147, 149, 208, 209, 226, 233, 240

*Պաշտպանություն*............ 63, 220

*Պաշտոն*........................ 50, 111, 119, 197, 233

*Պաշտոնյա*........................ 48, 97, 112, 121, 210

*Պասպորտ*........................ 81, 83, 118, 119, 187, 210, 211, 217, (տես նաև անձնագիր)*

*Պարտք*........................ 28, 34, 37, 39, 49, 54, 57, 62, 74, 76, 87, 88, 92, 117, 120, 124, 129, 132, 133, 134, 135, 141, 148, 150, 151, 152, 158, 159, 160, 169, 172, 175, 182, 184, 192, 193, 194, 195, 196, 198, 202, 205, 206, 207, 213, 218, 225, 229, 231, 232, 234, 237

*Պետություն*........................ 15, 32, 35, 46, 49, 55, 60, 63, 65, 91, 93, 94, 100, 118, 119, 121, 122, 134, 142, 145, 147, 156, 157, 161, 178, 189, 197, 199, 200, 201, 202, 203, 209, 216, 218, 220, 227, 228

*Պրեզիդենտ*........................ 48, 139, 156, 174, 233





Ռ

*Ռմբակոծություն*................ 7, 13, 53

Վ

*Վիրավորանք*.................... 235

*Վիրավորվածություն*......... 9, 37, 161, 240

Տ

*Տամոժնյա*........................ 51, 52, 61, 117, 135, 136, 179, 187, 188, 202, 217, 227, (տես նաև մաքսատուն)

*Տխուր*........................ 90, 103, 208, 232, 236, 239

Ու

*Ուրախություն*.................... 76, 91, 106, 191, 208, 209

Փ

*Փախստական*.................... 4, 12, 14, 15, 22, 23, 50, 58, 59, 60, 61, 68, 95, 97, 98, 141, 142, 143, 172, 226, 229, 231, 232, 238

Օ

*Օգնություն*........................ 12, 54, 55, 59, 66, 67, 68, 69, 74, 83, 93, 96, 99, 114, 117, 125, 142, 144, 149, 156, 182, 231, 241

*Օրենք*........................ 11, 20, 27, 30, 31, 32, 34, 40, 52, 63, 66, 83, 87, 95, 105, 116, 135, 163, 169, 185, 186, 190, 200, 203, 207, 213, 214, 215, 220, 228, 236

ԵՐԿՐՆԵՐ

*Ադրբեջան*........................ 7, 12, 13, 14, 61, 106, 231

*Անգլիա*........................ 56, 80, 92, 172, 177

*ԱՄՆ, Ամերիկա*.................. 3, 7, 13, 17, 23, 25, 27, 33, 34, 54, 55, 56, 61, 77, 83, 96, 97, 98, 127, 133, 147, 154, 157, 158, 160, 161, 162, 172, 203, 236

Բելգիա .......... 38, 61, 177, 211

Գերմանիա .......... 53, 61, 79, 126, 133, 177, 191, 225, 226

Եվրոպա .......... 3, 13, 61, 96, 97, 98, 103, 233

Թաթարստան .......... 89, 157, 201

Թուրքիա .......... 63, 96, 128, 129, 133, 163, 168, 203, 211, 212, 220

Լեհաստան .......... 56, 103, 104, 105, 106, 107, 172, 226

Կաբարդա .......... 61, 62, 218, 219

Հայաստան .......... 4, 5, 6, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 28, 29, 35, 44, 51, 52, 53, 58, 61, 65, 66, 67, 68, 70, 72, 73, 79, 80, 83, 84, 85, 88, 90, 91, 92, 93, 94, 97, 98, 99, 101, 102, 103, 104, 106, 107, 110, 112, 118, 127, 144, 149, 159, 161, 162, 165, 168, 169, 174, 178, 199, 204, 206, 210, 212, 214, 215, 216, 217, 223, 224, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 239, 240, 241, 242

Հունաստան .......... 133

Հոլանդիա .......... 25, 37, 38, 56, 133, 162, 172, 177, 191, 211

Ռուսաստան .......... 5, 6, 11, 13, 15, 16, 25, 27, 29, 35, 37, 38, 45, 52, 53, 56, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 70, 74, 75, 76, 77, 80, 81, 82, 83, 84, 89, 90, 91, 96, 97, 98, 100, 101, 103, 109, 115, 116, 117, 120, 123, 129, 133, 136, 137, 138, 139, 141, 142, 143, 144, 145, 146, 149, 150, 152, 153, 155, 157, 161, 166, 167, 173, 177, 181, 183, 185, 186, 187, 190, 191, 194, 197, 199, 202, 203, 205, 206, 207, 208, 210, 211, 212, 213, 214, 215, 217, 218, 219, 222, 223, 224, 225, 229, 230, 231, 233, 234, 235, 236

Վրաստան .......... 14, 52, 61, 62, 63, 64, 65, 135, 137, 178, 207, 208, 211, 213, 216, 217, 218, 219, 220, 221,





238, 239

Ուկրաինա .......... 25, 37, 38, 65, 66, 103, 104, 106, 211, 212

Ֆրանսիա .......... 56, 80, 103, 172, 177, 217

ԱԶԳԵՐ

Ադրբեջանցի .......... 4, 12, 16, 81, 84, 229, 231

Թաթար .......... 80, 157

Թուրք .......... 38, 41, 80, 114, 127, 141, 143, 144, 145, 236

Ինգուշ .......... 139

Հայ .......... 38, 39, 61, 80, 86, 89, 96, 97, 98, 100, 105, 106, 113, 118, 119, 125, 127, 129, 130, 131, 139, 144, 156, 163, 172, 181, 191, 199, 219, 222, 227, 228, 229, 230, 232

Տաջիկ .......... 190, 229, 230

Ուզբեկ .......... 190

Ռուս .......... 83, 145, 191, 234

Վրացի .......... 63, 219, 220, 239

Օս, օսեր .......... 64, 137, 219

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Լևոն Տեր-Պետրոսյան .......... 60, 175, 214, 223

Ռոբերտ Քոչարյան .......... 40, 47, 49, 50, 106, 107, 119, 127, 145, 146, 156, 162, 163, 164, 170, 175, 214, 215

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**
ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

*ՆԱԽԱԲԱՆ* ........ 3
*ԱՐՏԱԳԱՂԹԻ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* ........ 11
*ԱՐՏԱԳԱՂԹԸ ԳՅՈՒՂԵՐԻՑ* ........ 17
*ԻՆՉՈՒ՞ ԵՆ ԳՆՈՒՄ* ........ 26
*ՎԻՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ* ........ 37
*ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ* ........ 42
*ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ* ........ 46
*ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* ........ 47
*ԱՄԵՆ ԻՆՉ ԵՐԵՎԱՆՑՈՒՆՆ Է* ........ 51
*ՀԱՅՐԵՆԻՔԸ* ........ 53
*ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԳՆՈՒՄ* ........ 56
*ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ* ........ 58
*ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԳՆՈՒՄ* ........ 61
*ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ* ........ 65
*Ի՞ՆՉ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՕԳՆՈՒՄ* ........ 68
*ԿԱՄՔԻ ԱՐՏԱՀՈՍՔ* ........ 76
*ՄԵՆՏԱԼԻՏԵՏԸ* ........ 79
*ԱԶԳԱԿԱՆՆԵՐԸ, ԸՆՏԱՆԻՔԸ* ........ 85
*ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞Ն, ԱՐԴՅՈՔ* ........ 90
*ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ* ........ 92
*ՊԱՍԻՎ ԱՐՏԱԳԱՂԹ ԿԱՄ ՆԵՐԿԱ ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐ* ........ 93
*ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ ՔԱՂՎԱԾ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ* ........ 95

**ԱՐԴԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ** ........ 96
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

**ԼԵՀԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԲԵՎԵՌՆԵՐԸ** ........ 103
ԹՈՄԱՍ ՄԱՐՉԻՆՅԱԿ

**ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

*ԵԹԵ ՄԱՐԴՈՒ ԴՈՒԽԸ ՏԵՂՆ Ա, ՆԱ ՉԱՅՆ ԿԲԱՐՁՐԱՑՆԻ, ԲԱՅՑ ՄԵՐ ԴՈՒԽԸ ԿՈՏՐԱԾ Ա* ........ 109
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

*ՌՈՒՍԱՑԵԼ ԵՆ, ԷԼԻ, ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՐԵԼ ԵՆ* ........ 141
ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ* ........ 147
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

*ԵՍ ԻՆՉԻ՞ ՉԳՆԱՑԻ, ԻՆՉԻ՞ ՄՆԱՑԻ* ........ 154
ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՄԱՐԴԻԿ ՈՐ ԳՆՈՒՄ ԵՆ, ՇԱՏԵՐԸ ՎԻՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՆ ԳՆՈՒՄ* ........ 158
ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՄՆԱՆ Ի՞ՆՉ ԱՆԵՆ* ........ 165
ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

*ԲՈՒՏԻՐԿԵՆ ՆԱՏԵԼ ԵՄ, ՀԻՄԻ ԻՆՁԻ ԳՈՐԾ ՏՎԵՔ* ........ 171
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

*ՄԵԶԻ ՀՄԻ ԿՆԻԿՄԱՐԴԻԿ ԵՆ ՊԱՀՈՂԸ* ........ 181
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

*ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻԴԵ՞, ՈՐ ՀԵՉ ՄԻ ՏԵՂ ՈՉ ՄԻ ՕՐԵՆՔ ՉԻ ԱՇԽԱՏԻ* ........ 198
ԱՐԱ ԳՈՒԼՅԱՆ

*ՄԵԿ Է՝ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ: ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀՈՒՅՍ ՉԿԱ* ........ 204
ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

*ՉԵՆ ԹՈՂՆԻ ՀԵՉ ՄԻ ՏԵՂ, ՈՐ ՄԱՐԴ ԱՇԽԱՏԻ, Ի՞ՆՉ ԱՆԻ, ՈՐ ՉԵՐԹԱ* ........ 210
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

*ԵԹԵ ՕՐԵՆՔԻՑ ԽՈՍԵՍ, ԳԻՆՆ ԵՆ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ* ........ 217
ԳԱՅԱՆԵ ՇԱԳՈՅԱՆ

*ԱՊՐՈՒՍՏ ԱՏԵՂԾՈՂԻՆ ԷԼ ԷՍ Է ՁՁՎԱՑՆՈՒՄ* ........ 222
ԱՐԱ ԳՈՒԼՅԱՆ

*ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆԸՆԴՀԱՏ ՍԿՍԵԼ* ........ 229
ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ

**ԱՄՓՈՓՈՒՄ** ........ 240
ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏՅԱՆ